ՀԱՅ ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՄԻՋՆԱԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1920 թ.)

ԵՌՀԱՏՈՐՅԱԿ

II
А 89935

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Հատորը հրատարակության պատրաստեց և
խմբագրեց պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ–2003

Академия наук Армянской ССР

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Հ 240

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը հրատարակվել է «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության հովանավորությամբ

Երկրորդ հատորն ըստ բաժինների շարադրել են.

Վ. Միքայելյան («Երկու խոսք», «Կիպրոս»), Վ. Միքայելյան, Հ. Թոփուզյան («Եգիպտոս», «Սիրիա–Միջագետք–Լիբանան»), Հ. Բարթիկյան («Բյուզանդիա»), Ա. Խառատյան, Վ. Ղուկասյան («Կոստանդնուպոլիս»), Ա. Խառատյան («Զմյուռնիա»), Հ. Մարտիրոսյան («Իրան»), Ռ. Աբրահամյան («Աֆղանստան», «Հնդկաստան», «Եթովպիա», «Չինաստան», «Հարավ-արևելյան Ասիա»), Վ. Գրիգորյան («Միջին Ասիա»):

Հ 240 Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Եր., «Գիտություն» հրատ., 2003, 520 էջ:

Հայ գաղթաշխարհի եռահատոր պատմության սույն երկրորդ հատորում ամփոփված է Աֆրիկայի և Ասիայի հայկական գաղութների դարավոր պատմությունը՝ դրանց սկզբնավորումից մինչև տվյալ գաղութի գոյատևման վերջը: Հատորն ընդգրկում է յուրաքանչյուր գաղութի ամբողջական պատմությունը՝ իր բոլոր հիմնական կողմերով:

Նախատեսվում է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

Հ $\frac{0503020913}{703(02) - 2003}$

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-8080-0514-0

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2003

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Հայ գաղթաշխարհի պատմություն» եռհատորյակի երկրորդ հատորը ևս շարադրված է տարածաշրջանային սկզբունքով, բայց այդ սկզբունքի մի աննշան խախտմամբ: Խնդիրն այն է, որ Բյուզանդական (հետագայում նաև Օսմանյան) կայսրություններում հայկական գաղթավայրերը, ինչպես որ այդ կայսրությունների տարածքն էր, ընկած էին դրանց թե եվրոպական և թե ասիական շրջաններում: Նշված «խախտումը» թելադրված է հենց այդ իրողությամբ, որովհետև չէր կարելի այդ գաղութների մի մասի պատմությունը զետեղել 2-րդ հատորում (ասիական տարածաշրջան), իսկ մյուսինը՝ 3-րդ հատորում (Եվրոպայի և Ամերիկայի հայ գաղութներ), և հանուն տարածաշրջանային սկզբունքի պահպանման միևնույն երկրի և զարգացման նույն ընթացքն անցած այդ գաղութների պատմությունը մեխանիկորեն բաժանել միմյանցից:

Երկրորդ հատորում ևս տրված է տվյալ գաղութի ամբողջական պատմությունը՝ նրա սկզբնավորումից մինչև 1920 թ., հանգամանք, որի շնորհիվ ընթերցողը հնարավորություն է ստանում հետևել հայկական յուրաքանչյուր գաղթավայրի անցած պատմական ուղուն: Մի քանի գաղութների համար կատարվել է ժամանակագրական շրջանակների աննշան երկարացում՝ համառոտ տեղեկություններ տալով դրանց պատմության վերաբերյալ նաև 1920 թվականից հետո: Խոսքը ասիական տարածաշրջանի որոշ գաղութների մասին է, որոնց հետքսանասական թվականների (1920–1950 թթ.) պատմությունը դուրս է մնալու արդի սփյուռքի պատմությամբ զբաղվող հեղինակների տեսադաշտից, քանի որ այդ գաղութները, որպես այդպիսիք, դադարել են գոյություն ունենալ, և նշված թվականների նրանց պատմությունից պահպանված սակավաթիվ տեղեկությունները, որ տրվում են հատորում, չեն կարող դառնալ առանձին ուսումնասիրության առարկա:

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲՅՈՒԶԱՆԴԻԱ

Հայ ժողովրդի առնչությունների սկիզբը հույների և հունական աշխարհի հետ պարուրված է թանձր մշուշով: Այն հանգամանքը, որ հայերս հույներին հույն (Յոյն) ենք անվանում (և ոչ Հելլեն), ապացույցն է այն բանի, որ ամենից առաջ ճանաչել ենք Փոքրասիական թերակղզու արևմտյան ափերը հազարամյակներ առաջ բնակեցնող հունական մի հատվածի՝ հոնիացիներին (Ἴωνες), իսկ երկիրը կոչում ենք Յունաստան (Հոնիա — Ἰωνία): Շատ հավանական է, որ այդ ցեղանունն ու տեղանունը մեզ են փոխանցվել այդ ցեղախմբին անմիջականորեն սահմանակից պարսկական տերությունից:

Հայ-հույն առնչությունների հնագույն փաստը արձանագրված է Մովսես Խորենացու «Պատմության» մեջ, որտեղ պատմահայրը, մեզ անհայտ աղբյուրի հիման վրա, արձանագրում է, թե հայոց առասպելական թագավոր Զարմայրը մասնակցել է Տրոյական պատերազմին (12-րդ դ. մ.թ.ա.), դաշնակցելով Պրիամոսին ընդդեմ աքայացիների (հելլենների). «Եւ մեր Զարմայր ի ծառայութեան Ասորեստանեայց սակաւուք ընդ Եթովպացի զօրուն օգնական Պռիամու, և անդ ի քաջացն Հելլենացւոց վիրաւորեալ մեռանի»[1]:

Հայ-հունական կապերի մասին պատմական արժանահավատ տեղեկությունները մեզ հայտնի են պատմական գիտության հիմնադիր Հերոդոտոսի նշանավոր «Պատմություններ» գրքից, որտեղից իմանում ենք, որ հայերը, որպես Աքեմենյանների տերության հպատակներ, մասնակցում էին նրանց վարած պատերազմներին, այդ թվում և մ.թ.ա. 480 թ. պարսից արքա Քսերքսեսի՝ դեպի Հունաստան կատարած արշավանքին: Հայերի (և փռյուգիացիների) զորագնդերը գլխավորում էր Արտոքմեսը: Նույն արշավանքին մասնակցում էր մի հայ զորավար ևս, որին նշանավոր հույն ողբերգակ Էսքիլոսը անվանում է Սևակ (Σευάκης): Պարսից ծերերի խորոսը, հարց է տալիս Քսերքսես արքային.

«Ավաղ, ո՞ւր է քո Փառնուքոսը,
արիասիրտ Արիոմարդոսը,
ո՞ւր է իշխան Սևակը...[2]»:

---

1 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Պատմութիւն հայոց, գիրք Ա, գլ. ԼԲ (ԼԳ), էջ 88:

2 Է ս ք ի լ ո ս, Պարսիկներ, տող 966–968:

Հերոդոտոսից հետո անտիկ շրջանի բազում հույն հեղինակներ հարուստ տեղեկություններ են հաղորդում հայերի մասին, սակայն հունական աշխարհում նրանց ստեղծած գաղութների վերաբերյալ որոշակի խոսք չկա: Բնական է, դա իրենց հետաքրքրություններից դուրս էր, իսկ հայկական ազգային աղբյուրներ դեռևս գոյություն չունեին: Ամենայն հավանականությամբ, հունական աշխարհում եղել են հայ առևտրականների կայաններ, բացառված չէ՝ նաև հայկական զորամիավորումների կայաններ, որոնք ծառայում էին Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո Եգիպտոսում և Մերձավոր արևելքում ստեղծված հունական թագավորություններում: Ինչ վերաբերում է խաղաղ հայ բնակչությամբ գաղութներին, ապա դրանք կարող էին ստեղծվել և իրականում ստեղծվեցին 387 թվականից հետո, Արևելահռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանումից և հատկապես Արշակունիների պետականության վերացումից (428 թ.) հետո՝ կապված երկրում ստեղծված քաղաքական, տնտեսական և կրոնական անբարենպաստ իրադրության ու կացության հետ: Այդ երկու տերությունները, սեփական պետական շահերից ելնելով, սկսեցին սիրաշահել իրենց կեսի հայերին, ջանքեր էին թափում սիրաշահելու նաև իրենց հակառակորդի հատվածում ապրող հայերին: Խոսքը, հարկավ, վերաբերում է հայոց ավագանուն: Տեսնում ենք հայ ազնվականների, քաղաքական ու ռազմական գործիչների անցումը Բյուզանդական Հայաստանից դեպի Պարսկական Հայաստան և հակառակը: Մինչև արաբական լծի հաստատումը Հայաստանում երկրից խաղաղ բնակչության արտագաղթ ըստ էության չի եղել[1]: Երկու ախոյան պետություններում հանդիպում են հայ գործիչներ, զորահրամանատարներ և զորավարներ, բայց ոչ կազմակերպված հայ գաղութ, թեև, անկասկած, եղել են հայերի զինվորական գաղութներ:

Հայ գործիչները Բյուզանդիայում հանդես են գալիս շատ վաղ և այնտեղ բարձր պաշտոններ զբաղեցնում դեռևս Հայաստանի առաջին բաժանումից ընդամենը քառորդ դար անց: Թեոդոսիոս Բ կայսեր Դատաստանագրքում 414 թ. տակ հիշվում է ոմն Մուշեղ (Musellios), որը

---

1 Մի փաստ ունենք, որ Տիբերիոս կայսեր օրոք (578–582 թթ.), դեռևս զորավար Մավրկիոսի (ապագա կայսեր) ջանքերով 578 թ. Աղձնիքից Կիպրոս տեղափոխվեցին ու հաստատվեցին 10.000 հայեր: Տե՛ս Johannis Epheseni Historiae Ecclesiasticae, pars tertia, ed. E. W. Broons, Parisiis, 1935, VI, 14-15, 27, 34; Cf. Theophylactus Simocatta, ed. C. de Boor, Lipsiae, 1887, p. 143.

բյուզանդական արքունիքում վարում էր պրեպոզիտոսի բարձր պաշտոնը: Պրեպոզիտոսը կայսեր սենեկապետն էր, բայց ուներ նաև ֆիսկալ իրավասություններ, որոնք, ըստ Թեոդոսիոսի դատաստանագրքի, տարածվում էին Արևելք (Oriens) դիոցեզի սահմաններում: Հիշյալ Մուշեղը, հավանաբար, պատկանում էր Մամիկոնյանների ընտանիքին, նշանավոր Սամուելի մոտիկ ազգականն էր և ամենայն հավանականությամբ Հայոց արքա Արշակ Գ-ի շքախմբում 385 թ. անցել էր Հայաստանի բյուզանդական մասը: Պրեպոզիտոս Մուշեղը առաջին Մամիկոնյանն էր բյուզանդական արքունիքում:

Հուստինիանոս Ա-ի Դատաստանագրքում տեղ է գտել Արևելահռոմեական կայսրության կայսր Թեոդոս Բ-ի և Արևմտահռոմեական կայսրության կայսր Վալենտինիանոս Գ-ի 442 թ. հրապարակած մի հրովարտակ: Այն հասցեագրված է պրեպոզիտոս Արտաշեսին (Artaxes), որը նաև կայսեր տնտեսությունների վերակացուն էր՝ լիազորված դատաստան տեսնելու իրավունքներով: Սրա անունը ևս վկայում է, որ նա պատկանում էր Մամիկոնյանների ընտանիքին: Նա մասնակցել 451 թ. Քաղկեդոնի Զորրորդ Տիեզերական ժողովի աշխատանքներին՝ որպես սենատոր և «նախկին պրեպոզիտոս»:

Եթե 5-րդ դարում Բյուզանդական կայսրության մեջ հայերը հանդես են գալիս որպես առանձին, ճիշտ է, բարձր դիրքեր զբաղեցնող անհատներ, ապա 6-րդ դարում, հատկապես սկսած Հուստինիանոս Ա-ի ժամանակաշրջանից, արդեն տեսնում ենք հազարավոր զինվորներից բաղկացած հայկական զորագնդեր, որոնք մասնակցում են կայսրության վարած պատերազմներին Լազիկայում, Թրակիայում, Իտալիայում, Աֆրիկայում և այլուր: Միայն Հուստինիանոսի ժամանակ հանվանե հիշվում են 17 հայազգի զորավարներ, ներառյալ նշանավոր Նարսեսը, Արտավան և Արշակ Արշակունիները, Հրահատ, Սահակ և Ներսես Կամսարականները: Հուստինիանոսի զորավարների մեջ կային և այնպիսիք, որոնք բացարձակապես անտեղյակ էին հունարեն լեզվին, ասել է՝ գլխավորում էին զուտ հայերից բաղկացած գնդեր: Պրոկոպիոս Կեսարացին ցույց է տալիս, որ Իտալիայում գոթերի կողմից գերված հայազգի զորավար Գլակը «ոչ հունարեն, ոչ լատիներեն, ոչ գոթերեն և ոչ մի այլ լեզու չգիտեր, այլ միայն հայերեն»[1]:

---

1 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա, Պրոկոպիոս Կեսարացի: Թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 231–232:

Հայ զինվորականության վարկն այնքան բարձր էր, որ բյուզանդական կայսրերը մինչև Հուստինիանոս Ա-ի թագավորությունը (518–565 թթ.) հայերին էին վստահում անգամ արքունիքի պահպանությունը: «Նախկինում,– գրում է Պրոկոպիոս Կեսարացին,– պալատի պահպանության համար առանձնացվել էին երեք հազար հինգ հարյուրից ոչ պակաս զինվորներ, որոնց սքոլարիոս էին անվանում: Ի սկզբանե անտի պետությունը սրանց վճարում էր շատ ավելի բարձր ռոճիկ, քան մնացած բոլոր զինվորներին: Անցյալում (այսինքն՝ Հուստինիանոս Ա-ից առաջ – Հ. Բ.) կայսրերը սրանց ընտրության ժամանակ նկատի էին առնում մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը»[1]:

Զենոն կայսեր ժամանակներից սկսած (474–475, 476–491 թթ.), բայց իրականում Հուստինիանոս Ա-ի ժամանակ, արքունիքի պահապան հայկական այս պահակախումբը լուծարքի ենթարկվեց, հավանաբար Արտավան և Արշակ Արշակունիների՝ կայսեր կյանքի դեմ նյութած դավադրության բացահայտումից հետո, թեև հայերից բաղկացած զորամիավորումները շարունակվում էին օգտագործվել տարբեր ռազմաճակատներում:

* * *

Երբ խոսք է լինում հայոց ներկայության մասին Բյուզանդական կայսրության մեջ, ուսումնասիրողները կանգ են առնում բացարձակապես տիրող դասակարգին պատկանող հայերի վրա: Եվ դա հասկանալի է: Եվ քանակական (ըստ Ա. Պ. Կաժդանի, 11–12-րդ դդ. նրանք կազմում էին բյուզանդական արիստոկրատիայի 15 տոկոսը, ըստ Կ. Թումանովի՝ 25 տոկոսը), և որակական առումով նշված թվերը տպավորիչ են, ամենախոսուն ցուցանիշը հայոց քաղաքական, մշակութային, դիտական և ռազմական իրոք բարձր մակարդակի, այլև այն փաստի, որ հայկական տարրը Բյուզանդիայում օտար չէր համարվում, այլապես հնարավոր չէր, որ նա դյուրությամբ զբաղեցներ այնքան բարձր դիրքեր: Բյուզանդական զորավար Կեկավմենոսը (11-րդ դար) իր գրքում կայսրին խորհուրդ է տալիս օտարներին բարձր պաշտոններ չտալ՝ երկու նկատառումներով. «Եթե,– գրում է նա,– դրսից եկած օտարին պրիմիկերիոսի կամ զորավարի պաշտոնը տաս, ապա հռոմայեցուն ի՞նչ

---

1 Նույն տեղում, էջ 296:

պիտի տաս... Բոլոր դեպքերում նրան պիտի թշնամացնես: Բացի այդ, օտար երկրում իմանալով, որ իրենց հայրենակիցը այդպիսի աստիճան ու պաշտոն է ստացել, պիտի ծիծաղեն և ասեն. «Մենք նրան այստեղ բանի տեղ չէինք դնում, գնալով Ռոմանիա (Բյուզանդական կայսրություն – Հ. Բ.) այդպիսի աստիճանի արժանացավ, ասել է՝ Ռոմանիայում կարող մարդ չկար, դրա համար մեր հայրենակիցը այնքան բարձրացավ: Եթե հռոմայեցիները կարող մարդիկ լինեին, նրան այդքան չէին բարձրացնի...»[1]:

Հայերը հասել էին ոչ միայն պրիմիկերիոսի և զորավարի պաշտոնի, այլև զբաղեցրել կայսրության թագն ու գայիսոնը, պատրիարքի խույրը: Բոլոր հարևան ժողովուրդներին բյուզանդացիները «բարբարոս» էին անվանում (օտարի իմաստով), բայց հայերին՝ երբեք, քանզի նրանք ոչ օտար էին, ոչ հարևան, այլ հարազատ ու ազգական տարր: Հույներին մի բան էր մտահոգում՝ այս կամ այն հայազգի զորավարը, կայսրը «ուղղափա՞ռ» (քաղկեդոնիկ) է, թե՞ ոչ: Կոստանդնուպոլսի պատրիարքին հետաքրքրում էր մի բան՝ հայոց միաբնակությունը. դրա համար կայսեր (գլխավորապես հայի) թագադրման ժամանակ նրանից պահանջում էր ներկայացնել իր հավատո խոստովանությունը: Եվ քանի որ նրանց տալիս էին այդ բարձրագույն աստիճանը, նշանակում է՝ նրանք իրոք խոստովանում էին հույների դավանանքով:

Հետազոտողները, ուսումնասիրելով Բյուզանդական կայսրության մեջ հայ ավագանու տեղը, ստվերի մեջ են թողել ոչ պակաս կարևոր մի հարց. Բյուզանդիայի սահմաններում հայ ժողովրդական զանգվածների, նրանց ստեղծած համայնքների պատմությունը: Որտե՞ղ էին նրանք գտնվում, սոցիալական ի՞նչ տարրերից էին բաղկացած, ինչպիսի՞ էին այն օրենսդրական ակտերը, որոնք վերաբերում էին նրանց, ինչպիսի՞ իրավունքներից էին նրանք օգտվում կամ չէին օգտվում՝ պետության քաղաքացիների հետ համեմատած: Քանի որ բյուզանդական հայազգի արիստոկրատիայի պատմությունը, ինչպես ասվեց, առավել կամ պակաս չափով ուսումնասիրված է[2], *այստեղ հիմնականում խոսքը վերաբերելու է Բյուզանդիայի հայկական համայնքներին:*

---

1 Советы и рассказы Кекавмена. Сочинение византийского полководца XI века. Подготовка текста, введение и комментарий Г. Г. Литаврина. Москва, 1972, с. 278.

2 S. Der Nersessian. Armenia and the Byzantine Empire, Cambridge, 1945. *Նույնի,* Études Byzantines et Arméniennes, t. I, Louvain, 1973. N. Adontz. The Role

Հայերին վերաբերող բազմաթիվ ու բազմաբնույթ աղբյուրների հետազոտումը, հունահայ համայնքների մասին գրանցում առկա հսկայական նյութի բացահայտումը մեր առաջ բացում են հունական աշխարհում գոյատևած հայաբնակ վայրերի մի անծայրածիր արշիալեպգ:

Բացի Թրակիայի և Կրետեի հայկական համայնքների կազմավորման որոշակի ժամանակից, մնացած հայ համայնքների սկզբնավորման ժամանակաշրջանները մնում են ցարդ անհայտ: Ուստի տվյալ շարադրանքի համար հնարավոր չէ ընդունել ժամանակագրական սկզբունքը: Մնում է հունահայ համայնքների պատմությունը շարադրել տարածքային մոտեցմամբ: Բնականաբար, կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսից բացի, խոսք կգնա փոքրասիական թերակղզու արևմտյան ափամերձ շրջանների հայկական համայնքների մասին: Անցնելով եվրոպական տարածք, սկսելու ենք Հյուսիսից՝ Թրակիա, Մակեդոնիա, Թեսալիա, Էտոլոակարնանիա, ապա Էգեական, Հոնիական կղզիներ, Կրետե: Աղբյուրների նշած հայկական համայնքների գոյության ժամանակագրական տվյալները ամենևին էլ չեն նշանակում, թե այդ համայնքները չէին կարող գոյություն ունենալ նախորդող և հաջորդող ժամանակներում:

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Բյուզանդական կայսրության տարածքում կազմավորված հայկական համայքների մասին խոսելիս անհրաժեշտ է նախ և առաջ կանգ առնել փոքրասիական թերակղզու համայնքների վրա: Հարկավ, կարևոր է անդրադառնալ կայսրության մայրաքաղաքին՝ Կոստանդնուպոլսին: Այստեղ եղե՞լ է արդյոք կազմակերպված հայկական հա-

---

of the Armenians in Byzantine Science. The Armenian Review 3 (1950), p. 55-73. *Նույնի*, Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965: P. Charanis, The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963. H. Grégoire, Maurice le Marcioniste, empereur arménien et "vert", Byzantion, 13, 1938; *Նույնի*, An Armenian Dynasty on the Byzantine Throne, Armenian Quarterly 11, 1946; C. Toumanoff, Caucasia and Byzantium, Traditio, 27, 1971; А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Ереван, 1975. *Նույնի*, The Armenians in the Byzantine Ruling Class predominantly in the Ninth through Twelfth Centuries: T. Samuelian and M. Stone (edt.). Medieval Armenian Culture (University of Pensylvania Armenian Texts and Studies 6), Chico, CA: Scholars Press, 1983, p. 440452.

մայնք, թե՞ ոչ: Աղբյուրներում թեև զինվորական կազմավորումների, հայ ազնվականների մասին՝ արքունիքում և նրանից դուրս, հիշատակությունները շատ շատ են, բայց հայկական համայնքի գոյության մասին մայրաքաղաքում որոշակի խոսք չկա: 967 թ. Փրկչի Համբարձման տոնի օրը (հունիսի 10-ին) մայրաքաղաքում տեղի ունեցած անկարգություններում մասնակցած հայերը զինվորնե՞ր էին, թե՞ հայկական համայնքի ներկայացուցիչներ, պարզ չէ: Այսպես, նշված օրը Նիկեփոր 2-րդ Փոկաս հայազգի կայսրը, ընդունված կարգի համաձայն, քաղաքի պարիսպներից դուրս՝ Պեգե կոչվող արվարձանում, շքերթ կազմակերպեց, որի ժամանակ, ըստ բյուզանդական հեղինակների, բյուզանդացիների և հայերի միջև կռիվ ծագեց, հայերի ձեռքով բազում քաղաքացիներ սպանվեցին: Երբ կայսրը երեկոյան վերադառնում էր պալատ, բյուզանդացիները նրա վրա լուտանքներ ու քարեր շպրտեցին[1]: Հայերի անկարգությունների համար այդպիսով հույները դաղաղած էին հայազգի կայսեր դեմ: Պարզ չէ, դա կապված էր անկարգների և կայսեր ազգության նույնության հանգամանքի հե՞տ, թե՞ ոչ: Այս նույն դեպքի մասին բյուզանդական մի այլ հեղինակ մատնանշում է, որ կռիվը բռնկվեց նավաստիների և հայերի միջև, որի մասին իմանալով՝ Կոստանդնուպոլսի «անկարգ քաղաքացիները», խմբեր կազմելով, կայսեր վերադարձին դուրս եկան և մահակներով սկսեցին հարվածել հայերին[2]: Նավաստիների և հայերի այս ընդհարման մասին խոսում է մի երրորդ հեղինակ: Դեպքը համարելով տեղի ունեցած Զատկի օրը՝ նա նշում է բազում սպանվածների մասին և ավելացնում, որ քիչ էր մնացել զոհ դառնար և քաղաքապետ Սիսինիոս մագիստրոսը, որ Նիկեփորը այդ առթիվ զայրացած էր քաղաքացիների հանդեպ, որպես խառնակությունների առիթ տվողների: Ապա նա ցույց է տալիս, որ երկրորդ ընդհարումը տեղի է ունեցել Համբարձման օրը, այսինքն՝ քառասուն օր անց[3]:

Հայկական համայնքը Կոստանդնուպոլսում հավանաբար մարդաշատ էր Ալեքսիոս Ա Կոմնենոսի ժամանակ (1081–1118 թթ.): Դա պարզ-

---

1 Leonis Diaconi Historiae Libri decem, e recensione Caroli Benedicti Nasii, Bonnae, 1828, p. 64-65.

2 Ioannis Zonarae epitome historiarum, ed. L. Dindorf, Lipsiae, t. IV, p. 86.

3 *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 16, Բյուզանդական աղբյուրներ, գիրք Գ, Հովհաննես Սկիլիցես: Թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 25–26: Տե՛ս և էջ 290–291, ծանոթ. 136:*

վում է հիշյալ կայսեր կողմից մի ոմն Նիլոսի դեմ[1] մղած դավանաբանական պայքարի աղերսով: Բյուզանդական նշանավոր կին պատմիչ Աննա Կոմնենեն՝ Ալեքսիոս կայսեր դուստրը, թեև Նիլոսին ինքնուս, հելլենական կրթությանը անմասն է համարում, այդուհանդերձ դժվար չէ ի դեմս նրա տեսնել լայն զարգացած մի անձնավորության, այլապես նա իր ետևից չէր տանի ազնվականական դասին պատկանող բազում մարդկանց և իր վրա չէր բևեռի անձամբ կայսեր ու բարձրագույն հոգևորականության ուշադրությունը:

Նիլոսի վարդապետությունը, որ հայոց դավանանքն էր, հիմնականում վերաբերում էր Քրիստոսի բնության հարցին: Աննա Կոմնենեն Նիլոսին ազդված է համարում հայերից, «որոնք շատ էին այն ժամանակ Կոստանդնուպոլսում»[2]: Նա տալիս է նրանցից երկուսի անունները՝ որպես Նիլոսի գաղափարների ջերմ պաշտպանների՝ Տիգրան (Τιγράνης) և Արշակ (Ἀρσάκης): Ալեքսիոս Կոմնենոսը, «տեսնելով, որ ամբարշտությունը շատերի հոգիներն է հուզել, որ Նիլոսի գաղափարները միահյուսվելով հայոց դավանության», խախտում են Քրիստոսի բնությունների մասին եկեղեցու հայրերի ուսմունքը, բարձր հոգևորականությանը Սինոդ է հրավիրում, և ժողովին մասնակցում է նաև Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկոլայոսը (1084–1111 թթ.): «Ժողովին Նիլոսը հայերի հետ մեջտեղ կանգնեց»[3] և սկսեց պաշտպանել իր վարդապետությունը: Սինոդը «շատերի հոգիները նրա փչացած վարդապետությունից ազատելու մտահոգությամբ, նրան հավիտենական նզովքի ենթարկեց»[4]:

Ասվածից պիտի ենթադրել միաբնակ հայերի զորեղ առկայությունը Կոստանդնուպոլսում 11–12-րդ դդ.[5]:

---

1 Նիլոսը հիշված է Սինոդիկոնում, եկեղեցու կողմից նզովված հերետիկոսների շարքում:

2 Anne Comnène Aléxiade. Règne de l'empereur Aléxis I Comnène (1081-1118), ed. B. Leib, t. II, Paris, 1967, p. 188.

3 Նույն տեղում, էջ 188–189:

4 Նույն տեղում, էջ 189:

5 Ալեքսիոս Կոմնենոսը հավանաբար այս առիթով ճառ էլ արտասանեց, որը պահպանվել է. «Ճառ մեծ կայսր տեր Ալեքսիոս Կոմնենոսի, արտասանված անձամբ ընդդեմ հայերի Քրիստոսի մեջ վատաբար մեկ բնություն դավանողների»: Հրատարակված է. Λόγος τοῦ μεγάλου βασιλέως κυροῦ Ἀλεξίου Κομνηνοῦ ἐκδοθεὶς παρ' αὐτοῦ πρὸς Ἀρμενίους δοξάζοντας κακῶς μίαν φύσιν ἐπὶ Χριστοῦ. Α. Παπαδόπουλος-Κεραμεύς, Ἀνάεκτα Ἱεροσολυμιτικῆς σταχυολογίας, τόμ. Α, Ἐν Πετρουπόλει, 1891, σελ. 116–118.

Հայերի դեպի Կոստանդնուպոլիս գաղթելու մասին 13-րդ դարում գրում է բյուզանդական պատմիչ Գեորգ Պախիմերեսը[1] իր «Պատմության» մեջ, որը վերաբերում է բյուզանդական երկու կայսրերի Միքայել 8-րդ (1259–1292 թթ.) և Անդրոնիկոս 2-րդ Պալեոլոգոսների (1282–1328 թթ.) ժամանակաշրջաններին: «Պատմությունն» ավարտվում է 1308 թ. դեպքերի նկարագրությամբ: Գեորգ Պախիմերեսը գրում է, որ իր ժամանակ «Քաղաքը (Կոստանդնուպոլիսը – Հ. Բ.) բազմաթիվ այլոց հետ ուներ նաև հայ գաղթականներ»[2]: Իսկ «Կոստանդնուպոլսի պատրիարքական պատմություն» Անանուն գործում, որ վերաբերում է 1454-ից մինչև 1578 թթ. ժամանակահատվածին, ցույց է տրված, որ Մուհամեդ 2-րդի կողմից քաղաքի առման (1453 թ.) հաջորդ օրը «տեղի է ունեցել սարսափազդու դիվան (ժողով), որի մասին իմացվել է համայն քաղաքում: Սուրբ Սոֆիա տաճարի դրսում հավաքվել են թուրքեր, հույներ, հայեր, հրեաներ և այլք, ամեն ցեղի մարդիկ, լսելու թագավորի (սուլթանի) վճիռը»[3]:

Այս կցկտուր տեղեկություններից պարզվում է, որ դարերի ընթացքում Կոստանդնուպոլսում շարունակ եղել է հայություն, այն էլ ոչ միայն որպես զինվորականություն և արիստոկրատիա, այլ որպես շարքային մարդկանց համայնք:

Բյուզանդական կայսրության Փոքրասիական թերակղզու արևմտյան ափերին գտնվում էին Օպսիկիոն, Թրակեսիոն և Կիբիրեոտների բանակաթեմերը: Սրանցում տարբեր ժամանակներում կազմավորվել էին հայկական համայնքներ, որոնցից ամենահինը, հավանաբար, Պերգամոնի համայնքն էր: Թրակեսիոն բանակաթեմում: Ամենահյուսիսում էր գտնվում Օպսիկիոն բանակաթեմը (կենտրոնը՝ Նիկիա քաղաքն էր), որտեղ հայերը հիշվում են 10–11-րդ դդ.:

Ալեքսիոս Կոմնենոսի դուստր Աննա Կոմնենեն իր «Ալեքսիականում», ինչպես կտեսնենք, մանրամասն խոսում է Հովհաննես Ա. Զմշկիկի (969–976 թթ.) կողմից հայերին Բյուզանդական կայսրության տարածքը բռնագաղթեցնելու մասին: Նրանք հիմնականում թոնդրակեցի աղանդավորներ էին, որոնք, ըստ պատմիչի, հաստատվեցին Թրա-

---

1 Georgii Pachymeris De Michele et Andronico Palaeologis Libri tredecem, rec. Im. Bekkerus, vol. II, Bonnae, 1835, p. 520.

2 *Նույն տեղում:*

3 Patriarchica Constantinopoleos Histroia a 1454 usque ad 1578 annum Christi, rec. Im. Bekkerus, Bonnae, 1849, p. 160.

կիայի Ֆիլիպուպոլիս քաղաքում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 10-րդ դարի վերջին Բյուզանդական կայսրությունը նվաճեց նաև Հարքն ու Մանանալին՝ թոնդրակյան շարժման երկու խոշոր կենտրոնները, պիտի ենթադրել, որ թոնդրակացիների բռնագաղթ տեղի է ունեցել նաև Հովհաննես Զմշկիկից հետո: Սակայն, ինչպես երևում է, թոնդրակացիները հաստատվեցին ոչ միայն վերոհիշյալ քաղաքում: 11-րդ դարի բյուզանդական պատմիչ Եվթիմիոս Ակմոնացին[1] մեզ տրամադրում է այնպիսի տեղեկություններ, որոնցից կարելի է եզրակացնել, որ թոնդրակացիներին բնակեցրին նաև փոքրասիական թերակղզու արևմտյան ափերին գտնվող Օպսիկիոն և Կիբիրեոտների բանակաթեմերում: Բյուզանդական պատմիչը նրանց անվանում է ֆունդակեցիներ (Φουνδαγῖται, Φουνδαγιάται), ազանդը՝ նորելուկ համարում, այսինքն՝ Բյուզանդիայում 10-րդ դարի վերջին – 11-րդ դարի սկզբին հայտնված և հայերի հետ առնչություն ունեցող: Հարկավ, «ֆունդակեցիներ» անվանումը «թոնդրակեցիների» աղավաղումն է: Եվթիմիոս Ակմոնացին հատկապես նշում է, որ ֆունդակեցիները «չափից շատ հարգում են պավլիկյանների և մանիքեցիների դաղափարները», որ նրանց տեսությունները «այդ անաստվածների դաղափարներին հար և նման են»[2]:

Եվթիմիոս Ակմոնացին ֆունդակեցիների ազանդի առնչությամբ նպատակահարմար է գտնում միաժամանակ քննադատել «հայոց պիղծ ու զզվելի հերձվածը», հանգամանք, որը մի անգամ ևս վկայում է, որ ի դեմս ֆունդակեցիների մենք գործ ունենք հայ ազանդավորների հետ:

Շատ հետաքրքրական է նշել, որ Օպսիկիոնի և Կիբիրեոտների բանակաթեմերի ֆունդակեցիները կապ էին հաստատել Թրակիայի իրենց ազանդակիցների հետ: Այդ մասին վկայում է նույն Եվթիմիոս Ակմոնացին՝ ցույց տալով, որ Վասիլ 2-րդ կայսեր թագավորության վերջին տարիներին (976–1025 թթ.) տեղի ազանդավորների պարագլուխներից մեկը՝ Կյուրեղը (Ցուրիլա) ամբողջ երեք տարի ազանդի դաղափարներն է քարոզել հենց Թրակիայում:

Ամենայն հավանականությամբ, թոնդրակեցիների բռնագաղթ տեղի է ունեցել Հովհաննես Զմշկիկից էլ առաջ: Սուրբ Պողոս Նորավկայի

---

1 G. Ficker, Die Phundagiagiten. Ein Beitrag zur Kirchengeschichte des byzantinischen Mitteralters, Leipzig, 1908; Euthymii monachi venerabilis coenobii Peribleptae Liber invectivus contra haeresim exsecrabilium et inpiorum haereticorum qui Phundagiatae dicuntur, Migne, Patrologia graeca, t. 131, col. 47-58.

2 G. Ficker, op. cit., p. 63.

(մեռ. 955 թ.) Վարքում խոսք է լինում Թրակեսիոն բանակաթեմի Սիլետոս քաղաքում և Կիբիրեոտների բանակաթեմում այդ սրբի կողմից «մանիքեցիների» դեմ մղած պայքարի մասին[1], հենց այն բանակաթեմում, որտեղ Եվթիմիոս Ակմոնացու տվյալներով, բնակվում էին ֆունդակեցիները[2]:

Ալեքսիոս Կոմնենոսի Կլիճ Արսլանի սելջուկ թուրքերի դեմ 1116–1118 թթ. վարած պատերազմների առնչությամբ Աննա Կոմնենեն Նիկիայի և Լևկեի միջև հիշատակում է Արմենոկաստրոնը[3] («Հայկական բերդ»), որի շրջակայքում, ամենայն հավանականությամբ, հայկական բնակավայր է եղել:

Ինչպես ցույց է տալիս Կոստանդին Ծիրանածինը, Օպսիկիոն բանակաթեմի կազմում էր գտնվում և հին Տրոյան[4], որտեղ և հանդիպում ենք Փոքր Ասիայի հայկական ամենաբազմամարդ համայնքին: Պատերազմի դեպքում նա կարող էր մեծաթիվ այրուձի հանել, փաստ, որ ինքնին վկայում է համայնքի մեծության մասին:

Բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատեսը Տրոյան հիշում է Բյուզանդական կայսրության 1204 թ. լատինների ձեռքն անցնելուն հաջորդած իրադարձությունների առնչությամբ, ապա և այն բացասական վերաբերմունքի աղերսով, որ Տրոյայի հայերը այդ ընթացքում ցուցաբերել էին բյուզանդական իշխանությունների հանդեպ: Հիշենք այստեղ, որ Կոստանդնուպոլսի անկումից հետո կայսր հռչակված Բալդուին Ֆլանդրացին (1204–1205 թթ.), անհանգստացած Թեոդորոս Ա Լասկարիսի պետության ամրապնդմամբ, որոշեց անցնել Փոքր Ասիա կայսրության հողերի նվաճման համար: Նրան այդ բանին էին դրդում ոչ միայն Հելլեսպոնտոսի Պեգե քաղաքում հաստատված վենետիկցիները, այլև Տրոյայի հայերը: Նիկետաս Խոնիատեսի ասելով, այս հայերն էին նրան և այլ կոմսերի դրդում այդ բանում, վստահեցնելով, որ Արևելքի քաղաքների գրավումը դժվարությունների հետ կապված չէ[5]:

---

1 Vita S. Pauli Iunioris in monte Latro. "Analecta Bollandiana". t. XI. Bruxelles, 1892. p. 156.

2 *Ֆունդակեցիների մասին տե՛ս* Р. М. Бартикян. Движение тондракитов в Византии. *Լրաբեր*, 1980, № 9, *էջ 58–67.*

3 Anne Comnène. Alexiade, t. III, p. 197-198.

4 Costantino Porfirogenito. De Thematibus. Indroduzione, testo critico, commento a cura di A. Pertusi, Città del Vaticano, 1952, p. 69.

5 Nicetae Choniatae Historia, rec. I. A. ven Dieten. Berolini et Novi Eboraci, 1975, p. 601.

Եվ ահա 1204 թ. նոյեմբերի 11-ին Բալդուին կայսեր եղբայր Հենրին (1206–1216 թ. կայսր) և Pierre de Bracheux-ն Կալիպոլիի վրայով շարժվում են դեպի արևելք: Հենրին, Տրոյայի հայերի հետ դաշնակցած և նրանցից զորք ստացած, սկսեց Թեոդորոս Լասկարիսին պատկանող և իրեն կամովին չհանձնվող քաղաքների ավերումը: Գրավելով Իզն լեռան շրջանը՝ նա շարժվեց դեպի Ատրամիտիոն (այժմ՝ Էդրեմիտ) և 1205 թ. փետրվարին գրավեց այն[1]: Թեոդորոս Լասկարիսի վրա մահացու վտանգ կախվեց: Սակայն Թրակիայում լատինների դեմ բարձրացված ապստամբությունը, ապա և բուլղարների ցար Կալոյանի ներխուժումը և Ադրիանուպոլսի տակ լատինների ջախջախումը, նրան փրկեցին: Ադրիանուպոլսի ճակատամարտի նախօրեին Բալդուին կայսեր եղբայր Հենրին Տրոյայի հայերի այրուձիով և 20.000 հայերով (ընտանիքներով)[2] եկել էր Ռոդոստո[3]: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Հենրին, պատերազմի ելնելով Թրակիայի ապստամբների և բուլղարների դեմ, վերցրած պիտի լիներ և Տրոյայի հայոց այրուձին, վերջինս մարտնչած պիտի լիներ նաև Արկադիուպոլսում, Ապրո քաղաքում, Օրեստիասում, Դիդիմոտիխոնում և այլուր:

Թրակեսիոն բանակաթեմի հին Պերգամոն քաղաքում հայկական համայնքն առաջացել էր հավանաբար 7-րդ դ., քանի որ 8-րդ դ. սկզբին այն կար, և այնտեղից էր սերում 711–713 թթ. Բյուզանդիայում գահակալած հայազգի կայսր Ֆիլիպիկոս-Վարդանը[1]: Նույն Թրակեսիոն բանակաթեմում, Եփեսոսի և Միլետոսի միջև գտնվող Պրինն քաղաքում գոյություն ուներ հայկական համայնք: Լևոն 6-րդ կայսեր օրոք (886–912 թթ.) այստեղ գինվորագրվեցին 500 հայեր (հավանաբար այրուձի) մասնակցելու համար պատրիկ Հեմերիոսի 912 թ. գլխավորած արշա-

---

1 *Նույն տեղում, էջ 602. Հմմտ.* Ephremii Monachi Imperatorum et Patriarcharum recensus, Bonnae, 1840, l. 7240-7249.

2 Nicetae Choniatae Historia. rec. Im. Bekker. Bonnae, 1835. p. 814.

3 Nicetae Choniatae Historia. rec. I. A. van Dieten. Berolini et Novi Eboraci. 1975. p. 601. П. И. Жаворонков. У истоков образования Никейской империи (оценка деятельности Константина XI Ласкаря), Византийский Временник, т. 38, 1977, с. 35, прим. 52.

4 H. Gelzer, Pergamon unter byzantinern und Osmanen. Abhandlungen der koniglich Preussischen Akademie der Wissenschaften. Berlin, 1903. (*Հայերին բերարերող հատվածի թարգմանությունը. Հ. Գելցեր. Հայ հասարակությունն ի Պերգամոն և Պերգամացին կայսերական դահի վրա. Հանդես Ամսօրյա, 1907, №8*):

վանքին, Կրետեն նվաճած արաբների դեմ[1]: Հինգ հարյուր հեծյալ սվող համայնքը պիտի որ բազմամարդ լիներ: Հայտնի է անգամ այդ 500 հոգուց յուրաքանչյուրի ստացած ռոճիկը հինգ դահեկան[2]: Հայտնի են և այդ արշավանքին մասնակցած հայ հրամանատարներից ոմանց անունները Թեոդորոս Պանկրատիոս (Բագարատ), Լևոն Սմբատիկ (Կիպրոսի կառավարիչ)[3] և ուրիշներ:

13-րդ դարում Միլնատոսում ևս հայություն է եղել: Սուրբ Աստվածածնի վանքին ոմն Մանուիլ Պալեոլոգոսի ծախած կալվածի վերաբերյալ 1250 թ. փետրվարին կազմված փաստաթղթի տակ որպես վկա ստորագրել են նաև Գեորգ քահանա Արմենոպուլոսը (Հայորդի) և Կոստանդին Արմենոպուլոսը[4]:

Զմյուռնիայի մոտիկ Լեմվոն լեռան վրա էր կառուցված Լեմվիոտիսա սբ. Աստվածածնի վանքը: Այն գոյություն ուներ վաղուց, բայց վերակառուցվեց Նիկիական պետության կայսր Հովհաննես Վատացեսի (1222–1254 թթ.) կողմից: 1247 թ. Հովհաննես Կանտակուզենոսն այն ազատեց հարկատվությունից: Պահպանվել են այդ վանքի հետ կապված բազմաթիվ փաստաթղթեր[5], որոնցում տեղեկություններ կան 12–13-րդ դարերում Զմյուռնիայի հայության մասին: Վանքին ձիթենիների վաճառքին վերաբերող 1181 թ. փաստաթղթի տակ ստորագրել է և կնքել ոմն Լևոն Հայը[6]: Նրա ստորագրությունն ու կնիքը հանդիպում են և մի շարք այլ փաստաթղթերի տակ: Ձիթենիները վանքին վաճառելու մասին 1232 թ. փետրվարի փաստաթղթում, որտեղ սահմանագծվում են նրանց սահմանները, ցույց է տրված, որ նրանք գտնվում են Ձիթենիքս վայրում և արևելքից ու արևմուտքից սահմանակից են հայերին: Փաստաթղթի տակ էլ, վկաների կնիքների թվում, դրված է և «վկա Կոստանդին Հայի» կնիքը[7]:

---

1 *Կոստանդին Ծիրանածին, էջ 145–146:*

2 *Նույն տեղում:*

3 R. Guilland, Le Protospathaire. In: Recherches sur lez Institutions byzantines, t. II, Berlin-Amsterdam, 1967, p. 103.

4 F. Miklosich et I. Müller, Acta et diplomata graeca medii aevi sacra et profana, vol. VI, Acta et diplomata Monasteriorum et Ecclesiarum Orientis, Vindobonae, 1890, p. 191-192.

5 Miklosich-Müller, Acta et diplomata graeca medii aevi vol. IV, Diplomatarium monasterii Beate Virginis in monta Lembo propre Smyrnam e codice Vindobonensi, Vindobonae, 1871.

6 Miklosich-Müller, Acta et diplo mata, vol. IV, p. 92, 94, 123, 134.

7 *Նույն տեղում, էջ 78–79:*

Զմյուռնիայի մետրոպոլիտությանը կից գտնվող ձիթենիների մի այդի վաճառում է 1237 թ. հունիսին ոմն Թեոդորոս Կուրտիկ[1]: Մականունից ելնելով կարելի է ասել, որ նա հայ էր: Լեմվիոտիսա սբ. Աստվածածնի վանքին նույնպես ձիթենիների վաճառքին վերաբերող 1281 թվակիր փաստաթղթի տակ կա վկա Հովհաննես Հայի ստորագրությունը[2]: Պետք է նշել, որ փաստաթղթերը վավերացնողն է եղել Թրակեսիոն բանակաթեմի դուքսը, 13-րդ դարում (1229, 1232, 1234, 1236, 1237, 1281 թթ.) դուքսերը եղել են հայկական ծագումով անձնավորություններ (Դիմիտրիոս Թոռնիկ, Հովհաննես Կուրտիկ, Անդրոնիկոս Կոմնենոս Կուրտիկ, ապա և Զմյուռնիայի կատապան Վարդաս Լևոն)[3]:

Հայերին են վերաբերում և Զմյուռնիայում «Արտավազդի կալվածքները»[4] (1234 թ.), «Հայի կալվածքը»[5] (1267 թ.), «Նիկիտա Վահանի կալվածքը»[6] (1276 թ.), վանքի վանահորը, ապա և տնտեսին բրածեծ տնողների, վանքը կողոպտողներից Թեոդորոս Հայի դեմ ներկայացված բողոքագիրը[7] և այլն:

ԹՐԱԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Հայկական զորամասերի առկայությունը Բյուզանդիայում և նրանց օգտագործումը կայսրության արտաքին թշնամիների դեմ չարունակվեց հատկապես Մավրիկիոս (Մորիկ) կայսեր թագավորության ժամանակաշրջանում (582–602 թթ.): Հանրահայտ է Սեբեոսի մոտ պահպանված և Մավրիկիոս կայսերը վերագրվող նամակը ուղղված պարսից արքա Խոսրով Բ Փարվեզին (590–628 թթ.). «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ դումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին, թշնամիք մեռանին. և եթէ սպանա-

1 Նույն տեղում, էջ 90–91:
2 Նույն տեղում, էջ 135:
3 Նույն տեղում, էջ 139, 145, 146, 147, 149, 193, 214, 219, 222, 240, 241:
4 Նույն տեղում, էջ 148:
5 Նույն տեղում, էջ 169:
6 Նույն տեղում, էջ 173:
7 Նույն տեղում, էջ 259:

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

նեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի»[1]:

Դժվար է բյուզանդական կայսեր կողմից նման նամակ գրելու իսկությունը հաստատել, բայց հայ ժողովուրդը, ականատես լինելով երկրի քաղաքական իրադրությանը, երբ պարսիկները հայոց այրուձին տանում էին Արևելք՝ քուշանների, հեփթաղների և Պարսկաստանի այլ թշնամիների դեմ մարտնչելու, իսկ բյուզանդացիները՝ Դանուբ գետից հարավ ընկած շրջանները՝ Թրակիա՝ ավարների, սլավոնների, գեպիդների և այլ բարբարոսների դեմ, որտեղ նրանք պարզապես կոտորվում էին, հավատացած էր, որ նման համաձայնություն պետք է որ կայացած լիներ երկու վեհապետների միջև:

Մավրիկիոս կայսրը ամենից առաջ հայոց այրուձին պատրիկ Ատատ Խորխոռունու, ապա և Մուշեղ Մամիկոնյանի[2] *գլխավորությամբ ուղարկում է Թրակիա, բարբարոսների դեմ, քանզի նրանք «աւար առին զթագաւորութեան, անհուն զաւրացն բազմութեամբ ի ձեռն հապճեպ պատերազմացն՝ զթագաւորութիւնն և զազգս Հռոմայեցւոց տէրութեանն կամեցեալ բառնալ, և թագաւորութեան տիրել անձամբ ի վերա թագաւորանիստ քաղաքին»*[3], *այսինքն՝ Կոստանդնուպոլսին: Մուշեղ Մամիկոնյանը հենց Թրակիայում էլ զոհվում է, նրա հետ զոհվում են նաև բազմաթիվ այլ նախարարներ:*

Սակայն դրանով չվերջացավ Մավրիկիոս կայսեր կողմից հայոց այրուձիի առաքումը Թրակիա: Մի փոքր անց երկու հազար հայ հեծյալներ Սահակ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու գլխավորությամբ պետք է դարձյալ ուղարկվեին Թրակիա, բայց հայոց մեծամեծները որոշեցին հրաժարվել, «զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանիլ ի վերայ աշխարհին իւրեանց»[4]: *Նույն կերպ վարվեց և Ատատ Խորխոռունին. թեպետև նրա զորագունդը արդեն Թրակիայում էր գտնվում, նա 601 թվականին հեռացավ Բյուզանդիայից:*

---

1 *Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 86:*

2 *Որպես բարբարոսների թագավոր, որ գերվում է բյուզանդացիների կողմից, Թեփանեսը հիշատակում է Մուսուկիոսին* (Μουσούκιος, Μουσούγιος) Theophanis Chronographia, ed. C. de Boor, Lipsiae 1883, p. 269: *Անունը անկասկած Մուշեղ անունն է...*

3 *Սեբեոս, էջ 90: Հմմտ.* Theophanis Chronographia, p. 267, 279, 284.

4 *Սեբեոս, էջ 92:*

Ինչպես երևում է վերոշարադրյալից, դեռևս չի կարող խոսք լինել Թրակիայում հայկական գաղութի ստեղծման մասին: Ամենից շատը կարելի է խոսել հայկական զինվորական գաղութների առկայության մասին, որոնք պարտավոր էին պաշտպանել կայսրության՝ Դանուբ գետից հարավ ընկած տարածքը: Այդուհանդերձ Մավրիկիոս կայսրը 601 թ. փորձ կատարեց Թրակիայում ստեղծելու հայկական գաղութ: Նա հրաման էր արձակել, որում ասված էր. «երեսուն հազար հեծեալ զգենակալ է, ասէ, իմ ի վերայ աշխարհին Հայոց: Արդ՝ ԼՌ երդաւոր ժողովեսցին ինձ անտի և նստուսցին ի Թերակացւոց աշխարհին»[1]:

Սրանից պարզվում է, որ Մավրիկիոսի նպատակն էր երեսուն հազար ընտանիք տեղափոխել Թրակիա, ընդ որում յուրաքանչյուր ընտանիք (երդը) տալու էր մեկ ձիավոր, ընդամենը երեսուն հազարանոց այրուձի: Կայսրի հրամանը Հայաստանում պիտի իրականացներ դեռևս Մավրիկիոս կայսրի կողմից 587 թ.՝ Արևելից, բայց հետագայում նաև Եվրոպայի (Արևմուտքի, Թրակիայի) զորավար նշանակված Պրիսկոսը[2]: Նա 601 թ. Թրակիայի զորավար էր[3], բայց Մավրիկիոսը «արձակոյր զ Պրիսկոս ի Հայս վասն գործոյն այնորիկ»[4]: Մավրիկիոսի ծրագիրը չիրականացավ, սկսվեց Փոկասի ապստամբությունը, և Պրիսկոսը Հայաստանից «յարուցեալ գնայր անհնարին տագնապաւ»[5]: Այսպիսով, Թրակիայում հայկական գաղութ Մավրիկիոսը այնպես էլ չստեղծեց:

Թրակիայի հայկական գաղութը որոշակիորեն կազմակերպվեց Ը դարում, և այն շարունակաբար գոյատևեց ամբողջ միջնադարի ընթացքում: Այդ միջոցին հիշյալ տարածքի վրա կազմավորվեց բուլղարական պետությունը, որը, սակայն, ժամանակ առ ժամանակ ընկնում էր Բյուզանդական կայսրության ազդեցության տակ, մինչև որ 14-րդ դարի վերջում դարձավ Օսմանյան պետության մի նահանգը:

Թրակիայում հայկական գաղութի ստեղծման փաստը ամենից վաղ արձանագրեց Ղևոնդ պատմիչը՝ չորոշակիացնելով Հայաստանից գաղթածների հաստատման վայրը, մի բան, որ պարզվում է բյուզանդական աղբյուրների տվյալներով:

---

1 *Սեբեոս, էջ 105:*

2 *Նույն տեղում, էջ 105: Համմ.* Theophanis Chronographia, p. 259, 269, 276:

3 Theophanis Chronographia, p. 281.

4 *Սեբեոս, էջ 105:*

5 *Նույն տեղում, էջ 105:*

747 թ. արաբական խալիֆայության մեջ սկսվեց գահակալական սուր պայքար իշխող օմայան հարստության խալիֆայի և գահին տիրանալու ձգտող Աբբասյանների միջև: Այդ խառնակ վիճակից փորձեցին օգտվել և՛ հայ նախարարները՝ Գրիգոր Մամիկոնյանի գլխավորությամբ, և՛ բյուզանդական կայսրությունը. «եւ մինչդեռ տակաւին յերկարէր մարտ պատերազմի ի մէջ նոցա,– գրում է Ղևոնդը,– յայնժամ խորհեցան ամենայն նախարարք աշխարհիս ընկենուլ զլուծ հնազանդութեանն և ապստամբիլ և ի բաց կալ ի հնազանդութենէն Իսմայելի»[1]: Նրանք «դնէին դաշինս ուխտի առ միմեանս միջնորդութեամբ տէրունական նշանին աննենգ պահել զսէր միաբանութեանն»[2]:

Հայոց ապստամբությունը նախապես համաձայնեցված էր բյուզանդական իշխանությունների հետ: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ նրանք, լքելով արաբ ոստիկանին, որին ենթարկվում էին, գնացին և ապաստանեցին Տայքի ամրություններում՝ «հանդերձ ամենայն ընտանեօք իւրեանց և ամենայն աղխիւք. և ապաստանեալք առաւել ի զօրս արքային Յունաց որք էին ի կողմանս Պոնտոսի, քանզի էր ի մէջ նոցա ուխտ խաղաղութեան հրամանաւ կայսերն Կոստանդնի»[3]:

Բյուզանդական զորքերը իրենց հերթին հարձակվեցին արաբների գերիշխանության տակ գտնվող հայկական շրջանների վրա: Թեոփանես խոստովանողի ասելով՝ Կոստանդին կայսրը (741–775 թթ.) իր թագավորության 11-րդ տարում (752 թ.) գրավեց Թեոդոսուպոլիս (Կարին) քաղաքը, ինչպես և Մելիտենեն և «գերեց հայերին»[4]: Ղևոնդ պատմիչը Կարինի գրավումը վերագրում է Գրիգոր Մամիկոնյանին. «Գրիգոր որպէս ի մեծ արիութենէ դարձեալ՝ անկանէր ի քաղաքն Կարնոյ. և առաքէր ի կողմանս կողմանս աւետիս զյաղթութեան իւրոյ»[5], թեև մի փոքր հետո ցույց է տալիս, որ Կոստանդին կայսրը «բաղում և ծանր ամբոխիւ գայր հասանէր յաշխարհն Կարնոյ ի քաղաքն որ կոչի Թէոդուպոլիս: Եւ իբրև յական թօթափել կործանէր զդղեակ պարիսպ ամրոցին արքայն Կոստանդին որ էր որդի Լևոնի»[6]: Ինչ էլ լինի, խոսք չի կարող

---

1 Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 121:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 123:

4 Teophanis Chronographia, p. 137.

5 Ղևոնդ, էջ 124:

6 Նույն տեղում, էջ 129:

լինել հայոց «գերության» մասին բյուզանդական կայսրի կողմից: Դեպքերին և շրջանին ավելի մոտիկ կանգնած Ղևոնդ պատմիչը խոսում է գրավված, տվյալ դեպքում Կարինի հայության, բյուզանդական կայսրի կողմն անցնելու կամավորության մասին. «Եւ բազումք ի բնակչաց գաւառացն խնդրեալ յարքայէն, զի ընկեսցեն զանուր լծոյ ծառայութեանն Իսմայելի յանձանց և գնասցեն զկնի նորա: Եւ նորա տուեալ հրաման, վաղվաղակի հանդերձեալ զաղխս իւրեանց՝ խաղացին յառաջ, ապաւինեալք ի զօրութիւն տէրունական խաչին և ի փառս արքային. թողին զերկիր ծննդեան իւրեանց, և հատուածեալք անկան ի կողմն արքային բարեպաշտի»[1]*: Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեփորն էլ (806–815 թթ.) ցույց է տալիս, որ հիշյալ քաղաքները «Կոստանդին Ե կայսրը դրավեց նրանց բնակիչների օժանդակությամբ* (ὁμολογίᾳ τῶν προσοικούντων)*: Քանզի նրանք հայ և ասորի քրիստոնյաներ էին»*[2]*:*

Ղևոնդը չի նշում՝ որտեղ գաղթեցին, հաստատվեցին Կարինից (և Մելիտենից) Բյուզանդիա տեղափոխված հայերը: Դա մենք իմանում ենք Թեոփանես Խոստովանողից: Նա, այս անգամ Կոստանդին կայսրի թագավորության 15-րդ տարվա տակ (756 թ.), նշում է, որ «Կոստանդին կայսրը Թեոդոսուպոլսից և Մելիտենից գաղթեցրած ասորիներին և հայերին Թրակիայում վերաբնակեցրեց: Նրանցից ընդարձակվեց պավլիկյանների աղանդը»[3]*: Այս հաղորդման մեջ ահա հանդես են գալիս, բացի հայերից, նաև ասորիները, և դա իրապես այդպես է, քանի որ, ինչպես պիտի տեսնենք հետագայում, Թրակիայի Ֆիլիպուպոլիս քաղաքում, որտեղ նրանք բնակեցվեցին, հայերի կողքին հիշվում են և ասորիները:*

Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեփորի տվյալներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ Ֆիլիպուպոլիսը Թրակիայի միակ քաղաքը չէր, որտեղ հաստատվեցին հայերն ու ասորիները: Նա գրում է. «Կոստանդինը սկսեց Թրակիայում կառուցել քաղաքներ (πολίσματα)*, որտեղ բնակեցնում է Մելիտենից և Թեոդոսուպոլսից գաղթեցրած ասորինե-*

---

1 *Նույն տեղում:*

2 S. Nicephori Patriarchae Constantinopolitani, Antirrheticus adv. Const. Corp., Migne, Patrologia graeca, t. 100, col. 508-509. Idem: De rebus post Mauricium gestis, MPG, t. 100, col. 992-993.

3 Teophanis Chronographia, p. 140.

ին և հայերին՝ առատաձեռնորեն ապահովելով նրանց ամեն անհրաժեշտ բանով»[1]:

Խնդրո առարկա գաղթը այնքան մեծ տպավորություն էր գործել ժամանակակիցների վրա, որ նրա մասին վկայում են ոչ միայն հայ ու բյուզանդացի, այլև արաբ ու ասորի հեղինակները: Քրիստոնյա արաբ պատմիչ Ագապիոս (Մահբուբ) Մենբիջացին ցույց է տալիս, որ «երբ արաբները զբաղված էին (քաղաքացիական) պատերազմով, հույների կայսրը հարձակվում է Մալաթիայի վրա, գրավում այն, գերում նրա բնակիչներին և վերադառնում»[2]: *Շարունակելով իր պատմությունը՝ նա գրում է, որ «հայոց հրամանատար (պատրիկ) Քուշանը, Հայաստանի բնակիչների մեծ մասին առնելով, տեղափոխում է հույների երկիրը»*[3]:

Ագապիոսը գիտե նաև Կարինի գրավման և նրա բնակչության գաղթեցման մասին: «Ապա հույների կայսր Կոստանդինը,– գրում է նա,– հարձակվեց Կալիկալայի (Թեոդոսուպոլսի) վրա, գրավեց այն և գերի քշեց նրա բնակիչներին»[4]: *Իսկ Միքայել Ասորին իր հերթին գրում է. «Ժողովեալ (Կոստանդին կայսրը – Հ. Բ.) զօրք, եկն ի Մելտենի Հայոց և ի մերձակայ գաւառսն, և առեալ զՀայս և զԱսորիս որ ընդ իշխանութեամբ Տաճկաց (իմա արաբների – Հ. Բ.) տարաւ՝ ասելով ցՅոյնսն. «քրիստոնեայք են, ասէ, ընդ մեզ լիցին իբրև եղբայր և որդիք մեր»*[5]: *Սրանց գաղթեցման դեմ էին հույները, պատճառաբանելով, թե նրանք «հայհոյեն մեզ և ատեն և նզովեն զժողովն չորրորդ»*[6]: *Խոսքը Քաղկեդոնի Չորրորդ տիեզերական ժողովի մասին է:*

---

1 Sancti Nicephori CP Breviarium historicum de rebus gestis post imperium Mauricii, Migne, Patrologia graeca, t. 100, col. 976. Cf. Georgii Monachi Chronicon, ed. C. de Boor, Lipsiae, 1904, p. 763. *Պիտի իրականությանը չհամապատասխանի Լևոն Քերականի տեղեկությունը, թե Թրակիայից բացի գաղթականները բնակեցվեցին նաև Կոստանդնուպոլսում:* Leon Grammaticus, Chronographia, ed. I. Bekker, Bonnae, 1842, p. 185.

2 Kitab al-Uhvan, Histoire Universelle, écrit par Agapius (Mahboub) de Menbidj, éditée et traduite en français par Alexandre Vasiliev, Patrologia Orientalis, t. VIII, fasc. 3, p. 531.

3 *Նույն տեղում: Այս հայերին, նույն հեղինակի ասելով, արաբ զորավար Սալիհ իբն Ալին կարողանում է ձեռք գցել և հաստատել Ասորիքում:*

4 *Նույն տեղում:*

5 *Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 348:* Michel le Syrien, Chronique. Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, Paris, 1901, t. II, p. 521-522.

6 *Նույն տեղում:*

Ահա, այսպիսով, Թրակիայում, Բյուզանդական կայսրության եվրոպական տարածքում հիմնադրվում է հայկական առաջին գաղութը: Բյուզանդական իշխանությունների մտահոգությունը հարկավ մեկն էր՝ Դանուբ գետից հարավ ընկած տարածքների պաշտպանությունը, սկզբնական շրջանում սլավոնների, հետագայում նաև պեչենեգների և Թրքալեզու այլ ցեղերի արշավանքներից: Որ 756 թ. Թրակիա գաղթեցված հայերից կազմավորվել էին կանոնավոր զորագնդեր, վկայում է սուրբ Ստեփանոս Նորավկայի վարքը[1], որտեղ ցույց է տրված, որ 765 թ., այսինքն՝ գաղթից ընդամենը մեկ տասնամյակ անց, կայսրության «եվրոպական մասում» գոյություն ուներ «հայկական զորագունդ» որը ենթարկվում էր «Թրակիայի զորավարին»: Վերջինիս վարքագիրն «արխիստրատ» է անվանում, պարզ է՝ ոչ «ուղղափառ»: Զորագնդի անդամները ևս, վարքագրի ասելով, պատկերամարտներ էին:

Սակայն Թրակիա տեղափոխված հայերը միայն քաջ զինվորներ ու զինվորականներ չէին, այլև շատ դործունյա և հմուտ առևտրականներ ու արհեստավորներ, որոնք մեծապես նպաստեցին առևտրի և արհեստների զարգացմանը ոչ միայն Թրակիայում, այլև նրան մերձավոր շրջաններում: Թեև միջնադարյան աղբյուրները այդ մասին ուղղակի տեղեկություններ չեն հաղորդում, կողմնակի փաստերը հաստատում են այդ ենթադրությունը:

Կոստանդին 7-րդ Ծիրանածինը խոսում է «Թրակիայի Մակեդոնիայի» մասին, ասել է՝ Մակեդոնիայի որոշ շրջաններ, այդ թվում և Ադրիանուպոլիս քաղաքը, այդ նահանգի մաս էին կազմում: 812 թվականին բուլղարների խան Կրումը արշավում է և գրավում Թրակիայի բազում շրջաններ, ապա և հենց Ադրիանուպոլիս քաղաքը, որտեղից գերեվարում է բազմաթիվ հայերի և տեղափոխում Դանուբ գետից հարավ ընկած շրջանները: Այդ գերիների մեջ էր և ապագա հայազգի կայսր, Մակեդոնական հարստության հիմնադիր Վասիլ Ա-ի ընտանիքը՝ դեռևս մանուկ Վասիլի հետ[2]: Կրումը հիշյալ շրջաններում ձեռք է բերում հսկայական քանակությամբ ավար, որի թվում էին «հայկական կարպետներ և բարձրորակ դորգեր», անթիվ հանդերձներ ու պղինձ-

---

1 Հ. Մ. Բ ա ր թ ի կ յ ա ն, Հայ-բյուզանդական նոթեր, Տեղեկագիր, 1960, № 7–8, էջ 130–131:

2 Այս գերիները 837–838 թթ. վերադարձան: Տե՛ս N. Adontz, L'âge et l'origine de l'empereur Basile I (867-886). In: Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965, p. 50.

ներ[1], ասել է՝ Թրակիայի հայերի մեջ կային հմուտ գորգագործներ և պղնձագործներ: Այս հայ արհեստավորները, հատկապես գորգագործները, ամենայն հավանականությամբ, կես դար առաջ Կարինից Թրակիա գաղթեցված հայերի շառավիղներն էին: Կարինը գորգագործության նշանավոր կենտրոն էր: Արաբ պատմիչ Յակուտ ալ-Ռումի ալ-Համավիի ասելով՝ «խալի» (գորգ) բառը ծագում է Կարին (արաբ. Կալիկալա) քաղաքի անունից[2]:

Այս շրջանում Թրակիայում կային և անվանի հայ ճարտարապետներ, և քարագործ վարպետներ: Ճարտարապետության պատմության ճանաչված հեղինակ Ա. Լ. Յակոբսոնը իր ուսումնասիրություններից մեկում ցույց է տալիս, որ բուլղարական խան Կրումի և նրա որդի ու հաջորդ Օմուրտագի՝ Պլիսկայում և Պրեսլավայում գտնվող պալատները հայ ճարտարապետներ են կառուցել, քանզի զարմանալի նմանություններ ունեն Զվարթնոցի, Դվինի և Արուճի 7-րդ դարի պալատական շենքերի հետ[3]: Նշենք, որ Կրումի պրոտոբուլղարական մի արձանագրության տվյալներով, հիշյալ ժամանակ բուլղարական պետության «աջ մասի» կառավարիչը բուլղար Տուկն էր: Նրան էին ենթարկվում զորավարներ Վարդանն ու Հովհաննեսը, իսկ «ձախ մասի» կառավարիչը՝ կավխան Իրատայսը, որին ենթարկվում էին զորավարներ Գարջուլլն ու Գրիգորը[4]: Ինչ վերաբերում է Օմուրտագին, ապա նրա զորավարներից մեկի տապանաքարի վրայի արձանագրությունը նշում է, որ այնտեղ թաղված է բյուզանդական «կանդիդատի» զինվորական աստիճանը կրող ոմն «Տուրդած», այսինքն՝ Տրդատ, որ համարվում է Օմուտագի «հավատարիմ մարդը»:

Ինդրո առարկա ժամանակաշրջանում հայերի գաղթը Թրակիա շարունակվում էր: Այդ մասին է վկայում 902 (կամ 903) թվականին վախճանված բյուզանդական եկեղեցու երկրորդ հայ սրբուհու (առաջինը՝ Թեոդորա կայսրուհին էր) Մարիամ Նորավկայի վարքը[5], որից պարզ-

---

1 Symeonis Magistri Annales (=Theoph. Cont., Bonnae, 1838, p. 617).

2 Jacut's Geographisches Worterbuch. Bd. IV, 19.

3 А. Л. Якобсон. К изучению раннесредневековой болгарской архитектуры (армянские параллелы), Виз. Временник, т. 28, 1968, с. 195—206.

4 Р. М. Бартикян. О протоболгарских надписях ханов Крума (803—814) и Омуртага (814—831) и некоторых вопросах организации раннеболгарского государства. *Լրաբեր*, 1981, №4, с. 67—76.

5 *Հ. Մ. Բարթիկյան, Մամիկոնյան (՞) սուրբ Մարիամ Նորավկայի (+902/903 թթ.) բյուզանդական Վարքը. Էջմիածին, 1975 թ. դեկտեմբեր, էջ 39–46, 1976 թ. հունվար, էջ*

վում է, որ Թրակիայի հայկական գաղութը Ֆիլիպուպոլիս (և Ադրիանուպոլիս) քաղաքներով չէր սահմանափակվում, այն ավելի լայն շրջաններ էր ընդգրկում: Վարքագրի ասելով, Վասիլ Ա կայսրի թագավորության օրոք (867–886 թթ.) «Մեծ Հայքի մեծամեծներից (հավանաբար՝ նախարարներից – Հ. Բ.) ոմանք ներկայացել են Վասիլ կայսրին, և նա հաճույքով ընդունել էր նրանց, նվերներ տվել, շնորհել պաշտոններ և բարձրագույն աստիճաններ: Նրանցից մեկն էլ բարեպաշտ Մարիամի հայրն էր»՝ «ազնվական ու փառավոր»: Որտեղ վերջնականապես հաստատվեց Մարիամ Նորավկայի՝ Կոստանդնուպոլիս եկած հայրը, նշված չէ, բայց Մարիամին և նրա մի շարք ազգականների գտնում ենք Թրակիայի Մեսենե, Բիզյուն և Սև Ծովի ափին գտնվող Միդիա քաղաքներում, ասել է, այդ քաղաքներում ևս գոյություն ուներ հայ բնակչություն: Մեսենեի հայությունը հայադավան էր, բայց կային և վրացադավան հայեր, քանզի սուրբ Մարիամի քույրերից մեկը ամուսնացել էր ոմն Վարդի հետ, որին «վրացի» էին հորջորջում, ասել է՝ վրացադավան: Նշենք նաև, որ սուրբ Մարիամի որդիներից երկուսը կոչվում էին Վարդան և Վահան, անուններ, որ տարածված էին Մամիկոնյան նախարարական տան անդամների շրջանում: Այս հանգամանքը կարող է կռվան հանդիսանալ սուրբ Մարիամի ընտանիքին Մամիկոնյանների շարքը դասելու համար: Սա վկայում է նաև, որ 5-րդ դարի հայոց ազատագրական պատերազմների հերոսների՝ Վարդանանց և Վահանյանց ավանդությունները վառ պահվել էին դարեր անց անդամ օտարության մեջ ապրող հայերի շրջանում:

Հայերի զանգվածային գաղթ դեպի Թրակիայի Ֆիլիպուպոլիս քաղաքը իրականացվեց հայազգի Հովհաննես Ա Զմշկիկ կայսեր կողմից (969–976 թթ.): Դրա մասին արժեքավոր տեղեկություններ է պահպանել Ալեքսիոս Ա Կոմնենոս կայսրի (1081–1118 թթ.) դուստր Աննան՝ իր նշանավոր «Ալեքսիական» աշխատության մեջ, որն իրենից ներկայացնում է իր հոր ներբողյանը: Այս նոր գաղթը նախորդների նման ստրատեգիական նպատակներ էր հետապնդում՝ Դանուբ գետից հարավ ընկած բյուզանդական շրջանների համար հայ զինվորներից ու զինվորականներից հուսալի պատնեշ ստեղծել արտաքին թշնամիների՝ ռուսների, ապա նաև կոմանների, պեչենեգների, ուզերի, հունգարացիների

42–49, 1976 թ. փետրվար, էջ 52–57: Նույնի՝ Ο Βάρδας Βρατζῆς. Жития св. Марии Новой и византийских патронимах Иверици и Ватаци. *Պատմա-բանասիրական հանդես, 1980, №3, էջ 244–250:*

(աղբյուրներում կոչված են թուրքեր) և այլ ժողովուրդների հարձակումների դեմ: Աննա Կոմնենեն գրում է. «Վայրենի գաղափարների տեր, դաժան, իրենց արյունը [պատերազմներում] թափելուց չվախեցող [մանիքեցիներին] հրաշալի կայսր Հովհաննես Զմշկիկը, պատերազմում հաղթելով, գերեվարեց և Ասիայից՝ խալիբներից ու հայկական շրջաններից Թրակիա տեղափոխեց, ստիպելով Ֆիլիպուպոլսում բնակվել: Նա այդպիսով նրանց հեռացրեց բռնությամբ տիրած իրենց անառիկագույն քաղաքներից ու բերդերից, բայց և ամենահուսալի պահապանների վերածեց ընդդեմ սկյութական (իմա սլավոնական — Հ. Բ.) այն հարձակումների, որոնցից տուժում էին սկյութական արշավանքների պատճառով Թրակիայի շրջանները: ...Հովհաննես Զմշկիկը, մեզ հակառակորդ աղանդավոր մանիքեցիներին դարձնելով դաշնակից, զինական մարտունակ ուժեր ստեղծեց, այդ սկյութ վաչկատուների դեմ կանգնեցրեց, որով [Թրակիայի] քաղաքները [թշնամու] բազում արշավանքներից չունչ քաշեցին»[1]:

Աննա Կոմնենեն անտիկ շրջանի «խալիբներ» տերմինը օգտագործում է ամենայն հավանականությամբ խաղտիքի (խալդիա բանակաթեմի) փոխարեն, իսկ «մանիքեցիներ» ասելով, նկատի ունի պավլիկյաններին, վերջիններս բյուզանդական սկզբնաղբյուրներում հաճախ «մանիքեցի» են կոչվում: Պիտի նկատել, սակայն, որ Հովհաննես Զմշկիկից հարյուր տարի առաջ, Վասիլ Ա-ի օրոք, 872 թ. Արևելքի պավլիկյանները, բյուզանդական բանակի կողմից ջախջախիչ հարված ստանալով, դադարեցին գոյություն ունենալուց: Ուստի Աննա Կոմնենեի «մանիքեցիները» պիտի որ թոնդրակեցիներ լինեին: Նրանց գաղափարախոսությունը չէր տարբերվում պավլիկյանների գաղափարախոսությունից, իսկ կրողները հայերն էին[2]:

Հովհաննես Զմշկիկի կողմից Ֆիլիպուպոլիս գաղթեցված թոնդրակեցիները, միանալով քաղաքում ապրող իրենց հայրենակիցներին՝ հայազգի պավլիկյաններին, քաղաքում այնքան ստվար և հզոր տարր կազմեցին, որ Աննա Կոմնենեն անհրաժեշտ գտավ այդ մասին անդրադառնալ: «Մանիքեցիները,— գրում է նա,— լինելով ի բնե աղատատենչ ու սանձարձակ, իրենց բնությունը չփոխեցին և ուզածն էին կատա-

1 Anne Comnène, Aléxiade. Règne de l'empereur Aléxis Ier Comnène (1081-1118). Texte établi et traduit par B. Leib, t. III, Paris, 1945, p. 180.

2 Տե՛ս Բ. Մ. Բարթիկյան, Движение тондракитов в Византии. *Լրաբեր*, 1980, №9, с. 58—68.

ռում: Համայն Ֆիլիպուպոլիսը, բացառությամբ քչերի, մանիքեցիներ էին, որոնք տեղացի քրիստոնյաների վրա բռնանում էին, հափշտակում նրանց ունեցվածքը, շատ քիչ կամ ամենևին ուշադրություն չդարձնելով կայսրի կարգադրություններին: Ամբողջ շրջանը աղանդավորներով էր բնակեցված»[1]:

Աննան Ֆիլիպուպոլսում նշում է նաև «հայերի» այսինքն՝ հայադավան, ոչ հերետիկոս հայերի առկայությունը, ապա և հակոբիկների, այսինքն՝ ասորիների, որոնք դեռևս 8-րդ դարում Հայաստանից դաղթեցվածների շառավիղներն էին: Աննան ցույց է տալիս, որ թեև «մանիքեցիները», հայերը և ասորիները դոգմաների հարցում հակադրվում են միմյանց, խռովությունների ժամանակ բոլորն էլ միանում են «մանիքեցիներին»[2]:

Ալեքսիոս Ա Կոմնենոսը 1081 թ. գահ բարձրանալով, պատերազմի բռնվեց Ռոբեր Գիսկարի գլխավորած նորմանդացիների հետ: Բյուզանդական կայսրի բանակում կար 2800 «մանիքեցիներից» բաղկացած զորաբանակ, որոնց գլխավորում էին Բասանտասն[3] *ու Կուլեոնը՝ «նույն աղանդը դավանող»*[4]: *Աննա Կոմնենեն գրում է նրանց մասին. «Սրանք բոլորը գերազանց պատերազմողներ էին, առիթն առաջանալու դեպքում թշնամու արյունը խմելու պատրաստ»*[5]: *Սակայն նրանք, լքելով Ալեքսիոսին, «տուն են վերադառնում» (այսինքն՝ Ֆիլիպուպոլիս), հրաժարվում պատերազմին մասնակցել: «Կայսրը բազում անգամ դիմեց նրանց վերադառնալ, բայց նրանք, թեև խոստանում էին, ընդառաջ չէին գնում, անընդհատ հետաձգում էին դալը: Կայսրը նրանց նվերներ, պատվաստիճաններ էր խոստանում, բայց ապարդյուն»*[6]:

Լատինների դեմ պատերազմի հաջող ավարտից հետո (1082 թ.), Ալեքսիոս Կոմնենոսը ձեռնամուխ եղավ պավլիկյանների հարցի լուծմանը: Նա ձերբակալեց նրանց մեծամեծներին, գրավեց նրանց ունեցվածքը և աքսորեց կղզիները[7]: *Սակայն նրանցից մեկը, անունը Տրավլոս (Թլվատ), պավլիկյանների գլուխն անցած, խռովություն է բարձրաց-*

---

1 Anne Comnène, Aléxiade, t. III, p. 180-181.

2 *Նույն տեղում, էջ 181:*

3 *Հունարենում «քս» (ξ) տառով տառադարձվում էր հայերենի «չ»-ն (Արտաշես – Արտաքսերքսես), որով Բասանտասը կարող է հայերեն «Շանթ»-ը լինել:*

4 Anne Comnène, Aléxiade, t. I, p. 151.

5 *Նույն տեղում:*

6 *Նույն տեղում, հտ. Բ, էջ 14:*

7 *Նույն տեղում, հտ. Բ, էջ 45:*

նում, դաշնակցում Դանուբ գետի շրջանում բնակվող «սկյութների» (սլավոնների) հետ և ավարառում Թրակիայի շրջանները[1]:

Ալեքսիոս Կոմնենոսին մնում է լրջորեն զբաղվել պավլիկյանների հարցով: Նրանց «դարձի բերելուն» օժանդակում էր Նիկիայի եպիսկոպոս Եվստրատիոսը, ինչպես և տեղի՝ Ֆիլիպուպոլսի եպիսկոպոսը:

Աննա Կոմնենի ասելով, «այն ժամանակ մանիքեցիներից շատերը պատրաստակամությամբ դիմեցին (հույն) հոգևորականներին, խոստովանեցին իրենց մեղքերը, ուղղափառություն ընդունեցին... և սուրբ մկրտության արժանացան»[2]: Սակայն նրանց պարագլուխներին՝ Կուլեոնին, Կուսինոսին և Ֆոլոսին չկարողանալով «դարձի բերել»՝ կայսրը ձերբակալելով Կոստանդնուպոլիս տեղափոխեց[3], ուրիշներին էլ կաշառելով զինվորագրեց, ցածր խավին պատկանողներին էլ՝ հողագործներին, անասնապահներին՝ կանանց ու երեխաների հետ տեղափոխեց Ֆիլիպուպոլսի մոտ կառուցած և Ալեքսիուպոլիս անունը կրող (այն կոչվում էր նաև Նեոկաստրոն՝ Նոր բերդ) քաղաքը՝ հողեր ու խաղողի այգիներ, տներ և անշարժ այլ ունեցվածք նվիրելով»[4]: Այս մեջբերումից դժվար չէ նկատել, որ Ֆիլիպուպոլսի, ընդհանրապես Թրակիայի պավլիկյան աղանդավորների շրջանում սոցիալական շերտավորումը արդեն առկա է: Բայց դա դեռ բոլորը չէր: 1083 թ. Ֆիլիպուպոլսում քաղկեդոնիկ հայ Գրիգոր Բակուրյանը Պետրիցոս (Բաչկովո) գյուղում հիմնադրում է սուրբ Աստվածածնի իր նշանավոր վանքը: Գրիգոր Բակուրյանը նշանավոր այն զինվորականն էր, որը մասնակցություն ունեցավ դավադրության, և դրա հետևանքով բյուզանդական գահը բարձրացավ Ալեքսիոս Ա Կոմնենոսը: Որպես վարձատրություն նա բաղում շնորհների արժանացավ: Ալեքսիոս Ա Կոմնենոսը Բակուրյանին նշանակեց Արևմուտքի մեծ դոմեստիկոս, մի պաշտոն, որն ինքը Ալեքսիոսն ուներ նախքան կայսր դառնալը: Գրիգոր Բակուրյանի էթնիկական պատկանելության մասին հստակ խոսում է Աննան: «Այս այրը,– գրում է նա Գրիգոր Բակուրյանի մասին,– թեև փոքրահասակ էր, բայց քաջ պատերազմող: Նա սերում էր հայկական փառահեղ տոհմից»[5]: Սուրբ Աստվածածնի վանքի համար իր կազմած Կանոնադրության (Տիպիկոնի) մեջ,

---

1 Նույն տեղում, հտ. Բ, էջ 82:

2 Նույն տեղում, հտ. Բ, էջ 182:

3 Նույն տեղում, էջ 183–184:

4 Նույն տեղում, էջ 184:

5 Նույն տեղում:

որի հունարեն բնագիրը (այն ուներ վրացերեն և հայերեն տարբերակներ, վերջինս չի պահպանվել) ստորագրել է «Հայերեն տառերով», նա հիշում է իր հորը՝ «երանելի Բակուրիանին, իշխանաց իշխանին»: Այդ Կանոնադրությունից իմանում ենք, որ նա նախքան Արևմուտքի դոմեստիկոսի պաշտոնն ստանալը գործել է «Հայաստանում և Իբերիայում» (հավանաբար՝ «Հայաստանի և Իբերիայի բանակաթեմում»), ինչպես և Ասորիքում, կալվածքներ ուներ Հայաստանում, Արմենիակների բանակաթեմում, ապա Թրակիայում՝ Մոսինուպոլսում, Ֆիլիպուպոլսում և Սերեսի մոտակայքում:

Ինչպես պարզվում է խնդրո առարկա Կանոնադրությունից, Գրիգոր Բակուրյանի կողմից Ֆիլիպուպոլսում կառուցված վանքը վայելում էր արտակարգ առանձնաշնորհումներ: Այն ինքնուրույն էր, ինքնակառավարվող, ամեն տեսակի՝ կայսերական և պատրիարքական հարկերից ազատված, նա միակ տերն էր իրեն նվեր տրված և իրեն պատկանող շարժական ու անշարժ գույքի[1]:

Դեռևս Ն. Մառը ենթադրել էր, որ Գրիգոր Բակուրյանի վանքին Ալեքսիոս կայսեր ընձեռած առանձնաշնորհումները հնարավոր չէ բացատրել կայսեր՝ Բակուրյանի հանդեպ տածած բարեկամական զգացումներով, Բակուրյանի կողմից կայսրությանը ցուցաբերած մեծ ծառայություններով: Ֆիլիպուպոլսի սբ. Աստվածածնի վանքի վրա դրված էր շրջանի հայադավան բնակչության, ինչպես նաև պավլիկյանների շրջանում միսիոներական-քարոզչական գործունեություն ծավալելու պարտականությունը[2], մի խոսքով՝ վանքը պիտի գլուխ բերեր այն, ինչ անձնապես չհաջողվեց անել Ալեքսիոս Ա կայսրին: Դա հաստատվում է և առաջին հայացքից տարօրինակ մի կարգադրությամբ: Գրիգոր Բա-

---

1 Georgica. Сведения византийских писателей о Грузии, т. V, Греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каухчишвили, Тбилиси, 1963, с. 132. *Կանոնադրության ռուսերեն թարգմանությունը*— Типикон Григория Пакуриана. Введение, перевод, и комментарий В. А. Арутюновой-Фиданян, Ереван, 1978, с. 80.

2 Н. Марр. Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах. Виз. Временник, т. XII, 1905, с. 25—26. *Այդ միտքը պաշտպանեց և բուլղար պատմաբան Վս. Նիկոլաևը: Տե՛ս* В. Николаев, Един феодален институт от XI век в нашите земи със специално предназначение. Манастирът на Григорий Бакуриани (Пакуриан) — средище на византийски прозелитизъм между пловдивските армено-павликяни. Известия на Института за българска история, 1—2, 1951, с. 99—186.

կուրյանի Կանոնադրության 24-րդ հոդվածի համաձայն, վանք մուտք գործելու իրավունք ունեին բոլոր քաղկեդոնականները, բացի հույներից, «քանզի նրանք բռնացողներ են, դատարկախոս ու գռփող»[1]: Այս հոդվածը, որ տարակուսանք ու զարմանք պատճառեց հույն ուսումնասիրողներին[2] և նրանց կողմից համարվեց Կանոնադրության մեջ հետագա, հունատյաց մեկի կողմից կատարված ընդմիջարկություն, իրականում եղել է սկզբնագրում: Հայադավանների և պավլիկյանների շրջանում ատելի դարձած հույն հոգևորականների քարոզչությունը ոչ մի արդյունքի չէր բերի, ընդհակառակը, էլ ավելի հեռու կվաներ: Թե ինչքանով այդ բանն հաջողվեց անել Գրիգոր Բակուրյանի վանքի հայազգի վանականներին ու վանահայրերին, հայտնի չէ, բայց որ նրանք օգտագործվում էին կայսրության կողմից վանքի հիմնադրումից անգամ հարյուր և ավելի տարիներ անց (և ոչ միայն Թրակիայի սահմաններում), չի կարելի կասկածել[3]:

Հույն կղերը հայադավանների և աղանդավորների դեմ մղում էր և այլ ձևի պայքար: Ջանալով տեղացի հույն բնակչությանը հեռու պահել հայերի և աղանդավորների հնարավոր ազդեցությունից, հույն բնակչության մեջ տարածում էր սնոտիապաշտություն, նախապաշարումներ հայ դևերի, չարքերի մասին առասպելներ, որոնց ժողովրդի խավարամիտ ու տգետ զանգվածները հավատ էին ընծայում: Դրանք տարածում գտան ոչ միայն Թրակիայում, այլև Մակեդոնիայում, Հելլադայի այլ շրջաններում ու կղզիներում: Այդ «հայ չարքերը», ըստ նախապաշարված մարդկանց, տանջում են հատկապես ծննդկաններին: Այդ մասին հնադույն հիշատակությունը գտնում ենք 11-րդ դարի նշա-

---

1 Georgica, V, *էջ 218:*

2 Κ. Μυρτ. Ἀποστολίδου, Περὶ τῆς μονῆς τῆς Κοιμήσεως τῆς ὑπεραγίας Θεοτόκου τῆς Πετριτσονιτίσσης. Θρακικά, τ. 7, Ἀθῆναι, 1936, σελ. 54-55. Κυριακῆς Μαμώνη, Παρατηρήσεις ἐπί τοῦ Ἰυπικοῦ τῆς μονῆς Πετριτζοῦ (Μπατσκόβου). Ἐπετηρίς Ἑταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν, τ. 43, Ἀθῆναι, 1977-1978, σελ. 330-331.

3 *Եկեղեցիների միության հարցով 1170 թ. Կիլիկիա ուղարկված բյուզանդական պատվիրակության կազմում էր «և հայրդ որ ըստ Փիլիպուպոլսեաց հայ վանից Յոփ հաննէս անուն» (հունարեն բնագրում՝* καὶ ὁ καθηγούμενος τῆς ἐν τῇ Φιλίππου πόλει Ἀρμενικῆς μονῆς ὁ Ἀτμάνος). *Տե՛ս* Р. М. Бартикян, Роль игумена филиппопольского армянского монастыря Иоанна Атмана в армяно-византийских церковных переговорах при католикосе Нерсесе IV Благодатном (1166—1173), *Լրաբեր*, 1984, № 4. Его же: О связях монастыря Григория Пакуриана с Арменией, *Լրաբեր*, 1968, № 6.

նավոր բյուզանդական փիլիսոփա և քաղաքական ու պետական գործիչ Միքայել Պսելլոսի «Դևերի ներգործության մասին» (“Περί ἐνεργείας δαιμόνων”) գրվածքում: Նա գրում է «կնակերպ մի դևի» մասին, որը տանջում էր ծննդկանին: Վերջինս, «վատ զգալով, ողողակում էր ինչ-որ բարբարոս լեզվով»[1]: Լեզուն հայերենն էր, և ծննդկանը, ըստ Պսելլոսի, ապաքինվեց հայ հմայողի դյութական խոսքերով[2]:

Բյուզանդական շրջանի մի աղոթքում, որպեսզի «Աստծո ծառաների միջից դուրս գան բոլոր չար ոգիներն ու դևերը», որպես չար ոգիներ թվարկված են ասորին ու ասորուհին, հրեան ու հրեուհին, պավլիկյանն ու պավլիկյանուհին, բայց և հայն ու հայուհին, կիպրացին ու կիպրուհին, որոնց դիմելով, ասում են. «Վերացեք, հեռացեք. ... դուրս եկեք ու հեռացեք աստծո այսինչ ծառայի միջից...»[3]: Տարածված է և ἀρμενιάζω և ἀρμενιάζομαι («հայահար լինել») բայը, որ նշանակում է «խելագարվել, մոլեգնել»[4]: Եվ այսպիսի պայմաններում, հարկավ, դիմում էին Աստվածածնի օգնության: Մակեդոնիայի Սերես քաղաքի Հրեշտակապետի տաճարում կա Աստվածամոր մի հին սրբապատկեր՝ «Հայախափան Աստվածածին» (Παναγία Ἀρμενοκρατοῦσα) արձանագրությամբ[5]:

Ֆիլիպուպոլսի հայերը ակտիվ գործունեություն ծավալեցին Երրորդ և Չորրորդ խաչակրությունների ժամանակ: Նրանք փորձեցին օգտագործել ընձեռված հնարավորությունը ազատվելու բյուզանդական հոգևորականության կողմից իրենց պատճառված նեղություններից: Նրանք այնքան ակնառու ու ազդեցիկ էին շրջանում, որ հիշվում են այդ խաչակրությունների պատմիչներ Արնոլդ Լյուբեկցու և Վիլհար-

---

1 Michaelis Pselli, Dialogus de daemonum energia seu operatione, Contra Manetam et Euchitas seu Enthusiastas, Migne, Patrologia graeca, t. 122, col. 857.

2 *Նույն տեղում:*

3 E. Legrand, Bibliothèque grèceque vulgaire, 2, Paris, 1881, p. XIX.

4 Π. Ν. Παπαγεωργίου. Αἱ Σέρραι καί τά προάστεια τά περί τάς Σέρρας καί ἡ μονή Ἰωάννου τοῦ Προδρόμου. Συμβολή ἱστορική καί ἀρχαιολογική. Byzantinische Zeitschrift, 3 (1894), σελ. 242-243. *Նույնի*, Περί τῶν σημασιῶν τοῦ ρήματος ἀρμενίζω, Ἀθηνᾶ 24 (1912), σελ. 459-468. Στυλιανοῦ Βίου, Χιακαί παραδόσεις, Λαογραφία 8 (1921-1925), σελ. 436-446. Στ. Κυριακίδου, Παρατηρήσεις εἰς τά χιακάς παραδόσεις Στ. Βίου. *նույն տեղում*, σελ 447-487. Philip P. Argenti and H. J. Rose, The Folklore of Chios, vol. 1-11, Cambridge University Press, 1949. *Նաև Մ. Հ. Բարթիկյան, Հայ աղանդավորների հետքերը Հյուսիսային Հունաստանում, Տեղեկագիր, 1956, № 3, էջ 75–86:*

5 Π. Παπαγεωργίου. Αἱ Σέρραι καί τά προάστεια σελ. 242-243.

դուինի կողմից: Վերջինս նրանց Popelicani է կոչում[1]: Ավելի հանգամանորեն նրանց մասին վկայում է բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատեսը: Ալամանների թագավոր Ֆրիդերիկոս Շիկամորուսը դեպի Պաղեստին կատարած Երրորդ խաչակրության ժամանակ 1189 թ. օգոստոսի 26-ին մուտք է գործում Ֆիլիպուպոլիս քաղաքը: Պատմիչի ասելով, քաղաքից կանխավ հեռացել էր բնակչության մեծամասնությունը, հատկապես անվանի մարդիկ, իսկ մնացածները չքավորներն էին ու հայերը: Նիկետաս Խոնիատեսը դա ուզում է յուրովի բացատրել, բայց ոչ այն հանգամանքով, որ հայերը տեղում հույն կղերի կողմից հալածանքների էին ենթարկվում նրանց ստիպում էին հրաժարվել ազգային դավանանքից և ընդունել քաղկեդոնականություն: «Միայն սրանք,— գրում է Նիկետաս Խոնիատեսը,— քաղաք մուտք գործած ալամաններին թշնամի չէին համարում, այլ բարեկամներ»: Խոնիատեսը սրան էլ է բացատրություն գտնում, գրելով, թե հայերն ու ալամանները «աղանդակից են», նրանք հավասարապես չեն երկրպագում սրբապատկերները, հաղորդության հացը առանց թթխմորի են պատրաստում և այլ ծեսեր, որոնք մերժված են «ուղղափառների» շրջանում, սրանք օրինական են համարում[2]:

Ֆիլիպուպոլսի հայերը, որոնք Ֆրիդերիկոս Շիկամորուսի բյուզանդացիների դեմ մղած պայքարում նույնիսկ համագործակցում էին նրան, տիրել էին Ֆիլիպուպոլսի շրջանում գտնվող Պրուսինոս կոչվող բերդը և տեղյակ էին պահում ալամաններին բյուզանդական զորքերի տեղաշարժերի մասին[3]:

* * *

Թրակիայի պավլիկյանները գոյատևեցին երկար ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջը: Թեև սույն հատվածը սահմանափակվում է 12-րդ դարով, բայց նկատի առնելով հարցի կարևորությունը, թույլ ենք տալիս անդրադառնալու Թրակիայի պավլիկյաններին հետագա դարերում ևս: Օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում Թրակիայից անցնող եվրոպացի ճանապարհորդները իրենց նոթերում գրի են առ-

---

1 Geoffroi de Villehardujn, La conquête de Constantinople. Texte et traduction nouvelle par E. Bouchet, Paris, 1891. p. 283.

2 Nicetae Choniatae Historia, rec. Ioannes Aloysius van Dieten, Berolini et Nove Eboraci, 1975, p. 403.

3 Նույն տեղում, էջ 408:

նում իրենց լսածն ու տեսածը: Նրանք անգլիացիներ էին, չվեդացիներ, ֆրանսիացիներ, ավստրիացիներ՝ մեծամասամբ դիվանագետներ: Նշենք, սակայն, որ նրանք միշտ չէ որ ճշգրտությամբ վերարտադրում էին իրենց լսածը, հաճախ աղավաղում անունները, հավատ ընծայում տեղացիների ամեն ասածին ու պատմածին: Հակառակ այդ բոլորին, տեղեկությունների սովի պայմաններում, այն, ինչ գտնում ենք նրանց գրվածքներում, արժեք է ներկայացնում:

1616 թ. Ֆիլիպուպոլիս այցելեց Adam Wennern-ը: Մանրամասն նկարագրելով քաղաքը, նշելով նրա գրավումը 1362 թ. սուլթան Մուրադ Ա-ի կողմից, նա կանգ է առնում նրա բնակչության էթնիկական կազմի վրա: Նրա ասելով, քաղաքի բնակիչները հույներ են, բուլղարներ, պավլիկյաններ, ռագուզցիներ, թուրքեր և հրեաներ: Նրանց հիմնական զբաղմունքը առևտուրն էր: Այս պավլիկյանները այն ժամանակ արդեն բուլղարախոս էին[1]:

Adam Wennern-ից կես դար անց (1664 թ.) Ֆիլիպուպոլիս այցելեց անգլիացի John Burbury-ն, որն ուղեկցում էր անգլիական դեսպանությանը Լոնդոն-Վիեննա-Կոստանդնուպոլիս ընթացուղիով: Նրան տեղացիները ցույց տվեցին մի բլրի վրա կառուցված Սբ. Պողոս առաքյալի եկեղեցին: Նա հիշում է հազարավոր պավլիկյանների (Paulini)՝ Ֆիլիպուպոլսի հյուսիսում ընկած դյուղերում ու ավաններում[2]:

1665 թ. Հռոմեական Սրբազան կայսրության վեհապետ Լեոպոլդ Ա-ի (1640–1705 թթ.) դեսպանությանը մասնակցող Paul Taffernern-ը ևս համառոտակի խոսում է Ֆիլիպուպոլսի մասին: Նա հիշատակում է պավլիկյաններին Pauliner անունով: «Արժե նշել,– գրում է նա,– որ քաղաքից ֆրանսիական երեք մղոն հեռավորության վրա, ավաններում

---

1 A. Wennern, Ein ganz neues Reysebuch von Prag auszogen Constantinopel, Nurenberg, 1622; K. M. Ἀποστόλίδου Ἡ Φιλιππούπολις ἐπί Ἰουρκοκρατίας κατά τόν 17ον αἰώνα. Προσηλητισμός τῶν Παυλικιανῶν εἰς τόν καθολικισμόν. Ἀρχεῖον τοῦ Θρακικοῦ Λαογραφικοῦ καί Γλωσσικοῦ Θησαυροῦ, τόμ. ΙΑ, Ἐν Ἀθήναις 1944-1945, σελ. 145-146. Πολυδ. Παπαχριστοδούλου. Ὁ Ἑλληνισμός τῆς Θράκης ἀπό τίς περιγραφές τῶν περιηγητῶν στά χρόνια τῶς δουλείας, Ἀρχεῖον τοῦ Θρακικοῦ Λαογραφικοῦ καί Γλωσσικοῦ Θησαυροῦμ ἔτος ΙΑ Ἐν Ἀθήναις, 1945, σελ. 12-13.

2 John Burbury. A Relation of a Journey of the right honorable M. Lord Howard from London to Wienna and to Constantinople. London, 1671.

և գյուղերում բնակվում են բազմաթիվ, Պողոս առաքյալի անունը կրող, Pauliner-ներ»[1]:

Պավլիկյաններին հիշատակում է նաև Կոստանդնուպոլսում անգլիական դեսպանության քարտուղար Riccaut-ը, որոնց նա 1665 թ. հանդիպել է Ֆիլիպուպոլսում[2]:

Իտալացի Conte de Marsigli-ն, որը 1679–1700 թվականներին քանիցս անցել է Ֆիլիպուպոլսով, նրա բնակիչների թվում հիշատակում է պավլիկյաններին[3]:

Ֆիլիպուպոլսի պավլիկյաններին հիշատակում են և 18-րդ դարի ճանապարհորդները, բայց նրանց մասին տեղեկությունները համեմատաբար առատ են 19-րդ դարում: Այն ժամանակ նրանք հիշվում են քաղաքի հյուսիսային մասում ընկած տասը գյուղերում: Նրանց հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր և անասնապահությունը: Բուն Ֆիլիպուպոլիս քաղաքում նրանք կենտրոնացած էին «Պավլիկյանիկա» անունը կրող թաղամասում, Ստենիմաքոս տանող ճանապարհի վրա: Հիշենք, որ Գրիգոր Բակուրյանի վանքին կից գտնվող և նրան պատկանող գյուղերից էր Ստենիմաքոսը[4], որի անունով վանքը հիշվում է նաև որպես Ստենիմաքոսի վանք:

Ֆիլիպուպոլսի և ընդհանրապես Բուլղարիայի պավլիկյանները, դառնալով բուլղարախոս, չձուլվեցին բուլղարների հետ: Դրա պատճառը մեզ պարզաբանում են դեռևս Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Բուլղարիայում Ռուսական կայսրության 1857 թ. Ֆիլիպուպոլսում նշանակված հյուպատոս, ազգությամբ բուլղար Նայդեն Գերովի Ս. Պետերբուրգ ուղարկած գաղտնի զեկուցագրերը: Նրա ասելով պավլիկյանները Ֆիլիպուպոլսում բնակվում են առանձին թաղամասում[5], և շրջանի ուղղափառ բնակչությունը, ապա և հայերը իրենցն են համարում ռուս հյուպատոսին, այն դեպքում, երբ պավլիկյանները այդպիսին են համարում Ֆրանսիայի և Ավստրիայի հյուպատոսներին[6]: Հարցն այն է, որ բուլղարների միջավայրում իրենցից ներկայացնելով անցանկալի տարր և, հավանաբար, ճնշումների ենթարկվելով, նրանք գերադասե-

---

1 Caesarea legatio quam mandante August. Rom. Imper. Leopoldo I ad Portam Ottomanicam suscepit perfecique Exell. Dom Dom Walterum S.R.J. comes de Leslie, Wiennae, 1668, p. 86-87.

2 Riccaut, Histoire de l'état présent de l'Empire Ottoman. Cologne, 1676, p. 711.

3 Conte de Marsigli, Stato militare dell' Imperio Ottomano, Amsterdam, 1732, p. 24.

4 Georgica, V, c. 120: Типик Григория Пакуриана, с. 76.

5 Документи за българската история, т. I. Архив на Найден Геров, София, 1931, с. 512.

6 Նույն տեղում, էջ 18:

ցին կաթոլիկություն ընդունել և ապավինել ֆրանսիացիների և ավստրիացիների հովանավորությանը: Այստեղ դեռևս 17-րդ դարից տենդագին գործունեություն էին ծավալել կաթոլիկ միսիոներները, և նրանք հաջողություն ունեցան հենց պավլիկյանների միջավայրում: Ֆիլիպուպոլսի պավլիկյանների շրջանում կաթոլիկության հիմքերը դնողը բոսնիացի միսիոներ Ֆրանկիսկոս Պետրոսն էր՝ Տուսլայից: Կղեմես 8-րդ պապի կողմից նա նշանակվել էր Սոֆիայի եպիսկոպոս: Սկզբնական շրջանում նա միսիոներական գործունեություն ծավալեց Դանուբի ափին բնակվող պավլիկյանների մեջ, ապա անցավ Ֆիլիպուպոլսի պավլիկյաններին և զգալի հաջողություն ունեցավ[1]: Միսիոներական գործունեություն Վատիկանը ծավալեց 18-րդ դարում:

1820-ական թվականներին պավլիկյանների կաթոլիկացման պրոցեսն ավարտվեց: Ն. Գերովը 1862 թ. ռուս իշխան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուն գրած նամակում ցույց է տալիս, որ «պավլիկյանները կարող էին ուղղափառ դառնալ, բայց հույն հոգևորականությունը չմտածեց այդ մասին և քառասուն տարի առաջ ավստրիական կառավարության թույլտվությամբ պավլիկյանների մոտ Հռոմից հոգևորականներ ուղարկվեցին և նրանց կաթոլիկ դարձրին»[2]:

Ֆիլիպուպոլսում ռուսական հյուպատոսության բացմանը հետևեց ֆրանսիական հյուպատոսության բացումը, որին հրավիրվել էին պավլիկյանների բոլոր բնակավայրերի հոգևորականները և ավագները: Ֆրանսիացիները 1863 թ. Ֆիլիպուպոլսում բացեցին արական ուսումնարան, իսկ 1866 թ. նաև աղջիկների վարժարան, որոնց համար նոր շենքեր կառուցվեցին հենց պավլիկյաններով բնակեցված թաղամասում[3]:

Հակառակ այդ բոլորին, պավլիկյանները այնքան էլ ոգևորված չէին կաթոլիկ միսիոներներով և հոգևորականներով: Ռուսչուկի ռուս հյուպատոս Մոչինը 1875 թ. փետրվարի 25-ին գաղտնի նամակ է գրում Ն. Գերովին, որով տեղեկացնում է. «Պավլիկյանները, որոնք բնակվում են իմ իրավասության տակ գտնվող նահանգի Բելինա բնակավայրում, արդեն երկրորդ անգամը լինելով, վռնդեցին իրենց կաթոլիկ հոգևորականներին՝ նրանց ծայր աստիճան անբարոյականության համար և որոշեցին մեկընդմիշտ փակել իրենց հաշիվները Հռոմից ուղարկվող օտարազգի նման հովիվների հետ և փնտրել-գտնել բուլղար հոգևորականների, որոնք կկարողանային պատարագը կատարել պավլիկյաններին հասկանալի լեզվով»[4]:

Ն. Գերովը տալիս է պավլիկյանների մասին և թվական տվյալներ: 1862 թ. ապրիլի 18-ին Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուն գրած նամակում նա տեղեկացնում է, թե պավլիկյանները «հնագույն, անհիշատակելի ժամանակներից անծանոթ հավատք են դավա-

---

1 Κ. Μ. Ἀποστολίδου, Ἡ Φιλιππούπολις ἐπί Τουρκοκρατίας, σελ. 154.

2 Документи за българската история, т. I. с. 281.

3 Նույն տեղում, էջ 512:

4 Նույն տեղում, հտ. Բ, էջ 107:

նում... Այսպիսի պավլիկյաններ կամ բուլղար-կաթոլիկներ կան Ֆիլիպուպոլսի նահանգում (մինչև 7600 հոգի)[1], Շիշտովում և Վալախիայում, Ռուսչուկի Բելինա խոշոր բնակավայրում[2], Դիմոտիշկա կազայի Բուկարտան գյուղում[3] և մինչև օրս չի եղել մի դեպք, որ որևէ ուղղափառ բուլղար հարի նրանց»[4], քանզի, շարունակում է Ն. Գերովը 1864 թ. հունվարի 13-ին իշխան Իգնատևին գրած նամակում, «պավլիկյանները մինչև օրս դուրս չեն եկել հասարակության ստորին շերտերից, և «պավլիկյան» հորջորջումը համարվում է վիրավորական»[5]:

Նույն միտքն ավելի հանգամանորեն արտահայտված է Մոսկվայի Սլավոնական Բարեգործական Կոմիտեի քարտուղարին Ն. Գերովի 1869 թ. դեկտեմբերի 5-ին գրած նամակում: «Անհայտ ծագումով պավլիկյանները,– գրում է նա,– իրենցից ներկայացնում են բնակչության տականքը (подонки народонаселения) և մինչև օրս անգամ, հասարակական տեսակետից գտնվում են մյուսներից ցածր աստիճանի վրա, որով պավլիկյան դառնալ նշանակում է ստորանալ»[6]: Ամենայն հավանականությամբ, հենց այս հանգամանքը դրդեց պավլիկյաններին դիմել թուրքական իշխանություններին՝ խնդրելով պաշտոնական գրություններում իրենց այլևս «պավլիկյան» չկոչել, այլ բուլղար-կաթոլիկ, որին, սակայն, Բարձրագույն Դուռը չընդառաջեց[7]: Այդուհանդերձ, պիտի նշել, որ թուրքական իշխանությունները համեմատաբար զիջողական էին պավլիկյանների հանդեպ, ի տարբերություն ուղղափառների (հույն և բուլղար): Ն. Գերովի 1858 թ. մարտի 19-ին Ստուպինին հասցեագրված նամակում ասվում է, որ պավլիկյանները թուրքական իշխանություններից իրավունք են ստացել խփել եկեղեցու զանգը, այն դեպքում, երբ դա արգելված էր անել ուղղափառներին: Վերջիններիս արգելված էր նաև (հակառակ խաթթը Հումայունի ընձեռած թույլտվության) եկեղեցիներ կառուցել, բայց պավլիկյաններին դա չէր վերաբերում: Թուրքական իշխանությունները պավլիկյաններին պարզապես հակադրում էին բուլղարներին և ընդհանրապես ուղղափառներին, քանի որ վերջիններս ռուսական կողմնորոշում ունեին:

Վերջացնելով ակնարկը Թրակիայի պավլիկյանների մասին՝ ավելորդ չէ, դեռ ավելին՝ շատ կարևոր է կանգ առնել նրանց մարդաբանական կերպարի վրա: Ուսումնասիրողների ասելով՝ այն խիստ տարբերվում է և բուլղարների, և հույների կերպարից.

---

1 1876 թ. նրանք 3642 հոգի էին (միայն տղամարդիկ): Նույն տեղում, հտ. Բ, էջ 272:

2 Նույն տեղում, հտ. Բ, էջ 107:

3 Նույն տեղում, հտ. Դ, էջ 5:

4 Նույն տեղում, հտ. Ա, էջ 281:

5 Նույն տեղում, հտ. Ա, էջ 339:

6 Նույն տեղում, էջ 512:

7 Նույն տեղում, էջ 488–489:

«Նրանք կարճահասակ են, նեղճակաս, խոշոր քթերով և գրեթե բոլորը թխադեմ են ու սևահեր»[1]: Մենք գործ ունենք գիտության մեջ արմենոիդ կոչված տիպի, և ի դեմս նրանց 8-րդ և 10-րդ դարերում Կոստանդին Ե-ի և Հովհաննես Ա Զմշկիկի կողմից Թրակիա գաղթեցված հայերի շառավիղների հետ:

Մի նշում ևս: Եվրոպացի ճանապարհորդները, և Ն. Գերովը, խոսելով Թրակիայի ազգաբնակչության էթնիկական կազմի մասին, հիշում են նաև պավլիկյաններին և հայերին: Այստեղ չփոթմունք չկա: Հայաստանից գաղթեցված իսկական հայ պավլիկյանները ժամանակի ընթացքում հունացան և բուլղարացան: Բուլղարացածները և հունացածները, ինչպես ասվեց, մոռացան իրենց ծագումը: 15–16-րդ դարերից հետո հիշվող հայերը, թուրքական և պարսկական տիրապետության տակ գտնվող Հայաստանից, ապա և արտասահմանի հայկական այլ գաղութներից դեպի Թրակիա տեղի ունեցած արտագաղթի նոր ալիքի ներկայացուցիչներն էին: Նրանք հայախոս էին, հայադավան, ունեին հայկական եկեղեցիներ ու հոգևորականություն, ավելի ուշ՝ նաև դպրոցներ, մամուլ և այլն:

Այսպիսին էր ահա ժամանակին Բյուզանդական կայսրության հիմքերը սասանող և բյուզանդական վերնախավին, մինչև անգամ Վասիլ Ա կայսրին սարսափեցնող, 18-րդ դարի խոշորագույն բյուզանդագետ անգլիացի է. Գիբբոնի ասելով, «Արևելքը սասանեցնող և Արևմուտքը լուսավորող»[2] պավլիկյանների հետնորդների ողբալի մայրամուտը, որոնք մերժում էին սեփական անունն անգամ:

Թրակիայի պավլիկյան համայնքների առկայությունը վկայված է նաև տեղանուններով: Հայտնի են Պավլիկենի մեծ գյուղը Տրոնովոյին կից, Լովեզի շրջանում Գոռնոպավլիկենի և Դոլնոպավլիկենի գյուղերը և ուրիշներ: Նշենք, որ կան Արմենոֆոր գյուղը Բիտոլիայի շրջանում, Արմենիցա վայրը Ռիլայի շրջանում, Էրմենովո, Էրմենսկո վայրերը Լիպինայում, Էրմենլու՝ Նիկոպոլսում, Արմենիտե՝ Գաբրովոյի շրջանում, Էրմենլի՝ Դոբրիչում: Այս վերջիններս, սակայն, կապ չունեն պավլիկյանների հետ: Նշված վայրերում ավելի ուշ շրջանում գաղթած հայեր պիտի բնակված լինեն:

* * *

Բավականին հին էր Տրիադիցայի (այժմ՝ Սոֆիա) հայ գաղութը: Հայտնի չէ, թե երբ է այն հիմնադրվել: Նրա մասին հիշատակություն-

1 K. M. Ἀποστολίδου. Ἡ Φιλιππούπολις ἐπὶ Τουρκοκρατίας, σελ. 155.

2 E. Gibbon, The History of the Decline and Fall of the Roman Empire, ed. J. B. Bury, London, 1902.

ները հանդիպում են Տրիադիցայի հույն եպիսկոպոս Ախրիդայի (Բուլղարիայի) արքեպիսկոպոս Թեոֆիլակտոսին (11-րդ դարի վերջ – 12-րդ դարի սկիզբ) հղած մի նամակում: Նա գրում է, որ շրջանի հայերը երկաբնակություն ընդունեցին, որ ինքը հայոց համայնքի գլխավորների հետ միասին պիտի Կոստանդնուպոլիս գնա, «մեր հզոր և սուրբ կայսեր մոտ»[1]: Այդ առթիվ Թեոֆիլակտոսը հայտնում է իր բերկրանքը, բայց միաժամանակ և կասկածը առ այն, որ հայոց այս դարձը դեպի երկաբնակություն կարող է և հաստատուն չլինել: Նա գրում է. «Հանկարծ այնպես չստացվի, ինչպես բույսերի հետ, որոնք երբ բռնի ես քո կողմ քաշում և այնուհետև բաց ես թողնում, վերադառնում են իրենց նախկին դրության»[2]: Պարզ է, որ հայոց այս դարձը բռնի է կատարվել: Այդ մասին վկայում է ոչ միայն Թեոֆիլակտոսը, այլև այն բռնի քաղաքականությունը, որ վարում էին բյուզանդական կայսրության պետական և եկեղեցական մարմինները Ֆիլիպուպոլսում և այլուր, որոնց մասին արդեն խոսք եղավ վերևում: Որ ի վերջո «բռնի քաշված բույսը բաց թողնելով իրոք վերադառնում է իր նախկին դրության», ապացուցում է այն փաստը, որ 12-րդ դարի վերջում էլ բյուզանդական կառավարությունը տարածաշրջանում նույնպիսի փորձեր էր կատարում: Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը (1173–1193 թթ.) Իսահակ Անգելոս կայսերը գրած նամակում (1185–1186 թթ.) բողոքում էր այդ առթիվ: «Ի վերայ Յունաց,– գրում է Վարդան Արևելցին,– թագաւորեաց Փիսիկն, որ և Սահակ և յարոյց հալածանս և չարչարանս ի վերայ հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա: Վասն որոյ գրէ առ նա աղէրսանս պատրիարգն Գրիգոր եղբորորդի տեառն Ներսեսի և Գրիգորի կաթողիկոսացն Հայոց, խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ: Եւ ոչ լուաւ նմա, այլ զյոլովս դարձոյց ի կրօն իւր և զայլ յալածանս արար»[3]:

Գրիգոր Տղայի նամակին Իսահակ Անգելոսի պատասխանը պահպանվել է, որտեղ կայսրը անդրադառնում է նրա բողոքին. «Պատվականությունդ գրեց նաև,– ասվում է պատասխան նամակում,– որ Ֆիլիպուպոլսի շրջանում ապրող հայերին իրենց կամքին հակառակ այնտեղի եպիսկոպոսը թագավորությանս հրամանին համաձայն հավատափոխ է անում»: Կայսրը ջանք է թափում ժխտել դա. «Բայց դա այդպես չէ,–

1 Theophylacti Bulgariae archiepiscopi Opera quae reperiri potuerunt omnia. Tomus quaertus, Epistolae. Migne, Patriologia Graeca, t. 126, col. 344-345.

2 Նույն տեղում:

3 Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 133:

գրում է նա,– այդ մասին պատվականության իրականությունը չի հաղորդվել»: Եվ ավելացնում, որ, իբր, Ֆիլիպուպոլսի հայերի դավանափոխությունը կամավոր է կատարվել[1]:

Վերոհիշյալը մի անգամ ևս հաստատում է, որ Ֆիլիպուպոլսի դեպքը մասնակի չէր, այլ բյուզանդական իշխանությունների ընդհանուր քաղաքականության դրսևորումն էր նաև Տրիադիցայում:

Նույն Թեոֆիլակտոսը, ոմն Դիավոլոգիրիսին գրած նամակում տեղեկացնելով հայոց դարձի մասին, ասում է. «Հոգիս բերկրացավ հայոց դարձի առթիվ» և միաժամանակ Դիավոլոգիրիսին խորհուրդներ է տալիս. «Նրանց (հայերի – Հ. Բ.) եկեղեցիները պետք չէ փակել, սակայն տաճարի նավակատիքի առթիվ սահմանված պատարագը, ինչպես և պատերի վրա մյուռոնով խաչի նշանը պետք է կատարեն ուղղափառ (իմա քաղկեդոնիկ – Հ. Բ.) հոգևորականները... Եթե հայերի քահանաներից էլ անցել են ուղղափառ դավանանքի կողմը ... ապա նրանց ինքդ ձեռնադրիր»[2]:

Հետաքրքրական է նշել, որ բյուզանդական եկեղեցին հատուկ պատարագ ուներ քաղկեդոնիկ դարձող հայերի համար: Թեոֆիլակտոսը նույն Դիավոլոգիրիսին գրած նամակում հարց է տալիս. «Ինձ հայտնի՛ր. հայերի դարձի առթիվ կատարվող պատարագի ամբողջական տեքստն ունե՞ս: Եթե չունես, կարտագրենք [և կուղարկենք քեզ]»[3]:

Այս բոլորը վկայում են, որ հայերը Տրիադիցայի շրջանում ունեին բազմաթիվ եկեղեցիներ և հոգևորականություն, որ հաստատումն է այս գաղութի մարդաշատ լինելուն:

11-րդ դարից հիշվում է հայկական համայնք Վառնայում: 1100 թ. վախճանված սուրբ Կիրիլ Ֆիլեոտեսի Վարքում, որ գրի է առնված Նիկողայոս Կատասկեպինոսի կողմից, խոսք է լինում հայերի շրջանում հիշյալ սրբի ծավալած գործունեության մասին: Նա ջանքեր է թափել, որպեսզի այդ հայերը «հրաժարվեն իրենց դավանանքից և հարեն տիե-

---

1 Բարթիկյան Հ. Մ., Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին: Բանբեր Մատենադարանի, 1958, Ֆ 4, էջ 287: Ն ո ւ յ ն ի՝ Իսահակ Անդելոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղայի, Էջմիածին, 1967, Ֆ Դ, էջ 54–55:

2 Theophylacti Bulgariae archiepiscopi Opera, col. 520.

3 Նույն տեղում:

զերական և առաքելական եկեղեցուն»[1]: Պարզ է, որ այս հայերը շարունակում էին մնալ հայադավան:

Եվքսինյան Պոնտոսի ափին, ժամանակակից Բուլղարիայի տարածքում գտնվում է Սոզոպոլիս քաղաքը (այսօր էլ նույն անունն է կրում): Միջնադարում այստեղ եղել է հայկական գաղութ, հայտնի չէ երբ ձևավորված: Այդ մասին իմանում ենք կայսերական մի խրիսովուլից (ոսկե կնիք կրող փաստաթուղթ): Խոսքը վերաբերում է բյուզանդական կայսր Հովհաննես 5-րդ Պալեոլոգոսի (1341–1391 թթ.) 1363 թ. հուլիսի 27-ին Սոզոպոլիսում կայսեր հորեղբայր տեր Աթանասիոս Պալեոլոգոսի կառուցած սուրբ Առաքելոց վանքին տրվող առանձնաշնորհումները վկայող խրիսովուլին[2]: Այնտեղ ցույց է տրված, որ վանքը «տիրում է առանձին կալվածքների, ապա և իմ (այսինքն՝ Հովհաննես Պալեոլոգոսի – Հ. Բ.) հրամանով այնտեղ գտնվող հայերին: Արդ, իմ թագավորությունը սույն խրիսովուլով կարգադրում է, որ վանքը որպես հաստատ ու աներեր սեփականություն տիրի այս հայերին՝ հիշյալ կալվածքների հետ միասին, ինչպես և այդ կալվածքների պրոսկաթիմենոսներին»[3]: Գրության մեջ ասվում է նաև, որ տեղական իշխանությունները և հարկահավաքները այդ վանքի գործերին միջամտելու իրավունք չունեն:

Կայսեր խրիսովուլ գրությամբ նրա վերոհիշյալ հորեղբորն են տրվում նաև նույն Սոզոպոլիսում գտնվող սուրբ Կերիկոսի վանքը, ապա և Սոզոպոլիսի դիմաց գտնվող կղզյակում դեռևս Կոստանդնուպոլ-

---

1 La Vie de Saint Cyrille le Philéote, Moin byzantin (+ 1100). Introduction, texte critique, traduction et notes par Etienne Sargologos. Subsidia Hagiographica No39, Bruxelles, 1964, p. 126. *Հմմտ. Բ ա ր թ ի կ յ ա ն Հ. Մ., Հնագույն հիշատակություն Վանայի հայության մասին, Լրաբեր, 1976, № 1, էջ 110–111:*

2 Ἰ. Σακκελίων, Ἰωάννου Ἐκαὶ Ἰωάννου Ζτῶν Παλαιολόγων χρυσόβουλλον καί ἀργυρόβουλλον περί τῆς κατά τήν Σωζόπολιν μονῆς τοῦ Προδρόμου. Δελτίον τῆς ἱστορικῆς καί Ἐθνολογικῆς Ἑταιρείας τῆς Ἑλλάδος, τόμ. 2ος, τεῦχος ὄγδοον, Ἰούνιος 1889, Ἐν Ἀθήναις 1889, σελ. 613-617. Նաև Α. Παπαδοπούλου-Κεραμέως, ἠέν τῷ νησίῳ Σωζοπόλεως βασιλική μονή Ἰωάννου τοῦ Προδρόμου καί ἡ τύχη τῆς βιβλιοθήκης αὐτῆς. Византийский Временник т. VII, вып. 4, С.—Петербург, 1900, с. 661—695.

3 *Գյուղացիների մի կատեգորիա, որոնց տվյալ կալվածի վրա հաստատվելուց չէր անցել երեսուն տարի, որից հետո այդ հողերը դառնում էին նրանց սեփականությունը: Բոլոր դեպքերում նրանց իրավական կարգավիճակը չէր տարբերվում պարիկոսների կարգավիճակից: Տե՛ս* История Византии в трех томах, т. III, Москва, 1967, с. 104.

սի պատրիարք Անտոնիոս Բ Կավլեասի (893–895 թթ.) կողմից կառուցված Աստվածածնի վանքը՝ իր շարժական և անշարժ ողջ գույքով: Դժվար չէ եզրակացնել, որ հիշյալ հայերի կազմությունը երկրագործություն էր, և սոցիալական դիրքով նրանք ճորտ գյուղացիներ էին:

11-րդ դարի բյուզանդական նշանավոր պատմիչ Միքայել Ատալիատեսը, որ մագիստրոսի պատվանունն ուներ և դատավորի պաշտոն էր վարում, Թրակիայում և Մակեդոնիայում լայնատարած կալվածքներ ուներ, որոնք Միքայել 7-րդ Դուկաս կայսեր (1071–1078 թթ.) կողմից շնորհված խրիսովուլով ազատված էին ամեն տեսակի հարկերից ու պարհակներից: Այդ իրավունքներն հաստատել էր և կայսրի հաջորդ Նիկեփոր 3-րդ Բոտանիատեսը (1078–1081 թթ.)՝ իր 1079 թ. ապրիլին շնորհած խրիսովուլով: Խոսքը վերաբերում է Ռեդեստոսում (Ռոդոստո) եղած կալվածքներին: Ապահարկ էր դառնում նաև այդ շրջանում գանվող «Հայոց Լևկե» գյուղը[1]: Սա ցույց է տալիս, որ դեռևս 11-րդ դարում Ռոդոստոյում եղել է հայկական համայնք. պատահական չէ, որ ուշ միջնադարում էլ հայ գաղթականություն էր հաստատվում այստեղ:

Ամենայն հավանականությամբ, հայկական համայնք է եղել Թրակիայի Դիդիմոտիխոն պատմական քաղաքում: Հույն պատմաբան, արքիմանդրիտ Նիկոլայոս Վաֆիդիսը իր «Դիդիմոտիխոնի հայկական համայնքի պատմությունն և Սբ. Գեորգ Պալեոկաստրիսի բյուզանդական տաճարը» ընդարձակ հոդվածում[2] նշում է, որ մինչև օրս գոյատևող քաղաքի հայկական համայնքը կար և բյուզանդական շրջանում: Այդ մասին է վկայում Դիդիմոտիխոնի Արմենիա տեղանունը, որը թուրքական տիրապետության շրջանում վերանվանվեց Էրմենիքյոյ («Հայոց գյուղ»):

Թրակիայի, ինչպես Մակեդոնիայի և հունական այլ շրջանների հայությունը, ժամանակի ընթացքում ձուլվեց հույների մեջ, իսկ 15–16-րդ դարերից հետո այստեղ հիշվող հայերը պատկանում էին Հայաստանից և հայկական այլ գաղութներից եկած գաղթականական նոր հոսանքներին:

Թրակիայի հայ գաղութը հսկայական ազդեցություն ունեցավ և խոր հետք թողեց տեղացի բնակչության վրա: Բաղկացած լինելով հիմ-

---

1 Miklosich-Müller, Acta et diplomata graeca, vol. V, p. 145.

2 Ν. Παφείδης, Ἱστορία τῆς ἀρμενικῆς κοινότητος Διδυμοτείχου καὶ ὁ βυζαντιός ναός τοῦ ἁγίου Γεωργίου τοῦ Παλαιοκαστρίτου, Θρακικά, 8 (1937), σελ. 318-319.

նականում աղանդավորներից Թրակիա գաղթած հայությունը իր հետ տարավ և տարածեց իր ազատամտությունը, նոր գաղափարները, հակադրվեց պետության կողմից օրենքի ուժ ստացած, քարացած դոգմաներին, դոգմաներ, որոնք կաշկանդում էին մտավոր կյանքի զարգացումը: Այդ գաղափարները ժողովրդական զանգվածների շրջանում այնքան վարակիչ էին, որ Արիստակես Լաստիվերտցին ստիպված էր դրանք գրավոր չներկայացնել. «անպատշաճ համարեցաք ընդ գրով արկանել»,– գրում է նա վախենալով, որ ընդունելություն կգտնեն. «զի ոչ ամենայն ոք պնդակազմ է լսելեօք, բազմաց մեղացն յիշատակ ի խղտանս ձգէ զլսօղսն, ի կատարումն գործոյն իսկ ածէ. վասն այսորիկ և ես խոյս ետու յայնմանէ»[1]:

Բյուզանդական պետական և եկեղեցական իշխանությունները, ինչքան էլ ճիգ գործադրեցին, չկարողացան կանխել պավլիկյանների և թոնդրակեցիների գաղափարների տարածումը Թրակիայում: Դեռևս Թեոփանես Խոստովանողը 9-րդ դարի սկզբին ցույց է տվել, որ Թեոդոսուպոլսից ու Մելիտենից գաղթած հայերը Թրակիայում տարածեցին պավլիկյան աղանդը: Այդ բանն ավելի լայն թափով կատարեցին 10-րդ դարում գաղթած թոնդրակացիները: Եվ պատահական չէ, որ հենց 10-րդ դարում բուլղար բնակչության շրջանում սկիզբ առավ պավլիկյանների ու թոնդրակացիների առաջադիմական գաղափարներով սնված ու տոգորված բոգոմիլների հուժկու շարժումը, որ հետագայում տարածվեց նաև Մակեդոնիայում, Սերբիայում, Բոսնիայում, Իտալիայում և Հարավային Ֆրանսիայում (կաթարներ, բաբուններ, պատարներ, ալբիգոյցիներ և ուրիշներ)[2]: Սրանք, «ինչպես իրենց փոքրասիական նախորդները, տարբեր արտահայտություններն էին մի հուժկու շարժման, որ տարածվեց Հայաստանի լեռներից մինչև Ֆրանսիայի հարավը, բոցավառվելով ավելի ուժեղ մեկ այստեղ, մեկ այնտեղ»[3]: Այս իրողությունը նկատի

---

1 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 133:

2 А н г е л о в Д. Влияния на чужди ереси върху богомилството. Известия на семинарите при Историко-филологическия факултет на университета "Св. Климент Охридски" в София, кн. 1, 1942, с. 145–180; Е г о ж е, Богомилството в България, София, 1961; П р и м о в Б., Бугрите. Книга за поп Богомил и неговите последователи, София, 1970; V. Topentcharov, Boulgres et Cathares. Deux brasiers une meme flamme, Paris, 1971.

3 G e o r g e s O s t r o g o r s k y. Histoire de l'Etat Byzantin, Paris, 1956, p. 296.

ուներ Է. Գիբբոնը, երբ գրում էր, թե պավլիկյանները «ցնցեցին Արևելքը և լուսավորեցին Արևմուտքը»:

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Մակեդոնիայի հայկական համայնքը կազմավորվեց հավանաբար 8-րդ դարում, Թեոդոսուպոլսից և Մելիտենեից գաղթած հայերից, ինչպես և 774 թ. հայոց հակաարաբական ապստամբության ճնշումից հետո այստեղ գաղթածներից: Նրանցից էր երևի սերում Մակեդոնական հարստության հիմնադիր Վասիլ Ա-ն, հակառակ որ Կոստանդին Ծիրանածինը՝ Վասիլի թոռը, ցանկանալով իր պապին վերագրել Արշակունի ծագում, նրա նախնիների գաղթը այստեղ որոշում է բյուզանդական Լևոն Ա կայսեր օրոք (457–474 թթ.): «Վասիլ կայսրը,– գրում է Կոստանդին Ծիրանածինը,– ծագումով Մակեդոնիայից էր, ազգությամբ հայ Արշակունի»[1]: Մակեդոնիան Վասիլ Ա-ի նախնիներին «դուր եկավ, նրանք այնտեղ զգում էին ինչպես հարազատ երկրում և սեփական ժողովրդի մեջ կարողություն կուտակեցին, անաղարտ ու մաքուր պահելով իրենց ազնվական ծագումն ու ազգային դեմքը»[2]:

Քրիստոնեական խոշորագույն կենտրոններից մեկը Աթոսն էր՝ Մակեդոնիայի Խալկիդիկի թերակղզու վրա, որ աղբյուրներում կոչվում է նաև Սուրբ Լեռ: Ի՞նչ դեր են խաղացել հայերը նրա կյանքում: Պետք է նշել, որ հայ վանականներ այստեղ հիշվում են վանական այս կենտրոնի հիմնադրումից մեկ դար էլ առաջ: Հանվանե հայտնի է մի ճգնավոր՝ հայազգի Հովսեփը[3], որ, բնական է, միակը չէր:

Աթոսի՝ որպես վանական կազմակերպված կենտրոնի գործում մեծագույն դերը խաղացել են բյուզանդական երեք խոշոր կայսրեր՝ Վասիլ Ա-ն, Նիկեփոր Բ Փոկասը և Հովհաննես Ա Զմշկիկը: Հայտնի է, որ երեքն էլ հայեր էին:

Աթոսին վերաբերող առաջին ոսկեգնիք հրովարտակը (խրիսովուլ) հրապարակել է Վասիլ Ա-ն: Նրանով արգելվում էր ամեն տեսակի աշխարհականներին, հովիվներին և այլոց մնալը այստեղ, որտեղ միայն

---

1 *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 15: Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա, Թեոփանեսի Շարունակող: Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 127:*

2 *Նույն տեղում, էջ 128:*

3 Denise Papachryssanthou, Actes Prôtaton, p. 29–30.

ճգնավորներն իրավունք ունեին ապրել[1]: Նիկեփոր Բ Փոկասը վանական նոր կյանքի հիմքերը դրեց, օժանդակեց իր բարեկամ Աթանասիոս Աթոնիտեսին և 963 թ. կառուցեց Մեծ Լավրայի վանքը «և հոյակապ շենքեր, աշտարակներ ու նավահանգիստներ... և Լեռան շուք տվեց: Նա դաշտերում ցանքեր արեց, խաղողի այգիներ տնկեց և անասնապահությունը զարգացրեց»[2]: Իսկ Աթոսի վանական համալիրի «Կանոնադրությունը», Սուրբ Լեռան վանականների կենցաղավարության առաջին կանոնները ձևակերպեց Հովհաննես Զմշկիկը՝ 971 թ.:

Աթանասիոս Աթոնացու վարքից պարզվում է, որ Աթոսի վանական համալիրի կազմավորումից անմիջապես հետո այստեղ հանդիպում են հայեր և հայկական վանքեր[3]: 10-րդ դարի վերջերին Հայաստանի Կարին քաղաքից մի հայ ազնվական՝ Հովհաննես Թոռնիկը, Աթոսում վանականի սքեմը հագավ[4]: Ռոմանոս Գ Արգիրոս կայսրի (1028–1034 թթ.) ժամանակ, Հովհաննես Սկիլիցեսի համաձայն, ոմն Գեորգ Վարազվաչե այստեղ հիմնադրում է «Իվերների», այսինքն՝ հայ-քալկեդոնիկների հայտնի վանքը[5]: «Իվերներ» հորջորջումը պատճառ դարձավ, որ գիտության մեջ այն իր ստեղծման օրից վրացական հոչակվի: Հարցն այն է, որ միջնադարում «ուղղափառ» (երկաբնակ–քալկեդոնիկ) հայերը հայտնի են որպես «Հոռոմներ» և «վրացիներ»: Հայկական մի ավանդության համաձայն, Բագրատունի վերջին թագավոր Գագիկ Բ-ն, երբ գնաց Կոստանդնուպոլիս, կայսրուհի Թեոդորան՝ Զոեի քույրը, նրան «շատ աղերսեալ... զի լիցի հոռոմ և այր նմա և թագաւորեսցէ Յունաց»[6]: Պարզ է, որ այստեղ «հոռոմ»-ը նշանակում է դավանանքով հոռոմ՝ երկաբնակ: Հայոց ապագա կաթողիկոս Գրիգոր Դ Տղան (1173–1193 թթ.) Մանուիլ Ա Կոմնենոս կայսեր դեսպան մագիստրոս Թեորիանոսին մոլորեցնելու համար գոչեց. «Ես հոռոմ եմ, նզովված լինի նա,

---

1 "Ὑδρία", Ἑλληνική καί Παγκόσμια Μεγάλη Γενική Ἐγκυκλοπαίδεια, τόμ. Γ, σελ. 400.

2 *Նույն տեղում:*

3 Denise Papachryssanthou, Actes Prôtaton, p. 272–273.

4 N. Adontz, Tornik le Moine. I: Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965, p. 297–318.

5 Ioannis Scylitzae Synopsis historiarum, editio princeps, recensuit Ioannes Thurn, Berolini et Novi Eboraci, 1973, p. 377.

6 *Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 140–141:*

ով չի ընդունում Քրիստոսի երկու բնությունը»[1]: Ֆիլիպուպոլսի Բաչկովո գյուղում (Պետրիցոս) Գրիգոր Բակուրյանի հիմնադրած վանքի (1083 թ.) Կանոնադրությունում հիմնադիրը իրեն «իվերացի» է համարում, բայց Կանոնադրության տակ ստորագրում է «հայերեն տառերով»[2], իսկ Աննա Կոմնենեն՝ Գրիգոր Բակուրյանի ժամանակակիցը, ինչպես նշվեց, գրում էր, թե նա «հայկական փառահեղ տոհմից էր սերում»[3]: Բակուրյանի վանքը Կանոնադրության մեջ «իվերական» է համարվում, բայց նույն Մանուիլ Ա Կոմնենոսն հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալուն (1166–1173 թթ.) հղած նամակում Ֆիլիպուպոլսի վանքը հայկական է անվանում (τῆς ἐν Φιλιππουπόλει ἀρμενικῆς μονῆς), վանք, որի վանահայր Աթմանը մասնակցում էր հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին[4]:

Եթե մինչև այժմ Աթոսի հայերը պարզ վանականներ էին կամ, առավելագույնը՝ վանահայրեր, 1035 թ. սկսած նրանք գլխավորում էին Աթոսի բոլոր վանքերի ղեկավարությունը: Աթոսի վանահայրերը որոշակի ժամանակաշրջանի համար նշանակում էին մի վանքի վանահորը՝ որպես Պրոտոս (Առաջին) բոլոր վանքերի: Մեծ Լավրայի անունը կրող 1035 թ. մի փաստաթղթի տակ ստորագրել էին բազմաթիվ վանահայրեր, վանականներ, ինչպես և վերոհիշյալ Պրոտոսը: Բայց նրա հունարեն ստորագրության տակ կա նույնի հայերեն ստորագրությունը. «Իմ ձեռքս գրեցի. Թէոկտիստոս»[5]: Սա նշանակում է, որ Աթոսի կառավարումը տվյալ պահին գտնվում էր հայի ձեռքում, ինչպես և այն, որ այս հայը չէր կորցրել իր ազգային դեմքը:

---

1 Theoriani Orthodoxi Disputatio cum Armeniorum Catholico, Migne, Patrologia graeca, t. 133, col. 148. *Հմմտ.* col. 149.

2 Georgica, t. V, c. 252.

3 Anne Comnène, Aléxiade, t. 1, Paris, 1945, p. 73.

4 Theoriani Orthodoxi Disputatio, col. 236.

5 Archives de l'Athos, t. V. Actes de Lavra I. Des origines à 1204, par P. Lemerle, N. Svoronos, A. Guillou, avec la collaboration de D. Papachryssanthou, Paris, 1970 (№ XXIII). *Հմմտ.* Բ ա ր թ ի կ յ ա ն Հ. Մ., *Աթոսի առաջնորդ Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունը, Բանբեր Մատենադարանի, 1974, №11: Այս Թեոկտիստոսը հիշվում է որպես Աթոսի Պրոտոս և 1037 թ. մի փաստաթղթում (տե՛ս* А. П. Каждан, Эсфигменская грамота 1037 г. и деятельность Феоктиста. *Բանբեր Երևանի համալսարանի, 1974, №3, էջ 236–238): Նա հայտնի է և այլ փաստաթղթերից: 10-րդ դ. վերջում նա վանական էր, 1015–1030 թթ.՝ Աթոսի Էսֆիգմենոսի վանքի վանահայր, նա վախճանված պիտի լինի 1040–1041 թթ. (Տե՛ս* D. Nastase, Les débuts de la communauté oecumenique du Mont Athos, Σύμμεικτα, 6 (1985), p. 278-280.*)*.

Այս ժամանակ Աթոսում հանդիպում է մի հայ եպ. Հովհաննես Պետրոսիսը՝ Սմբատ Պետրոսիսի ազնվականական ընտանիքին պատկանող, որ 1064 թ. Թրակիայի Ապրոս քաղաքի զորավարն էր[1]: Մեծ Լավրայի 1023 (կամ 1036 թ.) թվականը կրող մի այլ փաստաթղթում հիշատակվում է Αρμένιος*-ի կամ* Αρμένου*-ի (Հայի) վանքը Քսերոկաստրոնում[2]: Դ. Նաստասեի ենթադրությամբ, այս վանքը հիմնադրեցին Նիկեփոր Բ Փոկասի կողմից 967 թ. Տարոնի գրավումից հետո այստեղ տեղափոխված Տարոնի հայ վանականները[3]: Վերջապես, Պիթարա վանքի (Աթոսի Կարիե վայրի մոտ) տերը հայ էր: 1024 թ. մի փաստաթղթում ասված է, որ այն պատկանում էր Հելլադա բանակաթեմի զորավար պրոտոսպաթար Թոռնիկ Կոնտոլեոնին[4]:*

Աթոսի Սուրբ Լեռան ժամանակակից Կանոնադրության 5-րդ հոդվածի համաձայն, «ոչ մի այլակրոնի կամ այլադավանի չի թույլատրվում ապրել Աթոս Լեռան վրա»: Բայց հնում այդպես չէր: Իվիրոն վանքը իր հիմնադրման ժամանակ և հետո, ինչպես և վերևում հիշված հայ վանականները, վանահայրերը և Պրոտոսները, անկասկած, «ուղղափառներ» էին, այսինքն՝ քաղկեդոնիկներ: Մինչդեռ, միջնադարյան աղբյուրները մեզ հնարավորություն են տալիս ենթադրելու և ոչ «ուղղափառների» առկայությունը Սուրբ Լեռան վրա: Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկոլայոսը իր «Պոեմ առ Սուրբ Լեռան Պրոտոսին, որպես չափածո Կանոնադրություն» գործում գրում է. «Բարեկենդանին նախորդող շաբաթը, որը և Արցիվուրիի շաբաթ ենք անվանում, շատերը սովորություն դարձրին աներկյուղորեն այն խախտել: Զորեքշաբթի և ուրբաթ օրերը աշխարհականները միս են ուտում, իսկ վանականները՝ պանիր... Արդ, եթե նրանք սերում են Հայոց ցեղից և անցյալում դավանում էին Արցիվուրիի աղանդը, լավ են անում՝ վերացնելով ամեն մի կասկած... Այդպիսով երևում է, որ նրանք չեն հաղորդվում նրանց հետ»[5]:

---

1 А. П. Каждан. Греческая надпись XI в. с упоминанием армянина-стратига, *Պատմա-բանասիրական հանդես*, 1973, №2, с. 189. Его же, The Armenians in the Byzantine Ruling Class, predominantly in the Ninth through Twelfth Centuries, p. 441.

2 Archives de l'Athos t. V. Actes de Lavra I., p. 49.

3 D. Nastase, Les debuts de la communauté oecumenique du Mont Athos. Συμμεικτα, 6 (1985), p. 280.

4 Ibidem, p. 281.

5 Nicolai Sanctissimi Patriarchae Constantinopolitani Opus ad Praepositum Sancti Montis. Migne. Patrologia graeca, 111. col. 404.

«Արցիվուրի» բառը հայերեն «առաջավորաց» բառի աղավաղումն է: Առաջավորաց պահքը նշում է հայոց եկեղեցին, և այդպես է կոչվում, որովհետև «նախորդում է» տերունական այլ պահքերին. ուրեմն կարելի է ենթադրել ոչ «ուղղափառ» հայերի ներկայությունը Աթոսում Նիկողայոս պատրիարքի ժամանակ[1]:

Արցիվուրիի հետ միասին հիշվում են և «խացիցարներ»-ը (Χατζιτζάριοι), որոնք, անկասկած, հայեր են: Թեև բյուզանդական հեղինակները նրանց հերձվածող են համարում, նրանք այդպիսիք չեն, այլ հայադավաններ, հայ եկեղեցու դավանանքին հետևողներ: «Խացիցար»-ը հայերեն «խաչեցար» բառն է, Բյուզանդիայում նրանց այդպես էին կոչում, որովհետև երեքսրբյան աղոթքում («սուրբ Աստված, սուրբ և հզոր սուրբ և անմահ») բառերից հետո ավելացնում են՝ «որ խաչեցար վասն մեր», որի հեղինակն է բյուզանդական եկեղեցու կողմից նզովված Պետրոս Թափիչը: Կիզիկոսի մետրոպոլիտ Դիմիտրիոսը (11-րդ դ.) իր երկում՝ «Յաղագս Յակոբիկների և Խացիցարների», վերջիններիս մասին գրում է. «Խացիցարները նրանք են, ովքեր միայն խաչն են պաշտում: Նրանք սուրբ նշանին «խաչ» են ասում, խաչի վրա դամեր են դամում, դավանելով, թե աստվածայինը կրական է, և այն պաշտում են ավելի քան Քրիստոսին, քանզի նրան սպանողն է: Սրբապատկերներից խորշում են... Երեքսրբյան աղոթքին ավելացնում են «որ խաչեցար վասն մեր»-ը ... Ավագ շաբաթ և կիրակի օրերին կաթ, պանիր և ձու են ուտում, իսկ հաղորդության դինին անխառն են օգտագործում»[2]:

Պիտի որ մեծ ու բազմամարդ լիներ Թեսալոնիկեի հայկական համայնքը, թեև հնագույն հիշատակությունը վերաբերում է այնտեղի միայն հայ գործիչներին և ոչ կազմակերպված համայնքի: 840 թ. Թեսաղոնիկեի մետրոպոլիտ նշանակվեց Լևոն փիլիսոփան՝ հայազգի նշանավոր այն գործիչը, որին կարճ ժամանակով իր մոտ ունենալու համար

---

1 «Արցիվուրի» պահքի մասին նշված է Կոստանդնուպոլսի Սբ. Մամասի վանքի Կանոնադրության մեջ (1159 թ.), ինչպես և Կոստանդնուպոլսի պատրիարք Լուկաս Խրիսովերգիսի (1156–1169 թթ.) և Մախերայի Սբ. Աստվածածնի վանքի վանահայր Նիլոսի գործերում: Տե՛ս Σωφρονίου Εὐστρατιανοῦ, Τυπικόν τῆς ἐν Κωνσταντινουπόλει μονῆς τοῦ ἁγίου μεγαλομάρτυρος Μάμαντος, Ἑλληνικά, 1, 2 (1928), σελ. 277. Σπ. Λάμπρου, Λουκᾶ Χρυσοβέργη Περί διαίτης κοσμικῆς τοῦ ὅλου ἐνιαυτοῦ. Νέος Ἑλληνομνήμων, 16 (1922), σελ. 207. - Miklosich-Müller, Acta et diplomata graec XX ca, vol. V, p. 412: Նաև Nic. Call. Xanth., Migne. Patrologia graeca, t. 147, col. 441 sqq.

2 Γ. Α. Ράλλη – Μ. Ποτλῆ, Σύνταγμα τῶν θείων καί ἱερῶν κανόνων, τόμ. Δ Ἀθῆναι, 1854, σελ. 408.

արաբ խալիֆա Մամունը քսան կենտինար ոսկի էր խոստանում Թեոփիլոս կայսրին: Վերջինս, սակայն, «սեփական զարդը գոյի իմացությունը, որի համար բոլորը հիանում են հռոմայեցիների վրա և նրանց նկատմամբ լցվում են ակնածանքով, ուրիշին տալը, հեթանոսին ընձեռելը անխոհեմ քայլ համարելով, Մամունի խնդրանքին ընդառաջ չգնաց»[1]:

Թեսաղոնիկեում հայ համայնքի գոյության վերաբերյալ հնագույն տեղեկություններից մեկը հանդիպում է այդ քաղաքում այգու և կալվածի վաճառքի մասին փաստաթղթում (1097 թ.): Նրա տակ վկաների թվում ստորագրել է և, հավանաբար, հունարեն գրագիտությանը տեղյակ մի հայ «վեղարագործների համքարության նախագահ Հովհաննես Հայը»: Փաստաթղթում գրված է. «Ես, ներկա լինելով և աչքովս տեսնելով 45 դահեկանի վճարումը, որպես վկա ստորագրեցի ձեռամբ գրագրի»[2]: Համքարության նախագահ այս Հովհաննեսը հազիվ թե միակ հայը լիներ Թեսաղոնիկե քաղաքում:

Թեսաղոնիկեում հայ կազմակերպված համայնքի հայտնի հիշատակությունը գտնում ենք հիշյալ քաղաքի մետրոպոլիտ Եվստաթիոսի (ծնվել է 1125 թ.) մի գրվածքում, որը նվիրված է քաղաքի գրավմանը նորմանդացիների կողմից 1185 թ.: Դրա վրա պիտի ավելի հանգամանորեն կանգ առնել, որովհետև ոչ միայն վկայում է Թեսաղոնիկեում բավականին լավ կազմակերպված հայկական համայնքի մասին, այլև պարզ ցույց է տալիս հայերի և տեղացիների հակամարտությունը: Հայերը շատ լավ արհեստավորներ ու վաճառականներ էին: Այս հանգամանքը տեղացիների հետ մրցակցության պատճառ է դառնում, տեղիք տալիս ընդհարումների: Բացի այդ, հայերի միաբանությունը, գույժ և հերձվածողական տարբեր հայացքների, այն է պավլիկյանների և թոնդրակացիների դավանությունը, որոնք տարածված էին Թրակիա և Մակեդոնիա գաղթած հայերի շրջանում, պետք է որ շարժեին թեկուզ և ցածր, տգետ ու մոլեռանդ հոգևորականության հակակրանքը, թեև նույնը նկատում են հենց մետրոպոլիտ Եվստաթիոսի անձի մեջ: Նա, հիշատակելով քաղաքի հայերին, իր ասելով «սրտի նոպա է ունենում»: Պատճառն այն է, որ նրա պատմելով, «չար սատանան մեր գլխին հայերին էլ բարդեց: Նախքան քաղաքի առումը նրանք քաղաքից դուրս

1 Թեոփանեսի Շարունակող, էջ 113:
2 Actes de Lavra, I, p. 278.

թշնամիներին էին միացել և նրանցից ավելի մեծ ջանասիրությամբ մեր դեմ վատություններ էին գործում, հարձակվում էին, մեր վրա, թակարդներ լարում, ավարառում, դավեր նյութում, մատնությամբ զբաղվում: Իսկ քաղաքի ներսում նրանք տիրում են մեր վրա, սպառնում, հրամայում, զրկում ունեցվածքից, ձաղկում, խեղդում մթերքների [բարձր գներով]: Ափի մեջ տեղադրվող մի հացիկը, որ ընդամենը մեկ օբոլոս արժե, նրանք շատ ավելի թանկ՝ երեք պղնձյա ստատերով էին վաճառում... Պատմում են, որ գարշելի հայերը պղծում էլ էին հացը... Այն թաթախում էին ձեթի և ճարպի մեջ, որով պատճառ դարձան, որ քրիստոնյաները չորեքշաբթի և ուրբաթ օրերի պահքը խախտեն, որպեսզի այդպիսով ոչ միայն մեզ դժբախտացնեն. նրանք մեզ ստրկացրին, այլև մեր սուրբ հավատքը ծաղրուծանակի ենթարկեն: Ա՜խ, ով նրանց առաջը պիտի առնի»[1]:

Նախ նշենք, որ խնդրո առարկա հայերը Թեսալոնիկեի ներսում չէին բնակվում, այլ նրա Կրանիա և Զեմենիկոս կոչվող արվարձաններում՝ հրեաների հետ միասին և քաղաք էին գալիս առևտուր անելու: Բայց ո՞րն էր թշնամու հետ համագործակցելու պատճառը: Մետրոպոլիտ Եվստաթիոսը այդ մասին չի խոսում, բայց եթե նկատի ունենանք համանման մի դեպք՝ Ֆիլիպուպոլսում, ապա խնդիրը պարզ կդառնա: Թեսալոնիկեի դեպքից ընդամենը մեկ տասնամյակ անց Ֆիլիպուպոլսի հայերը համագործակցեցին Ֆրիդերիկոս Շիկամորուսի խաչակիրների հետ՝ ընդդեմ Բյուզանդական կայսրության:

Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղան իր՝ բյուզանդական կայսր Իսահակ Անգելոսին գրած նամակում բողոքում է Ֆիլիպուպոլսի հայերին բռնի քաղկեդոնիկ դարձնելու առթիվ[2]: Սրանից պարզ է դառնում, որ Թեսալոնիկեում էլ տեղական իշխանությունները հայերի նկատմամբ նույն քաղաքականությունն էին վարում, բնական է՝ կենտրոնական կառավարության թելադրանքով, ինչը և թշնամու հետ համագործակցելու պատճառ դարձավ:

---

1 Eustathii Metropolitae Thessalonicensis Opuscula accedunt Trapezuntinae historiae scriptoris Panaretus et Eugenicus. E codicibus Mss. Basileensi, Parisinis, Veneto nunc primum edidit Theophil. Lucas Frider. Tafel, Amsterdam, Cap. XXV, De Thessalonica urbe a Latinis capta Narratio, p. 298-299.

2 Բ ա ր թ ի կ յ ա ն Հ. Մ., Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, Բանբեր Մատենադարանի, 1958, № 4, էջ 289:

Ինչ վերաբերում է հայերի հրեաների հետ քաղաքից դուրս բնակվելուն, ապա դա կապված է բյուզանդական կառավարության օտարազգիների հանդեպ որդեգրած քաղաքականության հետ, այն է՝ թույլ չտալ այլակրոնների և այլադավանների խառնվել հույն «ուղղափառ» բնակչության հետ: Այդ մասին ավելի հանգամանորեն կխոսվի վերջում, երբ անդրադառնանք կայսրության տարածքում հայ համայնքների կարգավիճակի հարցին:

Թեսաղոնիկեի հայերը քաղաքում ունեին սեփական եկեղեցի: Այդ մասին տեղեկանում ենք 1277 թ. մարտի 19-ին Միքայել 8-րդ Պալեոլոգոսի (1259–1282) Վենետիկի դոժ Հակոբոս Կոնտարինիին գրած նամակից, որտեղ նշվում են վենետիկցի առևտրականներին տրվող իրավունքները Բյուզանդական կայսրության սահմաններում: Կայսրը վենետիկցիներին շենքեր է տալիս Կոստանդնուպոլսում և Թեսաղոնիկեում: «Թեսաղոնիկե քաղաքում վենետիկցիներին է տրամադրվում եկեղեցի, որն անցյալում հայերին էր պատկանում, և նրա շուրջը տներ. մեկ տունը՝ որպես հյուպատոսի բնակարան, մի այլ՝ որպես նրա խորհրդականների կացարան և մի երրորդը՝ որպես Վենետիկի հանրապետության ապրանքների պահեստ»[1]: Հայտնի չէ, թե ինչու և ինչպիսի պայմաններում հայերի ձեռքից խլել են այդ եկեղեցին և նրա շուրջն ընկած հայկական տները:

Հայկական համայնքի գոյության մասին Մակեդոնիայի Պրիլապոս (Պերլեպե) քաղաքում վկայում է անտիկ շրջանի հունարեն վիմագիր արձանագրության վրա 1202 թ. հայերեն փորագրված մի արձանագրություն: Այն վերծանվում է հետևյալ կերպ.

«[Գո]հութիւն սբ Ա[ստուա]ծածնայ տաք: Ի թուականութեան ՈԾԱ (651+551=1202) [շինեցաւ] տուն սբ առաքելոցն եւ որք երգէք ի սբ քաւարանիս մեղաց թողութիւն հայցէք ի Ք[րիստոս] է սուտ քահանայ տէր Աթանասի ի մէջ ճգնարանիս յիշատակն իւր նա եւ տ[էր]ն ողորմեսցի, ամէն»[2]:

---

1 F. Miklosich et I. Müller, Acta et diplomata graeca Medii aevi sacra et profana. Acta et diplomata graeca Res Graecas Italisque illustrantia e Tabulariis Anconitano Florentino Melitensi Taurinensi Veneto Vindobonensi, t. III, Vindobonae, 1865, p. 88-89.

2 М о ш и н В. Приленско – Варошиот таинствен натпис на една антична плоча. Споменик за средневековната история на Македония, т. 4, Скопје, 1981. *Հմմտ. Բ ա ր թ ի կ յ ա ն Հ. Մ., Հայերեն երկու վիմագիր արձանագրություն Հարավսլավիայի տարածքում, ՊԲՀ, 1990, №3, էջ 129–130:*

Եթե եղել է հայկական եկեղեցի և քահանա, նշանակում է՝ եղել է և հայկական համայնք: Եկեղեցին հավանաբար գոյություն ուներ 11-րդ դարի սկզբներից: Հովհաննես Սկիլիցեսի «Համառոտություն պատմության» գրքի մի գրչագրում (Vind. Hist. Gr. 74) հանդիպում են 1118 թ. ընդմիջարկություններ: Նրանց հեղինակն է Դիաբոլսի եպիսկոպոս Միքայելը: Այնտեղ կարդում ենք, որ բուլղարների ցար Սամուիլը (ի դեպ՝ հայազգի Սամվել Կոմսաձաղը, ծագումով Հայաստանի Դերջան գավառից) գերեվարեց բազմաթիվ հռոմայեցի և հայ զինվորների և բնակեցրեց Մակեդոնիայում. «Բազմաթիվ էին [գերված] հռոմայեցի և հայ զինվորները, որոնց Սամուիլը բնակեցրել էր Պելագոնիայում, Պրեսպայում և Ախրիդայում»[1]: Ահա այդ հայերին պիտի վերաբերեին Պրիլապոսի հայկական եկեղեցին և նրա մասին արձանագրությունը: Այստեղ, Ֆլորինա քաղաքի մոտ, մինչև օրս գոյություն ունի Արմենոխորին (Հայկական գյուղը), որը կարող է Սամուիլի կողմից այդ տարածքում բնակեցրած հայերի արձագանքը լինել:

Ծննդով Մակեդոնիայից՝ Վասիլ Ա կայսրը միակ հայ կայսրը չէր, որ առնչվում էր տարածաշրջանի հետ: Այստեղ տասնամյակներ շարունակ գործում էր Կիլիկիայի հայկական թագավորության ապագա վեհապետ Գվիդոն Լուսինյանը: Խոսքը վերաբերում է 1328–1342 թթ. ժամանակաշրջանին, այսինքն՝ երկու Անդրոնիկոսների՝ Անդրոնիկոս Բ Ծերունու և նրա թոռ Անդրոնիկոս Գ Երիտասարդի միջև մղված քաղաքացիական պատերազմին: Այստեղ նշենք, որ Անդրոնիկոս Գ-ն Միքայել 9-րդ Պալեոլոգոսի (1295–1320 թթ.) և Հայուհի կայսրուհի Ռիտա-Մարիա-Քսենիի որդին էր՝ հայոց թագավոր Լևոն Գ-ի դստեր և Օշին թագավորի (1308–1320 թթ.) քրոջ տղան: Խնամիական այս կապերը Կիլիկիայի և Բյուզանդիայի իշխող ընտանիքների միջև քաղաքական դրդապատճառներ ունեին:

Իզաբելան՝ Օշինի մյուս քույրը, Տյուրոսի իշխան Ամորի Լուսինյանի կինն էր: Նրանց հինգ որդիներից մեկը Գվիդոն Լուսինյանն էր, որը ոչ միայն բյուզանդական խոշոր գործիչ էր, այլև հսկայական կալվածների տեր Մակեդոնիայում: «Գվիդոն Հայը», ըստ բյուզանդական պատմիչ Նիկեփոր Գրիգորասի, Մակեդոնիայի Սերես քաղաքի և նրանից մինչև Խրիստուպոլիս ընկած քաղաքների կառավարիչն էր: Պատմիչը գրում է, որ նա, 24 տարի առաջ Հայաստանից վռնդվելով, Բյու-

1 Ioannis Scylitzae Synopsis historiarum, p. 363.

զանդիոն եկավ, Իզաբելայի քրոջ՝ կայսրուհի Քսենիի հրավերով: Գրիգորասի ասելով՝ Գվիդոն Հայը «մշտապես դավանում էր հայրական՝ հայկական դավանանքը»[1], մի բան, որ հակասում է հայկական աղբյուրների տվյալներին, որոնց համաձայն, Գվիդոնը թունդ կաթոլիկ էր:

Բյուզանդական մի այլ պատմիչ՝ Հովհաննես Կանտակուզենոսը, Գվիդոնին համարում է «Արևմուտքի զորավար», որը օգտվելով խառը վիճակից, հափշտակեց բյուզանդական մի շարք մեծամեծների կալվածները Մակեդոնիայում, եզների բյուր զույգեր, անասունների հոտեր, և դրանք բոլորը վաճառելով, հսկայական հարստություն դիզեց[2]:

1342 թ. ամռանը, երբ գահին ձգտող Կանտակուզենոսը հարձակվեց Թեսաղոնիկեի վրա, Գվիդոն Հայը հսկայական բանակով Սերեսից Թեսաղոնիկե եկավ՝ բարձրացնելու Թեսաղոնիկեցիների ընկած ոգին: Պատմիչի ասելով՝ նա գլխավորում էր «Մակեդոնիայի բանակը»[3]: Երբ Գվիդոնի հակառակորդ Կանտակուզենոսը հաղթող դուրս եկավ, Գվիդոն Լուսինյանը ընդունեց Կիլիկիայի հայոց հրավերը՝ կրելու Կիլիկիայի հայկական թագավորության թագը (1342 թ. հոկտեմբերին)[4]:

Թեսաղոնիկեի հայ համայնքը տվել է բյուզանդական խոշորագույն իրավագետ Կոստանդին Արմենոպուլոսին: Ազգակցական կապեր ունենալով կայսրեր Հովհաննես 5-րդ Պալեոլոգոսի և Հովհաննես 6-րդ Կանտակուզենոսի (1345–1355 թթ.) հետ՝ նա վայելում էր նրանց հովանավորությունը: Դեռ երիտասարդ հասակում նա իրականացրեց իր խոշորագույն աշխատությունը՝ «Հնքսաբիբլոս»-ը՝ վեց գրքից բաղկացած Դատաստանագիրքը՝, հիմնված նախկինում հրապարակված իրավագիտական աշխատությունների, այդ թվում և հայազգի կայսր Վասիլ Ա-ի Առձեռն օրենսգրքի վրա: Այն հինգ դարերի ընթացքում գործում էր հունական աշխարհում և հունական արտասահմանյան գաղութներում: Դատաստանագիրքն իրականում Հունաստանում գործում էր մինչև 1940 թ., երբ, վերջապես, հաստատվեց Հունաստանի Նոր Քաղաքացիական օրենսգիրքը:

---

1 Nicephori Gregorae Byzantina historia, cura L. Schopeni, vol. I, Bonnae, 1829, p. 283.

2 Նույն տեղում, հ. Բ, էջ 623: Համմա. Ioannis Cantacuzeni eximperatoris Historiarum libri IV, cura L. Schopeni, Bonnae, 1828, vol. II, p. 192.

3 Ioannis Cantacuzeni, vol. II, p. 236.

4 Նույն տեղում, էջ 292: Համմա հ. Ա, էջ 288–289:

5 Κωνσταντίνου Ἀρμενοπούλου Ἐξάβιβλος, ἐκδ. Κ. Γ. Πιτσάκη, Βυζαντινα καί νεοελληνικα κείμενα Ι, Ἀθῆναι, 1971.

* * *

ԹԵՍԱԼԻԱՅԻ հայության մասին կցկտուր տեղեկություններ կան կայսերական կարգադրությունների, առուծախի, կտակման, գրավագրի և այլ փաստաթղթերում, որոնց արժեքն ու արժանահավատությունը կասկած չեն հարուցում: Վանական Կիպրիանոսի 1276 թ. գրավագրում հիշվում են Թեսալիայի ծովափնյա Դիմիտրիադա գյուղի (այժմ՝ Վոլոս քաղաքի սահմաններում) մոտ գտնվող Մակրինիտիսա Աստվածածնի վանքի կալվածքները, որոնք «նայում են Արմենոնիսի (Αρμενοιῆσιν *– «Հայոց կղզու») կողմը»*[1]: *Անդրոնիկոս Բ Պալեոլոգոսի 1289 թվակիր խրիսովուլում Թեսալիայի Ալմիրոսի շրջանում հիշվում է «Տարոնացիների» անունով վայր*[2]*, որ անշուշտ պատկանում էր բյուզանդական հայազգի Տարոնիտների նշանավոր ընտանիքի անդամներից մեկին: Նշենք այստեղ, որ Թեսալիայի Պլատանոս վայրում հայտնաբերվել է Հեթում Ա-ի և Իկոնիայի սուլթան Քայ-Խոսրով Բ-ի 1240–1245 թթ. միջև հատված պղնձե դրամը, որ գուցե վկան է Թեսալիայի (գուցե Թեսալիայի հայության) առևտրական կապերի՝ Կիլիկիայի հայկական պետության հետ*[3]:

Հայտնի չէ, թե երբ է համայնքը կազմավորվել, բայց որոշ է, որ այն երկար կյանք է ունեցել: Անդրոնիկոս Պալեոլոգոսի խրիսովուլից երկու դար անց այն հիշվում է, և պարզվում է, որ բաղկացած է եղել հայադավան հայերից: Խոսքը վերաբերում է Կոստանդնուպոլսի պատրիարք Մաքսիմոս Գ-ի մի նամակին՝ գրված 1480 թվականին և ուղարկված

---

1 F. M i k l o s i c h et I. M ü l l e r, Acta et diplomata graeca, vol. IV, p. 421. *Հմմտ.* N. Γιαννόπουλου, Αἱ παρά τήν Δημητριάδα βυζαντιναί μοναί, Ἐπετηρίς Ἑταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν, I (1924), σελ. 220.

2 Σ π. Λ α ́ μ π ρ ο υ, Ἀνέκδοτον χρυσόβουλλον τοῦ αὐτοκράτορος Ἀνδρονίκου τοῦ Παλαιολόγου (1289). Δελτίον τῆς ἱστορικῆς καί Ἐθνολογικῆς Ἑταιρείας τῆς Ἑλλάδος, I (1883), σελ. 119. *Տարոնացիների բյուզանդական հայազգի նշանավոր ընտանիքի մասին տե՛ս.* N. A d o n t z. Les Taronites en Arménie et à Byzance. In: Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965, p. 197 -263. *Նույնի.* Observations sur la généalogie des Taronites. *նույն տեղում, էջ 339–345:* А. П. К а ж д а н, Армяне в составе господствующего класса Виз. Империи, с. 17 – 25.

3 N. I. Γ ι α ν ν ο ́ π ο υ λ ο υ. Ἡ Μεσαιωνική Φθιωτις καί τά ἐν αὐτῇ μνημεῖα. Δελτίον τῆς ἱστορικῆς καί Ἐθνολογικῆς Ἑταιρείας τῆς Ἑλλάδος 8 (1922), σελ. 85–93

Վենետիկի դոժին: Այստեղ գրված է, որ Թեսալիայում «ստիպում են հայերին ուղղափառ (քաղկեդոնիկ – Հ. Բ.) դառնալ»[1]:

Սրանից երկու դար ևս անց, նույն վայրում վախճանվել է ոմն Կարապետ, որի տապանաքարը հայերեն արձանագրությամբ հայտնաբերվել է 1900 թ.: Տապանագիրը հետևյալն է. «Տապանս Դաշտցի Ավագի որդի Կարապետին. թվ. ՌՃԽ» (1140+551=1691 թ.)[2]: Դաշտ անունով բազմաթիվ տեղանուններ կան Հայաստանում, վստահ չի կարելի ասել՝ ո՞ր մեկից էր Կարապետի հայր Ավագը:

Թեսալիայի Լարիսա քաղաքի մոտ հիշվում է Արմենի (Հայեր) անունով գյուղ[3]:

Թեսալիայից հարավ է գտնվում Կենտրոնական Հունաստանի ԷՏՈԼՈԱԿԱՐՆԱՆԻԱ նահանգը: Անդրոնիկոս Գ կայսեր 1336 թ. մի գրության մեջ այստեղ հիշվում է «Վարդանի» անունով գյուղ[4]:

* * *

ԷԳԵԱԿԱՆ ծովի կղզիների հայության մասին տեղեկությունները նույնպես կցկտուր են: Ամենից առաջ պիտի նշել նշանավոր Պատմոս կղզին, որը ենթարկվում էր Միլետոսի մետրոպոլիտությանը: Պատմոս կղզում էր գտնվում Սբ. Հովհաննես Աստվածաբանի հռչակավոր վանքը, որի տնտեսության, կալվածքների և այլ առիթներով գրված բազմաթիվ փաստաթղթեր են պահպանված: Նրանցում եղած տեղեկություններից պարզվում է, որ կղզում եղել է հայություն: Այսպես, ոմն Գեորգ Եվնուխի կալվածքների սահմանները արձանագրելու առթիվ 1213 թ. փետրվարին վերաբերող մի փաստաթղթում ցույց է տրված, որ նրանք գտնվում են «Հայուհուն կից»[5]: Գեորգ Եվնուխի նույն՝ 1213 թ. Մանուիլ Կաստորսից գնած կալվածքը սահմանակից էր «Հայուհու որդիների» կալվածքներին[6]: Նույն թվականին վերաբերող մի այլ փաստաթղթում՝ կալվածքի վաճառքի մասին նույն Գեորգ Եվնուխոսին

---

1 F. Miklosich et I. Müller, Acta et diplomata, vol. V, p. 284.

2 Բարթիկյան Հ. Մ., Նյութեր գաղութահայ պատմության, էջ 74–75:

3 Δημ. Σ. Λουκάτου. Ἀργίαι καὶ ἅγιοι τιμωροί. Ἐπετηρίς τοῦ Κέντρου Ἐρεύνης τῆς ἑλληνικῆς Λαογραφίας, τόμ. 20–21, 1967–1969, σελ. 94.

4 F. Miklosich et I. Müller, Acta et diplomata graeca sacra et profana, vol. V. Acta et diplomata Monasteriorum et Ecclesiarum Orientis, Vindobonae, 1887, p. 272.

5 F. Miklosich et I. Müller, Acta et diplomata graeca, vol. VI, Vindobonae, 1890, p. 159-160.

6 Նույն տեղում, էջ 164:

ցույց է տրված, որ այն արևմտյան կողմից սահմանակից է Գեորգ Խաչանի հողերին[1]:

ՔԻՈՍ կղզու հայության մասին տեղեկություններ չունենք, բայց նկատի առնելով հայերին վերաբերող տեղական հավատալիքները, ժողովրդական բանահյուսությունը, ինչպես և տեղանունները՝ որոշակի կարող ենք ասել, որ այստեղ ևս եղել է հայկական համայնք: Հավատալիքները գլխավորապես վերաբերում են հայ համարվող չարքերին, չար, անմաքուր ոգիներին: Խոսք է լինում կղզու առասպելական ու սարսափելի թագավոր Դրակոնի մասին, որը միաժամանակ կոչվում է Հայաստանի թագավոր: Կղզում բոլոր չարքերը, վայրի՝ սարսափազդու վայրերը, համարվում են հայկական, կան մեկ կամ երկու վայրեր, որոնք Թաթարի և Սարգսի[2] են կոչվում: Կան Արմենի (Հայեր), Արմենիա՛ (Բազում հայեր), Արմենոլակոս (Հայոց փոս), Արմենոպոտամոս (Հայոց գետ), Հայոց հոր, Հայոց աղբյուր և նման բազում աշխարհագրական հասկացողություններ[3]:

Պատմական սկզբնաղբյուրները ԷՎԲԻԱ (Նեգրոպոնտ) կղզու հայության մասին գրեթե ոչինչ չեն ասում: Ինչպես կտեսնենք ստորև, 1414 թ. ոմն Աբրահամ Անտերոն հայ Տրապիզոնից Վենետիկի դոժին դիմեց՝ խնդրելով նրան թույլատրել 880 հայ ընտանիքներով հաստատվել Կրետեում՝ թուրքերի բռնություններից փրկվելու համար: Դոժը նրանց առաջարկեց Կրետեն կամ Էվբիան[4]: Հայտնի չէ, հայերը հաստատվեցի՞ն Էվբիայում, թե ոչ, բայց հայոց ներկայության մասին այդ կղզում վկայում են տեղանունները: Վենետիկցի ժամանակագիր Մարտինոս Սանուդոսը իր Istoria del Regno di Romania գրքում հիշում է

---

1 Նույն տեղում, էջ 160–161:

2 Հավանաբար, նկատի ունի ոչ թե վկա սուրբ Սարգսին, այլ Առաջավորաց պահքի հետ առնչվող Սարգսին: Բյուզանդական եկեղեցին բազմիցս մեղադրել է հայերին նրան պաշտելու մեջ, մի բան, որ հայերը շարունակ մերժել են: Դավիթ Բ Բագրատունին Կոստանդնուպոլսում, չարադրելով հայոց դավանանքը, բազում աղանդապետների շարքում նշվել է և «կհայանուն Սարգիս հանդերձ շանն ու իշովն իւրով»: Տե՛ս Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 166:

3 P h i l i p P. A r g e n t i and H. J. R o s e. The Folklore of Chios. Cambridg University Press, t. II, 1949, p. 3, 226, 228-232, 239, 440, 1030. Նաև Λιμιλία Σάρου-ի գրախոսականը հարցի վերաբերյալ նոր տվյալներով. Ἐπετηρίς Ἑταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν, ἔτος 18′, 1949, σελ. 346.

4 Ν. Τ ω μ α δ α ́ κ η, Συμβολή εἰς τήν μελέτην τῶν σλαυικῶν, ἀρμενικῶν καί τουρκικῶν ἐποικήσεων ἐν Κρήτῃ. Ἐπετηρίς Ἑταιρείας Κρητικῶν Σπουδῶν 2 (1938), σελ. 16.

կղզու քաղաք Կարիստոսից հյուսիս-արևմուտք Armena անունով գյուղ: Ստիրայից հարավ-արևելք ընկած բլրում կա և «Հայոց բերդ» (Ἀρμένων – Armeno – Armena-Larmena-Armenia) անուններով[1]:

Տեղեկություններ ունենք և հայերի Էգեական ծովի Կո կղզում հաստատվելու մասին: Այդ կղզին 13 և 14-րդ դարերում թուրքերի վայրագություններից փախչողների համար ապաստարան էր դարձել: Հիշվում է և հայերի զանգվածային հաստատումը այս կղզում 1366 թ.[2]:

* * *

ՀՈՆԻԱԿԱՆ ԾՈՎԻ մեծագույն երեք կղզիները՝ Կեֆալոնիան, Զակինթոսը և Իթակեն եկեղեցական առումով կազմում էին Կեֆալոնիայի եպիսկոպոսական թեմը: 1204 թվականից այդ կղզիները պատկանում էին Վենետիկին: Պահպանվել է այդ կղզիների տեր կոմս Ռիկարդո Օրսինիի կողմից Կեֆալոնիայի եկեղեցական թեմի տիրույթների 1262 թ. կազմված պրակտիկոնը՝ կալվածագիրը, որտեղ կան բազմաթիվ տեղանուններ, կալվածքների, այգիների անվանումներ, որոնք հաստատում են այդ ժամանակաշրջանում հայերի ներկայությունը այնտեղ: Պոթոս Վարդանի այգին, Մանդակի որդիներ Արտավազդի, Նիկեփորի, Նիկիտայի, Թեոդոսի կալվածները, այգիները, հողակտորները, ապա և հենց Մանդակի այդպիսի կալվածները և այլն, Մանդակի որդի Արտավազդի որդի Իսավերի կալվածը, Խաչիկի այգին, Արշավիրի կալվածը, Արշակի այգին, բազմաթիվ «Հայի» կալվածքներ, հողակտորներ, «Հայերի աղբատեղին», «Հայոց շրջանը» և այլն[3]:

* * *

Բազում ու բազմապիսի տվյալներ կան ԿՐԵՏԵԻ հայկական համայնքի պատմության մասին: Հայտնի է նրա ստեղծման ժամանակը: Այն կազմավորվել է 10-րդ դարում և դարեր շարունակ հայոց հոսանքն այստեղ չի դադարել: Կղզին 824 թ. նվաճել էին Իսպանիայի արաբները, և այն նրանց գերիշխանության տակ մնաց մինչև 961 թ.: Այդ ընթաց-

---

1 Σπ. Λάμπρου. Τά Ἄρμενα τῆς Εὐβοίας. Νέος Ἑλληνομνήμων 5(1908) σελ. 488-489. Θ. Ι. Σκουρά. Ὀχυρώσεις στήν Εὔβοια. Ἀρχεῖον Εὐβοϊκῶν Μελετῶν 20 (1975), σελ. 381.

2 Βυζαντινά ἔγγραφα Πάτμου. Α. Αὐτοκρατορικά. Διπλωματική ἔκδοσις ὑπό Ἔρας Λ. Βρανούση, Ἀθῆναι, 1980, σελ. 110.

3 F. M i k l o s i c h et I. M ü l l e r, Acta et diplomata graeca, vol. V, p. 16-67.

քում բյուզանդական կառավարությունը մի քանի անգամ փորձեց ազատագրել կղզին, և այդ գործում մեծ էր հայոց խաղացած դերը: Ինչպես հայտնի է Կոստանդին Ծիրանածին կայսրի «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» գրքից, դեռևս հիշյալ կայսրի հոր՝ Լևոն 6-րդի (886–912 թթ.) օրոք Կրետեն ազատագրելու փորձ կատարող զորքերի թվում մասնակցում էին Սեբաստիայից 965, Անատոլիկոն բանակաթեմից 500 հայ հեծյալներ[1]: 949 թ. արշավանքին մասնակցում էին՝ Անատոլիկոն բանակաթեմից 1000, Թրակեսիոն բանակաթեմից 600 հայեր, ինչպես և Խարպեզիկի բանակաթեմից[2]:

Հայազգի Նիկեփոր Բ Փոկաս կայսրը (963–969 թթ.), դեռևս զորավարի պաշտոնում, 961 թ. վերանվաճեց կղզին: Արաբական տիրապետության ժամանակ քրիստոնյա բնակչությունն այստեղ նոսրացել էր, քաղաքային բնակչությունը՝ իսլամացել, ուստի կարիք զգացվեց դրսից քրիստոնյա տարրի բնակեցման: Այստեղ քարոզչական մեծ աշխատանք կատարեց վանական Նիկոնը, որ սերում էր Հայաստանից[3]: Նա տեղացի ուծացած բնակչությանը անվերջ կրկնում էր «Ապաշխարեցե՛ք» բառը, որի պատճառով աղբյուրներում հայտնի է «Նիկոն Ապաշխարեցե՛ք» (Νίκων ὁ Μετανοεῖτε) անվամբ: Նիկեփոր Փոկասի այստեղ բնակեցրած քրիստոնյաների մեջ կային և բազմաթիվ հայեր, առաջին հերթին, հավանաբար, կղզին ազատագրող հայ զինվորներ: Հույն հետազոտողները այս հայերի հետ են կապում Կրետեի բազմաթիվ տեղանուններ՝ Արմենի (Հայեր) տեղանունը Կրետեի Ապոկորոնոսում, Ռեթիմնեում և Սիտիայում, Արմենիանան՝ Ամարիոսում, Արմենոխորիոնը (Հայոց գյուղ)՝ Կիսամոսում, Արմանոգիան՝ Մոնոփացիում, Արմենոկամպոսը (Հայոց հովիտ)՝ Սելինոսի Սկլավոպուլայում, Արմենոկաստրոնը (Հայոց բերդ)՝ Ռեթիմնեում, Արմենոպետրան (Հայոց ժայռ)՝ Վիանոսում[4], թեև բացառված չէ, որ ոչ բոլորն են, որ հայոց առաջին գաղթին են վերաբերում:

Թուրքական վայրագ տիրապետությունը Հայաստանում պատճառ դարձավ հայոց նոր արտագաղթին դեպի Կրետե, որը 1204 թվականից

---

1 Կոստանդին Ծիրանածին, էջ 145:

2 Նույն տեղում, էջ 149–150:

3 Σπ. Λαμπρου. Ὁ Βίος Νίκωνος τοῦ Μετανοεῖτε. Νέος Ἑλληνομήμων τόμ. 3, Ἀθῆναι 1906, σελ. 131.

4 Բարթիկյան Հ. Մ., Նյութեր Կրետեի հայկական գաղութի պատմության, Լրաբեր, 1982, №8, էջ 95:

անցել էր վենետիկցիների ձեռքը: Գաղթում էին հիմնականում Կիլիկիայից, Մեծ ու Փոքր Հայքերից և Պոնտոսից: Պահպանվել է Վենետիկի հանրապետության իշխանությունների կողմից Փոքր Հայքից ու Պոնտոսից հայերին Կրետե ընդունելու մասին 1363 թվականի որոշումը: 1414 թ. որոշման մեջ խոսվում է հայերին Կրետե կամ Էվբիա վերաբնակեցնելու մասին:

1363 թ. հուլիսի 1-ի փաստաթղթում նշված է, որ հայոց պատվիրակությունը հայոց արքեպիսկոպոսի գլխավորությամբ Կրետեի դքսի և Կրետեի խորհրդականների հանձնարարականներով ներկայացավ Վենետիկի դոժին և հայտնեց, թե երկու հազարից ավելի հայ ընտանիքներ կգան և կհաստատվեն Կրետեում, եթե հող ստանան և համարվեն Վենետիկի քաղաքացիներ: «Նրանք Խանդաքսում (այժմ՝ Հերակլիոն, Կրետեի մայրաքաղաքը – Հ. Բ.) ցույց տվեցին մի հին եկեղեցի, որին «Հայոց եկեղեցի» էին անվանում, և նրան կից դաշտ, որպեսզի իրենք՝ հայերը, այնտեղ կառուցեն տներ և այլն»[1]: «Հայոց հին եկեղեցին» վկայություն է 1363-ից առաջ այստեղ գոյություն ունեցած հայ համայնքի:

Հայերի ներգաղթ դեպի Կրետե տեղի ունեցավ նաև 1414 թ.: Պահպանվել է 1414 թ. փետրվարի 10-ի մի փաստաթուղթ, որտեղ գրված է, թե «Աբրահամ Անտերոն Հայը խնդրեց դալ Տրապիզոնից 880 ընտանիքներով՝ Կրետե հաստատվելու և աղատվելու թուրքերի ձեռքից. Նրան առաջարկվեց Կրետեն կամ Նեգրոպոնտը (Էվբիան) և խոսք տրվեց նրանց հետ վերաբերվել ինչպես մնացած հավատացյալների հետ. ծառայեն մեր տերության, որպեսզի մեր երկիրը վերստին լցվի ժողովուրդներով և մասնավորապես այնպիսի մարդկանցով, որոնք կարոտ են իրենց քրտինքով խաղաղ ու արդար ապրել»[2]: Այս հայերը բնակ-

---

1 Σπ. Μ. Θεοτόκης Πρεσβεία Ἀρμενίων πρὸς τὴν Βενετικὴν Γερουσίαν 1 Ἰουλίου 1363. Ἐπετηρὶς Ἑταιρείας Βυζαντινῶν, τόμ. Θ΄, Ἀθῆναι, 1932, σελ. 34-38. *Նաև Հ. Պերպերյան, Կրետե գաղթի հայկական ծրագիր մը ԺԴ դարուն: Ապագայ, ԺԳ տարի, Թ, 23 նոյեմբեր, 1932: Հ. Մ. Բարթիկյան, Նյութեր Կրետեի հայկական գաղութի պատմության, էջ 96–97:*

2 Documents inédits pour servir à l'histoire de la domination Vénetienne en Crète de 1380 à 1485 par H. Noiret, Paris, 1892, p. 225. *14-րդ դ. վերջից թուրքերի վայրագություններից Կրետե փախչող հայերի և հույների մասին ավելի մանրամասն տե՛ս* Freddy Thiriet. Candie, grande place marchande dans la première moitié du XVe siècle. "Κρητικὰ Χρονικά" τόμ. ΙΕ΄-ΙΣΤ΄ (1961-1962), τεῦχος 2, Ἡράκλειον Κρήτης, σελ. 339-340.

վում էին Տրապիզոնի վենետիկցիներին պատկանող բերդում, բայց նրանց մեջ կային և Սեբաստիայի կողմերից եկածներ[1]:

1538–1578 թթ. են վերաբերում Կրետեի նոտար Միքայել Մարայի «Ցուցակները», որոնցից պարզվում է, որ կղզու հայության մեջ սկիզբ էր առել ուծացման գործընթացը: Համենայն դեպս այդ մասին են վկայում հայ երկաբնակ (որպես հույների կղեր համարվող) քահանաների, որոնց թվում՝ քահանա տեր Հովհաննես Հայի մասին 1560 թվականի տեղեկությունները[2]: Նման երևույթի հանդիպում ենք և հաջորդ դարում. 1636 թ. հիշված է «տեր Հովհաննես Հայը»՝ որպես Փրկչի եկեղեցու քահանա[3]:

Հայ գաղթականության նոր հոսանք դեպի Կրետե սկիզբ առավ 17-րդ դարից, և դա հավանաբար բացատրվում է թուրք-պարսկական պատերազմների ժամանակ, բացառված չէ և Աբաքա փաշայի խռովության պատճառով ստեղծված անկայուն կացությամբ: Գաղթել են նաև 18-րդ դարում: Այդ մասին են վկայում Կրետեի տարբեր քաղաքներում, նախ և առաջ Հերակլիոնում և Խանիայում գտնվող բազմաթիվ տապանաքարերի հայերեն թվակիր արձանագրությունները: Հերակլիոնի հանգուցյալները (կամ նրանց ծնողները) Կրետե են գաղթել Կոստանդնուպոլսից (1669, 1729 թվակիր տապանագրեր), Ակնից (1674 թ.), Տիվրիկից (1678 թ.), Քանաքեռից (1721, 1728, 1729, 1730, 1766 թթ.), Երևանից (1750 թ.), Խանիայի հանգուցյալները՝ Քանաքեռից (1723 թ., 1729 թ.), Երևանից (18-րդ դ.) և այլն[4]: Նշենք, որ Հերակլիոն քաղաքում մինչև օրս գործում է 1669 թ. կառուցված (ըստ պատին փորագրված արձանա-

---

1 Ղ. Ա լ ի շ ա ն, Հայ-վենետ կամ յարընչութիւնք հայոց և վենետկաց ի ԺԳ–Դ և ի ԺԵ–Զ դարու, Վենետիկ, 1896, էջ 176:

2 Κ. Δ. Μ ε ́ ρ τ ζ ι ο υ, Στάυολογήματα ἀπό τά κατάστιχα τοῦ νοταρίου Κρήτης Μιχαήλ Μαρᾶ (1538-1578). Κρητικά Χρονικά, τόμ. ΙΕ΄-ΙΣΤ΄ (1961-1962)μ τεῦχος 2, Ἡράκλειου Κρήτης, σελ. 270.

3 Π. Δ. Μ α σ τ ρ ο δ η μ η ́ τ ρ η, Ἐπιγράμματα ἱερέων τοῦ εἰς ἔπαινον τοῦ δοῦκα τῆς Κρήτης Giovanni-Battista Grimani (1636). Κρητικά Χρονικά, τόμ. ΚΙ΄΄, τεῦχος 1, Ἡράκλειον Κρήτης, 1971, σελ. 392.

4 Բ ա ր թ ի կ յ ա ն Հ. Մ., Նյութեր Կրետեի հայկական գաղութի պատմության, Լրաբեր, 1982, №8, էջ 99–102: Ն ո ւ յ ն ի. Կրետե կղզու Հերակլիոն քաղաքի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու հայերեն տապանագրերը, Լրաբեր, 1984, №1, էջ 102–109: Ինչպես Սավալանն է գրում, «Հայկական վիմագիր արձանագրություններ կան նաև Սիտիայի և Ապոկորոնոսի նույնանուն Արմենի (Հայեր) գյուղերում: Սիտիայի Արմենիում կա և սբ. Գեորգին նվիրված հայկական եկեղեցի»: Տե՛ս Δ. Σαβαλάν, Ἐπιτύμβιοι ἐπιγραφαί ἐν τῇ Ἀρμενικῇ Ἐκκλησίᾳ Ἡρακλείου. Κρητική ἑστία, Ἰούλιος 1962, σελ. 105-106.

գրության, բայց հավանաբար ավելի հին է կամ կառուցված է հնում ավերված հիմքերի վրա), Սբ. Հովհաննես Կարապետ եկեղեցին:

Կրետեր հայության մասին 1669 թվականից հետո (երբ կղզին ընկավ թուրքերի ձեռքը) շատ կարևոր տեղեկություններ են պահպանվել Հերակլիոն քաղաքի թուրքական հոգևոր ատյանի արձանագրություններում: Այնտեղից իմանում ենք հայոց զբաղմունքի (ոսկերիչ, հացագործ, երկաթագործ, թամբագործ, ջաղացպան, լումայափոխ, մոմագործ, ներկարար) և արհեստավորների համքարությունների, արտաքին առևտրով զբաղվողների մասին: Կրետեի հայությունը զգալի կշիռ ուներ կղզու կյանքում: Պատահական չէ, որ 1673 թ. Կանդիայի (Հերակլիոնի) գլխավոր ճարտարապետ (մեյմար) է նշանակվել հայ Խաչերը, որը պաշտոնական արձանագրության համաձայն, «ճարտարապետական գործերում ունի փորձ և հմտություն, նրան են հանձնարարված Կանդիայի ճարտարապետի պարտականությունները և նրան հանձնված նշանակման վերաբերյալ հատուկ գրությունը: Ելնելով դրանից, այսօրվանից ևեթ բերդի ներսում գտնվող շենքերի բոլոր տերերը պետք է դիմեն նրան: Առանց նրա թույլտվության ոչ մի շինարարական աշխատանք չպետք է ուրիշին հանձնարարվի: Բոլոր շինարարները, որմնադիրները, հյուսները և այդ համքարության աշխատողները պետք է նրան ճանաչեն իրենց ճարտարապետն ու նախագահը: Ամեն. տեսակ ճարտարապետական գործի համար պետք է դիմեն նրան և ոչ ոք առանց նրա կարծիքի և խորհրդի ոչ մի գործ չպետք է նախաձեռնի»[1]:

1671 թ. Հերակլիոնի հայերը իշխանություններին են դիմում, որպեսզի իրենց քաղաքից դուրս հողամաս հատկացվի որպես գերեզմանատուն: Նրանց դիմումը հարգվում է, և նրանք ստանում են չորս զոնյում (մոտ 400 քմ) տարածություն այդ նպատակի համար[2]:

Հայոց (և ոչ միայն հայոց) վիճակը Կրետեում թուրքական տիրապետության տակ բավականին ծանր էր: Թուրքերի բռնությունները «անհավատների» նկատմամբ սովորական երևույթ էին: Վերոհիշյալ տապանագրերից մեկում նշված է թուրքի կողմից հայ դպրին սրախողխող անելու մասին[3]: Եվ պատահական չէ, որ Կրետեի հույների և հայութ-

---

1 Բ ա ր թ ի կ յ ա ն Հ. Մ., Նյութեր գաղութահայության պատմության, Լրաբեր, 1987, № 10, էջ 80:

2 Նույն տեղում:

3 Բ ա ր թ ի կ յ ա ն Հ. Մ., Կրետե կղզու Հերակլիոն քաղաքի սբ. Հովհաննես Կարապետ եկեղեցու հայերեն տապանագրերը, էջ 107:

յան մի մասը ստիպված գաղթում է վենետիկցիների տիրապետության տակ գտնվող Հոնիական կղզիները և առաջին հերթին Կորֆու (Կերկիրա), որտեղ դեռևս 1228 թ. հիշվում է նրա հայազգի Գեորգ Վարդան մետրոպոլիտը[1]*: Պահպանվել են գաղթողների իտալական ցուցակները, որոնց մեջ* Cittadini di Candia *(Կանդիայի քաղաքացիներ)* Cittadini della Canea *(Խանիայի քաղաքացիներ) վերնագրի տակ տրվում են Կորֆու հաստատվածների, այդ թվում և բազմաթիվ հայերի անունները*[2]*:*

* * *

Ահա այսպիսին է միջնադարյան հունահայ գաղութի պատմությունը՝ ընդհանուր գծերով: Ինչպես դժվար չէ պատկերացնել, Հայաստանից և այլ վայրերից հայ գաղթականների մի քանի հոսանք է եղել: Այստեղ հայերը, հակառակ բյուզանդական իշխանությունների, ապա և կայսրության անկումից հետո հույն հոգևորականության դավանաբանական անհանդուրժողականության, այնուամենայնիվ, ունեցել են կյանքի և գույքի ապահովություն, այլ կերպ չի կարելի բացատրել նրանց անվերջ ներհոսքն այստեղ: Բնական է, ժամանակի ընթացքում նրանք, քաղկեդոնիկ դառնալով, ուծացան: Հունաստանի սահմաններում գոյատևող այսօրվա հայ համայնքները կապ չունեն միջնադարյան գաղթականների հետ: Նոր գաղթականներն այստեղ եկան գլխավորապես Աբդուլ Համիդի և երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությունից հետո:

* * *

Միջնադարում հունահայ գաղթականության մասին շարադրանքը լիարժեք չի լինի, եթե չներկայացնենք նաև Բյուզանդական կայսրության տարածքում ձևավորված հայկական համայքների իրավական կարգավիճակը: Ստորև բերվող շարադրանքը նպատակ ունի ինչ-որ չափով լրացնելու այդ բացը:

Բյուզանդական կայսրությունը բազմազգ պետություն էր, նրա բնակչության հիմնական կորիզը կազմում էին ուղղափառ հույները, որոնք և տիրող դիրք ունեին մնացած ազգությունների հանդեպ: Բնական է, բյուզանդական օրենսդրությունը պիտի որ կանոնավորեր երկ-

---

1 F. Miklosich et I. Müller, Acta et diplomata, vol. V, p. 14.

2 Σπ. Λάμπρου, Κατάλογος τῶν Κρητικῶν οἴκων Κερκύρας. Νέος Ἑλληνομνήμων, τόμ. 10, τευχος Α΄-Β΄, 1913, σελ. 452, 454.

ում ապրող բազմաթիվ ժողովուրդների՝ հայերի, հրեաների, ասորիների, արաբների, հետագայում նաև սլավոնների, բուլղարների, լատիններ-ի և էթնիկական այլ խմբերի փոխհարաբերությունները տիրող ազգության հետ, պարզեր այլազգիների իրավունքներն ու պարտականությունները, քանզի նրանք ոչ միայն այլազգի էին ու այլալեզու, այլև այլադավան ու այլակրոն: Բյուզանդական աղբյուրներում, օրենսդրական ակտերում ու դատաստանագրքերում առանձին տվյալներ, հոդվածներ ու կարգադրություններ կան, բայց հայերիս (հայադավանների) համար ամենաորոշակի ու արժեքավոր տվյալները հանդիպում են Դյուրախիոնի (այժմ՝ Դուրոս Ադրիատիկի ափին) արքեպիսկոպոս Կոստանդին Կավասիլասի (12-րդ դ. վերջ)՝ Կիտրոսի (ժամանակակից Կատերինի քաղաքը Մակեդոնիայի Պիերիա նահանգում) եպիսկոպոս Հովհաննեսին տված հարց ու պատասխանում: Կոստանդին Կավասիլասի հարցին՝ «Հայերը իրենց բնակված քաղաքներում իրավունք ունե՞ն եկեղեցիներ կառուցել, պետք է արգելե՞լ նրանց այդ բանն անել, թե՞ թողնել իրենց ցանկացածը կատարել»[1], եպիսկոպոս Հովհաննեսը պատասխանում է. «Քրիստոնյաների (իմա հունադավանների – Հ. Բ.) շրջաններում ու քաղաքներում ի սկզբանե անտի թույլատրելի է այլալեզու և այլադավան ժողովուրդների, այն է՝ հրեաների, հայերի, իսմայելացիների, հագարացիների և այլ նմանների բնակությունը, բայց քրիստոնյաների հետ ոչ խառն, այլ զատ: Որով յուրաքանչյուր ցեղի համար առանձնացվում են թաղեր՝ կամ քաղաքների ներսում, կամ դրսում, բայց առանձնացված: Նրանց բնակավայրերը չպետք է իրենց սահմաններից դուրս գան: ...Որով, հայերն էլ, իրենց որոշված շրջաններում տաճարներ էլ են կառուցում, և իրենց հերձվածող արարողությունները կատարում, ոչ ոք իրավունք չունի նրանց այդ բանն արգելել: ...Սակայն եթե նրանք դուրս գան իրենց հատկացված թաղից, ոչ միայն այդ բանն անել նրանց չի թույլատրվում, այլև իրենց կառույցները, ինչպիսիք էլ դրանք լինեն, ենթակա են քանդման...»[2]:

Փաստորեն մենք գործ ունենք մի տեսակ գետոյի հետ: Հակառակ այն բանի, որ դա նվաստացուցիչ էր հայերի համար, սակայն ուներ այն առավելությունը, որ թույլ չէր տալիս ձուլվելու տիրող էթնիկ տարրի

---

1 *Եթե Դյուրախիոնի արքեպիսկոպոսին այդ հարցը հետաքրքրում էր, ապա նշանակում է, որ Դյուրախիոնում էլ հայկական համայնք է եղել.*

2 Γ. Α. Ῥάλλη καὶ Μ. Ποτλῆ, Σύνταγμα τῶν θείων καὶ ἱερῶν κανόνων, τόμ. Ε΄, σελ. 415.

մեջ, հնարավորություն էր տալիս երկարաձգել գաղութի հայկական դիմագիծը: Այդ իրողությունը արձանագրել էր դեռևս Կոստանդին 7-րդ Ծիրանածին կայսրը (905–959 թթ.) իր պապի՝ Վասիլ Ա-ի կենսագրության մեջ: Խոսելով Ադրիանուպոլսի հայ գաղութի մասին 9-րդ դարում՝ նա ցույց է տալիս, որ Վասիլի ծնողները և հայերն ընդհանրապես Ադրիանուպոլսում «զգում էին ինչպես հարազատ երկրում և սեփական ժողովրդի մեջ, կարողություն կուտակեցին, անաղարտ և մաքուր պահելով իրենց ազնվական ծագումն ու ազգային դեմքը»[1]:

Վերոհիշյալ կարգը, սակայն, միշտ չէ որ պահպանվում էր: Միքայել 8-րդ Պալեոլոգոսի 1277 թ. Վենետիկի դոժին ուղղված և վենետիկցի առևտրականների՝ Բյուզանդական կայսրության սահմաններում ունենալիք առանձնաշնորհումներին վերաբերող փաստաթղթում ասված էր. «Իմ թագավորությունը տալիս է նրանց... նախկինում հայերին պատկանող Թեսաղոնիկեի եկեղեցին, նրա շուրջ գտնվող տները՝ մեկը՝ որպես հյուպատոսի բնակարան, մյուսը՝ որպես նրա խորհրդականների բնակարան և մի ուրիշն էլ՝ որպես Վենետիկի հանրապետության ապրանքների պահեստ»[2]: Վենետիկի հյուպատոսը հազիվ թե համաձայներ բնակվել հայոց գետոյում: Այդ եկեղեցին, ապա և նրա շուրջ եղող նույնպես հայերին պատկանող տները պիտի որ քաղաքի մեջ գտնվեին, այն էլ կենտրոնական մասում:

Բյուզանդական կայսրության մեջ հայ համայնքները զուտ հայադավաններից չէին բաղկացած, այնտեղ կային և երկրանակ-քաղկեդոնիկ հայեր, որոնց հետ բյուզանդական իշխանությունները, բնական է, այլ կերպ էին վարվում: Նիկոն Սևլեռնեցին (11-րդ դար) որպես Ծադ (Ծաթ) հայտնի հայ-քաղկեդոնականների մասին խոսելիս նրանց համարում է «մեր (այսինքն՝ հույների – Հ. Բ.) հոգևոր եղբայրները», որ «նրանք քրիստոնյաների ուղիղ հավատն են դավանում, և սխալ չէ նրանց հետ հաղորդվել, հաղորդություն տալ նրանց և ստանալ նրանցից, քանզի տարբերությունը լեզվի հարցում չէ, այն չէ, որ պիտի կասկած հարուցի, այլ հավատո ճշմարիտ խոստովանությունը»[3]:

---

1 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6: Բյուզանդական աղբյուրներ, գիրք Բ, Կոստանդին Ծիրանածին: Թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 35:

2 F. M i k l o s i c h et I. M ü l l e r, Acta et diplomata, vol. III, p. 89.

3 Из "Тактикона" Никона Дивногорца. Описание греческих рукописей монастыря св. Екатерины на Синае, т. 1. Под редакцией и с дополнениями В. Н. Бенешевича, С – Петербург, 1911, с. 588 – 589.

Սուրբ Սաբբան, նույն Նիկոնի վկայությամբ, քաղկեդոնիկ հայերին թույլ տվեց «պատարագը հայերեն կատարել», բայց պահանջեց, որ «երեքսրբյան աղոթքը («սուրբ Աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ») հունարեն կարդան», որպեսզի Պետրոս Թափիչի «Որ խաչեցար վասն մեր» հավելվածը չդնեն[1]*:*

Ալեքսանդրիայի պատրիարք Մարկոսի (մեռ. 1174 թ.) այն հարցին, թե «Անվտանգ է արդյոք, որ ուղղափառ ասորիներին ու հայերը պատարագը իրենց լեզվով մատուցեն, թե պետք է ստիպել նրանց, որ այն ամբողջությամբ կատարեն հունարեն», եկեղեցական կանոնների նշանավոր մեկնաբան, Անտիոքի պատրիարք Թեոդորոս Վալսամոնը (մեռ. 1195 թ.) պատասխանում է. «Եթե նրանք հունարեն լեզվին չեն տիրապետում, ապա կարող են իրենց լեզվով պատարագ մատուցել», բայց պետք է «ունենան ընդունված սուրբ աղոթքները աղոթագրքերից ճշգրիտ արտագրված և գեղագրված հունարեն տառերով»[2]*:*

---

1 *Նույն տեղում:*

2 Γ. Α. Ράλλη καί Μ. Ποτλῆ, Συνταγμα των θείων καί ἱερῶν κανόνων, τόμ. Δ΄. σελ. 452-453.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
(1453–1800)

Օսմանյան թուրքերի կողմից գրավվելուց ի վեր (1453) իր ավելի քան չորս և կեսդարյա պատմությամբ Կ. Պոլսի հայ գաղթօջախը բացառիկ կարևոր նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմության, նրա մտավոր ու մշակութային կենսագրության մեջ: Կ. Պոլսում այդ ժամանակից ձևավորված հայ գաղթօջախը փաստորեն դարձավ այն խառնարանն ու կենտրոնատեղին, ուր աճեց ու զորացավ հայ քաղաքակրթության էական ու բաղկացուցիչ մասը կազմող արևմտահայ մտավոր ու հոգևոր մշակույթը: Կ. Պոլսի հայ համայնքը ազգային, կրոնական, հասարակական ու քաղաքական բազմաթիվ կապերով կապվեց Արևմտահայաստանի ազգակիցներին, այլև համազգային կյանքին՝ մշտապես սնուցվելով գավառի հայության մարդկային ռեսուրսներից, նրա ավանդապահ ու կենսահաստատ արմատներից: Իր հերթին, Արևմտահայաստանի հայ բնակչությունը Կ. Պոլսի հայ գաղթօջախի շնորհիվ առնչվեց արևելահայ հատվածի կյանքի իրողություններին, ընդլայնեց համազգային ընդհանրության սահմանները, որով և մի հայտնի չափով պայմանավորվեցին հայության հասարակական ու մշակութային զարգացման ընդհանուր օրինաչափությունները արևմտահայ և արևելահայ հատվածներում:

Բյուզանդական ժամանակներից ի վեր Կ. Պոլսում գոյացած հայ գաղթօջախը աննախընթաց քանակական աճ ապրեց փլուզված կայսրության մայրաքաղաքը նվաճվելուց հետո: Թուրքական նվաճողները ամեն կերպ ձգտում էին իրենց նոր մայրաքաղաքը բնակեցնել առևտրական, արհեստավորական և առհասարակ տնտեսական բնագավառներում ձեռներեց և ընդունակ ոչ մահմեդական տարրերով՝ հույներով, հայերով, հրեաներով և այլ ժողովուրդներով: Սուլթան Ֆաթիհ Մահմեդը կայսրության բազմաթիվ քաղաքների բնակիչների գաղթեցրեց ու բնակեցրեց Կ. Պոլսում: Առաջին գաղթականները Բրուսայից, Էդիրնեից և Էնկյուրիից տարագրված հայերն էին: 1475 թ. Ֆաթիհը Կ. Պոլիս գաղթեցրեց տասնյակ հազարավոր հայեր Կաֆայից (Ղրիմ), իսկ 1479 թ.՝ Կարամանից[1]: Նրանք բնակեցվեցին ըստ առանձին թաղերի:

---

1 *Օրմանյան Մ., Ազգապատում, մաս 2, Կ. Պոլիս, 1914, էջ 2186: Այվազովսկի Գ., Պատմութիւն Օսմանեան տերութեան, Հ. Ա, Վենետիկ, 1841, էջ 198:*

Կարամանի հայերին հատկացվեց Սամաթիա թաղամասը՝ Ս. Գեորգ եկեղեցիով (Սուլու Մանասթիր), որ երբեմն պատկանել էր հույներին[1]: Կաֆացի հայերը զետեղվեցին Սալմաթոմրուկ թաղում՝ կրոնական պաշտամունքի համար օգտագործելով Ս. Նիկողայոս եկեղեցին (կեսը տրված էր լատինացիներին)[2]: Կ. Պոլսի առմանը հետևած երկու-երեք տասնամյակներին թուրքերը տասնյակ հազարավոր հայերի տեղահանեցին Կարամանից, Ամասիայից, Տրապիզոնից, Թոքատից, Սեբաստիայից և այլ վայրերից՝ նրանց մի մասը բնակեցնելով Կ. Պոլսում[3]: 16-րդ դ. շարունակվում էր նույն գործընթացը: Ըստ որում, քաղաքը ավելի շատ լցվում էր մահմեդականներով. սուլթանները մտահոգվում էին նաև մահմեդականների թվական գերակշռության խնդրով: 1513 թ. Սելիմ 1-ը Թավրիզը գրավելուց հետո Կ. Պոլիս քշեց շատ հայ արհեստավորների՝ տեղահանելով նաև մահմեդական գործունակ տարրին: Թուրք-պարսկական պատերազմները նոր հնարավորություններ ընձեռեցին մայրաքաղաքը համալրելու նոր գաղթականություններով: Սուլեյման Կանունիի ժամանակ, 1534 թ., Վան-Վասպուրականից զգալի թվով հայ բնակչություն տարվեց Կ. Պոլիս և անատոլիական շրջաններ՝: 1551 թ. գերեվարվեցին և Կ. Պոլիս քշվեցին Բերկրիի, Արճեշի, Խնուսի, Բասենի, Կարինի, Դերջանի, Բաբերդի և Երզնկայի շատ հայ բնակիչներ՝: 1548 և 1554 թթ. թուրքերը Արևելյան Հայաստանից, Վասպուրականից, Նախիջևանից, Երևանից և Արցախից Կ. Պոլիս և Փոքր Ասիա տեղափոխեցին հայերի նորանոր խմբեր: Նույնը կիրառվեց մասնավորապես Արարատյան դաշտի հայ բնակիչների նկատմամբ և կրկնվեց 1570-ական թթ., երբ թուրքական զորահրամանատար Լալա փաշան Թուրքիա քշեց 60 հազար մարդ: Զլդբրի ճակատամարտից (1578 թ., հուլիսի 23) հետո Երևանից ու Արարատյան դաշտի այլ բնակավայրերից գերեվարվածների մի զգալի մասը հայեր էին[6]: Բռնագաղ-

---

Մ ի ք ա յ ե լ յ ա ն Վ. Ա., Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն, Եր., 1964, էջ 273–276:

1 *Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա., Պատմություն հայ գաղթի, Կահիրե, 1947, էջ 375:*

2 *Խ ա չ կ ո ն ց Դ., Կ. Պոլսո հայ գաղութին ծագումը: Ընդարձակ օրացույց Ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1902, էջ 88–89:*

3 *Ս ի ր ո ւ ն ի Հ., Պոլիս և իր դերը, հ. 1, Բեյրութ, 1965, էջ 194:*

4 *Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա., Պատմություն Եվդոկիո հայոց, Կահիրե, 1958, էջ 333:*

5 *Ե ր ե մ ի ա Ք ե ա մ ի ւ ր ճ ե ա ն, Պատմութիւն համառօտ ԴԺ տարւոյ Օսմանցոց թագաւորացն (աշխատասիրությամբ՝ Ժ. Մ. Ավետիսյանի), Ե., 1982, էջ 147:*

6 *Մատենադարան, ձեռ. № 6275, Փ ի ր ղ ա լ ե մ յ ա ն Ղ., Հիշատակարանք կամ նշխարք պատմութեան հայոց, էջ 279 ա: Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, Պատ-*

թերն ուղեկցվում էին անգթություններով: Մի հիշատակարանում նշվում է, որ նվաճողը «բազում մրրիկ հարուցանէր ի վերայ քրիստոնէից և իւր ազգին՝ ի տեղէն ի տեղ փոխելով և հարկապահանջութեամբ և այլ վշտաւք»[1]: Բռնագաղթերը հետամտում էին փոքրասիական բնյությունների, ինչպես և Պարսկաստանի ու նրա ենթակա շրջանների քայքայումն ու մարդաթափումը: Քաղաքական ծրագրեր էին դրանք, որոնք իրագործվում էին հաշվենկատորեն:

Թուրքերի համար չծրագրված իրադարձությունների արդյունք էր ջալալիների ապստամբության[2] հետևանքով Հայաստանից և փոքրասիական շրջաններից գաղթական հայերի (և այլ ժողովուրդների) հոսքը դեպի Կ. Պոլիս: Ջալալիների շարժումը օսմանյան պետության հզորության անկման ակնհայտ նշաններից էր 16-րդ դ. վերջին և 17-րդ դ. առաջին տասնամյակներին: Շարժումն իր սոցիալական կազմով ներկայացնում էր ապադասայնացած ռազմական միջին խավին և ծանր տուրքերի պատճառով սնանկացած թիմարատերերի մի զգալի մասին, ինչպես և պարզապես կողոպուտի ծարավի մահմեդական (և ոչ մահմեդական) հարաբերական գերբնակչությանը, սակայն հիմնականում ավազակաբարո թուրքական ցեղերին, որոնք մորեխի պես ծածկեցին օսմանյան տարածքների վիթխարի շրջանները՝ մանավանդ կայսրության արևելյան նահանգներում և Փոքր Ասիայում: Իր նպատակներով այն ավերիչ, կույր ուժ էր, խորապես հետադիմական:

1590-ական թթ. ջալալիների անգթությունները տեղահանեցին բազմաքանակ բնակիչների, նաև հայերի՝ Երզնկայից, Ակնից, Տիվրիկից, Կամախից, որոնք փախչում էին դեպի Կ. Պոլիս, Թուրքիայի եվրոպական այլ տարածքներ, Բալկաններ և Արևելյան Եվրոպայի այլ վայրերը[3]: 1602 թ. ջալալիները դրավեցին Թոքատը, որից հետո սկսվեց հայերի զանգվածային փախուստը Արևմտյան Հայաստանից ու փոքրասիա-

---

մագրութիւն, մաս Ա, Վաղարշապատ, 1870, էջ 13: Կ ա ր ա պ ե տ եպ., Նյութեր հայ մելիքության մասին, Բ պրակ, Էջմիածին, 1914, էջ 187:

1 Պ ո ղ ա ր յ ա ն Ն., Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հ. Գ, Երուսաղեմ, 1966, էջ 250–251:

2 Շարժումը կոչվում էր Ջալալիների ապստամբություն՝ Թուրքիայում դրանից շատ առաջ, արդեն 1515 թ. հռչակված հանրածանոթ ապստամբ չելեբի Բոզոքլը Ջալալի անունով (Н о в и ч е в А. Д. История Турции, ч. I, 1963, с. 127).

3 Ժամանակագրութիւն Գ ր ի գ ո ր վ ա ր դ ա պ ե տ ի Կ ա մ ա խ ե ց ւ ո յ, Երուսաղեմ, 1915, էջ ԺԳ:

կան տարածքներից[1] դեպի ապահովություն ներշնչող վայրեր, այդ թվում և Կ. Պոլիս: Դրան գրեթե անմիջապես հետևեցին պարսկա-թուրքական պատերազմների, մասնավորապես սովի հետևանքով ծայր առած գաղթերը՝ 1606–1609 թթ.: Բազմամարդ դարձավ Կ. Պոլսի հայ բնակչությունը: Ըստ Սիմեոն Լեհացու, Կ. Պոլսի հայերը համալրվել էին 40 հազար տնով՝ Ստամբուլում, Ղալաթիայում և Սկյուտարում: Գաղթականները տեղավորվում էին արդեն հայաբնակ թաղերում, մի մասը ցրվում էր մայրաքաղաքի տարբեր շրջաններ (Գում գափու, Ենի գափու և այլն)[2]:

Կ. Պոլսում հայերի նոր խմբեր հայտնվեցին 1635 թ., երբ սուլթան Մուրադ 4-րդը (1623–1640) պարսիկներից գրավեց Վաղարշապատը և Երևանը, «արար սուրկուն յԸստամպոլ յարեւելից եկելոց հայոց, յունաց և տաճկաց»[3]:

Կ. Պոլիսը հայերին գրավում էր ամենից առաջ տանելի պայմաններով, այստեղ ավելի մեղմ էին դրսևորվում ազգային ու կրոնական ճնշումները՝ համեմատած գավառի հետ: Մայրաքաղաքում ոչ մահմեդականը օգտվում էր ինչ-ինչ թույլտվություններից, ազատորեն կատարում իր պաշտամունքը («Հեծնուն ձի և ջորի, ագանին եուգչլայ, եթմիշչլայ, չուխայ, ուտեն, ըմպեն, ուրախ լինին»,– գրում էր Սիմեոն Լեհացին)[4]:

Գավառից փախստականների հոսքը քայքայում էր հարկային համակարգը, խափանում կամ չափազանց դժվարին դարձնում մայրաքաղաքի ուռճացած բնակչությանը պարենով ապահովելու գործը: Ջալալիներին ընկճելուց հետո 1609 թ. սուլթանը մինչև երեք ամիս ժամանակ էր տվել գավառներից մայրաքաղաք փախածներին՝ վերադառնալու իրենց բնակության նախկին վայրերը (Կամախ, Երզնկա, Սեբաստիա, Տիվրիկ, Ակն և այլն): Փախստականների հիմնական զանգվածը արտաքսվեց Կ. Պոլսից, իսկ մյուս, ավելի փոքր մասը, հենվելով կաշառքի հանդեպ օսմանյան պաշտոնյաների ավանդական թույլության, առավել ևս արհեստավորների մեծ պահանջարկի վրա, կարողացավ խուսա-

---

1 Զուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակն Օսմանյան կայսրության մեջ, Ե., 1966, էջ 163:

2 Սիմեոն դպրի Լեհացւոյ, Ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 8: Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 338–339:

3 Յուցակ կայսերական մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891, էջ 15:

4 Սիմեոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, էջ 8:

փել արտաքսումից. «և ոմանք յարքունի գործակալութեան աղագաւ ի չինումն տան աղօթարանի, որ ճամի ասէն յանուն սուլթան Ահմատի կոչէն և շատք՝ ի մեծամեծ իշխանաց հովանիս ի ներքոյ թեւոյ ապաւինելով՝ զերծան և այլ բազումք աստ և անդ յենլով պատսպարեցան»,— գրում է Գրիգոր Դարանաղցին[1]:

Գաղթական հայերին Կ. Պոլսից արտաքսելու գործողությունը կրկնվեց նաև 1635 թ., երբ պարսից դեմ պատերազմի գնացող սուլթան Մուրադին Սեբաստիայի հայերը գանգատվեցին, որ երկիրը գրեթե ամայի է մնացել բնակիչների փախստյան կամ գերեվարության պատճառով, և իշխանությունները ստիպում են մնացածներին՝ տալ այդ անձանց տուրքերը: Իրոք, դեռևս 16-րդ դ. 2-րդ կեսից, մանավանդ 90-ական թթ., երբ Թուրքիան մեծ ծախսեր կլանող պատերազմ սկսեց Ավստրիայի ու նրա դաշնակիցների դեմ, էլ ավելի ծանրացավ հարկային լուծը: Մտցվեցին նորանոր հարկեր, այդ թվում և ավարիզ-ի դիվանիյեն, որը և նկատի ունեին սուլթանին բողոքող սեբաստացի հայերը: Այդ հարկի կամայական բնույթը ակնհայտ էր կայուն չափ չունենալու (գանձում էին քանիցս, մանավանդ, ռազմական կարիքների համար), այլև այն պատճառով, որ այդ հարկը սահմանվում էր ոչ թե յուրաքանչյուր առանձին հարկատուի համար, այլ ամբողջ համայնքի: Հետևաբար, հարկը պետք է տրվեր նաև փախստականների փոխարեն[2]: Այս անգամ ևս նորաբնակները ենթարկվեցին բռնի տեղահանման: Ընդ որում, եթե Սուլեյման Կանունիի օրենսդրքով փախստականները 20 տարի Կ. Պոլսում ապրելուց հետո արդեն իրավունք էին ստանում այնտեղ մնալու, ապա այս դեպքում աքսորվում էին բոլոր նրանք, ովքեր մայրաքաղաքում ապրել էին 40 տարուց պակաս[3]: Տեղահանումները կատարվում էին բռնակալին հատուկ անգթություններով, ընդհուպ մինչև ընդդիմացողներին կոտորելը[4]:

Ամբողջ 17-րդ դ. ընթացքում Կ. Պոլիս էին գաղթում նաև ծանր ու ապօրինի հարկերի տակ կքած հայերը՝ խմբերով կամ անհատաբար: Գաղթում էին 1650-ական թթ. «վասն նեղութեան և հարկապահանջու-

---

1 Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղեմ, 1915, էջ 145–146:

2 Новичев А. Д. Турция, ч. I, Л., 1963, с. 120—121.

3 Гордлевский В. О. Избранные сочинения, т. IV, М., 1968, с. 41. Սարուխան, Հոլանդան և հայերը: «Հանդէս ամսօրեայ», 1927, №3–4, էջ 182:

4 Սիմեոն Լեհացի, նշվ. աշխ., էջ 378–379:

թեան տեղեացն... վասն այսորիկ բազումք եղեալ ի տանց և իր բնակութեանց... և եկեալ բնակեցան աստ ի քաղաքս որ կոչիւր Կոստանդնուպոլիս»[1],– գրում է Ե. Քյոմյուրճյանը: Նույն հեղինակի վկայությամբ, 1672 թ. Կամենիցը գրավելուց հետո, Թուրքիա են գերեվարվում հայեր, ռուսներ և հրեաներ՝ «Հանին և յերկիրս յայս բերեալ»,– գրում է նույն հեղինակը[2]:

18-րդ դ. առաջին քառորդին վերսկսված պարսկա-թուրքական պատերազմները դարձյալ աղետալի հետևանքներ ունեցան Արևելյան Հայաստանի բնակչության համար: 1724–1727 թթ. Կ. Պոլիսը լցվեց բռնի տեղահանված հայ բազմություններով: Պատրիարք Հովհաննես Կոլոտը (1715–1741) ստիպված էր դիմելու մեծ վեզիր Իբրահիմ փաշային՝ դադարեցնելու հայերի բռնագաղթեցումը: Սակայն գաղթականների մի ստվար մասն արդեն հասցվել էր նախանշված վայրերը[3]: Այս ժամանակներում Թոքատը դարձել էր տարանցիկ կենտրոն՝ Արևելահայաստանից դեպի Թուրքիայի խորքերը քաշվող հայերի տեղաշարժման համար: Մխիթարյան վարդապետ Ներսեսյանը իր մի նամակում գրում էր, որ «բազում մարդիկ տնով չվեցին աստի, ոմանք դնալով Իզմիր, ոմանք՝ ի Կոստանդնուպոլիս և ոմանք՝ ի Տրապիզոն, և ոմանք այլուրեք, իսկ մնացեալքն այլ հնար որոնեն չվելոյ»[4]:

Թուրքերի կողմից Կ. Պոլիսը նվաճվելուց հետո այստեղ գաղթած հայերը բնակվում էին որոշակի թաղերում, ըստ հայրենակցական հատկանիշի, խմբվելով իրենց թաղի եկեղեցու շուրջ: 1461 թ. Կ. Պոլսում ճանաչելով հայոց առաջնորդությունը, սուլթանը փաստորեն ճանաչում էր նաև հայ համայնքը իբրև առանձին «միլեթ»՝ օսմանյան հասարակության «միլեթների» համակարգում: 15-րդ դ. 2-րդ կեսին հայերը բնակվում էին Կ. Պոլսի վեց թաղերում՝ պետության կողմից ճանաչվելով որպես վեց համայնք՝ «ալթը ջեմաաթ»: Սուլթանի ֆերմաններում և պաշտոնական գրագրություններում այս հորջորջումը հարատևեց մինչև 18-րդ դ. վերջը: Դրան հանդիպում ենք Կ. Պոլսի պատրիարք Զաքարիայի՝ հայերին ուղղած 1796 թ. օգոստոսի 4-ի թվակիր կոնդա-

---

1 «Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմուրճեանի». Երևան, 1939, էջ 184: Այսուհետև՝ Ե. Չէլէպի Քէօմիւրճեան, Օրագրութիւն:

2 Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան. Ստամպոլոյ պատմութիւն, Վիեննա, 1913, էջ 7:

3 Խաչկոնց Դ., Կ. Պոլսի հայ գաղութին ծագումը: Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1902, էջ 192:

4 Տաշյան Ղ., Մայր դիվան Մխիթարյանց Վենետկոյ, Վենետիկ, 1930, էջ 290:

կում՝ «և մեք՝ ժողովեալ մերս քաղաքի գալթի ճեմաաթ կոչեցեալ ազգիս մերոյ» դարձվածով[1]:

16–17-րդ դդ. Կ. Պոլսում հայերով բնակեցված թաղերն էին՝ 1. Գում գափու, Լանկա և Ենի գափու, այս թաղը ամենաստվար հայ բնակչությունն ուներ Ս. Աստվածածին եկեղեցիով, 2. Սամաթիա՝ 1000-ից ավելի տնով, Ս. Գեորգ եկեղեցիով, 3. Էդիրնե գափու, Պալաթ, Էյուպ և Խասգյուղ՝ Ս. Հրեշտակապետ եկեղեցիով, 4. Ղալաթիա՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիով, 5. Հիսարդիբի՝ Ս. Նիկողայոս, 6. Զինիլի համամ՝ Ս. Սարգիս եկեղեցիներով: Ղ. Ինճիճյանը 18-րդ դ. վերջում հիշում է 6 օդալարը (որ հոմանիշ է ջեմաաթին, բառացի՝ տներ). 1. Գարակյոմրյուք օդալարը, 2. Մալթա օդալարը, 3. Զարշամբա օդալարը, 4. Թեքե օդալարը, 5. Քյոմյուրճի օդալարը, 6. Ախըր գափուի ներքին կողմը: Նա նշում է երբեմն հիշատակվող մեկ օդալար ևս՝ Թոփխանեն[2]: Կ. Պոլսի թաղերը կոչվել են հիմնականում այն վայրերի անուններով, որտեղից եկել էին գաղթականները (նաև հույներն ու թուրքերը), ինչպես՝ Կարաման, Զարշամբա, Ագսարայ և այլն[3]: Հետագայում հայերը ցրվել են Կ. Պոլսի այլ թաղերում ևս: Ա. Ալպոյաճյանի կարծիքով, հայերը 16-18-րդ դդ. բնակվում էին քաղաքի 12 օդալարներում[4]:

Կ. Պոլսում հայերն ունեցել են նաև այլ եկեղեցիներ, որոնք չեն հարատևել և արժանացել են ոչ մահմեդական տաճարների հեղհեղուկ բախտին: Սուլթանները հույներին և հայերին հնազանդ պահելու նպատակով ձգտում էին նրանց միջև ստեղծել լարված հարաբերություններ: Ֆաթիհի ժամանակ և նրանից հարյուրամյակներ անց հայերին էին հանձնվում հույների եկեղեցիները: Այսպես, Սամաթիո Ս. Գեորգ եկեղեցին (Սուլու Մանաստիրի), որ մի ժամանակ եղել էր հույների սեփականությունը և հանձնվել էր հայերին՝ Մահմեդ II-ի ժամանակ: Ս. Գեորգը մինչև 1641 թ. հայոց պատրիարքարանն էր. «ծովահայեաց պարտիզօք յառաջն էր մեզ փիսկոբարան»,– ինչպես գրում էր Ե. Քյոմուրճյանը[5]: Այնուհետև, Կիրակոս պատրիարքի ժամանակ, (1641–1642)

---

1 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 89:

2 Սիրուն Հ., նշվ. աշխ., էջ 509: Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե: Վենետիկ, 1804, էջ 115–116:

3 Петросян Ю. А. Древний город на берегах Босфора. М., 1986, с. 136–137.

4 Ալպոյաճյան Ա., Պալաթու թաղի կազմությունը: Երեքդարյան պատմություն Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցվո, Կ. Պոլիս, 1931, էջ 161–162:

5 Ե. Զէլէպի Քէոմիւրճեան, Ստամպոլոյ պատմութիւն, էջ 7:

պատրիարքարանը տեղափոխվել է Գում գափու՝ Ս. Աստվածածնի եկեղեցի. Քաղաքական հանգամանքների կամ սուլթանների քմահաճույքի բերումով թուրքերն իրենք էին սեփականացնում հայկական սրբատեղիները, ինչպես Կյոմրյուքի Ս. Նիկողայոս եկեղեցին՝ 1629 թ.[1]: 1662 թ. մեծ վեզիր Քյոփրյուլյու Օղլուի հրամանով քանդվեցին Լանկայի (Վլանկայի) Ս. Նիկողայոս և Ս. Սարգիս եկեղեցիները[2]: Նույնի հրամանով քանդվել էին քաղաքի յոթ հունական եկեղեցիներ: Հունական եկեղեցիների թվաքանակը կրճատելու մեջ դրսևորվում էր քաղաքի քրիստոնյա ամենամեծ համայնքի՝ հույների բազմամարդության դեմն առնելու միտումը: 15-րդ դ. վերջին քառորդից և հաջորդ դարի առաջին տասնամյակներին մահմեդականները արդեն կազմում էին Կ. Պոլսի բնակչության զգալի տոկոսը[3]: 17-րդ դ. առաջին կեսին, ըստ Սիմեոն Լեհացու, Կ. Պոլսում ապրում էր 20 հազար տեղացի հայ, կրկնակի չափով՝ հրեա, բայց «տաճկաց հաշիւ և համար չկայ»,– հավելում է նա[4]: Նույն դարի վերջում տեղացի հայերի թիվը դարձել էր 40.000, «եկվոր» հայերի 50.000-ի դիմաց: 17-րդ դ. թուրք հեղինակ Էվլիյա Չելեբին իր «Սեյահեթնամեում» նշում է, որ սուլթան Մուրադ Դ-ի ժամանակ անցկացված մարդահամարի տվյալներով Կ. Պոլսում ապրում էր 200.000 քրիստոնյա 60.000 մահմեդական[5]:

Կ. Պոլսի հայկական հնագույն եկեղեցին համարվում է Ղալաթիո Ս. Լուսավորիչը (14-րդ դ. 2-րդ կես): Հնության տեսակետից երկրորդը համարվում է Ս. Գեորգ եկեղեցին, երրորդը՝ վերոհիշյալ Ս. Նիկողայոսը՝ Կյոմրյուք թաղում, որը թուրքերը վերածել էին մզկիթի: Ֆաթիհ Մահմեդի օրոք Կ. Պոլսում գործում էր նաև հայերի չորրորդ հին եկեղեցին՝ Ս. Աստվածածինը: Սիմեոն Լեհացու ժամանակ հայերը Կ. Պոլսում ունեին 5 եկեղեցի (17-րդ դ. առաջին կես), Վլանկայում՝ 3-ը, Սուլու Մանաստիրում և Պալաթում՝ մեկական, Ղալաթիայում ևս մեկը՝ Ս. Լուսավորիչ եկեղեցին:

---

1 Մ ր մ ը ր յ ա ն Հ., Մասնական պատմություն հայ մեծատուններու, Կ. Պոլիս, 1910, էջ 26:

2 Հանդէս ամսօրեայ, 1937, №1–5, էջ 193–194: Ս ի ր ո ւ ն ի Հ., նշվ. աշխ., էջ 351:

3 Ս ի մ ե ո ն դ պ ր ի Լ ե հ ա ց ւ ո յ Ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 20:

4 Մ ր մ ը ր յ ա ն Հ., նշվ. աշխ., էջ 49:

5 Ս ի ր ո ւ ն ի Հ., նշվ. աշխ., էջ 40:

Որպես կանոն, միաժամանակ կամ տարբեր ժամանակներում, բայց և միևնույն տարածքից դաղթած հայերը Կ. Պոլսում ապրում էին համախումբ, որոշակի թաղերում: Սակայն գաղթերի հաճախացմանը զուգընթաց, նկատելի է դառնում նաև այդ կանոնի հաճախակի խախտումը: Անակնկալ տեղափոխությունները, բռնագաղթերը կամ կամավոր գաղթերը հաճախ անհնարին էին դարձնում նրանց միատեղ բնակվելը: Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցու թաղում, ըստ Ե. Բյոմյուրճյանի, 17-րդ դ. 2-րդ կեսին ապրում էր մինչև 800 տուն հայ՝ ցրված այլազգիների մեջ, «ցիր և ցան, 'ւ ոչ ի մին սահման»[1]: Սամաթիայում, նույն հեղինակի վկայությամբ, ապրում էր 1000 տնից ավելի հայ՝ սերտ հարևանությամբ: Հիմնականում նրանք գաղթել էին Կարամանից, թաղը կոչվում էր Կարաման մահալլեսի[2]: Պրուսայից եկած գաղթականները խմբված էին Հիսար դիբի թաղում՝ Ս. Սարգիս եկեղեցիով: 15-րդ դ. գաղթած կաֆացի հայերը խմբվել էին Սալամաթոմրուկ թաղում՝ Ս. Նիկողայոս եկեղեցիով: 16-րդ դ. 2-րդ քառորդին մշեցիները խմբվել էին Սկյուտարի Ենի մահալլեի Ս. Կարապետ եկեղեցու մերձակայքում, ակնցիները՝ Խասգյուղում: Միայն 1729 թ. այստեղ կառուցվեց փայտաշեն Ս. Ստեփաննոս եկեղեցին: Լանկայի և Գում դափուի (Գլխավոր դարպաս) կողմերում էին ապաստանել տիվրիկցի հայերը, որոնք կառուցել էին այդ թաղի մայր եկեղեցին: 16-րդ դ. գաղթական բազմությունների խարբերդցի հայերը, հավանաբար, նախապես հաստատված են եղել Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցու մոտակայքում[3]: Կ. Պոլսի այն թաղամասերում, որտեղ հայերը ցրված էին այլազգիների մեջ, գործում էին ժամատներ, մատուռներ: Եկեղեցիները պետք է ցածր լինեին մերձակա մզկիթներից, չունենային զանգակատուն:

Մայրաքաղաքից դուրս, գավառներում, մահմեդական ծայրահեղությունների պոռթկումները հիմնականում հրահրում էին ենիչերիները, որոնք իսկական չարիքի էին վերածվել օսմանյան միջնադարյան հասարակության մեջ: Թեմերի առաջնորդների իրավասությունները, որոնք հաստատվում էին սուլթանական ֆերմաններով, ոչ մի արժեք չունեին ենիչերիների ցանկության և կամքի առջև: Հասի և չհասի, պսակի և այլնի դեպքերում ռայաները դիմում էին ոչ միայն առաջնորդներին, այլև ենիչերուն, որը իրեն հասանելիք դրամը ստանալուց

1 Ե. Զ է լ է պ ի Բ է օ մ ի ւ ր ճ ե ա ն. Ստամպօլոյ պատմութիւն, էջ 41:
2 Խ ա չ կ ո ն ց Դ., նշվ. աշխ., էջ 190–191:
3 Նույն տեղում, էջ 193–194:

հետո «գայր իրիցուն թօփուզով՝ պսակ տայր առնել»[1]: 17-րդ դ. վերջերից մինչև 1737 թ. Կ. Պոլսում ապրած հոլանդացի նկարիչ Ժան Բատիստ Մուրի «Հայ հարսնիք մը» կտավում արտացոլվել է ենիչերիական այդ ամենազորությունը, որ շարունակվում էր շուրջ մեկ դար հետո ևս: Կտավում հարսանքավորների առջևից, առաջին պլանում, ընթանում է մի ենիչերի, որին հետևում են պարող երկու հոգի և ապա հարսանեկան թափորը[2]: Մայրաքաղաքում բռնությունները համեմատաբար «մեղմ էին» համեմատած գավառների հետ: Դեռևս Ֆաթիհի ժամանակներից ոչ մահմեդականների համար սահմանվել էին որոշակի գույների զգեստ և կոշիկներ (հույներին թույլատրվում էր սև կոշիկը, հայերին՝ մանիշակագույնը, հրեաներին՝ կապույտը): Սակայն Կ. Պոլսում այս կարգից շեղվելը անսովոր երևույթ չէր, ուստի սուլթանները երբեմն-երբեմն զգացնել էին տալիս կարգուկանոնը պահպանելու անհրաժեշտությունը: Դրա նախանձախնդիրներից էր սուլթան Մուստաֆա Գ-ն, որը սաստիկ «պատվեր (յասախ) դրավ ռայեներուն, որ իրենց չի վայլած բան չի հագնեն, փարթամություն չի ցցնեն»,— գրում էր Ղ. Ինճիճյանը[3]:

Մայրաքաղաքում ևս սովորական բռնություններից էր բռնի մահմեդականությունը, որի համար օգտագործում էին չնչին, նույնիսկ անհեթեթ պատրվակներ: 1765 թ. մայրաքաղաքում գլխատվում է մի հույն պատանի, որը ամբոխի կեղծ վկայությամբ, իբր, մահմեդականություն էր ընդունել, սակայն հրաժարվել էր դրանից: Նույն ժամանակներում Այա Սոֆիա մտած մի հայի գլխին թուրքերը գլխարկ են դնում՝ հայտնելով, որ նա արդեն մահմեդական է դարձել: Նա հրաժարվում է և ի վերջո «տարեալ գլխատել ղնա»[4]:

Կ. Պոլիսը նվաճելուց հետո, 1461 թ. Ֆաթիհ Մահմեդը Պրուսայի առաջնորդ Հովակիմին է հանձնում տեղի հայերի հոգևոր գլխավորի պաշտոնը: Տակավին մինչև վերջ չի բացահայտված՝ արդյոք 1461 թ. առաջնորդ նշանակված Հովակիմը՝ Պրուսայի հայերի նախկին առաջնորդը, նույնական է 1445 թ. հիշվող Կուտինայի Հովակիմ առաջնորդի՞, 1469 թ. հիշված՝ Ֆիլիպեի առաջնորդ Հովակիմի՞ հետ, թե՞ տարբեր

---

1 Մ ի մ ե ն դ պ ր ի Լ ե հ ա ց ւ ո յ Ուղեգրութիւն, էջ 193:

2 Հայաստանի կոչնակ, 1920, N 45, էջ 1432:

3 Ի ն ճ ի ճ յ ա ն Ղ., Դարապատում (1757–1768), Վենետիկ, 1825, էջ 254–255:

4 Տ ա յ ա ն Ղ., Մայր դիվան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, Վենետիկ, 1930, էջ 228–229:

անձնավորություն է: Համենայն դեպս, Հովակիմի ժամանակվա հիշատակարաններում և դրանից բավական հետո էլ Կ. Պոլսի հայ հոգևոր գլուխը երբևէ «պատրիարք» չի կոչվել, իսկ նրա պաշտոնը նշվում է «հայրապետութիւն», «եպիսկոպոսութիւն» կամ «արհիեպիսկոպոսութիւն» անուններով[1]:

Պատրիարքին առաջադրում և ընտրում էր Կ. Պոլսի հայ բնակչությունը դասային ներկայացուցչության միջոցով:

Կ. Պոլսի հայ պատրիարքը (ինչպես որ հույն պատրիարքը, հրեական խախամապետը և այլն) սուլթանների կողմից օժտված էր որոշակի պարտականություններով և իրավունքներով: Պատրիարքը հանդես էր գալիս որպես միջնորդ իր ժողովրդի և օսմանյան պետության միջև: Իբրև «միլեթի» համայնքի գլխավորի, նրան էին հանձնվում ոչ միայն հոգևոր, այլև քաղաքացիական որոշակի հարաբերությունների վերահսկողությունն ու կարգավորումը (պաշտամունքի, ծննդյան, պսակի, ամուսնալուծության, թաղման, գույքային, սեփականատիրական հարաբերությունների ինչպես համայնքի ներսում, այնպես էլ համայնքի և պետության միջև), պետությանը համայնքի կողմից արվելիք հարկերն ու տուրքերը գանձելու գործը: Իր հերթին, պատրիարքարանը որոշակի քանակությամբ հարկ էր ստանում գավառական առաջնորդներից, իսկ հայաբնակ այն շրջաններում, որտեղ վիճակներ չկային (Բալկաններ, Ռումելի, բացի Ադրիանուպոլսից և Թեքիրդաղից) մուքաթաա (մուքարրեր) հարկը նվիրակների միջոցով: Պատրիարքներին հաստատում էր սուլթանը իր հատուկ բերաթով, որի բովանդակությունը, պատրիարքական իրավունքների ու պարտականությունների մասին, հիմնականում անփոփոխ էր մնում դարերի ընթացքում: Պատրիարքը պատասխանատու էր իր ժողովրդից գանձվող արքունի տուրքի, ողորմության, պատրիարքարանի տուրքի և ամենից առաջ պատրիարքության դիմաց հատկացվող գումարի համար: Վերջինս գոյանում էր հիշյալ մուքաթաա հարկից, որ տալիս էր նորընտիր պատ-

---

1 Հ. Պերպերյանն առաջինն է ուշադրություն դարձրել այս կարևոր փաստի վրա, նշելով, որ «պատրիարք» պատվանունը սկսել է գործածվել 1526–1543 թթ. ժամանակահատվածում և վկայակոչելով Աստվածատուրին «պատրիարք» կոչող 1543 թ. մի հիշատակարան (Պերպերյան Հ., Կ. Պոլսի հայ պատրիարքության հիմնարկությունը, «Հանդես ամսօրյա», 1964, № 10–12, էջ 506): Կա, սակայն, նաև ավելի վաղ 1540 թ. մի հիշատակարան, որտեղ նույն Աստվածատուրը հիշվում է իբրև «պատրիարք» (տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Հակոբյանց (կազմ. Պողարյան Ն. եպ.), հ. 2, Երուսաղեմ, 1967, էջ 22:

րիարքը սուլթանի դանձարանին, իբրև փեշքեշ: Մուքաթա՛այի չափը 17–18-րդ դդ. կազմել է 10.000 աքչե (ընտրվելուց հետո), իսկ տարեկան չափը՝ 140.000 աքչե: Վերջինիս արժեզրկման հետ կապված՝ այս հարկի չափերը հետագայում մեծացել են[1]*:*

Խարաջից հետո Կ. Պոլսի հայության վրա առանձնապես ծանրացած էր արքունի տուրքը՝ միրիեն (միրի), որի չափը ևս նախորոշվում էր սահմանված ցուցակներով, որոնք ընդդրկում էին եկեղեցիների ծխերը՝ յուրաքանչյուրն առանձին վերցրած: Բնակչության մեջ պատրիարքական աթոռի շուրջ շարունակաբար ծավալվող ընդհարումները մի հայտնի չափով արտացոլում էին թաղերի տարաձայնությունները միրիեի չափերի շուրջ, այսինքն՝ որ եկեղեցին (իր թաղով) որքան պետք է վճարի: Պատրիարքի պաշտոնանկությունը, որ սովորական երևույթ էր 17–18-րդ դդ., պատրիարքական աթոռի հաճախ թափուր մնալը հավելյալ դժվարություններ էին ստեղծում նշված հարկը ժամանակին վճարելու համար: Այսպես, 1639–1657 թթ., տասնութ տարվա ընթացքում, պատրիարքը փոխվեց տասն անգամ (այդ ընթացքում Դավիթ Արևելցին պատրիարք դարձավ չորս անգամ, Թովմաս Բերիացին՝ երկու անգամ), որ վկայում էր պոլսահայ համայնքի տնտեսական լարված վիճակի, նյութական ու բարոյական մանրախնդրության պոռթկումների, թաղային կրքերը համազգային նպատակների հետ չփոթելու աղետալի իրողության մասին: 1651 թ. Դավիթ Արևելցի պատրիարքը պաշտոնանկ արվեց վեց եկեղեցիների պարտքերը չվճարելու պատճառով: Պարտքը հասել էր 40.000 ղուրուշի: Թաղերի մեջ այս պատճառով խորացող վեճերը մի կերպ խաղաղվեցին Եղիազար Այնթապցու պատրիարք ընտրվելով, որը ազդեցիկ ենկիչեր աղասի Ղարա Զավուշի օգնությամբ պարտքը իջեցրեց 25.000-ի, և այդքանն էլ վճարեցին եկեղեցիները «ըստ իւրաքանչիւր կարողութեան»[2]*:*

Պատրիարքն էր հավաքում նաև այսպես կոչված քյուրեկճի հարկը (թիարանում աշխատելու փոխարեն՝ թիատուրք) մայրաքաղաքում թաղերի ավագների (տանուտեր), իսկ գավառներում՝ առաջնորդների ձեռքով: Հարկը սահմանվել էր սուլթան Մեհեմեդ Դ-ի ժամանակ (1648–1687), երբ օսմանյան նավատորմը պաշարել էր Կրետեն (Կանդիայի պատերազմում): Հարկը վճարում էին միայն հույներն ու հայե-

---

1 *Նույն տեղում, էջ 371–373:*

2 *Ռ է օ մ ի ւ ր ճ ե ա ն Ե., Օրագրութիւն, էջ 18, 26:*

ը: Այն սահմանվում էր կամայական չափերով, որտեղ կայունը միայն ավելացնելու միտումն էր: 1657 թ. փետրվարին մեծ վեզիրը 50 աքչեով ավելացրել էր քյուրեկճին: Թաղերի հայ բնակիչների բողոքներին մեծ վեզիրը պատասխանում էր նոր հավելումներով՝ ի հեճուկս բողոքարկուների[1]: Նման բիրտ վերաբերմունքի էր արժանանում նաև Կ. Պոլսի հույն բնակչությունը:

Պատրիարքական ընտրությանը նախորդող վճարման ու կաշառատվության սխեման, ավելի փոքր չափերով, կրկնվում էր առաջնորդների նշանակման ժամանակ: Իրենց պաշտոնի վավերացման համար առաջնորդները վճարում էին 600 աքչե (նշանակման բերաթ ստանալու դիմաց) և անխուսափելի կաշառք, որ հոսում էր մայրաքաղաքի բարձր աստիճանավորների և գավառական փաշաների գրպանները: Բացի սովորական հարկերից, առաջնորդները և վանահայրերը պետական գանձարան էին մուծում նաև մուրհասիե աքչեսի կոչված հարկը:

Կ. Պոլսի վեց եկեղեցիները կամ համայնքները, որոնք ընդգրկում էին հիմնականում արհեստավորներից ու առևտրականներից կազմված հայ բնակչությունը, գլխավորում էին ավագները (տանուտեր) և ազդեցիկ իշխանները: Նրանք տնօրինում էին յուրաքանչյուր առանձին վերցրած թաղի (համայնքի) գործերը, կարգավորում և կազմակերպում էին հարկերի հավաքումը, թաղի եկեղեցու բարեկարգման, դաղթականներին տեղավորելու, իշխանությունների հետ թաղի հարաբերությունների խնդիրները և այլն: Վակըֆ հողերը տնօրինում էին այսպես կոչված մյութեվելիները[2], որոնք սովորաբար ընտրվում էին թաղի հեղինակավոր ու հարուստ անձանցից: Եթե խնդիրը վերաբերում էր բոլոր վեց հայկական թաղերի բնակչությանը, ապա կազմվում էր մի ընդհանուր ներկայացուցչություն՝ առանձին եկեղեցիների ավագներից: Այսպես, Երուսաղեմի սուրբ տեղյաց համար հույների հետ բանավիճելու առիթով (1650-ական թթ.) Կ. Պոլսի հայ եկեղեցիները ընտրում են «ԳԳ և ԴԴ իշխան՝ վէքիլ արարեալ ամենայն ժողովրդեանն»[3]: Վեց թաղերի գլխավորները ազգային վարչությունը կազմող տարրերն էին՝ վարդապետներն ու քահանաները (ռահիբ վե փափազ), համայնքի պետերը (միլլեթ բաշի) և էսնաֆների ավագները (էսնաֆ իհթիյարլերի): Պատրիարքի թեկնածությունը, որպես կանոն, առաջ էին քաշում ազդեցիկ

---

1 *Նույն տեղում, էջ 228:*

2 *ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, ցուց. 2, № 108, էջ 12:*

3 *Ք է ո մ ի ւ ր ճ ե ա ն Ե. Օրագրութիւն, էջ 269:*

իշխանավորներն ու հարուստները, 18-րդ դարում՝ ամիրաները, այդ թեկնածությունը համաձայնեցնելով իշխանությունների հետ: 15–18-րդ դարերում թաղի եկեղեցին ուներ իր հատուկ մյութեվելին, որը տնօրինում էր թաղի եկամուտները:

Կ. Պոլսի հայ եկեղեցիների ավագները, ինչպես և «իշխանները» ներկայացնում էին մայրաքաղաքի հայ բնակչության երկու խոշոր դասերը. նրանք արհեստապետեր էին կամ պալատի, օսմանյան բարձր պաշտոնության հետ կապված դրամատերեր՝ սարաֆներ, խոշոր վաճառականներ: Ոչ քիչ դեպքերում արհեստապետերն իրենք սեղանավորներ էին կամ վաճառականներ և այդպիսով մեկ անձի մեջ միավորում էին հիշյալ երկու դասերը: Ազգային ընդհանուր կարևորություն ունեցող խնդիրները 18-րդ դ. առաջին քառորդից քննարկվում կամ լուծվում էին Ազգային ժողովներում:

Կ. Պոլսի հայ բնակչության մի ստվար մասը կազմում էին արհեստավորները: Արհեստավորները Կ. Պոլսի առաջին հայ գաղթականներից էին 15-րդ դ. 2-րդ կեսին, ուստի և փաստորեն նախորոշեցին քաղաքի հայ բնակչության դասային երկու շերտերի գոյությունը: Կ. Պոլսի հայ արհեստավորությունն ու առևտրականությունը ընդգրկված էին դասային կազմակերպության էսնաֆությունների մեջ: Արհեստագործական արտադրանքը շուկայում իրացնում էին իրենք՝ արհեստավորները, ի ցույց դնելով արհեստների և առևտրի դեռևս միավորված լինելու իրողությունը օսմանյան ավատատիրական հասարակության մեջ: 18-րդ դ. Կ. Պոլսի Մեծ շուկայի բեզեսթենները (փակ և մասնագիտացված շուկա) ձգվում էին մինչև Վեզիր խան, Զուխաճի խան, Քյուրքճի խան, Վալիդե Մեծ նոր ու Սյումբուլ խաներ (առևտրականներ շինություններ, հյուրանոցներ). դրանք լեփ-լեցուն էին արհեստավոր և առևտրական հայ չուհաճիներով (մահուդագործ), ոսկերիչներով, ճեվահիրճիներով (ակնավաճառ), թյուլպենճիներով (մետաքսագործներ, բատիստագործներ) և այլ առևտրական-արհեստավորներով[1]: 17-րդ դ. առաջին տասնամյակներին Կ. Պոլիս այցելած Սիմեոն Լեհացին գրում է, որ քաղաքի շուկայում գործում էին արհեստավորների խանութները՝ 3սսը բազարին (գերիների շուկա) կից[2]:

---

1 *Մ ր մ ը ր յ ա ն Հ. Թուրքահայոց հին վաճառականություն և վաճառականք, Կ. Պոլիս, 1908, էջ 17:*

2 *Ս ի մ է ո ն դ պ ր ի Լ ե հ ա ց ւ ո յ Ուղեգրություն, էջ 20:*

Գաղթերի ժամանակ հայերը հաճախ Կ. Պոլիս էին մտնում հայրենակցական խմբերով և զբաղվում էին միևնույն արհեստով կամ միևնույն արհեստագործական արտադրանքի վաճառքով, այսինքն՝ մտնում էին միևնույն էսնաֆի մեջ: Այսպես, տիվրիկցիները, որոնք բավական զգալի ազդեցություն ունեին 17–18-րդ դդ. Կ. Պոլսի ամբողջ հայության մեջ, գլխավորապես ոսկերիչներ էին, ակնցիները՝ հացագործներ և սեղանավորներ, սեբաստացիները՝ հիմնականում դերձակներ և պանդոկապաններ, կեսարացիները՝ չինարարներ, բանվորներ ու առևտրականներ և այլն[1]: Այս հանգամանքն էր պատճառը, որ Կ. Պոլսում հայ արհեստավորները և առևտրականները կազմել են նաև առանձին ազգային-դասային խմբեր, կազմակերպություն՝ չմտնելով մահմեդական էսնաֆի կորպորացիաների մեջ, միաժամանակ իրենց մեջ չներառելով մահմեդական էսնաֆի:

Կցկտուր են նաև բուն հայ էսնաֆի կազմակերպական կառույցների, նրանց իրավունքների ու պարտականությունների, հիերարխիայի, էսնաֆի անդամների, այլ էսնաֆների հետ նրանց փոխհարաբերությունների և այլնի վերաբերյալ տվյալները: Ակներև է, սակայն, որ իրենց կազմակերպական կառուցվածքով և ֆունկցիաներով Կ. Պոլսի հայ էսնաֆը բավական նման էր ոչ քրիստոնյա էսնաֆին: Հայկական արհեստավորական կազմակերպություններում ևս արհեստակիցների գլուխ էին կանգնած ավագները (պետերը), որոնք վերահսկում էին արտադրության գործընթացը, արտադրանքի քանակն ու որակը, լուծում դրա իրացման հետ կապված հարցերը: Խմբված լինելով իրենց թաղի եկեղեցու շուրջ՝ հայ էսնաֆը կրում էր նաև կրոնական-ավանդութային արժեքներ: Մինչդեռ թուրք արհեստավորները հետևում էին շարիաթի թելադրած բարոյական նորմերի պահպանությանը իրենց գործընկերների մեջ՝ հանդես գալով ոչ միայն իբրև մասնագիտական, այլև կրոնական կազմակերպություններ[2] (հին ահիների ավանդույթներով): Կ. Պոլիսը նվաճելուց հետո սուլթան Մահմեդը պահպանել էր բյուզանդական կորպորատիվ կազմակերպությունների արտոնությունները, իրավունքները և պարտականությունները[3]: Նրա հաջորդները ևս խրախուսում էին արհեստների զարգացումը մայրաքաղաքում, հետևաբար, հայ էս-

---

1 Մ ր մ ը ր յ ա ն Հ. նշվ. աշխ., էջ 18:

2 К у р и л е в В. П. К организации ремесленных цехов в Турции. В кн.: Социальная история народов Азии. М., 1975, с. 262.

3 Նույն տեղում, էջ 267:

նաֆը նաև պետք է հարմարվեր բյուզանդական ժամանակներից ժառանգված համքարությունների կազմակերպական ձևերին, որոնք ընդհանրական էին առհասարակ Կոստանդնուպոլսի բոլոր արհեստագործական միությունների համար:

Մայրաքաղաքի համքարություններից յուրաքանչյուրն ուներ իր կարգավիճակը, որով սահմանվում էին նրանց գործունեության շրջանակները, արտադրանքի տեսակը և իրացման տարածական սահմանները: Հայ համքարական կազմակերպությունների կարգավիճակի մասին է վկայում սուլթանական դոնանմաներին (տոնախմբություն) նրանց առանձին-առանձին հանդես գալը՝ իրենց հատուկ զգեստներով, արհեստավորներով ու արհեստապետերով: Սուլթան Մուրադ Գ-ի (1574–1595) որդիների թլպատմանը նվիրված մի այդպիսի հանդեսի նկարագիրը, որ տրված է Ե. Քյոմյուրճյանի մի աշխատության մեջ, որոշ տվյալներ է տալիս մայրաքաղաքի հայ էսնաֆի մասին.

Զարհեստավորս համայն վառէն
Իբրու զալայս նոր իմն ցուցեալ
Ըստ հանդերձից և ըստ ձեւոց
Յատուկ զգեցեալ պայծառացեալ:
Ուրոյն ուրոյն արհեստաւորք
պետօք իւրեանց մանկամբք զինեալ
Ընդ շուկայս դասս դասս երթան
Եւ յարքունիս են ժամանեալ[1]:

Ե. Քյոմյուրճյանն այստեղ հստակորեն առանձնացնում է էսնաֆի (այդ թվում և հայ) հիերարխիան՝ (արհեստապետերին), ենթավարպետներին ու աշակերտներին՝ մանկանց:

Ե. Քյոմյուրճյանը մեկ առ մեկ հիշում է բազմաթիվ արհեստավորների՝ էքմեքճիներին (հացավաճառ), պաշճիներին (ոչխարի գլուխ եփողվաճառողներ), չյոմլեքճիներին (բրուտներ, պուտուկի մեջ ապուր եփողներ), պազարճիներին (միրգ վաճառողներ), ղահվեճիներին (սրճավաճառներ), թաքյահիներին (գլխարկ վաճառողներ), պոզմաճիներին (հնակարկատներ), աշճիներին, նալչաճիներին (պայտագործ-պայտավաճառներ), մուլթաֆներին (պարան մանողներ) և այլն: Հեղինակը թվարկում է 53 տեսակի արհեստներ[2]: Ասատուրը հաշվում է Կոստանդնու-

---

1 Քէօմիւրճեան Ե., Պատմութիւն համառօտ Դ-Ճ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Ե., 1982, էջ 157:

2 Քէօմիւրճեան Ե., Օրագրութիւն, էջ 246–250:

պոլսում հայերի 66 էսնաֆություն, Դ. Խաչկոնցը՝ 65 (16–18-րդ դդ. կտրվածքով)[1]: Ե. Քյոմյուրճյանը մայրաքաղաքում հաշվում է 150 կարևոր էսնաֆություն[2]: Էսնաֆը միշտ կամ գրեթե միշտ միավորում էր արտադրանքի պատրաստման և իրացման գործը, ուստի միևնույն անվամբ էին կոչվում և վերմակագործն ու վերմակ վաճառողը, և հաց թխողն ու հաց վաճառողը և այլն: 17-րդ դ. 2-րդ կեսին, սակայն, նկատելի են դառնում արհեստի և առևտրի մասնագիտական տրոհման երևույթը կամ նշանները:

Հայ համքարությունները, ինչպես և մահմեդականներինը, ունեին յուրաքանչյուրն իր սեփական խորհրդանիշը կամ դրոշմը, որ տանում էին իրենց դեսպակներով՝ թափոր կազմելիս[3]: Նրանք կազմակերպորեն միավորվում էին լոնջաների մեջ՝ կարգադրելով իրենց արտադրանքի ու առևտրի հարցերը: Մայրաքաղաքում ստեղծվել էր էսնաֆի համար սահմանված կարգուկանոն, որին ենթարկվում էին նաև հայ արհեստավորները: Կոստանդնուպոլսում բնակվող հայ արհեստավորներն ու վաճառականները ապաստանում էին Նոր մեծ (Ենի բյոյուք) և Նոր փոքր (Ենի քյուչյուկ) խաներում: Առաջինը եռահարկ շինություն էր և պարունակում էր 166 սենյակ (կառուցվել էր Մուստաֆա Գ-ի ժամանակ, 1760 թ.)[4]:

Իրենց արտադրանքի բարձր որակով աչքի էին ընկնում հատկապես հայ արհեստավորները: Հռչակված էին զինագործները, որոնք պատրաստում էին սուր, հրացանի փող և այլն: Հայերն էին հնարել և կատարելագործել ծաղկենկար բեհեզը (հնարողը Գուզկունճուք թաղի մի հայ էր)[5]: Դրա շնորհիվ Սկյուտարում լայն թափ էր ստացել յազմայի արհեստագործությունը: Կոստանդնուպոլսի սահմաններից դուրս էր ելել հայ արծաթագործների, ոսկերիչների, ակնագործների հռչակը: Մուստաֆա Գ-ի և Համիդ Ա-ի ժամանակներում, 18-րդ դ. 2-րդ կեսին, նրանց արտադրանքը իր որակով գերազանցում էր եվրոպականին: Այսուհանդերձ, հայ արհեստավորների, ինչպես և ամբողջ Թուրքիայի էս-

---

1 Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները, «Ընդարձակ օրացույց», Կ. Պոլիս, 1901, էջ 164: Խաչկոնց Դ. Կ., Պոլսո հայ գաղութին ծագումը, էջ 199:

2 Քէոմիւրճեան Ե., Օրագրութիւն, էջ 246–250:

3 Ինճիճյան Ղ., Դարապատում, էջ 249:

4 Խաչկոնց Դ., նշվ. աշխ., էջ 199:

5 Մրմըրյան Հ., Թուրքահայոց հին վաճառականություն և վաճառականք, էջ 13:

նաֆի արտադրանքը գլխավորապես նախատեսված էր ներքին շուկայի համար:

Օսմանյան Թուրքիայում, կրոնական անտագոնիզմի պայմաններում, ոչ մահմեդական արհեստավորությունը, ինչպես և առհասարակ հասարակ ժողովուրդը, կրում էին վերնախավերի առավել ծանր լուծը: Անհավասարությունն ու խտրականությունը արտահայտվում էին նրանցից գանձվող ապօրինի հարկերի ու պարհակների, նրանց հանդեպ կամայականությունների և բռնությունների տարբեր երևույթների մեջ: Շարիաթի պատվիրանների կիրառումը ոչ մահմեդական արհեստավորների ու առևտրականների նկատմամբ իշխանությունների համար հաճախ դառնում էր հավելյալ եկամտի միջոց: Ամենից շատ իշխանությունների հարվածի տակ էին ընկնում քաղաքի հույն և հայ գինեվաճառները: Մեծ վեզիրը ցանկացած պահի կարող էր արգելել գինու ներմուծումը կամ վաճառքը, և տուժողները հարկադրված գործի էին դնում կաշառքը: 17-րդ դ. վերջում գինին այստեղ կրկնակի գնով էր վաճառվում, որովհետև խմելը խստիվ արգելված էր մահմեդականներին. բռնվելիս սրանք պատժվում էին ֆալախայով[1]: Արհեստավորները իշխանություններին շահագրգռում էին նույն կերպ, երբ կանգնում էին իրենց արտադրանքը իրացնելու դժվարության առջև: 1658 թ. մարտին կաշեգործ արհեստավորները կաշառքի ուժով հասան այն բանին, որ Իսթանբուլ էֆենտին (Կոստանդնուպոլսի քաղաքապետը) քաղաքացիներին պարտադրեց գնել սրանց կարած կաշվե մաշիկները[2]:

Արհեստագործությամբ էին զբաղվում նաև Թուի գափու թաղամասում բնակվող հայ բոշաները, որոնց մի նշանակալի մասը 17-րդ դ. 2-րդ կեսին արդեն թուրքացել էր: Հայ բոշաների (կային նաև հույն բոշաներ) ընտանիքներում արդեն իսկ կատարված էր աշխատանքի բաժանում «Արքն ի տունս զմաղս գործեն եւ կանայքն ի ծախել շուրջ գան»,– գրում է Քյոմյուրճյանը[3]:

Կոստանդնուպոլսի առևտրաարհեստավորական հրապարակը տնօրինում էին օսմանյան կրոնադատական և վարչական իշխանությունները: 17-րդ դ. առևտուրը վերահսկում էին մուհթեսիբները. դա ամրագրված էր Սուլեյման Կանունիի օրենսգրքում: Թաղամասերում շուկաների

---

1 Ա. Տ ը Լ ա Մ ո թ ա ն ի ուղեգրութենէն, Հայրենիք, Բոստոն, 1950, № 6, էջ 99:

2 Ք է օ մ ի ւ ր ճ ե ա ն Ե., նշվ. աշխ., էջ 271–272:

3 Նույն տեղում:

ապրանքների գները (պարենի) նշանակում և հսկում էին թաղամասային մուհթեսիբները, որոնց գլխավորում էր Կոստանդնուպոլսի մուհթեսիմ բաշին: Սրանց կարգադրությունների կատարմանը շուկաներում հետևում էին նրանց ենթակա բազարբաշիները: Ֆունկցիոնալ իմաստով գործունեության առավել լայն դաշտ ուներ կադին, որին ենթարկվում էին մուհթեսիբները, և որը շարիաթի նորմերի պահպանությանը հետևելու հետ միասին ներկայանում էր իբրև իրավարար արհեստավորների ու առևտրականների միջև ծագած վեճերի ժամանակ, հետևում քաղաքը պարենով ապահովելու դործին:

Թուրքիայում արհեստների և առևտրի զարդացումը կասեցվում էր երկրի տնտեսական թուլությամբ, ապրանքափոխանակությանը նպաստող պայմանների բացակայությամբ, ճանապարհների վտանդավորությամբ, այլև՝ բուն ճանապարհների սակավությամբ: Մի հայտնի չափով այս գործոններն իրենց հերթին պայմանավորված էին կենտրոնական իշխանության թուլությամբ (17–18-րդ դդ.), վիլայեթներում անջատողականության ծավալումով և ենիչերիների խռովություններով: 18-րդ դ. առավել ևս նվազեց տեղական արտադրանքի արտահանումը՝ ներմուծման ծավալի աննախընթաց մեծացման պայմաններում: Հրեա, հույն և հայ միջնորդ վաճառականության տնտեսական դերի ընդլայնումը զգալիորեն արտացոլում էր եվրոպական արտադրանքի ներմուծման չափերի որակական աճը:

Կոստանդնուպոլսում 17–18-րդ դ. արհեստագործությունը թեև ընդհուպ մոտեցավ, բայց չկարողացավ հաղթահարել մանուֆակտուրային արտադրության ձևը: Նույնիսկ 18-րդ դ. 2-րդ կեսին մայրաքաղաքից դուրս գործում էին մի քանի մանուֆակտուրաներ (Սալոնիկում, Ադրիանուպոլսում և էլի մի քանի տեղեր):

Տեղական արհեստագործության անզարդացած վիճակը ոչ մի խթան չէր կարող հաղորդել առևտրական հարաբերությունների խորացմանը երկրում: Կոստանդնուպոլսի հայ առևտրականությունը իր գործունեությունը պետք է ծավալեր որպես արհեստներից կտրված դաս, իբրև Լևանտի առևտրի միջնորդ, որը մի կողմից Թուրքիա էր ներմուծում եվրոպական արտադրանքներ (նաև կիսաֆաբրիկատներ), մյուս կողմից եվրոպական երկրներ էր արտահանում Թուրքիայի դյուղատնտեսական հումքը: Միջնորդ այս առևտրական դասը անվերապահորեն դրական դեր էր կատարում միջազգային առևտրական շրջանառության մեջ՝

տարանցիկ առևտրի ոլորտ ընդգրկված Թուրքիայի, ինչպես և եվրոպական տերությունների համար:

Իր հասարակական դիրքով ու տնտեսական կարողություններով առավել ազդեցիկ խավը հայ վաճառականությունն էր, որը տարբերվում էր քաղաքում կենտրոնացած ու զուտ նրա մեջ ու շրջականերում գործող մանր առևտրականներից: Այս խավին էին պատկանում համեմատաբար խոշոր դրամագլուխներ ունեցող առևտրականները և մեծագումար վաճառականները: Նրանք հիմնականում զբաղված էին Թուրքիայի գյուղատնտեսական արտադրանքը ցամաքային ու ծովային ուղիներով մայրաքաղաք կամ երկրի խոշոր նավահանգիստներ (Զմյուռնիա, Սալոնիկ, Տրապիզոն և այլուր) հասցնելու գործով: 16-րդ դ. ցամաքային այդպիսի գործուն ուղի էր Թավրիզ-Կոստանդնուպոլիս երթուղին իբրև հում մետաքսի բանուկ ճանապարհ, որի տարանցիկ գլխավոր վերջնակետերից մեկը Զմյուռնիան էր: Ի դեպ, Կ. Պոլսի առևտրական դասը 17-րդ դ. իր մասնակցությունն էր բերում Զմյուռնիա – Կ. Պոլիս առևտրական կապերին՝ նպաստելով մայրաքաղաքին հաց և միրգ մատակարարելու գործին: 17–18-րդ դ. հայ, այդ թվում և պոլսահայ առևտրականները եռանդուն կերպով օգտվում էին Կոստանդնուպոլիս-Իզնիմիտ-Բայանդրը-Օսմանճրգ-Մարզվան-Ամասիա-Թոքատ գծից: Այս առևտրական ուղիով էր ձգվում Կոստանդնուպոլիս-Թոքատ-Էրզրում-Թավրիզ հնագույն առևտրական երթուղին, որը 16-րդ դ. վերջին քառորդին և 17-րդ դ. առաջին տասնամյակին խափանվել էր թուրք-պարսկական մշտական բախումների և ջալալիների ավերածությունների պատճառով:

18-րդ դ. արտասահմանի հետ առևտրի ընդլայնման կապակցությամբ աճում էր նաև Կոստանդնուպոլսի հայ վաճառականների դերը եվրոպական, այլև սևծովյան առևտրում: Նշված դարի 2-րդ կեսին սևծովյան նավարկության մենաշնորհը պատկանում էր Թուրքիային, և այստեղ առևտուրը կատարվում էր միայն թուրքական նավերով: Կոստանդնուպոլսի հայ առևտրականները ներգրավված էին ոչ միայն վերոհիշյալ, այլև տեղական գործվածքեղենի իրացման մեջ: 18-րդ դ. սկզբին որոշ չափով աշխուժացել էր Կոստանդնուպոլսի, Քիոսի և մի քանի այլ վայրերի մետաքսե գործվածքեղենի արտադրությունը, որը արտասահմանի ապրանքների հետ կարող էր մրցակցել միայն էժան

գնով, բայց ոչ որակով[1]: Ցածր գինը մատչելի էր ներքնախավերին, որը և առևտրականների համար ստեղծում էր սպառման կարելիություններ ներքին շուկայում: Արտաքին առևտրից մեծ չափերով շահում էին սանջակբեյերը, բեյլերբեյերը և վեզիրները, վարչական հիերարխիային պատկանող այլևայլ անձինք[2], որոնց հետ լեզու գտնելու իրենց ունակությամբ առանձնանում էր միջնորդ հայ վաճառականությունը: Այսպես կոչված «կապիտուլյացիաների ռեժիմի» ծավալմանը զուգընթաց, ընդարձակվում էր նաև պոլսահայ առևտրականության միջնորդի դերը Լևանտի առևտրում: Այսպես, 17-րդ դ. 2-րդ կեսին Նիդեռլանդներին տրված առևտրական արտոնությունները (1668, 1680 թթ.)[3] մեծապես նպաստեցին հոլանդական առևտրի ընդլայնմանը Լևանտում, որից օգտվեցին նաև Կ. Պոլսի ու Զմյուռնիայի հայ առևտրականները:

Գավառացի հայ առևտրականները Կոստանդնուպոլսում, որպես կանոն, ապրում էին այսպես կոչված խաներում՝ անբարեկարգ հյուրանոցներում: Մեծ նոր խանում, հարմարավետ այդ հյուրանոցում, բնակվում էին հայ սեղանավոր ու հարուստ վաճառականները: Քաղաքի հայության կյանքում տեղական կամ եկվոր գավառացի հայ առևտրական մանր ու միջին խավը որևէ կարևոր դեր չէր խաղում: Այդ խավի մարդիկ ընդամենը «համշիրակի» (համերկրացու) համեստ տեղն էին զբաղեցնում, կոչված էին սոսկ հենարան լինելու իրենց հարուստ ազդեցիկ հայրենակիցների համար: Սակայն առևտրական մանր ու միջին խավերն էին, որ հաճախ շրջանառության մեջ էին դնում խոշոր վաճառականության ու սեղանավորների, չելեպիների ու խոճաների ապրանքային ու դրամական կապիտալի մի մասը Օսմանյան Թուրքիայի ներքին շուկաներում: Իրենց դիրքի ու հարստության, ինչպես և օսմանյան պալատի աստիճանավորների հետ ունեցած կապերի շնորհիվ չելեպիներն ու խոճաները ապահովել էին վերնախավի իրենց տեղը մայրաքաղաքի հայության մեջ:

Չելեպիները արևմտահայ գավառներից և թուրքական առևտրական կենտրոններից Կ. Պոլսում հաստատված խոշոր հայ առևտրական վեր-

---

1 Русский посол в Стамбуле. М., 1985, с. 96—97.

2 Akdağ M. Türkiyenin iktisadive içtimai tarihi. 2, Istanbul, 1974, s. 435.

3 Uzunçarşılı J. H. Osmanlı tarihi, III cilt, 2 kısım. Ankara, 1954, s. 237. Նույն՝ կապիտուլյացիաների ուժով ֆրանսիացիները ոչինչ չէին վճարում իրենց ապրանքների համար, մինչդեռ տեղացի վաճառականները՝ հույները, հայերը և հրեաները և այլք պետք է վճարեին մաքս՝ 300–500 ասպերսի չափով (The six voyages of Tavernies, London, 1677, p. 11).

նախավի մարդիկ էին, որոնք իբրև խավ կազմավորվել էին առնվազն 16-րդ դարի 2-րդ կեսից: Չելեպիները մոտ հարաբերությունների մեջ էին օսմանյան պաշտոնական շրջանների հետ, իրենց դրամական կարողությունների շնորհիվ ֆինանսավորում էին օսմանյան բարձրաստիճանավորներին՝ ի տրիտուր դրա վայելելով նրանց հովանավորությունը: Հայ չելեպիները խոշոր վաճառականներ էին, սեղանավորներ ու լումայափոխներ: Չելեպի տիտղոսը հայերի մեջ տրվում էր նաև կրթված ու մտավոր զարգացմամբ աչքի ընկնող մարդկանց: Հենց բուն տիտղոսն իսկ Կոստանդնուպոլսի հայերի մեջ փոխառնված էր թուրքերենից: Հայ չելեպիներից առաջիններից մեկը, որ հիշվում է, Շահին չելեպին է, շատ հեղինակավոր մի անձնավորություն՝ 1601–1621 թթ.: Ճանաչված մեծահարուստ էր Անտոն չելեպին Բրուսայից (1660-ական թթ.), որի նվիրատվությամբ Փիլիպոս կաթողիկոսը Էջմիածնում զանգակատուն էր կառուցել: Անտոն չելեպին ապարանքներ ուներ Զմյուռնիայում և Կ. Պոլսում, նրա մեծագումար գործառությունները հույժ տպավորիչ էին հայրենակիցների և օտարների շրջանում[1]: Չելեպիների դասից էր նշանավոր Ապրոյան տոհմը, որն իր ծագումն առնում է Կարինից: Այս տոհմում 17-րդ դարում աչքի ընկան Ապրո և Պետրոս չելեպիները: Առաջինի ձեռնտվությամբ նորոգվել կամ կառուցվել են Կ. Պոլսի Ս. Նիկողայոս, Ֆիլիպուպոլսի Ս. Գեորգ և այլ եկեղեցիներ: Ապրո չելեպին, ի դեպ, Քյոփրյուլյու օղլու Ֆազլը Ահմեդ փաշայի բազրկյան բաշին էր, նա ազգակիցների համար գնել էր Կրետեի հունաց Ս. Գեորգ եկեղեցին (վերանվանվել է Ս. Կարապետի)[2]: Ապրո չելեպին գործուն մասնակցություն է ունեցել ոչ միայն Կոստանդնուպոլսի, այլև ամբողջ հայության կյանքին, փաստորեն եղել է Էջմիածնի և Կոստանդնուպոլսի հայության հարաբերությունները կարգավորողներից մեկը 17-րդ դ. 60-ական թթ.: Նույն դարի վերջին տասնամյակներին Ապրոյան տոհմի ներկայացուցիչները ապրում էին Զմյուռնիայում: Ապրո Չելեպու թոռներ Պետրոսը, Աբրահամը և Ստեփանոսը 1717 թ. Պետրոս Մեծից ստացել էին Ռուսաստանի տարածքներում ազատորեն առևտուր անելու

---

1 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 338–339:

2 Մրմբրյան Հ., Մասնական պատմություն հայ մեծատուներու, Կ. Պոլիս, 1909, էջ 63:

արտոնագիր, որպիսին դրանից առաջ տրվել էր Սպահանի հայ վաճառականներին[1]:

Նույն ժամանակներում՝ 17-րդ դ. կեսերին, երևելի մեծահարուստներից էր Մաղաքիա չելեպին, մեծ վեզիրի մտերիմը, որն իր ազդեցությունն էր գործադրել թեթևացնելու հայերի համար սահմանված քյուրեկճի աքչեսի հարկը[2]: Հանրածանոթ Տյուզյան տոհմը ևս (ծագումով տիվրիկցիներ) 17–18-րդ դդ. կրում էր չելեպի պատվանունը: Տյուզյաններից վերջինը, որ մեծարվում էր այդ տիտղոսով, Հակոբ չելեպին էր (վախճանվել է 1847 թ.):

Չելեպիների հետ դասակից էին խոճաները՝ հարուստ վաճառականության ներկայացուցիչները 17-րդ դարում: Կոստանդնուպոլսի դաղթօջախում նրանք ազդեցիկ ուժ դարձան 16-րդ դ. վերջին տասնամյակներին և ջալալիների ապստամբությունից հետո, երբ հայ վաճառականները հաստատվում էին մայրաքաղաքում՝ Հայաստանի արևելյան և արևմտյան գավառներից գաղթելով: Խոճաների և չելեպիների միջև ևս կային հակասություններ, սակայն դրանց հիմքում էին ոչ թե գույքային, սեփականատիրական սոցիալական բնույթի տարբերություններ, այլ բուն գաղթօջախում, պատրիարքարանում և ազգային մյուս հաստատություններում ազդեցության դաշտի, կրոնական վերնախավի վրա առավել չափերով ներազդելու միտումները: 17-րդ դ. 2-րդ կեսին Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռի շուրջ մղված պայքարը մի հայտնի չափով արտացոլում էր հայ վերնախավի այս երկու դասերի մրցակցությունը՝ համայնքի և առհասարակ նրա ազգային-հոգևոր գործերը տնօրինելու հավանականությամբ: Առևտրական (խոճաներ) և առևտրաբյուրոկրատական (չելեպիներ) խավերի հակասությունները, խոճաների հասարակական դիրքի կայունացման համեմատ, պետք է մեղմանային կամ վերանային իսպառ՝ 17-րդ դարի վերջին քառորդին: Դրա վկայություններից է այն, որ նույն դարի 2-րդ կեսի սահմանագծին խոճա և չելեպի պատվանունները արդեն կրում էին միասին: Խոճաների որդիները սկսել էին կրել չելեպի տիտղոսը՝ «իրականում մնալով միշտ նույն վաճառական-խոջաները»[3]:

---

1 Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сб. документов (под ред. А. Г. Иоаннисяна). Т. II, ч. I, Е., 1964, с. IX—X.

2 Քէսմիլրճեան Ե., Սամսոնի պատմութիւն, էջ 51–52:

3 Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961, էջ 67:

Չելեպիներին և խոճաներին ժամանակագրական կարգով հաջորդում են ամիրաները՝ Կոստանդնուպոլսի հայ բնակչության վերնախավը, որն այդ անվամբ սկսեց հորջորջվել 18-րդ դ. 2-րդ կեսից: Ամիրաները նույն չելեպիների և խոճաների հետնորդներն էին, ոչ քիչ դեպքերում նաև՝ գավառից մայրաքաղաք տեղափոխված ձեռներեց կամ տաղանդավոր անհատներ, որոնք հասարակական դիրք և հեղինակություն էին ձեռք բերել առևտրի կամ արհեստագործության մեջ իրենց հաջող գործունեության շնորհիվ: Ամիրաները բարձր պաշտոններ էին զբաղեցնում օսմանյան բյուրոկրատական վերնախավի շարքում, հաճախ ներկայանալով իբրև էսնաֆի գլխավորներ՝ արհեստապետեր: 18-րդ դ. ամիրա պատվանունը տարածվել է ոչ միանգամից, այլ աստիճանաբար: Այդ դարի կեսին չելեպիների և խոճաների հետ միասին և նրանց կողքին արդեն հիշվում են ամիրաները, ինչպես Ալրո չելեպին, ակնցի Յաղուպ ամիրան, ապուչեխցի Բեդրակի չելեպին և դարձյալ ապուչեխցի Ազատյան ամիրան և շատ ուրիշներ: Ամիրաները հանդես էին գալիս որպես սեղանավորներ, ֆինանսավորում էին գավառական վալիներին և անգամ սուլթանական գանձարան էին ներդնում հարկավոր գումարներ, որ խոսում է նրանց ունեցած բավական պատկառելի հարստության մասին: Ամիրաների հարստության աղբյուրը մի դեպքում տոհմական կարողությունն էր, մի այլ դեպքում՝ գավառներում հարկ հավաքելու հույժ շահավետ գործը, որ նրանք տնօրինում էին վալիներին ֆինանսավորելու դիմաց, մի այլ դեպքում՝ առևտրական խոշոր չափերի գործառնությունները Թուրքիայի ներքին և արտաքին շուկաներում և այլն: Իրենց կարողության շնորհիվ ամիրաները հաճախ հենվում էին մեծ վեզիրների վրա՝ ծառայելով նրանց իբրև արքունի վաճառապետեր (բազրկյան բաշիներ): 1760-ական թթ. հայտնի էին Պողոս, Ղազար և Ասլան ամիրաները, Ջանսուզյան և Սաքայան ամիրաները՝ իբրև բազրկյան բաշիներ: Դրանից մեկ տասնամյակ անց հրապարակի վրա էին մահտեսի Հովհաննես ամիրան՝ սեղանավորների էսնաֆի գլխավորը (սարաֆլար քեհյասը), բազրկյան բաշի մահտեսի Հովհաննես ամիրան՝ դարձյալ ազդեցիկ անձնավորություն, Միրիճանյան Շնորհք ամիրան, Տյուզյանները, Տատյանները և ուրիշներ: Առաջինները 18-րդ դ. 2-րդ կեսին զբաղեցնում էին արքունի ոսկերչապետի պաշտոնը, երկրորդները՝ վառոդապետի: Կային նաև պաշտոններ, որ տեսականորեն զբաղեցրել են միայն հայերը՝ անկախ տոհմական պատկանելությունից: Այդպիսին էր փողերանոցի բարձր սահապ-այարի պաշտոնը, որն

այդ հաստատության մեջ երկրորդն էր՝ տնօրենից հետո: Ամիրաները նաև խոշոր հողատերեր էին, ինչպես Պալյանները (արքունի ճարտարապետներ) և Տատյանները[1]:

Ամիրաների բարգավաճ կյանքն ու դիրքը, սակայն, ամբողջովին կախված էին սուլթանների, մեծ վեզիրների կամ փաշաների քմահաճույքից կամ վերաբերմունքից: Արևելյան փոփոխամիտ բռնակալների ստվերի տակ նրանց ճակատագիրը ևս բեկբեկուն էր ու պատահականությունների ենթակա, ինչի վկայությունները քանիցս տալիս է դաղթօջախի պատմությունը: Այս իմաստով ուշագրավ է նրանցից մեկի՝ Յաղուպ աղայի կենսագրությունը, մի մարդու, որի մեծ համբավին «հաւասար չէր ոք լեալ ի հայոց մինչև ցայնժամ»,– գրում է Զամչյանը[2]: Յաղուպ աղան հռչակված էր ոչ միայն իր հարստությամբ, այլև բարեգործություններով, իր ազդեցիկ դերով՝ դաղթօջախի հանրային գործերում: Սակայն ղզլար աղասու այդ հովանավորյալը սպանվեց չարաչար մահով, երբ նույն թուրք պաշտոնյան զրկվեց սուլթանի ողորմածությունից և գլխատվեց[3]: Պատճառը ոչ թե սոսկ պալատական ինտրիգներն էին, այլ ամիրաների աչք ծակող հարստությունը, որ շլացնում էր սուլթանին կամ նրա մեծամեծներին: Այս կերպ, 1750–1760-ական թթ. գլխատվեցին Ղազար ամիրան, ապուչեխցի Բեդրակի չելեպին, շնորհազրկվեցին Պողոս և Ասլան ամիրաները և այլն: Շնորհազրկման և հալածանքների ենթարկվեց Կարապետ Մանուկ օղլուն՝ հանրաճանաչ սեղանավորը Կ. Պոլսում:

* * *

Գաղթականության նորանոր հոսքերը 16–17-րդ դարերում խորացրեցին Կոստանդնուպոլսի հայ համայնքի սոցիալական հակասությունները: Դրա հաճախակի դրսևորումներից էր հայաբնակ տարբեր թաղերի կողմից վճարվելիք տուրքերի ու հարկերի չափի խնդիրը: Բնակչության վրա դրված էր հարկերի որոշակի, բոլորին վերաբերող չափ, որի բաշխումը թաղերի վրա, վերահսկումն ու պետությանն հանձնելը իրականացնում էին թաղերի մյութեվելիները կամ սրանց վեքիլները (տեղապահները) և սրանց միջոցով՝ պատրիարքը, որը միջնորդն էր իր ժողովրդի և պետության միջև: 17-րդ դ. կեսին «Կ. Պոլիսի բնիկ հայերուն

1 Մ ր մ ը ր յ ա ն Մ., Մասնական պատմություն հայ մեծատուններու, էջ 112:
2 Զ ա մ չ ե ա ն Մ., Պատմութիւն հայոց, հ. Դ, էջ 864:
3 Բազմավէպ, 1926, № 8, էջ 255:

մեջ տիրած էր իշխելու և եկեղեցական եկամուտները ինքնահրաման տնտեսելու հավակնություն մը, որով «արևելցիները», այսինքն՝ Անատոլուեն եկողները կնկատվեին արհամարհությամբ մը իբրև «գռեհիկ»,– գրում է Մրմբրյանը[1]: Պատրիարքները կորցնում էին իրենց աթոռը, շնորհազրկվում էին չելեպիներն ու ամիրա-սեղանավորները՝ հենց այս, հարկերի վճարման շուրջ ծավալվող սադրանքների ու անվերջանալի երկպառակությունների լարծուն գետնի վրա: Օսմանյան վերնախավը այս երկպառակությունները խորացնում էր հարկային լծի ծանրացումով՝ մեծացնելով հին հարկերի չափը կամ պարտադրելով նորերը՝ 1650 թ. պատրիարք Դավիթ Արևելցուն «մանդուլ առնելու» (պաշտոնազրկելու) ժամանակ վեց եկեղեցիների՝ քյուրեկճի հարկից գոյացած պարտքը կազմում էր 40.000 ղուրուշ: Բացահայտ պոռթկացին բախումները հայաբնակ թաղերի միջև. յուրաքանչյուր թաղ պնդում էր, որ իր բաժին հարկը հանիրավի է բարձրացվել, բնականաբար, մեղադրելով պատրիարքին՝ «Աղմուկ ի մէջ նոցա, ասելով ընդ միմեանս, թէ ձեր եկեղեցւոյն սակաւ և իմն՝ շատ»,– վկայում է Ե. Քյոմյուրճյանը[2]:

Նույն ժամանակներում և դրանից առաջ՝ 1630–1640-ական թթ., բավական լայն չափերի էին հասել բախումները մայրաքաղաքի հնաբնակ հայերի և նորեկների միջև՝ պատրիարքարանի և եկեղեցիների մատակարարման պատճառով: Հնաբնակները նոր դաղթականներին մոտ չէին թողնում ազգային վարչության գործերին: Նյութական, վարչական հակասությունները վերածվեցին հակասությունների՝ հայրենակցական հանրությունների միջև, որչափով, ինչպես տեսանք, միևնույն վայրից դաղթած հայ բազմությունները հիմնականում բնակեցվում էին համախումբ, միևնույն թաղերում: Տարբեր ժամանակներում Կոստանդնուպոլսում հանդրվանած տիվրիկցիները, վանեցիները, կամախցիները, այնուհետև Արևելյան Հայաստանից եկածները, ելնելով իրենց սոցիալական կամ համայնքային շահերից, շարունակաբար բախվում էին ազգային վարչություններում տեղ, ձայն և աթոռ գրավելու առիթներով: Այս պայքարը ծավալվելով հասնում էր մինչև մյութեվելիները, բարձրաստիճան կղերն ու պատրիարքը: Պատրիարքների զարմանալի կարճատև գահակալումները 17–18-րդ դդ. սկզբներում և ոչ պակաս զարմանալի

1 Մ ր մ ը ր յ ա ն Ե., նշվ. աշխ., էջ 30:
2 Ք ե ո մ ի ւ ր ճ ե ա ն Ե., Օրագրություն, էջ 18:

արագ անկումներն ու վերահաստատումները Կոստանդնուպոլսի հայության այս տարբեր շերտերի, սոցիալական այլազան կարգավիճակների միջև ընթացող ներքին պայքարի արտացոլումն էին: Մյուս, ոչ պակաս կարևոր պատճառն այս հարցում օսմանյան վերնախավի խիստ սուբյեկտիվ, օգտապաշտական, նաև հայ բնակչության ազգային միասնության մեջ սեպեր խրելու քաղաքականությունն էր: Այդ, ինչպես և կրոնադավանական երկպառակությունները անհաստատ էին դարձնում պատրիարքական աթոռը:

Հնաբնակ պոլսահայերի և նոր գաղթականների վեճերը հայտնի էին «պոլսեցիի» և «դրսեցիի» հորջորջումով, որ ծայր էր առել 1630–1650-ական թթ.: 17-րդ դ. հայ ամենալուսամիտ մտավորականներից մեկը՝ Ե. Չելեպի Քյոմյուրճյանը, որքան էլ դատապարտեր պոլսահայ կյանքի ստվերոտ՝ ներհամայնքային ընդհարումները, այսուհանդերձ, ինչ-որ տեղ կիսում էր պոլսահայ բնիկների հակակրանքը գաղթական «արևելյան հայոց» նկատմամբ. «Քանզի այս արևելյան հայքն, որ ի տեղս լցվան, բազում աւեր և խառնակութիւն եղեւ ի մէջ քաղաքիս և բոլոր հոռոմաց տանն»,– գրում է նա[1]: 1650-ականի սկզբներին գաղթականներով հագեցած Կոստանդնուպոլսի հայաբնակ թաղերի վեց եկեղեցիները վերոհիշյալ՝ 40.000 ղուրուշի պարտքի պատճառով ենթարկվել էին իշխանությունների ուժեղ ճնշմանը: Պարտքը մարվեց Փիլիպոս կաթողիկոսի կազմակերպած հանգանականության միջոցներով: Կաթողիկոսը հաջողեց հաշտեցնել պայքարող կողմերին, որը, սակայն, ժամանակավոր բնույթ կրեց:

Կոստանդնուպոլսի հայության մեջ եկեղեցին և նրա գլուխը կանգնած պատրիարքն էին դառնում այն առանցքը, որտեղ կենտրոնանում էին բնակչության համար կենսական նշանակություն ունեցող խնդիրները: Բուն իսկ հայ եկեղեցու նվիրապետության ավանդույթով Կոստանդնուպոլսի պատրիարքության համար կարևոր էր Էջմիածնի, այլև Սսի կաթողիկոսության, Երուսաղեմի պատրիարքության հետ հարաբերությունների կարգավորումը: Այս իմաստով աննախընթաց չափերով աճում էին Կ. Պոլսի պատրիարքարանի ազդեցությունն ու հեղինակությունը հայ ժողովրդի կյանքում: Կ. Պոլսի պատրիարքը դառնում էր արևմտահայ զանգվածի հոգևոր, իսկ միլեթների համակարգի ուժով՝ նաև աշխարհիկ ամենաբարձր հայ պաշտոնյան Օսմանյան Թուրքիա-

---

1 Քէօմիւրճեան Ե., նշվ. աշխ., էջ 155:

յում: Այս էր պատճառը, որ Կ. Պոլսի, իսկ հետագայում նաև ամբողջ Թուրքիայի հայ բնակչության ճակատագիրը տնօրինողի դերը սեփականացրած օսմանյան իշխանավորների ձգտումները, հակասություններն ու ներհակությունները ամենից առաջ կենտրոնանում էին պատրիարքական պաշտոնի և այն զբաղեցնող անձի վրա: Կ. Պոլսի պատրիարքությունը չէր կարող պահպանել իր կայուն ընթացքը արտաքոց և բազմաճյուղ հարաբերությունների ճնշման պայմաններում: Պատրիարքական աթոռը դարձավ մի կողմից պոլսահայ «բնիկների» ու նորեկ գաղթականների, մյուս կողմից չելեբիների ու խոջաների, այնուհետև սուլթանական պալատին ու փաշաներին կոթնած ամիրաների տարբեր խմբակցությունների, ազգային կրոնական կենտրոնների, օսմանյան բարձր պաշտոնեության նկրտումների, անձնական կրքերի ու նախասիրությունների հակասությունների կենտրոնը: Մասամբ են ճիշտ այն տեսակետները, թե 17-րդ դարում պատրիարքական աթոռի շուրջ մղված կռիվները էջմիածնական ու սսական հոսանքների ներհակության արդյունքն էին[1], և կամ թե այստեղ կարևոր դեր ունեին առավելապես անհատական փառասիրությունները, կիրքն ու անձնական հաշիվները[2]: Այդ կռիվները ճիշտ կլիներ բացատրել վերոհիշյալ տարբեր հակասությունների ամբողջության մեջ, դրանց ենթատեքստում: Ամբողջ 17-րդ դարում, մինչև 18-րդ դարի 2-րդ տասնամյակի կեսը Կ. Պոլսի պատրիարքական աթոռը ցնցվում էր նշված տարամիտումների անհանգիստ խառնարանում: Պատահական չէ, որ պատրիարքական աթոռի համար ծավալված «ամոթալի ու խայտառակ» վեճերն ու երկպառակությունները սկսվեցին 17-րդ դ. սկզբից, երբ վերոհիշյալ հակասությունները հասան աննախադեպ լարվածության, ամենից առաջ Կոստանդնուպոլսի համայնքում կատարվող որակական տեղաշարժերի հետևանքով, որոնց հիմքում ընկած էր նորանոր գաղթականությունների հաստատումը այնտեղ՝ և Արևմտյան, և Արևելյան Հայաստանից: Համայնքում տարբեր խմբակցությունների պայքարը հասցրել էր մի անսովոր «հավասարակշռության»: Կոստանդնուպոլսի պատրիարքությունը, կողմերի համաձայնությամբ, փաստորեն բաժանվել էր երեք հոգևոր գլուխների՝ Զաքարիա Վանեցու, Գրիգոր Դարանաղցու և Հով-

---

1 Ա ն ա ս յ ա ն Հ., 17-րդ դարի ազատագրական շարժումներն ու արևմտյան Հայաստանը, Ե., 1961, էջ 73:

2 Գ ա լ ե մ ք յ ա ր յ ա ն Գ ր., Կենսագրություն երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու, Վիեննա, 1919, էջ 69–69: Մ ի ր ա ն ի Հ. Ա., նշվ. աշխ., էջ 458:

հաննես Խուլի միջև՝ առաջինի պաշտոնապես պատրիարք ճանաչվելու պայմաններում[1]: Արևելյան Հայաստանից Կոստանդնուպոլիս և Թուրքիայի այլ վայրեր տեղափոխված հայ գաղթականությունը այն կենդանի կամուրջն էր, որ պահպանում էր Էջմիածնի (թեկուզ և բավական կասկածելի դարձած՝ Մելքիսեդեկ կաթողիկոսի ձախողակ հովվապետության պայմաններում) հմայքը Արևմտահայաստանում և Թուրքիայի այլ հայաբնակ շրջաններում: Դրա համեմատ աճում էին Էջմիածնի, որպես հոգևոր գերագույն գլխի հավակնությունները Կոստանդնուպոլսի համայնքում: Պատրիարքական աթոռի շուրջ կռիվները խոր հակամարտության հասան Հակոբ կաթողիկոսի և Եղիազար Այնթապցու ժամանակ (1660-ական թթ.), որ հայտնի է «Հակոբյանց» և «Եղիազարյանց» վեճ անվամբ և որը լուծվեց Եղիազար Այնթապցու պատվասիրական հակումների զսպումով, Հակոբ կաթողիկոսի՝ չելեսլիական դասի կողմից ճանաչվելով և ըստ այդմ՝ նրա թեկնածու Մարտիրոս Քեֆեցուն (Կաֆայեցուն) Երուսաղեմի պատրիարք ընտրելով: Սակայն այս հակամարտությունը, ավելի մեղմ դրսևորումներով, շարունակվեց մինչև 1681 թ., երբ Եղիազարը ընտրվեց Էջմիածնի կաթողիկոս, որով Կոստանդնուպոլսի համայնքում ավարտվեց «Հակոբյանների» (կամ «Ջահուկյանների») և «Եղիազարյանների» (կամ «Հոռոմցիների») վեճը: Մի հայտնի չափով այս ամենի մեջ իրենց դերն ունեին նաև համայնքի առևտրասեղանավորական վերնախավի և Եվրոպայից, մասնավորապես Հռոմից, արևմտահայության ազատագրման ակնկալիքներ ունեցող ուժերի հակամարտությունները: Նույն՝ XVII դարի 2-րդ կեսին պատրիարքական աթոռը տնօրինել են աշխարհականներ Սաքա օղլուն և Շահինը: Աշխարհականներից էքմեքճիպաշի Սարգիսը, օգտագործելով տեղապահի ընձեռած հնարավորությունները, ընդունեց կրոնական կարգ և դարձավ պատրիարք (1679–1680):

Եվ իրոք պատրիարքական աթոռի շուրջ կրքերը շարունակում էին բորբոքվել նաև Կոստանդնուպոլսի աշխարհիկ ու հոգևոր վերնախավի՝ կաթոլիկության հետ ունեցած հարաբերությունների, Հռոմի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի պատճառներով: 1659 թ. Թովմա Բերիացու ողբերգական վախճանը թուրքական բանտում՝ ակնհայտորեն նախանշում էր պատրիարքական աթոռի համար մղվող պայքարի մեջ նոր՝ դավանական-քաղաքական երանգի հայտնությունը, որը այս ասպարե-

---

1 Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղեմ, 1915, էջ ԽԲ–ԽԴ:

զում եթե ոչ տիրապետող, ապա հիմնական գույներից մեկը պետք է դառնար 18-րդ դ. պատրիարքների ընտրության և գործունեության բազմերանգ խճանկարում: Կաթոլիկության հակված քրիստոնյաների, այդ թվում և հայերի վերաբերմունքը օսմանյան կառավարությունը միշտ էլ գնահատում էր իր քաղաքական շահերի տեսանկյունից: Կանդիայի պատերազմի շրջանում (1645–1669) Իբրահիմ և Մեհեմեդ սուլթանները հաշտ աչքով չէին կարող նայել լատինասիրության որևէ դրսևորման: Այս ժամանակաշրջանում էր, որ Դավիթ Արևելցի պատրիարքը, անշուշտ, թուրքական իշխանությունների հավանությամբ, կարողացավ արտաքսել տալ մայրաքաղաքի հայերի մեջ գործող կաթոլիկական քարոզիչ Կղեմես Դալանոսին: Մի փոքր ավելի ուշ, 18-րդ դ. սկզբներին ծայր են առնում դավանական երկարատև հակասություններն ու ընդհարումները արևմտահայության, և ամենից առաջ Կոստանդնուպոլսի հայության մեջ, որն իր ծայրահեղություններով, երկուստեք դրսևորվող կույր ատելության պոռթկումներով և, որպես կանոն, երրորդ ուժի՝ Եվրոպային կամ Օսմանյան պետությանը այդ ընդհարումներին միջամտելու հրավերներով ծանրագույն հարված հասցրեց ազգի միասնությանը, նրա մշակութային ու հասարակական զարգացմանը: 17-րդ դ. վերջին պատրիարքական աթոռի համար մրցակցող Եփրեմ Ղափանցու, Մելիքսեդեկ Սուբհիի և Սարգիս Էքմեքճիի համար զորեղ կռվան էր դարձել դավանական գործոնը: Սուբհին մեղադրվեց պապականության մեջ՝ հակակաթոլիկ մրցակիցների կողմից: Եփրեմը համոզել էր մեծ վեզիրի փոխանորդին, որ հայերին կաթոլիկ դարձնելով, քարոզիչները սուլթանի դանձարանը զրկում են եկամուտներից, քանի որ դավանափոխները այլևս հարկ չեն վճարում ազգային եկեղեցուն, որն այդ դումարը պետք է վճարեր դանձարանին: Բանն ավարտվեց նրանով, որ հայադավաններին արգելվեց մտնել կաթոլիկական եկեղեցիներ՝ Թիարան (Թերսհանե) քշվելու սպառնալիքով: Պատրիարքությունից տապալված Սուբհին, ուղարկվեց բաղնիք, իբրև քյուլհանճի (կրակ արծարծող)՝ իր պատիժը կրելու համար[1]: Իրադարձությունների ընթացքի այսպիսի վերարտադրությունը սոսկ դրանց բացատրության հետևանք կարող էր լինել, բայց ոչ պատճառ: Կաթոլիցիզմի հետևորդների հալածանքի նման հիմնավորումը կարող էին ձևակերպել ոչ թե հայադավան պահպանողականները, այլ օսմանյան իշխանութ-

---

1 Ա. տ ը լ ա Մ ա թ ա ե ի ուղեգրությունն՝ հայոց մասին, «Հայրենիք», 1950, № 6, էջ 103–104:

յունները, որոնց թելադրանքով միայն կարող էին ծայր առնել հետապնդումները հայ կաթոլիկների նկատմամբ: Պատահական չէ, որ վերոհիշյալ իրադարձությունները նկարագրող եվրոպացի ճանապարհորդը, այսուհանդերձ, նկատում է, որ ժամանակի շեյխ-ուլ իսլամը՝ Ֆեյզուլլահը, կաթոլիկական դավանանքը համարում էր վտանգավոր դրծոն՝ Օսմանյան կայսրությունում Եվրոպայի ազդեցությունը ուժեղացնելու տեսակետից և ընդդիմանում էր դրան: Որ այսպիսի մտայնությունը ընդամենը պետական քաղաքականության դրսևորումն էր, վկայում է այն, որ սուլթան Մուստաֆա Բ-ն (1695–1703) 1695 թ. հոկտեմբերի 24-ի հաթթը շերիֆով՝ ընդդեմ Քիոս կղզու կաթոլիկների, հրամայում էր օսմանյան պաշտոնյաներին՝ հարկադրանքի ուժով իրենց նախկին դավանանքին վերադարձնել հույն, հայ, սիրիացի և մարոնիտ ռայաներին[1]: Բնականաբար, այսպիսի քաղաքականությունը «միլեթներին» արդեն պետք է պարտադրվեր առանձին-առանձին: Մելիքսեդեկ Սուբհիին հաջորդած Եփրեմ Ղափանցին (իր երրորդ պատրիարքության ժամանակ՝ 1701–1702 թթ.) գործում էր այս քաղաքականությանը միանգամայն համապատասխան՝ անհանդուրժողաբար վարվելով հռոմեադավան ազգակիցների հետ: Ուշագրավ է, որ նրան հաջորդած Ավետիք Եվդոկիացին իր առաջին պատրիարքության ժամանակ (1702–1703) առանձնապես աչքի չի ընկել դավանական նախանձախնդրությամբ և լայնախոհ մոտեցում է ցուցաբերել դավանական տարաձայնություններին: Իրոք, կաթոլիկության մեջ մեղադրվող երեք հայ քահանաներին ազատելու համար Ավետիքին բանտարկում են (ֆրանսիական դեսպան Ֆերիոլը ինքն էր խնդրել նրան՝ ազատել քահանաներին և այդ նպատակով կաշառքի դրամ էր խոստացել, բայց, ըստ Ավետիքի, այդ դրամը նա այդպես էլ չի տալիս և Ավետիքը ինքն է դրամ փոխառնում՝ ազատել տալով քահանաներին): Ըստ Ավետիքի, այստեղից է սկսվում ֆրանսիական դեսպանի և իր թշնամությունը[2]: Մինչդեռ, ըստ ականատես ճանապարհորդի, Ավետիքը ինքն էր կաշառք ստացել կաթոլիկ քարոզիչներից՝ խոստանալով մեղմ լինել նրանց հանդեպ, սակայն խոստմնաղանց է լինում, որի համար «սուղ կերպով պետք է վճարեր»[3]: Անկախ իր անձնական նկարագիրը ֆրանսացիների աչքին փայ-

---

1 Ա. տ ը ղ ա Մ ո թ ռ ե ի ուղեգրությունն... «Հայրենիք», 1950, № 8, էջ 89:

2 Կենսագրություն Ա վ ե տ ի ք պ ա տ ր ի ա ր ք ի, «Արարատ», 1874, № 4, էջ 151:

3 Ա. տ ը ղ ա Մ ո թ ռ ե ի ուղեգրությունն, «Հայրենիք», 1950, № 6, էջ 103:

լեցնելու Ավետիքի ջանքերից և կամ հակառակը ներկայացնող եվրոպական ճանապարհորդի պատկերացումներից, հենց ֆրանսիական դեսպան Ֆերիոլի ջանքերով էր, որ իրականացվեց պատրիարքի հանդուգն առևանգումն ու, ի վերջո, Ֆրանսիա տեղափոխելը, որպես կաթոլիկական դավանանքի վտանգավոր թշնամու: Կոստանդնուպոլսի հայ պատրիարքի այս ողբերգական ճակատագիրը պատրաստելով՝ Ֆրանսիան գրեթե բացահայտորեն ի ցույց էր դնում իր հզորությունը հաչս օսմանյան, և մյուս կողմից, լուսավորչական ընդդիմախոսների:

Եվրոպայի և օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական հակասությունները այս ընթացքում շարունակվում էին բևեռվել կրոնադավանական առանցքի շուրջ: Կաթոլիկացած մի քանի հայադավանների հանդեպ հալածանքի պոռթկումներից հետո (կաթոլիկական դավանանքին հավատարիմ մնալու համար մահապատժի ենթարկվեց տեր Կոմիտաս քահանա՝ Ե. Քյոմյուրճյանի եղբայրը), 1705 թ. մայիսի 24-ի հաթթով Ահմեդ Գ սուլթանը (1703–1730) պարտադրում էր մահապատժի ենթարկել այն դավանափոխներին, որոնք չեն դառնում իրենց հին հավատին[1]:

Ավետիք Եվդոկիացիով, ըստ էության, չսպառվեց դավանական պայքարի ուժային մեթոդը Կոստանդնուպոլսի հայության մեջ: Նրա հաջորդների ժամանակ նշված պայքարը շարունակվում է՝ մերթ սրվելով, մերթ մեղմանալով՝ մինչև որոշակի հավասարակշռության հաստատումը Հովհաննես Կոլոտ (1715–1741) և Հակոբ Նալյան (1741–1749, 1752–1764) պատրիարքների ժամանակ: Մասնավորապես Հովհաննես Կոլոտը զգույշ և հավասարակշիռ անձնավորություն էր և ձգտում էր հարթել դավանական երկպառակությունների սուր անկյունները՝ ճկուն դիրք գրավելով կաթոլիկների հետ իր ունեցած հարաբերություններում: Օգտվելով բարենպաստ թվացող հանգամանքից՝ այս շրջանում հայ կաթոլիկները փորձեցին որպես կրոնական համայնք առանձնանալ իրենց ազգակիցներից, բայց հաջողության չհասան[2]: Այսուհանդերձ, 1737 թ. Կոստանդնուպոլսի Մայր եկեղեցում Հովհաննես Կոլոտի գումարած Ազգային ժողովը որոշել էր վերջ տալ կաթոլիկ հայերի հետ ան-

---

1 Նշվ. աշխ., «Հայրենիք», 1950, № 8, էջ 94:

2 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա., Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը, էջ 123:

խոհեմ ընդհարումներին[1]: Սակայն դավանական կռիվները ոչ առանց քաղաքական հրահրումների, շարունակվեցին 18-րդ դ. վերջին տասնամյակներին ևս, թեև ակներև է, որ լուսամիտ պատրիարքների ժամանակ ընդհարումները մեղմանում էին՝ կորցնելով հակամարտ բնույթը: Ազգային լայնախոհության և օսմանյան քաղաքականության փոխհարաբերության մեջ, սակայն, վճռականը վերջինն էր: Հիրավի, Զաքարիա Կաղզվանցի պատրիարքը (1773–1781, 1782–1799) կաթոլիկներին հալածելու գործում ուղղակի ցուցումներ էր ստանում օսմանյան կառավարությունից: Թուրքական պատմագիր Ջևդեթ փաշան նշում է, որ օսմանյան պետությունը, հաշվի առնելով դավանափոխության «երևույթի քաղաքական վնասակարությունը», 1774 թ. կաթոլիկ հայերից մի քանիսին մահվան էր դատապարտել[2]: Այսպիսի ծայրահեղությունները ոչ այլ ինչ էին, եթե ոչ մահմեդական հանրային իրավունքի (շարիաթի) նորմերի տարածումը ոչ մահմեդական համայքների վրա. այդ նորմերի օսմանյան մեկնաբանության ուժով էր, որ մոլեռանդ ամբոխը նահատակում էր մահմեդականություն ընդունած, բայց հետո հրաժարված անձանց՝ ուշ միջնադարի և նույնիսկ նոր ժամանակների այդ «նոր վկաներին»[3]: Այդ նորմերն էին, որ օսմանյան պետությունը մասնավորեցնում էր իր ճանաչած միլեթների՝ հայերի, հույների, սլավոնների և այլոց նկատմամբ՝ ձևականորեն պահպանելով նրանց դավանական միությունը, բայց իրականում մտահոգվելով զուտ սեփական քաղաքական շահերով:

17-րդ դ. 2-րդ կեսից մինչև 1760-ական թթ. կեսը, Սիմեոն Երևանցու ժամանակները, Կոստանդնուպոլսի պատրիարքները իրենց ազդեցիկ խոսքն էին ասում Էջմիածնի կաթողիկոսի գործունեության, Թուրքիայում նրա նվիրակական իրավասությունների, իսկ 18-րդ դ. 2-րդ քառորդից մինչև 1780-ական սկիզբները՝ նաև կաթողիկոսական թեկնածությունների և ընտրության հարցերում: 1725 թ. Հովհաննես Կոլոտի հրավիրած Ազգային ժողովը Էջմիածնի կաթողիկոս ընտրեց Կարապետ Ուլնեցուն, իսկ Հ. Նալյանի ժամանակ գումարված ժողովներում, Էջմիածնի միաբանների դիմումների համաձայն, կաթողիկոսներ ընտրվե-

---

1 Քէօմիւրճեան Ե., Ստամպօլոյ պատմութիւն, հ. 1, էջ 249 (Վ. Թորգոմյանի ծանոթությունը):

2 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (կազմ. Ա. Խ. Սաֆրաստյան), Ե., 1961, էջ 238:

3 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 42:

ցին Ալեքսանդր Բյուզանդացին (1755), այնուհետև Սահակ Ահագինը (հրաժարվել է կաթողիկոսությունից) և Հակոբ Շամախեցին (1759): Մի քանի տարի անց Սիմեոն կաթողիկոսը «Ջամբռ»-ում չէր թաքցնում իր խորին անբավականությունը Հովհաննես Կոլոտից, որը կարողացել է իր ազդու միջորդությունը մտցնել Էջմիածնի կաթողիկոսին սուլթանական ֆերման տալու՝ մինչ այդ ձևական, համենայն դեպս, Կ. Պոլսի պատրիարքությունից անկախ գործին: Այդուհետև, ոչ միայն կաթողիկոսի հաստատումը, այլև նրանց սեփականատիրական գործերի հետ կապվող մուրհակները և «այլ հոգալիքն սրբոյ աթոռոյ» կատարվում էր միայն Կոստանդնուպոլսի պատրիարքի խնդրագրով: «Ի Կարապետ կաթողիկոսէն ցայս վայր որքան ֆարմանք և բարաթք գան ի յօսմանցւոց թագաւորէն՝ ըստ արզայից պատրիարքին են տրեցեալք»,– գանգատվում էր Սիմեոնը, այդ ամենը դիտելով իբրև ակնառու ոտնձգություն Էջմիածնի կաթողիկոսի ավանդական իրավունքների դեմ: «Եւ մինչ այսու նենգաւորութեամբ առին Պոլսոյ պատրիարգունքն զպախուրցս կաթողիկոսացն ի ձեռս իւրեանց, այնուհետև սկսան խաղացուցանել զնոսա որպէս և կամեցան»,– գրում էր Սիմեոնը[1]: Իրոք, Հովհաննես Կոլոտի ժամանակից Էջմիածնի կաթողիկոսի դերը Թուրքիայում դարձել էր գրեթե ձևական: Կոստանդնուպոլսի պատրիարքը, որը ազգային՝ եկեղեցու նվիրապետության մեջ կաթողիկոսի փոխանորդն էր, ըստ էության, ինքն էր որոշում Թուրքիայում նրա՝ որպես կաթողիկոսի կայացմանը: Անշուշտ, քաղաքական այսպիսի դերի շեշտակի բարձրացումը Կոստանդնուպոլսի պատրիարքներին խոստանում էր նաև նյութական զգալի շահեր: Ըստ Սիմեոնի, մինչև Հակոբ Շամախեցին, կաթողիկոսները իրենց հաստատման ֆերմանին ի տրիտուր տվել են որոշակի չափով միանվագ գումար՝ մուքաթաա տուրքը, 56 ղուրուշ, 26 փարա և 2 ստակ (6.800 ստակ): Շամախեցին արդեն տվել էր 90 ղուրուշ (10.800 ստակ): Պատճառներից մեկը Զմյուռնիայի հարուստ և բարեկեցիկ թեմն էր, որը Էջմիածնի «տերունի» թեմն էր և իր նյութական հրապույրներով վաղուց էր բևեռել Կոստանդնուպոլսի պատրիարքների հետամուտ հայացքները: Կոստանդնուպոլսի պատրիարքները կաթողիկոսական ֆերմանին տրվող գումարի բարձրացումը, ըստ Սիմեոնի, պատճառաբանում էին նրանով, որ այդ թեմի համար ևս, սուլթանի պահանջով,

---

1 Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ գիրք, Վաղարշապատ, 1873, էջ 235–236:

ֆերման, ուրեմն և գումար պետք է տրվի[1]: Իրենք՝ պատրիարքները ավելի էին բարձրացնում մուքաթաայի չափը՝ յուրացնելով հավելյալ գումարը՝ «մինչև յերկու և յերեք հազար ղուռուշս ավելի ցուցանելով զծախսն»,– գրում է Սիմեոնը[2]:

Էջմիածնի և Կոստանդնուպոլսի պատրիարքության միջև պայքարը փաստորեն մղվում էր Արևմտահայաստանում հոգևոր գերիշխանության համար: Պատրիարքները ձգտում էին Էջմիածնի նկատմամբ եթե ոչ լիակատար իրավական, ապա գեթ փաստական առավելության հասնել Արևմտահայաստանի թեմերում: Պատրիարքը, իրոք, բավական ընդարձակ իրավասություններ ուներ Թուրքիայի հայերի տարածքներում: Զաքարիա Կաղզվանցու խնդրագրով Սիմեոնին տրված ֆերմանում (1774 թ.) սահմանվում էին Էջմիածնի իրավունքները Էրզրումում, Կարսում, Զմյուռնիայում, Բայազետում և այլուր, նրա նվիրակական իրավունքները կալվածքներն օգտագործելու, դրամագույքային վեճերի, կտակների, պաշտամունքի իրացման խնդիրներում և այլն[3]: 1780 թ. Կոստանդնուպոլսի մեծամեծները Ղուկաս կաթողիկոսին ուղղված իրենց նամակում հիշեցնում են, որ առանց իրենց իմացության և միջնորդության օսմանյան տերությունը որևէ կաթողիկոսի «պերաթ և զֆերման ոչ տայցէ»[4]: Գրությունը պերճախոս է ոչ միայն նորընտիր կաթողիկոսին արդեն սահմանված շրջանակներում պահելու, այլև այն իմաստով, որ Էջմիածինը Կոստանդնուպոլսի պատրիարքներից կախման մեջ դնողը իրականում երևելի աշխարհիկ անձինք էին, որոնք գործում էին իրենց սեփական շահերը օսմանյան քաղաքականությանը լծորդելու ծրագրերով:

Պատրիարքները ձգտում էին նաև ձևական դարձնել Կոստանդնուպոլսում Էջմիածնի նվիրակի դերը: Կոստանդնուպոլսում պատրիարքներից անկախ Էջմիածնական ներկայացուցիչ ունենալու նպատակով Սիմեոնը (1764 թ.) դիմել էր Գրիգոր Պասմաճյան պատրիարքին: Երևելի ազգայինները և պատրիարքը կռահեցին Սիմեոնի մտահղացումը՝ բացի նվիրակից, կաթողիկոսի փոխանորդ (վեքիլ) նշանակելու միջոցով Կոստանդնուպոլսի պատրիարքությունը դցել իր ազդեցության տակ: Կաթողիկոսական տեղապահի դաղափարը մերժվեց (պատրիարքը ար-

1 Նույն տեղում, էջ 236–237:

2 Նույն տեղում, էջ 236:

3 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 46ա, 46բ:

4 Նույն տեղում, թղթ. 243, վավ. 52:

դեն ինքն էր համարվում կաթողիկոսի տեղապահ), իսկ Սիմեոնի ուղարկած Բարսեղ և Հարությունն վարդապետները մեկուսացվեցին կամ հեռացվեցին Կոստանդնուպոլսից[1]: Կոստանդնուպոլսի պատրիարքի իրավասությունների ընդլայնումը նշանակում էր օսմանյան քաղաքականության որոշակի իրագործում հայ կրոնական համայնքի նկատմամբ, այն է՝ ամբողջովին կամ գրեթե ամբողջովին վերահսկելի դարձնել Թուրքիայի տարածքների հայկական վիճակները՝ պատրիարքի հոգևոր իշխանության ընդարձակման միջոցով: Այն ընդգրկում էր «Գրեթէ զբոլոր առաջնորդական վիճակսն որք ընդ տէրութեամբ օսմանցւոց արկին ի ներքոյ հրամանագրի օսմանցւոց, բացի յոմանց տեղեաց»[2]:

Կոստանդնուպոլսում դրսևորվեց նաև Էջմիածնի և Սսի կաթողիկոսությունների հակադրությունը՝ սրանցից յուրաքանչյուրի կողմնակիցների որոշակի ձևավորմամբ: 16-րդ դարի 20-ական թվականներից մինչև դարավերջ Կոստանդնուպոլսի պատրիարքական գահին բազմել են սկսում մերթ Էջմիածնի, մերթ Սսի կաթողիկոսության ներկայացուցիչները: 16-րդ դարի 2-րդ կեսին առավել հաջողությունների են հասել սսական հոգևորականները. երեք էջմիածնականի դիմաց՝ յոթ սսական պատրիարքներ, որ ինքնին խոսում է Կոստանդնուպոլսում Սսի դերադասելի դիրքի մասին: Էջմիածնականների դիրքերը բավական հաստատուն դարձան Մովսես կաթողիկոսի ժամանակից, երբ այդ հայրենանվեր հոգևոր գործիչը Էջմիածնում կատարած իր բարենորոգումներով հիմնավոր հեղինակություն նվաճեց հայ եկեղեցու նվիրապետության մեջ և Կոստանդնուպոլսի հայ համայնքում: Նշված հակամարտությունը, իր հերթին, ծանր հետևանքներ էր թողնում առանց այդ էլ բռնակալության լծի տակ ճնշվող հայ հանրության վրա, երկարաձգում ազգային ինքնագիտակցության խորացման գործընթացը: 17-րդ դ. 2-րդ կեսին Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին տիրացած որոշ բախտախնդիրներ իրենց հաջողությունների համար մի հայտնի չափով պարտական էին Կոստանդնուպոլսում Էջմիածին-Սիս ազգավնաս հակամարտությանը:

Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռի հոգևոր իրավասությունները գնահատելու տեսակետից հետաքրքիր է դիտարկել նրա հարաբերությունները Երուսաղեմի պատրիարքության հետ: Երուսաղեմի

---

1 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ ՃՁԻ:

2 Սիմեոն Կաթողիկոս, Ջամբռ գիրք, էջ 48: Տես նաև Օրմանյան Մ., Ազգապատում, մաս Բ, էջ 3042:

Ս. Հակոբի վանքը, իբրև ս. տեղյաց հայադավան հոգևոր հաստատություն, ենթարկվում էր Կոստանդնուպոլսի պատրիարքությանը, որի իրավունքները տարածվում էին ամբողջ կամ գրեթե ամբողջ Օսմանյան Թուրքիայի հայ ազգային եկեղեցական հիմնարկների վրա: Հայտնի են 1650-ական թթ. կեսերին հայ-հունական տարաձայնությունները Երուսաղեմի վանքի սեփականությունների, մանավանդ՝ հաբեշական ժառանգության, այլև բուն իսկ վանքի պատկանելության շուրջ, երբ հույները ցանկանում էին տիրել Ս. Հակոբի վանքին: Այս ժամանակաշրջանում Կոստանդնուպոլսի պատրիարքությունը, առավել ևս՝ սրան սատարող չելեպիներն ու խոճաները զորեղ պաշտպան կանգնեցին Երուսաղեմում ազգի իրավունքներին, որի շնորհիվ աննախընթաց չափերով մեծացավ Կոստանդնուպոլսի պատրիարքության ազդեցությունը Երուսաղեմի Ս. Հակոբի վանքի միաբանության վրա:

1652 թ. Երուսաղեմի եկեղեցական ժողովում բավական լուրջ հաջողություններ ձեռք բերվեցին նաև Էջմիածնի ու Սսի հոգևոր իրավասությունների կարգավորման գործում: Համաձայնությունը՝ կազմված 13 կետից (հիմնականում՝ ձեռնադրության և թեմերում փոխադարձ իրավունքները ճանաչելու հարցեր)[1], իր հերթին, մեծացրեց Էջմիածնի կշիռը Կոստանդնուպոլսում: Սսի հետ հարաբերությունները պարզելուց հետո Երուսաղեմից Կոստանդնուպոլիս եկած Փիլիպոս կաթողիկոսը համոզեց չելեպիներին և խոճաներին՝ ինքնագլխության ձգտող Կոստանդնուպոլսի պատրիարք Եղիազար Այնթապցուն փոխարինել տալ Հովհաննես Մուղնեցիով (1652–1655): Սակայն այնքանով, որքանով Կոստանդնուպոլսի պատրիարքական կռիվները չէին կարող դուրս չգալ զուտ պոլսական շրջանակներից, դրանք անմիջականորեն ներազդեցին նաև Երուսաղեմի պատրիարքության վրա: Բանը հասավ այնտեղ, որ անտերունչ մնացած Ս. Հակոբի վանքում տնօրինող Մինաս վարդապետը[2] սկսեց բառացիորեն թալանել վանքը՝ անշուշտ, ոչ առանց Կոստանդնուպոլսի երևելիների մի խմբակցության թելադրանքի ու մասնակցության: Այս իրողության շուրջ խմբակցությունների պայքարը Կոստանդնուպոլսում հասցրեց նրան, որ սուլթանական ֆերմանով պատրիարք Ավետիք Եվդոկիացու վրա դրվեց Երուսաղեմի վանքի գլխավորի պարտականությունը (1702): Սակայն Ավետիքից հետո վան-

---

1 Ջ ա մ չ ե ա ն Մ., Խրախճան պատմութեան հայոց, Վենետիկ, 1811, էջ 412:

2 Կենսագրություն Ա վ ե տ ի ք պ ա տ ր ի ա ր ք ի, Արարատ, Էջմիածին, 1874, № 4, էջ 150–151:

քը դարձավ Կոստանդնուպոլսի պատրիարքարանում բարձր ձայն ունեցող ազգի գլխավորների, սրանց խմբակցությունների ինքնագլխություն, ընչաքաղցություն ու անավառություն զոհը: Պատրիարքարանի կողմից Երուսաղեմ ուղարկված պաշտոնյաները՝ վեքիլ, նազըր և այլ անուններով, անողորմաբար կողոպտում էին Երուսաղեմի հասույթները, գրավ դնում վանքի գույքը և նրա կալվածքները: Սահակ Ապուչեխցի (1708–1714) և մանավանդ Հովհաննես Կոլոտ (1715–1741) պատրիարքների ժամանակ վերջ տրվեց այդ խայտառակությանը: Հովհաննես Կոլոտի առաջարկով վճռվեց, որ այսուհետև Երուսաղեմը պետք է ունենա իր առանձին պատրիարքը և բաժանվի Կոստանդնուպոլսի պատրիարքությունից: Երուսաղեմի պատրիարք ընտրվեց ազգանվեր եկեղեցական Գրիգոր վարդապետը: Կաթողիկոս Կարապետ Ուլնեցու հրամանով վավերացվեց Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների բաժանում և այսուհետև արգելվում էին Երուսաղեմի պատրիարք ընտրելը միաբանությունից դուրս, ինչպես այնտեղ որևէ աշխարհական վերակացու կամ գործակալ ուղարկելը (վանքի սեփականատիրական գործերին միջամտելու իմաստով), ինչպես և Երուսաղեմի աթոռը Կոստանդնուպոլսի պատրիարքությանը կամ որևէ այլ աթոռի միացնելը:

* * *

Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը, սկսած 15-րդ դ. 2-րդ կեսից, ազգային մշակույթի տեղական ինքնության սահմաններից հասել է մինչև համազգային մշակույթի խոշորագույն կենտրոնի մակարդակի: Այստեղ սկզբնավորվել ու իրենց հետագա զարգացումն են գտել հոգևոր ու մտավոր մշակույթի այն բոլոր ձևերը, որոնք արդեն զարգացման մի հայտնի աստիճանի էին հասել հայրենիքում, Կիլիկիայի հայկական թագավորությունում և նշանավոր գաղթօջախներում: Մտավոր ու մշակութային իր կենտրոնի նշանակությունը գաղթօջախը պարտական է ամենից առաջ գրչության ավանդական արվեստի, տպագրության, դպրոցի, հասարակական ու բնական գիտությունների, գրականության, ճարտարապետության ու նկարչության զարգացմանը: Այս ամենի ամբողջությամբ Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը ներկայանում է իբրև արևմտահայ մշակույթի ձևավորման և ինքնության խառնարան, հայ երկու խոշոր հատվածներից մեկի՝ արևմտահայության համազգային մշակութային կենտրոն:

15–18-րդ դդ. Կոստանդնուպոլսում գրչագրվել են ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ գործեր: Ձեռագրերի մեջ կլոնական բովանդակության գործերը գերակշիռ թիվ են կազմում: 15-18-րդ դդ. գաղթօջախում գրչագրվել են ավետարաններ, մաշտոցներ, շարակնոցներ, ժամագրքեր, տոնացույցներ, քարոզագրքեր, կանոնագրքեր և այլն: Միաժամանակ ստեղծվել են աշխարհիկ, գիտական բնույթի ձեռագրեր: Այստեղ գրչագրված վաղ շրջանի գործերից է, օրինակ, Ամիրդովլաթ Ամասիացու «Բժշկարանը» (1459), որի հիշատակարանը գրել է ինքը՝ հեղինակը: Նույն հեղինակի «Անգիտաց անպէտ» բժշկագիտական երկը գրվել է «առ ոտն» Ս. Նիկողայոս եկեղեցու: Այստեղ է Ամիրդովլաթը ընդօրինակել տվել նաև Թովմա Աքվինացու «Գիրք հոգեաց եւ հրեշտակաց» աշխատությունը: Նա թարգմանել է նաև բժշկական երկեր արաբերենից ու պարսկերենից, ինչպես նշում է գրիչ Անդրեասը՝ «գիտելով քաջ և զնոցայն գիրն և լեզու»[1]: Ի դեպ, 15-րդ դ. 2-րդ կեսին գաղթօջախում բավական տարածված էին ձեռագիր բժշկարանները:

15–18-րդ դդ. ձեռագրեր են գրվել Կոստանդնուպոլսի մյուս հայկական եկեղեցիներում, որոնք հանդես են եկել իբրև գրչության հովանավորներ ու պատվիրատուներ: Ձեռագրեր են գրվել Սուլու Մանաստիրի Ս. Աստվածածնի, Պալաթի Ս. Հրեշտակապետի, Սամաթիայի Ս. Գեորգի, Ղալաթիայի Ս. Գրիգոր Լուսավորչի և այլ եկեղեցիներում: Գաղթօջախում ընդօրինակվել են ազգային գրականության և գիտության մի շարք կարևոր արժեքներ, ինչպես Անանիա Շիրակացու, Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Տղայի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթևացու և այլոց երկերը: Ստեղծվել են նաև տեղական ինքնուրույն բնույթի ձեռագրեր, ինչպես Ազարիա Սասնեցու «Կարգ եւ թիվ կաթողիկոսաց Հայոց» երկը, Գրիգոր Կեսարացու որոշ գործեր (17-րդ դ.) և այլն:

18-րդ դ. 1-ին քառորդում, համապատասխան մտավոր այն շարժմանը, որ սկսվեց Հովհաննես Կոլոտ պատրիարքի նախաձեռնությամբ, որակ են կազմում եվրոպական աստվածաբանների, ինչպես և գիտական այլ գործերի թարգմանությունները: Ղուկաս վրդ. Խարբերդցին իտալերենից հայերենի է թարգմանել «Անտառ նորագույն մտածմանց», «Գիրք մտածական աղօթից» երկերը, լատիներենից՝ «Անալոճիան» (1739) և այլն: 18-րդ դ. 2-րդ կեսին հրապարակ են իջնում նաև արդիա-

---

1 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա., Պատմություն հայ դպրոցի, հ. Ա, Կահիրե, 1947, էջ 378:

կան հեղինակների գործերը, ինչպես Հ. Նալյանի «Մեկնութիւն եօթն խորհրդոց եկեղեցւոյ», Մ. Սեբաստացու «Ճարտասանություն», Գ. Ավետիքյանի «Հայելի ազգեցության» և այլ բազմաթիվ երկեր:

Տպագրական գործը գաղթօջախում սկիզբ առավ դեռևս 16-րդ դ., Աբգար դպիր Թոքատեցու նախաձեռնությամբ և կամ նրա «տառերով ու նրա մասնակցությամբ»[1]: 1567 թ. հիմնված այդ տպարանում տպագրվել է քերականություն, որին այդ և հաջորդ տարում հետևել են ևս հինգ գիրք՝ ժամագիրք, Տոնացույց, Տաղարան, Պարզատումար և Մաշտոց: Հայերը Կոստանդնուպոլսում երկրորդն էին տպագրության ասպարեզում՝ հրեաներից (1494) հետո և հույներից (1627) առաջ, 162 տարի առաջ անցնելով թուրքերեն առաջին տպագիր գրքից (1729)[2]:

Կոստանդնուպոլսում հայկական տպագրությունը վերսկսվեց Երեմիա Քյոմյուրճյանի ջանքերով (1677 թ.): Նա տպագրեց ընդամենը երկու գիրք՝ Շնորհալու «Հիսուս Որդի» երկի հատվածները և իր Երեմիայի մի չափածո գործը, դարձյալ կրոնական բովանդակությամբ: 17-րդ դ. վերջին այստեղ գործել է Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանը՝ հրատարակելով յոթ տասնյակ գրքեր: 18-րդ դ. տպագրական գործը աննախընթաց ծաղկման հասավ Հովհաննես Կոլոտ և Հակոբ Նալյան պատրիարքների ժամանակ: Հովհաննես Կոլոտի ժամանակից է սկսվում արևմտյան արժեքներին լայնորեն հաղորդակցվելու շարժումը: Գրիգոր Մարզվանցու, Պեյօղլու Թաղի, Մարտիրոս Սարգսյանի, Սարգիս Դպրի, Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների և այլոց տպարաններում տպագրվում են կրոնական, բժշկական, պատմագիտական, լեզվաբանական տարբեր գրքեր, դասագրքեր և այլն: Հայ մատենագիրներից և այլ հեղինակներից տպագրվել են Բուզանդ, Ագաթանգեղոս, Մեսրոպ Երեց, Առաքել Սյունեցի, Հովհաննես Թլկուրանցի, Սիմեոն Զուղայեցի, Պաղտասար Դպիր և այլն: 18-րդ դ. վերջին այստեղ գործում էին Ստեփանոս Պետրոսյանի, Պողոս Հովհաննիսյանի, Մատթեոս Դպրի, Հովհաննեսի և Պողոսի տպարանները: Նույն դարի սկզբին և վերջին հայերեն գրքեր են տպագրվել նաև հայ կաթոլիկների կողմից[3]: Կոստանդնուպոլ-

---

1 Զարբհանալյան Գ., Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 49–54: Ի շ խ ա ն յ ա ն Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977, էջ 218:

2 Ж е л т я к о в А. Д. Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729 — 1908 гг.). М., 1972, с. 13 — 14, 25.

3 Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները, էջ 158:

սում գործող հայկական տպարանները իրենց արդյունքներով նախապատրաստեցին 19-րդ դ. 1-ին կեսի արևմտահայ մտավոր ու լուսավորական շարժումը:

Գաղթօջախում հայ դպրոցը գոյություն է ունեցել դեռևս «ալթը ջեմաթի» ձևավորման ժամանակներից: 15-րդ դ. վերջին քառորդին, երբ Կոստանդնուպոլիս են գաղթում Կաֆայի և Կարամանի հայ ստվար խմբերը[1], դպրոցի սկզբնավորումը այստեղ դառնում է առավել քան հավանական: Սակայն մինչև 17-րդ դ. վերջին քառորդը այդ դպրոցները զանգվածային տարածում չեն ունեցել, եղել են վանքերին կից հաստատություններ՝ սահմանափակ թվով աշակերտներով, որտեղ դասավանդել են կրթված հոգևորականները: Կոստանդնուպոլսում հայկական դպրոցների թիվը ավելի շատ էր դեռևս 16-րդ դ. վերջին և 17-րդ դ. 1-ին կեսին: 1577 թ. ապրիլին Ս. Գեորգ եկեղեցի (այն ժամանակվա պատրիարքարանը) այցելած գերմանական դեսպանատան աշխատող Ցոն Գեռլախը գրում է, թե «Հայոց պատրիարքը իր հրամանին ներքև 12 եպիսկոպոսներ ունի, որոնք վանքերը և հոն տեղի ուսումնարանները կկառավարեն»[2]: 17-րդ դ. վերջին եկեղեցիներին կից դպրոցներից հայտնի է Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցուն առընթեր Աբրահամ քահանայի դպրոցը, 1700-ին գործում էր Ղալաթիո Ամենափրկիչ եկեղեցուն կից Մխիթար Սեբաստացու դպրոցը: Նույն ժամանակներում գործում էր Աստվածատուր Ջուղայեցու դպրոցը և այլն[3]:

Հովհաննես Կոլոտի ժամանակ հայ դպրոցն ապրում է աշխույժ տեղաշարժեր՝ թե դպրոցների ու աշակերտների քանակի և թե կրթության բովանդակության տեսակետից: Կոլոտի և Շղթայակրի հիմնած դպրոցում (1719) դասավանդում էին ինքը՝ պատրիարքը և նշանավոր թարգմանիչ Ղուկաս Խարբերդցին: 1741 թ. պատրիարք Հ. Նալյանը այդ դպրոցը տեղափոխում է Գում գափուի պատրիարքարան՝ անվանելով այն «մայր դպրատուն»: Կոլոտի դպրոցական բարեշրջումը ելնում էր իր ժամանակի հոգևոր պահանջմունքներին ընդառաջելու խնդրից:

18-րդ դարում դպրոցական գործի ակնառու զարգացում էր թաղային վարժարանների կազմակերպումը: Առաջինը Շնորհք ամիրա Միրի-

---

1 Մ ի ք ա յ ե լ յ ա ն Վ., Ղրիմահայոց պատմություն, էջ 273–274:

2 Հ ն ա ս ե ր Գ., Հայ վաճառականներ ու արհեստավորներ Կ. Պոլսո մեջ: Հայաստանի կոչնակ, 1928, № 48, էջ 1516:

3 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա., Պատմություն հայ դպրոցի, հ. Ա, Կահիրե, 1947, էջ 557, 562:

ճանյանի հիմնած վարժարանն էր Գում գափուում (1790): Այնուհետև թաղային վարժարաններ են բացվում Սկյուտարում, Լանկայում, Պալաթում, Օրթագյուղում, Սամաթիայում, Գուրուչեշմեում և այլուր:

15–18-րդ դդ. գաղթօջախում գործել են բազմաթիվ մտավորականներ, որոնք խոր հետք են թողել մշակույթի և դիտության անդաստանում: 15-րդ դ. բնագիտական մտքի խոշոր ներկայացուցիչ էր Ամիրդովլաթ Ամասիացին: Նա հռչակված բժիշկ էր, գրել է մի շարք բժշկագիտական աշխատություններ, ինչպես «Ուսումն բժշկութեան», «Օգուտ բժշկութեան», «Ախրապատին» և այլն: Նա առավել ևս հայտնի է իր «Անգիտաց անպէտ» վեցլեզվյան բառարանով: Կենդանաբանական առաջին հայերեն երկի հեղինակն է Աբրահամ Կոստանդնուպոլսեցին, որ գործել է 16-րդ դ. 2-րդ կեսին և 17-րդ դ. սկզբներին: Գրել է «Պատմութիւն անասնոց և գազանաց, չորքոտանեաց, սողնոց և թիւնաւորաց, թռչնոց և մարդկան, ծովային ձկանց... և այլ ժամակաց ծովու և ցամաքի» աշխատությունը:

17-րդ դ. առաջին տասնամյակներին Կոստանդնուպոլսում է գործել աստղագետ, տոմարագետ և բանաստեղծ Ազարիա Սասնեցին, որը գրել է «Կարգ եւ թիվ կաթողիկոսաց հայոց», «Այլ պարզ մեկնութիւն յԱզարիայի աշակերտէ» երկերը: Նա իտալերենից թարգմանել է Պտղոմեոսի «Աշխարհացոյցը»: Կարևոր սկզբնաղբյուրի արժեք ունի նրա «Ողբ ի վերայ հարուածոց արեւելեան գաւառին և աշխարհին հայոց ի ձեռաց ճելալեանց» քերթվածը, որտեղ նկարագրվում են ջալալիների ավերածությունները Հայաստանում:

17-րդ դ. գաղթօջախի ամենախոշոր դեմքը իբրև տարեգիր, պատմաբան, գրող, լեզվագետ և հասարակական գործիչ, Երեմիա Չելեպի Քյոմյուրճյանն է (1637–1695): Նրա «Օրագրութիւն», «Տարեգրական պատմութիւն», «Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն», «Պատմութիւն Ստամպօլոյ» աշխատություններում հույժ արժեքավոր տեղեկություններ են տրվում ժամանակի ազգային կյանքի իրողությունների, գաղթօջախի պատմության, օսմանյան պետության տնտեսական և քաղաքական անցքերի և այլնի մասին: Գրել է նաև տոմարագիտական և տեղագրական աշխատություններ: Նրա շատ գործեր դեռևս մնում են ձեռագիր վիճակում կամ չեն հայտնաբերվել: Գրել է նաև չափածո քերթվածներ՝ ողբեր, աշխարհիկ ու կրոնական բնույթի տաղեր: Ճանաչողական նշանակություն ունի Քյոմյուրճյանի էպիստոլյար ժառանգությունը: Նրա մշակութային գործունեությունը դուրս է

գալիս ազգային շրջանակներից: Իր «Համառոտ ստորագրութիւն Կոստանդնուպոլսոյ նեղուցի» գործը նա գրել է իտալերեն, թուրքերեն է շարադրել «Հիքեայէի Ցարիս վե Վենայ» երկը: Բյումյուրճյանի աշխատությունները թարգմանվել են ռուսերեն, գերմաներեն, թուրքերեն լեզուներով:

Կրոնական, մեկնողական բովանդակության մի շարք աշխատություններ է հեղինակել Կոստանդնուպոլսի երկարամյա պատրիարք Հ. Նալյանը: Նա կաթոլիկների դեմ գրել է «Վէմ հաւատոյ» բանավիճային երկը, «Մեկնութիւն Նարեկի», «Զէն հոգեւոր», «Գանձարան ծանուցմանց» աշխատությունները: Վերջին երկը Լեոն գնահատում է իբրև փորձ՝ «մի ամբողջական ազգային պատմություն կազմելու»[1]: Նալյանով է սկսվում հայատառ թուրքերեն գրականությունը («Զէն հոգեւորը»՝ բացառությամբ առաջաբանի, որ գրված է աշխարհաբարով):

1720–1740-ական թթ. բնագիտական ու կրոնապատմական աշխատություններ է թարգմանել (լատիներենից և ֆրանսերենից) Ճամճուսղլու Հակոբ դպիրը. դրանց թվում էին «Գիրք խրատականը», «Հունական ժամանակագրությունը», Նյուտոնի «Փիլիսոփայությունը»[2]: Հակոբ դպրի նման Կոստանդնուպոլսում շվեդական դեսպանատան դիվանագետ աշխատակիցներից էր հայազգի Մուրատճա դ՝Օհսոնը (18-րդ դ. 2-րդ կես, 19-րդ դ. 1-ին տասնամյակ): Նա գրել է «Ընդհանուր պատմություն Օսմանյան կայսրության», «Պատմական պատկեր Արևելից» երկերը, որոնք մեզանում եվրոպական պատմագրության սկզբունքներով գրված առաջին աշխատություններից են:

Մտավորական աչքի ընկնող գործիչ էր լեզվագետ, բանաստեղծ, հրատարակիչ և մանկավարժ Պաղտասար Դպիրը (1683–1768): Նա թողել է գրական պատկառելի ժառանգություն, գրել է «Գրքուկս շահավէտ, ունի յինքեան բանս», «Կրթութիւն քրիստոնէական պաշտօնի», երկհատոր քերականություն և այլ երկեր: Պաղտասար Դպիրը ժամանակի խոշոր բանաստեղծն էր, ունի քնարական նուրբ երգեր և բանաստեղծական տպավորիչ պատկերներ: Նրա գլուխգործոցներից է «Ի ննջմանէդ արքայական» տաղը, որ առանձնանում է զգացմունքների բացառիկ խորությամբ:

---

1 Լ ե ո, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1973, էջ 456:

2 Մ ր մ ը ր յ ա ն Հ., Մասնական պատմություն..., էջ 56:

Հայ մտավորական շարժման մեջ իր հետքն է թողել մանկավարժ, լեզվագետ, բանասեր և թարգմանիչ Պալաթու Գեորգը *(1737–1812): Գրել է մի շարք ինքնուրույն երկեր, թարգմանություններ է կատարել օտար լեզուներից: Գրել է «Մեծագին և պատուական ականց և այլոց պէսպէս հանքական և կենդանական քարանց» երկը, ստեղծել է պարսկերեն-թուրքերեն-հայերեն-արաբերեն բառարան քերականական բացատրություններով, պարսկերենի քերականություն, գրաբարի քերականություն, Սաղմոս (թարգմանել է եբրայերեն բնագրից), թարգմանել է «Իլիականը» և շատ այլ գործեր, որոնք մնացել են անտիպ: Համբավավոր մանկավարժի դասագրքերի մի մասը գործածվել է հայ դպրոցներում:*

Պալաթի թաղի նշանավոր մանկավարժներից էր Սարգիս Դպիր Հովհաննիսյանը *(18-րդ դ. 2-րդ կես – 19-րդ դ. սկզբներ): Նա գրել է Կոստանդնուպոլսի տեղագրությանը նվիրված գործ, որը գաղթօջախի և առհասարակ քաղաքի պատմության արժեքավոր սկզբնաղբյուր է:*

18-րդ դարում գաղթօջախի մշակույթի զարգացման ասպարեզում իրենց կարևոր ներդրումն ունեն Պետրոս Բերդումյանը, Երևանցի Մարգար Զաքարիա Գեղամյանը, Գեորգ վրդ. Մխլայիմը, Մանվել Սրմաքեշ Կոստանդնուպոլսեցին *և ուրիշներ: Նույն ժամանակներում գաղթօջախում գործել են ականավոր բժիշկներ* Կարապետը, Պողոս Շանչյանը *(1744–1815): Վերջինս ավարտել էր Հռոմի բժշկական համալսարանը և արքունի բժշկապետն էր մայրաքաղաքում: Նշանավոր բժիշկ էր նաև* Հովակիմ Օղուլլուխյանը, *որ ավարտել էր Վիեննայի համալսարանը, նա հեղինակել է* «Materia medica» *(«Բժշկական նյութ») և* «Pathologia» *(«Ախտաբանություն») գրքերը (1780-ական թթ.):*

Գաղթօջախի ականավոր երաժիշտներից հիշվում են Պաղտատցի Հովհաննեսը, Պարկեշտ տեր Աբրահամը: *Իր տեսակի մեջ երևույթ էր* Կեսարացի դպիր Գապասագալյանի *«Նվագարան» աշխատությունը (1794) հայ եկեղեցական երաժշտության թեմաներով, որտեղ օգտագործված են հայկական և հունական երաժշտական խազերը*[1]:

17–18-րդ դդ. գաղթօջախում բարձր զարգացման էին հասել ճարտարապետությունն ու նկարչությունը: Հայերի ստեղծած ճարտարապետական գործերը Կոստանդնուպոլսում խոր ազդեցություն են թողել նաև օսմանյան ճարտարապետության բնույթի, նրա կիրառական ա-

---

1 *Նույն տեղում, էջ 162:*

ռանձնահատկությունների և առհասարակ զարգացման վրա: Կոստանդնուպոլիսը անընդհատ զգում էր վերաշինության կարիքը, որ պայմանավորված էր չդադարող բնական ու սոցիալական աղետներով (երկրաշարժեր, հրդեհներ), սուլթանների պերճանքի ու քաղաքաշինության պահանջմունքներով: Հայ տաղանդաշատ ճարտարապետները շատ բարձր դիրք են զբաղեցրել օսմանյան միջավայրում: Հայազգի ճարտարապետներից հնագույնը այստեղ համարվում է կեսարացի Սինանը (1490–1588)՝ օսմանյան արքունիքի գլխավոր ճարտարապետը: Նրա նախագծերով կառուցվել կամ վերաշինվել են հարյուրավոր շինություններ, մզկիթներ, պալատներ, դամբարաններ, քարվանսարաներ, բաղնիքներ և այլն: Նրա արվեստի ամենակարևոր մարմնավորումներն են Թուրքիայի մայրաքաղաքի զարդը կազմող Շահզադե և Սուլեմանիե մզկիթները (1540–1550-ական թթ.), Սելիմիե մզկիթը Ադրիանուպոլսում և այլն: Սինանը աչքի ընկնող կառույցներ ունի նաև Սարաևոյում, Եվպատորիայում, Բոսնիայում, Հերցեգովինայում, Դամասկոսում և այլուր[1]: 17-րդ դ. ճարտարապետներից հիշվում են Աստվածատուր (կամ Աստատուր) խալֆան, Գաբրիել Փալագյանը, որը Սուլեյման 2-րդի (1687–1691) արքունական ճարտարապետն էր: Կցկտուր տեղեկություններ են պահպանվել ուրիշ, գլխավորապես կեսարացի հայ ճարտարապետների մասին. կեսարացի Մելիտոնը գործել է Հովհաննես Կոլոտի պատրիարքության շրջանում և Ահմեդ Գ-ի արքունական ճարտարապետն էր: Կոստանդնուպոլսում նա կառուցել է հայկական եկեղեցիներ, նորոգել է Սամաթիո Ս. Գեորգ, Ս. Աստվածածին և Ս. Երրորդության եկեղեցիները 1720-ականի սկզբներին: Մելիտոնն է կառուցել Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցուն կից խիստ տպավորիչ մի բնակելի տուն, որ կոչված էր հրդեհներից ապահով պահելու եկեղեցին[2]: Նույն ժամանակներում հռչակված էր կեսարացի Սարգիս խալֆան: Նա հիմքից իսկ նորոգել է այրված Դալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցին, Սկյուտարի Ս. Կարապետ, Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցիները (1720–1730-ական թթ.)[3]:

---

1 Տես Ա. Զարյանի «Սինան» բառ-հոդվածը «Հայկական Սովետական Հանրագիտարանում», հ. 10, ե., 1984, էջ 385–386:

2 Խաչիկոնց Դ. Կ., Պոլսո հայ գաղութին ծագումը, էջ 191: Ալպոյաճյան Ա., Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը, էջ 134: Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները, էջ 132:

3 Զարդարյան Վ. նշվ. աշխ., էջ 43:

Կոստանդնուպոլսի հայ ականավոր նկարիչներից էր Կեսարացի Բարսեղը, որը գործել է 17-րդ դ. վերջին և 18-րդ դ. առաջին կեսին՝ լինելով Ահմեդ Գ-ի նկարիչը: Բարսեղի եղբայրը՝ նկարիչ Եսային, նկարազարդել էր ճարտարապետ Սարգսի վերաշինած Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցին[1]: 18-րդ դ. 30–70-ական թթ. հռչակված արվեստագետ էր Ռաֆայելը՝ պալատական երկարամյա նկարիչը: Քիչ տեղեկություններ են հասել նաև Ռաֆայելի որդու՝ նկարիչ Մինասի նկարած դիմանկարների մասին: Առկա տվյալները, սակայն, թույլ են տալիս ասելու, որ 18-րդ դ. Կոստանդնուպոլսի հայ նկարիչները ստեղծագործել են իտալական վերածննդի շրջանի ռեալիստական արվեստի նմանությամբ և սկզբունքներով: Այս ամենով հանդերձ, Կոստանդնուպոլսում 17–18-րդ դդ. իրենց արվեստով նշանավոր դարձած հայ ճարտարապետների ու նկարիչների փայլուն դպրոցը գրեթե չի ուսումնասիրված և առայժմ հայտնի է զուտ պատմական ու նկարագրական դիտարկումների սահմաններում:

* * *

1800–1915 թթ.

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը շարունակում էր մնալ արևմտահայության քաղաքական, հոգևոր-մշակութային և հասարակական կյանքի կենտրոնը: 19-րդ դարը բախտորոշ մի ժամանակաշրջան էր ողջ երկրի համար՝ իր նշանակալից իրադարձություններով, սոցիալ-քաղաքական նոր գործընթացներով, գաղափարական պայքարի աննախադեպ դրսևորումներով: Ասպարեզ ելնող բուրժուական հասարակարգին բնորոշ պրոցեսները տարբեր ձևերով էին աղերսվում զարգացման ոչ հավասար աստիճանների վրա գտնվող ժողովուրդների պատմական ոգորումներին: Կոստանդնուպոլսի հայության կյանքն ընթանում էր հակասություններով և քաղաքական տարուբերումներով լի պայմաններում, որոնք շատ դեպքերում ուղղակի խոչընդոտում էին նրա առաջընթացը թե տնտեսական և թե հասարակական-մշակութային ասպարեզներում:

Օսմանյան կայսրության պատմության առաջին շրջանի ժամանակագրությունը՝ ղազիների դարաշրջանը, հասցվում է մինչև Սելիմ 3-

---

1 Ինճիճյան Ղ. նշվ. աշխ., էջ 183: Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները, էջ 133:

րդի կործանումը և 1808 թ. հեղաշրջումը: Մուստաֆա Բայրակտարի ղեկավարած «Ռուշչուկի բարեկամներ» խմբի արյունոտ այդ ընդհարումը թուրքական հետադիմության հետ 1808 թ. իր յուրահատկությամբ և պատմական դեպքերի դրամատիզմով շատ ավելի ցայտուն էր նույնիսկ ճիշտ մեկ դար հետո տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումից: Դա Թուրքիայի պատմության մեջ բացառիկ զինված առճակատում էր հնի և նորի պաշտպանների միջև, բացառիկ իր քաղաքացիական խիզախումով և բովանդակությամբ, մի շարժում, որին իր ամենաակտիվ մասնակցությունը բերեց նաև 19-րդ դարի հայ բուրժուազիայի խոշոր դեմքերից մեկը՝ ռումինահայ Մանուկ Միրզայանը (Մանուկ բեյ): Նա, փաստորեն, Սելիմ 3-րդից հետո հետադիմության կողմից սուլթան կարգված Մուստաֆա 4-րդին գահընկեց անելու և 19-րդ դ. օսմանյան պատմության մեջ թանզիմաթի դարաշրջանը բացող Մահմուդ 2-ին (1808–1839) գահ բարձրացնելու համար մղված պայքարի ոգին ու կազմակերպիչն էր, Մուստաֆա Բայրակտարի խորհրդատուն և դրամական մատակարարը[1]*:*

Հայ նշանավոր այդ ձեռներեցը, դիվանագետը և քաղաքական գործիչը ամենասերտ կերպով հաղորդակցվում էր Կոստանդնուպոլսի մեծահարուստների հետ, ամենայն հավաստիությամբ կատարում բանկիրի, Պոլսի և Ռումելիայի հայ մեծահարուստների դրամագլխի շահավետ ներդրման և օգտակար գործառնությունների հովանավորի դեր, որի շնորհիվ մեծ համարում ուներ նրանց մեջ: Բնորոշ է, որ, երբ 1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի զինադադարի ժամանակ թուրք-ռուսական հարաբերությունները կարգավորելու և 1812 թ. Բուխարեստի պայմանագիրը կնքելու իրազրություն էր ստեղծվել, Մանուկ Միրզայանն էր այն մարդը, որին վստահում էին երկու պատերազմող կողմերը:

Մուստաֆա Բայրակտարի ղեկավարած զինված հեղաշրջման, հաղթանակի, մեծ վեզիր կարգվելու, ենիչերիների դեմ մղված պայքարի ողջ

---

1 *Մանուկ Միրզայանի մասին տե՛ս* Ղ ևոնդ Հովհաննիսյան *վրդ., Միրզայան Մանուկ պեյին վարուց պատմությունը, Վիեննա, 1852: Հ. Ճ. Ս ի ր ո ւ ն ի, Էջեր Մանուկ բեյի կյանքեն, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 3, 1970, № 2–3:* А. Ф. М и л л е р. Мустафа паша Байректар (Оттоманская империя в начале XIX века), М.–Л., 1947, *էջ 143-ի ծանոթագրությունում նշված էջերը:* H. D. S i r u n i. Bayrakdar Mustafa pacha et Manouk bey, "Prince de Moldavie" -"Balkania", Bucarest, 1943, V. VI.

ընթացքում Մանուկ Միրզայանը, որպես թուրք բարձրաստիճան այդ զինվորականի և պաշտոնյայի մերձավորագույն խորհրդատու, գտնվում էր Կոստանդնուպոլսում:

Մանուկ բեյի Կոստանդնուպոլսում պաշտոնի անցնելը սենսացիա առաջացրեց: 1808 թ. հեկտեմբերի 16-ին նա հանդիսավոր մուտք գործեց մայրաքաղաք այնտեղի նշանավոր հարյուր հայերից բաղկացած ամբողջ մի անձնակազմի ուղեկցությամբ: Այդ շքերթը ուղղվեց դեպի Բարձր Դուռ, որտեղ Մանուկ բեյը պաշտոնապես ստանձնեց դրագոմանի պարտականությունները: Նա այսուհետև ավելի բացարձակ էր հաղորդակից լինում պետական գործերին: Եթե նախքան Մանուկ բեյը պալատական դրագոմանի պարտականությունները ավանդաբար հանձնարարվում էին ֆանարիոտ հույներին (ֆեներ թաղում ապրող մեծահարուստ և ազդեցիկ հույներ), ապա այժմ «առաջին անգամ այդ պաշտոնը ստանձնում է հայը», որի իշխանությունը մեծ վեզիրի վրա առաջվա նման անսահմանափակ էր: «Մանուկը ներկա էր լինում մեծ վեզիրի կողմից հրավիրված օտար ներկայացուցիչների ընդունելություններին», նա ապրում էր Բոսֆորի ափին Միջագյուղում գտնվող հրաշագեղ ապարանքում[1]:

1807–1808 թթ. իրադարձությունների և կայսրության համար բախտորոշ զինված հեղաշրջման մանրամասների մասին թուրքական պատմագիտության համար որպես սկզբնաղբյուր է ծառայում հետագայում Կոստանդնուպոլսի նշանավոր հրատարակիչ-տպարանատեր Գալուստ Արապյանի 1815 թ. նախապես հայերեն գրված, բայց չհրատարակված «Մուստաֆա փաշայի կյանքը և գործունեությունը» գիրքը, որը 1941 թ. թուրքերեն է թարգմանել հայտնի պատմաբան Էսատ Ուրասը: Գրքի առաջաբանը գրել է Օսմանյան կայսրության պատմության ճանաչված հեղինակ Հակկի Ուզունչարշըլին: Այդ առաջաբանով նա նշում է Գ. Արապյանի գրքի կարևորությունը 19-րդ դարասկզբի պատմական նշանակալից իրադարձությունների վերարտադրման խնդրում, որի մասին այլ ականատեսի հավաստի վկայություններ չկան: Գ. Արապյանը Մուստաֆա փաշայի կյանքին ու գործին անդրադարձել է իր նկատառումներն ունենալով. մասնավորապես նա ուզեցել է ցույց տալ, թե ինչպես ցանկության դեպքում թուրք բարձրաստիճան պաշտոնյաներն անգամ կարող էին քիչ թե շատ բարեկիրթ վերաբերմունք ունենալ

---

1 Ա. Ֆ. Մ ի ա լ լ ե ր. նշվ. աշխ., էջ 272:

կայսրության մեջ իրենց հայրենիքում ապրող քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ, որպիսին դրսևորել է Մուստաֆա Բայրակտարը դեռևս Ռուշչուկի այան եղած շրջանում, երբ ամբողջովին զեկավարվում էր Մանուկ բեյի խորհուրդներով:

Մանուկ Միրզայանը ևս, որպես զարգացող բուրժուական հասարակախավի ներկայացուցիչ, ցանկանում էր քաղաքակրթված տեսնել այն երկիրը, որի տիրապետության տակ էր նաև Արևմտահայաստանը: Նրա պայքարը՝ թուրքական պետական քաղաքականությանը ռուսական կողմնորոշում հաղորդելու ուղղությամբ, պայքար էր մի մարդու, որը լավ էր հասկանում դրա անհրաժեշտությունը իր ազգի և ժողովրդի համար: Սակայն թե Բայրակտարի մեծ վեզիրության ժամանակ, երբ վերջինս ի վերջո ընկղմվեց թուրքական մեղկ ու ցոփ կյանքի բթացնող մթնոլորտը, թե ռուս-թուրքական բանակցությունների ընթացքում, թուրքերի դրսևորած անբարեհուսությունից հիասթափված, նա երդվեց այլևս գործ չունենալ «այդ ազգի» հետ և ընդմիշտ թողնելով Կոստանդնուպոլիսը՝ հաստատվեց Բեսարաբիայում՝ սերտ կապեր պահպանելով ռուսական պալատի և հայ մեծահարուստներ Լազարյանների հետ:

Թուրքական հետադիմությանը, ենիչերների կորպուսի զինված ապստամբությամբ, 1808 թ. նոյեմբերի 15-ին հաջողվեց կործանել Մուստաֆա Բայրակտարին, որի հետևանքը եղավ «Ռուշչուկի բարեկամների», այդ թվում նաև Մանուկ Միրզայանի, շուտափույտ փախուստը մայրաքաղաքից: Սակայն գահի վրա մնաց Բայրակտարի ձեռքով սուլթան կարգված Մահմուդ 2-րդը, որն արդարացրեց «Ռուշչուկի բարեկամների» հույսերը՝ Սելիմ 3-րդի սկսած բարենորոգումները շարունակելու առումով:

Կայսրության տարածքում և Կոստանդնուպոլսում բնակվող հայ և մյուս քրիստոնյա ժողովուրդների համար բարենորոգչական օրենքները (թանզիմաթը և այլն) ունեին մեկ սկզբունքային նշանակություն. խնդիրն այն է, որ առաջին անգամ բռնակալական կայսրության մեջ բարձրաձայն և հրապարակավ հայտարարվեց օրենքի առաջ, մահմեդականների կողքին, նաև այլ դավանանքների պատկանող և հատկապես մեծ թիվ կազմող քրիստոնյա ժողովուրդների իրավունքների հավասարության մասին: Սակայն կայսրությունում չգործեց ազգերի իրավահավասարության վերաբերյալ այդ օրենքը: Մանավանդ գավառներում, ուր թանզիմաթի վերաբերյալ լուրը աղավաղումներով հասնում էր

տասնյակ տարիների ուշացումով, մահմեդական կրոնավորների գրգռումների հետևանքով մահմեդական թուրք զանգվածների կողմից ամենավայրագ դիմադրությամբ էր ընդունվում հրովարտակում քրիստոնյաների մասին եղած կետը: Նրանք իրենց ողջ դժբախտությունները, ընդհուպ մինչև այդ տարիներին ամենուր տարածված ժանտախտը, վերագրում էին մահմեդականներին հավասարվելու հանդգնության համար քրիստոնյաներից վրիժառու չլինելուն: Զինված հարյուրավոր մարդկանցից բաղկացած խմբերով նրանք հետապնդում էին քրիստոնյաներին, այդ թվում նաև եվրոպական դիվանագիտության հյուպատոսությունների ներկայացուցիչներին, որպեսզի նրանց սպանելով՝ արդարանան ալլահի առաջ և ազատվեն իրենց պատած չարիքներից:

Սակայն այսպես թե այնպես բարենորոգչական օրենքների ընդունումը կամ թանզիմաթի դարաշջանը թելադրված էին պատմության կողմից և պայմանավորված այն պրոցեսներով, որ տեղի էին ունենում ողջ 19-րդ դարի ընթացքում՝ սոցիալական նոր ուժերի ասպարեզ գալով, ազգային-ազատագրական շարժումներով, այդ հողի վրա լուսավորական շարժման ծավալումով, հասարակական-քաղաքական նոր հարաբերությունների ձևավորումով: Տեղաշարժերը հիմնականում պետք է բացատրել ոչ այնքան բուն իշխող ժողովրդի գիտակցության մեջ կատարվող փոփոխություններով, ժողովուրդ, որին դեռ երկար ժամանակ էր պետք ասպարեզում նոր երևացող սեփական ազգային բուրժուազիայի և մտավորականության ձայնը լսելու համար, որքան կայսրության մեջ ապրող և սոցիալ-քաղաքական ու մշակութային զարգացման տեսակետից անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա գտնվող քրիստոնյա ժողովուրդների ձգտումով, որոնց պետք էր դուրս գալ միջնադարյան ֆեոդալական պարփակվածությունից և մտնել առևտրական ու արդյունաբերական ձեռնարկումների ժամանակակից ոլորտ: Այդ առումով 1856 թ. փետրվարի 6-ի Հաթթ-ի հումայունը օսմանյան կառավարության կողմից մի երևութական քայլ էր՝ արձագանքելու ոչ-մահմեդական հանրությունների ձգտումներին: Դրանով կառավարությունը փաստորեն փորձում էր կանխել քրիստոնյա ժողովուրդների ներքին կյանքում տեղի ունեցող խմորումները:

Կատարվող իրադարձությունների առջևում, արևմտահայերի համար, ընթանում էր Կոստանդնուպոլսի հայ հանրությունը:

19-րդ դարի կեսին Կոստանդնուպոլիսն ուներ մոտ մեկ միլիոն բնակչություն (ըստ Ուբիչինիի՝ 891.000), որից մահմեդականներ էին

475.000-ը, հայ՝ 222.000-ը՝ դարասկզբի 150.000-ի փոխարեն: Հայ բնակչության նման աճը կայսրության մայրաքաղաքում ուներ տարբեր պատճառներ, որոնցից գլխավորը տվյալ ժամանակահատվածում հատկապես գավառներում և կայսրության քաղաքներում կատարվող տեղաշարժերն էին, գյուղի սոցիալական քայքայումը և գյուղացիության աղքատացումը, որը, տեղահան անելով տասնյակ հազարավոր երիտասարդ կարող ուժեր, նրանց աշխատանքի էր մղում դեպի ծովեզրյա քաղաքները:

Կոստանդնուպոլիս էին գալիս նաև գլխավորապես գավառներում (Ակն, Վան) դրամագլուխ կուտակած և արդեն ինչ-որ դրության տեր դարձած հայ վաճառականներն ու արհեստավորները, մտավոր կյանքի ընդունակ երիտասարդներ, որոնք հույս ունեին, օգտվելով մայրաքաղաքի ընձեռած հնարավորություններից՝ վեր բարձրանալ, բազմապատկել իրենց դրամագլուխը: Կոստանդնուպոլիս եկած ընդունակ արհեստավորները լրացնում էին քաղաքի՝ առանց այն էլ բազմաշերտ այդ խավի շարքերը, ընդգրկվելով արհեստավորական միությունների՝ էսնաֆությունների մեջ:

Ամբողջ 19-րդ դարի ընթացքում արհեստավորները կազմում էին պոլսահայության հիմնական հատվածը: Դարի երկրորդ կեսին պոլսահայերից 494-ը պետական պաշտոնյաներ էին, 35.979-ը՝ վաճառականներ, արհեստավորներ, խանութպաններ, 32.399-ը՝ ուսանողներ և աշակերտներ, 14.998-ը՝ անզբաղմունք մարդիկ: Էսնաֆությունների՝ հայ արհեստավորական միավորված կազմակերպությունների թիվը դարասկզբին հասնում էր 65-ի, իսկ դարակեսին ավելի քան 100-ի: Հայտնի էին սառաֆների (սեղանավոր), դուլումճիների (ոսկերիչ), թյուլպենտճիների (դաջող), հացագործների, չինանյութ պատրաստողների, սանտալճիների (հողաթափ կարող), ժամագործների, ճոթավաճառների, կոշկակարների, բաղնիսպանների, խոհարարների, վարսավիրների և այլ արհեստներով զբաղվողների միությունները[1]:

Կայսրության մայրաքաղաքը կարիք ուներ առողջ ֆիզիկական ուժի, որպիսին ներկայացնում էին մայր հայրենիքի տարբեր քաղաքներից (Վան, Բիթլիս, Խարբերդ) դեպի Կոստանդնուպոլիս ձգտող հայ երիտասարդները՝ այստեղ կազմելով օրավարձու բանվորների, նշանավոր բեռնակիր-համալների դասը: «Համալները,— գրել է Մագդա Նեյ-

1 Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, հ. 5, 1974, էջ 321: Տես նաև՝ «Արձագանք», 1885, № 10, էջ 142–143:

մանը,– Բիթլիսի, Վանի, Խարբերդի վիլայեթների հողագործ բնակչության թարմ ուժերն էին, որոնք քրդերի ճնշումների և թուրք պաշտոնյաների գռփողականության հետևանքով կտրվել են իրենց սնող հողից: Ամեն տարի հազարներով նրանք ձգտել են Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա և եվրոպական ու ասիական Թուրքիայի այլ ծովեզրյա քաղաքները՝ ծանր ֆիզիկական աշխատանքով վարձատրվելու նպատակով... 1896 թ., Կոստանդնուպոլսում համալների կոտորածից հետո, թուրքերը ստիպված էին նրանց փոխարինել քրդերով, բայց ռուս թղթակիցների հաղորդումների համաձայն, ինչպես մաքսատները, այնպես էլ ապրանքների տերերը հայտնվեցին մեծ դժվարության առաջ: Նախ՝ քրդերը երբեք չունեն այն հսկայական ուժը, որի առկայությամբ հայ համալները հեշտությամբ կրում էին մեծ չափի ծանրություններ... Երկրորդ, մաքսատան ղեկավարությունը քրդերին չի վստահում պահեստները, որոնցում պահվում են ապրանքները, մինչև նրանց դատարկվելը: Այդ ամբարները նախկինում միշտ եղել են հայերի հսկողության տակ, որոնց աներեր աշխատությունը երբեք չի արատավորվել: Իսկ ապրանքների տերերը մեծ տհաճություններ են կրում քրդերից: Վերջիններս կամ պատճառաբանում են հոգնածությունը և ժամանակին բեռը նշանակված վայրը չեն տանում, կամ թույլ են տալիս մինչ այդ չտեսնված չարաշահում՝ յուրացնելով ուրիշի սեփականության մի մասը: Հայ համալների՝ ասպարեզից հեռանալով քիչ չտուժեցին նաև առևտրական ընկերությունները, բանկերը և եվրոպացիների հարուստ խանութները Կոստանդնուպոլսում: Պետական գանձարանի ոսկու և արծաթի տեղափոխումը պետական գանձարկղից մինչև Օտոմանյան բանկ և Dette Publique (սեփական պարտքի) ադմինիստրացիան, բանկային դրամարկղների, խանութների ցերեկային և գիշերային պաշտպանությունը, բոլոր փողոցների գիշերային պահակային ծառայությունները, հսկողությունը Կոստանդնուպոլսի բազմաթիվ խաներում (հյուրանոցներ), այս ամենը վստահվում էր միայն Հայաստանի խորքերից եկած եկվոր մարդկանց»[1]:

Օգտվելով թուրքերի, հայերի, հույների, հրեաների և եվրոպացիների անվերապահ վստահությունից՝ հայ հասարակ ժողովրդի այդ ներկայացուցիչները կատարում էին ռուս արտելականների հանձնարարությունները՝ չմուծելով, սակայն, նյութական ոչ մի ապահովագրություն

---

1 Մ ա գ դ ա Ն ե յ մ ա ն. Армяне, Ереван, 1991, с. 107—108.

կանխավճարի ձևով. նրանց ազգային պատկանելության բարի անունը համարվում էր բավարար երաշխիք:

Հազարավոր հայ պանդուխտներ, մանավանդ 19-րդ դարում, ամենից շատ անցնում էին Կոստանդնուպոլիս: Նրանցից շատերը ընկնում էին հետին թշվառության մեջ, սովի, զրկվածության և հիվանդությունների զոհ էին դառնում Պոլսի քարավանսարաների, բաղնիքների և սրճարանների նկուղների մութ և գաղջ պատերի մեջ:

Կոստանդնուպոլսի 40 թաղերից 31-ում հայերն ունեին տարբեր ժամանակներում կառուցված և շարունակ վերանորոգվող եկեղեցիներ: Նորերի կառուցման դեպքերը չափազանց հազվադեպ էին, քանի որ մուսուլմանական օրենքով այն արգելված էր և կատարվում էր միայն սուլթանի հատուկ հրամանով, որի մասին, ինչպես և վերանորոգումների մասին, մանրամասն կետեր կային 1856 թ. հրապարակված Հաթթ-ի հումայունում: Թաղական եկեղեցիները գործում էին՝ ունենալով իրենց համապատասխան հոգևոր առաջնորդներն ու եկեղեցու սպասավորները: Ավելի հայաշատ, հարուստ և նշանակալից թաղերում, ինչպես Գում գաբուն և Սկյուտարը, գործում էին նույնիսկ երկուական եկեղեցի: Հայ թաղական եկեղեցիներ կային Կետիկփաշայում, Սամաթիայում, Նարլը գաբուում, Մաքրիգեղում, Այ-Ստեփանոյում, Թուփ գաբուում, Քարակեոմրուկում, Պալաթուում, Էյուպում, Խասգյուղում, Քասըմփաշայում, Բերայում, Ղալաթիայում, Պեշիկթաշում, Օրթագյուղում, Նորագյուղում, Պեյուկտերեյում, Պեյքոզում, Ալեմդաղում և այլուր՝ թվով 33: Հետագայում եկեղեցիների ծխերը որպես սահմանադրական ժողովի երեսփոխաններ իրենց թաղերից ժողով ուղարկեցին 160 պատգամավոր, ընդհանուր թվի՝ 220 երեսփոխանի դիմաց, գավառին թողնելով 60 տեղ՝ ըստ վերջիններիս թաղային խորհուրդների և առաջնորդությունների: Մի բան, որն, անշուշտ, իր ոչ արդարամիտ համամասնությամբ առաջացրեց գավառի դժգոհությունը:

Սուլթան Մուհամեդ Ֆաթիհը Կոստանդնուպոլսին տիրանալուց կարճ ժամանակ անց որոշեց հատկապես մայրաքաղաքի ծովահայաց մասերը բնակեցնել նորեկ, դարավոր մշակույթ ունեցող և նստակյաց կյանքի հատկանիշներով օժտված քրիստոնյաներով և հրեաներով: 1461 թ. Պրուսայից հրավիրված Հովակիմ արքեպիսկոպոսի տեղափոխվելը Կոստանդնուպոլիս փաստորեն նշանավորվեց հետագայում ողջ արևմտահայության ներքին գործերի կառավարման կենտրոնը հանդիսացող հայոց պատրիարքարանի հիմնադրմամբ: Այն գտնվում էր քա-

ղաքի եվրոպական թաղամասերից մեկում՝ Գում գաբուում: Պատրիարքարանը սկզբնապես տեղավորվեց հունական լքված Սուլու Մանաստիր վանքում, իսկ հետագայում՝ 1828 թվականից՝ նախկին Ս. Աստվածածին եկեղեցու տեղում նորովի, շքեղորեն վերակառուցված եկեղեցում: Այստեղ էր գտնվում նաև Երուսաղեմի տունը, ուր հանգրվանում էին Երուսաղեմից ժամանակավորապես Կոստանդնուպոլիս ժամանած հայ միաբանները:

Ի լրումն այլ արտոնությունների, որ հատուկ սուլթանական բերաթով օժտված էին հարկատու ազգերի պատրիարքները, 1840 թ. նրանց վերավստահվեց նաև ընդհանուր ազգային տուրքը (որը հետագայում պիտի մուծվեր արքունական գանձարան) հավաքելու դործը: Հայոց պատրիարքարանի արտոնությունները հաստատված էին սուլթանական հատուկ հրամանագրով. դրանցից ամենահինը Մուստաֆա 3-րդի կողմից 1764 թ. Գրիգոր պատրիարքին շնորհված բերաթն էր:

Պատրիարքների համար նախատեսված արտոնությունները բավական տարածուն էին: Խնդիրն այն է, որ մուսուլման կրոնավորները Մուհամմեդի կողքին մարգարե էին համարում նաև Քրիստոսին, հետևաբար թուրք իշխողները հաշվի էին նստում նրա հավատացյալների հոգևոր պետերի հետ:

1764 թվականի բերաթում նախ և առաջ թվարկվում էին այն պարտականությունները, որ ուներ պատրիարքը պետության հանդեպ: Որպես թուրքական պետության պաշտոնյա, որին հաստատում էր սուլթանը, պատրիարք ընտրվելիս նա գանձարան պիտի մուծեր 100.000 աքչե՝ իբրև «փեշքեշ», իսկ հետո արդեն ամեն տարի՝ 140.000 աքչե՝ իբրև տուրք (մուքաթաա): «Կ. Պոլսի պատրիարքը,– նշված էր բերաթում,– Ռումելիի և Անատոլուի Փերաքենդեին և անոնց ենթակա վայրերու հայերուն, և բոլոր այդ շրջաններու հոգևոր առաջնորդների, քահանաների (փափազ) գլխավորն է»: Առհասարակ բոլոր հայերը իրենց հոգևոր գործերի առթիվ պետք է դիմեին նրան և նրա խոսքից դուրս չգային: Նրան թույլատրվում էր իր պատրիարքությանը ենթակա շրջաններում նշանակել առաջնորդ, .վարդապետ և քահանա: Պատրիարքն էր կարգավորում վակուֆների կամ եկեղեցապատկան հողերի խնդիրները, նրան էր վերապահված հարկերի հավաքման կարգը, որին ոչ մի պաշտոնյա միջամտելու իրավունք չուներ:

Պատրիարքը և նրան մերձավոր 15 անձինք ազատված էին ջիզիեից, ավարիզից և այլ տուրքերից: Քահանաների և վարդապետների նյու-

թական եկամուտների քննությունը կատարվում էր պատրիարքի և նրա ներկայացուցիչների միջոցով: Որևէ թուրք պաշտոնյայի իրավասությունից դուրս էր «իսկական հայ ռայաների ձեռքից» առնել նրանց եկեղեցիներն ու վանքերը և դրանք տալ ուրիշ դավանանքի պատկանող ու «կաթոլիկ կոչված խռովարարներուն»: Պետական մուքաթաա կոչվող հարկերի հավաքելու ելած վարդապետներն անձեռնմխելի էին՝ իրենց ինչքով: Եկեղեցիների հատուկ գույքերից մաքսատուրք և անցատուրք (բաջ) չէր գանձվում[1]:

Հայոց պատրիարքներն, անշուշտ, օգտվում էին իրենց ընձեռած իրավունքներից, որոնք, կարելի է ասել մինչև 1847 թ. ընտրված Ազգային ժողովը և մինչև հատկապես արևմտահայ սահմանադրությունը, գրեթե անկասելի էին ազգի և հանրության ներքին գործերին վերաբերող հարցերում: Ժամանակակիցներից «Մասիս» թերթի խմբագիր Կարապետ Ուլթուճյանը թողել է հետևյալ հիշողությունը պատրիարքի ուժի և հեղինակության մասին. «Պատրիարքարանին անունը ահարկու էր այն ժամանակ,— գրում է Ուլթուճյանը,— երբ բարապան մը մեկուն ներկայանար և «հրամմե, վեքիլ հայր սուրբը (այսինքն՝ պատրիարքի պատվիրակը — Վ. Ղ.) քեզի կուզե» ըսեր, մարդուն թուքը կցամաքեր բերնին մեջ և ոտքով ձեռքով դողալ կսկսեր: Ընդդիմանալ կարելի չէր: Բարապանը վերարկվի տակ անրավոր շղթա մ'ուներ, զոր ընդդիմացողին վիզը կանցուներ բռնությամբ և այնպես կքաշեր, կտաներ՝ գամփռ տանելու պես, և ոչ ոք կարող էր ձեռքեն առնուլ: Վեքիլ հայր սուրբին հետ մանավանդ կատակ կարելի չէր: Առանց երկար հառաջաբանի, կպառկեցուներ պատկառելի խալփախով և լայնաքղանցք վերարկվով պարոնը կամ աղան և 25–30 գավազանի հարվածով կմեծարեր»[2]:

Բերաթի բովանդակությունից հետևում էր, որ կայսրության այլազգի բարձր հոգևորականությանը տրված արտոնությունները փաստորեն ոչ մի կապ չունեին որևէ օրինականությամբ շարժվող, պետական կառուցվածքից բխող օրինաչափությունների հետ, այլ միապետների կամքից և երկրում իշխող անօրինականությունից եկող երևույթ էին, որից օգտվում էին նաև նման արտոնություններ ստացող բարձրաստիճան անձինք: Այդ էր պատճառը, որ պատրիարքի, նրա տեղապահ վեքիլի

---

1 Ս ի ր ո ւ ն ի Հ. Ճ., Պոլիս և իր դերը, հ. 1, Պեյրութ, 1965, էջ 282–284:
2 «Մասիս», 1893, էջ 162, ծնթ.:

կամ բարապանի այցը այս կամ այն հավատակից քաղաքացուն կարող էր վերջինիս դնել անսպասելի և ոչ կանխատեսելի վիճակի մեջ:

Մինչև անցյալ դարի կեսերը պետականությունից զրկված հայ ժողովրդի արևմտահայ հատվածը միանձնյա ղեկավարող պատրիարքը քաղաքական առանձնացած դեմք էր նաև դրսի աշխարհում, երբ հարկ էր լինում կայսրության ընձեռած սահմաններում լուծել հայ ժողովրդին վերաբերող նաև արտաքին դիվանագիտական հարցերը: Կոստանդնուպոլսի պատրիարքարանը, փաստորեն, մինչև արևմտահայ սահմանադրության ընդունումը, հայոց պետական պարտականությունները ստանձնած կազմավորում էր: Այդ ավելի զգալի է դառնում Արևելյան Հայաստանը 1828 թ. Ռուսաստանին միացնելուց հետո, երբ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրելու համաձայնության իրավունքն անցավ միայն ռուսական ցարին, մի բան, որ մինչ այդ արվում էր ցարի, թուրքական սուլթանի և Իրանի շահի համաձայնությամբ:

Թուրքիայի հետ դիվանագիտական առնչությունների խնդրում Ռուսաստանը կարևորում էր Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի բարյացակամ դիրքը: Այդ պատճառով Թուրքիայում իր դեսպանին օգտագործելով ցարը դիմում էր ամեն միջոցի, կասեցնելու համար պատրիարքարանի դիմադրությունը: Դեսպան Բուտենյովը, օրինակ, աշխատում էր Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին նստեցնել ռուսահպատակ մի արքեպիսկոպոսի և դրա համար սիրաշահում էր ազդեցիկ ամիրա Հ. Պեզճյանին: «Միմիայն նրա զորեղ հեղինակությունը,– գրում է Բուտենյովը Ռուսաստանի ներքին գործոց նախարար Բլուդովին,– կարող էր վերջ տալ այն դժվարությանցը և հետձգությանցը, որ ցույց էր տալիս ինձ այստեղի հայոց հոգևորականությունը: Այդ դժվարություններն իրավ որ նշանավոր էին և հիմնավոր, որովհետև մեր վերջին պատերազմի ժամանակ տաճկաց հետ Բ. Դուռը իր հպատակ հայերից պաշտոնական ստորագրություն է առել, որ նոքա կխզեն իրենց հարաբերությունները Ռուսիո հովանավորության ներքո եղած Հայոց հոգևոր վարչության հետ»[1]:

Հ. Կարբեցու մահվանից հետո (1842), հիմնականում պոլսահայերին սիրաշահելու նպատակով, Էջմիածնի կաթողիկոսության գավազանը հանձնվեց մինչ այդ ցարի կողմից Քիշնև ուղարկված Ներսես Աշտարակեցուն (1843–1857), որն իր հայրենասիրությամբ և համարձակ

---

1 Երիցյան Ա., Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Բ., Թիֆլիս, 1895, էջ 52–53:

սկզբունքայնությամբ վայելում էր արևմտահայերի համակրանքը և որի անունը նշանակումից հետո սկսեց հիշատակվել Կոստանդնուպոլսի Մայր եկեղեցու պատարագների ժամանակ: Արևմտահայերի և հատկապես Կ. Պոլսի պատրիարքարանի դժգոհությունը 1836 թ. «Պոլոժենիից» ստիպեց ցարին խոստանալ վերանայել այն, որից օգտվելով՝ Աշտարակեցին ընդհանրապես զանց էր առնում այն:

Ռուս-արևմտահայ հարաբերություններում 19-րդ դարի կեսերին Կոստանդնուպոլսում գերիշխող էին դառնում ազգային ինքնուրույնության հասնելու ջանքերը: 1844 թ. պատրիարք ընտրված Մատթեոս Զուխաջյանը (ապագայում՝ Էջմիածնի կաթողիկոս, Մատթեոս Կոստանդնուպոլսեցի, 1858–1865) պատարագի ժամանակ այսուհետև հիշատակում էր Ներսես Աշտարակեցու անունը: Սակայն որպեսզի կախվածության մեջ չլինեն ռուսամետ կաթողիկոսությունից, որոշում է դադարեցնել Սուրբ աթոռի եկամուտը հավաքելու համար Էջմիածնի պատվիրակի այցելությունը Կոստանդնուպոլիս. այդ պարտականությունը իր վրա է վերցնում պատրիարքը:

Ներսես Աշտարակեցին Կ. Պոլսի պատրիարքարանի այս քայլն ընդունում է ըմբռնումով՝ արևելահայ և արևմտահայ հոգևոր հատվածների տարաձայնությունների վերջնական լուծումը թողնելով ժամանակին: Եվ այդպես էլ լինում է: Շարունակվող բանակցություններն ավարտվում են 1869 թ. Գևորգ պատրիարքի օրոք (նույնպես ապագա Ամենայն հայոց կաթողիկոս, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի, 1866–1882): Նա նամակ ուղարկեց «Այրարատյան գահի» սինոդին, որտեղ առաջարկվում էին միջոցներ՝ Հայաստանի երկու մասերի միջև «խզված հարաբերությունների ամրացման և սիրո վերականգնման» համար: Ռուսական արքունիքը Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ հարաբերություններն ամրապնդելու համար նպատակահարմար գտավ այնտեղ ուղարկել իր ներկայացուցչին կամ վեքիլին:

* * *

Կոստանդնուպոլսի պատրիարքներն ունեին իրենց սոցիալական հենարանը, և դա պոլսահայ հարուստ ամիրաների ազդեցիկ խավն էր, որոնց ձայնին ունկնդիր էր նաև սուլթանը՝ հենց թեկուզ պատրիարք հաստատելիս կամ նրան պաշտոնանկ անելիս: Պոլսահայ հարուստ, տվյալ շրջանում ազգային կյանքը փաստորեն կառավարող այնպիսի առևտրական, սարաֆ-բանկիր ամիրաներ, ինչպիսիք էին Հ. Պեզճյանը,

Մ. Ճեզաիրլյանը, Մ. Պիլեզիկճյանը, Տ. Յուսուֆյանը, Գ. Երամյանը, Պ. և Հ. Տատյանները, Պալյանները մինչև Ազգային ժողովի հաստատումը (1847) և Ազգային սահմանադրությունը, փաստորեն իրենք էին միանձնյա ընտրում պատրիարքին, հետո միայն նրա թեկնածությունը ներկայացնում սուլթանի հաստատմանը: «Եկեղեցականք,– գրում է «Մասիսը»,– ինչպես նաև արհեստապետք օրվան հարուստներուն բերանը կնայեին սովորաբար, մանավանդ եթե ամիրաներուն ամենամեծ մասը կանխավ համաձայն լինեին: Արդարության պարտք մ'է սակայն ըսել թե ամիրաներն ալ անփույթ չէին արտաքին ձևերն հարգելու: Քահանայից և արհեստապետաց կարծիքը կհարցնեին»[1]:

Կոստանդնուպոլսի պատրիարքի միջոցով հայ ամիրայական դասն այդպիսով իրագործում էր իր քաղաքականությունը՝ հիմնականում ինչպես ազգի, այնպես էլ թուրքական կառավարության առջև պատրիարքին ներկայացնելով որպես այդ քաղաքականության կրողի: Ամիրաների այս ուժը որոշակի նախապայմաններ ուներ: Մինչև 19-րդ դարի կեսերը ամիրայական կապիտալը, «որպես զուտ թուրքական հիմնարկություն» (Լեո), զգալի դեր էր կատարում ազգային տնտեսության մեջ: Հարուստ ամիրաների մեծ մասը ապրում էր շքեղ մենատներում, Կոստանդնուպոլսի բարեկեցիկ թաղերում (Պերա, Օրթագյուղ, Խասգյուղ, Սկյուտար), կենցաղավարությամբ հիմնականում աշխատում էր նմանվել թուրք վերնախավին, տիրապետում էր իշխող լեզվին, հագնվում կիսաեվրոպական ձևով, կրում ֆես, երկար քղանցքներով վերարկու, «չարդուկված» օձիքներով վերնաշապիկ: Նրանք աչքի էին ընկնում խիստ պահպանողական վարք ու բարքով, հիմնականում բարձր կրթություն չստացած, գործարար մարդիկ էին: Ամիրայական հարուստ դասը պալատի մեծ պաշտոնյաների դրամական մատակարարն էր՝ փոխարենը վայելելով այն արտոնությունները, որոնք քիչ թե շատ ապահով կյանքի երաշխիքներ էին ընձեռում նրան: Նշանավոր ամիրա Մկրտիչ Ճեզաիրլյանն, օրինակ, թանզիմաթի կամ թուրքական բարենորոգումների շրջանը բացող 1839 թ. Գյուլհանեի Հաթթ-ի չերիֆի հրապարակման նախաձեռնող, մեծ վեզիր Մուստաֆա Ռեշիդի սեղանավորն էր, հետևաբար օգտվում էր նրա հովանավորությունից մինչև վերջինիս մահը (1858):

---

1 «Մասիս», 1893, էջ 165:

Կոստանդնուպոլսի մեծ խաներում և շուկաներում առևտրից ու շահութաբեր փոխտվությունից, կապալներից ամիրաների կուտակած հսկայական դրամագլուխը, սակայն, թուրքական պորտաբույծ պաշտոնեության անհագուրդ ախորժակներին կուլ գնալով, բնականաբար, չէր տալիս սպասվելիք արդյունքը: Բնութագրելով հայերի ակտիվ դրամատնային գործունեությունը Կոստանդնուպոլսում՝ հայ կյանքին լավատեղյակ ֆրանսիացի հայագետ Է. Դյուլորիեն (1807–1881) նկատում է, որ դարակեսին «հայերի այդ բանկային գործունեությունները քչացել են», թեև, ըստ նրա, «գավառում բանկային օպերացիայի մենատիրությունը դեռևս հայերի ձեռքում է»: Դա նա բացատրում է այն հանգամանքով, որ հայ դրամատեր-բանկիրները, մանավանդ Կոստանդնուպոլսում, ավելի էին ճնշվում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կամայականություններից: «Բավական է ասել,– բացատրում է նա,– որ ձեռք բերած հարստությունը հազվադեպ էր ընտանիքում անցնում մի սերնդից մյուսը», որովհետև այն ապահովված չէր օրենքով[1]:

Ամիրայական այն ընտանիքները, որոնք սերնդից-սերունդ պահպանել էին իրենց տնտեսական նշանակությունը մայրաքաղաքում, կարելի է հաշվել միայն մատների վրա: Այդ հազվադեպ ընտանիքներից էր Տյուզյանների գերդաստանը, որ 1600 թ. Սվասից տեղափոխվելով Կոստանդնուպոլիս, շարունակաբար սուլթանական պալատում զբաղեցնում էր կարևոր պաշտոններ՝ մշտապես բազմապատկելով հարստությունը: Տոհմի հիմնադիր Հարությունն Տյուզյան չելեբիից սկսած՝ նրանք պալատում հանդես են գալիս որպես գլխավոր ոսկերիչներ, սուլթանական գանձարանի վերատեսուչներ, պետական գանձապետներ, սուլթանի անձնական գանձերի պահպանողներ, մայր սուլթանի (վալիդե-սուլթան) սարաֆ-սեղանավորներ՝ միաժամանակ բաց թողնելով նոր ոսկեդրամներ, փոխառություններ (կոնսոլիդիե) և այլն:

Սարգիս և Գրիգոր Տյուզյանները 1812 թ. սուլթանական բերաթով դարձել էին պետական գանձարանի կապալառուներ: Գերդաստանի ավելի կրտսեր ներկայացուցիչ Հակոբ չելեբի Տյուզյանը սուլթան Աբդուլ Մեջիդի (1839–1861) մտերիմն էր: Նրա տանը հյուրընկալվում էին սուլթանի ընտանիքի անդամները: 1838 թ. Հակոբ Տյուզյանը ստանձնեց պետական գանձարանի վերակացուի պաշտոնը և սկսեց նոր ուղիներ որոնել դրամի ավելի կատարյալ թողարկման ու փորագրության

---

1 Д ю л о р и е Э. Армяне в 1854 г., Тифлис, 1854, с. 35–36.

համար: Նա այդ նպատակով Եվրոպայից բերել տվեց շոգու ուժով աշխատող մեքենաներ, որոնք գործի դնելու համար վաղօրոք Լոնդոն սովորելու էր ուղարկել մի քանի երիտասարդների: 1844 թ. նրա նախաձեռնությամբ կտրվեցին և հրապարակ հանվեցին ոսկյա նոր հռչակավոր «մեջիդիե» կոչվող դրամները: Ի նշան երախտագիտության այն խոշոր ներդրման, հիմնականում որի շնորհիվ լույս էր տեսել նշանավոր Հայկազյան բառարանը, նրան շնորհակալական ձոն է նվիրել Վենետիկի Մխիթարյան միաբանությունը «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1836–1838) երկհատոր բառարանում: Տյուզյանների գերդաստանին պատկանող ազդեցիկ ներկայացուցիչներից մեկը՝ Կարապետ չելեբին, օսմանյան և օտար՝ եվրոպական պետություններից շնորհված 12 շքանշան ուներ: 1850 թ. ստանալով բեյի տիտղոս՝ նա դարձավ վալիդե-սուլթանի անձնական սեղանավորը, և նրան տեսնելիս պատիվ էին տալիս նաև զինվորականները:

Հակոբ չելեբի Տյուզյանից հետո նրա եղբայր Միհրան բեյ Տյուզյանը գրավեց գանձարանի վերատեսուչի պաշտոնը, ավելի կատարելագործեց շոգիով աշխատող մեքենաները՝ արագացնելով դրամի տպագրման պրոցեսը: Բայց Միհրան Տյուզյանի ամենանշանավոր գործը պետք է համարել պետական դրամական փոխառության բացթողման նախաձեռնությունը, երբ պետությունը Ղրիմի պատերազմից հետո գտնվում էր տնտեսական ծանր վիճակում: 1867 թ. Միհրան Տյուզյանը սուլթան Աբդուլ Ազիզի հետ (1861–1875) մասնակցել է բանկիրների միջազգային համաժողովին:

Մեծ էին Հարություն Պեզճյանի ծառայությունները թուրքական պետության առջև: 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո պարտություն կրած Թուրքիային անհրաժեշտ էր վճարել ռազմական մեծ տուգանք, այնինչ, գանձարանը դատարկ էր: Հ. Պեզճյանը, օգտվելով օտար վաճառականների շրջանում ունեցած մեծ վստահությունից, երկու օրում հավաքեց պահանջված գումարը, որին, ի շնորհակալություն, Մահմուդ 2-րդը Հ. Պեզճյանին շնորհեց պետական «Ակնակապ» բարձրագույն շքանշանը, և երբ հայ ամիրան այն կրծքին մտնում է պալատի դահլիճը, բոլոր ներկաները «զարմանքից ոտքի են կանգնում»[1]:

---

1 Տե՛ս Վարքագրություն Հարություն ամիրայի Պեզճյան Խազեզ անվանելո, ազգային անգուգական բարերարի, Թեոդոսիա, 1872:

Իր գործունեությունը սկսելով ճոթավաճառությամբ Կ. Պոլսի առևտրական շուկաներում՝ Հ. Պեզճյանը հետագայում ընդլայնեց աղդեցության շրջանակները և, բազմապատկելով դրամագլուխը, սկսեց զբաղվել կապալային առևտրով՝ պետությանը տրամադրելով հումք և գյուղատնտեսական ապրանքներ: Իր հարստությունից Հ. Պեզճյանը բաժին էր հանում նաև բարեգործական նպատակների: Նրա ծախսերով Կոստանդնուպոլսում կառուցվել են բազմաթիվ դպրոցներ երկսեռ հայ մանուկների համար, նա լրացրել էր «Հայկազյան բառարանի» հրատարակության համար անհրաժեշտ ծախսերի մի մասը՝ խնդրելով չհիշատակել իր անունը, ամբողջովին իր միջոցներով կառուցել է այսօր էլ բուժական կարևոր կենտրոն հանդիսացող Կոստանդնուպոլսի Սուրբ փրկչի Ազգային հիվանդանոցը, որի բանալիները խորդրդանշական կերպով նրան են հանձնել կառույցն ավարտելուց քիչ առաջ, 1834 թ., երբ Մեծ ամիրան գտնվում էր մահվան անկողնում:

Կոստանդնուպոլսի հայ ամիրայական գերդաստաններից նշանավոր էին նաև Տատյան տոհմի ներկայացուցիչները, որոնք սերնդից-սերունդ ղեկավարել են կայսրության զենքի և վառոդի արտադրության գործը, իրենց որոշակի ներդրումն են ունեցել հասարակական կառույցներում, երկրի տեխնիկական թույլ հնարավորությունների պայմաններում աշխատել են կատարելագործել իրենց ղեկավարած ձեռնարկությունների սարքավորումներն ու զենքի արտադրության տեխնոլոգիան: Տատյանների ձեռքում էր արքունի հացի և ալյուրի մատակարարման գործը: Նրանք իրենց գործառնությունները տարածել էին նաև Կոստանդնուպոլսից դուրս, արտադրական ձեռնարկությունների իրենց մասնաճյուղերն էին հիմնել Նիկոմիդիայում (պետական մանուֆակտուրայի գործարաններ), լուրջ ներդրումներ ունեին երկաթագործական արդյունաբերության բնագավառում:

Ակն քաղաքից գալով Կոստանդնուպոլիս, Տատյանների նախնիներից առաջինը՝ Տատ Առաքելը (Կ. Պոլիս է եկել 1795 թ.), աչքի ընկավ իր ձեռներեցությամբ: Նա լավ կրթության տվեց որդուն՝ Հովհաննեսին, իսկ վերջինս հոր համար ֆրանսերենից թարգմանեց գրքեր վառոդի, մահուդի, կաշվի և թղթի արտադրության վերաբերյալ: Հետագայում Հովհաննես Տատյանը մեկնեց Եվրոպա, որտեղ ուսումնասիրում և կատարելագործում է իր գիտելիքները զենքի պատրաստման, մահուդի և մետաքսի արտադրության ասպարեզում: Վառոդի գործարանը (1810), կաշվի գործարանը (1842) թղթի գործարանը (1820) Բեյքոզում

նոր սարքավորումներով հագեցնելու համար Հ. Տատյանը երկու անգամ 1842 և 1847 թվականներին մեկնել է Եվրոպա: Ընդլայնելով նյութական հնարավորությունները՝ Հ. Տատյանը մասնակցել է Էյուբի տեքստիլ գործարանի (1826), Հեքերեի մետաքսի ֆաբրիկայի (1840), Իզմիտի մահուդի ֆաբրիկայի (1842–1844), Սան-Ստեֆանոյի մոտ գտնվող ձուլարանի (1820) կառուցման և վերասարքավորման աշխատանքներին: Բազմապատկելով իրենց կապիտալը պետական ռազմական գործարաններից և շինարարական կապալներից՝ նրանք, հատկապես Հովհաննես և Պողոս Տատյանները, հետագայում իրենք էին դառնում նոր ձեռնարկությունների տերեր[1]:

Պատմական աղբյուրներում հիշվում են այն բարեգործությունները, որ կատարել են պոլսահայ մեծահարուստ ամիրաները ազգային լուսավորության առաջընթացի համար: Հովհաննես Տատյանն, օրինակ, հարյուր քսակ ոսկի է նվիրաբերել այդ նպատակին: Այն օգտագործվել է նորոգ աշխարհագրական քարտեզների, այդ գրքի ներածության կազմման և տպագրության համար, ինչպես նաև տրամադրվել է «Բազմավեպ» հանդեսի հրատարակությանը:

Կոստանդնուպոլսում վաղուց ի վեր հաստատված և այստեղ սերնդից սերունդ իրենց գործունեությունը ծավալած ընտանիքներից էին նաև Պալյանները, որոնք հատկապես 19-րդ դարում աչքի ընկան ճարտարապետական արվեստի ասպարեզում կատարած զգալի ներդրումներով:

Պալյանների նախահայրը՝ Պալի խալֆան (18-րդ դ. – 1807, Կ. Պոլիս), Կեսարիայի Դերեվանք գյուղից տեղափոխվելով Կ. Պոլիս, հիմք է դնում այդ նշանավոր ճարտարապետ-արվեստագետների և հասարակական գործիչների գերդաստանին: Նա պալատում աշխատել է որպես «մերամեթչի» (կառույցների վերանորոգող), իսկ ապա նշանակվել է պալատական ճարտարապետ: Նրա որդի Գրիգորը առաջինն է կրել Պալյան ազգանունը, լինելով պալատական ճարտարապետ՝ ինչ-որ չափով հանդիսացել է նաև Սելիմ 3-րդի խորհրդատուն: Եթե թվարկելու լինենք Պալյանների կառույցներն ու նախագծումները Կ. Պոլսում և այլուր, ինչպես այդ բարեբախտաբար ասում է ժամանակներիս թուրքական հանրագիտարանի հեղինակ Բարսեղ Թուղլաճյանը (Թուղլաճի), ա-

---

1 Տե՛ս И н д ж и к я н О. Г. Буржуазия османской империи, Ереван, 1977, с. 128 и др.

պա մի պահ կարող է թվալ, թե մայրաքաղաքը նրանք են կառուցապատել, այնքան մեծ է Պալյանների վաստակն այդ գործում: Նշենք միայն, որ ի թիվս այլ շինությունների, Գրիգոր Պալյանը նախագծել է նաև Գում դաբուի Մայր Աստվածածին (1828) եկեղեցին: Պալյանների գերդաստանից ամենանշանավորները Կարապետ ամիրա Պալյանն էր՝ Գրիգոր Պալյանի որդին (1800–1866) և Նիկողոս Պալյանը՝ Կարապետ Պալյանի որդին (1826–1858): Լինելով պալատական ճարտարապետ, Կարապետ Պալյանը սկզբում աշխատակցել է իր քեռայրի՝ Հովհաննես Սերվերյանի հետ, ապա որդու՝ Նիկողոս Պալյանի հետ: Եթե Կարապետ Պալյանը գործունյա մասնակցություն է ունեցել սլոլսահայ 19-րդ դարի հասարակական կյանքին, միջամտելով 1847 թ. Ազգային ժողովի հիմնադրմանը, ապա Նիկողոս Պալյանը, լինելով արդեն նոր սերնդի կրթված և տաղանդավոր ներկայացուցիչ, կատարել է հաջորդ քայլը՝ ակտիվ միջամուխ լինելով սահմանադրության հռչակման գործին: Ն. Պալյանի վաղաժամ մահվանից հետո պալատական ճարտարապետներ են կարգվել նաև Կ. Պալյանի մյուս որդիները՝ Սարգիս և Հակոբ Պալյանները:

Ատաղձագործության մեջ Կոստանդնուպոլսում վաթսունական թվականներին նշանավոր էր Քեմհաճյան գերդաստանը: Գալուստ «տողլամաճիպաշին» առաջինն էր օսմանյան կայսրության մեջ, որ Պեշիկթաշում հիմնելով մեծ փայտամշակման ֆաբրիկա՝ այնտեղ գործի դրեց բազմաթիվ հայ արհեստավորների: Այդ ճյուղում հայտնի դարձան մանավանդ նրա որդիները, որոնց պատրաստած ընտիր կահույքը զարդարում էր կայսերական պալատները:

Հայ տոհմիկ գերդաստանների գոյատևումը մայրաքաղաքում շատ հաղվադեպ էր, և նրանց կարելի էր հաշվել մատների վրա: Բնորոշ էր Մկրտիչ Ճեզաիրլյանի գործունեությունը, որը կարծես ներկայացնում էր անցման մի շրջան պոլսական հին ամիրայությունից դեպի նորատիպ ձեռներեցությունը: Իր դրամագլուխը Մ. Ճեզաիրլյանը բազմապատկում էր ինչպես ֆինանսական գործարքներում, այնպես էլ պետական ձեռնարկություններում ներդնելով: Մ. Ճեզաիրլյանի ղեկավարած ձեռնարկություններում (կապալով վերցված մաքսատներ և այլն) աշխատանք էին գտել 20.000 անգործ հայեր:

Մ. Ճեզաիրլյանը աչքի էր ընկնում հատկապես լուսավորության և ազգային առաջադիմության գործում ներդրած իր ջանքերով: Դեռևս 1836 թ. նա հիմնեց Կոստանդնուպոլսի Ներսիսյան վարժարանը, որն իր

տեսակի մեջ առաջինն էր ուսման ծրագրի նորության և դասավանդման արդիական մեթոդի տեսակետից: Այնտեղ անցնում էին ֆիզիկա և քիմիա առարկաներ, դրվում էին փորձեր, որոնք, սակայն, հետադիմության կողմից գնահատվեցին որպես հերետիկոսական և պատճառ դարձան դպրոցի փակման: 1858 թ. Մ. Ճեզաիրլյանը Խասյգուղում վերանորոգեց ապագա թատրոնի շենքը, որն առաջացրեց թատերական արվեստին ընդհանրապես բացասաբար վերաբերվող հետադիմականների զայրույթը: Մետաքսագործության զարգացմամբ շահագրգռված Մ. Ճեզաիրլյանն իր ծախսով հրատարակեց Հ. Կրճիկյանի, Գ. Աղաթոնի, Գ. Սթիմարաճյանի հեղինակած «Մետաքսաբանությունը» (1845), ֆինանսապես նպաստեց մի շարք պարբերականների և գրքերի հրատարակմանը: Նա հովանավորում և իր միջոցներով Եվրոպա կրթության էր ուղարկում հայ պատանիների:

Սակայն 1859 թ. նրա գործերը փլուզվեցին, երբ նրա հովանավոր մեծ վեզիր և ժամանակ առ ժամանակ արտաքին գործոց նախարար Մուստաֆա Ռեշիդը մահացավ: Բանսարկությամբ բռնագրավված նրա գույքը կանխիկ դրամով կազմեց 120 միլիոն ղուրուշ, 25 միլիոն ղուրուշ գնահատվեց նրա առանձնատունը՝ Խասգյուղում, 20 միլիոն՝ Ենիքյոյի ամառանոցը, Պերա հարուստ թաղամասում երեք քարաշեն տները և ինը խանութները գնահատվեցին 10,5 միլիոն ղուրուշ, Պրուսայի երեք մետաքսագործական ֆաբրիկաները և Կ. Պոլսի Ղալաթիայի թաղամասում գտնվող շոգեաղացը գնահատվեցին 9,5 միլիոն ղուրուշ, բռնագրավվեց Պերգամայի պալատը, Կոստանդնուպոլսի գրասենյակը, Կոստանդնուպոլսին մերձակա երեք տները և յոթ խանութները, չհաշված այն յոթ միլիոն ղուրուշը, որ նա ծախսել էր Փարիզից նոր կահույք և այլ անհրաժեշտ իրեր գնելու և մայրաքաղաքում կառուցած իր նոր պալատը հարդարելու համար[1]:

Պոլսահայ մեծահարուստ ամիրաների կողքին, ինչպես նշել ենք, մշտապես գործում, իսկ 19-րդ դարի առաջին տասնամյակներից արդեն այսպես կոչված «երրորդ դասի» զարգացող արհեստավորական բուրժուազիայի բանակն էին համալրում տասնյակների հասնող արհեստավորական միությունները (էսնաֆությունները), որոնցում ընդգրկված վարպետների, ենթավարպետների ու աշակերտների թիվը բազմապատկվելով, 19-րդ դարի առաջին տասնամյակներին հասել էր մի քանի հա-

---

1 *Ս ի ր ո ւ ն ի Յ. Ճ. Պոլիս և իր դերը, հ. 3, Անթիլիաս-Լիբանան, 1987, էջ 118–126:*

զարի և արդեն սոցիալական լուրջ ուժ էր ներկայացնում՝ հենց դասային ձգտումների ու պահանջների, ազգային գործերի կառավարման մեջ իր տեղն ունենալու տեսակետից:

Խոսելով պոլսահայ առևտրականների և բազմաբեղուտ արհեստավորության մասին՝ Հ. Մրմրյանը շատ պատկերավոր ներկայացրել է նրանց դիրքը Կոստանդնուպոլսի շուկաներում, ուր գտնվում էին նաև իրենց արհեստանոցները: «Կամարակապ Մեծ շուկային պեղեսթեններեն սկսելով,— գրում է նա,— մինչև Վեզիր խանի, Զուխաչի խանի, Վալիտե Մեծ-նոր և Սյուլյուլ խաներու մեջ ու շրջակայքը բռնած էին արհեստական ու առևտրական կարևոր դիրքեր հին հայ չուխաչիները, գազազները, ոսկերիչները, ակնագործները (ճեվահիրճի), թյուլպենտճիները, յազմաչիները, չալճիները, պեզճիները, մանրավաճառ մանուֆաթուրաճիները, գալպաքճիները, սահաթճիները, տեղացի դերձակները, հռչակավոր քյուրքճիները, տելլալները, երկաթավաճառներն ու չիլինկիրները»[1]:

Հայ արհեստավորները բազմաթիվ բնագավառներում համարյա չունեին մրցակիցները: Դրանց թվին էր պատկանում թանկարժեք մետաղներից իրերի, կահույքի, եվրոպական հագուստի, կոշիկի, մետաղյա ամանեղենի արտադրությունը: Արհեստավորական դասը իր սոցիալական ձգտումներում 19-րդ դարի առաջին տասնամյակներում սկսում է անցնել բուրժուական հարաբերություններին հատուկ պահանջարկի և ազատ արտադրության կարգավիճակին, որն իր հերթին ենթադրում էր աշակերտ-ենթավարպետ-վարպետ հարաբերությունների փոխակերպումը արտադրության միջոցների տիրոջ և վարձու բանվորի հարաբերությունների: 19-րդ դարի սկզբներին հազվադեպ չէին այնպիսի երևույթներ, երբ Կ. Պոլսում վարպետները արդեն վեր էին ածվել ձեռներեցների, և նրանց գործողություններում միախառնվել էին արհեստակցական և կապիտալիստական արտադրության սկզբունքները, սկիզբ էին առել «վարձու աշխատանքի հարաբերությունները ենթավարպետների և աշակերտների միջև»[2]:

19-րդ դարի առաջին տասնամյակներից էլ, հատկապես 1838 թ. Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից Թուրքիային պարտադրված ստրկական

---

1 Յ. Գ. Մ. (Մ ր մ ր յ ա ն). Թուրքահայոց հին վաճառականությունն ու վաճառականք, 1740–1890, Կ. Պոլիս, 1908, էջ 17:

2 Н о в и ч е в А. Д. История Турции. III. Новое время, ч. II (1839—1853), Л., 1973, с. 93.

առևտրական պայմանագրով, արդեն սկիզբ էր դրվում Թուրքիայի գաղութացմանը: Նրա հարվածներն անմիջականորեն իրենց վրա պիտի կրեին քրիստոնյա ժողովուրդները, քանի որ գտնվելով սոցիալական զարգացման ավելի բարձր մակարդակի վրա, նրանք էին նոր հարաբերությունների հիմնական կրողները և աշխատում էին դիմագրավել գաղութացման պրոցեսին:

1842 թ. նման կարևոր իրադարձությունների մեջ նշվում է այն, որ այդ տարի Կոստանդնուպոլսում «տերության կողմից հաստատվեց» սեղանավորների երկու գրասենյակ, մեկը՝ Ասիական, մյուսը՝ Եվրոպական: Ասիական կողմի գրասենյակի կապալառուներն էին՝ Հարություն Երկանյանը, Քյուքչիխանցի Պետրոսը, Միսաքը, Ճեզաիրլյան Մկրտիչը, Պաղտասար Զարազյանը և Պողոս Աշնանյանը: Եվրոպական մասի գրասենյակի անդամներ էին Ճանիկ և Մագսուտ ամիրաները, Մահտեսի Հարություն Կելկելյանը, Աբրահամ Ալահվերդյանը, Հովհաննես Թնկրյանը և Հովսեփ Տավուտյանը: Նրանց պաշտոնն էր, բոլոր դավառներից հարկերը և տուրքերը հավաքելով, ժամանակին մուծել արքունի գանձարան, իսկ գրասենյակի կամ գրամագլխով հարկահանության գործն ապահովող երկու ընկերությունների նախագահ էր ընտրվել Հարություն ամիրա Երկանյանը, «որուն և նշան ակնակապ չնորհեց արքայ»[1]:

Ֆինանսական ծանր ճգնաժամից դուրս գալու նպատակով սուլթանը դիմում էր նաև ներքին պարտքերի, որոնք նրան տրամադրում էին դարձյալ հիմնականում օտարազգի քրիստոնյա մեծահարուստները: 1856 թ. Կ. Պոլսի «Մասիս» թերթը իր № 225-ում տպում է մի հաղորդում այն մասին, որ սուլթանական կառավարությունը տեղի հարուստներից 35 միլիոն ղուրուշ փոխառություն է վերցրել, որից 15 միլիոնը նրան տրամադրել է Աբրահամ Ալահվերդյանը:

Սակայն պայքարն անհավասար էր: Բանկային կազմավորումների ասպարեզում շուտով որոշակի կերպով իրեն զգացնել է տալիս հատկապես համաշխարհային շուկայում արդեն մենատիրական դիրքեր գրաված անգլիական կապիտալը: 1856 թ. անգլիական թագուհու հրամանով և դեսպան Մ. Լեյարդի նախագահությամբ Կոստանդնուպոլսում հիմնվում է Օտտոմանյան բանկը, որի նախնական գլխադրամը կազմում էր 500.000 ֆունտ ստեռլինգ, այնինչ, ծրագրվում էր առաջիկա-

---

1 Պերպերյան Ա. Պատմություն հայոց, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 276:

յում այն հասցնել 20.000.000 ֆունտի: Բնականաբար, նոր հիմնադրված բանկի բաժնետերերն արդեն մեծ մասամբ անգլիացիներ էին, իսկ հայ բաժնետերերից ներկա էին՝ Մագուստ Սարիմյանը, Աբրահամ Ալահվերդյանը և Հովհաննես Թնկրյանը:

* * *

19-րդ դարի առաջին տասնամյակներից մինչև 60-ական թվականները արևմտահայ և պոլսահայ պատմությունը նշանավորվում է մի շարք կարևոր իրադարձություններով: Մինչև 50-ական թվականների վերջերը դրանք սերտորեն առնչվում էին պոլսահայ արհեստավորական ընդվզումների և լուսավորական շարժման բուռն վերելքի հետ, որոնց պսակը արևմտահայ քաղաքական կյանքի այդ տարիների գագաթնակետը հանդիսացող սահմանադրության հռչակումն էր: Այս իրադարձությունն արդեն սոցիալական նոր ուժերի լուրջ հաղթանակն էր ամիրայական վերնախավի նկատմամբ:

Մինչև 19-րդ դ. 40-ական թվականները բնորոշ էր պոլսահայ բազմահազարանոց արհեստավորական դասի ստորադաս վիճակը ամիրայականի համեմատությամբ: Սակայն դեռևս 19-րդ դ. առաջին տասնամյակներից այն ներքին երերումներ էր ապրում, և առիթն օգտագործելով՝ արհեստավորները բողոքի ցույցի էին դուրս գալիս Բ. Դռան առաջ՝ վճռականորեն դնելով իրենց դասային կարգավիճակի բարելավման հարցը: Չնայած սուլթանական կառավարության կիրառած դաժան հաշվեհարդարին՝ հաջորդ տասնամյակներում ևս այդ շարժումները ոչ միայն չէին դադարում, այլև դնալով որոշակի քաղաքական հնչեղություն էին ստանում:

Երեսնական թվականների վերջերին և 40-ականների սկզբներին արհեստավորական շարժումների նոր առիթ հանդիսացավ Սկյուտարի ճեմարանի բացումը նույնանուն թաղամասում՝ 1838 թ. դեկտեմբերի 9-ին, Երուսաղեմի վանքին պատկանող հոդետունը նորոգելուց և այն եռահարկ գիշերօթիկ դպրոցի վերածելուց հետո: Ուսումնարանն անվանվեց «Սուրբ Երուսաղեմի ճեմարան»: Ուսուցման գործն առաջ տանելու համար հրավիրվեցին հայկաբանության, թվաբանության, մաթեմատիկայի, ֆրանսերենի դասատուներ: Ճեմարանի պահպանման համար մեծ ծախսեր էին պահանջվում, մինչդեռ Կ. Պոլսի ամիրաները չէին փորձում ավելի լայն բացել քսակները:

Հակոբոս պատրիարքը՝ ժողովրդի կողմից հարգված մի հոգևորական, լավ էր ըմբռնում փոփոխվող իրադրությունը և այն հանգամանքը, որ ամիրայական բացարձակ իշխանությունն այլևս չէր կարող շարունակվել ոչ պատրիարքական գործերում և ոչ էլ մանավանդ ազգային հարցերի կառավարման խնդրում: Ուստի, արհեստավորների պահանջներին ինչ-որ չափով բավարարություն տալու նպատակով նա իր իսկ հիմնած գանձարկղի գումարների տնօրինությունը հանձնեց հիմնականում արհեստապետներից կազմված 24-ի խորհրդին, որտեղ միայն երկուսն էին սեղանավոր: Սակայն ամիրաները չհաշտվեցին դրա հետ և որոշեցին արհեստավորությանը ետ պահելու նպատակով խափանել Սկյուտարի ճեմարանի գործունեությունն ընդհանրապես: Նրանք համոզեցին Երուսաղեմի պատրիարքին հրաժարվել խոստացած 120.000 ղուրուշ օգնությունից, իսկ մասնավոր կրթաթոշակով սաների ծնողներին ստիպեցին ձգձգել իրենց երեխաների հաճախումը դպրոց: Եվ բացումից մեկ տարի անց ճեմարանը փակվեց, իսկ խռոված և վրդովված պատրիարքը մեկուսացավ Ազգային հիվանդանոցի իր առանձնասենյակում, որից օգտվելով, առանց այդ էլ պատրիարքից դժգոհ ազդեցիկ ամիրաները, սուլթանի մոտ նրան ներկայացնելով հիվանդ, խնդրեցին նրան փոխարինել նոր առաջնորդով: 1840 թ. սեպտեմբերի 18-ին Հակոբոսը վերադարձավ Մարզվան:

Տեսնելով իրենց համակրող պատրիարքի նկատմամբ կատարված հաշվեհարդարը՝ վրդովված արհեստավորները հավաքվեցին ճեմարանում և ուխտեցին ճեմարանը պահել սեփական միջոցներով: Որոշվեց ճեմարանի 60 աշակերտների ուղեկցությամբ և արհեստապետ Եղիազարի ղեկավարությամբ գնալ Բ. Դուռ և խնդրագիր ներկայացնել պալատ ճեմարանի տնօրինությունը, ազգային եկամուտի և ծախսի տեսչությունը արհեստավորներին հանձնելու համար: Ճանապարհին դեպի պալատ ուղղված խմբին միացան նաև այլ արհեստավորներ, նավահանգստի բանվոր-բեռնակիրներ, որոնց զորեղ ցույցից ընկրկելով, արտաքին գործոց նախարար Ռիֆաթը բանավոր համաձայնություն տվեց ցուցարարների պահանջին: Սակայն շուտով ամիրաների ծաղրական վերաբերմունքից նրանք հասկացան, որ առանց սուլթանական հատուկ բերաթի իրենց տրված իշխանությունը ձևական է, և գրգռված այս խաբեությունից՝ երկրորդ անգամ և ավելի մեծ բազմությամբ դիմեցին դեպի Բ. Դուռ: Նախապատրաստված սուլթանը կարգադրեց բանտարկել «24-ի» հոգաբարձուներին: Արհեստավորներին զսպելու և սաստելու համար

պալատ կանչվեցին հոգևոր առաջնորդներ և ամիրաներ: Իրենց առաջնորդների բանտարկության լուրը լսելով՝ արհեստավորներն այս անգամ գոռում-գոչյունով, զինված՝ ով ինչով կարող էր, մոտ երեք հազար հոգուց բաղկացած բազմությամբ, առաջնորդ ընտրելով «ճարտարախոս» դինեպան Իսկենդերին, դարձյալ դիմեցին դեպի պալատ՝ պահանջելով ազատ արձակել իրենց ընկերներին: Նրանք վանկարկում էին, որ չեն ճանաչում ոչ նոր նշանակված Ստեփանոս պատրիարքին, ոչ էլ նրան հովանավորող ամիրաներին: Արտաքին գործոց նախարարը այս անգամ էլ խոստումներով կարողացավ ցրել ցուցարարներին, որին հետևեցին կտրուկ միջոցները: Պալատ կանչվեցին արհեստապետները, սկսվեցին բանտարկություններն ու խուզարկությունները: Դինեպան Իսկենդերը, պատժից խուսափելով, փախավ Օդեսա: Այլ վայրեր խույս տվեցին նաև ցույցի մյուս կազմակերպիչները: Աքսորվեցին Պողոս և Հովհաննես վարդապետները, Հակոբիկ Մանվելյանը, ոսկերիչ Անդրեասը, Գեորգ Տեվիթյանը, պասմաչի Պետրոսը, Հարթակի Հովհաննիսյանը:

Սակայն ընթացք առած իրադարձություններն այլևս կանգնեցնել հնարավոր չէր: Աստվածատուր պատրիարքի նշանակումից երկու ամիս անց, նույն 1841 թ., արհեստավորները նոր բողոքագիր հղեցին պալատ, ուր հայտնում էին, թե ամիրաների ստրուկը չեն: Եվ ահա նրանց խնդրանքով, արքունի հրովարտակով 1841 թ. դեկտեմբերի 12-ին ընտրվեց 27 հոգուց բաղկացած արհեստավոր հոգաբարձուների խումբ, և կարգվեց ազգային ելումտից տեսուչ, որոշվեց հսկողություն սահմանել պատրիարքական արկղի և նրա ծախսերի վրա, ըստ որում, ամիրաներից ստորագրություն վերցրին չխառնվել հիշյալ գործերին: 1841 թ. արհեստավորների տարած այս նշանակալի հաղթանակը փաստորեն «24-ի» խորհրդից հետո հաջորդ կարևոր փորձն էր ազգային գործերի կառավարումը մի քանի անձանց կամայականությունից ազատելու և դեմոկրատական հիմքերի վրա դնելու գործում:

Եվ այսուհանդերձ, որքան էլ արհեստավորների հաղթանակը բարոյական և քաղաքական բովանդակություն ուներ, առայժմ տնտեսական զորությունը դեռևս մնում էր ամիրաների ձեռքում: Արհեստավորները հարկադրված էին զիջել:

Պատրիարքարանի, գլխավոր ամիրաների, արհեստավորության ներկայացուցիչների ժողովը շուտով կրկին պաշտոնապես ազգի կառավարման գործը վստահեց ամիրաներին:

1844 թ. նոր պատրիարք է ընտրվում Զմյուռնիայի առաջնորդ Մատթեոս Զուխաջյանը, որի ջանքերով 1845 թ. նորից կարգի է բերվում փակված Սկյուտարի ճեմարանը, որը կառավարության կողմից վերածվել էր զինվորական հիվանդանոցի: 1846 թ. վերանորոգված ճեմարանը իր դռները բացեց 50 աշակերտների առաջ, իսկ վերատեսուչ նշանակվեց Հովհաննես Զամուռճյան Տերոյենցը:

Ճեմարանը դարձել էր մի տեսակ փորձության քար, և նրա բացումով կամ փակումով կարծես դրսևորվում էր երրորդ դասի մասնակցությունը ազգային գործերին: Ի դեպ, Մատթեոս պատրիարքը հաշվի է նստում «երեսնից խորհրդի» որոշումների հետ, ուր ընդգրկված էին նաև արհեստապետները, հանգամանք, որն արդեն ազգային ժողովի ստեղծման նախադուռն էր և նման կազմով ընդդիմադիր ամիրաներին կանգնեցնում էր փաստի առաջ: Զգալով իրադրության անշրջելիությունը դեպքերից առաջ անցնելու նախաձեռնությամբ, ամիրաներն այս անգամ արդեն իրենք դիմեցին Բ. Դուռ խնդրելով թույլատրել ընտրել ազգային պատգամավորական ժողով: 1847 թ. Մայր եկեղեցում գումարված մեծ ժողովում, որին մասնակցում էին ամիրաներ, արհեստապետներ և հոգևորականներ, ընթերցվեց արքունական հրամանը, ապա ընտրվեցին երկու ժողովներ՝ քաղաքական և հոգևոր՝ իրենց հատուկ պարտավորություններով: Քաղաքական ժողովի պարտքն էր զբաղվել ազգային կալվածքների հափշտակման, տերության հրամանների, քաղաքական վեճերի հարթման, հիվանդանոցների և դպրոցների հոգաբարձության, գավառներում փաշաների հարստությունների քննման խնդիրներով: Հոգևոր ժողովը պիտի կարգավորեր առաջնորդների ընտրության և փոփոխման, հոգևոր գործերի քննության, պսակադրության և ամուսնալուծության, եկեղեցական հարկերի հավաքման, գավառական առաջնորդների ու թեմական վիճակների ընտրության ու ղեկավարման հարցերը:

Առաջին հոգևոր ժողովը բաղկացած էր 14 գլխավոր հոգևորականներից, կարելի է ասել՝ Պոլսի հիմնական թաղերի առաջնորդներից և Երուսաղեմի վանքի փոխանորդից: Քաղաքական ժողովն ուներ 20 անդամ: Այնտեղ հավասար չափով ընդգրկված էին ամիրաներն ու արհեստավորության ներկայացուցիչները և Հակոբ Կրճիկյանը՝ որպես մտավորական ու ժողովի ատենադպիր՝ Լեոֆեթ հորջորջմամբ:

1847 թ. հիմնված Կոստանդնուպոլսի Ազգային ժողովը կարևոր փուլ էր արևմտահայության և նրա հասարակական կյանքի կենտրոն Կ. Պոլ-

սի հայ հանրության կառավարման գործը ժողովրդավարական հիմքերի վրա դնելու տեսակետից: Առաջին անգամ ընդհանուր քվեարկությամբ Ազգային ժողովում պետք է ընտրվեր պատրիարք: Քվեարկությամբ պետք է վերընտրվեին նաև ժողովների երեսփոխանները: Ուշագրավ էր նաև այն, որ լիովին տարանջատվում էին նախկինում բոլոր հարցերը միանձնյա լուծող պատրիարքի (իմա՝ պատրիարքարանի) և քաղաքական ժողովի պարտականությունները, այսինքն, յուրօրինակ պայմաններում տեղի էր ունենում եկեղեցու գործերի անջատումը աշխարհականից: 1847 թ. Ազգային ժողովի հիմնումը նաև լուրջ նախաքայլ էր դեպի 1860 թ. արևմտահայ սահմանադրությունը:

Կոստանդնուպոլսի հայոց կյանքում կարևոր միտում էր լուսավորչական և կաթոլիկ հայերի միասնության ձգտումը, որի լավագույն արտահայտությունը եղավ 1846 թ. հայ կաթոլիկ և լուսավորչական դավանանքի երիտասարդների միասնական ջանքերի շնորհիվ «Համազգայց ընկերության» հիմնումը: Ազգային միավորման գաղափարը ընդհանուրի բարօրության համար միասնաբար պայքարելու անհրաժեշտությունից բխող երևույթ էր, որտեղ մի կողմ պետք է դրվեին ժողովրդի ուժերը ջլատող դավանաբանական քաշքշուկները, որոնք հասել էին վտանգավոր չափերի և երբեմն էլ անհեթեթ դրսևորումների: Նշենք, որ Հռոմի կաթոլիկ եկեղեցու ջանքերով, ի վերջո, 1867 թ. Պապի դրածո Անտոն Հասունյանը կարգվեց Կոստանդնուպոլսի և Կիլիկիայի կաթոլիկ հայերի կաթողիկոս, որի մասին միայն ուշացումով իմացան նույնիսկ ամենանշանավոր կաթոլիկ հայերը, ինչպես Տյուզյաններն էին:

Հայ լուսավորչական-կաթոլիկ հակասությունները թշնամության էին վերածվել դեռևս դարի քսանական թվականներից, երբ եվրոպական ազդեցությունը Թուրքիայում մեծանալով՝ իր շրջանի մեջ էր առնում նաև քրիստոնյա ժողովուրդներին և, նրանց կաթոլիկական կամ բողոքական հավատի բերելով, փորձում էր ոչ միայն ուծացման ուղու վրա դնել այդ հավատափոխներին, այլև հակադրություն ստեղծել պետության և նվաճված ժողովուրդների միջև: Սուլթանական կառավարությունը մինչև 19-րդ դարի երեսնական թվականները բացարձակապես չէր ընդունում, բացի լուսավորչականներից, այլ հավատի պատկանող հայերի իրավունքները և ամեն ինչ անում էր դրանք արգելելու համար: Սուլթանը առիթը բաց չէր թողնում նաև կաթոլիկ հայերի հետ հաշվեհարդար տեսնելու համար: Եվ ահա 1827 թ. Նավարինի ճակատամարտում կրած պարտությունից և հունական ապստամբության տարինե-

ին իրեն չպաշտպանող եվրոպական պետությունների (Անգլիա, Ֆրանսիա) դեսպաններին Կոստանդնուպոլսից հեռացնելուց հետո նա որոշեց վրեժխնդիր լինել նաև այլադավաններից: Իր մոտ կանչելով հայոց պատրիարքին՝ Մահմուդ 2-րդը հրամայեց մեկ ամսվա ընթացքում մայրաքաղաքից աքսորել Ղալաթիայի բոլոր հայ կաթոլիկներին՝ իրենց ընտանիքներով, երեխաներով: Կարգադրեց տերության բոլոր հռոմեադավան կրոնավորներին թողնել տերության սահմանները և անցնել Եվրոպա: Կոստանդնուպոլսից չեն աքսորվում միայն այն ընտանիքները, որոնք ենթարկվում էին հայոց պատրիարքին:

Ձայնակցելով սուլթանի այն ցանկությանը, որ նա իր կայսրության մեջ, բացի լուսավորչականներից, չէր ուզում տեսնել այլադավանների, հայ լուսավորչական ամիրաները և պատրիարքները փորձում էին, կաթոլիկների հետ հաշտության եզրեր գտնելով, նրանց դարձի բերել: Այսպես, 1820 թ. հոկտեմբերին վեց կաթոլիկ աբբայական վարդապետներ և երեք վարդապետ Վիեննայի միաբանությունից, որոնց հետ նաև Ստեփանոս եպիսկոպոս Ավգերյանը, ներկայանում են Ենի գաբուում գտնվող Հարություն Պեզճյանի տունը և, Ա. Պերպերյանի բնորոշմամբ, կնքում են «ժողովի սահմանադրություն», որը կոչվեց «Հրավեր սիրո»[1]: Սակայն հաշտության այս տեքստերը դեռևս երկար տասնամյակներ բուռն չփոթություն ու վրդովմունք էին առաջացնում դավանանքի հողի վրա միմյանցից խորթացած միևնույն ազգի երկու հատվածների միջև:

Արհեստավորության, օրավարձով ապրող բեռնակիրների և առաջադեմ ազգային գործիչների պայքարն ընդդեմ հավատափոխության, նախ՝ կաթոլիկության, ապա՝ դարակեսերից աշխուժացած բողոքականության (ավետարանականության) հանուն հայոց առաքելական եկեղեցու միասնության պահպանման, պայքար էր ազգային միասնության համար, թեև դրանց դրսևորումները արտաքուստ կրում էին կրոնական անհանդուրժողականության բնույթ: Դավանափոխության հարցերով շահագրգռված անդրծովյան բողոքական միսիոներները Կոստանդնուպոլսի հայ և հույն հանրությունների մեջ բավական հաջողության էին հասել: 1839 թ. նրանք արդեն գիշերօթիկ դպրոցներ էին հիմնել Պերա և Պեպեք թաղերում, ուր բողոքականություն ընդունած հայ երեխաներին ձրիաբար սովորեցնում էին ֆրանսերեն, անգլերեն, թվաբանություն,

---

1 Պ ե ր պ ե ր յ ա ն Ա. նշվ. աշխ., էջ 161, 171:

աշխարհագրություն, բնական գիտություններ: Դպրոցներում հավատափոխության թույնով վարակված երեխաները, վերադառնալով տուն, ստիպում էին հավատափոխ լինել նաև ծնողներին: Բողոքականների առաջնորդները (առաջինը՝ Ստեփան Քերեստեճյան) կոչվեցին էֆենդի կամ «բրոդեսթան էֆենտիսի»:

Մատթեոս պատրիարքը հարկադրված էր հատուկ կոնդակով նզովել շուկաներում, պանդոկներում և ամենուր հայոց կրոնը ամբաստանող, արդեն կրոնափոխ եղած քահանա Վրթանես Նիկոմիդացուն, Գամավիշյան Պողոս և Հովսեփ եղբայրներին, երաժիշտ Աբիսողոմին, Ստեփան Քերեստեճյանին (Հակոբոս նախկին պատրիարքի եղբորը): Սակայն սուլթանը, անգլիական, ամերիկյան, պրուսական միջամտություններից ահաբեկված, ստիպված եղավ ճանաչել նաև հայ բողոքականների անջատ թեմը հայ լուսավորչական եկեղեցուց՝ մեկ տարի անց, Հակոբոս պատրիարքի օրոք, հատուկ հրովարտակով թեմի առաջնորդ նշանակելով հիշյալ՝ բանադրված Ստեփան Քերեստեճյանին: Իսկ մինչ այդ, իր մոտ կանչելով Մատթեոս պատրիարքին, մեծ վեզիրը նրան հասկացնել տվեց, որ բողոքական հայերի նկատմամբ պետք է մեղմ վարվել՝ նրան ստիպելով ողջույնի գնալ օտար դեսպանի մոտ:

Փոխադարձ մերձեցման և հոգևոր օգնության այն ձգտումը, որ միշտ նկատելի է եղել Վենետիկյան կաթոլիկ միաբանության և պոլսահայ հանրության միջև, հաճելի չէր ոչ Հռոմին և ոչ էլ Կոստանդնուպոլսի Ղալաթիա թաղում կենտրոնացված կաթոլիկական աբբայությանը («քոլեջականներ»): Այդ կապի և մտերմության դրսևորումները խզելու և լուսավորչականների ու կաթոլիկ հայերի միջև նոր պառակտում առաջացնելու մղումով, անշուշտ, Հռոմի գիտությամբ և Կ. Պոլսի աբբայության ջանքերով, 1848 թ. Կոստանդնուպոլսում լույս տեսավ մի գրքույկ, որում ամբաստանվում էր Վենետիկյան միաբանությունը՝ որպես հերձվածող և հերետիկոս, քանի որ իբր այն միայն առերես էր հավատարիմ Հռոմին, իսկ իրականում միաբան էր հայ լուսավորչական եկեղեցուն: Մեծ իրարանցում հանած այս գրքույկի լույս տեսնելուց հինգ ամիս անց հրապարակ ելավ արդեն Վենետիկյան միաբանության անունից տպված արդարագիրը, որում վերջինս հերքում էր իր կապերը հայ լուսավորչական եկեղեցու հետ՝ միաժամանակ այդ եկեղեցին հայտարարելով հերձվածող և հերետիկոսական: Պոլսահայ ամբողջ առաջադիմական միտքը խիստ հուզված էր այս երևույթից, որը սեպ էր խրում

հայ ժողովրդի շահերին մշտապես ծառայած և լուսավորական մեծ գործ կատարած միաբանության և լուսավորչական հայերի միջև:

Սոցիալ-քաղաքական և դավանաբանական հակասությունների այս լարված պայմաններում 1846 թ. ծնվեց վերոհիշյալ «Համազգյաց ընկերությունը», որի կազմակերպման գործում անմիջական մասնակցություն էին ունեցել նաև արևմտահայ ապագա մեծ բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, գրող, հրապարակախոս, հրատարակիչ Վարդան Հովսեփյանը, ապագա նշանակավոր պատմավեպերի հեղինակ Հովսեփ Շիշմանյանը (Մերենց), անձնավորություններ, որոնք մեծ չափով նպաստել են արևմտահայ մշակույթի և գաղափարախոսության զարգացման գործին:

«Համազգյաց ընկերությունը» բուրժուական ազգի կազմավորման իր պայքարը խոպանից չսկսեց: Սոցիալական նոր ուժերը, որոնք գործունեության ասպարեզ էին պահանջում, արդեն ստեղծել էին գաղափարական հիմքեր, որոնց առաջին նշանակալից պատվիրակը Կոստանդնուպոլսում լայն ակոս էր բացել դեռ 1840 թ. հանձին «Ազգաբար Բյուզանդյան» (1840–1843) թերթի հրատարակիչ-խմբագիր Խաչատուր Ոսկանյանի (1815–1895), մի հրապարակախոսի, որն իրոք փայլուն տաղանդ լինելով այդ ասպարեզում, միաժամանակ կրքոտ հայրենասեր էր, համարձակ և անզիջում իր միանգամայն անսովոր թվացող մտքերով, սկզբունքներով, և որի հրատարակած թերթի ճակատը զարդարում էին ժամանակի թեևավոր այն խոսքերը, թե «Ազգի մը լուսավորությունը գիտութենեն ու կրթութենեն առաջ կուգա»:

«Համազգյաց ընկերության» հիմնադիր հայտարարությունը լույս էր տեսել «Արշալույս Արարատյանի» 1846 թ. մարտի 17-ի (№257) համարում: Կազմակերպության յոթանասունվեց անդամ ստորագրել էին այդ մանիֆեստի տակ, որտեղ տասը առանձին կետերում շարադրվում էին նրա գործունեության կարևոր նպատակները: Հենց առաջին կետն ազդարարում էր կազմակերպիչների հիմնական ձգտումը. համազգային միասնություն հանուն ազգի միաձույլ կառուցվածքի: Հաջորդ կետերում շարադրվում էին ընկերության գործնական նպատակները. հայկական հին բնագրերի հրատարակումը, օտար գրքերի թարգմանությունն ու տարածումը, ազգի «մանչերի և դուստրերի» համար դպրոցների հիմնումը, պայքարը հողագործության զարգացման համար և այդ նպատակին ուղղված երիտասարդության վարժեցումը հիշյալ օգտակար աշխատանքին: Ծրագրում կար ժողովրդի անցյալի և ավանդույթ-

ների քննական ուսուցումը, հին ձեռագրերի և նյութական այլ արժեքների հավաքումն ու պահպանումը՝ դրանք ժողովրդի սեփականությունը դարձնելու համար, ուսումնասիրության նպատակով կենդանական աշխարհի և երկրագնդի բուսական աշխարհի հավաքածուների ստեղծումը, հայերին մյուս ժողովուրդների նվաճումներին ծանոթացնելը: «Համազգյացի» ծրագիրը, այսպիսով, զուտ լուսավորական էր, բայց հետադիմությունը տեսնում էր նոր ձևավորվող հարաբերությունների և գաղափարախոսության արշավը: Ուստի, լուսավորչական և կաթոլիկ ամիրայության պահպանողական ներկայացուցիչները՝ Անտոն Հասունյանի գլխավորությամբ, նրա դեմ ուղղեցին իրենց սլաքները:

Զգիմանալով բազմակողմ հարձակումներին՝ «Համազգյաց ընկերությունն» իր վերջո 1852 թ. կազմալուծվում է: Սակայն կազմակերպության հիմնադրույթները պոլսահայ հանրության և զարգացող նոր մտավորականության մեջ պահպանվեցին և փաստորեն ավելի գործնական ու կոնկրետ կերպարանքով արտացոլվեցին 1860 թ. Կոստանդնուպոլսում ստեղծված «Համազգյաց բարեգործական ընկերության» ծրագրերում, որի անդամներն էին արդեն ոչ միայն, դավանանքից անկախ, միացած անհատներն ու գործիչները, այլև որոշակիորեն ձևավորված արևմտահայ տարբեր քաղաքական ուղղությունների ներկայացուցիչները:

* * *

1852 թ. Կարապետ Ութուճյանը Կ. Պոլսում ստանձնեց «Մասիս» թերթի հրատարակիչ-խմբագրի պաշտոնը՝ այդպիսով հիմնելով արևմտահայ առաջին ազատ, մասնավոր թերթը, փաստորեն շարունակելով և խորացնելով նախորդ՝ 1846 թ. պատրիարքարանի կողմից հիմնված և 1849 թ. Մկրտիչ Աղաթոնի նախաձեռնությամբ պոլսահայ առաջադեմ լուսավորական մտավորականության օրգան դարձած «Հայաստան» թերթի ավանդույթները:

Հասարակական նոր հարաբերությունների զարգացման պրոցեսը, որն իրեն հատկապես զգացնել էր տալիս Բալկաններում, Փոքր Ասիայի ծովափնյա շրջանում և կայսրության մայրաքաղաքում, ժամանակաշրջանը հուզող նոր հիմնահարցերի պատասխաններ էր փնտրում: Այդ շրջանում, 40-ական թվականներին և 50-ականների սկզբներին, լույս տեսան առանձին աշխատություններ, որոնք դրանք լուծելու և առաջ մղելու հետաքրքիր, ինքնատիպ առաջարկություններ էին պարունա-

կում: Նման աշխատությունների թվում էին Ն. Զորայանի «Նկարագիր ազգային դաստիարակության» (Կ. Պոլիս, 1848), «Ընթերցասիրություն, կամ գիրք կարդալու միջոցով մտավորական մշակության հասնելու օգտակար խորհուրդներ» (Կ. Պոլիս, 1852) գրքերը, Հ. Կրճիկյանի, Գ. Աղաթոնի, Գ. Սթիմարաճյանի հեղինակությամբ լույս տեսած «Մետաքսաբանությունը» (Կ. Պոլիս, 1845), Սերովբե Վիչենյանի «Մանկատածությունը» (Կ. Պոլիս, 1844) և այլ աշխատություններ:

Կոստանդնուպոլսում դեռևս 19-րդ դարի առաջին կեսում հատուկ թափ ստացավ մասնագիտացված և աշխարհիկ դպրոցների հիմնման գործը: Առաջին մշտապես գործող դպրոցը Կոստանդնուպոլսի Ղալաթիա թաղամասում 1816 թ. կառուցված Խորենյան վարժարանն էր: Այնուհետև նրան հաջորդում են Լևոնյանը (1825), Պեզճյանը՝ Գում գաբու թաղամասում (1828), Սահակյան վարժարանը՝ Սամաթիա թաղամասում (1830), Պեզճյանը՝ Էյուպում (1832), Մեսրոպյանը՝ Կետիկ-փաշա թաղամասում (1832) և այլն: Հ. Պեզճյան ամիրան առաջինը Կոստանդնուպոլսում, Գում գաբու թաղամասում, հիմնեց աղջիկների վարժարան, ուր նրանք հատկապես մասնագիտանում էին ասեղնագործության մեջ: Նա նույնատիպ դպրոց հիմնեց նաև Պերա թաղամասում, 1826 թ.: Աղջիկների կրթության գործն ավելի առաջ գնաց 1830-ական թվականներին: Ճանիկ ամիրայի միջոցներով նույն Պերա թաղամասում աղջիկների համար 1830 թ. հիմնվեցին երկու նախակրթարաններ, իսկ Հ. Պեզճյան ամիրան 1834 թ. Գում գաբուի մայր եկեղեցուն կից հիմնեց աղջիկների Վարվարյան վարժարանը, ինչպես նաև տղաների Պողոսյան վարժարանը՝ արհեստանոցով: 1836 թ. Խաս-քյոյ թաղամասում Մկրտիչ Ճեզաիրլյանը և Հ. Նովրուզյանը հիմնեցին արդեն նշված Մեսրոպյան հայտնի վարժարանը, ուր ուսանում էին 600 աշակերտներ: Ընդհանուր թվով 19-րդ դարի 30–40-ական թվականներին Կոստանդնուպոլսի 30 հայ ծխական դպրոցների կողքին գործում էին 15 աշխարհիկ դպրոցներ, որոնցում սովորում էին մոտ 2000 աշակերտներ: Դրանց թվին պետք է ավելացնել բազմաքանակ այն դեռահասներին, որոնք կրթություն էին ստանում հարուստների կողմից ֆինանսավորվող մասնավոր վարժարաններում, որտեղ որպես ուսուցիչներ սովորաբար վարձվում էին Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների դպրոցներն ավարտած երիտասարդները:

Դպրոցական գործը Կոստանդնուպոլսում բավական լուրջ վերելք է ապրում 19-րդ դարի 50–60-ական թվականներին, իսկ 80-ական թվա-

կաններին արդեն եզակի չէին այն թաղական դպրոցները, որոնց շրջանավարտները, Կ. Պոլսից մեկնելով Եվրոպա, անարգել կարող էին ընդունվել այնտեղի ուսումնական բարձրագույն հիմնարկները: Ազգային վարչության հրապարակած վիճակագրական տվյալներով, 19-րդ դարի 60-ական թվականներին Կոստանդնուպոլսում գործում էին տղաների 34, աղջիկների 14 դպրոցներ, որոնցում համապատասխանաբար սովորում էին՝ 4.700 և 1.472 աշակերտներ: Այդ դպրոցներում դասավանդում էին 142 մանկավարժներ, որոնցից 9-ը՝ կանայք: Կանանց մասնակցությունը համընդհանուր կրթական գործին նույնպես նշանավորում էր ժողովրդի առաջադիմությունը լուսավորության մեջ:

19-րդ դարի 40–50-ական թվականներին լուսավորական շարժման ընդհանուր ծավալմանը զուգընթաց ավելանում է նաև այն դպրոցների թիվը, որոնք հովանավորվում էին բարեգործական ընկերությունների կողմից: Բացի դպրոցներից, այդ ընկերությունները հիմնում էին նաև լուսավորական այլ օջախներ, ինչպես օրինակ՝ գրադարաններ, հրատարակում էին թերթեր, գրքեր, հովանավորում էին նոր զարգացող թատերական արվեստը և այլն:

Արևմտահայ ժողովրդի լուսավորության նպատակով կազմակերպված ընկերություններ երևան են եկել դեռ 18-րդ դարի վերջերից: 1781 թ. Կոստանդնուպոլսի Ղալաթիա թաղամասում հիմնվեց «Լուսավորչաց եղբայրությունը», որի միջոցով 1803 թ. բացվեց տղաների դպրոց: 1810 թ. Կոստանդնուպոլսում գործել սկսեց հարուստ կաթոլիկ հայերի նշանավոր «Արշարունյաց ընկերությունը», որի նպատակն էր հրատարակել արժեքավոր գրքեր և պարբերականներ: 1841 թ. հիմնված «Ուսումնական ընկերության» ծրագրերի մեջ մտնում էր հայերեն և թարգմանական գրքերի հրատարակությունը՝ «Ընտիր գրաբարով և աշխարհաբարով»: 1846 թ. Կոստանդնուպոլսում իրենց գործունեությունը ծավալեցին «Արամյան», «Նարեկյան» ընկերությունները: «Արամյան ընկերության» միջոցներով 1846 թ. համալրվեց նաև նույնանուն թատերական խումբը՝ Հ. Գասպարյանի գլխավորությամբ, որը փաստորեն հայկական հին թատերական արվեստի ավանդույթների վերականգնումն էր՝ մնջախաղերի, լարախաղացության ուղեկցությամբ, կարճ ժանրի դրամատիկական երկերի բեմադրությամբ: 1853 թ. բացված «Վերծանության թանգարան» – գրադարանի խնդիրն էր ոչ միայն մատչելի գներով հայերի մեջ տարածել օգտակար և նշանակալից ստեղծագոր-

ծությունները, այլև բարձրացնել նրանց լեզվական գիտելիքների մակարդակը, ինչպես նաև սեր առաջացնել արհեստների նկատմամբ:

Լուսավորության առաջընթացը սերտորեն կապված էր հրատարակչական գործի ծավալման հետ. նրա հիմնական կենտրոնը նույնպես Կոստանդնուպոլիսն էր, ուր դեռ 1585 թ. Աբգար Թոխաթեցու կողմից բացվել էր առաջին հայկական տպարանը (հրեականը՝ 1494 թ., հունականը՝ 1697 թ.): 18-րդ դարի ընթացքում և մինչև 19-րդ դարի սկիզբը Կոստանդնուպոլսում պարբերաբար գործել են 25 հայկական տպարաններ:

Հրատարակչական գործի առանձին հայ ներկայացուցիչներ կարևոր ծառայություն են մատուցել նաև թուրքական տպագրական գործին: Օրինակ, տոհմիկ հրատարակիչներ Արապյանների տպարանում է լույս տեսել թուրքական անդրանիկ «Թագվիմ-ի վագայի» (1831–1865) թերթը: Նրա տպագրական մայր տառերի հեղինակն էր Գալուստ Արապյանը, իսկ Հ. Մյուհենտիսյանը, որն ավելի էր կատարելագործել պոլիգրաֆիկական արվեստը՝ Կոստանդնուպոլսում, 50–60-ական թվականներին, կարծես, իր ձեռքն էր վերցրել թուրքական տպագրության էստաֆետը:

Սուլթանի հատուկ թույլտվությամբ, թուրքական անդրանիկ թերթի լույս ընծայման տասնմեկերորդ համարից հետո, ժամանակավորապես դրա հայերեն տարբերակը հանդիսացող «Թագվիմ-ի վագայի – Լրո գիր» թերթի հրապարակ գալը 1832 թ. հունվարից ձևական էր միայն, քանի որ իրականում պոլսահայերի համար դեռևս դարասկզբից Վենետիկում, «Արշարունյաց ընկերության» 46 անդամների ծախսերով լույս էին տեսնում պարբերականներ («Տարեգրություն»՝ 1800–1802, «Եղանակ Բյուզանդյան»՝ 1803–1820, «Դիտակ Բյուզանդյան»՝ 1812–1816), որոնք հրապարակ գալուց հետո առաքվում էին Կ. Պոլիս՝ այնտեղի իրենց հատուկ ընթերցողներին: Հատկանշական է, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը օսմանյան կայսրությունում լույս տեսնող հայերեն թերթերի ընդհանուր քանակից (436) ավելի քան երեք հարյուրը (327) բաժին էր ընկնում Կոստանդնուպոլսին, 38-ը լույս էր տեսնում Զմյուռնիայում, իսկ 71-ը՝ Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքներում և Թուրքիայի հայաշատ այլ վայրերում:

Կոստանդնուպոլսում հատուկ դիրք ունեին հայ բժիշկները, որոնց մեծ մասը կրթություն էր ստացել Իտալիայում ու Ֆրանսիայում և Կոստանդնուպոլսում զբաղված էր կամ պետական բժշկական ուսումնարա-

նում և Ազգային հիվանդանոցում, կամ մասնավոր պրակտիկայով, ընդհուպ մինչև սուլթանների, նրանց մայրերի և պալատի բարձրաստիճան պաշտոնյաների՝ մեծ վեզիրների ու նախարարների հատուկ բժիշկները լինելու պարտականությունները: Դեռ 18-րդ դարում Կոստանդնուպոլսում գործում էր երկու ազգային հիվանդանոց՝ Պերա և Նարլը գաբու թաղամասերում: Մինչ այդ գործում էր միայն զինվորական լազարեթը՝ երեք բժշկով: Կ. Պոլսի հիվանդանոցները պահվում էին լուսավորչական ամիրաների նվիրատվություններով, իսկ երրորդ հիվանդանոցի խնամքը իրենց վրա էին վերցրել կաթոլիկ հայ ամիրաները: 1832 թ. ծնվեց նոր հիվանդանոց կառուցելու գաղափարը, որի նախաձեռնողը և հիմնական ֆինանսավորողն, ինչպես նշեցինք, Հարությունն ամիրա Պեզճյանն էր: 1834 թ. ավարտված «Սուրբ փրկչի Ազգային հիվանդանոցն» ուներ 350 մահճակալ[1]:

Անվանի բժիշկների մեջ կային նաև հասարակական նշանավոր գործիչներ ինչպես Սերովբե Վիչենյանը, Նահապետ Ռուսինյանը: Ն. Ռուսինյանն աշխատել է նաև թուրքական հիմնարկներում՝ որպես ֆրանսերենի թարգմանիչ: Փարիզը Ն. Ռուսինյանի վրա թողել էր անջնջելի տպավորություն ոչ միայն այդ քաղաքում իշխող մտքի անսովոր ազատության առկայությամբ, այլ նաև հեղափոխական ուժերի հաղթական պայքարով: 1848 թվականին Փարիզում տեղի ունեցած բուռն իրադարձություններում Ն. Ռուսինյանի մեջ ձևավորվեց իրականությանը խանգարող երևույթների վերացման գաղափարը: Փարիզում նա գրեց «Ուղղախոսությունը», «Տարեցույցը», «Գեղագրությունը», որոնք պոլսահայ կյանքի հակասություններով լեցուն իրականության մեջ երևույթ դարձան, մանավանդ՝ «Ուղղախոսությունը»:

19-րդ դարի կեսերին Կոստանդնուպոլսում ծայր առավ գրաբարյան և հակագրաբարյան պայքարը, որը փաստորեն հայ պահպանողականության և առաջադիմական ուժերի պայքար էր նշանակում: Ն. Ռուսինյանի «Ուղղախոսությունն» իր լեզվական նորարարական խոցելի կողմերով հանդերձ, կյանքում իր տեղը հաստատած արևմտահայ աշխարհաբար լեզվի քերականական կանոնների ստեղծման մի փորձ էր, որը հենց իր այդ առաքելությամբ հարուցեց պահպանողականության վրդովմունքը: Ինչևէ, համարյա բանադրված բժիշկ-փիլիսոփա-տեսա-

---

1 Արևմտահայ բժիշկների մասին տե՛ս Оганесян Л. А. История медицины в Армении, Ереван, 1947, աշխատությունը:

բանին շատ թանկ նստեց քաղաքական պայքարը հնի դեմ: Եղավ ժամանակ, որ հոգեկան ծանր ապրումների մեջ նա իրեն լքված ու միայնակ զգաց, թեև որպես բժիշկ մեծ համբավ վայելելով, օգտվում էր նաև բարձր հովանավորությունից (նա արտաքին գործոց նախարար Ֆուադ Կեչեղջիի անձնական բժիշկն էր): Բարեկամ-համախոհների կողմից նա այդ ծանր օրերին մեծ օգնություն ստացավ՝ ընտրվելով Սերովբե Վիչենյանի հրատարակած ֆրանսերեն բժշկական հանդեսի կոլեգիայի անդամ, միաժամանակ կարգվելով Կոստանդնուպոլսի զինվորական հոսպիտալի բժիշկ:

Հայ պատմագիտության մեջ հաճախ Ն. Ռուսինյանին է վերագրվում արևմտահայ ժողովրդի կառավարման գործի ավելի կատարյալ, քան 1847 թ. Ազգային ժողովինն էր, կանոնադրության անվանակչումը՝ «Սահմանադրություն»: Սակայն սահմանադրական շարժման նշանավոր տեսաբան և աչքի ընկնող գործիչ Գրիգոր Օտյանը այս հարցում պարզաբանում է մտցնում: «Անցյալ շաբթու ատենադպիր էֆ-ին ամենուս սիրելի և ինծի համար մասնավորապես կսկծալի անուն մը հիշեր է, Պալյան Նիկողոս աղային անունը,– գրում է Գ. Օտյանը:– Այդ անձը որուն կորուստը դեռ շատ ժամանակ պիտի ողբանք, առաջին անգամ հղացած է Սահմանադրության գաղափարը, ինչպես ատենադպիր էֆենդին առաջին անդամ ժողովի մեջ հայտներ է, ինչպես ատենով ես ալ «Մեղուի» մեջ հրատարակած եմ: Այլ սխալ է, թե ես ալ այն միջոցին համավաստակ գտնված եմ իրեն: Այն ժամանակ գրեթե չէի ճանչեր Նիկողոս աղան: Անկե քիչ մը ետքը ծանոթացա ու միանգամայն ծանոթացա նաև Սահմանադրության ծրագիրին որու խորհրդակից ու վաստակակից գտնված է միայն Ռուսինյան էֆենդին»[1]:

* * *

Բնականաբար, պոլսահայ լուսավորիչները որպես իրենց հայացքների տարածման հանգրվան ընտրել էին ժամանակի մամուլը՝ սկսած 1846 թ. հունիսից մտավորականության դրդմամբ և պատրիարքի ջանքերով հիմնված «Հայաստան» թերթից, որին սկզբում որպես խմբագիրներ կարգվեցին պահպանողական Հովաննես Զամուռճյանը (1801–1888) և ժամանակի ամենակրթված ու առաջադեմ երիտասարդներից

---

1 Օտյան Գ. Սահմանադրական խոսքեր ու ճառեր, դամբանականներ, մահերու առթիվ գրածներ: Առաջաբանը՝ Հրանդի (Կյուրճյանի), հրատարակիչ՝ Մ. Կաղմարարյան, Կ. Պոլիս, 1910, էջ 56, 42–48:

մեկը՝ Մկրտիչ Աղաթոնը (1818–1890): Սակայն երկու հակադիր ուղղություններ դավանողները երկար կողք-կողքի հարատևել չկարողացան, և ահա 1848 թ. վերջերին տեղի ունեցած պառակտման հետևանքով առաջին խմբագիր Հ. Զամուռճյանը ժամանակավորապես հեռացավ ասպարեզից՝ տեղը զիջելով Մ. Աղաթոնին, որը 1849 թ. հունվարի 1-ից «ի դիմաց ազգի վերատեսուչ», իսկ 1849 թ. հուլիսի 2-ից՝ «Հրատարակիչ լրագրիս, Մկրտիչ Աղաթոն» ստորագրությամբ փաստորեն, ինչպես նշեցինք, դրեց ազատ և մասնավոր պարբերականի սկիզբը, իր շուրջը հավաքելով եվրոպական կրթություն ստացած և Կոստանդնուպոլիս վերադարձած համախոհ երիտասարդների մի մեծ խումբ, որոնք բոլորը պատրաստակամություն էին հայտնել «ձրիաբար» աշխատակցել թերթին: Դրանք էին՝ Սերովբե Վիչենյանը, Հակոբ Կրճիկյանը, Հակոբ Մելիքյանը, Մկրտիչ Մոմճյանը, Գրիգոր Աղաթոնը, Գևորգ Սթիմարաճյանը, Պողոս Նիկողոսյանը, Միքայել Աղաթոնը: Բոլորի նպատակը նույնն էր. նպաստել հայ ժողովրդի լուսավորության գործին՝ եվրոպական առաջավոր նվաճումները յուրացնելու, առևտրի, գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ եվրոպական մակարդակին հասնելու, ազգային ու բարոյական ինքնուրույն նկարագիր հաստատելու միջոցով:

1840–50-ական թվականներին արևմտահայ լուսավորիչների շարքում փայլատակում է Ն. Զորայանի անունը (1821–1858), որը ազգի կամ ժողովրդի նյութական ու մտավոր զարգացման միջոցը տեսնում էր ուժեղ և մեծահարուստ մարդկանց միության մեջ: Նրանք, իրենց ունեցվածքի մի մասը ներդնելով ազգօգուտ նպատակների մեջ, հավաքում են հսկայական գումարներ, դրանով ստեղծում տնտեսական այն հիմքը, որը խավարի, հետևապես նաև աղքատության մեջ խարխափող ժողովրդին կարող է դեպի ապահով կյանք առաջորդել: Եթե լուսավորության հասնելու նախապայմանը հարստությունն էր, ապա ընդհանուր բարեկեցության նախապայմանը լուսավորվելն էր: Եթե աղքատության մեջ տառապող սևամորթ աֆրիկացուն կրթես, նա կբարեփոխվի անճանաչելիորեն և իր կենցաղով չի տարբերվի քաղաքակրթված անգլիացուց: Համոզված համընդհանուր լուսավորության անհրաժեշտության իր փայփայած գաղափարներում՝ նա մշակում է մատաղ սերնդի դաստիարակության մի ամբողջ համակարգ՝ հենված Ժան-Ժակ Ռուսոյի և ընդհանրապես եվրոպական առաջադիմական մանկավարժության տեսական ու գործնական փորձի վրա: Ն. Զորայանի հայացքները մանկավարժության, ժողովրդի լուսավորության, ակտիվ հասարա-

կական անհատների դաստիարակության, տնտեսագիտության, պետական մեխանիզմի ամրացման, անձի և գույքի անձեռնմխելիության, մասնավոր սեփականատիրական հասարակարգի անհրաժեշտության, պետության սեփական զինվածության և այդ ճանապարհով անկախության հասնելու ու այլ սկզբունքների մասին արտացոլվել են ժամանակի պարբերականներում և առանձին մենագրություններում:

Ն. Զորայանի հետ պոլսահայ գաղափարական պայքար մուտք գործած մտավորականների խումբը, թեև չհասնելով նրա ընդգրկումների բազմակողմանիությանն ու խորությանը, սկսեց հրապարակ գալ տիրող իրադրությունը փոխելու գործնական ծրագրերով յուրաքանչյուրն իր կարողությունների սահմաններում փորձելով իր լուման դնել ազգօգուտ գործում:

Դրանց մեջ 19-րդ դարի 40-ական թվականների վերջերին իր ուրույն տեղն ուներ Գրիգոր Աղաթոնը (1828–1868), հետագայում նշանավոր քաղաքական դեմք և պետական գործիչ: 1868 թ. նա կարգվեց երկրի հասարակական կառույցների նախարար, 1848 թ. իր կողմից հիմնված ագրարային դպրոցի տեսուչն էր, ուր որպես դասախոսներ ընդգրկված էին ժամանակի արևմտահայ գրեթե բոլոր խոշոր առաջադեմ գործիչները, այնտեղ սովորում էին հայ խոստումնալից պատանիներ: Գր. Աղաթոնի ելույթները Կ. Պոլսի պարբերականներում և առանձին գրքով վերաբերում էին գյուղատնտեսության կարևորությանը յուրաքանչյուր պետության տնտեսության կյանքում, առաջ էին քաշում Թուրքիայում եվրոպական հողամշակման նորագույն մեթոդների և տեխնիկայի կիրառման հարցեր:

Քառասունական թվականների իր հրապարակային ելույթներով արևմտահայ առաջադեմ մտքի պատմության մեջ նշանակալից տեղ էր գրավում Սերովբե Վիչենյանը:

Հարուստ առևտրական Վիչեն աղայի որդին (1815–1878), որի բնատուր ընդունակությունները զարգացնելու համար հայրը ոչինչ չէր խնայում, նախ ուսման մեկնեց Փարիզ (1834), ապա Պիզայի համալսարան: Սրանով էլ չբավարարվելով, մանկուց բազմաթիվ լեզուներ իմացող ապագա բժիշկը մեկնում է Անգլիա և Իտալիայի մյուս քաղաքները այդտեղի համալսարաններում լսելու իրեն անհրաժեշտ դասախոսությունները հետաքրքրող առարկաների շուրջ: Կատարյալ ուսումնասիրության արժեքը եղավ այն, որ Ս. Վիչենյանը Կոստանդնուպոլսում դարձավ Բարձրագույն բժշկական ուսումնարանի առաջին և մշտական

դասախոսներից մեկը, 1849 թ. հրավիրվեց Կոստանդնուպոլսում հիմնադրած ֆրանսերեն բժշկական հանդեսի խմբագիր (Gazette médicale d'Orient), որը խմբագրեց մինչև 1852 թ., եղավ Կոստանդնուպոլսում ստեղծվող բժշկական ընկերության ձեռնարկողներից մեկը, 1844 թ. հրատարակեց «Մանկատածություն» տեսական աշխատությունը՝ հիմնված Պլատոնի, Լոկկի, Ռուսոյի եզրահանգումների և ժամանակակից մանկավարժական մտքի նվաճումների վրա: Մի քանի հրատարակություն ունեցավ նրա՝ 1851 թ. լույս տեսած «Բարոյական սկզբունքներ» աշխատությունը, իսկ նրա անունը, որպես ժամանակի լավագույն բժիշկներից մեկի, տեղ է գտել Վալերդյի հրատարակած բառարանում[1]:

Իր ժամանակի Կ. Պոլսի պարբերական մամուլում Սերվիչենը (այս անվամբ Ս. Վիչենյանը լայնորեն հայտնի էր ժամանակակիցներին), հաճախ հանդես էր գալիս ազգի անհապաղ միավորման ծրագրով: Կարևորելով հայ ժողովրդի կողմից իր անցյալ ու ներկա արժանիքները գնահատել կարողանալու հանգամանքը՝ Սերվիչենը նշանակություն չէր տալիս տարբեր դավանանքների առկայությանը և գտնում էր, որ դա չի խանգարում նրան մի ազգ և մի ժողովուրդ կոչվելու:

Անցյալ դարի 40–50-ական թվականների պոլսահայ հասարակական կյանքի վերափոխմանն իր լուման ներդրած մտավորականներից էր Գևորգ Սթիմարաճյանը (1821–1895): 1841 թ. Մուստաֆա Ռեշիդի հետ Փարիզ մեկնելով որպես թարգման՝ նա դեսպանատան աշխատանքներին զուգընթաց ավարտում է տեղի՝ Կրինյոնի երկրագործական վարժարանը: Սթիմարաճյանը տիրապետում էր բազմաթիվ օտար լեզուների, մոտ կապեր ուներ օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում թուրքական 1878 թ. սահմանադրության նախաձեռնող Միդհատ փաշայի հետ: Ազգը լուսավորելու՝ Սթիմարաճյանի նշած ուղին ուներ յուրահատկություններ, որոնք արտացոլվում էին «Հայաստան» և «Մասիս» թերթերում տպած իր հոդվածներում: Դրանցից մեկում, օրինակ, նա զարգացնում էր այն միտքը, թե նախքան ժողովրդին կրթելը, անհրաժեշտ է նրան ուտելու հաց և հագնելու շոր տալ: Իսկ դրանից էլ առաջ անհրաժեշտ էր գտնում ետ բերել գյուղը լքած և օտար քաղաքներում թափառող բյուրավոր պանդուխտներին, որպեսզի նրանց աշխատանքով չենացվի գյուղատնտեսությունը: Նա հայրենասիրական քայլի էր կոչում վանականներին, հորդորում էր իրենց լայնածավալ հո-

---

1 Оганесян Л. А. Նշվ. աշխ., Սերվիչենին նվիրված բաժինը:

դատարածությունները տալ բանիմաց ամիրաներին կամ ընկերություններին, և դրանք յուրատեսակ երկրագործական դպրոցներ դարձնելով՝ օրինակ տալ շրջակայքի գյուղացիությանը:

Արևմտահայ լիբերալների պլանները ընդամենը երազներ էին: Թուրքական պետության ընդհանուր կառուցվածքը, տնտեսական հետամնացությունն ու դարակեսին օրավուր ուժեղացող գաղութացման պրոցեսը, տիրող կրոնական մոլեռանդությունն ու ազգային խտրականության ուժեղացող գործոնը անհաղթահարելի խոչընդոտներ էին ընդհանուր առաջընթացի համար:

* * *

Սահմանադրական շարժումը ստեղծեց նաև իր տեսաբաններին, որոնցից ամենից աչքի ընկնողը և գիտակը այդ հարցերում Գրիգոր Օտյանն էր, հետագայում՝ 1876 թ. թուրքական սահմանադրության նախաձեռնող մեծ վեզիր Միդհատի մերձավորագույն խորհրդատուն և փաստորեն թուրքական սահմանադրության տեքստի համահեղինակը:

Գրիգոր Օտյանը (1834–1887) երկրորդ սերնդի ներկայացուցիչներից էր Օտյանների այն գերդաստանի, որը փայլեց նշանավոր անուններով, և որոնք մինչև դարավերջի արհավիրքները ապրեցին և գործեցին Կոստանդնուպոլսում՝ իրենց լուրջ ներդրումն ունենալով պոլսահայ հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքում:

Գր. Օտյանի քաղաքական հայացքների հասունացման ժամանակը համընկավ սահմանադրական բուռն տարուբերումների շրջանին, որի ընթացքում նա շփվեց ու մտերմացավ պատմական այդ կարևոր իրադարձության մյուս ջատագովների՝ Ն. Պալյանի, Ն. Ռուսինյանի, Բարունակ բեյի, Գր. Աղաթոնի, Մ. Պեշիկթաշլյանի հետ:

Շուտով Գր. Օտյանն իր մաշկի վրա զգաց համիդյան սահմանադրական խաղերի վտանգը, երբ ընդամենը տարի ու կես հետո սուլթանը ոչ միայն փակեց կաղեկաղ ընթացող թուրքական սահմանադրական ժողովը, այլև բացարձակ վտանգի տակ դրեց նրա ստեղծողների ու համակրողների կյանքը: Գր. Օտյանը ստիպված եղավ անցնել Փարիզ, որտեղ և մահացավ ու թաղվեց Պեր-Լաշեզում, 1887 թ.:

Արևմտահայ սահմանադրության կամ ազգային կառավարման համար անհրաժեշտ պառլամենտարիզմի սկզբունքները պոլսահայ լիբերալների և Գր. Օտյանի համար այն հիմնաշենքն էին, որի վրա պիտի ամրապնդվեր զարգացող նոր սոցիալական ուժերի՝ առևտրաարհեստա-

վորական բուրժուազիայի իշխանությունը: Այս ելակետից դիտելով իր հիմնական նպատակը՝ Գր. Օտյանը բոլոր ելույթներում, հատկապես 1856 թ. Կ. Պոլսում հաստատված «Մեղվի» էջերում, մինչև 1860 թ. տեսականորեն արևմտահայության դիտակցությանն էր հասցնում այն միտքը, թե յուրաքանչյուր քաղաքակրթված ժողովուրդ պիտի կառավարվի կայուն գործող օրենսդրությամբ, որի մարմնավորողը սահմանադրական ժողովն էր: Նա համոզված էր, որ հայերը նույնպես հասունացել են կառավարման նման կարգի համար, ուստի գոյություն ունեցող և գործող պատրիարքաամիրայական վարչաձևերը այլևս չեն կարող բավարարել այսօրվա պահանջները: Դեռևս հեռու 1880-ական թվականներին ծայր առած զինված ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունից և թուրքական պետականության նկատմամբ գրավելով հաշտվողական դիրք՝ Գր. Օտյանը 1860-ական թվականներին գոհ էր սահմանադրական ժողովի հաստատման փաստից և նրա գործունեությունից:

Տարիների փորձություններից հետո միայն Գր. Օտյանը պիտի հրաժարվեր իր բարեհոգությունից և տարագրության մեջ, 1880-ին գրեր, թե «Թուրք կառավարությունը երդում ըրած է ջնջել հայերը և եթե այս բանս ի գլուխ չէ ելած, թերևս Ռուսիո շնորհիվ, որուն վերջին հաջողությունները՝ այդ բնաջնջման գործիք եղող քրդերուն հոգվույն մեջ թողացուցած են փրկարար երկյուղ մը, որ զայնս եթե ոչ ավելի բարեխիղճ, դեթ ավելի շրջահայաց կընե»[1]:

Այլ հույսեր էր կապում սահմանադրական ժողովի հաստատման հետ արևմտահայ դեմոկրատիան, որը, հենվելով նավահանգիստների օրավարձով ապրող բանվոր-բեռնակիրների և արհեստավորության ստվար խավերի վրա, մտադիր էր օրինական և սահմանադրական իշխանության միջոցով սանձ դնել գավառական յուրային մեծահարուստների, իրենց պարտականությունները մոռացած և իրավունքները չարաշահող հոգևորականության ներկայացուցիչների վրա՝ լիբերալ-ռեֆորմիստների նման այնքան էլ չաշխատելով իշխանության ղեկն իրենց ձեռքը վերցնել: Այս հոսանքի ամենակարկառուն ներկայացուցիչը Կ. Պոլսում, համենայն դեպս մինչև 19-րդ դարի 60-ական թվականների կեսերը, երբ մամուլի նկատմամբ սկսված հալածանքների հետևանքով դադարեց նրա հրատարակած «Մեղու» հանդեսը, Հարություն Սվաճյանն էր

---

1 Օտյան Գր., «Տետրակ», 1880: Տե՛ս «Հայաստան», 1891, № 15:

(1831–1878) և նրան հարող, հիմնականում հայատառ թուրքերենով հրատարակվող իր պարբերականներում ելույթ ունեցող Կարապետ Փանոսյանը (1826–1905):

Մոտ վեց տարի տևեց պայքարը Սահմանադրության հռչակման համար, ըստ որում Կ. Պոլսում գործող Ազգային ժողովը դարձել էր փորձության այն հիմնաքարը, որը խոչընդոտում էր սահմանադրության հռչակմանը:

Վերջապես, պոլսահայ սահմանադրական բուրժուազիայի պարագլուխները 1860 թ. մայիսի 24-ին ընդհանուր ժողով են գումարում, ուր բոլոր նշանավոր ամիրաների, բարձրաստիճան հոգևորականների, արհեստավորության ներկայացուցիչների ու բազմության ներկայությամբ կարդում ու վավերացնում են սահմանադրության 150 կետից բաղկացած տեքստը, որը լիբերալ մամուլը գնահատեց որպես «Հայկական տարեգրության մեջ ոսկեղեն տառերով նշանակելու արժանի օր մը»[1]:

Հանդիսավոր արարողությունը, որը բաց է անում պատրիարքը, տևում է մեկ ժամից ավելի. այդ ընթացքում կետ առ կետ ընթերցվում է սահմանադրության տեքստը, այնուհետև, մինչև սահմանադրական օրենքի համաձայն երեսփոխանների և ընդհանուր, քաղաքական ու կրոնական ժողովների ընտրությունները, կազմվում են 12 հոգուց բաղկացած ժամանակավոր քաղաքական և կրոնական ժողովներ, որոնց կոչումն էր «ազգի գործերը առայժմ երեսի վրա չթողնել»: Նույն ժողովում, ըստ սահմանադրության կանոնների, որոշվում է ընտրել ազգային գործերը կառավարելու գործադիր հիմնարկներ, որոնք էին. ազգային ընդհանուր ժողովը՝ ատենապետի գլխավորությամբ, հանձին քաղաքական ժողովի, կրոնական ժողովի և վարչությանը ենթակա առանձին խորհուրդների՝ ուսումնական, տնտեսական, դատաստանական, ելևմտական: Ապա գալիս էին Կենտրոնական վարչությանը ենթակա թաղային խորհուրդները, Ազգային դիվանատունը, գավառների համար՝ գավառական վարչությունները՝ իրենց նախագահով և նույնանման խորհուրդներով:

Սահմանադրական ժողովին վերապահված չէր ժողովրդի իրավական և քաղաքական կացության, դրա վերաբերյալ օրենքների հրատարակման, գավառական հարստահարությունների կանխման, ազգային խտրականության և կեղեքումների վերացման մասին կանոնադրական

1 «Մասիս», 1860, № 493 (26-ը մայիսի):

իրավունք ունենալը, քանի որ այդ բոլորը թուրքական պետականության առանձնաշնորհն էին:

Մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը մեծագույն դժվարություններ հաղթահարելով՝ դործող սահմանադրական ժողովը փորձում էր դեմոկրատական հիմունքներով իր վրա վերցնել ազգային լուսավորության, մշակույթի, կրոնական միասնության, ազգային եկամուտների, ժողովրդի բուժման, ներքին խավերի սոցիալական վիճակի բարելավման հարցերը, տպարանների ու մամուլի, ազգային հիվանդանոցների, մտավորականության նոր սերնդի պատրաստման բարդ խնդիրները:

Թուրքական կառավարությունը ուշի-ուշով հետևում էր Վանի, Մուշի, Կարինի և Կ. Պոլսում կենտրոնացվող գաղափարական խմբումներին և, արևմտահայ հետադիմությանը վահան դարձրած, հարմար առիթի էր սպասում սահմանադրական ժողովի նշանակությունը զրոյի հասցնելու համար: Օգտվելով որոշ սկզբունքային հարցերում լիբերալների և դեմոկրատների միջև ծագած տարաձայնություններից, ստեղծելով նման առիթ, (հատկապես «ներսեն» և «դուրսեն» պայքարը՝ Երուսաղեմի նոր պատրիարք ընտրելու կապակցությամբ), 1861 թ. հայ պահպանողականությունը «Երևակի» խմբագիր Հ. Զամուռճյանի գլխավորությամբ դրոհի անցավ սահմանադրության դեմ՝ պնդելով, որ այն օրինական չէ, քանի որ հաստատված չէ պետության կողմից: Գաղափարական դավադրություն էր «Երևակում» արտահայտված այն միտքը, թե Սահմանադրական ժողովը «պետություն է պետության մեջ»: Սահմանադրության դեմ ծավալված պայքարում ջլատելով իրենց ուժերը՝ դեմոկրատներն ու լիբերալները տարանջատվեցին անվերջանալիորեն ձգվող պայքարում:

Դեպքերին աչալուրջ հետևող և սահմանադրությունն իրենը համարող ժողովուրդը 1861 թ. օգոստոսի 22-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի շուրջը հավաքված՝ սկսեց մեծ աղմուկով ու վրդովմունքով պահանջել պատրիարքի հեռացումը, որը կատարում է կառավարության կամքը: Նույն ժամանակ զգոն հակասահմանադրականների հրավերով, անշուշտ, նախօրոք պայմանավորված, պատրիարքարան էին ժամանում թուրքական կառավարության ներկայացուցիչները՝ ոստիկանության հրամանատար Սելիմը՝ բազմաթիվ զինվորներով, ոստիկանության տեսուչը, Բ. Դռան ներկայացուցիչ Խուսրև փաշան, որոնք, ուժով ցրելով ժողովրդին, պատրիարքարան են հրավիրում վաղօրոք կեղծ հրավիրատոմսեր ունեցող հակասահմանադրականներին և տեղ ժամանած պատ-

րիարքի հետ փակվելով պատրիարքարանում, որի դռանը կարգվեցին թուրք պահակներ, նստեցին խորհրդակցության. դրա արդյունքը եղավ սահմանադրության տեքստը պետության վերահսկողությամբ «ազգի» և պետության կողմից ընտրված հանձնաժողովների միջոցով վերաքննության ենթարկելը:

Վերջապես, ըստ 1863 թ. հրապարակ հանված նոր տեքստի, հատուկ շեշտվում էր կենտրոնական վարչության կախվածությունը ընդհանուր ժողովից: Կենտրոնական վարչության քաղաքական ժողովի պատգամավորների թիվը քսան հոգուց հասցվում էր տասներկուսի, ըստ որում վարչության նիստ կարող էր գումարվել դրանցից յոթի ներկայության պայմաններում, իսկ որոշումներ կարող էին ընդունվել ներկա չորսի պարզ մեծամասնությամբ: Կոստանդնուպոլսի պատրիարք այսուհետև ընդհանուր ժողովին պիտի առաջադրվեր նախկինի նման Բ. Դռան կողմից հավանության արժանացած և վստահություն վայելող, առաջին հերթին ոչ ռուսամետ այն թեկնածուներից մեկը, որոնց առաջադրել էր ազգային վարչությունը: Պահպանողականության այն պնդումը, թե հայոց եկեղեցին սահմանադրական չէ և չի կարող ենթարկվել աշխարհիկ օրենքներին, այսպիսով, տվել էր իր արդյունքները:

Ըստ նոր կանոնադրության, Երուսաղեմի պատրիարք կարող էր ընտրվել միայն վանքի վանականներից մեկը և ոչ դրսի հոգևորական, որով փակվում էր ռուսահպատակ (Արևելահայաստանից) հոգևորականի մուտքը Երուսաղեմի պատրիարքություն: Սահմանադրության շուրջ սկսված քաշքշուկը տանջալիորեն ձգձգում էր սահմանադրական վարչական մարմինների ընտրությունները գավառում, որը, բնականաբար, խլացնում էր գավառական հարստությունների մասին բողոքների ձայնը և դրանց քննարկումը Կ. Պոլսում գործող ազգային ժողովում:

Եկեղեցին վեր դասելով սահմանադրությունից և այդպիսով պետության ու հետադիմության անմիջական հարվածի տակ թողնելով սահմանադրական ժողովը, «հերետիկոսների» չարքը նետելով անցյալի ու ներկայի «լուսավորյալներին» ընդհանրապես արևմտահայ հետադիմությունը Հ. Տերոյենց-Ջամուռճյանի գլխավորությամբ, ինչպես նշում էր «Մասիսը», «լսելով խորհուրդը» այն «եկեղեցական և աշխարհական կարգե» բաղկացած «մեծարգո և պատկառելի անձանց», որոնք «... ազգային առաջադիմության կաղ ի կաղ ընթացքն իսպառ

անդամալուծելու նպատակ են հետապնդում»[1], անցավ հարձակման Կ. Պոլսում գործող հասարակական կազմակերպությունների դեմ, բոլորի մեջ տեսնելով վտանգավոր ու «ծանր» խորհուրդ «գաղտնի ընկերությանց»: Այնինչ, այդ ընկերությունների գործունեությունը, թվում է, ուղղված էր խթանելու բուրժուական ազգամիավորման ձգտումները, և այս տեսակետից «Համազգային բարեգործական ընկերությունը», «Համազգայաց ընկերությունից» հետո ամենանշանակալին էր ծրագրային իր լայն ընդգրկումներով:

Բարեգործական ընկերության նպատակը «Ազգին որբ, անտեր ու չքավոր տղաքը երկրագործության ու արվեստից զբաղեցնել է»: Այս նպատակով կազմակերպվում էր հանգանակություն՝ մոտ 600.000 ղուռուշի սահմաններում Կիլիկիայի բարեբեր հողերում հողամաս գնելու, այնտեղ երկրագործական ուսումնարան բացելու և պանդուխտ հայ երիտասարդությանը առաջավոր մեթոդներով տարվելիք հողագործության մեջ ներգրավելու համար:

«Համազգային բարեգործական ընկերության» ծրագիրն, ի վերջո, ուղղված էր Եվրոպայի որակյալ արդյունաբերական ապրանքների՝ դեպի Թուրքիա սկսած ուժեղ ներհոսքի, ուրեմն նաև հայ առևտրի և արհեստագործության անկման պրոցեսի կանխման դեմ:

* * *

Քաղաքական տարուբերումներին զուգընթաց պոլսահայ կրթական-լուսավորական, մշակութային կյանքը, այնուամենայնիվ, գնում էր իր ընթացքով և 70–80-ական թվականներին շարունակում էր դեռ առաջադիմել: Հիմնվում էին դպրոցներ, թատրոններ, փակված պարբերականների փոխարեն՝ մամուլի նոր, հաճախ ավելի նշանակալից ու հետաքրքիր օրգաններ, ինչպես «Հայրենիքը» (1870–1896), «Արևելքը» (1884–1912), նորաստեղծ «Մասիսը» (1888–1908) և այլն:

1886 թ.՝ պատրիարք Ներսես Վարժապետյանի ջանքերով կառուցվում է Կեդրոնական վարժարանը Ղալաթիա թաղամասում: Աշակերտներն ունեին դպրոցական համազգեստ, որը պահվում էր նկուղում գտնվող հատուկ դարակներում: Դպրոցը բարձր տիպի միջնակարգ հաստատություն էր, հիմնական մասնագիտական թեքումով՝ գրականագիտական: Նպատակը սանկտին հայեցի կրթություն տալն էր, գա-

1 «Մասիս», 1863, № 598:

վառի համար ուսուցիչներ պատրաստելը: Դպրոցի առաջին տեսուչը 1886–1889 թթ. արևմտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ Մինաս Չերազն էր: Դպրոցը ղեկավարվում էր հոգաբարձուներ-ի կողմից, որոնց նախագահն էր ազգային գործիչ, մեծահարուստ Հարություն Նորատունկյանը: Առարկաների որոշ մասը դասավանդվում էր օտարազգիների կողմից, նրանց մայրենի լեզուներով (իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, թուրքերեն): Կեդրոնականի նշանավոր մանկավարժներից էր հայ գրականության դասատու Եղիա Տեմիրճիպաշյանը (1851–1908), որը արևմտահայ պատմության մեջ հայտնի էր իր գրական, հրապարակախոսական, փիլիսոփայական, մանկավարժական, բառարանագրական ու գեղագիտական երկերով: Հայերեն և ֆրանսերեն էր դասավանդում ժամանակի նշանավոր գրող, «Սանդուխտ» ողբերգության և Տ. Զուխաջյանի «Արշակ երկրորդ» օպերայի լիբրետոյի, ֆրանսերեն լեզվի բազմաթիվ դասագրքերի հեղինակ Թովմաս Թերզյանը: Հաշվապահություն էր դասավանդում մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը: Երկրաչափությունը, հանրահաշիվը, անատոմիան, ֆիզիկան, քիմիան, նույնիսկ մշակույթի պատմությունը դասավանդվում էին ֆրանսերենով:

Հիմնադրումից բավական անց դպրոցում տարբեր տարիներ դասավանդել են նաև Մ. Գարագաշյանը, Ծերենցը, Ռ. Պերպերյանը, Ե. Տեր-Անդրեասյանը, Հ. Ասատուրը, Տ. Զրաքյանը (Ինտրա), Լ. Շանթը, Վ. Թեքեյանը, Հ. Օշականը, Զ. Ասատուրը (Սիպիլ), Մ. Իզմիրլյանը, Մ. Օրմանյանը, Ե. Դուրյանը, Գ. Սրվանձտյանցը, Կ. Պոլսի մտավորականության պսակը կազմող շատ այլ անձինք:

Կ. Պոլսի Կեդրոնականն են ավարտել եղեռնից հետո Փարիզում հաստատված հայ անվանի գրող, գրականագետ, հրատարակիչ Արշակ Զոպանյանը, Ֆրանսիայի Նանսի քաղաքի հիվանդանոցներից մեկի գլխավոր բժիշկ Հովհաննես Արթինյանը, որը նաև հայերեն անվանումներով բուսաբանական բառարանի հեղինակ էր, հետագայում նշանավոր դերասան Արմենակ Իփեկչյանը (Արմեն Արմենյան), Օննիկ Աբիսողոմյանը, բանաստեղծական ազգանունով Զիֆթե Սարաֆը (1874–1922):

Ուսման և կրթության հարատևած բացառիկ կենտրոնների թվում էին նաև Պեզճյան Մայր և Պերպերյան վարժարանները: Հիմնադրված լինելով դեռևս 1719 թ. 1826 թ. Հ. Պեզճյանի ջանքերով վարժարանը լրիվ վերակառուցվում է և շարունակում մնալ որպես մանկավարժական, այդ թվում նաև հոգևոր կադրերի պատրաստման կենտրոն: Ուներ

նաև աղջիկների ուսուցման բաժին, մատենադարան՝ մոտ 100 ձեռագիր մատյանով:

1876 թ. հայ բանաստեղծ, հրապարակախոս, տնտեսագետ և մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի ջանքերով (1848–1907) հիմնված երկրորդ աստիճանի՝ միջնակարգ ուսուցման ծրագրով վարժարանը սաներին տված հիմնավոր կրթությամբ նույնպես վկայում էր կրթական գործի բարձր և կատարելագործված մակարդակը Կ. Պոլսում: Դասընթացն ավարտողին տրվում էր դպրության կամ գիտության պսակավորի աստիճան: Բարձր դասարաններում կատարվում էր թեքման տարանջատում գրականության, առևտրի, մանկավարժության մասնագիտությունների գծով:

19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ և պոլսահայ կյանքի ընդհանուր առաջընթացի վկայությունն էր նաև մասնագիտական երաժշտական արվեստի կատարելագործումը և տարածումը ժողովրդի մեջ: Լույս էին տեսնում երաժշտությունը պրոպագանդող պարբերականներ. 1858 թ. Արիստակես Հովհաննիսյանի (1812–1878) և Գաբրիել Երանյանի (1827–1862) ջանքերով հիմնվեց «Քնար արևելյանը», 1861 թ. Գ. Երանյանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել «Քնար հայկականը», իսկ մեկ տարի հետո իր գործունեությունն սկսեց նույնանուն երաժշտական ընկերությունը: Վերջինս արևմտահայերին ծանոթացնում էր եվրոպական երաժշտության նվաճումներին, քաջալերում հայ երաժշտական ուժերի որոնումները, հրատարակում էր նրանց գործերը: Պոլսահայ հանրությունը իտալական թատրոնի միջոցով հաղորդակից էր լինում այդ երկրի երաժշտական արվեստին, որը նույնպես խթանեց, որպեսզի պոլսահայերի մեջ գրեթե հասարակական կարծիքի ուժ ստանա սեփական օպերա ունենալու ցանկությունը: Այն իրականացրեց 19-րդ դարի երկրորդ կեսի նշանավոր երգահան Տիգրան Չուխաջյանը (1837–1898), որը երաժշտական բարձր կրթություն էր ստացել Միլանում: Նա ազգային երաժշտության առանձնահատկությունները հասցնում է մի նոր որակի՝ մնալով, սակայն, խորապես ազգային ստեղծագործող: Վերադառնալով Իտալիայից՝ նա արդեն 1864 թ. անխղելիորեն կապվում է Կ. Պոլսի երաժշտական կյանքին և երաժշտական տեքստեր հորինում «Արևելյան թատրոնի» ներկայացումների համար: 1867 թ. Մ. Նալբանդյանի մահվան տարելիցի կապակցությամբ նա գրեց երաժշտություն՝ Ռոմանոս Սեթեֆճյանի տեքստով բեմադրված թատերական՝ «Վարդան. փրկիչ հայրենյաց» տրամախոսության համար: Մեծ կտավի և հայրե-

նասիրական պաթոսով գրված գործերի ստեղծումը, սակայն, շուտով հանդիպեց անհաղթահարելի խոչընդոտների, որոնք հարուցում էր կառավարությունը թատրոնի և բուռն զարգացում ապրող երաժշտության ու գրականության մեջ տեսնելով ազգային-ազատագրական շարժման ծավալման վտանգավոր միտումներ: «Արշակ Բ-ն», որ ծրագրված էր ամբողջությամբ բեմադրել 1869-ին, այդպես էլ բեմահարթակ չտեսավ. արդեն 1868-ին արգելվում էին հայկական թատրոնները: Հնարավոր չէր նույն ոգևորությամբ զարգացնել Կ. Պոլսի երաժշտական արվեստը չփոխելով նրա ոճն ու մանավանդ լեզուն և թեմատիկան: Տ. Զուխաջյանի հետագա ստեղծագործությունները, հատկապես արդեն կենցաղային-օպերետային ժանրով գրված, սկզբնապես բեմադրվում և կատարվում էին թուրքերեն:

Զեյթունի հերոսամարտերի օրերին և սահմանադրության հռչակումից անմիջապես հետո Կոստանդնուպոլսում ստեղծվեց հայկական մշտապես գործող պրոֆեսիոնալ առաջին թատրոնը «Արևելյան» անվամբ: Թատրոնն իր առաջին ներկայացումը տվեց 1861 թ. դեկտեմբերի 14-ին, Ռոթայի «Երկու հիսնապետ» պիեսով:

Այսպիսով, եթե 50-ական թվականների վերջերին Ս. Հեքիմյանի (նա 1856 թ. Կ. Պոլսում հիմնել էր բավական կայուն գործող թատերական խումբ), Մ. Պեշիկթաշլյանի, Ա. Հայկունու ջանքերով (վերջինս 1857 թ. հիմնել էր նաև առաջին պոլսահայ թատերական ամսագիրը «Մուսայք Մասյաց» վերնագրով) Պերա, Խասգյուղ, Օրթագյուղ և այլ թաղերում կազմակերպվում էին ներկայացումներ՝ չունենալով դրանց համար անհրաժեշտ հարմարավետ շենքեր և նյութական հիմք, ապա «Արևելյան թատրոնին» այդ ամենը տրվեց, երբ թատերական արվեստով շահագրգռված Ստեփան և Առաքել Ալթուն-Տյուրի եղբայրների ջանքերով հիմնվեց մի վարչություն, որի մեջ մտնում էին Ալեքսանդր և Հարություն Մերիեմ-Կուլի եղբայրները, Գրիգոր Խուրտաճյանը, Գրիգոր Ֆրենկյանը: Ունևոր այս մարդիկ հինգ տարով վարձակալեցին Պերայի Ս. Երրորդություն եկեղեցուն պատկանող Կաֆե-Օրիենթալի շենքը՝ այն հարմարեցնելով թատրոնի պահանջներին:

«Արևելյան թատրոնի» խաղացանկը լայն էր, ընդգրկում էր ինչպես տեղական-ազգային, այնպես էլ արևմտաեվրոպական, հատկապես ֆրանսիական թատերագրություններ: Թատրոնում, հատկապես 1867 թ. Մ. Նալբանդյանի հիշատակին նվիրված «Վարդան. փրկիչ հայրենյաց» ներկայացման մեջ իրենց բեմական մկրտությունը ստացան ապագա

մեծ դերասաններ Պետրոս Ադամյանը (1849–1891) և Արուսյակ Փափազյանը (1841–1907): Մ. Նալբանդյանին նվիրված խոսքում արտասանությամբ հանդես եկավ արևմտահայ բեմի ապագա մյուս աստղերից մեկը՝ տասնամյա Վերգինե Գարագաշյանը (1856–1933):

Վարդանանց պատերազմին նվիրված ներկայացումը փաստորեն առիթ ծառայեց կառավարության կողմից «Արևելյան թատրոնի» հետապնդումներին և փակվելուն, որն իր գոյությունը հետագայում շարունակեց ճարտարապետ Հակոբ Պալյանի ջանքերով Օրթագյուղում կառուցված փոքրիկ, հարմարավետ և գեղեցիկ շենքում: Թատրոնը ղեկավարում էր մեծավաստակ Պետրոս Մաղաքյանը (1826–1891):

Պ. Մաղաքյանի թատրոնի գոյությունը կառավարությունը հանդուրժեց մինչև 1878 թ.: Նրա բեմում արդեն արվեստի կատարելության հասան հետագայում նաև Կովկասի, Թիֆլիսի, Ռուսաստանի բեմերում հռչակված Պետրոս Ադամյանը, Ազնիվ Հրաչյան (1853–1920), Մարտիրոս Մնակյանը (1837–1920), Մեծն Սիրանույշը (1857–1932):

«Արևելյան թատրոնի» նշանակությունը պոլսահայ կյանքում ամբողջանում է նաև երիտասարդ այն դրամատուրգների գործունեությամբ, որոնք իրենց ստեղծագործական կյանքի հիմնական նպատակը, մանավանդ պոլսահայ թատերական արվեստի ծաղկման՝ 60–70-ական թվականներին, թատրոնի մեջ էին տեսնում: Նրանց թվում էր արևմտահայ պոեզիայի հանճարեղ ներկայացուցիչներից Պետրոս Դուրյանը (1852–1872), որը և դերասան էր, և դրամատուրգ: Նրա առաջին դրամատիկական երկը՝ «Վարդ և Շուշանը», արդեն բավական համբավ բերեց պատանի հեղինակին:

Հ. Սըվաճյանի «Մեղվի» և «Արևելյան թատրոնի» ստեղծագործական ուժերի հետ ունեցած շփումների հետ է առնչվում նաև արևմտահայ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի (1848–1891) առաջին շրջանի գործունեությունը, որը խթանեց նրա հետագա հրապարակախոսական և հրատարակչական աշխատանքի ծավալմանը՝ հանձին «Թատրոն» (1874–1876), «Խիկար» (1884–1888) պարբերականների:

Սահմանադրության հռչակումից հետո արևմտահայությունը չբավարարվեց ձեռք բերածով: Համընդհանուր դժգոհության օբյեկտ էր դարձել իր հարմարվողականությամբ կառավարությանը ձեռնտու պատրիարք Պողոս Թադթադյանը, որի հեռացումն էին պահանջում 1868 թ. Խասգյուղի և Գում գաբուի եկեղեցիների բակերում կազմակերպված ժողովրդական ցույցերը: 1869 թ. հունվարի 23-ին ընդունվեց

նրա հրաժարականը, իսկ հուլիսի 31-ին պատրիարք ընտրվեց Մուշի հոգևոր առաջնորդ Մկրտիչ Խրիմյանը, որը մեծ շուքով ընդունվեց Կ. Պոլսում, և որի պատրիարքության տարիներին Ազգային ժողովի կողմից հաճախ մոռացության տրվող գավառահայության հարցերը դարձան ժողովի ուշադրության հիմնական կենտրոնը:

Մ. Խրիմյանը հիմքեր ուներ սահմանադրական ժողովը իր տարտամ ընթացքից հանելու և այն «Սահմանադրական ազգի» ժողով դարձնելու: Կարևոր է այդ կապակցությամբ հիշել, որ դեռ 1863 թ. Կ. Պոլսի վճռական ձայն ունեցող թաղերի կողմից Ազգային ժողովին էր ուղղվել մի ծավալուն համախոսական, ուր գավառահայության տագնապալից վիճակը շեշտելով հանդերձ, առաջարկվում էր այն դարձնել կենտրոնական վարչության քննարկման առաջնահերթ հարց[1]: Նորընտիր պատրիարքը ոչ միայն ձեռնարկեց գավառից եկող բողոքագրերի քննարկմանը կենտրոնական վարչությունում, որտեղ հենց քաղաքական ժողովի տեղեկագրերում ներկայացվում էին Ադանայի, Բաղեշի, Տիգրանակերտի վայրագ հարստահարությունները, այլև ստեղծեց մի հանձնաժողով Ներսես Վարժապետյանի գլխավորությամբ, որը, դասակարգելով մինչ այդ մասնավոր բնույթ կրող բողոքագրերը, դրանք ներկայացրեց առանձին խմբերով, որոնք վերաբերում էին հարկերի ասլօրինի դանձումներին, թուրքական պաշտոնեության զեղծումներին, քաղաքացիական դատարաններում հայ բնակչության իրավունքների ոտնահարմանը, հարստահարումների մասնավոր դեպքերին և այլն: Դրանց կցված էին նաև հանձնաժողովի եզրակացությունները, ինչպես և առաջարկվում էին միջոցներ հարստահարությունները վերացնելու կամ կանխելու համար[2]:

Այս միջոցառումները, նաև բազմաթիվ թագրիրները, որոնցով Մ. Խրիմյանը կառավարությանը հիշեցնում էր իր անելիքները, վերջինիս ստիպում էին միջոցներ որոնել անհաճո պատրիարքից ազատվելու համար: Նրան որպես հենարան կարող էին ծառայել Ազգային ժողովի այն երեսփոխանները, որոնք Կ. Պոլիսը համարում էին իրենց գործունեության ասպարեզը, իսկ իրենց վճիռները՝ միայն իրենց կամքի արդյունքը: Ազգային ժողովում Մ. Խրիմյանի դեմ ձևավորվեց ընդդիմություն հիշյալ պատգամավորներից:

---

1 «Ժամանակ», 1863, № 22, էջ 31–36:

2 Խ ա ռ ա տ յ ա ն Ա. Ա. Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1867–1908), Երևան, 1989, էջ 217–220:

Մ. Խրիմյանի ձեռնարկած հակաքայլերը ավելի սրեցին իրավիճակը, երբ նա իշխանությունը կենտրոնացնելու նպատակով պահանջեց Ազգային ժողովը կրճատել այն հաշվով, որ 50 երեսփոխանից 20-ը լինեն Կ. Պոլսից, 20-ը՝ գավառից, իսկ 10-ը՝ հոգևորականներից:

Լարված մթնոլորտում, որը պատրիարքին մղում էր անհապաղ գործունեության, կառավարությունը չհապաղեց և հատուկ ծանուցումով արգելեց պատրիարքարանին կառավարությանն ուղղված թղթերիններում, «բացի կրոնականից», բարձրացնել նաև քաղաքացիական հարցեր, այսինքն, չշեղվել նախորդների ուղեգծից:

Ի վերջո, բազմաստեպ հարձակումները, դրան գումարած գավառահայության օրեցօր ծանրացող վիճակը Մ. Խրիմյանին ստիպեցին արդեն քանիերորդ անգամ հուսախաբ լինել Ազգային ժողովից: Նա համոզվեց, որ թեև Կ. Պոլսում են իմաստավորվում իրադարձությունները, բայց գործել առայժմ պետք է մայր հայրենիքում: 1873 թ. Մ. Խրիմյանը հրաժարվեց պատրիարքությունից, իսկ դրանից մոտ հինգ ամիս անց, 1874 թ. մարտի 22-ի ընդհանուր ժողովի նիստում նրան փոխարինող ընտրվեց 1870–80-ական թվականներին Հայոց հարցի խնդրում մեծ գործունեություն ծավալած, թեև Մ. Խրիմյանից իր արմատականությամբ տարբերվող Ներսես Վարժապետյանը, որը 1878 թ. Բեռլինի կոնգրեսի շուրջ ծավալված իրադարձությունների ժամանակ նորից ամենագործուն մասնակից դարձրեց Մ. Խրիմյանին: Ազգային սահմանադրության չարչրկված տեքստը այնպես էլ ամբողջությամբ չվերաքննվեց (գուցե ինչ-որ չափով այդ արվեց 1876-ին), իսկ 1874 թ. հոկտեմբերի 4-ի Ազգային ժողովում ընդունվեց Ն. Ռուսինյանի կազմած «Կանոնադրություն Ազգային ժողովին» տեքստը, մինչև որ 1890-ական թվականների արևմտահայ և պոլսահայ ողբերգական դեպքերը առիթ տվեցին Աբդուլ Համիդին կրկին արգելելու նրա գործունեությունը:

* * *

1878 թ. արևմտահայության և Կ. Պոլսի առաջադեմ գործիչների համար ներկայացավ պատեհ առիթը՝ իրենց հարցը Եվրոպայի մեծ տերությունների և Ռուսաստանի առջև դնելու համար: Ռուսական զենքի փայլուն հաղթանակով ավարտվեց 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Ռուսաստանը արևելյան ճակատում գրավեց Կարսը, Արդահանը, Էրզրումը, Բաթումը, ազատագրեց Բուլղարիան և, Շիպկայի

բարձունքներում խայտառակ պարտության մատնելով թուրքերին, հաղթարշավով ընդհուպ մոտեցավ Կոստանդնուպոլսին:

Միանգամից, կարծես ամբողջական տեսք ստացան արևմտահայության ձգտումները, և գտնվեց ելքը դիմել Սան-Ստեֆանոյի Տյուզյան Առաքել բեյի ամառանոցում իջևանած ռուսական բանակի գլխավոր հրամանատարին և դիվանագիտական ներկայացուցչությանը Սան-Ստեֆանոյում կնքված դաշնագրում հատուկ կետ մտցնելու Արևմտահայաստանում բարեփոխումներ անցկացնելու մասին: Գործի ղեկավարությունն իր վրա վերցրեց պատրիարք Ներսես Վարժապետյանը, և արդյունքը եղավ այն, որ փետրվարի 19-ին ստորագրված դաշնագրում, 16-րդ կետով մտավ Արևմտահայաստանում Ռուսաստանի հսկողությամբ բարեփոխումներ անցկացնելու վերաբերյալ հարցը: Այս վճռական քայլն ուներ նաև իր կարճ նախապատմությունը: Դեռ 1877 թ. նոյեմբերին Ն. Վարժապետյանին այցելած ինը եպիսկոպոսների պատվիրակությունը Մ. Խրիմյանի գլխավորությամբ, փաստորեն ստեղծել էր ակտիվ գործողության անցնելու տրամադրություն, երբ նույն եպիսկոպոսների ստորագրությամբ նոյեմբերի 11-ին նամակ էր հղվել Ալեքսանդր 2-րդին և արտաքին գործերի նախարար Ա. Նելիդովին: Նամակում բացահայտվում էին կործանվող կայսրության ներսում հայկական ինքնավարության հասնելու հնարավորությունները: Ներսես Վարժապետյանին Արևմտահայաստանի ինքնավարության հարցը բարձրացնելու էին մղում նաև Գր. Օտյանը, Սերվիչենը, որոնց անսալով, միայնակ նման հարց չլուծելու միտումով, Վարժապետյանը ընդհանուր ժողովի քննարկմանն է ներկայացնում իր նախագիծը, որը, չնայած Կոստանդնուպոլսում տիրող աննախադեպ ոգևորությանը, ժողովականների կողմից միահամուռ ընդունելության չարժանացավ: Հատկապես դեմ էին այն պատգամավորները, որոնք վախ ունեին, թե 1864 թ. Լիբանանի օրինակով քրիստոնյա նահանգապետով ինքնավարության այդ պահանջը, նրա մեջ անկախության ձգտումներ տեսնելու պարագայում, կարող է դուր չգալ Ռուսաստանին: Այս կասկածները փարատելու համար Գր. Օտյանն առաջ էր քաշում «Պատնեշ պետության» գաղափարը, այսինքն, Թուրքիայի և Ռուսաստանի միջև վերջինիս դաշնակից հայկական պետության ստեղծման գաղափարը:

Ընդհանուր տրամադրություն էր դարձել այն միտքը, թե անկախության հասնելու համար պիտի հենվել սեփական ուժերի վրա և սկսել պայքարն այսօր լցվելով համբերությամբ և ըմբռնումով, որ այդ պայ-

քարը կարող է տասնակյակներ տևել: Սերվիչենը էջմիածին՝ կաթողիկոսին ուղղված իր խոսքում գրում էր, ի դեպ, թե «Միանգամայն ազգ կազմելու կամ անհետանալու խնդիր կա մեջտեղը, ասանկ պարագային չգործելը քրեական հանցանք է ... Դուք պարտաղանց կըլլաք, եթե մեզ աջակից չըլլաք»[1]:

Հակառակ արևելահայ մյուս գործիչների, ինչպիսիք էին Գր. Արծրունին, Բաֆֆին, Պ. Պռոշյանը, Գ. Սունդուկյանը և հայ հեղափոխական ուսանող երիտասարդությունը Ս. Պետերբուրգում և Մոսկվայում, կաթողիկոս Գևորգ 4-րդը չմիացավ ընդհանուր ոգևորությանը և դժկամությամբ ընդունեց իր մոտ բանագնաց եկած, ապագա «երկաթյա պատրիարք» և կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանին:

1878 թ. Բեռլինում հրավիրված մեծ տերությունների կոնգրեսը սառը ջուր լցրեց ինչպես կոնգրես մեկնած բանագնացների՝ Մ. Խրիմյանի, Մ. Չերազի, Խորեն արքեպիսկոպոս Գալֆայան Նար-Պեյի և հետագայում նրանց միացած Ս. Փափազյանի, այնպես էլ ողջ հայ մտավորականության վրա: Կոնգրեսից հետո փոխվում և վերագնահատվում էր մարդկանց գործելակերպը, հստակեցվում էին մոտեցումները:

Դեռ մինչև կոնգրես մեկնելն էլ, իհարկե, ընդհանուր ոգևորության մեջ հնչում էին կանխազգուշացնող ձայներ, բայց դրանք խլանում էին ընդհանուր ոգևորության հորձանքում: Կ. Պոլսի «Մանդումեի էֆքեար» թերթի խմբագիր, իրականում Մ. Խրիմյանի զինակից Կ. Փանոսյանն, օրինակ, վրդովված գրում էր. «Ի՞նչ եք անում, ո՞ւր եք տանում ազգը, սևագլուխ և ինքնակոչ դիվանագետներ»: Ո՞վ կտա մեզ ինքնավարություն, «որի՞ վրա եք դնում ձեր հույսը»: Այն չահամոլ ու նենգ Եվրոպայի վրա՞, որն ուզում է պահպանել Թուրքիան իր նպատակների համար[2]:

Սակայն հիասթափությունը եվրոպական դիվանագիտությունից ընդհանուր դարձավ միայն կոնգրեսից հետո:

«Հայրենիք» թերթը, որը համիդյան վայրագ դրաքննության պայմաններում կարողացավ պահպանել պոլսահայ մամուլի բարձր պատիվը, վեհաժողովից հետո, իր 1879 թ. №533-ից սկսած, հատուկ հոդվածաշարով աշխատում էր ցույց տալ, թե իզուր են արևմտահայերի հույսե-

---

1 Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 146–147:

2 «Մուրճ», 1907, №2, էջ 61–62:

ը հատկապես Անգլիայից ու նրա դեսպան Լեյարդից, որի խոստումները Հայաստանի ինքնավարության մասին զուրկ են հիմքից, նպատակ ունեն հայերին մոլորեցնելով հեռու պահել նրանց պայքարի իրական միջոցներից:

«Մասիսը», որի զգուշավորությունը չեչտելով հանդերձ՝ ժամանակակիցներն, այնուամենայնիվ, ստիպված էին ունկնդրել նրա սթափ ձայնին, 1878 թ. № 2148-ում գրում էր, որ կոնգրեսից հետո ժողովրդի ցնծագին ուրախությունը փոխվեց տխրության՝ հաստատելով այն փաստը, որ եվրոպական վերահսկողության ներքո բարենորոգումներ սպասելը 16-ից 61-րդ դարձած հոդվածից պարապ զբաղմունք է:

Բեռլինի վեհաժողովից հետո Կ. Պոլսում ստեղծված գաղափարական մթնոլորտի նկարագրությունը տվել է նաև ինքը՝ պատրիարք Ն. Վարժապետյանը 1878 թ. հուլիսի 21-ին իր հաշվետու ելույթով Ազգային ժողովում. «Եթե այս հոդվածը (61-րդ,– Վ. Ղ.),– ասում է նա,– ցավալի բան մ՝ունի, այն է, որ մեր խնդրույն լուծումը ըստ մասին կը հետաձգե, չկործաներ ազգին հույսերը, այլև չպսակեր նույն հետայն: Եվ ո՞ր ազգ կրցած է հանկարծակի կերպով իր բաղձանացն ի կատար հասնիլ: Դժբախտությունն է միայն և մահ, որ հանկարծակի կրնան գալ անձի մը և ազգի մը վրա, կյանքը ու բարեկեցությունը համր կձևանան: Եվ ասոր համար է, որ կանիրավին անոնք, որ կըսեն թե՝ «ինչո՞ւ սկսանք, եթե պիտի չհաղթեինք», զի օր մը հաջողելու համար՝ այս օրեն սկսելու էր, և զի եթե ապահով կերպով գիտենայի ալ առաջուց թե պիտի չհաջողիմ բնավ, դարձյալ պիտի սկսեի, և այն թող գրեր ինձի ազգս ի դատապարտություն»[1]:

Բեռլինի կոնգրեսից հետո իրենց տեսակետները արևմտահայ ազատագրական շարժման մասին վերանայած գործիչները ձգտում էին Կ. Պոլիս, բնականաբար, միասին գործելու և միասնական եզրահանգումների գալու միտումով: 1880–1881 թթ. արդեն այստեղ էին Լոնդոնից ժամանած Մ. Ջերազը, Վանից՝ Մ. Փորթուգալյանը, Թիֆլիսից՝ Գր. Նիկողոսյանը:

Փոխվել էր պոլսահայ գործիչների դիրքորոշումը նաև հայերի զինվորագրության հարցի վերաբերյալ, որոնց Ռուսաստանից կտրելու դիտավորությամբ, սուլթանական կառավարությունը բանակ կանչելու և զինվորագրելու հրաման էր արձակել: Բնորոշ է, որ վերանայվում էին

---

1 *Ատենագրություն Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1878, էջ 66–67.*

այնպիսի արմատական ազգային գործիչների տեսակետները, ինչպիսիք էին Հ. Սըվաճյանը, Գր. Օտյանը: Հայտնի է, որ տարիներ առաջ Հ. Սըվաճյանը Ազգային ժողովում պահանջում էր հարց դնել կառավարության առաջ՝ հայերին բանակ կանչելու մասին, որի համար 1871 թ. «Մամուլի» խմբագրությունը քննադատում էր մեծ դեմոկրատին, իսկ Գր. Օտյանը այն կարծիքին էր, որ հայերի՝ պետական բանակում չլինելը և դրա դիմաց զինվորական տուրք վճարելը «Մեր տկարության տուրք վճարել» է նշանակում: Բայց ահա նոր իրադրության պայմաններում, երբ պոլսահայ գործիչները համոզվեցին թուրք-եվրոպական համագործակցության մեջ, սկսեցին առաջ քաշել այն միտքը, թե թուրքական բանակում հայերի գտնվելը ազգային սկզբունքին դեմ բան է: Եկեղեցական ժողովի այնպիսի պատգամավորներ, ինչպիսին Մ. Իզմիրլյանն ու Խորեն Նար-Պեյն էին, պնդում էին, որ հայոց սահմանադրությունն ապահովում է խղճի ազատություն, իսկ թուրքերի «սրբազան պատերազմը» ռուսների դեմ կապ չունի խղճի ազատության հետ:

Համընդհանուր ազգային-ազատագրական պայքարի դաղափարախոսության ձևավորման մեջ նշանակալից դեր խաղաց Կարինի «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպության հիմնումը: Կոստանդնուպոլսի ազգայնական մտավորականները պատրիարք Ն. Վարժապետյանի գլխավորությամբ իրենց վրա վերցրին արևմտահայ առաջին քաղաքական այդ միության գործունեության ղեկավարումը՝ Կ. Պոլսից ցուցումներ տալով ոչ միայն կազմակերպության տակտիկական քայլերին (անդամատոմսերի տարածման մեջ զգուշավորություն դրսևորելու, գործունեության անլեգալ մեթոդներ մշակելու և այլ խնդիրներում), այլև կազմակերպությունն ամրապնդելու նպատակով Կ. Պոլսից Կարին գործուղեցին իրենց զինակիցներից մեկին, ապագա պատրիարք Մաղաքիա Օրմանյանին՝ նրան նշանակելով Կարինի հոգևոր թեմի առաջնորդ: Նա Վանում գործող Մ. Խրիմյանի միջոցով ուղիղ գիծ ստեղծեց Վան–Կ. Պոլիս–Կարին–Թիֆլիս շղթայում՝ դիտակցելով ազատագրական շարժման մեկուսացման վտանգը: Պատահական չէ, որ Մ. Խրիմյանը իր պատասխան նամակում Հ. Նշկյանին («Պաշտպան Հայրենյացի» ղեկավարներից մեկին) դեռ 1878 թ. գրում էր. «Քաջալերե և զինե քեզ նման հայրենակիցներդ, լույս և երկաթ միասին լծորդելով վազեցնք դեպի ... ապագան»[1]:

---

1 Հովհաննիսյան Ռ. Փ., նշվ. աշխ., էջ 284:

«Մշակը» իր 1880 թ. №187-ում գրում էր, թե հայ ազատագրական շարժման բարձրացող ալիքում իր համար մեծ վտանգ տեսնող Բ. Դուռը հայ նշանավոր հոգևորական գործիչներին՝ Մ. Խրիմյանին, Նար-Պեյին և Ն. Վարժապետյանին մեղադրում էր «ժողովրդին ոտքի հանելու», նրա մեջ ազգային արժանապատվության գիտակցություն ներարկելու, «Գանգեսի ափերից մինչև Արխանգելսկ» նրան գրգռելու մեջ:

Ազգային ազատագրության հարցը սեփական ուժերով լուծելու և զենքի ուժով դրան հասնելու վճռականությանը սուլթանական պալատը պատասխանում էր իրեն վայել համապատասխան քայլերով:

1880 թ. օգոստոսի 30-ի հրամանով Բ. Դուռը պաշտոնապես արգելեց «Հայաստան» բառի օգտագործումը գրություններում՝ այն փոխարինելով «Քուրդիստան» բառով: Կ. Պոլսի պատրիարքարանից պահանջվեց այլևս գավառներից եկած գանգատների համար չմիջնորդել կառավարության առաջ («Մասիս», 1880, №2722, 2718), իսկ 1881 թ. արդեն Կարինի ռուսական հյուպատոսը զեկուցում էր Վարդան Մամիկոնյանի և «Մայր Հայաստան» նկարների ոչնչացման, ամենուրեք ժողովների ու հանրահավաքների բռնի արգելման, հայկական դպրոցներում հայոց պատմություն առարկայի վերացման և այլ զաղրելի միջոցառումների մասին:

Կ. Պոլսում և այլուր մոլեգնում էին տեռորը և համատարած բանտարկությունները: 1882 թ. հոկտեմբերի 21-ին Կ. Պոլսի ծովափնյա փողոցներից մեկում սպանվեց արևմտահայ հեղափոխական շարժման կազմակերպիչներից մեկը՝ Հովհաննես Քյաթիպյանը: 1880 թ. փորձ արվեց թունավորել նաև Ն. Վարժապետյանին, բազմաթիվ անհաջող մահափորձեր արվեցին Մ. Խրիմյանի դեմ, որին ի վերջո «աչքի առաջ գտնվելու համար» 1885 թ. ստիպեցին ներկայանալ մայրաքաղաք: Նույն ձևով վարվեցին նաև Մ. Փորթուգալյանի հետ:

Ժամանակի Կ. Պոլսի մամուլը մղվում էր դեպի անձկություն, նրան սպառնում էր սեփական դիմագծի, մարտական ոգու, տասնյակ տարիների ընթացքում ձեռք բերված հրապարակախոսական մտքի և պրոֆեսիոնալիզմի կորուստը: Որքան էլ առաջացած էր Կ. Ուլթուճյանի տարիքը, բայց «Մասիսը» իր հանդարտ, հարուստ ու չափավորված հունով տանելու կորովի պակասը չէր, որ ստիպեց խմբագիր-տնօրենին 1884 թ. իր թերթի հրատարակման արտոնությունը զիջել նոր կազմավորված «Արևելքի» վարչությանը: Պատճառը այն սահմանափակումներն էին, որ գրաքննության կողմից թելադրվում էին թերթին և մեռցնում աշ-

խատանքը շարունակելու ցանկությունը: Սակայն, շուրջը հավաքելով հետագայում նույնպես անընդհատ փակվող ու նորոգվող «Արևելքի» և 1896-ին վերջնականապես փակված «Հայրենիքի» լավագույն լրագրողներին, «Մասիսը» հետագայում ևս շարունակեց առաջատարի իր ընթացքը:

1880–90-ական թվականներին՝ Կ. Պոլսի քաղաքական հրապարակախոսության աչքի ընկնող դեմքերից մեկն, անշուշտ, Արփիար Արփիարյանն էր (1851–1908), որը նաև կազմակերպում էր մամուլի հիմնադրման, նրա շուրջը Կ. Պոլսի՝ ժամանակի տաղանդավոր գրողների, լրագրողների հավաքագրման աշխատանքը, ձգտում էր մամուլի միջոցով գործնական հողի վրա դնել բարենորոգումների անցկացման հարցը՝ այդ խնդրում խիստ քննադատելով եվրոպական տերությունների շահադիտական դիրքորոշումները, որոնք օգնում էին Թուրքիային՝ ընդդեմ հայ ժողովրդի: 1880–90-ական թվականների պոլսահայ առաջատար պարբերականների՝ «Արևելքի», «Հայրենիքի» խմբագրական աշխատանքներին մասնակցելուց բացի, Ա. Արփիարյանը հետագայում (1898–1901) խմբագրել է «Նոր կյանք» հանդեսը, 1902-ին հրատարակել է «Հայ հանդեսը» (Վենետիկ), 1905-ից Կահիրեում խմբագրել է «Շիրակը»՝ միաժամանակ հրատարակելով գրական և գրականագիտական աշխատանքներ:

Ստեղծված ընդհանուր իրադրության մեջ բնական էր քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Վանից հետո նման գաղտնի կազմակերպություն ձևավորվեց նաև Կ. Պոլսում, որի մասին տեղյակ էր այստեղ կանչված Մ. Խրիմյանը, քանի որ նա մշտական կապի մեջ էր Մ. Փորթուգալյանի, Վանից Կ. Պոլիս եկած և այստեղ Մ. Խրիմյանի ցուցումներով տեղի «Վարիչ մարմնի» հետ կապեր որոնող Հ. Ճանկուլյանի հետ: Կ. Պոլսի կազմակերպության անդամներից Հ. Ճանկուլյանը հիշատակում էր փոստի մաքսատան թարգմանիչ Գ. Անպարճյանին, որը կապ է ստեղծում Կ. Պոլսի և Վանից եկածների միջև, Հ. Պոյաճյանին (Մուրադ), Մ. Մոմճյանին, Գ. Աչըգպաշյանին, Հ. Զաքրյանին, Ե. Պոյաճյանին: Հետագայում նրանց միանում են նոր անուններ: Շուտով այս կազմակերպության բոլոր անդամներն իրենց սկսեցին կոչել «արմենականներ», 1885 թ. Մարսելում հիմնված «Արմենիայի» նշանավորման առումով: Կ. Պոլսի արմենականներն ու Մ. Փորթուգալյանը միասնական գործելակերպ և քաղաքական ծրագրեր չունեին, քանի որ, հեռու հայրենիքից, Մ. Փորթուգալյանը Մ. Խրիմյանի գործունյա և զին-

ված պայքարի ծրագրերին հաճախ հակադրում էր բարենորոգումների և դիվանագիտական բանակցությունների իր ծրագիրը: Դրանք ի վերջո խզում առաջացրին Կ. Պոլսի և Մարսելի արմենականների միջև և հող նախապատրաստեցին մայրաքաղաքում «Հնչակ» կուսակցության գործունեության ծավալման համար[1]*:*

Կ. Պոլսի իր թղթակցի Լևոն Տերոյանի միջոցով Ժնևում 1887 թ. լույս տեսնող «Հնչակ» պարբերականը տարածվում էր Կ. Պոլսի արմենականների մեջ, արագացնելով խզումը Մ. Փորթուգալյանի և հնչակյանների հետ նրանց միանալու պրոցեսում: Այս ամենը Հ. Ճանկուլյանի միջոցով համաձայնեցվում էր Մ. Խրիմյանի հետ: «Առանց Փորթուգալյանի հանձնարարության,– գրում է Հ. Ճանկուլյանը,– մենք անկախորեն Տերոյանին ըսած էինք ի պատասխան մեզ եղած առաջարկին. «Հնչակյան կուսակցության ծրագիրը նկատի առնելով, մենք չենք կարող հնչակյան կուսակցության կապվիլ, քանի որ սոցիալիզմը մեր երկրին մեջ դեռ հող չունի...»[2]*: Սակայն հնչակյան կուսակցության պարագլուխները, այդ թվում նաև Ռուբեն Խանազատը, Գաբրիել Կաֆյանը, գալով Կ. Պոլիս և անմիջական բանակցությունների մեջ մտնելով տեղի արմենականների հետ, համաձայնության են գալիս մինիմում ծրագրի Արևմտահայաստանի ազատագրության վերաբերյալ, պայմանով, որ տեղի արմենականներն այսուհետև իրենց կկոչեն հնչակյաններ, ըստ որում, հնչակյան պարագլուխները գործունեության բավական ազատ ասպարեզ են վստահում արմենականներին, ընդհուպ մինչև Կ. Պոլսի Գում գաբուի ցույցի կազմակերպումն ու անցկացումը, որը Գ. Կաֆյանի ղեկավարությամբ նախօրոք կայացած գաղտնի խորհրդակցությունում հանձնարարվել էր Հ. Ճանկուլյանին և Մուրադին:*

Կ. Պոլսի 1890 թ. հուլիսի 15-ի ցույցին նախորդել էին 1890 թ. հունիսի 18-ին Կարինում կառավարության կողմից հրահրված արյունոտ դեպքերը, երբ կառավարական զորքերը, պատճառաբանելով, թե քաղաքի եկեղեցում զենք է պահվում և ապստամբություն է նախապատրաստվում, կրակ բացեցին անմեղ ժողովրդի վրա և մեծաթիվ զոհերի հեղինակ դարձան: Կ. Պոլսում որոշվեց, ի նշան վրեժխնդրության, պատասխան քայլերի դիմել, և ահա կազմակերպվեց Գում գաբուի վերոհիշյալ նշանավոր ցույցը իր խիստ բարդ հետևանքներով:

---

1 *Այս մասին մանրամասն տես* Ճ ա ն կ ո ւ լ յ ա ն Հ., *Յիշատակներ Հայոց ճգնաժամի, պր. Ա, Բ, Գ:*

2 *Նույն տեղը, պր. Բ, էջ 127–128:*

Ցույցը սկսվում է նրանով, որ պատարագի ժամանակ Հ. Ճանկուլյանը թռչում է խորան և, ընդհատելով պատարագչին, սկսում է կարդալ կառավարությանն ուղղված տեքստը, որտեղ պահանջվում էր ապահովել կայսրությունում հայերի հավասարությունը մյուս ազգերի հետ, կյանքի և ինչքի ապահովություն, հարստությունների ու ոճրագործությունների կանխում, տնտեսական զարգացման, քաղաքրթության ու առաջադիմության վերելքի բնականոն պայմաններ: Հ. Ճանկուլյանին, սակայն, չի հաջողվում մանիֆեստն ընթերցել մինչև վերջ. պատարագիչը պատռում է տեքստը, իսկ Մուրադին չի հաջողվում պատրիարքին ստիպել հետևելու իրեն դեպի պալատ, ուր սուլթանին պիտի հանձնվեր բողոքագիրը: Հավաքված հազարավոր ցուցարարների մեջ սկսվում են իրարանցումն ու անկանոն կրակոցները, երբ հնչակյանների կողմից շրջապատված պատրիարքին օգնելու և ցույցը ցրելու համար դեպքի վայր են գալիս 50-ի չափ զինվորներ: Անկանոն կրակոցներից զոհվում են երկու հնչակյաններ, վեց-յոթ թուրք զինվոր վիրավորվում են, իսկ ցույցի կազմակերպիչներին բանտարկում են, որոնցից Հ. Ճանկուլյանին ցմահ բանտարկության վճռով նետում են Աքեայի բանտը:

Կոստանդնուպոլսի հայության համար ծանր հետևանքներ ունեցավ նաև 1895 թ. սեպտեմբերի 30-ի ցույցը, որը պետության կողմից խեղդվեց արյան մեջ. երկու օր շարունակ Կ. Պոլսի փողոցներում սպանվում էին պատահած անմեղ հայերը: Կատաղած ժանդարմների ու մոլեգնած թուրք ամբոխի զոհ դարձավ 2.000 պոլսեցի հայ: Ցույցի դրդապատճառն արդեն կոնկրետ մայիսյան ծրագիրը չիրականացնելն էր, ծրագիր, որի նախաձեռնողները Կոստանդնուպոլսի անգլիական, ռուսական և ֆրանսիական դեսպաններն էին: Նրանք հասարակական կարծիքի ճնշման տակ 1895 թ. մայիսի 11-ին բարենորոգումների նոր ծրագիր ներկայացրին սուլթանին՝ հայկական Կարին, Բիթլիս, Վան, Դիարբեքիր, Սեբաստիա գավառներում անցկացնելու համար:

1895 թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսում, Մայր եկեղեցու բակում հնչակյանները կազմակերպեցին հիշյալ ցույցը, որին մասնակցում էր մոտ 4.000 մարդ: Մայիսյան ծրագրի իրագործման պահանջով ցուցարարների թափորը, բաղկացած մշեցի, վանեցի, բաղեշցի պանդուխտներից, պոլսեցի արհեստավորներից, կանանցից ու աղջիկներից, շարժվեց դեպի Բ. Դուռ, սուլթանի նստավայրը՝ Բաբը Ալի (այստեղից էլ՝ ցույցի անունը): Նրանք տանում էին պահանջագիր՝ ուղղված սուլթանին և

եվրոպական տերություններին, ու խնդիր էին դնում ապահովել հայ ժողովրդի խաղաղ կյանքը, հանել նրան անտանելի վիճակից: Կառավարությունը և դեսպանատները Հնչակյան կուսակցության կողմից զգուշացվել էին ցույցի խաղաղ բնույթի մասին, բայց երբ «Զայնը հնչեց Էրզրումի բարձր լեռներեն» երգելով՝ այն շարժվեց դեպի Բաբը Ալի, ցուցարարներին դիմավորեցին ոստիկանները՝ արգելելով նրանց առաջ շարժվել: Իսկ արքունի թիկնապահ Սերվեթ բեյը հաղարապետին է հանձնում ցուցարարներին դնդակահարելու հրամանը: 18-ամյա Աբրահամը ատրճանակի կրակոցով ճիուց վայր է գցում Սերվեթ բեյին, իսկ ոստիկաններին օգնության եկած կանոնավոր զորքը և թուրք զանգվածները վաղօրոք ստացած թույլտվությամբ սկսում են սոսկալի կոտորածը, որ տևեց օրեր, մինչև վրեժին հագուրդ տված սուլթանը հոկտեմբերի 18-ին, իբրև թե ընդառաջելով օտարերկրյա դիվանագետների պահանջին, համաձայնեց ստորագրել ծրագիրը՝ մտցնելով այնպիսի փոփոխություններ, որոնք ազատ տեղ էին թողնում նոր բռնությունների համար:

Կոստանդնուպոլսում հետապնդումները մամուլի, մտավորականության ներկայացուցիչների և պատրիարքարանի նկատմամբ առանձնապես սաստկացան 1896 թ. հետո, երբ այնտեղ հաստատված «Հայ հեղափոխական Դաշնակցություն կուսակցության» կոմիտեի ղեկավարությամբ, Եվրոպայի ուշադրությունը զուտ Հայկական հարցի վրա կենտրոնացնելու նպատակով, կազմակերպվեց Օտոմանյան բանկը մի քանի տասնյակ հոգով բռնագրավելու գործողությունը: Օսմանյան պետական բանկի գրավումն անպայման արևմտահայ պատմության ամենադրամատիկ էջերից մեկն է, քանի որ 70-ի հասնող անձնազոհները քաջ գիտեին, թե ինչ է սպասում իրենց, իսկ «Դաշնակցություն» կուսակցության կողմից իր լավագույն մարդկանց կյանքը վտանգի ենթարկելը ավելի շուտ հուսահատ մի քայլ էր՝ մեկ անգամ ևս մեծ տերությունների ուշադրությունը Արևմտահայաստանի վրա հրավիրելու համար[1]:

1896 թ. օգոստոսի 14-ի առավոտյան, զինված լինելով ռումբերով և հրազենով, նրանք առանց դժվարության մեկուսացրին բանկը պահպա-

---

1 ՀՅԴ կուսակցության Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչների Կ. Պոլսում հաստատվելու, այնտեղ գործունեություն ծավալելու և բանկ-Օտոմանի գրավման նախապատրաստության ու դրա իրագործման մասին մանրամասն տե՛ս Մ. Վ ա ր ա ն դ յ ա ն. Հ. Յ. դաշնակցության պատմություն, հ. I, Փարիզ, 1932, էջ 79–82, 155–160, 168–174:

նող պահակներին և 13 ժամ այն իրենց ձեռքը պահեցին: Քաղաքի տարբեր մասերում դաշնակցական կոմիտեի կազմակերպած հանրահավաքներն ու բանկի դրավման լուրը ցնցում են կառավարությանը, սակայն ապստամբներին ճնշելու համար դեպքի վայրն ուղարկված պետական զորքը փաստորեն անզոր է դառնում. ներսում փակվածները սպառնում էին, որ զորքի ներխուժման դեպքում կպայթեցնեն բանկը՝ իրենց հետ միասին: Կառավարությանն այլ ելք չէր մնում, քան դիմել մեծ տերությունների դեսպանատների օգնությանը: Կ. Պոլսում Ռուսաստանի ներկայացուցիչ Մաքսիմովին հաջողվում է համոզել հայ անձնազոհներին, որ վեց տերություններին հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ Կ. Պոլսի դաշնակցական կոմիտեի ներկայացրած պահանջագրին բավարարություն կտրվի, եթե նրանք թողնեն բանկը և անցնեն նավահանգստում իրենց սպասող նավը, որը նրանց պատրաստ է հեռացնել ապահով տեղ: Նավում արդեն նրանց հիասթափությունը անցնում է բոլոր սահմանները, երբ նրանց այցելած դիվանագետները հասկացնում են, որ կատարված քայլը անհեռանկար է: Ապստամբներին հասցնում են Եվրոպա, իսկ Կ. Պոլսում սկսվում է ահավոր հաշվեհարդարը: Կառավարության կողմից նախապատրաստված թուրք մոլեռանդ զանգվածները երեք օր ու գիշեր անխնա կոտորում էին պատահած հայերին, կոտորած, որին զոհ դնաց մոտ տասը հազար պոլսեցի հայ:

Կոստանդնուպոլսի հայ պատրիարքները, որոնց սուլթանը և նրա կառավարությունը դիտում էին որպես պաշտոնական քաղաքականության կիրառողներ, առավել ծանր կացության մեջ էին 1890-ական և դրանց հաջորդած տարիներին, երբ բուն սուլթանական կառավարության ներսում երերում էր միապետական համակարգը, և համապատասխանաբար էլ ավելի կամայականությունների ենթակա էին դառնում այլ ժողովուրդների կրոնավարչական ղեկավարության օղակները: Մասնավորապես ծանր վիճակ է ստեղծվում պատրիարք Մատթեոս Իզմիրլյանի համար, մանավանդ, որ նա մշտական հակասությունների մեջ էր Բ. Դռան հետ և գտնվում էր որևէ նախաձեռնություն ու կամք չհանդուրժող սուլթանի մշտական դիտակետում: Ներքին պայքարը ապագա կաթողիկոս Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցու (1845–1910) և կառավարության միջև սկսվել էր վաղուց, երբ նա՝ Մ. Խրիմյանի հայացքների հետևողական պաշտպանը, փորձում էր գործողության մեջ դնել ծրագրված նախաձեռնումները: Մեծ դիմադրություն հաղթահա-

բելով, 1894 թ. ի վերջո առաջադիմական ուժերի օգնությամբ նա զբաղեցրեց պատրիարքական աթոռը՝ վաստակելով «Երկաթյա պատրիարք» անունը: Սակայն զոհ գնալով մշտական սադրանքներին՝ նա փաստորեն աքսորվեց Կ. Պոլսից՝ նշանակվելով Երուսաղեմի թեմի առաջնորդ: Մ. Իզմիրլյանի դեմ օգտագործվեցին նաև ազգային ժողովի այն պահպանողական պատգամավորները՝ Հ. Նուրյանի գլխավորությամբ, որոնք ժամանակավորապես լռել էին Խ. Աշգյանի հեռանալուց հետո: Պատրիարք Իզմիրլյանի վարքագիծը հատկապես գրգռում էր սուլթանին, երբ նա բացահայտում էր վերջինիս խարդավանքները իր գործած ոճիրների և դրանք Եվրոպայի աչքում որպես հայերի մեղքը ներկայացնելու խնդրում: Պատրիարքը պահանջում էր, որպեսզի նման դեպքերում բացատրություններ տրվեն պատրիարքարանից և ոչ թե Բ. Դոնից, որը փաստերը ներկայացնում էր դլխիվայր, շրջած ձևով:

Պոլսահայ և արևմտահայ կյանքի մտավոր և ֆիզիկական բնաջնջումը իրագործելուն զուգընթաց Աբդուլ Համիդը փորձում էր նաև «բարի» կառավարողի համբավ հանել: Շարունակ փակման առջև կանգնեցնելով «Հայրենիքը», ժամանակավորապես արգելելով «Մասիսն» ու «Արևելքը» նա արտոնություն տվեց իր լիբերալիզմով աչքի ընկնող Բ. Քեչյանին հիմնելու նոր պարբերաթերթ «Բյուզանդիոն»-ը: Հետագայում նրա խմբագրությունն ստանձնեց նշանավոր բանասեր-պատմաբան Արշակ Ալպոյաճյանը (1879–1962): Մեծածավալ «Բյուզանդիոնը», չնայած իր չափավոր և զգուշավոր ուղղությանը, այսուհանդերձ նշանակալից գործ կատարեց դարավերջում Կոստանդնուպոլսում գործունեության ասպարեզ իջած երիտասարդ տաղանդների զարգացման համար՝ իր էջերը տրամադրելով նրանց: «Բյուզանդիոնին» աշխատակցել են Անայիսը (1879–1962), Ռ. Պերպերյանը (1848–1907), Հովհ. Հինդլյանը (1866–1950), Սիպիլը (1863–1934), Զարուհի Գալեմքարյանը (1874–1971), Զապել Եսայանը (1878–1943), Օննիկ Զիֆթե-Սարաֆը (Հովհաննես Սողոմոնյան, Ասպետ, 1874–1932), Մ. Գոչունյանը (1863–1913), Հովհ. Գազանճյանը (1870–1915), այսինքն՝ Կոստանդնուպոլսում ծնված և նրա դպրոցներում ու Եվրոպայում կրթված արդեն նշանավոր կամ խոստումնալից գրողների, լեզվաբանների, գրականագետների, տնտեսագետների, հրապարակախոսների մի տաղանդավոր համաստեղություն:

1896 թ. նոյեմբերի 3-ին հրավիրված Ազգային ժողովում պատրիարք ընտրվեց Մաղաքիա Օրմանյանը (1841–1908): Բանասեր, պատմաբան,

բազմաթիվ լեզուների տիրապետող, «Ազգապատումի» հեղինակ այս նշանավոր հոգևորականը ծանր ժամանակներում կարգվեց պատրիարք: Ժամանակակիցները դժգոհ էին կառավարության հետ նրա վարած հաշտվողական քաղաքականությունից: Բուզանդ Քեչյանը, որ Մ. Օրմանյանի կողմից ամենահովանավորված հրապարակախոսն էր, մանավանդ «Բյուզանդիոնի» հրատարակման ընթացքում (1896–1918), նրա մասին գրել է. «Օրմանյան լավ գործեց իբրև գործի մարդ, բայց սիրտ պակսեցավ իրեն»[1]:

Ամենից լավ իր շուրջը ստեղծված մթնոլորտի մասին խոսում է ինքը՝ Մ. Օրմանյանը: Նա գրում է, թե հայ ազատագրական շարժումներին հետամուտ կուսակցությունները «... զիս իրենց կողմնակից գիտնալով, Կարնո դեպքերուն հետևանոք, իմ պատրիարքական ընտրության չէին ընդդիմացած, մինչև իսկ ընտրությունս շնորհավորեցին իբր իրենց տեսության համակիր և գործադիր, բայց երբ տեսան, որ դիրերը փոխվելով Մաղաքիա պատրիարքը իրենց տեսած Օրմանյանը չէ, և ազգային պաշտպանությունն ու խնամքը զինքն նոր պատասխանատվության կենթարկե, սկսան դիրերով և այցելություններով իրենց տեսությանը համակերպելու ստիպել, և երբ այդ ճամփուն մեջ ալ չհաջողեցան, սպառնալից դիրերով, և մինչև իսկ օտարազգի միջնորդներով հրաժարելու բռնադատիլ ձեռնարկեցին»[2]: Նա հաճախ կրկնում է, որ «ազգին ամենեն փոթորկալի վիճակին մեջ զիս պատրիարք կարգեցին»:

1908 թ. հուլիսի 16-ին Կոստանդնուպոլսում կուսակցությունների կազմակերպած բազմամարդ ցույցի մասնակիցները, ներխուժելով պատրիարքարան, պահանջեցին հոգևոր առաջնորդի հրաժարականը: Մ. Օրմանյանի պաշտոնավարությունը ավարտվեց: Ազգային ժողովը 1909 թ. նորից պատրիարք ընտրեց Մ. Իզմիրլյանին:

Թեև արդեն զգացվում էր նյութվող ոճիրը ողջ ժողովրդի դեմ, բայց պոլսահայ դպրոցի և հասարակական ու բարեգործական կազմակերպությունների պատմությունը 19-րդ դարի 90-ական թվականներին և 20-րդ դարի սկզբին, այնուամենայնիվ, մի յուրօրինակ հոգևոր զարթոնքի նոր էջ է:

19-րդ դարի վերջին արդեն նկատելի էր ուսման դործին լծված պոլսահայ առաջադեմ մտավորականների ձգտումը՝ ընդհանուր սիստեմի

---

1 Ե ր ա մ յ ա ն Հ., Հուշամատյան, հ. III, էջ 472:

2 Օ ր մ ա ն յ ա ն Մ., Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 33:

բերելու կրթական գործը, այդ թվում նաև գավառահայության ուսման խնդիրը: 1873 թ. Կոստանդնուպոլսում լույս տեսավ կենտրոնական վարչության ուսումնական խորհրդի մշակած «Կանոնադրություն ընդհանուր բարեկարգության ազգային վարժարանաց» ծրագիրը, որը հենց նշված նպատակն էր հետապնդում: Այն հիմնականում հենվում էր Ս. Փափազյանի 1863 թ. մշակած նույնանուն ծրագրի դրույթների վրա, ծրագիր, որտեղ առաջարկվում էր գավառներում նույնպես հիմնել նախակրթարաններ և դրանց կից ծաղկոցներ 5–6 տարեկան երեխաների համար, ինչպես նաև երկրորդական վարժարաններ ուսման վեցամյա տևողությամբ: 1880 թ. Կ. Պոլսում հիմնադրված «Միացյալ ընկերություն հայոցը», որի ղեկավարներն էին Մ. Ջերազը և Ա. Արփիարյանը, իր 16 ճյուղերը ստեղծեց գավառներում, իսկ 1884 թ. ընկերությունն ուներ 46 դպրոց մոտ երեք հազար աշակերտով: Հիշատակության արժանի են նաև 1879 թ. Զապել Խանճյանի (հետագայում Հր. Աստուրի կինը, Զապել Աստուր, Սիպիլ գրական անվամբ) և նույն թվականին Սրբուհի Տյուսաբի ջանքերով հիմնված «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը» և «Դպրոցասեր հայուհյաց ընկերությունը», որոնց նպատակը հայ վարժուհիներ պատրաստելն էր: Ընդհանրապես պոլսահայ ազգային դպրոցի մեծագույն մտահոգություններից է եղել միջնակարգ կրթության կազմակերպման հարցը: Հատուկենտ միջնակարգ դպրոցները եղել են մասնավոր և կարճ կյանք են ունեցել: Դրանցից աչքի էին ընկնում Մեզպուրյան իգական (1879–1890), Նուպար-Շահնազարյան արական (1869–1876), Հակոբ Գուրգենի Հայկական արական (1876–1888) վարժարանները: Ավելի արդյունավոր և երկարատև եղավ Հայտնի մանկավարժ Ռ. Պերպերյանի 1876 թ. բացած երկրորդական վարժարանը, որը շարունակեց իր գոյությունը մինչև 1927 թ.: Երկարատև կյանք ունեցավ նաև «Դպրոցասեր հայուհյացի» վարժուհիանոցը, որը 1896-ին փակվեց, ապա վերաբացվեց 1908-ին, իսկ 1922-ից տեղափոխվեց նախ Սալոնիկ, ապա Փարիզ:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին վերելք էր ապրում գրական կյանքը տալով դեմքեր, որոնց ստեղծագործությունը մտնում է ողջ հայ գրականության ոսկե ֆոնդը: Այդ գրականությունը, իր գեղագիտական տարբեր ըմբռնումներով, կենսահաստատ էր, օժտված էր փակուղուց ելք որոնելու առանձնահատկությամբ, խորապես գեղարվեստական էր և ներգործուն:

Այս առումով իրոք տարողունակ են նախահեղեղնյան գրական մթնոլորտը բնութագրող, մեր ժամանակների նշանավոր գրականագետ, ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի խոսքերը: «Իսկ ինչպե՞ս էր վիճակը հայ ժողովրդի ու նրա մտավորականության մեջ,– հարց է տալիս գրականագետը և պատասխանում.– Զարմանալի՜ ժողովուրդ... դավին անտեղյակ, հայերը ապրում էին ստեղծման, աշխատանքի և մտավոր վերածնության մի զարթոնք: Մի անօրինակ աշխուժություն էր տիրում պոլսահայության մեջ: Կովկասից եկած թատերախմբերը բացառիկ ընդունելություն էին գտնում բազմազգ ժողովուրդների մեջ, հայ դրաման իշխում էր Պոլսում: Այդ օրերին Կոմիտասը բոլոր ազգերին զարմացնում և հմայում էր հայկական երգով ու երաժշտությամբ: Երեկոներին հնչում էր հայոց բանաստեղծությունը, բացառիկ ոգևորություն առաջացնելով երիտասարդության շրջանում: Ասուլիսներում քննարկվում էին նշանավոր գրողների երկերը: Արագությամբ ամրապնդվում էին արևելահայ և արևմտահայ մշակութային, գրական ու հոգևոր կապերը: Պոլսում կողք-կողքի քայլում էին Իսահակյանն ու Սիամանթոն. երկու մեծ բարեկամները...

Հայ բանաստեղծները այս մթնոլորտի մեջ ստեղծում էին նոր արժեքներ՝ սեփական ժողովրդի ու աշխարհի համար: Մի կողմից նրանք շարունակում էին խորացնել ազգային թեման, տալով նրան համամարդկային գունավորում և իմաստ, մյուս կողմից՝ բարձրացնում համաշխարհային խնդիրներ, որոնք այնքան հարազատ ու օգտակար էին մայրենի ժողովրդի համար... Ավելի որոշ ասած՝ հայ գրողներն արդեն մրցության էին գնում ժամանակի եվրոպական առաջավոր գրողների հետ, դրա համար ունենալով կենսական ու գրական անհրաժեշտ փորձ և հարուստ ձիրքեր»[1]:

Արևմտահայը և պոլսահայ մտավորականությունն ապրել և դիմակայել էր ուզում, ապրել՝ ստեղծելու համար, որքան էլ տեսանելի էին և՛ ոճիրը և՛ եղեռնը: Արևմտահայը չէր ուզում ընդունել մահվան գաղափարը, թեև չափազանց անմարդկային և անհեթեթ էր ապագայի հեռանկարը... Գրիգոր Զոհրապի (1861–1915)՝ եղեռնի զոհ մեծերից մեկի մասին խոսելիս ժամանակակիցները միաբերան նշում էին նրա լավատեսությունն ու անմար երիտասարդությունը: Միսաք Մեծարենցը չի թաքցնում իր հիացմունքը Գր. Զոհրապի վաղ ստեղծագործություններ-

---

1 Հ ր ա ն տ Թ ա մ ր ա զ յ ա ն, Արևմտահայ բանաստեղծության բախտը.– Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Երևան, 1986, էջ 220–221:

րի, բանաստեղծությունների նկատմամբ: Նա գրում է, թե «Պիտի փափագեինք, որ իր գեղեցիկ ոտանավորներուն երիտասարդությունը անդադար խոսեր մեզի»[1]:

Կրթությամբ լինելով իրավաբան, հրաշալի տիրապետելով նաև թուրքերենին՝ Գր. Զոհրապը 1909 թ. կոտորածների նոր ալիքից հետո ելույթ ունեցավ պառլամենտում՝ պախարակելով կառավարությանը, այս ձևով գոնե բարձրացնելով իր ժողովրդի ձայնը: Նա հասարակական ակտիվ գործիչ էր, հրապարակախոս, ըստ որում, 1892–1898-ին Հր. Ասատուրի, իսկ 1898-ին նրա կոնջ՝ Սիպիլի հետ խմբագրել է «Մասիս» նախ գրական-գեղարվեստական շաբաթաթերթը, ապա օրաթերթը: Նրա վեպերը, նորավեպերը տպվել են «Մասիս», «Հայրենիք», «Ազատամարտ», «Արևելք» պարբերականներում: Որքան էլ բազմաժանր ու բեղմնավոր իր գրական ժառանգության մեջ, Գր. Զոհրապն, այսուհանդերձ, գրականության պատմության մեջ, խոր և անջնջելի հետք է թողել իր նորավեպերով: Նա դրանց անգերազանցելի վարպետն էր և հասել էր գեղարվեստական ընդհանրացման փայլուն հաջողությունների:

Լինելով խորապես մարդկային և առաջադեմ մտածող, պայքարելով իր ժողովրդի փրկության և ապագա ճակատագրի համար, որի լավագույն ելքերից մեկն էլ նա տեսնում էր Ռուսաստանին ապավինելու մեջ, Գր. Զոհրապն, այսուհանդերձ, իր ողջ ներքին զգացողությամբ չէր կարող պատկերացնել այն հրեշավոր ոճիրը, որը նյութվում էր իր ժողովրդի դեմ և անգամ աքսորի ճանապարհին (նրան բանտարկել են 1915 թ. մայիսի 20-ին), նա հույս ուներ, որ կատարվածը թյուրիմացություն է, այսպես չի կարող պատահել:

Այլ էր բանաստեղծ Սիամանթոյի (Ատոմ Յարճանյան, 1878–1915) պոետիկայի ընդհանուր երանգը՝ հույսի և ողբերգականի, ժողովրդի մռայլ ճակատագրի, նրան սպասող արհավիրքի գրեթե իրատես դիտակցությամբ: Անսահման սերը դեպի հայրենիքը թույլ չէր տալիս բանաստեղծին ընդմիշտ լքել այն՝ ունենալով դրա հնարավորությունը, քանի որ ունևոր վաճառականի որդի էր: 1894–1896 թթ. կոտորածներից սարսափած, թողնելով Կ. Պոլիսը և թափառելով Եվրոպայով մեկ՝ նա դարձյալ վերադարձավ իրեն հարազատ միջավայրը, սկսեց թղթակցել «Անահիտ», «Բանբեր», «Ազատամարտ» պարբերականներին՝ հանդես գալով

---

1 *Մ ի ս ա ք Մ ե ծ ա ր ե ն ց, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1934, էջ 288:*

որպես արևմտահայ գրականության մեջ նոր որակ բերող մտքի և խոհի բանաստեղծ:

Սիամանթոն չտարվեց երիտթուրքական հեղաշրջման շուրջ առաջացած ոգևորությամբ և չհավատաց հավասարության մասին նրանց երկդիմի խոստումներին. դեռ 1915 թ. արյունալից օրերից շատ առաջ արդեն զգում էր գալիքը, որն արտահայտեց «Կարմիր լուրեր բաբեկամես» շարքում (1909) և որը Վարուժանը կոչեց «Տաղանդավոր ոճերերգություն»:

19-րդ դարի վերջին արևմտահայ քնարերգությունը տվեց մի հուժկու հանճար՝ Դանիել Վարուժանին (Զալուգքյարյան Դանիել, 1884–1915), որն իր երեսնամյա կարճատև կյանքում կարողացավ ստեղծել բանաստեղծական այնպիսի հարուստ երգապնակ, որը կարող է մրցել համաշխարհային չափածո գրականության շատ ու շատ մեծերի հետ՝ մնալով հանդերձ ազգային ու ինքնատիպ:

20-րդ դարի առաջին տարիների մռայլ իրականության մեջ, որն էլ ավելի օրհասական էր Արևմտահայաստանի համար, գրական ասպարեզ իջավ հայ մի նոր լուսաշող աստղ՝ Միսաք Մեծարենցը (Մեծատուրյան, 1886–1908): Իր լավատեսական, պայծառ քնարով մի կարճ ժամանակ հեղհեղելով պոլսահայ կյանքը, հեռացավ նրանից Պ. Դուրյանի տարիքում՝ անջնջելի հետք թողնելով ողջ հայ քնարերգության պատմության մեջ:

Այս շրջանի արևմտահայ գրականության նշանավոր դեմքերից է Ե. Օտյանը, որը սկսել է ստեղծագործել Կ. Պոլսի մամուլում: Նրա ընտրած ժանրը՝ երգիծանքը, պոլսահայ վաճառականական, քաղքենիական տների, հայ մեծատունների ցուցադրական ազգասիրության, նրանց վարքի ու բարքի դեղարվեստական, ծաղրված վերարտադրությունն է, միաժամանակ խարազանումը տարբեր կուսակցություններին պատկանող այն գործիչների վարքագծի, որոնք, շահարկելով ժողովրդին ծառայելու իրենց կոչումը, երբեմն գործում էին նույն ժողովրդի շահերին դեմ՝ հետամուտ լինելով միայն անձնական փառասիրությանն ու սնապարծությանը:

Եղեռնի մեծանուն զոհերի թվում էր երիտասարդ Ռուբեն Սևակը (Զիլինկիրյան Ռուբեն, 1885–1915): Իր քնարական գործերով, վաղամեռիկ նահատակ բանաստեղծն ապահովել է իր կայուն տեղը 20-րդ դարի սկզբի արևմտահայ գրականության անդաստանում:

Կոստանդնուպոլսում ծնված և այնտեղ իր գրական մուտքն սկսած Վահան Թեքեյանը (1878–1945) թերևս պոլսահայ նշանավոր դեմքերի մեջ քչերից մեկն է, որ մինչև 1915 եղերական թիվը մնալով Կ. Պոլսի գրական պառնասում, խուսափել է ողբերգական վախճանից՝ լքելով Թուրքիայի մայրաքաղաքը, հող գտնելով հյուրընկալ Եգիպտոսում, ուր և շարունակել է ստեղծագործել՝ իրավամբ վաստակելով «արևմտահայ դասական բանաստեղծության վերջին և սփյուռքահայ բանաստեղծության առաջին խոշոր դեմքը» բնութագիրը:

20-րդ դարի առաջին տասնամյակում քաղաքական պայքարը Արևմտահայաստանում և Կոստանդնուպոլսում, ազգային-ազատագրական շարժումների ծանր ու ողբերգական դրսևորումներով, մոտենում էր իր գագաթնակետին: Հայ հասարակական միտքն ու Կոստանդնուպոլսում գործող հայ քաղաքական կուսակցությունները ելք էին փնտրում փակուղուց: Աբդուլ Համիդի բռնատիրությունը կործանելու հետևողականությունն էր առիթը, որ դեռևս 1902 թ. հրավիրված երիտթուրքերի առաջին կոնգրեսում հայ ազգային կուսակցությունները՝ ի դեմս վերակազմյալ հնչակյանների և «Հայ հեղափոխական դաշնակցության» առաջնորդների, կապեր հաստատեցին երիտթուրքական Անձնական նախաձեռնություն և Ապակենտրոնացման ընկերությունների հետ և 1903 թ. Փարիզում ու Ժնևում բանակցություններ սկսեցին Սաբահեդդինի և Ահմեդ Ռիզայի հետ՝ ինքնակալության կործանման համատեղ միջոցառումների շուրջ: Օսմանյան կայսրության ընդդիմադիր այլազգի կուսակցությունների ներկայացուցիչների հետ վարած մշտական հաղորդակցման արդյունքն այն եղավ, որ երիտթուրքերի՝ Փարիզի կենտրոնին հաջողվեց 1907 թ. դեկտեմբերի 27-ից 29-ը նստել ընդհանուր բանակցությունների սեղանի շուրջ: Կոնգրեսին իրենց ներկայացուցիչներն էին ուղարկել բոլոր ընդդիմադիր կուսակցությունները՝ «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կուսակցությունը, «Հայ հեղափոխական դաշնակցությունը», հրեական բանվորական «Լավորա» կազմակերպությունը, արաբական ընդդիմադիր միությունները և մի շարք ընդդիմադիր թերթերի խմբագրությունները:

Կոնգրեսում ընդունված դեկլարացիայում երիտթուրքերը խոստացան ազգային փոքրամասնություններին տալ ինքնավարություն և սահմանադրությամբ նախատեսված այլ արտոնություններ, որոնք, սակայն, նրանք մոռացան իրագործել իշխանության գալուց անմիջապես հետո, ինչը տեղի ունեցավ 1908 թ. հուլիսի 24-ին:

Գրեթե անարյուն տեղի ունեցած հեղաշրջման հետևանքով երիտթուրքերը չահեցին սահմանադրական ժողով ընտրելու իրավունք, որը հրապարակվեց 1908 թ. հոկտեմբերին, ըստ որում, նրանք ոչ միայն գահի վրա պահեցին Աբդուլ Համիդին, այլև նորընտիր կառավարության մեջ նախարար ընտրեցին նրա նախկին մեծ վեզիրին: այսինքն, սահմանադրության ընդունումով երիտթուրքերը ավարտված էին համարում իրենց հեղափոխական պայքարը և իշխան Սաբահեդդինի արտահայտությամբ՝ պիտի անցնեին արդեն էվոլյուցիոն զարգացման ուղին:

Կոստանդնուպոլսի հայ հանրության՝ 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի պատմությունը ողբերգական վերջաբանով ընդհատվեց 1915 թվականին: Եղեռնից հետո, պատառիկներից վերակազմված իր գոյությունը շարունակելով, պոլսահայությունը ամենևին չուներ իր նախկին փայլը, զորությունն ու նշանակալիությունը:

ԶՄՅՈՒՌՆԻԱ

Զմյուռնիան և նրան կից Էգեյանի շրջանները Հայկական հնագույն գաղթավայրերից են. սրանց առաջացումը հայ պետականության կորստյան, օտար նվաճողների ասպատակությունների և երկրի տնտեսական ու քաղաքական անապահով վիճակի հետևանքն էր: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375) ժողովրդի մի մասը գերեվարվեց, մի մասը կոտորվեց, իսկ մյուս, շատ ավելի ստվար մասը տեղահանվեց կամ գաղթեց Փոքր Ասիայի ու եվրոպական տարածքներով մեկ:

Հայերը Զմյուռնիա են գաղթել 14–18-րդ դդ.՝ մի քանի խոշոր հոսանքներով, որոնցից առաջինի հետ էլ (Կիլիկիայի հայկական թագավորության վերանալուց հետո) կապվում է Զմյուռնիայի գաղթօջախի գոյացումը[1]: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ Զմյուռնիայում հայ առևտրականության գործունեության փաստերը հայտնի են շատ ավելի հին ժամանակներից: Հայտնի է, որ 13-րդ դ. առաջին կեսին ապրանքափոխանակության աշխուժացումը սելջուկյան՝ Իկոնիայի ռումի սուլթանության, Նիկեայի և Տրապիզոնի հունական կայսրությունների, ինչպես և իտալական քաղաքների միջև կարևոր խթան դարձավ առհասարակ փոքրասիական առևտրի զարգացման համար: Այս ժամանակաշրջանում, նշում է Հ. Մանանդյանը, հայ առևտրականները «ունեին այժմ համաշխարհային կապեր և մշտական հարաբերություններ լեվանտական առևտրի կենտրոնների հետ, որտեղ սելջուկյան արշավանքներից հետո գոյացել էին հայկական գաղութներ»[2]:

Գաղթօջախի հաստատումից առաջ, սակայն, Զմյուռնիայում արդեն նկատելի էին հայ առևտրականության ներկայության հետքեր: Միքայել Պալեոլոգ կայսրի և Ջենովայի վաճառականների միջև 1261 թ. մարտի 13-ին կնքված դաշնագրում հիշվում են նաև հայ առևտրականներ[3]: Զմյուռնիայի հայերից էր Կ. Պոլսում հաստատված՝ ժամանակի ականավոր մաթեմատիկոս Նիկողայոս Արտավազդ Ռաբդասը (Ռավտաս), որը գործել է Անդրոնիկ Գ կայսեր ժամանակ (1328–1341) և որի անվան

---

1 Քոսյան Հ., Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 39:

2 Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Երևան, 1952, էջ 166:

3 Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հ. Բ, Կահիրե, 1955, էջ 530–531:

հետ է կապվում մաթեմատիկայի մեջ առաջինը քառակուսի արմատ հանելու եղանակը[1]: Անշուշտ, 13-րդ դարում, չի բացառվում նաև դրանից առաջ, հայ վաճառականների առկայությունը կամ գործառնությունները Զմյուռնիայում դեռևս հիմք չեն տալիս հաստատապես խոսելու գաղթօջախի գոյության մասին: Հարկ է որոշակիորեն սահմանազատել առևտրական գաղութ և գաղթօջախ հասկացությունները, որոնք որակապես տարբերվում են միմյանցից: Առևտրական գաղութը փոքրաթիվ է և պատահական միավորման բնույթ ունի: Այդպիսի համախմբումը կատարվում էր զուտ առևտրի բերումով, նույնքան պատահական էր, որքան իր ցրվելը՝ կապված առևտրական գործարքների ավարտի հետ: Մինչդեռ, գաղթօջախը ենթադրում է նույն ազգությանը, լեզվին ու դավանանքին պատկանող շատ ավելի նշանակալի թվաքանակով անձանց հանրություն, որ հանգրվանել է ոչ թե տարանցիկ առևտրի, այլ իր բուն կեցության, մշտական բնակության անհրաժեշտությամբ՝ գոյացնելով իր սոցիալական որոշակի միջավայրը: Զմյուռնահայ գաղթօջախի սկզբնավորման, այնուհետև՝ հետագա պատմության շատ դրվագներ ցույց են տալիս, որ այստեղ բնակություն են հաստատել գլխավորապես այն շրջանների հայերը, որտեղից նախապես եկել էին իրենց հայրենակից վաճառականները: Հետևաբար, այս գաղթօջախի հաստատման ժամանակը չպետք է նույնացնել առևտրական գաղութի ստեղծման ժամանակի հետ՝ վերջինս նախորդում է գաղթօջախի կազմավորմանը: Պետք է ընդունել Հ. Քոսյանի կարծիքը, ըստ որի, գաղթօջախի կազմավորումը տեղի է ունեցել 14-րդ դ. վերջին քառորդին, իսկ ինչ վերաբերում է առևտրական գաղութին, ապա այն գոյություն ուներ 11–12-րդ դդ.՝ սելջուկների ժամանակից ի վեր: Մ. Զամչյանը ևս նշում է, որ Կիլիկիայի անկումից հետո «բազումք ևս վաղագոյն աճապարեալ խոյս ետուն յաշխարհս հեռաւոր ի կողմանս Փոքուն և Մեծին Հայոց և յերկիրն Վրաց և Աղուանից և ի սահմանս Յունաց և Պարսից ևս և ի կղզիս և ցրուեցան յայլևայլ թագաւորութիւնս քրիստոնէից, որոնց թիւ եղեւ ըստ ոմանց իբր երեսուն հազար անձանց և ըստ այլոց աւելի յոյժ»[2]:

Սրանով հանդերձ, Էգեյան և Մարմարա ծովերի կողմ հայերի գաղթը միանշանակ, այսինքն՝ միայն Կիլիկիայից չպետք է հասկանալ: Լենկ-

---

1 Ա դ ո ն ց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 536:

2 Զ ա մ չ յ ա ն Հ., Հայոց պատմութիւն, հ. Գ, Երևան, 1984, էջ 359:

թեմուրին նախորդած և նրան անմիջապես հաջորդած ժամանակներում գաղթերը հետևել են մեկը մյուսին ամբողջ Հայաստանից: Արարատյան դաշտից ևս, Ագուլիսից, Նախիջևանից, Զուղայից, Երևանից հայ բնակչությունն անցնում էր փոքրասիական քաղաքներ, Կ. Պոլիս և հարակից շրջաններ: 14-րդ դ. վերջին քառորդին և 15-րդ դ. առաջին տասնամյակներին Էգեյանի և Սև ծովի շրջանները գտնվում էին Ջենովայի առևտրական ազդեցության ոլորտում, ուստի նաև դրանով պետք է բացատրել հայ գաղթականների նպատակադրված անցումը դեպի Զմյուռնիայի շրջան:

Ցայսօր հայտնի Զմյուռնիայի և Այտընի ամենահին դամբանագրերը վերաբերում են 1551 և 1561 թվականներին: Սակայն ավելի հին դամբանագրերի հայտնի չլինելը դեռևս չի նշանակում, թե այդ ժամանակից առաջ Էգեյանի ափերին հայ գաղթականներ չեն եղել:

Հայերի Էգեյանի շրջան գաղթի երկրորդ խոշոր հոսքը տեղի է ունեցել 1620-ական թթ., երբ ջալալիների ապստամբություններից, պարսկա-թուրքական ավերիչ պատերազմներից և սովից պատուհասված բազմաթիվ հայեր անցան Միջերկրականի և Էգեյանի ափերը: Դեռևս 1608 թ. գրված մի հիշատակարանում նշվում է, որ հայրենիքը թողած հայ բնակչությունը «...Ոչ թէ մասնավոր մի երկիր կամ երկու, այլ ընդհանրական սկսեալ ի Դրանէն Հոնաց և Ալանաց և ի լեռնէն Կովկասու մինչև ի Պոնտոս և յԵփեսոս և ի Կապադովկեայ և մինչև ի Դամասկոս և ի Սիս, և ի Միջագետս: Բոլոր Հայաստան ամենայն ցիր և ցան եղեն»[1]:

Այս ժամանակներից վերջնականապես կազմավորվեցին Զմյուռնիայի և նրա հարակից շրջանների (Այտընի, Բայանդրը, Նազիլի, Մանիսա, Դենիզլի, Էյդեմիշ, Գուշադա և այլն) հայկական գաղթօջախները: Հայերը գաղթել են հիմնականում Սյունիքից (Շաշկերտ, Շվանիձոր, Կալեր, Մանվև, Գումարք, Ղափան, Զավնդուր, Սրաշեն և այլն), ինչպես նաև Ղարաբաղի գյուղերից, Նախիջևանից, Երևանից, Ագուլիսից և Արարատյան դաշտի այլ բնակավայրերից: Գաղթել են նաև Արևմտյան Հայաստանից բազմամարդ, մի քանի հարյուրի հասնող ընտանիքներով: Այսպես, հայտնի է, որ 1606 թ. կողմերը Խարբերդի շրջանում ասպատակում էր ջալալի Թավուլը, որը «աւեր էած աշխարհի մինչև ի մեծ

---

1 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 289:

ծովեզերն Եփեսոս ի Զմիւռին»[1]: Թավուլի գերեվարություններից հետո հարյուրավոր խարբերդցիներ են հայտնվել Մանիսայի Վերին թաղում, ինչը լեզվական տվյալներով ապացուցել են Հ. Աճառյանն ու Կայծոռիկը[2]:

Զմյուռնիայի և Մանիսայի՝ 17-րդ դ. սկզբների գաղթականության վերաբերյալ արժեքավոր են Սիմեոն Լեհացու տեղեկությունները: Մանիսայում նա գտնում է մի քանի հարյուր տուն հայ ընտանիք և եկեղեցի, Զմյուռնիայում՝ հարյուր ընտանիք: Զմյուռնիայի հայ բնակչությունը այս ժամանակաշրջանում նոսրացել էր ջալալիների ապստամբությունների և դրանցով պայմանավորված՝ ճանապարհների անապահովության պատճառով: Սիմեոն Լեհացին հայտնում է, որ այս հարյուր ընտանիքը ուներ երկու եկեղեցի[3]: Զմյուռնիայում հայ բնակչությունը մարդաշատ է դարձել 1620-ական թթ.: Հաջորդ տասնամյակին ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն արդեն հաշվում է 8000 զմյուռնահայերի (1831 թ.): Էգեյանի ափերին այս շրջանում հանդիպանել էին նաև հայեր՝ Սեբաստիայից, Կարինից, Թոքատից, Կեսարիայից: 17-րդ դ. սկզբներին թվաշատ գաղթականություն էր առաջացել նաև Մենեմենում (Մելքիսեդեկ կաթողիկոսի ժամանակ այստեղ կառուցվել է Ս. Սարգիս եկեղեցին) և Այդընում, ուր կար 500 հայ ընտանիք:

Դեպի Էգեյանի մերձափնյա տարածքները հայերի գաղթը շարունակվել է 1630-ական թթ.՝ Արևելյան Հայաստանից: Այստեղից բնակչության տեղաշարժերը, գաղթը դեպի փոքրասիական տարածքներ միաժամանակյա չեն եղել, այլ՝ տասնամյակների ընթացքում շարունակվող, տարբերայնորեն ընթացող գործողություն: Ընդ որում, գաղթի հոսքը առավել ուժեղ էր մինչև 1640-ական թթ., մինչև պարսկա-թուրքական պատերազմների ավարտը: Այս ժամանակաշրջանում հայ համայնքներ առաջացան կամ թվաքանակով կայունացան Բայանդրում, Նազիլիում, Պերկիում, Ագհիսարում: Գաղթականների մեջ առավել բազմամարդը դարձյալ Սյունիքից եկած հայերն էին: Ղափանի, Մեղրու և կից շրջաններից հայ բնակչության գաղթի գործում հարկ է հաշվի առնել տեղացի վաճառականների ընդարձակ կապերը փոքրասիա-

---

1 *Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ., կազմ. Վ. Ա. Հակոբյան, հ. II, Երևան, 1956, էջ 277:*

2 *«Բյուրակն», 1899, № 25, էջ 403:*

3 *Սիմեոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 37–38:*

կան արևմտյան շրջանների, արշիպելագի կղզիների և իտալական առևտրական կենտրոնների հետ: Այս կապերն էին, որ նախորոշեցին սյունեցիների պարբերական գաղթերի ուղղությունը 17-րդ դ. և դրանից հետո էլ: 16–17-րդ դդ. Վենետիկի հայ գաղթօջախում շատ ազդեցիկ դեր ունեին հատկապես մեղրեցի վաճառականները, և այս հանգամանքը ինքնին վկայում է նրանց իտալական քաղաքների հետ ունեցած սերտ կապերի մասին: Հայրենիքից գաղթականների ընթացքն ուղղություն էր ստանում Զմյուռնիային վաղածանոթ սյունեցի վաճառականների խորհրդով և առաջնորդությամբ: Նույնը պետք է ասել ագուլեցի այն առևտրականների դերի վերաբերյալ, որ ունեցել էին նրանք Զմյուռնիայում հայրենակիցներին վերաբնակեցնելու գործում:

Շահ Աբասի ժամանակներից ի վեր շարունակվող գաղթերը ամբողջ 17-րդ դ. մարդաշատ պետք է դարձնեին Զմյուռնիայի և շրջակայքի հայ գաղթավայրերը: Մինչդեռ Զմյուռնիայի օրինակով այդպիսի աճ չի նկատվում: Տավերնիեից հետո, 1700 թ. հայերի թիվը այստեղ դարձյալ կազմում էր 8000 մարդ (քաղաքի ընդհանուր բնակչությունը՝ 90.000), իսկ 1731 թ.՝ 7.000 (ընդհանուր բնակչության թիվը՝ 76.000)[1]: Զմյուռնիայի բնակչության ընդհանուր թվաքանակի նվազումը հաճախակի երկրաշարժերի, հրդեհների և ժանտախտի ու այլ համաճարակների հետևանքն էր: «Մի քանի տարի առաջ,– գրում է Զմյուռնիա այցելած Լյուդովիկոս 14-րդի բժիշկ Լուկան,– 10.000 հոգի զոհ տվավ (Զմյուռնիան – Ա. Խ.) ժանտախտի ու անկե ետքն եկող հիվանդություններն ալ ոչ նվազ վտանգավոր եղան... 1688-ին այնքան ահռելի եղավ (երկրաշարժը – Ա. Խ.), որ քաղաքն բոլորովին կործանեցավ»[2]: Այդ երկրաշարժի ավերիչ ուժն այնքան հզոր էր, որ կործանել էր Ս. Ստեփանոս եկեղեցին: Եկեղեցու նորոգման արձանագրության մեջ այս առթիվ գրված է. «Ի թուին ՌՃԼԷ (1688) յունիսի 30 շարժ եղեւ յԻզմիրու, առաջին եկեղեցին ի հիմանց տապալեցաւ»[3]: Իր չափածո քերթվածում այս երկրաշարժը հանգամանորեն է նկարագրել Մատթեոս Ապրոյանը, որի զավակները մնացել էին փլատակների տակ[4]: Աղետներից խուսափելով զմյուռնահայերը հեռացել էին կամ կից հայաբնակ շրջաններ և կամ էլ

---

1 The six Voyages of John Baptista Tavernier, London, 1678, vol. 1, p. 33. «Բյուզանդիոն», 1909, 24 դեկտեմբերի: «Հառաջ», 1972, 30 սեպտեմբերի:

2 «Բյուզանդիոն», 1909, 24 դեկտեմբերի:

3 «Դաւին», 1921, №1, էջ 25:

4 Մատենադարան, ձեռ. 4515:

ավելի հեռու վայրեր: Նույնը պատահել է շուրջ երկու տասնամյակ անց: Մի աղոթամատույցում խոշկայշինեցի Թումի որդի Զաքարիան գրում է (1703 թ.). «Օվ սիրելիք, հայրք և եղբարք, մի մեղայ տիր լերուք, վասն պակասութեան կամ սղալութեան կամ ամենայն հարկի սորա, որ խիստ սխալթ տեղ գրեցանք, որ մահ եղեւ Իզմիր և փախանք երկիրն... և անտեղն գրեցաւ»[1]:

Բնակչության թվաքանակի նոսրացումը, սակայն, փոխհատուցվելու էր նոր գաղթերով: Հայերի՝ Զմյուռնիա և կից շրջաններ գաղթի մյուս խոշոր հոսքը իրականացել է 1730–1740-ական թթ., որի պատճառը վերսկսված պարսկա-թուրքական պատերազմներն էին և ապա Նադիր Շահի կողմից հայերի անտանելի կեղեքումները: 1723 թ. նոր ուժով բորբոքված կռիվների թատերաբեմ դարձավ ամբողջ Արևելյան Հայաստանը: Ղափանում Դավիթ Բեկի գլխավորած հերոսական պայքարը լուրջ հարված հասցրեց մահմեդական զավթիչներին, որի շնորհիվ ասպատակություններից փրկվեցին բազմաթիվ հայկական բնակավայրեր: 1727 թ. տեղահանված և փախստական բազմաթիվ հայեր էին կուտակվել Կարինում, Սեբաստիայում, Կոնիայում և այլուր: Ճանապարհների վտանգավոր լինելու պատճառով գրեթե լքվել էին փոքրասիական հետագա ուղիները: Դրությունը փոխվեց 1732 թ., երբ կուտակված հայ բազմությունները հնարավորություն ստացան հեռանալ նպատակահարմար թվացող վայրեր: «Զի բազում մարդիկ չևեցին աստի, ոմանք գնալով Իզմիր, ոմանք՝ Կոստանդնուպոլիս, և ոմանք ի Տրապիզոն, ոմանք՝ Ղռըմ և ոմանք այլուրեք...»,– գրում է Մխիթար աբբային Հ. վարդ. Ներսեսյանը[2]:

Սյունիքում ազատագրական շարժման տեղատվությունից հետո մարդիկ հեռանում էին հայրենի վայրերից: Այս ժամանակաշրջանում է Զմյուռնիա գաղթել Նուպարյանների գերդաստանը՝ բազմամարդ խմբերով, որ սերում էր Զավնդուրի Թորոս իշխանից: Վ. Զարդարյանը վկայում է, որ շատ այլ սյունեցիներ դիմել են Զմյուռնիա և օսմանյան այլ տարածքներ:[3] Գործում էր հնուց ի վեր ձևավորված գաղթի մեխա-

---

1 Մատենադարան, ձեռ. 7002, էջ 3բ–4:

2 Տ ա յ ա ն Ղ., Մայր դիւան Մխիթարեանց Վենետկո ի Ս. Ղազար, Վենետիկ, 1930, էջ 290:

3 Զ ա ր դ ա ր յ ա ն Վ., Հիշատակարան, հ. Գ, Կահիրե, 1934, էջ 7–47: Ն ո ւ յ - ն ի, Նուպար փաշա, «Բյուրակն», 1899, №13, էջ 195–196:

նիզմը՝ սյունեցիները կապեր էին պահպանում զմյուռնաբնակ հայրենակիցների հետ:

1740–1750-ական թթ. շարունակվում էր Թուրքիայի հայ գաղթավայրերի համալրումը Արևելյան Հայաստանի բնակչությամբ: Իր ռազմական ծրագրերն իրականացնելու նպատակով Նադիր շահը ուժեղացրեց հարկահանությունը Արևելյան Հայաստանում: Զգիմանալով անտանելի կեղեքումներին՝ բազմաթիվ հայեր բռնեցին գաղթի և փախստյան անծանոթ ուղիները: Նադիրի մահից հետո սկսվեցին գահակալական չդադարող կռիվները նրա ավել կամ պակաս ընդունակ հաջորդների միջև, որ իր հերթին պատճառ դարձավ նոր տեղաշարժերի և գաղթերի: Զմյուռնիան և Էգեյանի շրջանի հայաբնակ բնակավայրերը ևս անմասն չմնացին նոր գաղթականությունից:

Դեռևս Նադիր շահը ձգտում էր հենվել հայ եկեղեցու վրա՝ սրա հեղինակությամբ Արևելյան Հայաստանում կայունություն ապահովելու և բնակչության հարստահարումները օրինականացնելու նպատակով: Այս իմաստով հասկանալի է դառնում հայ կաթոլիկ հանրության նկատմամբ շահի վարած հարկային դաժան քաղաքականությունը: Նախիջևանի հայ կաթոլիկների վանքերն ընկան ծանր պարտքերի տակ: Որոշվեց գաղթել, որի իրականացման համար եռանդուն ջանքեր էր գործադրում հայ կաթոլիկների առաջնորդ Թովմաս Իսավերդենցը: Առաջնորդը «յաջողեաց... բացի սակավուց ոմանց զամենայն մնացեալսն տկարս, զծերս և զմանկունս և զկանայս և եռամսեայ դժուարակիր և տառապագին ուղեւորութեամբ հատանել անցանել ընդ բովանդակ Մեծ և Փոքր Հայս և հասուցանել ի ծագ Փոքուն Ասիոյ, ի Զմիւռնիա քաղաք, հոգիս ավելի քան զհազար»[1],– գրում է Ղ. Ալիշանը: Գաղթականները հաստատվեցին Զմյուռնիայում և նրա շրջակայքում: 1762 թ. Հռոմի ս. ժողովին ուղղած գաղթական ջահկեցիների խնդրագրում գաղթականները նշում են, որ իրենց մի մասը բնակություն է հաստատել Թիրա (Թիրադիր) քաղաքում՝ 700-ի չափ անձինք[2]: Նախիջևանցիները Թուրքիա էին անցել 1746 թ.: 1748 թ. նրանք արդեն դիմել էին իշխանություններին՝ մատուռ շինելու խնդրանքով[3]:

Ծանր և անտանելի հարկահանությանը չդիմացան նաև Երևանի ու նրա շրջակայքի շատ բնակիչներ: Մ. Թաղիադյանը հայտնում է, որ

---

1 Ա լ ի շ ա ն Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 406:

2 Նույն տեղում, էջ 407:

3 Ք ո ս յ ա ն Հ., Նշվ. աշխ., հ. Ա, էջ 306:

Զմյուռնիա են գաղթել նաև կարբեցիները: «Վերջին աւերած Կարբւոյ,– գրում է նա,– եղեւ յաւուրս Նադրայ արքայի պարսից, յորոց ի բնակչաց կէսք գնացին ի Զմիւռնիա, իսկ կէսքն եկին Երևան»[1]: Նկատենք, որ կարբեցիները, ինչպես և երևանցի առևտրականները դեռևս 17-րդ դարում լավ ծանոթ էին Զմյուռնիա տանող ուղիներին և առհասարակ Փոքր Ասիայի արևմտյան կողմերին: Ճիշտ այնպես, ինչպես, ասենք, Զաքարիա Քանաքեռցին, որը բազմիցս մեկնել էր Զմյուռնիա և այնտեղից՝ եվրոպական երկրներ: Այս դեպքում ևս կարբեցիների ընտրությունը պատահական չի եղել: Դեռևս 1705–1706 թթ. «մեղօք լցեալ» կարբեցի Վարդան գրիչը դեգերում էր Զմյուռնիայում, նրան կլից Թուրգութում և Այդընում: Նման դեպքերում գաղթավայրի ընտրությունը կապվում է ունեցած ծանոթությունների ու հարաբերությունների հետ, որոնց հիմքում ընկած էին առևտուրն ու վաճառականությունը:

1740-ական թթ. Էգեյանի ափերն են գաղթել վայոցձորեցի հայերի խմբերը: Այս ժամանակներում է, որ Դարալագյազի Մթնաձոր (Մատնեձոր, Մտնաձոր) գյուղից Զմյուռնիա է գաղթել Մելիք Վանին: Սրա թոռը՝ զմյուռնացի Մկրտիչ Մելիքյանը, մի գրության մեջ հայտնում էր իր պապի թաքցրած ունեցվածքի մասին, որ լքվել էր «ի ժամանակս Թահմազ Ղուլի շահին, որ ի Նադր շահն»[2]: 1745 թ. Շիրակից Զմյուռնիա էր գաղթել մելիք Խանբաբը՝ իր յուրայիններով: Սրա հետնորդները՝ Ստեփան և Խաչատուր Մելիքսելումյանցները, Էջմիածնի սինոդին հղած դիմումի մեջ գրում են, որ «Մելիք Խանբաբ... չհանդուրժեալ յասպատակութեանց ի բռնութեանց յերկիրն Պարսից, խոյս տամ(ք)ք իւրովք յերկիրն օսմանցւոց ի քաղաքն յԻզմիւռնիա յամի Տեառն 1745-ին»[3]: Նադիր շահի ժամանակ կամ նրա մահից հետո Զմյուռնիա են գաղթել եղվարդեցի Հովհաննեսը և նրա որդի Կարապետը, որոնց ուղեկիցների թիվը հասնում էր մի քանի տասնյակի: Առհասարակ, 1740–1750-ական թթ. Արևելյան Հայաստանից Զմյուռնիա են անցել գաղթականների մեծաթիվ խմբեր: Սրանց պատսպարելու նպատակով, նրանց և հիվանդների ժամանակավոր ապաստանի համար, Զմյուռնիայում կառուցվել է այսպես կոչված «օտալարը» (սենյակներ)՝ անշուք կացա-

---

1 Թ ա ղ ի ա դ յ ա ն Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 122:

2 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 248, վավ. 1096:

3 Նույն տեղում, թղթ. 169ա, վավ. 70:

բանների մի շարք: Շենքը այրվել է 1845 թ. մեծ հրդեհին: Ճիշտ նույն ժամանակներում Զմյուռնիայում գործում էր հիվանդանոց՝ գաղթական հիվանդներին խնամելու համար:

Այս ժամանակաշրջանի գաղթականների մեջ կային ոչ միայն արհեստավորներ ու հողագործներ, այլև վաճառականներ ու առհասարակ սոցիալական տարբեր խմբերի պատկանող մարդիկ: Ազգային աղետները սոցիալական տարբերակում չէին ճանաչում: Զմյուռնիայի Ս. Ստեփանոս եկեղեցու 1743 թ. նորոգման արձանագրության մեջ հստակորեն տարբերվում են տեղացի և եկվոր վաճառականները: Նշվում է, որ նորոգումը կատարվել է «արդեամբք և տրօք առհասարակ ժողովրդոց լուսավորչածնից տեղացւոց և վաճառականաց եկաց և բնակաց»[1]:

Զմյուռնահայ գաղթօջախի վերջին համալրումը 18-րդ դ. կատարվել է 90-ական թթ. վերջերին, երբ «բավական թվով կաթողիկեա հայ գաղատիացի վաճառականներ իրենց բախտն այլուր փորձելու համար թողած են իրենց ծննդյան վայրը և տնով-տեղով դիմած են Զմյուռնիա»[2]: Նրանց ընտանիքների թիվն անցնում էր հարյուրից: Նրանց մի մասը հաստատվեց Այդընում:

Սյունիքը այս անգամ ևս անմասն չմնաց գաղթից: Նույն ժամանակներում Տաթևից Այդընն են անցնում բավական թվով մարդիկ, որ վկայվում է տեղի դամբանագրերով: Այս գաղթականությունն է, որ Տաթևի վանքին կալվածքներ է նվիրել Զմյուռնիայում և կից բնակավայրերում[3]:

18-րդ դ. գաղթականները հաստատվում էին Էգեյանի ծովեղերքով մեկ: Դարի առաջին կեսին Սյունիքից, Ղարաբաղից և Նախիջևանից եկած գաղթականները ապաստան էին գտնում Պերգամայում, Ագհիսարում, Գրգաղաճում, Նազիլիում, Գուշատայում և այլուր: Զմյուռնիայի և կից շրջանների դամբանագրերը վկայում են զափանցի, շաշկերտցի, կալերցի, քուշերթցի, երերնեցի, մանլևեցի, ափքեսեցի, նախիջևանցի, կարբեցի, երևանցի և այլ եկվորների մասին, ամբողջովին կամ գրեթե ամբողջովին գաղթած այն նույն վայրերից, որոնք հիշվում են 17-րդ դ. դամբանագրերում: Հանդիպում են նաև խարբերդցիների, թոքատցիների, կեսարացիների, եվդոկացիների և Արևմտահայաստանի այլ շրջան-

---

1 «Դափնի», 1921, № 1, էջ 27:

2 Քոսյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 320–321:

3 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 447, թղթ. 48, վավ. 221:

ներից գաղթածների չիրմաքարեր, որոնք համեմատաբար փոքրաթիվ են:

Այսպիսով, Էգեյանի մերձակա տարածքներում՝ Զմյուռնիայի և նրա թեմերի հայ գաղթավայրերում գաղթականությունները բնակություն են հաստատել հետևյալ փուլերով. 1. Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, 14-րդ դ. վերջին քառորդից, որ շարունակվել է մինչև 15-րդ դ. առաջին կեսը: 2. 17-րդ դ. սկզբներից՝ Օսմանյան Թուրքիայում բռնկված ջալալիների ապստամբության, Արևելյան Հայաստանում Շահ Աբասի գործադրած տեղահանումների և ծավալված սովի պատճառով, հիմնականում Սյունիքից և Արարատյան դաշտից ու Խարբերդից: Այս գաղթերը մեկանգամյա ակտ չեն եղել, այլ ավելի կամ նվազ հոսքերով շարունակվել են մինչև 18-րդ դ. սկիզբը: 3. 1720-ական թթ. վերսկսված պարսկա-թուրքական պատերազմների ժամանակաշրջանից մինչև Նադիր շահի թագավորության վախճանը և դրան հետևող տարիները (1750-ական թթ.): 4. 18-րդ դ. 90-ական թթ., երբ Զմյուռնիա գաղթեցին հայ կաթոլիկներ:

Հայ բնակչությունը Փոքր Ասիայի արևմտյան մասերում հայտնվել է հիմնականում կազմակերպված գաղթերի ձևով, որ վկայվում է գաղթի մեկնակետի և հանգրվանի միջև եղած մեծ հեռավորությամբ, ինչպես և հայրենակցական համայնքների առկայությամբ: Կազմակերպված գաղթերը նաև ցույց են տալիս, որ Էգեյանի մերձակա շրջանների ընտրությունը՝ իբրև գաղթավայրերի, պատահական չի եղել: Տվյալ դեպքում, գոնե արևելահայ գաղթականների համար, էական նշանակություն է ունեցել Մեղրիի, Ղափանի, Նախիջևանի, Ագուլիսի և Երևանի հայ վաճառականության փորձը, որ նա ձեռք էր բերել 16–17-րդ դդ.՝ փոքրասիական առևտրական ուղիներին իր լավատեղյակության շնորհիվ: Հայ առևտրականության այդ իրազեկության ու կապերի շնորհիվ Էգեյան ծովի ափերը հասած հայ գաղթականները 17–18-րդ դդ. շարունակել են իրենց առնչությունները բնաշխարհի ժողովրդի հետ, որն իր հերթին նախորոշել է հայերի հետագա գաղթերը դեպի այդ տարածքները:

* * *

Զմյուռնիայում հայ գաղթավայրերի կազմավորումից դեռ շատ առաջ հայ վաճառականները ավանդական կապեր ունեին փոքրասիական նավահանգիստների հետ: 12–13-րդ դդ. Վենետիկի ու Ջենովայի

առևտրի ընդլայնումը բյուզանդական պետությունների տարանցիկ ուղիներում խթանեց նրանց առևտուրը նաև Արևելքի հետ: 13-րդ դ., ինչպես Կ. Պոլսում և Վենետիկում, Զմյուռնիայում իրենց գաղթականությունն էին ստեղծել ղրիմահայ վաճառականները[1]: Վենետիկի և Ճենովայի առևտրի ոլորտում Զմյուռնիան արևելքի և արևմուտքի ապրանքափոխանակության կարևոր հանգուցակետն էր: Հայ վաճառականները Էգեյանի մատույցներն էին հասնում Արևելյան Հայաստանի ամենատարբեր շրջաններից՝ տեղափոխելով տեղական ու պարսկական հումք և տնայնագործական արտադրանք:

Նիկեայի կայսրության և նրան հաջորդած բեյությունների ժամանակաշրջանում Զմյուռնիան Կ. Պոլսի, Տրապիզոնի և Այաշի հետ միասին փոքրասիական առաջատար նավահանգիստներից մեկն էր: 14-րդ դ. առևտրատնտեսական որոշ դեր ուներ նաև Զմյուռնիային կից Մանիսա քաղաքը, որին տիրում էին օսմանյան թուրքերը: 1352 թ. նրանք Ջենովային էին տրամադրել տեղի շիբի արդյունահանման մենաշնորհը, որը Ջենովայի կողմից եվրոպական տեքստիլ արդյունաբերության հումքային մատակարարման շրջանակները ընդլայնելու արդյունքն էր: Եվրոպական առևտրականների հետ հայերի համագործակցության մասին է վկայում այն, որ վերջիններս գտնվում էին թուրքերի դեմ արշավանքի պատրաստվող Կլիմենտ 6-րդ պապի շրջապատում: Արշավանքին մասնակցեցին Վենետիկը, Ջենովան և Կիպրոսը: Դաշնակիցների նավատորմը լողաց դեպի Այդընի էմիրություն, տիրեց Զմյուռնիայի մեծ մասին, որը տևեց մինչև Լենկթեմուրի կողմից քաղաքի գրավումը (1402): Այդընի բեյության դեմ այս զինակցությունը ցույց է տալիս Զմյուռնիայի կարևոր նշանակությունը միջազգային առևտրական հանգույցներում: Այդ նշանակությունը պահպանվեց և առավել ընդարձակվեց 14–15-րդ դդ. և հետագայում: Դրան մի հայտնի չափով նպաստեց միջերկրածովյա ասիական նավահանգիստների դերի նվազումը, որի հետևանքով առանձնապես աշխուժացան փոքրասիական քարավանային ուղիները, որոնք տանում էին դեպի Կ. Պոլիս և Զմյուռնիա:

15-րդ դ. եվրոպական մանուֆակտուրային արտադրությունը Թուրքիայում ուղիներ էր հարթում տեղական արտադրության մրցունակության մի որոշ առկայության պայմաններում: Եվրոպական թավիշը

---

1 Մ ի ք ա յ ե լ յ ա ն Վ. Ա., Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989, էջ 69:

և մահուդը, առանձնապես անգլիական մահուդը, Բրուսայի շուկաներում փոխանակվում էին տեղական արտադրանքի հետ[1]: Հետագայում արագորեն զարգացող իտալական, ֆրանսիական և հոլանդական արտադրությունը Լեվանտի առևտրական տարածաշրջանը գերազանցապես գնահատելու էր հումքի տեսակետից: Հումքի նկատմամբ հարաճուն պահանջարկը նշանակալի եկամուտներ էր խոստանում այն անմիջապես արտադրության վայր տեղափոխելու գործում: Այս բեկումն էր պատճառը, որ փոքրասիական ներքին առևտրին քաջատեղյակ հայ առևտրականները 16-րդ դ. կեսին դուրս էին գալիս Զմյուռնիայից և ծովային ուղիներով հումք (բամբակ, հում մետաքս) էին հասցնում եվրոպական երկրներ: 17-րդ դ. Զմյուռնիայի՝ որպես առևտրական հանգուցակետի դերը ավելի է կարևորվում: Ջալալիների ապստամբության ջախջախումից հետո Զմյուռնիա այցելած Սիմեոն Լեհացին նկարագրում էր այդ նավահանգստի հարաշարժ առօրյան. «...կէս օրն հասաք Իզմիր քաղաքն Նիկողայոսի: Եւ սա էր ծովու եալու մեծ սկալայ, որ Ստամպօլայ, Մսրա, Վենետիկու, Սաքըզու և այլոց կեմիք կու խաղային և բազում ֆռանկք և հոռոմ կային անդ»[2]:

16–17-րդ դդ. զմյուռնաբնակ, ինչպես և եկվոր հայ վաճառականները շատ կարևոր ապրանքներ էին տեղափոխում Եվրոպա և զգալի տեղ էին գրավել մանավանդ իտալական քաղաքների հետ առևտրում: 1576 թ. Վենետիկի սենատը զեղչել էր ցամաքով բերված մետաքսի մաքսը, իսկ 1589 թ. որոշմամբ թեթևացնում կամ անմաքս էր դարձնում Պարսկաստանից ներմուծված մետաքսը, որի զգալի մասը տեղափոխվում էր Զմյուռնիայի նավահանգստով[3]: Տոսկանայի դուքսը ևս 1591 թ. մի հրովարտակով առանձնաշնորհումներ էր տրամադրում հայերին՝ հրավիրելով նրանց բնակություն հաստատել Լիվոռնոյում: 1646 թ. այստեղ հանդիպված տասներկու հայ խոշոր վաճառականներից երեքը զմյուռնացիներ էին, թվական տեսակետից նրանք զիջում էին միայն կեսարացիներին: Լիվոռնոյում գործող վաճառականներից էր 1662 թ. Զմյուռնիայում սաղմոսարան գրչագրած Սուքիասը, որը միաժամանակ ուշագրավ տողեր է թողել իր առևտրական զբաղմունքի մասին[4]:

---

1 A k d a g M., Türkiyenin iktisadi ve ictimai tarihi. Cilt II, Istanbul, 1974, s. 435.

2 *Սիմեոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, էջ 37–38:*

3 *Ալիշան Ղ., Սիսական, էջ 440:*

4 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, կազմ. Բ. Սարգիսյան, հ. Ա., Վենետիկ, 1914, էջ 349:*

Լիվոռնոյում հայերը վաճառում էին Պարսկաստանից և Թուրքիայից բերած հումք, ինչպես և Լեվանտի շուկաներում պահանջարկ վայելող այլ ապրանքներ՝ շերամ, մուշկ, որդան կարմիր, բուսաս, սաթ, մեղրամոմ, բուրդ, կտավ և այլն: Այս հանգամանքը կարևոր է տեղի հայ առևտրականության գործառնությունները շատ ավելի ուշ շրջանում (19-րդ դ.) բացահայտելու տեսակետից, քանի որ պարսկական մետաքսի ներմուծումը սպառվել էր դեռևս 18-րդ դ. 1-ին կեսից՝ աստիճանաբար ցրելով իտալական ու հոլանդական քաղաքներում մետաքսի առևտրից սնուցվող հայ առևտրականների կուտակումները: Լիվոռնոյում հայ առևտրականության կայունությունը բացատրվում է նաև հոլանդական բեռնաշրջանառության մեջ նրա գործունակ դերով, որի շնորհիվ նրանք յուրահատուկ միջնորդություն էին իրականացնում հոլանդական նավատերերի և Լիվոռնոյի միջև: Լիվոռնոյում պահպանվել էին զմյուռնացի վաճառականներ Ավետիք Ոսկանյանի (1770), Ապրո Զելեպիի (1713) և Ստեփան Նազարեթի (1720) շիրմաքարերը, որ վկայում է 18-րդ դ. երկրորդ կեսին խոշոր վաճառականների առկայությունը իտալական այդ քաղաքում:

Զմյուռնահայ վաճառականները վաղեմի կապեր ունեին նաև Վենետիկի հետ: Այստեղ բնակվող հայ վաճառականներից, որոնք ապրել են 17–18-րդ դդ. և թողել երկուսից ավելի սերունդ, Ղ. Ալիշանը հիշատակում է զմյուռնացի Մարտիրոսյանին (հինգերորդ սերունդ) և Ադամյանին (չորրորդ սերունդ)[1]:

Առևտրի փոփոխությունների հետևանքով կատարվում էր և հակառակը՝ Վենետիկի հայ վաճառականներն էին բնակություն հաստատում Զմյուռնիայում: Մասամբ այս իրողությամբ է բացատրվում Եվրոպայում ապաստանած հայերի գաղթը Զմյուռնիա՝ 18-րդ դ.: Վենետիկից Զմյուռնիա էր եկել և հաստատվել Շահումյանների տոհմը, որ մինչ այդ արդեն առևտրական տներ էր հիմնել ոչ միայն Վենետիկում, այլև Կ. Պոլսում և Զմյուռնիայում: Այս տոհմը, որից, ի դեպ, սերում էր Դավիթ Բեկի զինակից Ստեփանոս Շահումյանը, Վենետիկում էր հաստատվել 17-րդ դ. կեսին: Ստեփանոս Շահումյանի հորեղբայրը՝ Սահակի որդի Ոսկանը, այստեղ «հաստատեալ էր ի տուն վաճառականութեան»[2]: Շահումյանները, ինչպես և Վենետիկի մյուս հայ վաճառականները,

---

1 Ա լ ի շ ա ն Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 497:

2 Դիվան հայոց պատմության. Նոր շարք, գիրք 1, հ. Ա, Երևան, 1984, էջ 248:

ամբողջովին կապված էին լեվանտական առևտրի հետ, նրանք ներմուծում և արտահանում էին գյուղատնտեսական հումք, դամասկոսյան կերպաս, եվրոպական լայն սպառման առարկաներ, գործվածքեղեն, ապակի և այլն:

18-րդ դ. սկզբներին արդեն նկատելի էր դարձել Վենետիկի առևտրի անկումը թուրքական նավահանգիստներում: Որոշ ժամանակ անց Կ. Պոլսում ինչ-որ չափով աշխուժանում է վենետիկցիների փոքրաթիվ համայնքը, սակայն փաստն այն էր, որ վենետիկյան առևտուրը կորցրել էր ոչ միայն իր ծավալները, այլև երբեմնի նշանակությունը Լեվանտի առևտրահրապարակում: 18-րդ դ. առաջին քառորդին զմյուռնաբնակ հույն, հրեա և հայ վաճառականությունը զգալիորեն կրճատեց իր առևտուրը Վենետիկի հետ: Նվազել էր մետաքսի, բրդի, հումքի այլ տեսակների արտահանումը: Այսպիսի իրադրությունը կապվում էր Լևանտի առևտրում Վենետիկի կարողությունների անկման և անգլիական ու ֆրանսիական առևտրի հաշվեկշռի ընդլայնման հետ:

Իտալական քաղաքներից զմյուռնահայ վաճառականների համար կարևոր հանգրվան էր նաև Անկոնան՝ ամենահին ասպնջական քաղաքը հայերի համար Իտալիայում, որտեղ հայ վաճառականները հետքեր էին թողել դեռևս 13-րդ դարից:

Զմյուռնահայ վաճառականները ավանդական կապեր ունեին հոլանդական առևտրական կենտրոնների հետ, որոնց նպաստել էր հոլանդական նավաշինության և առևտրական նավատորմի զարգացումը: Զմյուռնիայի նավահանգիստը հոլանդացիների համար առանձնահատուկ նշանակություն էր ստացել 17–18-րդ դդ.: Թուրքիայի և Հոլանդիայի միջև դաշինք կնքվելուց հետո (1612 թ.) Զմյուռնիայում հաստատվեց հոլանդական հյուպատոսություն, որը փաստորեն առևտրական ներկայացուցչություն էր: 1680 թ. հոլանդացի առևտրականներին Թուրքիայում տրվեցին նույնպիսի արտոնություններ, ինչպիսիք ունեին Անգլիան և Ֆրանսիան: Հոլանդիայում հանգրվանած հայ առևտրականները փոքրասիական մետաքսը, գյուղատնտեսական հումքն ու տնայնագործական որոշ ապրանքներ Հոլանդիա տեղափոխելուց հետո լեվանտական առևտրի կենտրոններ էին տանում եվրոպական արտադրության արդյունքները: 1672 թ. Շարդենը նշում էր, որ Զմյուռնիայում ապրող հայերը վաղուց ի վեր գործնական կապեր ու-

նեն հոլանդական առևտրական ընկերությունների հետ[1]: Դրան նպաստում էր տարանցիկ առևտուրը ըստ ամենայնի խրախուսող հոլանդական կառավարության վարած ազատ առևտրի քաղաքականությունը: Նույն կերպ Անտվերպենում խրախուսվում էին արևելցի, այդ թվում և հայ վաճառականները, որոնք գործում էին անկախ, առանց ընկերությունների, և այդպիսով դուրս էին մրցակցությունից և չէին կարող վնասել հոլանդական առևտրի շահերին: 17-րդ դ. վերջին և 18-րդ դ. սկզբին հոլանդական նավերի բեռնաշրջանառության աճը Լեվանտում, Գլխավոր շտատների կողմից քաղաքական բարենպաստ հարաբերությունների պահպանումը Թուրքերի հետ նպաստում էին հոլանդական առևտրին: Հոլանդական առևտուրը գրավում էր լեվանտական ապրանքաշրջանառության 20–25 տոկոսը, որը զգալի որակ էր եվրոպական առևտրի հաշվեկշռում:

Արտաքին առևտրում առաջացող խոչընդոտների դեպքում հայ վաճառականները միավորվում էին, և այս պարագայում նրանց կազմակերպությունը հանդես էր գալիս որպես քաղաքական հովանավորություն վայելող օտար վաճառականներին դիմակայելու արդյունավետ միջոց: Այս տեսակետից ուշագրավ է հայ վաճառականների կոնֆլիկտը Զմյուռնիայում հոլանդական հյուպատոս Մորտիերի հետ (1658–1661), որը կամայականորեն արգելել էր նրանց ապրանքների բեռնումը հոլանդական նավեր պահանջելով բարձրացնել վճարը[2]: Զմյուռնիայի հոլանդական գաղութի, ինչպես և հույն ու հրեա ազդեցիկ վաճառականների աջակցությամբ հայ վաճառականները հասան հաջողության հյուպատոսը պաշտոնանկ արվեց:

Մինչև 18-րդ դ. վերջը և դրանից հետո էլ զգալի թվով զմյուռնահայ վաճառականներ էին բնակվում Հոլանդիայում: Ամստերդամում գործող մեծահարուստ վաճառականների հետ Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսները մշտապես կապ էին պահպանում նրանց տեղյակ պահելով ազգային-կրոնական գործերում իրենց անելիքների մասին: Այսպես, 1775 թ. Զմյուռնիայի առաջնորդ Ղուկասին (ապագա կաթողիկոսը) Եսայի վարդապետով փոխարինելու իր որոշումը Սիմեոնը նախապես հայտնել էր Ամստերդամի վաճառականներին: Նույն կերպ Ամստերդամի «Հայազուն ժողովրդոցն» կոնդակներ էր ուղարկում Ղուկաս կաթողիկոսը: 18-

---

1 «Յառաջ», 28.IX.1972:

2 Ս ա ր ո ւ խ ա ն Ա., Հոլանդիան և հայերը, Վիեննա, 1926, էջ 37:

ըդ դ. վերջին Ամստերդամում առևտուր էին անում զմյուռնացի վաճառականներ Ա. Սավալանյանը, Ա. Մասեհյանը, մեծահարուստ Մնացականը և ուրիշներ: Առաջին երկուսը զանգակներ էին ուղարկել Ամստերդամից Էջմիածին՝ իրենց ծախքով: Էջմիածնի ս. Աթոռին 2000 գուլդեն էր նվիրաբերել Ա. Սավալանյանը՝ զմյուռնաբնակ Մոսկոֆ Հովհաննեսի եղբայրը: Այս և սրանց ընկերակից մյուս վաճառականներն էին, որ Հոլանդիայից ներմուծում էին մահուդ, գործվածքեղեն, մետաղներ, իսկ Թուրքիայից արտահանում էին մետաքս, գյուղատնտեսական ապրանքներ: Այդ առևտրի մեջ էին ընդգրկված նաև Ամստերդամում բնակվող կեսարացի, ագուլեցի, նորջուղայեցի առևտրականները: Ամստերդամի հայկական համայնքը գոյատևեց մինչև 19-րդ դ. սկիզբը, երբ նապոլեոնյան պատերազմների հետևանքով այդ քաղաքը զրկվեց իր ինքնուրույն առևտրական նշանակությունից:

Զմյուռնիայում գործող հայ վաճառականության՝ տարանցիկ առևտրին մասնակցելու տնտեսական հիմքը Պարսկաստանում և Թուրքիայում գյուղատնտեսական հումքի արտադրությունն էր: 1639 թ. Կասրե Շիրինի Թուրք-պարսկական համաձայնագրից հետո տարանցիկ առևտրական ուղիներում տիրեց հանդարտության շրջան, որը դրականորեն ազդեց ինչպես Կ. Պոլսի, Տրապիզոնի, Զմյուռնիայի, այնպես էլ միջերկրածովյան առևտրական ուղիների աշխուժացման վրա: Սակայն Էգեյանի շրջանում դրությունը պետք է բարդանար Կրետեի պատերազմի պատճառով: Զմյուռնիա տանող քարավանային ուղիները դարձան անապահով, խզվեցին կապերը առևտրի և տնայնագործական արտադրության միջև, սաստկացան հարստահարությունները: Զմյուռնիայի առաջնորդ Կիրակոս Թալինցու՝ 1651 թ. գրած մի հիշատակարանում ուրվագծվում է այդ իրավիճակը. «Ի յայսմ անդորրութեան միջոցի, որ ծովով և ցամաքով պատեալ, պաշարեալ ազգն իսմայելացոց ունելով սաստիկ պատերազմ ընդ ազգին լատինացւոց, որ և մեք ևս ունիմք նեղութիւն բազում եթէ ի հարկապահանջութենէ և ասպատակաւ որք ի հենից և աւազակաբար զրկողէ ոչ թէ միայն ի ճանապարհս որ վնաս են ի վաճառականաց, նաև մեր շրջողաց...»[1]:

17-րդ դ. իր կայունությամբ աչքի էր ընկնում Արևելյան Հայաստանից Պարսկաստանի միջով դեպի փոքրասիական արևմտյան ափերը տանող ուղին, որի վկայությունը տալիս է Զաքարիա Ագուլեցու «Օրագ-

---

1 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար (1641–1660 թթ.), կազմ. Վ. Հակոբյան, հ. Դ, Երևան, 1984, էջ 416–417:

րությունը»: Զաքարիան, որ զբաղվում էր մետաքսի առևտրով, սկսել է երթևեկել 1647 թվականից անցնելով Ագուլիս-Երևան-Նախիջևան-Էրզրում-Թոքատ-Զմյուռնիա քարավանային ճանապարհը[1]: Նա անցել է նաև Զմյուռնիա-Մանիսա-Բուրսա ցամաքային ուղիով, որը բանուկ էր դարձրել դեռևս 14–15-րդ դդ.: Այս ուղիով էր իրականացվում նաև Էգեյանի շրջանի բամբակի և բամբակագործական արտադրանքի (Բերգամայից, Դենիզլիից և այլն) արտահանումը Եվրոպա: Բավական լայն շառավիղ ունի Զաքարիայի առաջին եվրապական ուղևորությունը՝ Վենետիկ-Ամստերդամ-Լիվոռնո-Զուստից-Կալիս-Մալիկա-Ալիկանտա-Մեսինա-Զմյուռնիա երթուղով: Իր գործառնություններով նա առնչվում էր իտալական և հոլանդական առևտրական կենտրոններին, որոնց հետ զմյուռնահայ վաճառականությունը սերտ կապեր ուներ:

Իրենց հարստությամբ ու ազդեցությամբ պարսկահայ վաճառականներից հետ չէին մնում Զմյուռնիայում հաստատված կեսարացի և եվդոկացի հայերը: Սրանց մի մասը, ինչպես և արևելահայ վաճառականները, դարձան տեղաբնակներ Զմյուռնիայում կառուցելով տներ, ձեռք բերելով ընդարձակ հողատարածություններ և այլն:

Զմյուռնահայ վաճառականները առևտրական կապեր ունեին նաև Ֆրանսիայի, մասնավորապես Մարսել նավահանգստի հետ: Առհասարակ հայ վաճառականության հետ ունեցած մրցակցությունից նեղված 1632 թ. Մարսելի առևտրականները դիմել էին Լյուդովիկոս 14-րդին՝ հովանավորելու իրենց և խիստ միջոցներ ձեռնարկելու մաքսերից խուսափող և էժան գնով մետաքս վաճառող հայերի դեմ: Ֆրանսիական կառավարությունը անսաց այդ բողոքներին, խիստ բարձրացվեց հայերից գանձվող մաքսը, որից հետո վերջիններս ստիպված էին թողնել Մարսելը: Սակայն առևտրի այսպիսի սահմանափակումը հարված էր հասցնելու հենց ֆրանսիական առևտրին: Դրությունը փոխվեց Կոլբերի միջոցառումների շնորհիվ, երբ խրախուսվեց նաև մետաքսի առևտուրը[2]: Զմյուռնահայերից ֆրանսիական առևտրի մասնակիցներից էր Մատթեոս Ապրոյանը:

18-րդ դ. 2-րդ կեսին ծավալվեցին զմյուռնահայերի կապերը Տրիեստի հետ: Այս ժամանակաշրջանում առևտրական մագիստրալների փոփոխությունները, Լեվանտի առևտրում եվրոպացիների բացարձակ գե-

---

1 *Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 71–72:*

2 *Մատենադարան, Անհատական անձանց ֆոնդ, թղթ. 240, վավ. 6:*

բիշխանությունը, ինչպես և մետաքսի առևտրի անկումը զգալիորեն ազդեցին հայ առևտրականների գործունեության վրա: Զմյուռնիայի և եվրոպական քաղաքների միջև առևտուր անող ոչ քիչ թվով վաճառականներ՝ կապված այս իրողությունների և մետաքսի առևտրի տարանցիկ ուղիների սահմանափակման հետ, թողեցին եվրոպական բնակատեղիները և տեղափոխվեցին Զմյուռնիա: Գաղթօջախ վերադարձան Իտալիայում, Հոլանդիայում, Ավստրիայում և այլուր գտնվող վաճառականները: Նկատելի էր, միաժամանակ, զմյուռնահայ վաճառականների կենտրոնացումը Տրիեստում, մանավանդ այն բանից հետո, երբ ավստրիական կառավարությունը արտոնություններ շնորհեց հայերին: Զմյուռնահայ վաճառականները այստեղ գործեցին բավական ժամանակ՝ մինչև 19-րդ դ. կեսը:

Մյուս հայ առևտրականների հետ զմյուռնահայերը Ռուսաստանի հետ առևտուր են արել ոչ միայն կասպիական-վոլգյան ուղիով, այլև Հոլանդիայով՝ մտնելով Հյուսիսային ծովային ուղի և ափ իջնելով Արխանգելսկում: 17-րդ դ. խոջա Սաֆարը Զմյուռնիայով անցել է Հոլանդիա՝ Ամստերդամում ապրանք առնելու և Մոսկվա տանելու նպատակով: Այսուհանդերձ, զմյուռնահայ վաճառականները շարունակում էին կապված մնալ առավելապես փոքրասիական ուղիներով արևմուտք տանող մայրուղիներին՝ ինչպես իրենց հայրենակիցների մեծամասնությունը:

Պետրոս Մեծի ժամանակ Ռուսաստանը ջանքեր էր գործադրում ընդդիմանալու լեվանտական առևտրահրապարակում ամրապնդվելու, այլև Հնդկական օվկիանոսի առևտրական ուղիները ընդարձակելու եվրոպական քաղաքականությանը՝ ելնելով ռուսական առևտրի շահերից: Ռուսական առևտրի ոլորտը հայերին ընդգրկելու նպատակի հետ են կապվում առևտրական այն արտոնությունները, որ տվել էր Պետրոսը զմյուռնահայ վաճառականներ Ապրոյան եղբայրներին (1717 թ. հունվարի 18-ին): Այդ հրովարտակով Ապրոն, Աբրահամը և Ստեփանը օժտվում էին կայսրության մեջ «ամենուրեք ազատ և առանց խոչընդոտի» առևտուր անելու իրավունքով, որպիսին ժամանակին շնորհվել էր (Ալեքսեյ Միխայլովիչի ժամանակ) ջուղայահայ վաճառականներին:

Ռուսաստանի արևելյան քաղաքականության փոփոխությունների հետ կապված՝ Պետրոսը երկու տարի անց չեղյալ հայտարարեց հայ վաճառականներին տված արտոնությունները, իսկ 1723 թ. հուլիսին վերականգնեց դրանք: Սպասյան Թուրքիայի, այդ թվում և զմյուռնահայ

վաճառականները որևէ նշանակալի մասնակցություն չբերեցին Ռուսաստանի առևտրական հրապարակին. Եվրոպայի և Թուրքիայի տնտեսական ու քաղաքական շահախնդրությունների հետևանքով նրանք շարունակում էին կապված մնալ փոքրասիական ավանդական առևտրական ուղիներին: 1730-ական թթ. Նադիր շահը արգելեց մետաքսի արտահանումը Թուրքիա, որը վերջնականապես պետք է քայքայեր փոքրասիական ապրանքափոխանակության գործընթացը: 1750-ական թթ. Զմյուռնիան և Հալեպը կորցրեցին մետաքսի շահութաբեր առևտուրը:

17–18-րդ դդ. զմյուռնահայ վաճառականությունը զգալի դեր ուներ ակնավաճառության և բանվածքների առևտրում: Լյուդովիկոս 14-րդի բժիշկ Լուկան, որ հիշվեց վերը, հայտնում էր, որ Կյուզել Հիսարում (Այդընն) «հայերը մեծ վաճառականություն կընեն մետաքսի և մանածի», և որ դրա հետ միասին «պեզեսթենին (ակնեղենի շուկա–Ա. Խ.) մեջ ալ թանկագին քարերու և այլ արժեքավոր առարկաներու տուրևառ կըլլա»[1]:

17–19-րդ դդ. զմյուռնահայ վաճառականները հրեա և հույն վաճառականության հետ միասին տիրապետող դիրք ունեին Այդընի, Ալաշեհիրի, Մանիսայի և Էգեյանի առափնյա այլ շրջաններում՝ բավարարելով նաև տեղական սպառողի պահանջարկը: Թուրք և հպատակ ազգերի վերնախավերը հիմնականում սպառում էին եվրոպական գործվածքներ և կտավ, մինչդեռ ստորին խավերի մեջ լայն պահանջարկ ունեին ցածրորակ և էժան տեղական բամբակե և բրդի գործվածքները: Մեննեմենում արտադրվում էր պ ե զ կամ բ ա մ պ ո ւ ք պ ե զ ի կտավ, որ իրացնում էին հայ առևտրականները Էգեյանի շրջանում: Նրանք զբաղվում էին նաև Մանիսայում, Դենիզլիում, Նազիլիում, Գասապայում և այլուր մշակվող գյուղատնտեսական արդյունքների (խաղող, թուզ, ցորեն, գարի, բամբակ, սեխ և այլն) վաճառքով: Ավանդական արտադրության այդ ապրանքները հանվում էին նաև արտահանման: Դեռևս 1614 թ. անգլիացի ճանապարհորդը նշում էր, որ Զմյուռնիային կից գյուղատնտեսական շրջանների բնակիչները օտարերկրացիներին վաճառում էին բամբակ, բուրդ, գինի[2]: Հայ առևտրականները այս ապրանքները տեղափոխում կամ իրացնում էին Զմյուռնիա-Մանիսա-Բեր-

1 «Բյուզանդիոն», 24 դեկտեմբերի, 1909:
2 Hakluyutus Posthomus or Purchas His Pilgrimes, Glasgow, 1905, p. 475.

գամա կամ Զմյուռնիայից հարավ ձգվող առափնյա միջանցիկ ուղիներով, Այդընի ուղղությամբ:

17–18-րդ դդ. ի փոխհատուցումն անշքացած մետաքսի առևտրի ընդլայնվեց բամբակի առևտուրը Էգեյանի շրջանում և Զմյուռնիայի նավահանգստում: Զմյուռնիայի առևտրականությունը, ինչպես նշում է Ղ. Ինճիճյանը, «Ամեն տարի 40 հազար բեռ (պալեա) բամպակ Ֆրենկիստան կելրկեր, 20 հազար բեռ ալ բամպըկե մանած կելրկեր: Սա բեռները քովի գեղերեն Իզմիր բերելու, Իզմիրե ալ ծովեզերքը տանելու միայն ճամբու խարճ՝ 1786 թ., որ տարին որ մենք Իզմիր գտնվեցանք, շաբաթ կըլլար, որ 300–500 քեսե կելարճեին վաճառականները, բայց այսչափ բամպըկին դեմ Ֆրենկիստան իր ձեռագործները բերելեն զատ՝ նավերով նաղտ ըստակ ալ կելրկեր վճարելու համար»[1]:

Բամբակի մշակության վայրերը՝ Մանիսա, Բերգամա, Գրգաղաճ, Այդընը, Թիրե, Դենիզլի և այլն, դարձան բամբակի արտահանության կետեր: 1740 թ. ֆրանսիական առևտրականներին տրվեցին նոր արտոնություններ, սահմանվեց մաքսի ցածր չափ՝ 3 տոկոս, այն դեպքում, երբ իրենք՝ Թուրքիայի առևտրականները, վճարում էին 10 տոկոս: Նույնանման իրավունքներ ստացան անգլիացիներն ու հոլանդացիները: Անգլիացիները Կ. Պոլսում և Զմյուռնիայում հիմնեցին առևտրական ֆակտորիաներ, և զմյուռնահայ առևտրականները ավելի ծանր կորուստների գնով սկսեցին դիմանալ այսպիսի կազմակերպված մրցակցությանը: Բամբակի հետ միասին նրանց առևտրացանկում նկատելի տեղ գրավեցին չոր մրգերը՝ չամիչը, թուզը, նաև նարինջը, ձիթապտուղը, գինին և այլն: Այս և մանավանդ բարձրորակ ծխախոտի արտահանման բնագավառում կարևոր դեր ունեին Զմյուռնիայի հույն վաճառականները, և առհասարակ, Զմյուռնիան և Էգեյանի շրջակայքը մի հայտնի չափով կրում էին հույն առևտրականության տնտեսական ազդեցությունը: Այս ժամանակաշրջանում հայ վաճառականները Եվրոպայից ներմուծում էին կերպասի բազմազան տեսակներ, հախճապակե իրեր, հագուստ և այլն: Սակայն միայն բամբակագործությունն էր, որ առևտուրը խթանելուց զատ, նպաստում էր տեղական ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացմանը:

15–18-րդ դդ. զմյուռնահայ առևտրականները և առհասարակ այնտեղ գործառող վաճառականները խոշոր ներդրում ունեցան արևելքի և

---

1 Ինճիճյան Ղ., Դարապատում, 1750–1757, Վենետիկ, 1824, էջ 232:

արևմուտքի խաչավորվող առևտրում: Եվրոպայի, ինչպես և Օսմանյան կայսրության տնտեսական տեղաշարժերի տեսակետից հայերը հույն և հրեա վաճառականության հետ միասին կատարում էին առաջադիմական դեր՝ բավարարելով հումքի եվրոպական արտադրության պահանջարկը և խթանելով գյուղատնտեսական արտադրության զարգացումը Թուրքիայում: Ընդ որում, Զմյուռնիայում գործում էին ոչ միայն տեղաբնակ, այլև Եվրոպայում, Մերձավոր ու Միջին արևելքի երկրներում և այլուր գործող հայ վաճառականները: Այս առումով զմյուռնահայ վաճառականություն հասկացությունը ստանում է շատ ավելի լայն իմաստ՝ ընդգրկելով ընդհանրապես Զմյուռնիայում գործող հայ վաճառականությանը: 18-րդ դարի վերջից և 19-րդ դարի առաջին կեսից զմյուռնահայ վաճառականության մի մասը իր կապիտալը ներդնում է արտադրության նոր ոլորտը, որը կարևոր նշանակություն ունի հետագա ժամանակաշրջանում նրա տնտեսական գործունեությունը բնութագրելու տեսակետից: Ուշագրավ է, որ նրանց նախաձեռնությամբ Վիեննայում և Անատոլիայի քաղաքներում հիմք է դրվում նոր տեսակի նուրբ գործվածքների արտադրությանը, որոնք հայտնի էին «ֆրենկ յազմասը» անունով: 1840–1850-ական թթ. գործում էր Զմյուռնիայի թղթի գործարանը, որ հիմնել էր Հակոբ Տյուզյանը: 1860-ական թթ. բավական պահանջարկ էր վայելում Զմյուռնիայի ծաղկանկար չթի գործարանը, որը պատկանում էր դարձյալ հայ դրամատերերին: Գործարանն ուներ շուրջ 400 բանվոր: Դրամատերերի մի մասը իր կապիտալներն էր ներդրել նաև գորգագործական արտադրության մեջ, որ աշխուժացել էր 19-րդ դ. երկրորդ կեսին, և որի արտադրանքը արտահանվում էր: 20-րդ դ. սկզբին քաղաքում թզի վերամշակման գործարան ուներ Արամ Համբարձումյանը, որը գյուղատնտեսական հումքի վերամշակման առաջատար դեմքերից մեկն էր Զմյուռնիայում:

Սուեզի ջրանցքի գործարկումը զգալի հարված հասցրեց Զմյուռնիայի՝ իբրև խոշոր նավահանգստի նշանակությանը, և այս հանգամանքը իր բացասական ազդեցությունը թողեց հայերի արտահանման ոլորտի գործառնությունների վրա: Հետագայում, կապված ասիական Թուրքիայի գյուղատնտեսական արտադրության զարգացման հետ, այս վնասը փոխհատուցվեց, և Զմյուռնիայի նավահանգիստը վերականգնեց իր երբեմնի նշանակությունը, որ այս անգամ հենվում էր տեղական գյուղատնտեսական արտադրության վրա: Այս վերջին տեղաշարժը իր հերթին Թուրքիայի արևմուտքում երկաթուղաշինության տարած-

ման հետևանքն էր: 1860–1880-ական թթ. անցկացվեցին Զմյուռնիա-Այդին, Զմյուռնիա-Կասաբա, Զմյուռնիա-Ալաշեհիր, Այդին-Սարիքյոյ և այլ երկաթուղագծեր, որոնք խթանեցին Ասիական Թուրքիայի գյուղատնտեսական արտադրության վերելքը: 19-րդ դ. վերջին Զմյուռնիայի վիլայեթի երկաթուղային ցանցի երկարությունը հասավ 100.33 կմ[1]*, որը փաստորեն միացնում էր գյուղատնտեսական շրջանները և կարևորում Զմյուռնիայի՝ որպես երկրի երկրորդ խոշոր նավահանգստի դերը: Տեղի առևտրական շրջանառությունը կրկնապատկվեց, որ նոր հեռանկարներ էր բաց անում զմյուռնահայ առևտրականության գործունեության առաջ: Այս ժամանակաշրջանում, մասնավորապես Այդինի և Կասաբայի երկաթուղիների շինարարության ու նրանց ճյուղավորման տարիներին՝ 1860–1880-ական թթ., ավելացավ զմյուռնահայ բնակչության թիվը: Ներքին գավառներից, ինչպես և Արևմտահայաստանի որոշ շրջաններից (Մուշ, Վան) Զմյուռնիա էին անցնում տնտեսական կարիքից տեղահանվող հայ գավառացիներ՝ իրացնելու իրենց աշխատուժը*[2]*: 19-րդ դ. երկրորդ կեսին զմյուռնահայերի մեջ հայտնվեցին նաև զգալի հողատարածություն ունեցող կալվածատերեր՝ իրենց մասնակցությունը բերելով տեղական գյուղատնտեսական արտադրության ընդլայնման գործին: Դրանց մեջ կարելի է հիշատակել Հ. Յուսուֆյանին, Գր. Գուլումճյանին, Զ. Թագթագյանին, Կ. Պալյոզյանին, Հ. Վեմյանին, Պագրճյաններին և այլն:*

1870–1880-ական թթ. զմյուռնահայերը հիմնականում արտահանում էին բամբակ, ափիոն, թուզ, չամիչ, խաղող, գինի և այլն: Այս տասնամյակներին ընդլայնվեց և բարեկարգվեց Զմյուռնիայի նավահանգիստը, որ իրականացվեց Ֆրանսիացի ինժեներ Դյուսոյի նախագծով: 1880-ական թթ. կեսին հայերն արդեն ազդեցիկ տեղ ունեին Զմյուռնիայից արտահանվող ապրանքների շրջանառության մեջ: «Եթե ատեն մը ներածությունը բոլորովին հույն և լատին վաճառականներու ձեռքը կկատարվեր, գրեթե 1860-են ի վեր հայերը Մանչեստրի հետ ուղղակի հարաբերության մտնելով՝ մեծ մասամբ յուրացուցին առևտրի այս ճյուղը, մինչ երկրին արտաբերության մեջ ալ ոչ նվազ դեր կկատարեն»,– գրում է ժամանակակիցը[3]*: 1855–1860 թթ. Կ. Էքիզյանը՝ զմյուռնահայ տոհմիկ վաճառականներից, Մանչեստրում բաց արեց «Պ. Պապո վաճա-*

---

1 Петросян Ю. А., Юсупов А. Р. Измир. М., 1973, с. 22–25.

2 *«Արևելք», 1902, 11 հուլիսի:*

3 *«Արշալույս արարատյան», 1884, 22 սեպտեմբերի:*

ռատունը»: Քիչ անց այստեղ հայտնվեց նաև Սպարթալյանների առևտրական տունը: Առևտրատնտեսական նոր կապեր ու հարաբերություններ հաստատվեցին Եվրոպայի, ԱՄՆ-ի, Եգիպտոսի, Հալեպի, Դամասկոսի, Հնդկաստանի հետ: Ներմուծվող ապրանքների մեջ զգալի տեղ ունեին կերպասեղենն ու կտավը (Անգլիայից), գարդեղենը (Ֆրանսիայից), ապակեղենը (Գերմանիայից ու Ավստրիայից):

20-րդ դ. սկզբին իրենց առևտրական հիմնական գործառնություններով զմյուռնահայերը կապված էին Անգլիայի հետ: 19-րդ դ. առաջին կեսին զմյուռնացի խոշոր վաճառականների գործունեության կենտրոն դարձած Տրիեստը (որտեղ գործում էին Պ. Յուսուֆյանը, Ա. Ապրոյանը, Հ. Սարգսյանը, Ա. Գուլասպյանը և ուրիշներ) այս առումով իր տեղը պետք է զիջեր անգլիական բամբակագործական կենտրոններին՝ Մանչեստրին և Լիվերպուլին. 20-րդ դ. սկզբին զմյուռնահայ առևտրականները իրենց մասնաճյուղերն էին հիմնել Թուրքիայի և արտասահմանի մի շարք քաղաքներում: Առևտրական տների լայն ցանց ունեին Պաղբրճյանները, Ավետիքյանները, Թոփալյանները, Սուքիասյանները, Սիվրիսարյան և ընկ.-ը, Իփլիքճյանը և ուրիշներ[1]: Մինչև գաղթօջախի կործանումը հայ առևտրականները իրենց ձեռքն էին կենտրոնացրել եվրոպական թեթև արդյունաբերական արտադրանքի, ոսկեթել գործվածքեղենի և բանվածքի, տեղական գյուղատնտեսական և արհեստագործական արտադրության ներմուծման և արտահանման զգալի մասը:

Զմյուռնիայում և նրա շրջակայքում հայ արհեստավորները հայտնվել են առաջին գաղթերից հետո, որովհետև նրանք միշտ էլ կազմել են հայ բնակչության մի ստվար մասը: Էգեյանի շրջանում մինչև այժմ հայտնի արհեստավորի հնագույն դամբարանը վկայված է 1561 թ. (Այդընի)[2]: Խայդանագործ Գևորգը զբաղվել է քուղի արհեստագործությամբ, որ նույնն է, ինչ չերիտճին: Այդ արհեստը Զմյուռնիայում հարատևել է դարեր շարունակ: 16–18-րդ դդ. Զմյուռնիա տեղափոխված հայ արհեստավորների արտադրանքը լայն պահանջարկ ուներ ոչ միայն քաղաքում, այլև ամբողջ Էգեյանի շրջատարածքում, ուր և նրանք հաստատում էին իրենց բնակությունը: Հայ արհեստավորները ընդգրկված էին համքարական կազմակերպությունների մեջ, թեև չի բացառվում, որ նրանց մեջ լինեին կորպորատիվ որևէ միությունից ա-

1 «Հառաջ», 1972, 1 հոկտեմբերի:

2 Ք ո ս յ ա ն Հ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 25:

զատ գործողներ: Ոչ մեծ այնպիսի ավաններում, ինչպիսին էին, օրինակ, Նազիլին, Մենեմենը կամ Գուշատան, արհեստավորների փոքրաթվությունը (պայմանավորված ընդհանրապես հայ բնակչության փոքրաթվությամբ) բացառում էր այդպիսի կազմակերպության հարկն ու հնարավորությունը: Էսնաֆը (արհեստավորությունը), ինչպես և բնակչության մյուս խավերը, որոշյալ չափով հարկ էին վճարում իշխանություններին: Սուլեյման Կանունիի ժամանակ (1520–1566) հարկը մտնում էր ջիզյեի ընդհանուր գումարի մեջ. հարուստներից՝ 4 ոսկի, էսնաֆից՝ 2[1]: Զմյուռնիայում հայերը զբաղվում էին ամենատարբեր արհեստներով՝ նրանց մեջ կային թյուլպենտճիներ (մետաքսագործներ), ոսկերիչներ, վարսավիրներ, վերմակագործներ, ժամագործներ, երկաթագործներ, կոշկակարներ, հյուսներ, որոնց մի մասը գործում էր փոքր խմբերով կամ անհատապես: Ճանաչված էին, մանավանդ, Զմյուռնիայի և Էյդեմիշի մետաքսագործները, որոնց լայն հնարավորություններ էր ընձեռում մետաքսի ավանդական առևտուրը: Արտադրության մեջ էր ներգրավվել նաև կանացի աշխատուժը: Էյդեմիշում հայ կանայք գործում էին ավանդական մետաքսե նուրբ թաշկինակներ կամ բանվածք՝ զգեստի համար: Աշխատանքի բաժանումը իրականացվում էր ժամանակի արհեստագործական արտադրության կազմակերպման եղանակներով: 19-րդ դ. առաջին քառորդին Էյդեմիշում հիշվում են նաև հայ ոսկերիչներ, դարբիններ, հացագործներ և այլն: Մաղագործությամբ, ինչպես ամենուրեք, զբաղվում էին բոշաները: Մինչև Էգեյանի շրջակայքի հայաթափ լինելը Գուշատայում գործում էին ոսկերիչներ, երկաթագործներ, դերձակներ, Սյոքեում, Այդընում և Մելեսում՝ ոսկերիչներ, մանածագործներ, դերձակներ, Դենիզլիում՝ վերը նշված արհեստավորներից բացի՝ նաև կտավագործներ, Ագհիսարում՝ երկաթագործներ և համեստագործներ, ներկարարներ և այլն[2]:

Ջուլհակագործության ասպարեզում (մանուսայագործություն) 17-րդ դ. ի վեր համբավ էին վայելում Մանիսայի հայ արհեստավորները: Քաղաքի ամբողջովին հայաբնակ Վերին թաղը այդ արհեստը շարունակում էր գաղթելուց հետո: Ոստայնանկությունը այստեղ կազմակերպված էր տներում, ընդ որում, արտադրության այս հնամենի ձևը հարատևել է մինչև 1922 թ.՝ Մանիսայի պարպումը հայերից: Այս ար-

1 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 2:

2 Նույն տեղում:

հեստի կենսունակությունը ցույց է տալիս, որ տնայնագործական արտադրությունը, սկսած միջնադարից, հաջողությամբ շարունակում էր գոյատևել՝ իր որակով և մատչելի գներով բավարարելով տեղական պահանջարկը: Մանիսայում հայերը զբաղվում էին նաև այլ արհեստներով: 1817 թ. Զմյուռնիայի թեմերում նվիրական այցելությամբ շրջող առաջնորդ Փիլիպոս եպիսկոպոսը հիշում է տեղի օղեգործներին, չթագործներին, ներկարարներին, վարսավիրներին և այլ արհեստավորների[1]: Նույն արհեստներն էին կիրառվում Գասապայում, Այդընում, Բայանդրրում, Գուշատայում, Ագհիսարում, Գնրքում և այլուր: Թուրք ուսումնասիրողը 17-րդ դ. Մանիսայում հաշվում է մոտ 50 թուրքական համքարություն[2]: Հայ համքարությունների թիվը դրանից քիչ էր, սակայն և բավականաչափ մեծ էր, եթե նկատի ունենանք հայ բնակչության համեմատաբար փոքր թվաքանակը: 19-րդ դ. վերջին Մանիսայի հայ բնակչության մեջ (Վերին թաղում՝ 400 տուն, Վարի թաղում՝ 100 տուն) տարածված էին նաև դերձակությունը, կոշկակարությունը և եվրոպական կահագործությունը:

Էգեյանի շրջանի արհեստագործության առավել խոշոր կենտրոնը մնում էր Զմյուռնիան: Էջմիածնի կաթողիկոսների՝ այլևայլ ժամանակներում Զմյուռնիայի թեմին ուղղած կոնդակներում (սկսած 17-րդ դարից) հիշվում են «վայելչագործ արհեստավորները» «գեղեցկանկար արհեստավորները» և այլն[3]: Քաղաքի բեղեսթենում հայ արհեստավորներն ունեին խանութներ, որտեղ իրացնում էին սեփական արտադրանքը՝ բամբակե կտավներ, կերպասե գործվածքներ, մանածագործական այլևայլ արտադրանք: 19-րդ դ. առաջին քառորդին Զմյուռնիայի էջմիածնապատկան տների (վակֆական իրավունքով) մի ցանկում նշվում են դրանք վարձակալած արհեստավորները՝ վարսավիրներ, ժամագործներ, դերձակներ, հյուսներ, մսագործներ, վերմակագործներ և այլն[4]: Տարածված էին գդակագործությունն ու կոշկակարությունը:

Զմյուռնահայ արհեստավորների մեջ 17–19-րդ դդ. շատ տարածված էր մետաքսագործությունը (թյուլպենտճիներ): Տեղացի մետաքսագործները սերտ փոխհարաբերություններ ունեին Կ. Պոլսի հայ արհեստա-

---

1 Նույն տեղում, էջ 12–13:

2 J n a l c i k H. The Ottoman Empire. The Classical Age. 1300-1600, New York–Washington, 1973, p. 159.

3 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 239, 50, 22:

4 Նույն տեղում, թղթ. 245, վավ. 175:

կիցների հետ: Այդպիսի փոխհարաբերությունները ենթադրում էին որոշակի պայմանավորվածություն՝ արտադրանքի տեսակի, քանակի, շուկայական գների և այլնի վերաբերյալ: 1784 թ. նշված պայմանավորվածությունը այս կամ այն չափով խախտել են զմյուռնացի արհեստավորները, ուստի ներհակություն էր առաջացել նրանց և Կ. Պոլսի հայ մետաքսագործների միջև: Բանը հասավ այնտեղ, որ պոլսեցիները կասեցրեցին զմյուռնացիների արտադրանքի առաքումը, ուրեմն և իրացումը մայրաքաղաքում: Նույն թվականի մայիսին մայրաքաղաքի մետաքսագործների արհեստակիցների առջև միջնորդել է Ղուկաս կաթողիկոսը՝ հօգուտ զմյուռնացի արհեստավորների, հորդորելով թույլատրել նրանց արտադրանքի մուտքը Կ. Պոլսի շուկաները: Կաթողիկոսը ողոքում էր նրանց՝ «զի Զմիւռնիոյ դիւլպենտճոց գործն մի խափանեսցեն, այլ հրաման առցեն յարքունուստ դարձեալ ի գործ արկանել... զարհեստն իւրեանց և կենցաղավարիլ»[1]: Զմյուռնացի արհեստավորները, իրոք, խախտել էին նախնական պայմանավորվածությունը, ինչը նշվեց վերը: Նրանք կաթողիկոսին խոստանում էին երբևէ չխախտել առևտրի կանոնները մայրաքաղաքում և հավաստիացնում, թե «մեք ամենեքեան զիարդ և իցեն կամք նէ՝ պատրաստ եմք առ ի հնազանդիլ և զինչ հարկաւոր դնիցեն ի վերայ մեր հատուցանել»[2]:

Զմյուռնացի թյուլպենտճիների ծանր կացությունը շարունակվել է մինչև 1792 թ. արքունի չթագործարանի բացումը: Այդ գործարանը հիմնել էր Տամկաճյան ընտանիքի անդամներից մեկը: Այդ ընտանիքից էր, ի դեպ, նշանավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանյանի հայրը: Այդ չթագործարանը բանալու մասին արքունի ֆերմանը փոխում էր զմյուռնացի արհեստավորների վիճակը, քանի որ նրանք դադարում էին կախում ունենալ Կ. Պոլսի արհեստավորական համայնքից, որչափով ապահովվում էր նրանց արտադրանքի սպառումը պետության կողմից: Արհեստագործարանը արտադրել է թաշկինակներ, դրծվածքներ, սրբիչներ, այլևայլ ծածկոցներ, ծաղկազարդ կտավներ և այլն, որոնք ներքին շուկայում գտան իրենց կայուն տեղը: Արհեսագործարանը գործել է մինչև 1850-ական թթ., երբ նրա տարածքը յուրացվեց Զմյուռնիա-Կասաբա երկաթուղագծի շինարարության բերումով:

---

1 Նույն տեղում, թղթ. 5, վավ. 32:

2 Նույն տեղում, ձեռ. 2803, էջ 430:

1817 թ. Զմյուռնիայում գործարկվում է ևս մեկ նոր չթագործարան, հավանաբար հնի նոր մասնաշենքը: Հայտնի է, որ 1817 թ. հրդեհի ժամանակ այրվել էին և հին, և նոր պասմահանները: Դրանից հետո արհեստագործարանը նորոգվել է և գործել մեծ հաջողությամբ: Գոյության վերջին շրջանում, սակայն, այն կորցրեց իր երբեմնի փայլը՝ չդիմանալով Շվեյցարիայի ծաղկանկար արտադրանքի մրցակցությանը:

Զմյուռնիայի և նրա շրջակայքի արհեստավորության մեջ, կապված ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացման հետ, 18–19-րդ դդ. նկատելի է սոցիալական շերտավորման իրողությունը: Արհեստավորների զանգվածից առանձնանում էին ունևոր արհեստավորները, որոնք սեփական խանութներ կամ կրպակներ էին ձեռք բերում Զմյուռնիայում, նրա շրջակայքի ավաններում և այլուր, համագործակցում կ. Պոլսի արհեստավորների հետ՝ տեղում վաճառք կազմակերպելու և այլ նպատակով: Արհեստագործական արտադրությունը, սակայն, տնօրինում էին խոշոր առևտրականները: Զմյուռնիայի տեղական առևտուրը մասամբ հենվում էր տեղական արտադրության վրա: 18–19-րդ դդ. նկատելի էին առևտրի և արհեստների փոխներթափանցման որոշ միտումներ: Զմյուռնացի Տամկաճյանները զբաղվում էին, ինչպես նշվեց վերը, տեղական արտադրության ծաղկազարդ վարշամակների առևտրով (18-րդ դ. վերջին): «Յազմաճի» (գործվածքի նախշ դրոշմող) գործավոր էր 19-րդ դ. սկզբին և հետագայում հարստացած ու զմյուռնահայ լուսավորության մեկենաս դարձած Հակոբ Սարգսյանը, որն այդ արհեստը կատարելագործելով նյութական լուրջ հաջողությունների էր հասել Վիեննայում:

Արդյոք Էդեյանի մերձափնյա մյուս քաղաքների ու բնակավայրերի արհեստավորները մտնո՞ւմ էին Զմյուռնիայի հայ էսնաֆի մեջ: Պետք է կարծել, որ եթե անգամ չկային արտադրական-կազմակերպական կապեր, ապա չէր բացառվում նրանց փոխհարաբերությունների մի որոշ կարգավորումը, քանի որ ի վերջո Զմյուռնիայում էին իրացնում իրենց արտադրանքը շրջակա բնակավայրերի հայ արհեստավորները: Սրանց ստվար քանակը միավորված էր զուտ հայկական համքարական կազմակերպությունների մեջ: 17-րդ դ. սկսած մինչև դաղթօջախի վախճանը, զմյուռնացի արհեստավորները իրենց առևտուրը կատարում էին շուկաներում, իրավունք ունեին առանձին խանութ բանալ և այլն:

---

1 Նույն տեղում, Ս. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 170:

Ինչպես էթնիկական հանրություններն էին առանձին թաղամասերում բնակվում, այնպես էլ նրանց առանձնացած համախմբումն էր շուկաներում:

* * *

Առաջին գաղթականություններից սկսած մինչև իր պատմության ավարտը զմյուռնահայ գաղթօջախն ապրել է լիարյուն ազգային կյանքով: 1631 թ. Զմյուռնիայում ապրում էր 8.000 հայ, 1730 թ.՝ 7000, 1812-ին՝ 10.000, 1868-ին՝ 12.000, 1898-ին՝ 11–12000, 1918-ին՝ 11.360, 1922-ին՝ 30.000 (Կիլիկիայից Զմյուռնիա և շրջակայք տեղափոխված հայ գաղթականության հետ միասին)[1]: Այս տվյալները հիմնականում վերաբերում են բուն զմյուռնահայ համայնքին, մինչդեռ Էգեյանի և նրա շրջակայքի մյուս բնակավայրերում ապրող բնակչության թիվը պակաս չի եղել (եթե ոչ ավելի) բուն քաղաքի հայերի թվաքանակից: Գավառական այդ զանգվածները սոցիալական հարատև փոփոխություններից ստիպված դիմում էին Զմյուռնիա՝ համալրելով հայ բնակչության շարքերը: Մի հայտնի չափով գաղթօջախը նրանց է պարտական իր կենսագործունեության համար:

Գաղթօջախի՝ որպես հայության հոգևոր ու մշակութային կենտրոնի առաջացումը կապվում է ժողովրդի քաղաքական ճակատագրի, ազգային, տնտեսական ու հասարակական գործոնների յուրահատուկ համակցության հետ: Նրա առևտրական ու մշակութային ընդարձակ կապերը արտասահմանի, առանձնապես եվրոպական երկրների ու Ռուսաստանի, ինչպես և այդ երկրներում ապրող հայրենակիցների հետ, փոխադարձ ու սերտ առնչությունները էջմիածնի մայր աթոռի հետ այն հիմնական պատճառներն էին, որ պայմանավորեցին զմյուռնահայերի ազգային-հոգևոր կյանքի վերելքը:

Մինչև 1825 թվականը Զմյուռնիան էջմիածնի «տերունի» թեմն էր, այսինքն՝ առաջնորդը կամ նվիրակը նշանակվում էր էջմիածնի կաթողիկոսի կողմից: Վավերագրերում վկայված՝ Զմյուռնիայի հնագույն առաջնորդը Պռնկատոշ Կարապետն է, որին այդ պաշտոնով ուղարկել էր Մելքիսեթ կաթողիկոսը՝ 1610-ական թթ.: Մելքիսեթին ուղղած վավերագրում այս եկեղեցականը հիշվում է որպես «Թիրայու, Իզմիրու և

---

1 Սիմոնյան Պ., Հուշամատյան. Հայկական Զմյուռնիան, Փարիզ, 1936, էջ 12:

Մանիսայի առաջնորդ»[1]: Էջմիածնի կողմից կարգված վերջին առաջնորդն էր Ստ. Ենոքյանը: 1825 թ. հետո Զմյուռնիայի առաջնորդական վիճակը վերջնականապես անցնում է Կ. Պոլսի պատրիարքությանը, որ վկայում է սուլթան Մահմուդի կողմից Թուրքիայում ռուսական ազդեցությունը թուլացնող քաղաքականության հաջողության մասին: 1826 թ. մարտի 4-ին Կ. Պոլսի պատրիարքարանում գումարված ժողովում ձևակերպվեցին պատրիարքարանի թեմական իրավասությունների փոփոխությունների արդյունքները, իսկ 1830 թ. նոյեմբերի 14-ի ժողովի կանոնական կոնդակով (կամ «ազգային սահմանադրությամբ») վերաձևվեցին կամ վերափոխվեցին արքեպիսկոպոսական և եպիսկոպոսական աթոռները. այստեղ հինգերորդ տեղում նշվում է «արքեպիսկոպոսարան Զմիւռնիոյ, որոյ աթոռանիստ եկեղեցի է Սբ. Ստեփաննոս»[2]: Զմյուռնիայի թեմը դրանով ամրագրվում էր Կ. Պոլսի պատրիարքարանի ենթակայությանը, որ անփոփոխ մնաց մինչև գաղթօջախի պատմության ավարտը:

Մի քանի դար շարունակ տերունի թեմ ունենալով Զմյուռնիան, ինչպես և նրա շրջակայքը Էջմիածինն այստեղ ձեռք էր բերել բազմաթիվ կալվածքներ՝ տներ, այգիներ, շինություններ և այլն, որոնք գոյացել էին կտակներից ու նվիրատվություններից: Կալվածքներ ուներ նաև Ս. Ստեփանոս եկեղեցին՝ վաճառատներ, մթերանոցներ, կտակված տներ ու կրպակներ՝ շուրջ երեք և կես տասնյակի չափ[3]: 1870-ական թթ. վերջին եկեղեցին իր կալվածքներից ստանում էր 300–350 ղուրուշ: Միայն 700–800 ոսկի տարեկան եկամուտ էր բերում Շահին խան կոչված պանդոկը, որ կտակել էին զմյուռնացի մեծահարուստներ Պետրոս և Պողոս Յուսուֆյանները:

Զմյուռնիայի գաղթօջախը ներկայացնում էր սոցիալական տարբեր խավերի՝ արհեստավորներ, վաճառականներ, մանրածախ առևտրականներ: Սակայն համայնքնում, նրա գոյության վաղեմի ժամանակներից մինչև 1840-ական թթ., անբաժան իշխանություն են ունեցել հարուստ և ազդեցիկ վաճառականները: Նրանցից կազմված ազգային վարչությունը առաջնորդի գլխավորությամբ իրականացնում էր միջնորդի դերը համայնքի և օսմանյան իշխանությունների միջև: Որոշ յուրահատկություններով, Զմյուռնիայում, ինչպես և Կ. Պոլսում ու առհասարակ

1 Լ ե ո, Հայկական տպագրություն, հ. 1, էջ 145:

2 Մատենադարան, Արխիվ գանազան հեղինակների, թղթ. 48, վավ. 45:

3 «Բյուզանդիոն», 1904, 14 ապրիլի:

օսմանյան Թուրքիայի բոլոր հայ համայքներում, գործում էր մյութեվելիական համակարգը, այսինքն՝ վակֆի սեփականատիրական իրավունքի վրա հիմնված վարչությունը: Եկեղեցու կալվածքների (տվյալ դեպքում՝ Ս. Ստեփանոս եկեղեցու) արդյունքերի, դրանց հարկերի, ազգային ունեցվածքներից գոյացող հասույթների ու դրանց մատակարարման գործը (ազգային հաստատություններ, հիվանդանոց, կրթական օջախներ և այլն) վարում էին մյութեվելիները՝ համայնքի հարուստ ու ազդեցիկ խավերից ընտրված ներկայացուցիչները: Զմյուռնիայում նրանք կոչվում էին իշխաններ կամ հոգաբարձուներ և վերընտրվում էին տարին մեկ: Իրազեկ մի հեղինակ նշում է, որ Զմյուռնիայում «ամեն տարի մեծ պահքին մեջ հայ երևելիները կդումարվեին առաջնորդարանի մեջ և ի ներկայության ս. առաջնորդին՝ կընտրվեին ու կհաստատվեին տարեկան եկեղեցականները և հաստատության հոգաբարձուները»[1]: Ազգային այդ պաշտոնյաներն էին տարեկան եկեղեցականները, Ս. Մեսրոպյան վարժարանի վերատեսուչները, Ս. Ստեփանոս եկեղեցու վերակացուն, ազգային հիվանդանոցի և ժանտախտի հիվանդանոցի վերակացուները, Խորայի վերատեսուչը (գապզիմալ), որի պաշտոնն էր հայ հպատակներից հավաքել «փոնթ» (տուրք): Զմյուռնիայի հայությունը 1840-ական թթ. և հետո իր ներկայացուցիչն էր ուղարկում, դարձյալ ընտրությամբ, քաղաքի ընդհանուր ժողովին (չուրայ-ի մեջլիս): Ազգային բոլոր պաշտոնները անվճար էին: Համայնքի ընդհանուր բյուջեն (սնտուկը) կոչվում էր խորա, որից ծախսումներ էին արվում զմյուռնահայերի կարիքների համար: Խորայի գումարները համալրվում էին ոչ միայն ազգային կալվածքների եկամուտներից, այլև նվիրատվություններով ու կտակներով: Այսպես, 1811 թ. սեպտեմբերին Զմյուռնիայի առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսը 2500 ղուրուշ էր կտակել «ի հօրայն հայոց»[2]:

Մինչև 1840-ական թթ. զմյուռնահայ վարչության անդամներ էին ընտրվում երևելի վաճառականներն ու դրամատերերը, որոնք տնտեսական ուժ և կշիռ ունեին առևտրական հրապարակներում, հետևաբար նաև համայնքի ներսում: Գաղթօջախի միջին խավը՝ մանր առևտրականությունն ու արհեստավորությունը, սակայն, չէր կարող հաշտվել այս մենատիրության հետ, մանավանդ թանզիմաթի հրապարակումից հետո,

1 «Արևելք», 1902, 5 հուլիսի:

2 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22բ, վավ. 52ա:

երբ այս խավերը հավասար ձայն և քաղաքացիական իրավունքներ էին ստանում առհասարակ միլեթների համակարգում: Իրավական այս հնարավորությունը միջին խավերն ամրապնդում էին իրենց տնտեսական կարողությունների ու բարեկեցության աճով, որ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման արդյունքն էր: 1847 թ. ընտրված չորս ազգային հոգաբարձուներին ավելացան ևս տասը մարդ, որոնց մեջ կային արհեստավորության ներկայացուցիչներ՝ «ժամանակիս պարագաները խիստ դժբախտ և գործքերը ծանր և տաժանավոր ըլլալով»,– ինչպես խոհեմաբար հիմնավորում էր այս նորությունը «Արշալույս արարատյան» թերթը[1]: Հիրավի, ծանր ժամանակներ էին եկել զմյուռնահայ համայնքի համար: 1845 թ. մեծ հրդեհը գրեթե ամբողջովին ոչնչացրել էր քաղաքի Հայոց թաղը: Ըստ նույն թերթի տեղեկության, ամբողջ քաղաքում այրվել էր 3.500 տուն, ընդ որում, Հայոց թաղի 900 տներից հրո ճարակ էր դարձել 870-ը: Այրվել էին համայնքի կրթական-մշակութային հաստատությունների շենքերը, Ս. Ստեփանոս եկեղեցին: Զուտ պատահականությամբ անվթար էին մնացել միայն Ս. Մեսրոպյան վարժարանի շենքը և հիվանդանոցը[2]: Կործանարար հրդեհի հետևանքները դաղթօջախը կարողացավ հաղթահարել միայն մեկ տասնամյակ անց, թեև եռանդուն օգնություն ցույց տվեցին եկեղեցին՝ էջմիածնի գլխավորությամբ, Անդրկովկասի հայությունը, ինչպես և հայկական գաղթօջախները: Ղրիմի պատերազմը նյութական հավելյալ միջոցներ ստեղծելու հնարավորություններ ընձեռեց զմյուռնահայ խոշոր և միջակ առևտրականությանը և արհեստավորներին (բանակին պարեն և հագուստ մատակարարելը), որը նպաստեց համայնքի տնտեսության և ազգային հաստատությունների վերականգնմանը:

Նշված աղետը առավել գործունակ պետք է դարձներ համայնքի լայն խավերին և նրանց մղեր հասարակական ակտիվության: 1850 թ. գաղթօջախի վերնախավը ազգային վարչությունում իր կողքին պետք է ունենար արհեստավորության առավել լայն ներկայացուցչություն: Ազգային հոգաբարձուներ ընտրվեցին քառասուն հոգի՝ դրամատերերից և արհեստավորներից: Նրանք բաժանվեցին հինգ խմբի, որոնցից յուրաքանչյուրը հոգաբարձությունը ստանձնելու էր մեկական տարի՝ 1850–1854 թթ. համար:

---

1 «Արշալույս արարատյան», 1847, 22 օգոստոսի:

2 Նույն տեղում, 1845, 29 հունիսի:

Զմյուռնիայում այսպես կոչված Ազգային սահմանադրությունը սկսել է գործել 1861 թվականից՝ Կ. Պոլսի հայկական գաղթօջախում դրա կիրառումից մեկ տարի անց: Բ. Դռնից սահմանադրությունը հաստատվելուց հետո այն վերստին գործադրվել է 1863 թ.: Ըստ սահմանադրության, գաղթօջախն ընտրում էր ազգային վարչություն, որն ուներ գավառական, երեսփոխանական, կրոնական, քաղաքական (քաղաքացիական), ուսումնական, տնտեսական, դատաստանական ժողովներ և հիվանդանոցի հոգաբարձություն: Երեսփոխանական ժողովը կազմված էր 35 անդամներից, որոնցից 25-ը զմյուռնացի էին (5-ը՝ կրոնավոր) և 10-ը՝ շրջակայքի թեմերից: Սահմանադրական բոլոր ժողովների նախագահը առաջնորդն էր: Առաջնորդը ընտրվում էր գավառական ժողովի կողմից և հաստատվում սուլթանական ֆերմանով: Զմյուռնիայի թեմի առաջնորդը ավանդաբար հայ եկեղեցու ամենահեղինակավոր ներկայացուցիչներից էր. նրանցից ընտրվել են շատ կաթողիկոսներ և պատրիարքներ, ինչպես՝ Ղազար Ջահկեցին (1738 թ.՝ կաթողիկոս), Ալեքսանդր Գարագոչը (կաթողիկոս՝ 1753 թ.), Ղուկաս Կարնեցին (կաթողիկոս՝ 1780 թ.), Մ. Զուլիաճյանը (կաթողիկոս՝ 1858 թ., իսկ մինչ այդ, 1848 թ.՝ Կ. Պոլսի պատրիարք), Պ. Թագթագյանը (Կ. Պոլսի պատրիարք՝ 1863 թ.) և այլն:

Ազգային վարչության սահմանադրական կառուցվածքը գոյատևեց մինչև գաղթօջախի վախճանը:

* * *

Զմյուռնահայ եկեղեցական հաստատություններից հնագույնը Ս. Ստեփանոս եկեղեցին էր, որի վերաբերյալ ամենահին վավերագիրը վկայված է 1625 թ.: Գաղութում մինչև XVII դ. վերջը գործել է նաև Ս. Բարդուղիմեոսի եկեղեցին: Ս. Ստեփանոսի եկեղեցին երկրաշարժից փլուզվել է 1688 թ. և վերաշինվել 1689 թ., իսկ վերջին անգամ, 1845 թ. հրդեհից հետո, նորոգվել է ճարտարապետ Մելքոն Երամյանի կողմից, 1853 թ.: Ս. Ստեփանոսը առհասարակ Զմյուռնիայի աչքի ընկնող ճարտարապետական կոթողներից էր, նրա շուրջ կառուցված էին ազգային մյուս հաստատությունները՝ առաջնորդարանը, Ս. Մեսրոպյան վարժարանը, ընթերցատունը, արհեստանոցը և այլն: Մյուսը Ս. Լուսավորիչ եկեղեցին էր (1842): Համանուն ազգային հիվանդանոցում (1801) բուժվում էին չքավոր և օգնության կարոտ ազգայինները: Եվրոպական բժշկագիտական կրթություն ստացած առաջին մասնագետը, որ աշխա-

տել է այդ հիվանդանոցում, բժիշկ Թագվոր Վարդանյանն էր (1865 թ. հետո):

Զմյուռնիայի մշակութային ակնառու նվաճումներից էր գրատպության արվեստը: 1759–1762 թթ. այստեղ Մահտեսի Մարկոսը տպագրել է առաջին գրքերը՝ «Մեկնություն ժամակարգության», «Խորհրդատետր» և Եզնիկ[1]: Տպարանի գործունեությունը նախապատրաստել էին Սիմեոն Երևանցին և Կիրակոս Գանձակեցին: Զմյուռնիայում տպագրությունը վերսկսվեց ամերիկացի բողոքական միսիոներների ջանքերով, որոնք 1833–1853 թթ. տպագրեցին անգլերենի քերականություն, հեգարան և այլն: Միսիոներների՝ Հ. Հալլոքի և Գրիֆիտի տպարանում էր տպագրվում «Շտեմարան պիտանի գիտելեաց» ամսագիրը (1839–1850-ական թթ.): 1840-ական թթ. գործում էին Ստ. Պապոյանի (1840–1844) տպարանը և Թաթիկյան վիմագրատուն–տպարանը (1840–1910-ական թթ.): Պապոյանի տպարանում էր նախապես տպագրվում «Արշալույս արարատյան» թերթը, որը հետո ունեցավ իր սեփական տպարանը և գործեց մինչև թերթի դադարի տարին՝ 1884 թ.: Թաթիկյան տպարանը աչքի էր ընկնում իր անհամեմատ լայն գործունեությամբ և արդյունքների որակով: Այն տպագրում էր ոչ միայն հայերեն, այլև եվրոպական լեզուներով գրականություն: Իր սեփական տպարանն ուներ «Արագածունյաց» ընկերությունը (գործել է մինչև 1847 թ.): Տպագրել է «Հայրենասեր» թերթը և մի քանի գրքեր:

Գրատպության վերելքը կապվում է նաև Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանի հետ, որը հիմնել էր վարժարանի տեսուչ Ռ. Ա. Փափազյանը (1841): Այս տպարանի արդյունքն էին Հ. Վանանդեցու «Ոսկի դար Հայաստանի» պոեմը և Շատոբրիանի «Աթալան»՝ Տ. Սավալանի թարգմանությամբ, Կորյունի «Վարք Մաշտոցին» և այլն: Տպարանը նվիրել էր տրիեստաբնակ Պետրոս Յուսուֆյանը:

Հայ գրատպության ասպարեզում Զմյուռնիայի տպարանների մեջ ամենից ավելի ծանրակշիռը Տետեյան եղբայրների տպարանն էր (1853–1892), որն իր ծաղկումն ապրեց անվանի մտավորական, թարգմանիչ Տիգրան Հարությունն Տետեյանի ժամանակ: Իր շուրջը համախմբելով զմյուռնահայ շնորհաշատ թարգմանիչներին (Մ. Մամուրյան, Գր. Զիլինկիրյան, Կ. Ա. Տետեյան, Մ. Նուպարյան և ուրիշներ), Տետեյանը նոր ուղղություն սկզբնավորեց հայ թարգմանական գրականության և

---

[1] Տպարանների մասին տե՛ս Ա. Ալպոյաճյանի հանդամանալի հոդվածը՝ «Զմյուռնիայի տպարանները», «Պատմա-բանասիրական հանդես», 1964, թիվ 2:

գրատպության արվեստի մեջ՝ ձեռնարկելով եվրոպական դասական հեղինակների թարգմանության և տպագրության գործին: Այստեղ տպագրվեցին Վոլտերի, Մոլիերի, Հյուգոյի, Սկոտի, Սվիֆտի, Շատոբրիանի, Դյումայի, Սյուի, Ժ. Սանդի և այլոց երկերը, աշխարհաբարի ուսուցման ձեռնարկներ և այլն: Տպարանը հագեցած էր ժամանակի եվրոպական սարքավորումներով: Ա. Ալպոյաճյանը Տետեյանին իրավացիորեն համարում է «մեծ տպագրագետ և արևմտյան հայոց ամենամեծ հրատարակիչ»: Նրա տպարանում էին տպագրվում 1860–1870-ական թթ. գրեթե բոլոր պարբերականները:

1850-ական թթ. Զմյուռնիայում կարճ ժամանակով գործել են նաև Ս. Մեսրոպյանի սաների պարզունակ տպարանները, որոնք կազմակերպվել էին Ռ. Փափազյանի աջակցությամբ: Դրանցում են տպագրվել «Թուրթակ Հայկազյան» և «Երկասեր» պարբերականները: 1878–1880 թթ. գործել է «Արևելյան մամուլ» տպարանը, որ հիմնել էր Գր. Մսերյանը՝ օգտվելով Մ. Մամուրյանին պատկանող արտոնագրից: 1880 թ. Մսերյանը նոր արտոնագիր է ձեռք բերում և գործարկում սեփական տպարանը, որտեղ տպագրվել են «Մեսեորա» տարեգիրքը և մի քանի թարգմանական գրքեր: Այս տպարանը փակվել է 1881 թ.:

1883 թ. չարք մտավ Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլի» տպարանը (հետագայում՝ Մամուրյան տպարան): Այն հարատևել է մինչև 1922 թ.՝ բացառիկ կարևոր հետք թողնելով գաղթօջախի մշակույթի պատմության մեջ: Այստեղ են տպագրվել ոչ միայն համանուն պարբերականը, այլև «Դաշինք» թերթը, բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործություններ, դասագրքեր և այլն: Այսպիսի հաստատություններից գաղթօջախում վերջինն էին Բ. Քեչիչյանի (1907) և Հ. Շեքերյանի տպարանները, որտեղ տպագրվել են զմյուռնահայ 10-ական թթ. պարբերականները, գրքեր, տեղեկագրեր, լրատվական բնույթի այլ գործեր:

Գաղթօջախի բազմադարյան հարատևման գործում ազգային դպրոցները սնուցող երակի դեր են կատարել: 18-րդ դ. 2-րդ քառորդին Զմյուռնիայում կրթական գործն իրականացրել են էջմիածնական կրթված հոգևորականները, որոնք նվիրական կամ առաջնորդական առնչություններով մշտապես կապ են ունեցել գաղթօջախի հետ: Նույն դարի վերջին քառորդին Ապրոյանների ձեռքով հիմնվեց և մինչև գաղթօջախի խամրումը դոյատևեց Ս. Մեսրոպյան վարժարանը, որը արևմտահայ համբավված դպրոցներից մեկն էր: Վարժարանը յուրովի արտացոլում էր հայ դպրոցի զարգացման ընդհանուր պատկերը՝ պահ-

պանողական դպրոցից մինչև առաջավոր կրթության և դաստիարակության օջախ: 1830-ական թթ. այստեղ մտցվեց եվրոպական լեզուների, բնագիտության և մաթեմատիկայի ուսուցումը: Վարժարանը վերելք ապրեց մասնավորապես Հ. Վանանդեցու և Ռ. Ա. Փափազյանի (1830–1850-ական թթ.) տեսչության ժամանակ: Ս. Մեսրոպյանում ուսանելու էին գալիս ոչ միայն Կ. Պոլսից և Թուրքիայի այլ վայրերից, այլև արտասահմանի հայ երեխաներ: Այս դպրոցը առաջինն էր, որ աշխարհաբարը դարձրեց ուսուցման լեզու և իրականացրեց ազգային լուսավորության նորօրյա սկզբունքները: Տարբեր ժամանակներում վարժարանի տեսուչներն են եղել այնպիսի ականավոր մանկավարժներ, ինչպես Ստ. Ոսկանյանը, Մ. Մամուրյանը, Մ. Սարըյանը, Հ. Տեր-Միրաքյանը և ուրիշներ: 1870–1900-ական թթ. դպրոցն ուներ 300–400 աշակերտ: Հովհ. Սպարթալյանի ձեռնտվությամբ Ս. Մեսրոպյանի շենքը նորոգվել է 1886 թ.:

Գաղթօջախն ուներ իգական վարժարան՝ Ս. Հռիփսիմյանը, որ հիմնված էր 1820 թ., վիեննաբնակ մեծահարուստ զմյուռնացի Հ. Սարգսյանի միջոցներով և մինչև 1845 թ. կոչվել է նրա անվամբ: 1845 թ. մեծ հրդեհից հետո վարժարանը վերականգնվեց տիկին Հռ. Կոստանդյանի (Գալուստ Կոստանդյանի մայրը) նվիրատվությամբ (1849) վերստանալով Ս. Հռիփսիմյան անունը: 19-րդ դարի 2-րդ կեսին աշակերտուհիների թիվը այստեղ հասնում էր 200-ի, դարավերջին և այնուհետև՝ 400-ի: Դասավանդվում էին կրոն, բարոյագիտություն, հայերեն, հայոց պատմություն, աշխարհագրություն, ֆրանսերեն, ձեռագործ: Կրթօջախի նպատակն էր կրթել և դաստիարակել հայ ընտանիքին նվիրված լուսամիտ մայրեր: Երկու վարժարաններն էլ մինչև 19-րդ դ. վերջը ունեին միևնույն տեսչությունը, իսկ դրանից հետո տեսչությունները բաժանվել են:

1850-ական թթ. Զմյուռնիայում իր մանկավարժական նորամուծություններով առանձնանում էր Աղաբեկյան վարժարանը, որի տեսուչներն էին Մ. Աղաբեկյանը (ապագա «Կռունկ Հայոց աշխարհին»-ի խմբագիրը) և Մ. Մամուրյանը: Դպրոցը նախապես արական էր, իսկ հետո դարձավ երկսեռ, որ նորույթ էր առհասարակ հայ դպրոցի համար: Ուսուցման մեթոդներն ու եղանակները վարժարանում հենվում էին եվրոպական մանկավարժական սկզբունքների վրա:

Գաղթօջախի լուսավորական-կրթական կյանքում և հասարակական առօրյայում ազդեցիկ էին կրթական և բարեգործական ընկերություն-

ները: Ազգային ինքնագիտակցության վերելքը դրսևորվում էր համայնքի կյանքի կազմակերպման վրա դրականորեն ներգործելու, այն նոր հունով ուղղելու գործունեության միջոցով: Այս ընկերությունները գործել են 1840 թ. ի վեր: «Սյունյաց» ընկերությունը (1841–1845) իր գործունեության լայն ասպարեզով ու արդյունավետության տեսակետից բացառիկ տեղ ունի առհասարակ Թուրքիայի հայ ընկերությունների պատմության մեջ: Այն աջակցել և նյութապես խրախուսել է ոչ միայն Զմյուռնիայի, այլև առհասարակ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայության կրթական գործին: Ընկերության պատկառելի նյութական հնարավորությունների մասին է խոսում անդամակցող հարուստ վաճառականության ստվար շարքը (սկսած տեղացի վաճառականներից մինչև Ապրոյաններ, Պ. Յուսուֆյան, Վիեննայի, Բաղդատի, Բոմբեյի և այլ քաղաքների ու գաղթօջախների հայ վաճառականներ, օտարազգի դրամատերեր և այլն): Ընկերությունը դպրոցներ է հիմնել Էգեյանի ողջ շրջակայքով մեկ՝ Մանիսա, Բայանդրը, Էյդեմիշ, Ագհիսար և այլուր: 1845 թ. հրդեհը ծանր հարված հասցրեց «Սյունյաց» ընկերությանը. ընկերության վարչության մեջ ծայր առան սրան հետևող շփոթն ու երկպառակությունները: Ջլատված ընկերությունը գործել է մինչև 1850-ական թթ.՝ զուտ անվանապես:

1843–1845 թթ. գործում էր «Արագածունյաց» ընկերությունը, որը հրատարակում էր «Հայրենասեր» շաբաթաթերթը և նպատակադրվել էր նաև գրքեր տպագրել: Վերոհիշյալ հրդեհի մեջ այրվեցին ոչ միայն ընկերության նյութական հնարավորությունները, այլ գործունեության հեռանկարները: Նույն պատճառով միևնույն բախտին արժանացավ և «Հայկազնյան» ընկերությունը, որը հասցրեց թողնել մեկ-երկու գիրք, ինչպես և տպագրության պատրաստ հատորներ:

1860-ական թթ. գաղթօջախում թատրոնի զարգացմանը հետամուտ էր «Վասպուրական» ընկերությունը (1860–1864), որը հայտնի է իբրև տեղի պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիր: Նրա կազմակերպած համանուն թատրոնը թարգմանական խաղացանկի հետ միասին տեղ է տվել նաև ազգայինին՝ բեմադրելով պատմական անցյալին նվիրված Մ. Պեշիկթաշլյանի, Մ. Վանանդեցու և այլոց թատերգությունները: 1863 թ. «Վասպուրականը» ստացավ համազգային արժեք՝ Կ. Պոլսից հյուրախաղերի եկած Հ. Վարդովյանի և Ստ. Էքշյանի խմբերի շնորհիվ: Արհեստավարժ դերասանների մասնակցությունը թատրոնն օժտում էր նուրբ արվեստով և ազգային խոր բովանդակությամբ, զմյուռնահայ

հանդիսատեսին ներարկում գեղագիտական ճաշակ: «Վասպուրականի» բեմում ելույթներ են ունեցել նաև Զմյուռնիայի եվրոպական օպերետային «Կամարանո» թատրոնը, արտասահմանցի դերասաններ և այլք: Թատրոնը նպաստել է նաև թուրքական թատրոնի սկզբնավորմանը: Նկատի առնելով քաղաքի հունական ստվար ազգաբնակչությանը՝ «Վասպուրականը» ներկայացրել է նաև հունարեն պիեսներ:

«Հաշտենից» ընկերությունը նպատակադրվել էր յուրովի շարունակել դադարած «Սյունյացի» գործը, ուստի նախապես ընդօրինակել էր նրա ծրագիրը: Ընկերությանը, սակայն, հաջողվեց պարարտ հող գտնել միայն սահմանադրական գաղափարների քարոզչության մեջ: Դրա վկայությունն էր 1860–1862 թթ. ընթացքում նրա հրատարակած «Միություն» հանդեսը: 1862 թ. ընկերությունը դադարեց, նրա անդամների մի մասը համալրեց «Վասպուրական» ընկերության շարքերը:

Բարեգործական նպատակներ ուներ «Աղքատասիրաց» ընկերությունը (1862–1894), որի խնամքի տակ էին Ս. Լուսավորչյան հիվանդանոցը և նյութապես ոչ ապահով անձինք: Այս ընկերության գործը պետք է շարունակեր «Աղքատախնամ» ընկերությունը (1896–1922), որի համար առավել ծանր հոգս էր ստեղծել համիդյան արհավիրքներից հետո Զմյուռնիա և նրա շրջակայք անցած գաղթականների խնամքը:

Աբողջովին մշակութային նպատակներ ուներ «Հայ ընթերցատունը» (1896–1922), որ հիմնել էին Գ. Բաբազյանը և Գ. Կոստանդյանը: Ընթերցատունն ուներ հայերեն և օտար լեզուներով պատկառելի գրականություն, ընդարձակ ընթերցասրահ: Ատենախոսություններով այստեղ հանդես են եկել հայ և օտարազգի մշակութային գործիչներ, գրողներ:

Կրթական և բարեգործական բնույթ ուներ «Լուսավորչյան» ընկերությունը (1862–1863), որ հոգում էր աղքատ երեխաների ուսման ծախքերը: Զմյուռնիայի և նրա շրջակայքի ազգայինների և օտարականների տնտեսական թշվառություններն էր ջանում մեղմել 1860-ական թթ. վերջին կազմակերպված «Ուլնիական» ընկերությունը:

Գաղթօջախի կյանքում հետաքրքիր երևույթ էր «Տիգրան» մասոնական օթյակը: Զմյուռնիայում ֆրանկմասոնական ընկերություններ ունեին անգլիացիները («Հոմերոս»), իտալացիները («Ստելլա Իոնիա»), հույները («Այոս Յորեյոս»): «Տիգրան» օթյակը, ինչպես և Կ. Պոլսի հայկական մասոնական «Հայկ-Օրիոնը», ընդգրկում էր հայ մտավորականության տարբեր մտայնության ներկայացուցիչներին, հասարակական տարբեր հայացքների տեր մարդկանց: Դրան անդամակցել են Մ.

Մամուրյանը, Գր. Զիլինկիրյանը, Կ. Տետեյանը, Մ. Վանանդեցին, «Հաշտենից» ընկերության շատ անդամներ: Հայ մասոններին միավորում էր, դատելով ըստ ամենայնի, համընդհանուր սիրո և եղբայրության գաղափարը: «Տիգրան» օթյակը հիմնվել է 1865 թ.: Մ. Մամուրյանը այստեղ է կարդացել իր ատենախոսությունը Մ. Նալբանդյանի մահվան տարելիցի առթիվ, որը հետո տպագրվեց «Ծաղիկ» հանդեսում: Օթյակը զբաղվել է նաև բարեգործական գործունեությամբ, ձգտել կապ հաստատել արևմտահայ գավառական իրականության հետ:

Զմյուռնիայում ապաստանած գաղթական հայերի կրթական գործն էին հոգում նաև «Անձնվեր» (1873–1882) և «Վահանյան» ընկերությունները: 1880-ական թթ. վերջին կազմակերպված «Ուսումնասեր» ընկերությունը հնարավորություններ էր ստեղծում Եվրոպա ուսանելու ուղարկել ընդունակ պատանիներին:

Գաղթօջախի պատմության մեջ զգալի հետք են թողել կանանց բարեգործական և կրթական ընկերությունները, ինչպիսին էին 1890-ական թթ. հայտնված «Խնամակալուհի տիկնանց ընկերությունը», «Տիկնանց հոգատար-որբախնամ ընկերությունը» և «Բարեսեր տիկնանց հանձնախումբը»:

«Տիկնանց հոգատար-որբախնամ ընկերությունը» հիմնել էր որբանոց՝ Արևմտահայաստանից գաղթած որբ երեխաներին պատսպարելու և ուսման տալու նպատակով: Որբանոցի շենքը տրամադրվել էր տիկին Մ. Պալեոդյանի նվիրատվություններով: Ի դեպ, որբանոց էր հիմնել նաև «Ներսեսյան որբասիրաց ընկերությունը» (հիմն. 1897), որը գործել է շուրջ տասը տարի: Նկատենք, որ նշված ընկերությունները, անկախ իրենց ազգօգուտ և մեծ չափերի հասնող գործունեության շրջանակներից, ի վիճակի չէին խնամակալելու բոլոր որբերին (1890-ական թթ. գավառի կոտորածներից հետո Արևմտահայաստանից բավական թվով գաղթականներ էին անցել նաև Էգեյանի առափնյա շրջանները): Այս հարցում մարդասիրական լուրջ ջանքեր էր գործադրում Զմյուռնիայում հիմնված ամերիկյան որբանոցը:

Նույնպիսի նպատակներ, բայց անհամեմատ համեստ չափերով, հետամտում էր 1890-ականի սկզբին կազմակերպված «Մեսրոպյան դրասիրաց ընկերությունը»: Ի դեպ, այս ընկերությանն էր հանձնված «Հայ ընթերցատան» տնօրինությունը: Որբերին արհեստ սովորեցնելու նպատակով մի կարճ ժամանակ գործել է Արապյան արհեստանոցը:

1910-ական թթ. գործում էին նաև այլ նպատակներով հիմնված մշակութային, բարեգործական և այլ բնույթի ընկերություններ («Պաշտոնեից միություն», «Որսորդաց ակումբ», «Քնար» և այլն), որոնք վկայում էին զմյուռնահայերի աշխույժ հասարակական կյանքի մասին:

1839 թ. Զմյուռնիայում սկզբնավորվեց հայ պարբերական մամուլը. առաջնեկը այս ասպարեզում ամերիկացի բողոքականների հրատարակած «Շտեմարան պիտանի գիտելյաց» ամսագիրն էր (1839–1854), սակայն այն դեռևս ազգային հրատարակություն չէր, որովհետև որևէ կապ չուներ գաղթօջախի հասարակական կյանքի հետ, որևէ կերպ չէր արտացոլում ազգային հոգևոր շարժումը զմյուռնահայերի մեջ: Գրական արևմտահայերենի մշակման հարցում, սակայն, այս պարբերականը որոշակի արժեք է ներկայացնում:

Հաջորդ պարբերականը՝ «Արշալույս արարատյանը» (1840–1884) ոչ միայն զմյուռնահայերի, այլև ընդհանրապես արևմտահայերի առաջին ազգային հասարակական հրատարակություններից մեկն էր: Գաղթօջախի պահանջմունքների բերումով այն ուներ ազգային լայն հետաքրքրություններ, իր հարցադրումներով ու ընդարձակ թեմատիկայով դուրս էր գալիս նաև արևմտահայ կյանքի շրջանակներից՝ հանդես գալով իբրև համազգային ընդգրկումների հրատարակություն: Խմբագիրները տարբեր ժամանակներում եղել են Ղ. Պալդազարյանը (սկզբից մինչև 1876 թ.), այնուհետև՝ Տ. Սավալանյանը, Նշան Միրզան, վերջում՝ 1883–1884-ին՝ Հ. Կ. Սրվաճյանը, Փարիզում իրավագիտական կրթություն ստացած և զարգացած մի մտավորական: Մինչև 1846 թ. «Արշալույս արարատյանը», այնուհետև՝ զմյուռնահայ մյուս թերթը՝ «Հայրենասերը», մնում էին (մինչև 1846 թ.) օսմանյան Թուրքիայում հրատարակվող միակ հայերեն թերթերը: «Արշալույս արարատյանը» առավել, քան իր ժամանակի որևէ թերթ, հարուստ լրատվություն էր պարունակում ազգի զույգ հատվածների, Եվրոպայի և Մերձավոր ու Միջին արևելքի երկրների, ինչպես և Հնդկաստանի հայ գաղթօջախների վերաբերյալ: Այս թերթի շուրջ չորս և կես տասնամյա գործունեությունը կարևոր նշանակություն ունեցավ ազգային համախմբման, հայ ժողովրդի տարբեր հատվածների ու գաղթօջախների առնչության, ազգային դիմանկարի պահպանության գործում:

Զմյուռնահայերի մյուս թերթը «Հայրենասեն» էր (1843–1846), որը, իբրև շաբաթաթերթ, ուրույն դիրք էր ձեռք բերում կիսամսյա «Արշալույս արարատյանի» համեմատությամբ՝ մատուցելով առավել թարմ

լրատվություն: 1845 թ. հունիսի հրդեհը ճարակեց «Հայրենասերի» նյութական և հարատևման բոլոր հնարավորությունները: Խմբագիր Խ. Մելիքսեթլումյանը իր թերթի հետ միասին ստիպված էր թողնել ընթերցողներին՝ ասպարեզը ամբողջովին զիջելով առավել հաստատուն հիմք ունեցող «Արշալույս արարատյանին»:

Գրական թեքում ուներ «Արփի արարատյան» ամսագիրը (1853–1855), որ խմբագրում և հրատարակում էին Տետեյան եղբայրները: Կ. Պոլսի «Բանասերից» (1850–1851) հետո լինելով արևմտահայ երկրորդ գրական հրատարակությունը, «Արփի արարատյանը» իր մշակութային արժեքով կատարեց նաև սկզբնավորողի դեր՝ մասնավորապես, ընթերցողին ներկայացնելով եվրոպական դասական գրականության թարգմանությունները և գործնական քայլեր արեց ազգային թատրոնի զարգացման անդաստանում:

Գաղթօջախում հայ մամուլն ու հրապարակախոսությունը զարգացման բարձր աստիճանի պետք է հասնեին 1860-ական թթ., երբ մշակվում և տարածվում է ազգային համախմբման գաղափարախոսությունը: 19-րդ դ. 60-ական թթ. արևմտահայ իրականության մեջ ծավալված հասարակական տեղաշարժերն իրենց գաղափարական դրսևորումը ստացան այսպես կոչված սահմանադրական պայքարի միջոցով, որի հետևանքով ձևավորվեցին հասարակական ուղղությունները մտավոր և մշակութային շարժման մեջ:

Զմյուռնիայում գաղափարական նոր շարժումը սկզբնավորվում է «Միություն» (1860–62, ընդհատումներով) հանդեսով, որի կողմնորոշումները պետք է զարգացներ «Ծաղիկը» (հանդես, խմբագիրներ՝ Գր. Զիլինկիրյան և Ա. Հայկունի, այնուհետև՝ միայն Գր. Զիլինկիրյան): «Միությունը» («Հաշտենից» ընկերության հրատարակություն), ինչպես և «Ծաղիկն» ու Կ. Պոլսի «Մեղուն» առաջադրում էին արևմտահայ վարչության ժողովրդավարացման, հասարակական կյանքի ու մշակույթի եվրոպականացման գաղափարը: Արևմտահայ հասարակական-քաղաքական միտքը, գեղագիտական ըմբռնումներն ու հրապարակախոսական կուլտուրան մի հայտնի չափով զարգացման խթաններ են ստացել «Ծաղիկի» (1861–1867) էջերում:

1860-ական թթ. սկզբին հայտնվել էին ուրիշ պարբերականներ՝ «Դիմակը», «Գարուն Հայաստանին» և «Հավերժահարսը» (բոլորն էլ 1862 թ.): «Դիմակը» փորձում էր նպաստել երգիծական ժանրի զարգացմանը, իսկ մյուս երկուսը՝ թարգմանական գրականության ժողովրդականաց-

մանը: Իրենց գրական բովանդակությամբ և մշակութային նշանակությամբ հանդերձ, այս պարբերականները հանրության համար տպավորիչ, բայց և ոչ հարատևող արժեքներ էին, մանավանդ, հրատարակվեցին միայն կարճ ժամանակ:

1870-ական թթ. արևմտահայ հասարակական միտքն ու հրապարակախոսության ներգործունն արժեքը անհամեմատ ավելի բարձր որակներով ի հայտ եկան Մ. Մամուրյանի հիմնած «Արևելյան մամուլ» հանդեսում (1871–1909): Իր հիրավի հանրագիտական բովանդակությամբ այս պարբերականը բացառիկ կարևոր տեղ ունի հայ մամուլի պատմության մեջ: Այստեղ իրենց որոշակի ձևավորումն ստացան հրապարակախոսական շատ ժանրեր, որով նոր, արդիական սահմանագծին մոտեցավ ազգային լրագրական մշակույթը: «Արևելյան մամուլի» էջերում հրատարակվում էին հրատապ նշանակություն ունեցող ժողովրդի կացությանը, արվեստին, գրականությանը, լեզվին, թատրոնին, դպրոցին ու մանկավարժությանը, բարոյաէթիկական հարցերին, ընթացիկ ազգային իրականությանը և այլնին նվիրված բազմաթիվ հոդվածներ, վավերագրական նյութեր, որոնք կոչված էին բազմակողմանիորեն բավարարելու ժողովրդի հոգևոր պահանջմունքները: «Արևելյան մամուլի», ինչպես նաև հետագայում լույս տեսած «Մեսեորա» տարեգրքի (խմբագիր-հրատարակիչ Գր. Մսերյան, 1880–1881) էջերում դրսևորվեցին արևմտահայ առաջավոր հասարակական մտքի էական կողմերը, մասնավորապես ազգային ինքնորոշման, եվրոպական ու ռուսական մշակույթի, գիտության ժողովրդականացման, փիլիսոփայական ու գեղագիտական իմացությունների տարածման ասպարեզում: «Մեսեորան» արևմտահայ միակ հրատարակությունն էր, որը համիդյան բռնությունների ժամանակաշրջանում կարողանում էր (և ի վերջո դրա համար էլ հատուցեց իր խափանմամբ) անցկացնել ազգային-ազատագրական պայքարի դաղափարը թարգմանական գեղարվեստական գրականության միջոցով:

«Արևելյան մամուլից» հետո բավական անց գաղթօջախում հրատարակվեց «Իզմիր» շաբաթաթերթը (խմբագիր Մ. Ներսիսյան, 1907): Պարբերականը կոչված էր լրացնելու լրատվության այն սուր պակասը, որ զգում էին զմյուռնահայերը «Արշալույս արարատյան» եռօրյա լրագրի դադարից ի վեր: Շաբաթաթերթը, սակայն, տևական կյանք չունեցավ և թարմ տեղեկատվության միակ աղբյուրը շարունակեց մնալ «Արևելյան մամուլը», որն այդ ժամանակ, 90-ական թթ. երկրորդ կե-

սին, հրատարակվում էր իբրև կիսամսյա հանդես: Գաղթօջախում ազգային կյանքի նոր աշխուժացման դրսևորումն էր մեկ տասնամյակ անց հրատարակված «Արշալույսը»՝ զմյուռնահայերի առաջին օրաթերթը (տեր և տնօրեն՝ Բ. Քեշիշյան, 1907–1908 թթ.): Այս թերթը արտահայտել է զմյուռնահայ առաջադիմական ուժերի տրամադրությունները, իր էջերում հյուրընկալել ազդեցիկ մտավորականությանը և սուր քննադատության ենթարկել տեղական և պոլսահայ վերնախավին: Սրանց ձեռնարկած հալածական միջոցառումներն էլ որոշեցին թերթի հետագա բախտը: Նույն՝ 1908 թ., հրատարակվեց «Միմոս» շաբաթաթերթը (խմբագիր՝ Ռ. Ղազիկյան), որը դարձյալ երկար չի շարունակվել: Հաջորդ՝ 1909 թ. «Արևելյան մամուլ» շաբաթաթերթը վերածվեց օրաթերթի՝ «Դաշինք» (խմբագիր՝ Ս. Պարթևյան, 1909–1919) անվամբ: «Դաշինքը» արտահայտել է ռամկավարների հայացքները և հետևողական պայքար է մղել արևմտահայերի ինքնորոշման համար՝ ակնկալելով նրանց վարչական և մշակութային ինքնավարությունը օսմանյան Թուրքիայի կազմում: Իր հրատարակության վերջին շրջանում, Մեծ եղեռնից հետո, կրկին վերանվանվել է «Արևելյան մամուլի» (1919–1922) և ուշագրավ ու փաստականորեն հագեցած նյութեր է տպագրել արևմտահայերի ազգային-կրոնական, տնտեսական ու մտավոր կացության վերաբերյալ, արտացոլելով արևմտահայության վերջին շրջանի կյանքը:

Ընդամենը մի քանի համար է լույս տեսել «Մունետիկ» շաբաթաթերթը (խմբագիր՝ Ս. Պալիկյան, 1909): Գաղթօջախում 1910-ական թթ., հիրավի, երևույթ էր «Աշխատանք» շաբաթաթերթը (տեր և տնօրեն՝ Ս. Թոքաճյան, 1910–1914 թթ.): Շաբաթաթերթը ուշագրավ նյութեր է տպագրել ժամանակի արևմտահայ գաղթօջախների ու առհասարակ Թուրքիայի հայության ազգային ու հասարակական վիճակի մասին: Հետաքրքիր են, մանավանդ, զմյուռնահայ գաղթօջախի անցյալի ու ժամանակակից կյանքի վերաբերյալ նրա հրապարակումները, որի հեղինակներն էին Զմյուռնիայի և Կ. Պոլսի հայ ականավոր մտավորականները: Տպագրել է արևմտահայ գավառի տնտեսությունը վերլուծաբար ներկայացնող նյութեր, վիճակագրական տեղեկություններ և այլն: Այս նույն շրջանում հրատարակվում էին «Հտպիտ» (խմբագիրներ՝ Հ. Թոփալյան, Մ. Շիրինյան, 1910) երգիծական շաբաթաթերթը և նույն պարբերականությամբ՝ «Փեթակը» (խմբագիր՝ Գ. Սարգիսյան, 1910), որոնք ուշագրավ են այնքանով, որքանով ներկայացնում էին գաղթօջա-

խի կյանքի վերջին շրջանի մտավոր կողմնորոշումները: Գաղթօջախի գրական ու հոգևոր պահանջմունքների տեսակետից մինչդեռ շատ ավելի կարևոր տեղ ունի «Հայ գրականություն» գրական, գիտական ու գեղարվեստական հանդեսը (խմբագիր՝ Զ. Գազազյան, 1911–1914): Նրա էջերում տպագրվել են գաղթօջախի տաղանդավոր գրական ուժերը, ճանաչված գրողներն ու հրապարակախոսները: Այս հանդեսի բովանդակությունը վկայում է, որ 1910-ական թթ. սկզբին զմյուռնահայ գաղթօջախում ազգային հոգևոր մշակույթը ապրում էր նոր վերելք՝ կապված հայ գրականության և հայագիտական մտքի զարգացման հետ: Նույն՝ Զ. Գազազյանի խմբագրությամբ 1919–1921 թթ. հրատարակվել է «Միմոս» երգիծական շաբաթաթերթը, որը համեմատաբար տևական է եղել զմյուռնահայ վերջին հրատարակությունների շարքում:

Գրեթե նույն միտումներն ուներ «Ատրուշան» կիսամսյա հանդեսը (խմբագիր՝ Մ. Բարթիկյան, 1919), որի էջերում արտացոլված է ոչ միայն եղեռնի արհավիրքներին դիմակայած զմյուռնահայ գաղթօջախի մտավոր ու հասարակական կյանքը, այլև ցեղասպանությունը վերապրած բեկորների ողբերգությունը, ժողովրդի կացությունը: «Ատրուշանի», ինչպես և «Դափնիի» (արտոնատեր և տնօրեն՝ Հ. Ջվանշիր – Ղ. Դուրյան, 1921–1922) ու «Իրավունք» օրաթերթի (1919) նյութերը ուշագրավ են հատկապես այն առումով, որ ներկայացնում են զմյուռնահայ հնամենի գաղթօջախի պատմության վերջին էջերը: «Դափնին», ի դեպ, տպագրել է պատմական արժեք ներկայացնող վավերագրեր, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում 17–18-րդ դդ. բնաշխարհի, հայ ժողովրդի դաղթի, զմյուռնահայ գաղթօջախի պատմության, դրանում եկեղեցու դերի ու նշանակության մասին:

Ռամկավարներից հետո Զմյուռնիայում ազգային կուսակցություններից թերթ է հրատարակել ՀՀ Դաշնակցությունը՝ «Գոյամարտ» անվամբ (1920): Այս պարբերականը ևս կարճ կյանք է ունեցել, որ դարձյալ վկայում է գաղթօջախի վերջին շրջանի հեղհեղուկ կացության մասին: Նույն թվականին, փոքր-ինչ ավելի տևականությամբ (1920–1921) լույս է տեսել «Մամուլ» պարբերականը: 1922 թ., կարծես գաղթօջախի վախճանի մոտալուտ տագնապով համակված, հայ ազգային-հասարակական որևէ պարբերական չի տպագրվել: Ամենավերջինը «Պատրաստ» կիսամսյա հանդեսն էր (1920–1922, խմբագիր՝ Զ. Հաբեթյան)՝ հայ սկաուտների պաշտոնաթերթ:

* * *

Զմյուռնիայի հայ գաղթօջախը և առհասարակ Այդընի վիլայեթի հայությունը ևս ենթարկվեցին երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանության արհավիրքներին, սակայն ոչ այն չափերով, ինչ Արևմտահայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ շրջաններում: 1915 թ. նոյեմբերին և 1916 թ. հոկտեմբերին թուրքերը ձեռնամուխ եղան վիլայեթի հայերի աքսորին, սակայն ստիպված էին չափավորել լայն մասշտաբների հասնող իրենց ծրագրերի իրականացումը: Հանդիպելով գերմանական զորակայանի հրամանատար Լիման ֆոն Սանդերսի ընդդիմությանը (որը տարածաշրջանի անդորրն ու խաղաղությունը համարում էր զորակայանի գործունեության անհրաժեշտ նախապայմանը), թուրքերը հարկադրված էին առավել բարենպաստ պահի հետաձգել զմյուռնահայերի տեղահանումները: Մինչ այդ Վալի Բահմի բեյը և ոստիկանապետ Ենիշեհիրլի Հիլմի Հիլլին փորձել էին շոշափել գերմանական հրամանատարության և տերությունների հյուպատոսարանների վերաբերմունքը: 1915 թ. նոյեմբերին քաղաքից աքսորեցին յոթ հայ ընտանիքների և երկու տասնյակի չափ պանդուխտների՝ Հալեպի ուղղությամբ: Մեկ տարի անց, իշխանությունները կրկին, այս անգամ առավել մեծ չափերով, փորձեցին աքսորել հայերին: Նոյեմբերի 8-ին Զմյուռնիայում ձերբակալվեցին բազմաթիվ հայեր և անմիջապես երկաթուղու կայարան տարվելով՝ աքսորվեցին երկրի խորքերը: Այս կապակցությամբ Լիման ֆոն Սանդերսը գերմանական դեսպանատանն ուղղված տեղեկագրի մեջ հայտնում է, որ նշված աքսորի լուրը լսելուց հետո «տարբեր աղբյուրներե ալ նույնանման տեղեկություններ ստացա: Ինձ հավաստեցին, թե ոստիկանության կողմե մասամբ բռնությամբ ծեր կիներ և հիվանդ տղաներ գիշերով իրենց անկողնեն հանված, հարյուրավոր հայեր ձեռբակալված և ուղղակի կայարան տարված էին: Երկու լեցուն կառաշար հայեր այսպես աքսորված էին և այս դեպքին հետևանքով մեծ իրարանցում կտիրեր քաղաքի մեջ»[1]:

Իշխանությունների գործողությունները կասեցվեցին: Բերայից գերմանական դեսպանատունը նոյեմբերի 25-ին տեղեկացնում էր, որ «Իզմիրի հայերուն տեղահանությունը արդեն դադրած ըլլալով, հարցը փակված է ինքնին»[2]: Անկախ այս միջամտությունից, թուրքերն արդեն

1 Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 21–8:

2 Նույն տեղում:

հասցրել էին 1915–1916 թթ. ամբողջովին կամ մասամբ աքսորել Դիքիլիի, Գուշատայի, Էյդեմիշի, Բերգամայի հայությանը. նրանցից շատերը քշվեցին Դեր Էլ-Զոր: Աքսորվածների ունեցվածքը ամբողջովին թալանվեց կամ ոչնչացվեց: Այսպիսով, ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ Զմյուռնիայում երիտթուրքերը սկսեցին, բայց չշարունակեցին հայության աքսորն ու կոտորածները: Թուրքիայի այդ խոշորագույն քաղաքներում կառավարության համար անցանկալի էր ցեղասպանության ծավալումը դեսպանատների և հյուպատոսարանների աչքերի առջև, որ հղի էր միջազգային հասարակական կարծիքի վտանգավոր շրջադարձերով:

Զմյուռնիայի հայերը այս ժամանակահատվածում ապրում էին թշնամական շրջապատման մեջ: Իշխանությունները բռնագրավեցին ազգային հաստատությունների շենքերը, գավառում թուրքերն ավերեցին Գուշատայի Ս. Աստվածածին և Մենեմենի Ս. Սարգիս եկեղեցիները:

Մուդրոսի զինադադարից հետո մի քանի ամիս անց Զմյուռնիա մտան հունական զորքերը (1919 թ. մայիսի 15), իսկ Սևրի դաշնագրով Զմյուռնիան և շրջակայքը անցան Հունաստանին: 1920 թ. սկսված թուրք-հունական պատերազմը, սակայն, ճակատագրական վախճան ունեցավ տեղի հույն և հայ ազգաբնակչության համար: 1922 թ. սեպտեմբերի 9-ին քեմալական բանակը ներխուժեց Զմյուռնիա: Սկսվեցին կոտորածները: Թուրքերը հրդեհեցին Հայոց թաղը, և անապաստան մնացած բազմաթիվ հայեր, հրդեհին, մոլեգնած խուժանին և թուրքական զորքերին թողնելով իրենց ինչքն ու կայքը, ցրվեցին քաղաքով մեկ, իսկ նրանց մի ստվար մասը ապաստանեց Ս. Ստեփանոս եկեղեցու բակում: Սեպտեմբերի 12-ին քաղաքում շարունակվում էին հրդեհը և նախճիրը, ծովափն ամբողջովին ծածկվել էր դիակներով: Նույն սպանդը կատարվում էր Այվալըքում, Էյդեմիշում, Ագհիսարում, Պալըքեսերում և այլուր: Կոտորածներից մազապուրծ հայ և հույն բնակչության բեկորները հունական նավերով փրկվեցին ոչնչացումից՝ տեղափոխվելով Հունաստան: Փակվեց հնամենի գաղթօջախի՝ հայ մշակույթի այդ խոշոր կենտրոնի ավելի քան 600-ամյա պատմության վերջին էջը:

ԻՐԱՆ

Իրանում հայկական առաջին գաղթականական օջախներն առաջացել են 3–4-րդ դարերում, իրանա-հայկական առաջին պատերազմների ընթացքում: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո (301 թ.) հայ-իրանական հակամարտությունն էլ ավելի սրվեց և պարուրվեց կրոնական շղարշով:

4-րդ դարի 60-ական թվականներին, Շապուհ 2-րդի զորքերի՝ դեպի Հայաստան կատարած արշավանքներից մեկի ժամանակ, պարսիկները հայկական մի շարք քաղաքներից դերեվարեցին տասնյակ հազարավոր մարդկանց: Դա հայերի առաջին խոշոր բռնագաղթն էր դեպի Իրան:

Հայաստանը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանելուց հետո (387 թ.) հին հայկական Արտազ մարզը և Պարսկահայք նահանգը տարանջատվեցին Մեծ Հայքից և միակցվեցին Ատրպատականին (Անտրոպատենա, ներկայիս Իրանական Ադրբեջան): Արտազի և Պարսկահայքի բնակչությունը հետագայում կազմեց Իրանի հյուսիս-արևմտյան շրջանների և ամբողջ երկրում հայկական բնակավայրերի հիմնական մասը: Այդ օջախները համալրվեցին սելջուկական և մոնղոլական նվաճումների ընթացքում դերեվարված հայերի հաշվին: Դրանց զուգընթաց Իրանում ստեղծվում էին հայկական նոր բնակավայրեր:

11-րդ դ. թուրք-սելջուկյան վաչկատուն ցեղերը ներխուժեցին Իրան, Հայաստան և Փոքր Ասիա: Նրանց ներխուժումը Հայաստան առաջացրեց տեղի բնակչության զանգվածային արտագաղթ դեպի Փոքր Ասիայի արևմտյան մարզերը, Ղրիմ, Վրաստան, Իրան: Դրա հետ մեկտեղ, դեպի Իրան արտագաղթի բնույթը տարբերվում էր այլ երկրներ կատարած գաղթերից: Եթե դեպի այդ երկրները հայերը, օտարերկրյա լծից խուսափելով, հիմնականում հարկադրված էին իրենք գնալ, ապա նրանց Իրան էին վերաբնակեցնում բռնությամբ: Այդ ժամանակաշրջանում Իրան են բռնագաղթի ենթարկվել տասնյակ հազարավոր հայեր: Հայ գերյալների ճնշող մեծամասնությունը բնակեցվեց Ատրպատականում, ինչպես նաև Իրանի մի շարք այլ վայրերում: Սելջուկ իշխողներն Իրանին հատկացնում էին կենտրոնական տեղ իրենց պետության համակարգում: Իրանում էին գտնվում գլխավոր քաղաքները՝ սելջուկների ռազմակայանները, իսկ իրանական աստիճանավորների ավագանին կազմում էր նրանց վարչական և ֆինանսական ապարատի հիմնական կորիզը: Սելջուկ սուլթանները ձգտում էին ստեղծել իրենց կենտրոնաց-

ված պետությունը նախկին իրանական պետությունների, այդ թվում նաև Սասանյանների պետության օրինակով: Այդ պայմաններում, սասանյան հայտնի ավանդույթին համապատասխան, դրսից գործունակ ուժերի դեպի Իրան բռնագաղթեցնելը բարձրացվել էր պետական քաղաքականության աստիճանի: Սելջուկները բնակեցնում էին գերյալներին իրենց կայատեղերի մերձակայքում, ինչպես նաև այն քաղաքներում, որոնք ծառայում էին նրանց որպես ռազմական հենակետեր և քաղաքական, տնտեսական և վարչական կառավարման կենտրոններ: Այդպիսի վայրեր էին Ուրմիան, Սալմաստը, Հերը (Խոյը), Թավրիզը, Ռեյը (ներկայիս Թեհրանի մոտակայքում), Ղարադաղը և այլն:

Իրանի հայկական բնակավայրերը սկսեցին վերականգնվել 11-րդ դ. վերջերին և 12-րդ դ. սկզբներին: Հիմքեր կան ենթադրելու, որ հայերի առանձին գաղթավայրերը իրենց վերականգնման փուլում էին գտնվում տակավին Մելիք-շահի իշխանության տարիներին, որը 1090 թ., ըստ Մատթեոս Ուռհայեցու և Սամվել Անեցու հաղորդման, հայկական եկեղեցիները և վանքերը ազատել էր հարկերից:

12-րդ դ. Իրանի հայկական բնակավայրերի վերականգնված ակութներից էր նաև Արտազում գտնվող սբ. Թադեոսի դամբարանի մոտակայքի համայնքը: Սբ. Թադեոսի դամբարանին առընթեր եկեղեցին կառուցվել է 12-րդ դ., գուցե և ավելի վաղ: Իրանի հայկական բնակավայրերի մյուս վերականգնված օջախն Արաքս գետի աջ ափին՝ Շամբի կիրճում գտնվող Սբ. Ստեփանոսի վանքի համայնքն էր:

Հայերի՝ Իրան նոր վերաբնակեցումներ տեղի ունեցան 13-րդ դ., մոնղոլական արշավանքների ընթացքում: Մոնղոլ իշխողներն, ինչպես և նրանց սելջուկ նախորդները, գերյալներին բնակեցնում էին իրենց կայատեղերի մոտակայքում, ինչպես նաև Իրանի քաղաքներում և առևտրաարհեստագործական կենտրոններում: Մոնղոլները ստեղծեցին իրենց ձմեռանոցները Զաղաթու գետի հովտում՝ Մարաղայի մերձակայքում, իսկ ամառանոցները՝ Ալադաղում (Կոգովիտ) և Ղարադաղում: Առաջին մոնղոլ խաների մայրաքաղաք-ոստաններ դարձան Մարաղան, իսկ այնուհետև՝ Թավրիզը:

Այդ ժամանակաշրջանում սկսեց վերստին զարգանալ տակավին սելջուկների օրոք սկսված հայ գաղթավայրերի տեղական ակութների միավորման պրոցեսը: Նրանք համախմբվում էին 1247 թ. վերականգնված Սբ. Թադեոս վանքի շուրջ: Այդ ժամանակաշրջանում Սբ. Թադեոս վանքի իշխանությունը պայմանավորված էր նաև Տաթևի, Հաղպատի և

Բջնիի հետ մեկտեղ՝ որպես հայոց չորս գլխավոր աթոռներից մեկի կարգավիճակով:

13-րդ դ. կեսերին Իրանի վրայով անցնող համաշխարհային առևտրական ուղիների երկայքնով քաղաքներում և բնակավայրերում բնակություն հաստատեցին հայկական՝ գլխավորապես արհեստավորների և առևտրականների նոր ընտանիքներ: Հայ գաղթավայրերի տեղական ակութների զարգացման պրոցեսին նպաստեց նաև քաղաքական բարերար կլիման, որ հաստատվել էր 13-րդ դ. 60-ական թվականներին մոնղոլների և Այսրկովկասի իշխողների միջև:

13–14-րդ դդ. Իրանի հայ գաղթավայրերից առավել բազմամարդ էին Արտազում (Մակու), Խոյում, Սալմաստում, Ուրմիայում, Շամբում, Թավրիզում, Մարանդում, Մարաղայում, Ղարադաղում, ինչպես նաև Սուլթանիեում, որը 14-րդ դ. սկզբին դարձել էր Հուլավյանների պետության մայրաքաղաք, գտնվող ակութները:

Խոյ. 9-րդ դարի վերջին – 10-րդ դարի սկզբին Խոյը Բագրատունիների թագավորության կազմում էր: Այնտեղ հայերի՝ վաղ ժամանակներից բնակության մասին է վկայում ներկայումս էլ գոյություն ունեցող Սբ. Սարգիս եկեղեցին, որն, ինչպես ենթադրում են պատմաբանները, կառուցվել է 10-րդ դարում:

Նորից վերականգնված Խոյը, այս անգամ մոնղոլական արշավանքներից հետո, մոտավորապես 13-րդ դ. կեսերին դրավեց հանդուցային կետի իր կարևոր ավանդական դիրքերը համաշխարհային առևտրական ուղիների վրա:

14-15-րդ դդ. այդտեղով էր իրականացվում Իրանով անցնող հիմնական քարավանների առևտուրը Եվրոպայի և Ասիայի միջև: 15-րդ դ. սկզբին Խոյում հայ ազդաբնակչության մեծ թվաքանակի մասին է վկայում Ռյուի Գոնզալես դը Կլավիխոն (Իսպանիայի թագավորի՝ Լենկթեմուրի մոտ ուղարկված դեսպանը): Պատմելով Խոյի մասին՝ նա, մասնավորապես, նշում է. «Այս Խոյ քաղաքի մոտ վերջանում է Վերին Հայաստանը («Վերին Հայաստան» ասելով՝ միջնադարյան հեղինակները նկատի ունեին Արևելյան Հայաստանը – Հ. Մ.), և սկսվում է Պարսկաստանը, այդ քաղաքում բազում հայեր են բնակվում...»[1]:

---

1 Рюи Гонзалес де Клавихо. Дневник путешествия ко двору Тимура в Самарканде в 1403–1406. СПб., 1881, с. 163.

Սալմաստը՝ հինավուրց Զարեհավանը 9-րդ դ. գտնվում էր Վասպուրականի իշխան Դերենիկի տիրույթներում: Սալմաստն արհեստագործության կարևոր կենտրոն և կայանակետ էր համաշխարհային առևտրական ուղիների վրա: 1586 թ. թվագրված պարսկերեն վավերագիրը վկայում է, որ ի պատասխան բնակչության, այդ թվում նաև քրիստոնյաների, հարկադրության համակարգը և ժառանգորդության իրավունքը կարգավորելու մասին շահ Աբաս 1-ինի կարգադրության՝ Սալմաստի, ինչպես նաև Ուրմիայի մի շարք հայ և ասորի բնակիչներ ներկայացրել են իրենց իրավունքները հողերի նկատմամբ՝ 1184 թ. թվագրած գնման կայքագրերը: Ուրեմն, 12-րդ դ. Սալմաստ մարզը հիմնականում բնակեցված էր հայերով[1]: 12-րդ դ. այստեղ՝ Խաֆտվան գյուղում կառուցվել է Սբ. Գևորգ եկեղեցին: Այն կանգուն է մինչև օրս:

1179 թ. Սալմաստը, որպես հոգևոր կենտրոն, գլխավորում էր հյուսիսարևմտյան Իրանի հայկական գաղթավայրերի ակուֆները: 1247 թ. այդ պարտականությունները Սբ. Թադեոսի վանքին հանձնելուց հետո այն դարձավ համանուն մարզի և համայնքի կենտրոն:

14-րդ դ. երկրորդ կեսին Սալմաստում հայազգի բնակչության առկայության մասին հայտնի է Մուհամեդ իբն Հինդուշահ Նախիջևանցու հաղորդումից[2], որը բերում է վավերագրեր՝ այդ մարզի հայերից և մյուս քրիստոնյաներից գլխահարկ (ջիզիյա) գանձելու կարգի մասին:

Ուրմիա. Ուրմիա մարզը ամբողջապես համապատասխանում է հին Տրաբիին: 10-րդ դ. դրա կենտրոն Օրմին կայարանակետ էր համաշխարհային առևտրական ուղիների վրա: Արաբ հեղինակ Ալ-Մակդիսին Ուրմիան՝ քաղաքը և մարզը, անվանում է հայկական բնակավայր, որը կառավարվում էր Դվինից:

Վերը նշված պարսկերեն վավերագրի համաձայն, Ուրմիայում հողային սեփականության կայքագրեր ունեին, մասնավորապես, Էնզել և Սոմայ շրջանների հայկական գյուղերի բնակիչները:

13-րդ դ. — 15-րդ դ. սկզբին Ուրմիան շարունակում էր մնալ տեղի խոշոր հայ համայնքներից մեկը: Թովմա Մեծոփեցին, հաղորդելով Ուր-

---

1 Դիվան Ատրպատականի հայոց պատմության, Ա տարի. Թավրիզ, 1966:

2 Петрушевский И. П. Земледелие и аграрные отношения в Иране в XIII-XIV вв. М.—Л., 1960, с. 688.

միայի վրա Իսկանդար Կարա-Կոյունլուի զորքերի հարձակման (1421 թ.) մասին, այն անվանում է «հայկական քաղաք»:

Շամբ (Շամբիձոր). Շամբի կիրճում գտնվող այդ վայրը հայտնի է, ըստ ավանդության, որպես առաքյալ Բարդուղիմեոսի ապաստարան, որն այնտեղ քրիստոնեության արշալույսին հիմնադրել է Ստեփանոս Նախավկայի վանքը: Վանքը կոչվում է նաև Միատ (Մագարդ, Մագարդավանք)՝ շրջակա լեռների անվանմամբ: Այն հիշատակվում է 4–5-րդ դդ. ի վեր՝ Սահակ Պարթևի կողմից այնտեղ թեմ հիմնադրելու և դրան հողահանդեր՝ որպես բաժնեկալվածք շնորհելու կապակցությամբ: Սբ. Ստեփանոսի վանքին կից եկեղեցին կառուցվել է 10-րդ դ. վերջին:

Շամբը հարավ-արևմուտքում համապատասխանում է Զորս անվանումը կրող վայրին: Զորսը հաճախ հիշատակվում է Շամբի հետ միասին զույգված՝ «Զորս-Շամբ» անվանումով:

Թավրիզ. 10-րդ դ. Թավրիզում հայ ազգաբնակչության առկայության մասին հայտնի է Իբն Հաուկալի հաղորդումից: Նա գրել է. «Այդ քաղաքներում և դրանց միջև ընկած մարզերում կան ապրանքներ, ներմուծման առարկաներ (խոսքը վերաբերում է ներմուծվող ապրանքներին – Հ. Մ.) ... օրինակ, հայկական քուղերը (թարգմանությունն անհաջող է, նկատի ունեն տղամարդկանց լայն և բարակ գոտիները – Հ. Մ.), որոնք պատրաստվում էին Սալմաստում և վաճառվում էին հատը մեկից մինչև տասը դինարով և նման բան չկա մյուս երկրներում... Մարանդում, Թավրիզում, Դվինում և Հայաստանի մարզերում պատրաստվում են հայկական նստոցներ (դորգե փռոցներ և մետաքսե բարձեր – Հ. Մ.) և հայկական մեհֆուր անվանումով հայտնի դորգեր (արաբերենից թարգմանաբար այդ բառը նշանակում է «փափուկ» և «տնագործ» – Հ. Մ.)[1]:

Այդ քաղաքում տեղի հայ համայնքը նկատելիորեն մեծացավ 11–12-րդ դդ. ընթացքում, հատկապես 1175 թ., երբ Թավրիզը դարձավ Ելտկուզյան աթաբեկության մայրաքաղաք: Հայկական աղբյուրնե-

---

1 Сборник материалов для описания местности племен Кавказа (СМОМПК), Т. XXIX, М., 1901, с. 5.

ում, մասնավորապես Մ. Չամչյանի մոտ, 1179 թ. Թավրիզը անվանվում է «Պարսկաստանի գահանիստ քաղաք» («Դրանն Պարսից»):

Արևմուտքի և Արևելքի միջև առևտրի քարավանային ուղիների խաչմերուկում Թավրիզի կենտրոնական դիրքը նպաստեց այնտեղ հայ բնակչության զգալի ավելացմանը: Մարկո Պոլոյի վկայությամբ, 13-րդ դ. վերջին Թավրիզում բնակվում էր թվաքանակով բավականին մեծ հայ համայնք[1]: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, 13-րդ դ. 30–40-ական թվականներին Թավրիզում սկսել են կառուցել հայկական եկեղեցիներ: 14-րդ դ. այդ քաղաքում գրված հայկական ձեռագրերի հիշատակարաններում հիշատակվում են Սբ. Սարգսի և Սբ. Աստվածածնի եկեղեցիները: 1345 թ. ձեռագրի հիշատակարանում Թավրիզը անվանվում է «ոչ միայն պարսիկների, այլև հայերի» մայրաքաղաք:

Հին ժամանակներից ի վեր Թավրիզին սահմանակից բնակավայրերում և գյուղերում ապրում էին համեմատաբար մեծաքանակ հայ համայքներ: Այդպիսի համայնքներից մեկը գոյություն ուներ 14-րդ դ. Կյուսակյունան (Կյուսագյունան) բնակավայրում, որն ընկած էր Թավրիզից արևմուտք Սոֆիանի վրայով դեպի Ուրմիա լճի հյուսիսային ափը անցնող ճանապարհի վրա: Հայերը բնակություն էին հաստատում նաև Մուժամբարում (Մուժումբարում), Սոխլուրում, Աչյամուլքում և այլ վայրերում: Այդ շեներն իրենց հիմնադրման ժամանակի առումով տեղի հայկական շեներից առավել հինավուրցն են: Կան վկայություններ, որ Մուժամբարը գոյություն է ունեցել տակավին 13-րդ դ.:

Մարանդ. *Այն կարևոր կայարանակետ էր համաշխարհային առևտրական ուղիների վրա: Զգալի թվով հայ բնակչություն կար այդ քաղաքում 13-րդ դ.: Հայերը Մարանդում ապրում էին նաև հետագա դարերի ընթացքում: «Մարանդի եպիսկոպոսները» մասնակցել են Սսի և Ադանայի եկեղեցական ժողովներին՝ համապատասխանաբար 1307 և 1316 թվականներին:*

Մարաղա. *13-րդ դ. սկզբին Մարաղայում սկսեցին բնակություն հաստատել հայազգի արհեստագործների և առևտրականների ընտանիքները: Հայ ազգաբնակչության ներգաղթը Մարաղա նկատելիորեն ավելացավ 13-րդ դ. 50–60-ական թվականներին, երբ Հուլավու խանը*

1 Книга Марко Поло. М., 1955, с. 60.

այդ քաղաքը դարձրեց իր ոստանը: Հայերը Մարաղայում բնակվում էին մահմեդականների, ասորի-նեստորականների, հույների և մյուսների հետ մեկտեղ:

Մարաղայում 13-րդ դ. վերջերին ազդեցիկ հայ համայնքի գոյության մասին է վկայում այնտեղ Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում Բ-ի գտնվելու իրողությունը, որը 1295 թ. այցի էր գնում մոնղոլ խաներին:

13-րդ դ. վերջերին – 4-րդ դ. սկզբներին Մարաղայում բնակություն հաստատեցին արևմտաեվրոպական միսիոներները: Այն դարձավ դոմինիկյան նշանավոր հոգևորական և գիտնական Բարդուղիմեոս Բոլոնացու նստավայրը: 14-րդ դ. առաջին կեսին քաղաքն իր վրա է գրավում Իրանում և Այսրկովկասում բնակվող հայ ունիթոռների ուշադրությունը:

Հայ բնակչությունը շարունակում էր ապրել Մարաղայում նաև 14-րդ դ. երկրորդ կեսին: 1361 թ. այնտեղ ստեղծվել է հայերեն ձեռագիր:

Ղարադաղ. Հայերն այս մարզում, որն ընկած է Իրանի հյուսիսում, Արաքս գետի աջ ափի երկարությամբ, բնակվում էին հինավուրց ժամանակներից: Զաքարիա ալ-Ղազվինին 1276 թ. գրած իր «Աթհեր ալ Բիլադ» («Երկրների հիշատակարան») աշխատության մեջ հիշատակում է «Հայկական լեռնանցք» (ըստ հայկական աղբյուրների՝ «Դրունք Հայոց»)՝ Ղարադաղի կենտրոն Ահար քաղաքից հյուսիս ընկած լեռներում: Այն ժամանակ այդ լեռնանցքով, Իրանից Սյունիք՝ Արաքս գետի վրա գտնվող Խուդափերին կամրջով էր անցնում առևտրական ուղին:

13-րդ դ. սկզբին ան-Նասավին «Նաֆսաթ ալ-մասդուր» («Բամու հնչող շառաչը») աշխատության մեջ հիշատակում է Թավրիզի և Ահարի միջև ճանապարհի վրա գտնվող Արմինան անվանումով գյուղը:

Ղարադաղում հայ բնակչություն էր ապրում նաև 14–15-րդ դդ.: Այսպես, 1456 թ. սալմաստցի մի խումբ հայեր Ահարից վերադարձել են իրենց հարազատ վայրերը:

Ղարադաղի հայ բնակչությունը կապված էր Սյունիքի հետ. նրանց հոգևոր կենտրոնն իր ժամանակին եղել է Տաթևի վանքը: Այդ երևում է վանքին հարկեր վճարող գյուղերի հայտնի ցուցակից: Այդ ցուցակը կազմվել էր 1730 թ. ավելի վաղ՝ 1692 թ. ցուցակի հիման վրա: 17-րդ դ. վերջին Ղարադաղում, ըստ ցուցակի, կար 44 հայկական շեն:

Սուլթանիե. Զենջանի և Ղազվինի միջև ընկած այդ քաղաքի հիմքերը դրել է Արղուլթ խանը: Սուլթանիեի կառուցումը ավարտվել է 1313 թ., Արղուլթի որդու՝ Օլջեյթի օրոք, որն էլ իլխանական դահը Թավրիզից փոխադրեց այնտեղ:

Նոր մայրաքաղաք վերաբնակեցվեցին բազմահազար ընտանիքներ Թավրիզից, ինչպես նաև Իրանի այլ քաղաքներից: Վերաբնակիչների մեջ կային բազում հայեր:

Շուտով Սուլթանիեում կառուցվեց Սբ. Աստվածածնի հայկական եկեղեցին: Տեղի հայ համայնքը ուներ երկու առաջնորդ՝ բուն Սուլթանիեում և դրա արվարձանում՝ Օրտու-Բազարում (Օրդու-բազարում): Սուլթանիեում ժամանակի ընթացքում առաջացավ նաև կաթոլիկական հայ համայնք: Մայրաքաղաքը Սուլթանիե փոխադրելուց հետո այնտեղ բնակություն հաստատեցին նաև արևմտաեվրոպական միսիոներները: Սուլթանիեի անկումը տեղի ունեցավ Հուլավյան պետության անկման հետ միաժամանակ: 14-րդ դ. վերջին – 15-րդ դ. սկզբին Սուլթանիեն ավերածության ենթարկեց Լենկթեմուրը: Սուլթանիեի բնակիչներից շատերը, այդ թվում նաև տեղի հայերը, գաղթեցին Թավրիզ:

13-րդ դ. երկրորդ կեսին, Հուլավու խանի օրոք, երբ Ատրպատականը, սահմանված վարչական բաժանման համապատասխան, առաջին անգամ զատվեց որպես առանձին նահանգ, Արտազը և Պարսկահայքը մտան այդ վարչական կազմավորման մեջ: Այդ ժամանակվանից ի վեր դրանք, ինչպես նաև հյուսիս-արևմտյան Իրանի մյուս հայ համայնքները միավորվեցին մեկ թեմի մեջ, որն ստացավ «Ատրպատականի թեմ» անվանումը: Թեմի հոգևոր կենտրոն դարձավ Արտազում գտնվող Սբ. Թադեոսի վանքը: Այդ նույն ժամանակ տեղի հայ բնակչության գործարար և մշակութային կենտրոն էր Թավրիզը:

Կիլիկյան Հայաստանին մոնղոլ մեծ խանների շնորհած իրավունքների ձևով 13-րդ դ. կեսերին Սբ. Թադեոս վանքի շուրջ ստեղծվեց Արտազի իլխանությունը:

Սբ. Թադեոսի վանքը, բերդաքաղաք Մակուն և Ծործորի վանքն Արտազի իլխանության հիմնական կենտրոններն էին՝ ասես թե իրենց մեջ մարմնավորելով դրա հոգևոր, վարչական և մշակութային էությունը:

Այդ կենտրոնների շուրջն էին տեղաբաշխվել Արտազի իլխանության մյուս մասերը՝ Օվաջիկում (սահմանակից է Կոգովիտին) գտնվող Խիլիսաքենդի վանքը, Զուարշ-ռոտի հայկական շեները:

Արտազի իլխանության վերելքը սկսվել է 13-րդ դ. երկրորդ կեսին: Իլխանությունը գտնվում էր Կիլիկյան Հայաստանի հովանավորության ներքո և նրանից ստանում էր ֆինանսական օգնություն: Այն իր զարգացման բարձունքին հասավ 14-րդ դ. սկզբին՝ Սբ. Թադեոս վանքում արքեպիսկոպոս Զաքարիայի վանահայր եղած ժամանակ: Այդ տարիներին շինարարական մեծ աշխատանքներ կատարվեցին բուն Մակվում՝ բարձրացվեցին ամրոցային շինություններ, կառուցվեցին տներ, հյուրանոցներ, պահեստներ և այլն: 1306 թ. Արտազում կառուցվեց Կարնուտ անվանումով ոռոգիչ ջրանցքը: Արտազի իլխանությունը պատասխանատու էր իր տարածքով անցնող ճանապարհների վիճակի համար: Զանգիմար գետի վրա կառուցվեց քարաշեն չորս բազմակամար կամուրջ: Դրանք կառուցվեցին 1318–1328 թթ. ընթացքում: 1329 թ. լրիվ վերակառուցվեց Սբ. Թադեոսի վանքը, որն ավերվել էր 1319 թ. ուժեղ երկրաշարժի հետևանքով:

Մոտավորապես 14-րդ դ. 30–40-ական թվականներին սկսվում է իլխանության դիրքերի կտրուկ թուլացման պրոցեսը, մի պրոցես, որն ընթանում էր Հուլավյան պետության շարունակվող քայքայման և Կիլիկյան հայկական պետության անկման ֆոնի վրա: Այն ընթանում էր նաև Իրանի հայ գաղթօջախներում կաթոլիկության ներթափանցման կողմնակիցների և հակառակորդների միջև էլ ավելի դաժան պայքարի պայմաններում: 14-րդ դ. 20–30-ական թվականներին Մեծ Հայքի բարձր հոգևորականության և ֆեոդալների շրջանները Թավրիզում ընտրեցին Զաքարիայից կախում չունեցող թեմական առաջնորդ եպիսկոպոս Մատթեոսին, որը պայքար ծավալեց Սբ. Թադեոսի վանքի վանահոր լատինասեր գործունեության դեմ:

Մոտավորապես 1317 թ. արքեպիսկոպոս Զաքարիան հարկադրված էր հեռանալ Սբ. Թադեոսի վանքի վանահոր, հետևաբար նաև Արտազի իլխանության կառավարչի պաշտոնից: Զաքարիային փոխարինած նրա ազգական և համախոհ եպիսկոպոս Տիրացուն չկարողացավ երկար մնալ այդ պաշտոնում: 1840 թ. Իրանի հայկական եկեղեցիները և վանքերը ազատվեցին հարկերից: Նորը, որ ներմուծեցին մոնղոլներն, այն էր, որ նրանք քրիստոնեական վանքերի վրա տարածեցին վակֆի իրավունքը, որից մինչ այդ օգտվում էր միայն մահմեդական հոգևորականությունը: Վակֆի իրավունքից սկսեցին օգտվել Սբ. Ստեփանոսի և Սբ. Թադեոսի վանքերը:

Սբ. Թադեոսի վանքի համայնքի հիման վրա ստեղծված Արտազի իշխանությունը ձևականորեն վակֆի տիրույթ էր: Սակայն իրականում այն իր մեջ ներառում էր մասնավոր սեփականատիրական մի շարք տնտեսություններ: Արքեպիսկոպոս Զաքարիայի օրոք, օրինակ, իշխանությունը դարձավ հոգևոր և աշխարհիկ ավատատերերի յուրօրինակ դաշնադրություն, որը բաղկացած էր մի կողմից, իրենից՝ Զաքարիայից՝ վանքի վանահորից, իսկ մյուս կողմից՝ նրա եղբայրներ Պետրոսից, Սարգսից և այլ անձանցից:

Այդ նույն ժամանակ Իրանում ավարտվում էր գյուղացիների՝ ազատներից ավատական-կախյալ դառնալու պրոցեսը: Այն ընթանում էր նվիրաբերման (կոմենդացիայի) ուղիով: Թեև արտաքնապես կամավոր, իսկ իրականում հարկադրաբար, գյուղացիները, մասնավորապես հայ գյուղացիները, անձամբ պիտի հանձնեին իրենց հողերը իրենց եկեղեցիների և վանքերի հովանավորությանը, գերադասելով «իրենց» տերերի իշխանությունը օտարների գերիշխանությունից:

Այդ նույն ժամանակ Իրանում գործում էր նվիրաբերման (կոմենդացիայի) մի այլ տեսակ՝ վասալի կողմից իր ենթակայության ճանաչումը ավելի «հզոր» հողատիրոջ իշխանությանը: Նվիրատվական (կոմենդացիոն) հարաբերությունների գոյությունը հավաստվում է հայերեն ձեռագրերի հիշատակարանների հաղորդումներով:

Սբ. Թադեոս վանքում 1330 թ. գրված ձեռագրի հիշատակարանում գրիչ Ռստակեսը խնդրում է իր մերձավորների և ազգականների, հոգևոր հայրերի և եղբայրների հետ միասին հիշատակել նաև անվանի տանուտերեր Էլփհասանին և Մելիք-շահին, նաև ավագ և կրտսեր մյուս տանուտերերին:

Հողային տիրույթների համակենտրոնացման պրոցեսը վանքերի և եկեղեցիների ձեռքին չէր կարող իր դրոշմը չդնել տեղի հայ բնակչության սոցիալական շերտավորման վրա: 12–14-րդ դդ. վանքերի ձեռքին կենտրոնացան հողային համեմատաբար խոշոր տիրույթներ՝ հայկական մեծ թվով շեներով հանդերձ:

Շերտավորում կար նաև այն ժամանակվա հասարակության հիմնական սոցիալական խմբերի՝ ավատատերերի և գյուղացիների դասակարգերի մեջ: Ավատատերերի դասակարգում կային տարբեր շերտեր և խավեր՝ խոշոր հողատերերից սկսած մինչև տանուտերերը, գյուղացիների դասակարգում կային միջակներ և չքավորներ: Դա հստակորեն նշմարվում է, օրինակ, Մուհամեդ իբն Հինդուշահ Նախիջևանիի՝ 1361 թ.

կազմած «Դաստուր ալ քաթիբ» ժողովածուի նյութերում. Սալմաստի մարզի քրիստոնյաներից ջիզեի (գլխահարկ) գանձելու մասին հրամանագիրը սահմանում է հարկատուների առնվազն երեք սոցիալական կատեգորիա. հարուստներ, միջին ունևորության անձինք և չքավորներ:

Իրանի այն ժամանակվա քաղաքներում բնակվում էին, արհեստավորներից և առևտրականներից բացի, հայ բնակչության այլ շերտերի և խավերի ներկայացուցիչներ: Մատթեոս Ջուղայեցին, յուրովի ստորաբաժանելով նրանց, առանձնացնում է 10 սոցիալական խումբ. շրջմոլիկներ՝ պատահական վաստակով մի կերպ ապրող անձինք, որոնք ամեն տեսակի սև աշխատանք էին կատարում, արհեստավորներ, մտավոր աշխատանքով զբաղվող մարդիկ, դատավորներ, գիտնականներ, հոգևորականներ, հոգևոր և աշխարհիկ տիրակալներ:

Ուշագրավ է այն, որ Մատթեոս Ջուղայեցու բերած թվարկման մեջ բացակայում է առևտրականների սոցիալական կատեգորիան, որը բացատրվում է այն իրողությամբ, որ այն ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է, արհեստավորները հաճախ միաժամանակ նաև առևտրականներ էին:

Տեղի հայ ազգաբնակչության տնտեսական գործունեության հիմնական ճյուղերն էին երկրագործությունը, անասնապահությունը, արհեստագործությունը և առևտուրը: Հայերը, լինելով կուլտուրական տարր, Պարսկահայքում իրենց ծանրակշիռ ավանդը ներմուծեցին տեղի երկրագործության և այգեգործության, խաղողագործության և բանջարագործության զարգացման մեջ: Հացահատիկի՝ ցորենի, գարու և մյուս հատիկավոր բույսերի աճեցման համար հնուց ի վեր առավել բարենպաստ պայմաններ կային Սալմաստի մարզում, որտեղ կլիման ավելի մեղմ էր, քան Խոյում և Ուրմիայում:

Մակվում, Խոյում և այլուր գոյություն ուներ բավականին զարգացած այգեգործություն: Զարգացման հատկապես բարձր մակարդակի էր հասել խաղողագործությունը:

Պարսկահայքի, Արտազի և այլ վայրերի հայ բնակչությունը հնուց ի վեր աճեցնում էր կտավատ, քնջութ և կանեփ: Այդ բույսերի սերմերից պատրաստում էին բուսական յուղ, իսկ նրբաթելերը օգտագործվում էին ջուլհակագործության մեջ:

13–14-րդ դդ. հյուսիս-արևելյան Իրանի հայկական գաղթավայրերում կար հողը ոռոգելու՝ այն ժամանակների առումով բավականին

զարգացած համակարգ: Բավական է վերհիշել 13-րդ դ. արևելյան հեղինակների հաղորդումներում նշվող Սալմաստում, Խոյում և Ուրմիայում գոյություն ունեցող «հոսող ջրի», Մակվի «մեծ հեղեղի» և Խոյի «բազում ջրանցքների» մասին:

12–14-րդ դդ. Պարսկահայքի, ինչպես նաև Թավրիզի և Իրանի մի շարք այլ մարզերի հայ ազգաբնակչությունն, ինչպես և անցյալում, մասնագիտացել էր գլխավորապես գորգեր և գորգանման գործվածքներ, գործվածքեղեն, գոտիներ և այլն արտադրելու մեջ: Հայ արհեստավորների շրջանում քիչ չէին հանքափորները և աղագործները, դարբինները, հյուսները, ճոները, պղնձագործները, ոսկերիչները, արծաթագործները և այլ արհեստագործները:

Տեղի հայերի տնտեսական կյանքում նկատելի դեր էին խաղում աշխատավոր շերտերը: Ուշագրավ է, մասնավորապես, նրանց շրջանում մշակների առկայությունը, որոնք վարձու բանվորների նախակերպարն էին հանդիսանում քաղաքներում: Հայտնի է, որ հայ մշակները հատկապես լայնորեն էին ընդգրկվում շինարարական աշխատանքների մեջ: Այսպես, Ղազան խանի օրոք Թավրիզի կառույցներում, այդ թվում նրա կենդանության ժամանակ կառուցվող դամբարանի շինարարության, մասնակցություն են ունեցել հայ վարպետները և մշակները:

Իրանի քաղաքներում և բնակավայրերում ապրող հայերը գործուն մասնակցություն ունեին միջազգային առևտրատնտեսական փոխանակմանը: Սելջուկյան շրջանում հայերի մասնակցությունը համաշխարհային առևտրին տակավին սահմանափակված էր: Սակայն արդեն այն ժամանակ հայ վաճառականներն ուղղակի կապեր ունեին Բաղդադի և Սիրիայի, ինչպես նաև Փոքր Ասիայի մյուս քաղաքների հետ: Բարենպաստ պայմաններ ստեղծվեցին առևտրի համար մոնղոլների օրոք, որոնք ձգտում էին վաճառականների և նրանց ապրանքների տեղափոխության համար անվտանգություն, ազատություն հաստատել: Այդ բխում էր առևտուրը զարգացնելու իրենց մոնղոլների շահագրգռվածությունից, քանզի առևտուրը մեծ եկամուտներ էր բերում նրանց:

Թավրիզում, Մարաղայում և Իրանի այլ վայրերում ապրանքներ գնելով հայերն այլ վաճառականների հետ մեկտեղ արտահանում էին դրանք փոխաբերման կետեր, գլխավորապես Այաս (Կիլիկյան Հայաստան), Տրապիզոն, Կոստանդնուպոլիս: Բեռները հանձնվում էին վենետիկյան և ջենովական վաճառականներին, իսկ արևմտյան ապրանքներով բեռնված քարավանները հետ էին վերադառնում:

Իլխանների գահը Մարաղայից Թավրիզ փոխադրելուց հետո վերջինս Առաջավոր արևելքում դարձավ 13–14-րդ դդ. համաշխարհային առևտրի կարևոր կենտրոններից մեկը:

Այն ժամանակներում հայերը, այդ թվում նաև Իրանից եկածները, Հեռավոր արևելքի, ներառյալ նաև Չինաստանի, քաղաքների և առևտրական կենտրոնների հազվադեպ այցելուներ չէին:

13–14-րդ դդ. Իրանի վրայով դեպի Փոքր Ասիա էին անցնում առևտրական շատ ուղիներ: Դրանցից մեկն էր Այաս-Թավրիզ ուղին: Այդ ուղին անցնում էր Կիլիկյան Հայաստանի, Կեսարիայի, Սեբաստիայի, Երզնկայի, Կարինի, Բոխբերդի-Դարոյնքի (Հասանկալեի), Հաջի Խալիլի, Ղարաքիլիսայի, Բագավանի և այնուհետև Իրանի տարածքով՝ Քիլիսքենդի, Մակվի, Մարգյանի, Խոյի, Մարանդի վրայով դեպի Թավրիզ:

Մեկ այլ ուղի սկսվում էր Սուլթանիեից և անցնում Զենջան, Արդեբիլ, Ուջան, Սեիդաբադ, Մարանդ, Խոյ, իսկ այնուհետև Կոտուրի լեռնանցքով դուրս էր գալիս Արճեշ-Մանազկերտ-Խնուս-Կարին-Երզնկա-Սեբաստիա-Կոնիա երթուղին: Կարինում այդ ուղիներին էր միանում Տրապիզոնից եկող ուղին:

Թավրիզի վրայով դեպի Արևմուտք էին տանում պղպեղ, նարդոս, մեխակ, մշկընկույզ, տաքկոճ, դարչին, մարգարիտ, լաջվարդ, մետաքս, լեղակ, համպար, մուշկ, խունկ, դիպակ և թանկարժեք գործվածքեղեն: Վենետիկից, Լոմբարդիայից, Գերմանիայից և Ֆլանդրիայից Արևելք էին ներմուծվում մահուդեղեն, կտավներ, մորթեղեն, կամլոտ և անագ: Իրան էին ներմուծվում նաև մշակված մեղրամոմ, ռաֆինացված շաքար, սնդիկ, արջասպ, մկնդեղ, կամֆարա, դինեքար, հակաթույներ, սարքեր, զենքեր, երկաթեղեն, թուղթ, ապակի, հայելիներ և այլն, իսկ արտահանվող ապրանքներն էին՝ բուրդը, գորգերը, բամբակը, սեկը, ձուկը, Բուխարայից բերվող արծաթ և ոսկի պարունակող հանքանյութը, Հորմոզից առաքված արմավը, ծխախոտը, շիրը, գիստորը, զաֆրանը, խավարծիլը (ռևանդենին), բուսախեժը, անուշանդրը, բուժախոտերը, թանկարժեք քարերը: Իրանի արտահանվող և ներմուծվող ապրանքներից էին ճենապակին, լեղակը, մումիոն («սև մեղրամոմը»), «երկնային մանանան» (գազպենը, «ծորուն մեղրը»), ցինկը, ձիերը և այլն: Թանկարժեք քարերից Արշակ Ալպոյաճյանը առանձնացնում է սուտակը, լաջվարդը, մոխրագույն սաթը և փիրուզը, որն այդ ժամանակ արդյունահանում էին միայն Իրանում:

* * *

Մահմեդական իրավունքի (շարիաթի) համաձայն, սելջուկների կողմից զավթած երկրներում տեղի բնակչությունից գանձվում էր երկու տեսակի հարկ. խարաջ և ջիզիե (ջիզյա):

Ջիզիեն հայտնի էր տակավին Սասանյան դարաշրջանում: Իսլամի հաստատումից հետո այն սկսեց գանձվել միայն ոչ մահմեդականներից: Իրանում հայերի նկատմամբ ջիզիե հարկի կիրառման մասին առավել վաղ հիշատակությունը պահպանվել է Յակուտի մոտ, որը, վկայակոչելով Բալազուրիին, նշում է, որ 644 թ. պատմական Վասպուրականի արաբ տիրակալներից մեկը «ժողովրդի հետ ջիզիե վճարելու վերաբերյալ պայմանագիր է կնքել»: Այդ հարկը սկսեցին գանձել հայերից՝ փոխարենը նրանց շնորհելով կյանքի և կայքի պաշտպանության երաշխիք, կրոնական պաշտամունքը կատարելու և զինվորական ծառայությունից ազատ լինելու իրավունք:

Գույքից գանձվող մալ հիմնական հարկը գոյություն ուներ տակավին սասանյան ժամանակաշրջանում: Այն գանձվում էր գյուղացիներից: «Մալ» տերմինը նշանակում է «անասուն», իսկ իր համապարփակ իմաստով՝ «գույք», «ունեցվածք»: Իրանի հայ բնակչությունից այդ հարկի գանձման մասին հիշատակում են Գրիգոր Ակներցին, Կիրակոս Գանձակեցին, ինչպես նաև հայերեն ձեռագրերի հիշատակարանները:

Ղալանը (կալանը) զինծառայության պարտիք էր: Այդ պարտիքի համաձայն, Այսրկովկասի ավատատերերը իրենց կարողության համապատասխան հեծյալների որոշակի թվաքանակով անցնում էին մոնղոլներին ղալան ծառայության: Իրանի հայ գաղթավայրերում, որտեղ այդ ժամանակ արդեն հայազգի ավատատերերը չկային, ղալանը վճարվում էր հարկի նման՝ բնամթերքով կամ դրամով:

Կիպչուր (ղպչուր) — նստակյաց բնակչությունից գանձվող գլխահարկ էր: Իր այդ հատկությամբ այն փոխարինեց ջիզիեին, որի գանձումը դադարեցրին մոնղոլները: Կիպչուրով հարկադրվում էր աշխատունակ արական սեռի ողջ բնակչությունը: Այդ հարկի գանձման սանդղակը ընդգրկում էր 1-ից մինչև 7 դինար՝ յուրաքանչյուր շնչից, ըստ ունեցվածքի:

Թաղարը մտցրել է Հուլավու խանը: Այդ հարկը գանձվում էր բնակչության բոլոր շերտերից: Ինչպես երևում է պարսիկ և հայ պատմիչնե-

ըի հաղորդումներից, թաղարը գանձվում էր բնամթերքով՝ հիմնականում ցորենով և մսով, զորքին մատակարարելու համար:

Թամղա – քաղաքներում արհեստավորներից և առևտրականներից գանձվող հարկ էր, յուրատեսակ քաղաքային տուրք (կազմում էր 10% յուրաքանչյուր առևտրական գործարքից): Հարկ գանձելու ժամանակ հարկադրված ապրանքի վրա դրվում էր դրոշմ (թամղա): Դա առավել բարձր հարկն էր:

Հարկերից և տուրքերից զատ, մոնղոլական ժամանակաշրջանում լայն տարածում էին ստացել փոստային և օթևան տալու պարտիքները: Մոնղոլների օրոք պարտիքների մի այլ տեսակն էր բեգարը, որը հարկադիր աշխատանք էր՝ շինարարական խոշոր օբյեկտներ, ճանապարհներ և այլն կառուցելու համար:

Շարիաթի համաձայն, հայերը, ինչպես և ոչ մահմեդական կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները, համարվում էին իսլամական պետության հպատակներ և մահմեդականների հետ մեկտեղ անձամբ ազատ կարգավիճակում էին գտնվում, սակայն նրանց համահավասար քաղաքական իրավունքներից չէին օգտվում և սահմանափակ քաղաքացիական իրավունքներ ունեին:

Իրանում քրիստոնյաների իրավունքների սահմանափակումը սկսեց սաստկանալ 13-րդ դ. վերջին և 14-րդ դարում՝ իլխանական պետության քայքայման ժամանակաշրջանում: 1295 թ. Ղազան խանը որոշեց հենվել իրանական աստիճանավորների ավագանու և մահմեդական հոգևորականության խավի վրա, որը նշանակում էր մահմեդականության ընդունում և մոնղոլների տարրալուծում Հուլավյան պետության բնակչության մեծամասնության, այսինքն՝ մահմեդականների մեջ:

Իսլամացման պրոցեսն Իրանում առաջ բերեց այդպիսի դեպքերում անխուսափելի կրոնական մոլեռանդության բռնկումներ: Դրանք առավել բիրտ դրսևորումներ ունեցան ավագանու մի մասի շրջանում, որին գլխավորում էր Ղազան խանի կողմն անցած Էմիր Նովրուզը: Վերջինիս համառ պնդմամբ հրապարակվեց եկեղեցիները քանդելու հրամանագիրը, որոնք կառուցվել էին հեթանոս (շամանական) իլխանների օրոք: Քրիստոնյաներին հետապնդելը դաժան ընթացք ստացավ Թավրիզում, Մարաղայում, Արտազ գավառում և այլուր, ավերվեց Սբ. Թադեոսի վանքը:

* * *

Արևմտյան Եվրոպայի երկրների հետ մոնղոլների շփումների հետևանքներից մեկն եղավ այն, որ Հուլավյան պետության մեջ մտած երկրները և ժողովուրդները դարձան կաթոլիկության ներթափանցման օբյեկտ: Իրանի որպես Հուլավյան պետության կենտրոնական մարզի դերը կանխորոշեց, որ այն դառնա տեղի քրիստոնյա բնակչության շրջանում Հռոմի կաթոլիկ եկեղեցու միսիոներական գործունեության հիմնական ասպարեզներից մեկը: Ժամանակի ընթացքում նրանց գործունեությունը ծավալվում էր գերազանցապես տեղի հայ բնակչության շրջանում:

Կաթոլիկ քարոզիչների ներթափանցումն Իրան սկսվել է 13-րդ դ. երկրորդ կեսից: Սկզբում առավել ակտիվություն էին ցուցաբերում ֆրանցիսկյան ուխտի անդամները: Կիլիկյան Հայաստանում և Փոքր Ասիայի մարզերում իրենց հենակետերը ստեղծելուց հետո 70–80-ական թվականներին նրանք ներթափանցեցին Իրան, այնտեղ Թավրիզում և Մարաղայում ստեղծելով իրենց հենակետերը: 14-րդ դ. սկզբին ֆրանցիսկյաններին դոմինիկյանների հետ միասին հաջողվեց կաթոլիկացնել Մակվի հայ բնակչությանը:

Դոմինիկյան ուխտի քարոզիչները 13–14-րդ դդ. սահմանագլխին Իրանում Թավրիզում, Դահարականում և Մարաղայում հիմնեցին իրենց հենակետերը:

1314 թ. դոմինիկյանները վանք հիմնադրեցին Սուլթանիեում, իսկ 1318 թ. Իոհան 22-րդի "Redamter noster" կոնդակի համաձայն այնտեղ հիմնադրվեց դոմինիկյան թեմի աթոռը[1]:

Հուլավյան պետության մեջ հայ ազգաբնակչության կեղեքյալ պայմաններում հայ առաքելական եկեղեցու գործիչները և ոչնչացումից զերծ մնացած իշխանները, այնուամենայնիվ, ի վիճակի եղան դիմակայել կաթոլիկության ներթափանցմանը: Դիմադրելու նրանց ձգտումը միտում էր անսասան պահել հայ եկեղեցու հիմքերը, որին նրանք համարում էին իրենց երբեմնի իրավունքների վերականգնման և կորցրած իշխանության վերածնության գաղափարի կրող:

Լատինասեր հոսանքի հիմքում ընկած էին բնակչության որոշակի խավերի տնտեսական և քաղաքական շահերը ինչպես Կիլիկյան Հայաստանում, այնպես էլ հայկական արևելյան մարզերում: Իրանում այդ-

---

1 Waterfield R. Christians in Persia. London, 1973, p. 52-53.

պիսի խավերից էին հայ խոշոր վաճառականների մի մասը, որոնք գործնական կապեր ունեին Արևմտյան Եվրոպայի և Կիլիկյան Հայաստանի առևտրական տների հետ, Արտաքի իլխանության առևտրական շրջանների առանձին ներկայացուցիչներ, ինչպես նաև Խոյի, Սուլթանիեի, Ուրմիայի, Սալմաստի, Մարաղայի և այլ վայրերի հայ վաճառականների և արհեստավորների ընտանիքներից սերված որոշ անձինք:

Կաթոլիկության տարածման կողմնակիցների և հակառակորդների միջև բախումները հայկական միջավայրում հատկապես կտրուկ սրվեցին 13-րդ դ. 80-ական թվականների վերջին, երբ կաթոլիկ դավանանք ընդունած Կիլիկիայի հայ թագավոր Հեթում Բ-ն և կաթողիկոս Ստեփանոսը որպես Արևմտյան Եվրոպայի երկրներից օգնություն ստանալու անխախտելի պայման առաջադրեցին Հռոմի եկեղեցու գերակայության (առաջնության) ընդունումը: Կիլիկյան Հայաստանի տիրակալների այդ քայլը ազգային եկեղեցու կողմնակիցների շրջանում առաջացրեց մի շարժում, որն ուղղված էր հայ եկեղեցին Հռոմին ենթարկելու ծրագրերի դեմ: Հենց այդ ժամանակ էլ նրանց շրջանում ծագեց հայ եկեղեցու նախաթոռը Սսից Հայաստանի արևելյան մարզերը փոխադրելու գաղափարը: Շարժումը գլխավորեցին Սյունիքի հոգևոր և աշխարհիկ գործիչները, բարձրագույն դպրոցների՝ Գլաձորի և Տաթևի համալսարանների գիտնականները:

Ժամանակի ընթացքում բանավիճային մենամարտը հայ եկեղեցու հետևորդների և Հռոմի հետ մերձենալու կողմնակիցների միջև թևակոխեց գործնական գործողությունների փուլ: Հայ եկեղեցու կողմնակիցները կարողացան զգալիորեն ամրապնդել իրենց դիրքերը Թավրիզում: Հետագա քայլերը հանդեցրին արքեպիսկոպոս Զաքարիայի դիրքերի խարխլմանը: Հայ եկեղեցու հետևորդների դիրքերի ամրապնդմանը նպաստեց քաղաքական նոր իրադրությունը, որը հանդեցրեց Հուլավյան պետության քայքայմանը:

* * *

13–14-րդ դդ. Հայաստանի կենտրոնական և հարավային մարզերում՝ գլխավորապես Ալաշկերտում և Կոգովիտում հաստատված թուրքմենական Կարա-Կոյունլու ցեղերը 14-րդ դ. 70-ական թվականներին Կարա-Մուհամեդի օրոք կազմեցին բավականին խոշոր ցեղային միավորում: Ցեղային մի այլ՝ Ակ-Կոյունլու միավորման ճնշման տակ իրենց սկզբնական շարժման համեմատությամբ Արևմուտքից դեպի

Արևելք հետ քաշվելով, նրանք 15-րդ դ. սկզբին իրենց իշխանությանը ենթարկեցին իրանական Ատրպատականի մեծ մասը:

Թեմուրյանների դեմ մղված իրենց պայքարում Կարա-Կոյունլու իշխողները ձգտում էին հենվել ոչ միայն վաչկատուն ցեղերի, այդ թվում նաև քրդական որոշ ցեղերի, որոնք եկել էին նրանց հետ Վերին Միջագետքից, այլև տեղի հայ ազգաբնակչության վրա: Վերջինս, ի դեմս Հայաստանի արևելյան մարզերի, ինչպես նաև Իրանի հյուսիս-արևմտյան հայկական գաղթավայրերի ազդեցիկ շրջանների, շարունակելով անկախության ուղիների որոնումները, որոշ հույսեր էր կապում թուրքմենական իշխող վերնախավի հետ: Այդ որոնումների արդյունքներից մեկն էլ 15-րդ դ. 20-ական թվականներին Այրարատում և Սյունիքում Օրբելյանների տոհմի գլխավորությամբ հայկական վասալական իշխանություն ստեղծելու ծրագիրն էր[1]: Այդ ժամանակ հայկական զորաջոկատները սկսեցին աջակցել թուրքմենական զորքերին: Այսպես, Ռուստամ Օրբելյանի զորաջոկատները մասնակցել են Շահրուխի դեմ Սալմաստի 1429 թ. Իսքանդեր Կարա-Կոյունլուի մղած ճակատամարտին: Իսքանդերը Ռուստամ Օրբելյանին շնորհեց սոյուրղալային տիրույթներ յոթ գյուղ Այրարատում: Այդ տիրույթները և Սյունիքում ունեցած իր տոհմական կալվածքներն էլ Ռուստամ Օրբելյանը մտադրվել էր իշխանություն ստեղծելու իր փայփայած ծրագրի հիմքում դնել:

Ռուստամ Օրբելյանին աջակցություն էին ցույց տալիս ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Իրանի ազդեցիկ շրջանները: Այդ խնդրում առանձնահատուկ դեր խաղաց Սբ. Թադեոսի վանքի այն ժամանակվա վանահայր, եպիսկոպոս Մակվեցի Ջալալբեկյանը: 1432 թ. նա դարձավ նաև Էջմիածնի վանքի վանահայրը: Իր գյուղերի անձեռնմխելիությունը երաշխավորելու համար Ռուստամ Օրբելյանը դրանք հանձնեց Գրիգոր Մակվեցուն Էջմիածնի վանքին: Այդ գյուղերը ձևակերպվեցին որպես վակֆային տիրույթներ:

1435 թ. Շահրուխը նորից ներխուժեց Ատրպատական և, գրավելով Թավրիզը, Իսքանդերի տիրույթների վրա իշխանությունը հանձնեց նրա կրտսեր եղբորը՝ Ջահանշահին, որը ճանաչել էր Թեմուրյաններից իր վասալային կախումը:

Ջահանշահը նույնպես հետևում էր հայ ազդեցիկ շրջաններն իր կողմը գրավելու քաղաքականությանը: Այդ քաղաքականության

---

1 Փ ա փ ա զ յ ա ն Հ. Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից. ՀՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1955, №8, էջ 96:

դրսևորումներից մեկը հայ եկեղեցու նախաթոռը Սսից էջմիածին փոխադրելու վերաբերյալ նրա համաձայնությունն էր:

1467 թ. Ակ-Կոյունլու ցեղային միությունը Ուզուն Հասանի գլխավորությամբ պարտության մատնեց Կարա-Կոյունլուի ուժերին Հայաստանի հարավում, իսկ 1468 թ. գրավեց Ատրպատականը՝ Թավրիզը դարձնելով իր մայրաքաղաքը:

Ուզուն Հասանը, թշնամական հարաբերությունների մեջ գտնվելով թուրք-օսմանների հետ, դիմեց մերձեցման՝ հայերի ազդեցիկ շրջանների՝ հայ բարձր հոգևորականության, ինչպես նաև խոշոր վաճառականության հետ, քանզի շահագրգռված էր եվրասիական առևտրի զարգացմամբ, որից գանձվող տուրքերը պետության բյուջե մտնող ֆինանսական հասույթների աղբյուրներից էին: Իրանի՝ Թավրիզի և այլ բնակավայրերի հայազգի վաճառականներն, իրենց հերթին, ի դեմս Ակ-Կոյունլուի՝ Իրանի վրայով անցնող համաշխարհային առևտրի անվտանգության երաշխավոր էին տեսնում:

Այդ ժամանակաշրջանում տեղի հայ վաճառականության նշանավոր ներկայացուցիչն էր Թավրիզցի անվանի վաճառական Խոջա Միրաքը: Իրանում Վենետիկի դեսպան Իոսաֆաթ Բարբարոյի բնորոշմամբ, Միրաքը «ամեն տեսակի ապրանքներ վաճառող» հարուստ վաճառական էր և «մեծ համբավ էր վայելում»:

15-րդ դ. 50-ական թվականների բաղում հայ հեղինակներ Միրաքի անձը պարուրում են հանուն հավատի նահատակվածի լուսապսակով: Միրաքը մահմեդական մոլեռանդության զոհ դարձավ, երբ 80 տարեկան էր, մահմեդականություն ընդունելուց հրաժարվելու պատճառով: Աղբյուրները Միրաքին բնորոշում են որպես «հայերի մեծ պաշտպան», Թավրիզի և այլ վայրերի հայերի «ավագ»:

1469 թ. Միրաքը գլխավորեց Ուզուն Հասանի կողմից Վենետիկ ուղարկված դեսպանությունը: Դեսպանությունն, ինչպես երևում է Ղ. Ալիշանի՝ Վենետիկի արխիվներից քաղած նյութերից և Կատերինո Զենոյի ուղեգրություններից, առաջարկել էր պատվավոր դաշինք կնքել Թուրքիայի և Եգիպտոսի դեմ՝ պայմանով, որ վենետիկցիներն իրենց նավատորմիղով չհարձակվեն այդ երկու պետության վրա: Ուզուն Հասանը ձգտում էր ընդլայնել Վենետիկի հետ կնքած դաշինքը, դրան եվրոպական այլ երկրների մասնակից դարձնելու հաշվին: Այդ է վկայում,

մասնավորապես, այն փաստը, որ Միրաքի դեսպանությունը, Վենետիկից զատ, եղավ նաև Հռոմում և Նեապոլում[1]:

Միրաքի դեսպանության մասին նյութերը հայերին, մասնավորապես հայ վաճառականներին, Իրանի տիրակալների կողմից որպես դիվանագետներ օգտագործելու պրակտիկայի առավել վաղ վավերացումն են:

Միրաքը օգնություն էր ցույց տալիս եկեղեցական հաստատություններին և բնակչության տարբեր խավերին: Միրաքի տրամադրած «ոսկով և արծաթով բազում գերիներ վրաց ազգից» փրկագնվել են գերությունից: Ամենայն հավանականությամբ, տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հայ և վրացի գերյալներին, որոնք Թավրիզ էին բերվել Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու իշխողների դեպի Վրաստան կատարած արշավանքների հետևանքով:

15-րդ դ. Իրանի հայ գաղթավայրերում շարունակվում էր պայքարը կաթոլիկության կողմնակիցների և հակառակորդների միջև: Կրքերի բորբոքման արգասիք էր, օրինակ, 1426 թ. Մակվի հայ կաթոլիկների հարձակումը Սբ. Թադեոսի վանքի վրա: Շուտով, սակայն, Մակվի կաթոլիկ կառավարիչները կորցրին իրենց երբեմնի իշխանությունը: Այդ նույն 1426 թ. Մակուն գրավեցին Իսքանդերի զորքերը:

Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու իշխողների տիրապետության շրջանում նոր խթան տրվեց կրոնական հալածանքներին: Այդ կարելի է տեսնել խոջա Միրաքի սպանության օրինակով: Կրոնական կրքերի սանձարձակությունն առանձնապես մեծ վնաս հասցրեց Թավրիզի հայ Համայնքին:

Կրոնական հալածանքներին զուգընթաց հաճախակի դարձան ստրկավաճառության դեպքերը: Քրիստոնյաներին, գլխավորապես հայերին և վրացիներին, ստրկավաճառության ենթարկելը թուրքմեն ավատատերերի ֆինանսական եկամուտների աղբյուրն էր: Գերության վերցնելով նրանք գերյալների ազգականներին հարկադրում էին մեծ փրկագին վճարելով փրկել նրանց:

* * *

Իրանի հայերի շրջանում 12–15-րդ դդ. մշակույթի զարգացումն ընթանում էր սոցիալ-տնտեսական ընդհանուր վերելքի ֆոնի վրա, որը սկզբնավորվել էր ամբողջ Առաջավոր Ասիայում տակավին նախորդ

---

1 Ա լ ի շ ա ն Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 184–192:

դարերում և կապված էր քաղաքների աճի, քաղաքային դասերի երևան գալու, մտավորականության ծնունդ առնելու հետ:

Ճարտարապետություն – Իրանի հայ գաղթավայրերի ճարտարապետական առաջին հուշարձանների թվին են պատկանում հայ ճարտարապետության նշանավոր ստեղծագործությունները՝ Սբ. Թադեոսի և Սբ. Ստեփանոսի վանքերը, որոնք իրենց նախաստեղծ տեսքով հիմնադրվել են 4–7-րդ դդ.: Դրանք վերականգնվեցին ավելի ուշ շրջանում, 12–13-րդ դդ. սկսած, երբ, ինչպես բուն Հայաստանում, այնպես և Իրանի հայ գաղթավայրերում դրսևորվեցին հայ ճարտարապետական արվեստի ծաղկման նշանները: Դրա վկայությունն է Սբ. Թադեոսի (12-րդ դ.) վանքին առընթեր եկեղեցու, Թավրիզում (13-րդ դ.) Սբ. Սարգսի և Սբ. Աստվածածնի, Սուլթանիեում (14-րդ դ.) Սբ. Աստվածածնի եկեղեցու կառուցումը, Ծործորի վանքի (13–14-րդ դդ.) կերտումը, Սբ. Թադեոսի վանքի (1329 թ.) վերակառուցումը, մի շարք այլ եկեղեցիների և վանքերի, ինչպես նաև ամրոցային կառույցների, կամուրջների և այլ շինությունների կառուցումը:

Հայ գաղթավայրերում իր զարգացումն ապրեց գրչագրության արվեստը: Իրանում՝ Ուրմիայում առաջին հայերեն ձեռագիրը ստեղծել է գրիչ Ատոմը 1274 թ.: Մնացյալ բոլոր ձեռագրերը հիմնականում թվագրվում են 14-րդ դարով, մի ժամանակաշրջան, երբ տեղի հայերի ձեռագրական արվեստը որոշակի ծաղկում էր ապրում:

Գրչագրության հիմնական ակութներն էին Թավրիզը, Սուլթանիեն, Սբ. Թադեոսի և Սբ. Ստեփանոսի վանքերը և այլ վայրեր: Առանձնահատուկ տեղ էր գրավում Թավրիզը, որը հավակնում էր լինել այն ժամանակվա հայ գրչագրության խոշոր կենտրոններից մեկը: Չնայած Սուլթանիեում գրչագրության գոյության համեմատաբար կարճ ժամանակաշրջանին (մոտավորապես 1321–1357 թթ.), այնտեղ ստեղծվեցին մի շարք ձեռագրեր: Գրչագրության արվեստով զբաղվում էին նաև Իրանի հայ գաղթավայրերի կենտրոններում, մասնավորապես, Խոյում, Սալմաստում և այլուր:

Իրանի հայ գաղթավայրերում այդ ժամանակաշրջանում ապրում և ստեղծագործում էին մի քանի նկարիչ-պատկերազարդողներ: Նրանցից առանձնանում են երկու ակնառու դեմքեր՝ Ավագը և Մխիթար Անեցին:

Գլաձորի համալսարանի սան Ավագը որոշ ժամանակ ստեղծագործել է Թավրիզում և Սուլթանիեում: Թավրիզում նա պատկերազարդել է

Սյունիքի տիրակալ Բուրթել Օրբելյանի որդու՝ Բեշկենի համար արտագրված Ավետարանը: 1337 թ. Ավագը Սյունիքի հոգևոր առաջնորդ Սարգսի պատվերով ձևավորեց մի խաղգիրք:

Բուն Հայաստանից գաղթած Մխիթար Անեցին փոխադրվեց Սուլթանիե 14-րդ դ. սկզբին, ամենայն հավանականությամբ, այն հայերի հետ, որոնց սուլթան Օքջեյթուն այնտեղ էր գաղթեցրել Թավրիզից և Իրանի ու Հայաստանի այլ վայրերից: Ավագի գործակցությամբ նա արտագրել և պատկերազարդել է Ավետարան (1334 թ.), իսկ 1340 թ.՝ Աստվածաշունչ: 1338 թ. նա պատկերազարդել է մի այլ Աստվածաշունչ, ինչպես նաև 1356 թ. արտագրած Ավետարան:

14-րդ դ. Իրանի հայերի մշակութային կյանքում աչքի էր ընկնում Ծործորի դպրոցը: Այն երևան եկավ 14-րդ դ. սկզբին՝ Արտազի իլխանության քաղաքական և տնտեսական կյանքի նկատելի վերելքի պայմաններում: Դպրոցի հիմնադիրն էր գիտնական Հովհաննես Երզնկացին, որը Ծործորի վանք էր փոխադրվել Գլաձորի համալսարանից: Թեև Հովհաննես Երզնկացու ստեղծագործական գործունեությունը սկսվել էր Գլաձորում, սակայն նրա գիտական գործունեության առավել բեղմնավոր ժամանակաշրջանն անցել է Ծործորի վանքում: Այնտեղ են ստեղծվել փիլիսոփայական, լեզվաբանական և գրական հիմնական երկերը, որոնց թվում նաև «Մեկնութիւն Մատթէոսի աւետարանի», «Համառօտ տեսութիւն քերականի» և այլ աշխատություններ: Հովհաննես Երզնկացու գրչին է պատկանում մոտ 20 քարոզ, նա ստեղծել է չափածո երկեր, զբաղվել է գրչագրությամբ, կատարել գիտամանկավարժական աշխատանք[1]:

Խոսքի հմուտ վարպետ էր արքեպիսկոպոս Զաքարիան: Կարծիք կա, որ արքեպիսկոպոս Զաքարիան պատմագրական աշխատության հեղինակ է, որը տեղեկություններ է պարունակում հայ եկեղեցու և Արտազի իլխանության պատմության վերաբերյալ:

Ֆրանցիսկյան ուխտի քարոզիչ և գիտնական, ծագումով իսպանացի Ֆրա Պոնցիուսը Ծործորի վանքում կատարել է գիտամանկավարժական աշխատանք և զբաղվել է եվրոպական միջնադարյան հեղինակների աշխատությունների թարգմանությամբ:

---

[1] Տես Խաչիկյան Լ. Ս., Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1973, հ. 11:

Որոշ թարգմանություններ Ֆրա Պոնցիուսը իրականացրել է ռաբունապետ Իսրայելի հետ համատեղ: Վերջինս կատարել է նաև որոշ ինքնուրույն թարգմանություններ:

1318 թվականից դոմինիկյան միսիոներների կենտրոն դարձավ Մարաղան: Այնտեղ Բարդուղիմեոս Բոլոնիացու հետ միասին ստեղծագործում էին նրա գործակիցներ Պետրոս Արագոնցին, Ջոն Անգլիուս (անգլիացի) դը Սուինֆորդը և այլք: Այդ կենտրոնը գրավել է տեղի հայ գիտնականների ուշադրությունը: Նրանցից առաջիններն էին Հովհաննես և Հակոբ Քռնեցիները: Եվրոպացի և հայ գիտնականների համագործակցության շնորհիվ ստեղծվեց իր բնույթով եզակի հայ-կաթոլիկ գրականությունը:

Շնորհիվ Հակոբ Քռնեցու և մյուս գիտնականների թարգմանությունների եվրոպացի միջնադարյան փիլիսոփաների բազում երկեր մատչելի դարձան հայ ընթերցողների համար: Դրանք որոշակի դեր ունեցան այն ժամանակվա հայ իմաստասիրական մտքի աշխուժացման գործում:

Մակվում կաթոլիկ կառավարիչների իշխանությունը վերանալուց հետո Սբ. Թադեոսի վանքը շարունակում էր մնալ մշակույթի ակութներից մեկն Արտազում: Այնտեղ գիտական գործունեությունը կատարվում էր ռաբունապետ Մեսրոպի (1359–1372 թթ. կաթողիկոս էր) ղեկավարությամբ: Վանքին առընթեր այն ժամանակ ստեղծվեց ուսուցողական դպրոց: Վանքում առավել կամ նվազ ստեղծագործական աշխատանքի շրջան էին 14-րդ դարի 30–80-ական թվականների կեսերը: Իսկ ընդհանրապես օտարների հաճախակի ասպատակությունները, կողոպուտները և ավերածությունները հնարավորություն չտվեցին Սբ. Թադեոսի վանքին դառնալու մշակութային խոշոր կենտրոն, որպիսիք էին միջնադարյան հայկական բազում վանքեր:

Իրանի հայերից էր սերում նաև Մխիթար Հերացին (Խոյեցին), որն իր կյանքի և ստեղծագործության զգալի շրջանն անցկացրել է Կիլիկյան Հայաստանում, ուր նա փոխադրվել էր երիտասարդ հասակում: Սակայն Մխիթար Հերացու ուսումնասիրությունը և նախասկզբնական գիտական գործունեությունն անցել են իր ծննդավայրում:

* * *

16-րդ դ. սկզբին Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև բռնկված պատերազմի պայմաններում Իրանի հյուսիս-արևմուտքում

գտնվող հայ համայնքները, մեծ մասամբ հայտնվելով ռազմական գործողությունների գոտում, մեծ վնասներ կրեցին: 1514 թ. պարսկական զորքերը, Զլդրի մոտ կրած պարտությունից հետո, ներխուժեցին Թավրիզ և գերեվարեցին հազարավոր բնակիչների: Գերեվարությունները կատարվում էին պարբերաբար: Դրանցից առավել բազմաքանակը տեղի ունեցավ 80-ական թվականներին, երբ թուրքերին հաջողվեց զավթել Իրանի հյուսիսային շրջանները: Այդ ժամանակ Թրակիա բռնագաղթեցվեց 60 հազար մարդ, որոնց թվում, պարսիկների և թուրքերի հետ մեկտեղ, կային բազում հայեր:

Այդ ժամանակ թուրքերի զավթած Իրանի շրջաններից, ինչպես նաև Այսրկովկասից հայ բնակչությունը սկսեց գաղթել Իրան: Այդ պրոցեսը սաստկացավ թուրքերի և պարսիկների միջև 1590 թ. հաշտության պայմանագիր կնքելուց հետո, որի համաձայն, Իրանի հյուսիսային շրջանները անցան օսմանյան Թուրքիային: Թուրքական իշխանությունների հալածանքներից դժգոհ շատ հայ, ինչպես նաև վրացի և թյուրք ավատատերեր իրենց շինականների հետ մեկտեղ ծածուկ հեռանում էին Իրան: Այդ հայ ավատատերերի զգալի մասը պատրիարք Մելիքսեթի գլխավորությամբ 17-րդ դ. սկզբին գաղթեց Սպահան, ուր շահ Աբաս 1-ինը (1587–1629 թթ.) Ղազվինից 1598 թ. տեղափոխեց Սեֆյան պետության մայրաքաղաքը:

17-րդ դ. սկզբին, շահ Աբաս 1-ինի օրոք Սեֆյան Իրանի և օսմանյան Թուրքիայի միջև հերթական պատերազմի ընթացքում, հայերի բռնագաղթը հանդիսացավ այն պատմական իրադարձությունը, որը հանգեցրեց հայ ազգաբնակչության խոշոր տեղաշարժերին:

17-րդ դ. սկզբին Թուրքիայում ծայր առած «ներքին անկարգությունները» հնարավորություն ընձեռեցին շահին 1603 թ. վերսկսել նրա դեմ ռազմական գործողությունները: Սկզբնական շրջանում իրանական զորքերին հաջողվեց գրավել Թավրիզը, Նախիջևանը և Երևանը: Սակայն շուտով 1604 թ. Թուրքիան կարողացավ շտկվել և խոշոր ուժեր կենտրոնացնել, որոնք մոտեցան Երևանին: Շահ Աբաս 1-ինը, կշռադատելով հանգամանքները, որոշեց թուրքերի հետ մարտի չբռնվել և նահանջել դեպի Թավրիզ: Հենց այդ ժամանակ էլ նա հղացավ հարձակվող հակառակորդի ուժերի դեմ «ամայի գոտի» ստեղծելու ծրագիր:

Շահ Աբասի այդ ծրագիրը ռազմաստրատեգիական, քաղաքական, տնտեսական և մի շարք այլ նպատակներ էր հետապնդում: Ռազմաստրատեգիական առումով նա միտում էր հակառակորդին զրկել պարենից,

անասնակերից և տեղի բնակչությունից: Քաղաքական տեսակետից իրականացվում էին Իրանի սահմանակից տարածքները թուլացնելու շահի վաղեմի մտադրությունները: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական նպատակին, ապա այն լուծում էր Իրանի կենտրոնական նահանգները զարգացնելու համար մարդկային ռեսուրսներ ներգրավելու խնդիրը:

Շահ Աբաս 1-ինի ծրագրի բաղկացուցիչ մասերից մեկն էլ Հայաստանի և Այսրկովկասի ազգաբնակչությունն Իրան գաղթեցնելն էր: Գաղթեցվածների մեծ մասը հայերն էին:

/Պարսկական զորքերը Իրան քշեցին Հայաստանի շատ շրջանների բնակչությանը: Այդ մարդերի, ինչպես նաև քաղաքների թվին են պատկանում Բասենը, Կարինը, Մուշը, Վանը, Խնուսը, Խլաթը, Կարսը, Արարատյան դաշտի մի շարք շրջաններ, ինչպես նաև այն շրջանները, որոնք պարսիկները հավաքական անվանումով կոչում են «Զուխուր-Սաադ», այսինքն՝ Արաքս գետից հյուսիս ընկած տարածքները: Այդ ճակատագրին արժանացավ նաև Արաքսի ափին գտնվող Զուղան:

Գաղթեցումը, բացառությամբ Զուղայի երևելի բնակչության, որին շահ Աբաս I-ի կարգադրությամբ Արաքսի աջ ափ փոխադրեցին պարսկական զորքի օգնությամբ, ամենաանմարդկային ձևերն ընդունեց:

Հայերի վերաբերմունքը բռնագաղթի նկատմամբ բացարձակապես բացասական էր: Այն իր արտացոլումն է գտել հայերեն ձեռագրերի հիշատակարանում: Դրանցից մեկում՝ 1606 թ. ձեռագրում նրա ստացող խարբերդցի խոջա Սաֆարը թողել է հետևյալ տողերը. «Շահն... լցուաւ չարութեամբ ե/ր/կրորդ Լակ Թամուրն, գերի և աւար էառ զաշխարհս Հայոց՝ զկարսա յերկիրն գերեցուց և զցորեան և զկալն կրակով այրեաց, որդին կորստեան: Որ ի յերկրորդում տարին հանց սով եղև Խարս և Արզուրում, որ շատ ոք սովամահ մեռան: Եւ /Շ/ահն այրեաց յԱնու քաղաքէն մինչեւ զՃուղայ և զՆախճաւան զամենայն գիւղ և զքաղաք, և զմարդն լալով և ողբով քըշեաց ի յԱսպահան: Վայ այն աւուրն եւ այն պահուն, ով կարէ լեզուաւ կամ գրով պատմել զնոցա ողբն և զկոծն, որ զորդին ի հաւրէ բաժանեցին, զհայրն՝ ի յորդոյն, զդուստրն՝ ի մաւրէ և զմայրն՝ ի դստերէ, զհարսն ի կեսրէ, և զկեսուրն՝ ի հարսնէ. ոմանք ի յԱրաքսիւն ջրայխեղդ առ Աստուած փոխեցան. այլ ոք Մարանդայ սարին անհաղորդ ու անթաղ մնացին»[1]:

---

1 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ. հ. Ա, Երևան, 1974, էջ 96:

Մի այլ հիշատակարանում (1606 թ. թվագրվող ձեռագիր) ոմն պարոն Հայկազ հայտնում է հետևյալ տեղեկությունները. «...գնացեալ զօրս պարսից մտեալ ի Քուրտըստան, գերեալ եւ թալանեալ զՎանա/յ/ մինչեւ ի Մուշ, մինչեւ Արծիկայ, զԱխլաթ... Մոգաց, զԽլաթ մինչև Արզրում:

Հանեալ տեղացն և Ղարս և բերեալ Երեւան, եւ անտի բերեալ Նախչեւան եւ բերեալ անցոյց Երասխովն: Եւ բազում ժողովրդոց թափել Երաս/խ/ն խեղդամահել, ոմն սովամահ եղեալ, ոմն գերայվարեալ...»[1]:

Փաստերը հերքում են իրանցի պաշտոնական պատմաբանների և եվրոպացի միսիոներների՝ շահ Աբաս 1-ինի՝ հայերի նկատմամբ իբրև թե ցուցաբերած «բարյացակամության» մասին պնդումները: Իրադարձությունների ականատես գրիչներին կրկնելով՝ Առաքել Դավրիժեցին նրան անվանում է «հրեշավոր վիշապ»:

Իրան բռնագաղթված հայերի թվաքանակի մասին տվյալները հակասական են: Որոշ հեղինակներ հիշատակում են 300 հազ., մյուսները՝ 600 հազ. մարդ: Հայերեն ձեռագրերի հիշատակարանների ընձեռած, ինչպես նաև եվրոպացի հեղինակների աշխատություններում առկա տեղեկությունների վերլուծությունը հնարավոր է դարձնում նշել, որ բռնագաղթի ենթարկված հայերի ընհանուր թվաքանակը կազմում էր մոտ 500 հազար մարդ: Նրանցից տասնյակ հազարավորները զոհվեցին «մեծ սուրգունի» /«մեծ բռնագաղթի»/ ճանապարհներին, մյուս մի քանի տասնյակ հազարավորները վերադարձան հարազատ վայրեր:

Հայերը բնակություն հաստատեցին Թավրիզում և դրան սահմանակից շրջաններում, Գիլյանում (Ռեշտ, Էնզելի և այլն) և Մազանդարանում (Ֆարահապատ), Քաշանում, Ղազվինում և Իրանի հյուսիսի մի քանի այլ քաղաքներում ու բնակավայրերում: Իսկ բռնագաղթի ենթարկվածների հիմնական մասը բնակություն հաստատեց Սպահանում և դրան մերձակա շրջաններում՝ Լնջանում, Ալինջանում, Քեարվանդում, Բուրվարիում, Համադան, Շիրազ և այլ քաղաքներում: Միայն Մազանդարան նահանգում բնակեցվեց 30 հազար հայ գերդաստան[2], որն այն ժամանակվա չափանիշներով կազմում էր առնվազն 150–200 հազար մարդ: Հայ ընտանիքների այդքան մեծ թվաքանակ բնակեցնելով Մազանդարանում, Ֆարահաբադում՝ շահ Աբաս 1-ինը հետապն-

---

1 Նույն տեղը, էջ 206:

2 Գ ո ր ո յ ա ն ց Ն. Պարսկաստանի հայերը. Թեհրան, 1968, էջ 231:

դում էր մետաքսագործությունը զարգացնելու նպատակ: Հայերն այնտեղ բնակեցվեցին մոտավորապես 1617 թ.:

Քաղաքաբնակ հայերին շահ Աբաս 1-ինը բնակեցրեց Սպահանի Թավրասական (Թավրասական. այս պարսկական անվանումը հայերը հետագայում վերանվանեցին Մարունան), Շիխշաբան, Թախտերարաջ և Բագատ արվարձաններում, իսկ առևտրական խավին, գերազանցապես Հին Ջուղայից գաղթածներին, նա արքունապատկան («խաս») հողերից հողամասեր տրամադրեց Սպահանը հարավից շրջանցող Զանդե-ռուդ գետի աջ ափին: Այնտեղ էլ մի քանի տասնամյակի ընթացքում կառուցվեց Սպահանի այն արվարձանը, որն ստացավ Նոր Ջուղա անվանումը:

Դեպի Իրան նոր բռնագաղթի ենթարկված հայերի տեղաբաշխումը հետևյալ պատկերն էր ներկայացնում:

Նոր Ջուղա – Նոր Ջուղան կառուցապատվեց այն ժամանակվա ճարտարապետական լավագույն ոճով: Այն բաժանված էր թաղամասերի, որտեղ հայրենակցության սկզբունքով բնակություն հաստատեցին ջուղայեցիները, երևանցիները, դաշտեցիները և մյուսները: Սկզբնապես Սպահանի այդ արվարձանն ուներ 15 հազ. բնակիչ: 1630 թ. դրա բնակչության թիվը հասավ 30 հազարի, այնտեղ կար թվով 4 հազար տուն: Նոր Ջուղայի բնակչության ավելացումը տեղի էր ունենում ինչպես բռնագաղթի առաջին ալիքին հաջորդած տարիներին Սպահանից և դրա արվարձաններից գաղթածների, այնպես էլ Հայաստանից, Այսրկովկասից և Իրանի շրջաններից նոր եկածների հաշվին[1]:

Շահ Աբաս 1-ինը հովանավորում էր Նոր Ջուղայի խոշոր վաճառականությանը և բարձր հոգևորականությանը՝ ձգտելով նրանց օգտագործել իր իշխանությունն Իրանի հայերի վրա տարածելու, իսկ արտաքին քաղաքականության առումով Սեֆյան պետության քաղաքական և տնտեսական կապերը Եվրոպայի երկրների հետ ամրապնդելու համար: Իր այդ մտադրություններից ելնելով՝ նա Նոր Ջուղայի հարուստ խավին շնորհեց գրեթե այն բոլոր իրավունքները և արտոնությունները, որոնցից օգտվում էին այն ժամանակվա իրանական հասարակության բարձրագիրք ներկայացուցիչները: Այդօրինակ իրավունքներ և արտոնություններ չունեին նույնիսկ շատ պարսիկներ, այդպիսիք չտրվեցին նաև մնացյալ հայերին: Նորջուղայեցիների (և միմիայն նրանց) արտո-

1 "Armenian Review". vol. XXIV, N 4, Boston, 1971.

նություններից էր հող և տուն ձեռք բերելու իրավունքը: Նրանց վերապահվեցին «խաս» իրավունքին վերաբերող բոլոր արտոնությունները:

Նոր Ջուղային շնորհվեց ներքին ինքնակառավարման կարգավիճակ: Ջուղայեցիներն իրենք էին ընտրում իրենց քալանթարին (քաղաքապետին), ինչպես նաև դատավորներին: Եթե հայերի միջև դատավեճ էր ծագում, նրանք դատվում էին իրենց դատարաններում: Թեև այդ իրավունքը տարածվում էր նաև բոլոր ոչ մահմեդականների վրա, տվյալ դեպքում բացառություն էր արվում՝ Սպահանի հայերի գործերի դատաքննությանը կարող էին նախագահել միայն Նոր Ջուղայի համայնքի ներկայացուցիչները և քալանթարը: Ջուղայեցիներն իրենց կրոնական պաշտամունքը կատարելու ազատություն ունեին, կարող էին եկեղեցու զանգերը հնչեցնել և կատարել կրոնական արարողությունները, մի բան, որից զուրկ էին Իրանի կրոնական մյուս փոքրամասնությունները: Նոր Ջուղայի տղամարդկանց և կանանց թույլատրվում էր կրել պարսիկների զգեստ, իսկ նրանց ավագներին՝ շքախումբ ունենալ: Մահմեդականներին չէր թույլատրվում բնակվել Նոր Ջուղայում[1]:

Իրանական իշխանությունները չէին միջամտում տեղի համայնքի ներքին գործերին: Քալանթարներն իրականացնում էին կապը Նոր Ջուղայի համայնքի և պաշտոնական ատյանների միջև: Նոր Ջուղայի քալանթարի իրավունքները Սպահանի այդ արվարձանի շրջանակներից ավելի հեռուն էին տարածվում: Նա էր նշանակում Սպահանի հայկական թաղամասերի և արվարձանների ավագներին, Սպահանի նահանգի հայկական գյուղերի տանուտերերին: Քալանթարը կատարում էր առևտրական կազմակերպությունների և միությունների ղեկավարմանը և կառավարմանը վերաբերող բոլոր պարտականությունները: Նա էր հավաքում հարկերը և դրանք անմիջականորեն շահին էր փոխանցում: Քալանթարը փաստորեն օգտվում էր շահի կողմից նրան արտոնած՝ Իրանի բոլոր հայերի «գլխավորի և իշխանի» լիազորություններից: Շահ Աբաս 1-ինը ջուղայեցիների վրա տարածեց մի շարք այն արտոնություններ, որոնք նա տակավին 16-րդ դ. վերջին մտցրել էր երկրի կենտրոնական նահանգները զարգացնելու նպատակով: Նա հարկերի մի մասը լրիվ վերացրեց, մյուս մասը զգալիորեն կրճատեց, իսկ երրորդը՝ ժամանակավորապես վերացրեց:

---

1 T a v e r n i e r B. The six voyages of Tavernier ... London, 1677, p. 616-627.

Նոր Ջուղայի վերնախավը՝ խոջաները և քալանթարները, մասնակցություն էին ունենում պետական գործերին՝ հաճախ հանդես գալով որպես շահի խորհրդականներ. նրա շքախմբում գտնվելով իրանական արքունիքի անդամների՝ օտարերկրյա ներկայացուցիչների հետ վարած բանակցությունների ժամանակ: Նրանք հաճախ իրենք էին ի պատիվ օտարերկրյա դեսպանների, հյուրերի և այլ անձանց ընդունելություններ կազմակերպում: Շրջանցելով շարիաթի կարգը՝ շահ Աբաս 1-ինը, ինչպես նաև նրա մերձակա ժառանգորդները առանձին հայերի շնորհում էին բարձր պաշտոններ պետական ապարատում: Այսպես, օրինակ, շահ Սեֆին 1639 թ. հրովարտակ հրապարակեց, որի համաձայն, հայազգի խոջա Մարջանը նշանակվեց երկրի ֆինանսական դերատեսչության գլխավոր կառավարիչ:

Վաճառականի անձի և նրա գույքի պաշտպանության համար, մի իրողություն, որ գլխավորապես հայերին էր վերաբերում, շահ Աբաս 1-ինը հատուկ հրովարտակ հրապարակեց. վաճառականին սպանողը մահապատժի էր դատապարտվում:

Ջուղայեցի վաճառականները կարևոր դեր էին խաղում որպես շահ Աբաս 1-ինի դիվանագիտական գործակալներ արտասահմանյան, մասնավորապես եվրոպական երկրներում: Տիրապետելով արևելյան և արևմտյան լեզուների, գիտենալով Եվրոպայի և Ասիայի սովորույթները, օտարերկրյա շրջանների հետ Իրանում և դրա սահմաններից դուրս կապեր պահպանելով՝ Նոր Ջուղայի վաճառականները կատարում էին շահի պատասխանատու հանձնարարությունները:

Սկզբնական շրջանում Իրան բռնագաղթեցված հայերի մի մասը բնակություն հաստատեց Սպահանի մի շարք թաղամասերում: Ժամանակի ընթացքում նրանցից շատերն այդ թաղամասերից փոխադրվեցին քաղաքին հարող շրջանները: Սպահանում հայերը շարունակեցին բնակվել միայն առանձին թաղամասերում, որոնցից առավել բնակեցվածը Թովրասական թաղամասն էր:

Սպահանի արվարձանները տեղափոխված հայերը ժամանակի ընթացքում իրենց համար տներ շինեցին, և այնտեղ 17-րդ դ. առաջին տասնամյակներին համակենտրոնացավ բավականին խոշոր թվաքանակով հայ բնակչություն: Նրանք բնակվում էին Շամսաբադում, Աբասա-

---

1 Տե՛ս Байбурдян В. Армянская колония Новой Джуги в XVII в. Ереван, 1969, с. 29—37.

բաղում, Գյաբրաբաղում և Շեյխ Բանայում: Ըստ եվրոպացի հեղինակների տեղեկությունների, այդ վայրերում, որտեղ հիմնականում բնակություն էին հաստատել շինականները և արհեստավորները, 17-րդ դ. առաջին երեսնամյակին հաշվվում էր մոտ 50 հազար հայ:

Հայ շինականների առաջին հանգրվանները Սպահանի նահանգում եղել են Լնջան և Ալինջան շրջանները: Հայ գյուղացիներին այնտեղ բնակեցնելու ժամանակաշրջանում հիմնադրվեց 17 գյուղ. 7-ը՝ Ալինջանում և 10-ը՝ Լնջանում: Այդ շեներից մեկը մինչև հիմա էլ Քեալե-Արմանի անվանումն է կրում:

Լնջանը և Ալինջանը, Փերիան և Զհարմհալը, Իրանի հարավի մի շարք այլ շրջաններում հայ շինականներին տարաբնակեցնելու կետեր էին:

Իրանի հարավային շրջաններում հայկական նոր շեների հիմնադրման պրոցեսն ընթանում էր երկու ուղղությամբ. Լնջան և Ալինջան շրջաններից դեպի հարավ և հարավ-արևմուտք՝ Զհարմհալի շրջանում, դրանցից դեպի արևմուտք՝ Փերիայի, Քեարվանդի, ինչպես նաև Բուրվարիի և Գյապայի շրջաններում:

Զհարմհալի շրջան. Ճանապարհազրկության և փոխադրամիջոցների բացակայության պատճառով հայ գյուղացիները չէին կարող Զհարմհալի, ինչպես նաև Փերիայի շրջաններում բնակություն հաստատել 1510 թ. ավելի վաղ[1]: Ժամանակի ընթացքում հայ գյուղացիները լրիվ հեռացան Լնջան և Ալինջան շրջաններից: Թեպետ հայկական առանձին գյուղեր այդ շրջաններում, օրինակ, Հռումթումանը՝ Լնջանում և Նորաշենը՝ Ալինջանում, շարունակում էին գոյատևել տակավին 17-րդ դ. 40–60-ական տարիներին:

1610 թ. հետո հայ գյուղացիները մի շարք գյուղեր հիմնադրեցին Զհարմհալի շրջանում: Առաքել Դավրիժեցին հիշատակում է դրանցից երկուսը՝ Գեանդումանը և Զախորը: Հարությունն Տեր-Հովանյանը տեղեկություններ է հաղորդում չորս այլ գյուղերի մասին, որոնք գոյություն ունեին 19-րդ դ. առաջին կեսին՝ Ահմադաբադ, Գիշնիգան, Մամուրան (Մաամրա) և Բոլդաջի: Ա. Եդգարյանի վկայությամբ, բնակեցման սկզբնական շրջանում այնտեղ կային նաև այլ հայկական շեներ: Դրանցից էին Ոստիգանը, Շալամզարը, Սուլուգանը, Զիվրիգանը և Ռաստովը:

---

1 Ե դ գ ա ր յ ա ն Ա վ. Իրանի Զհարմհալի գավառը. Թեհրան, 1963:

18-րդ դ. 20-ական թվականներին Իրան՝ աֆղանական ներխուժման ժամանակաշրջանում, տեղի ունեցավ հայ գյուղացիների տեղաշարժը դեպի Զհարմհալի, ինչպես նաև Փերիայի շրջանների արևմտյան մասերը: Զհարմհալի գյուղացիների բնակության վայրերը հետազոտած Լևոն Մինասյանը նշում է, որ այդ են վկայում տապանագրերը, որոնց ժամանակագրությունը սկսվում է 1720 թվականից: Նույն թվականով են ընդհատվում տապանագրերը նրանց բնակության նախկին վայրերում:

✓Փերիայի շրջան. Այս շրջանի տարածքում էին գտնվում 17-րդ դ. առաջին տասնամյակներից ի վեր Իրանի հարավային մասի հայկական առավել խիտ բնակեցված գյուղական բնակավայրերը: 17–18-րդ դդ. ընթացքում այն Իրանի գյուղական հայ բնակչության կենտրոնացման հիմնական վայրերից մեկն էր:

Հայ գյուղացիները՝ Լնջան և Ալինջան շրջաններից գաղթածները, Փերիայի գավառ են եկել, ամենայն հավանականությամբ, 17-րդ դ. առաջին կեսին: Նշված դարի 40-ական թվականներին Հազարջրիպ գյուղում հիմնադրվեց հոգևոր դպրոց: Հայերեն ձեռագրերի հիշատականները Հազարջրիպի մասին վկայում են 1651 թ.: 1659 թ. ձեռագրի հիշատակարանը տեղեկություններ է պարունակում այն մասին, որ այն տարիներին «սկիզբն արար շինել վանս Բուրվարու և Փէրիու համար»: 1651 թ. ձեռագրի հիշատակարանից երևում է, որ Բուրվարին, որտեղ այն ժամանակ 70 դերդաստան կար, Փերիայի գավառի գյուղերից մեկն էր: Վերը հիշատակված Թովրասական (բնագրում՝ Թօրվասական) թաղամասում 1654 թ. ստեղծված ձեռագրի ևս մի հիշատակարանում ասվում է, որ այդ ձեռագիրը նվիրվել է Սուրշկան գյուղի՝ Փերիայի գավառի հին գյուղերից մեկի եկեղեցուն:

Բուրվարիի, Գյապլայի, Քամարայի և Ղաջազի շրջանները. Հայերն այս շրջաններում բնակություն են հաստատել 17-րդ դ. առաջին տարիներին: Հայ շինականների առաջին գաղթօջախները այս վայրերում ստեղծվեցին սկզբնապես Բուրվարիի շուրջը, որը սահմանակից էր Փերիայի շրջանին: 19-րդ դ. կեսերին, Հարությունն Տեր-Հովանյանի տեղեկությունների համաձայն, Բուրվարիի մերձակայքում կար 22 հայկական շեն: Այդ շենները հայ գյուղացիներին Կենտրոնական Օստանի հարավային մասում և Լուրիստանի հյուսիս-արևելյան ծայրամասում՝ Գյապլա, Քամարա և Ղազազ շրջաններում տարաբնակեցման մեկնակետերն էին:

Համադան. Իրանի հնագույն այս քաղաքում (պատմական Եկբատանն է) հայերը բնակություն են հաստատել 1605 թվականին: Սակայն, աղբյուրների վկայությամբ, մինչև նրանց Համադան գալը դրա արվարձանում արդեն հայեր էին բնակվում: Նրանց կենտրոնը Շավար (Շավարին) գյուղն էր: Նորեկ հայերը բնակություն հաստատեցին Համադանի Ղալա (Կալա) թաղամասում:

Շիրազ. 1605 թ. Իրանի հարավում գտնվող այս քաղաքում վերաբնակեցվեցին 500 հայ գերդաստան: Առաքել Դավրիժեցու վկայությամբ, Շիրազում բնակեցված հայերին շահ Աբաս 1-ինը որպես «նվեր» տվել էր Շիրազի նահանգի նահանգապետ նշանակված իր զորահրամանատարներից մեկին: 18-րդ դ. այդ գաղթավայրը նկատելիորեն մեծացավ: Տեղի բնակչության մի մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ քաղաքի արվարձաններում:

17-րդ դ. առաջին տարիներին փոքր հայ համայնքներ առաջացան նաև Ղազվինում, Քուշանում և երկրի կենտրոնական նահանգների որոշ այլ քաղաքներում: Սակայն, ամենայն հավանականությամբ, նրանք այնտեղ երկար ժամանակ չեն մնացել:

Իրանի Հյուսիսի հայ համայնքները. 1639 թ., երբ, Իրանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի համաձայն, Իրանին վերջնականապես վերադարձվեցին նախկինում թուրքական զորքերի կողմից ռազմակալված իրանական հյուսիս-արևմտյան տարածքները, այնտեղ շարունակում էին գոյատևել, թեև վերագաղթեցումների հետևանքով զգալիորեն նոսրացած համայնքներ՝ Խոյում, Սալմաստում, Ուրմիայում, Ղարադաղում և այլ մարզերում: Հայ համայնք էր պահպանվել նաև Շամբում՝ Սբ. Ստեփանոսի վանքում:

Իր անկումն էր ապրում Մակվի հայ համայնքը: 1639 թ. պայմանագրի համաձայն, Մակվի ամրոցային կառույցները քանդվեցին: 1641 թ. ձեռագրի հիշատակարանում այդ մասին ասվում է. «Իսկ ի թուին Հայոց ՌՂ (1641) ամին, զոր հրաման արար շահ Ապազն (շահ Աբաս Բ – Հ. Մ.) քակել զամրոցն Արտազու և զեկեղեցին Ս. Նշանին...»[1]:

Ինչպես երևում է հիշատակարանի բովանդակությունից, Մակվի հայ համայնքը փաստորեն դադարել էր գոյություն ունենալ:

Թուրք-իրանական պատերազմի ժամանակաշրջանում քանիցս ավերածությունների ենթարկված Սբ. Թադեոսի վանքը հետագայում՝ 1650,

1 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 30:

1656 և 1691 թթ. վերանորոգվեց: Սակայն տեղի հայ համայնքն այնպես էլ չվերականգնվեց իր նախկին տեսքով: Վանքում մշտապես բնակվում էր վանականների և հոգևորականների սակավաթիվ խումբ:

Նշանակալից փոփոխություններ տեղի ունեցան նաև Թավրիզի հայ համայնքում: Քաղաքի հայ բնակչությունը, չնայած վերագաղթեցումներին, այնուամենայնիվ, պահպանում էր իր թվաքանակը մոտավորապես նախկին չափերով, քանի որ մշտապես համալրվում էր Հայաստանից և Այսրկովկասից, ինչպես նաև Իրանի այլևայլ վայրերից եկող հայերի հաշվին:

Շահ Աբաս 1-ինի օրոք վերագաղթեցումների ընթացքում, ինչպես արդեն նշվեց, առաջացան նոր հայ համայնքներ Իրանի հյուսիսում՝ Գիլան և Մազանդարան նահանգներում: Գիլան վերագաղթեցված հայերը սկզբնապես բնակություն հաստատեցին Լանգեռուդ, Լահիջան և այլ բնակավայրերում: Սակայն 17-րդ դ. երկրորդ կեսին նրանք համայնքներ ստեղծեցին Ռեշտում և Էնզելիում: Ռեշտում՝ Գիլանի նահանգի կենտրոնում և Էնզելիում՝ երկրի հյուսիսի գլխավոր նավահանգիստներից մեկում հայ ազգաբնակչության հաստատումը նպաստեց այդ ժամանակաշրջանում Իրանի և Ռուսաստանի միջև ծայր առած առևտուրը:

Այդ ժամանակ սակավաթիվ հայ համայնքներ կային նաև Գիլանին սահմանակից Մազանդարան նահանգում՝ մասնավորապես Ֆարհաբադում: Մազանդարանում բնակեցված 30 հազար հայ ընտանիքներից քառասուն տարի անց մնացել էր ընդամենը 400 ընտանիք:

* * *

1605–1606 թթ.՝ Սպահանում և մերձակա նահանգներում ու շրջաններում հայերին բնակեցնելու առաջին տարիներին, ստեղծվեց Սպահանի թեմը՝ Նոր Ջուղա կենտրոնով: Նոր թեմը իր հոգևոր իշխանությունը տարածեց Իրանի կենտրոնական և հարավային նահանգներում այդ ժամանակ առաջացած հայ համայնքների վրա:

Իրանում հայ նոր թեմի հոգևոր կենտրոնը դարձավ Ամենափրկիչ մայր տաճարը, որը կրում էր Հին Ջուղայում գոյություն ունեցած տաճարի անվանումը: Ինչպես վկայում է Առաքել Դավրիժեցին, շահ Աբաս 1-ինը հատուկ շահագրգռություն ցուցաբերեց Նոր Ջուղայում Ամենափրկիչ տաճարի շինարարության նկատմամբ: Նրա նպատակը «...հայոց նախաթոռի մասին բռնադաղթված հայերի հիշողությունը և

հարազատ վայրերը վերադառնալու հույսը վերացնելու համար «Նոր Էջմիածնի» ստեղծումն էր: Այդ նպատակով նա կարգադրեց Նոր Ջուղա տեղափոխել Էջմիածնի մայր տաճարի քարերը: Մի շարք պատճառներից ելնելով՝ շահը հարկադրված եղավ հրաժարվել այդ արտառոց դիտավորությունից: Սակայն քարերի առաջին խմբաքանակը՝ 15 քար, այնուամենայնիվ, բերվեց Նոր Ջուղա: Դրանք գտնվում են Սբ. Գևորգի եկեղեցում և դարձել են յուրօրինակ «սրբավայրը»:

1610–1659 թթ. ընթացքում Նոր Ջուղայում կառուցվեցին 18 հայկական եկեղեցական շինություններ, այդ թվում՝ երկու կուսանոց: Շահ Աբաս 1-ինը Նոր Ջուղայի հայերին շնորհեց իրենց սեփական գերեզմանատունն ունենալու իրավունք և նրանց ազատեց եկեղեցական հարկերից:

Սպահանի թեմի կառուցվածքը ստեղծվեց հիմնականում օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող «միլլիեթ» կարգավիճակի օրինակով: Տարբերությունն այն էր, որ հայ համայնքները ղեկավարելու իրավունքը շնորհվեց ոչ թե թեմական առաջնորդներին, այլ խոջաներին՝ աշխարհիկ անձանց: Վերջիններս, սակայն, իրենց իշխանությունը տարածում էին հայ ազգաբնակչության վրա՝ բարձր հոգևորականության հետ դաշնակցած:

Այդ ամենում դրսևորվեց Իրանի պետական կառավարման առանձնահատկությունը, որտեղ հոգևորականությունը շահի իշխանության հետ միասին մասնակից էր երկրի ղեկավարմանը: Շահ Աբաս 1-ինը խրախուսում էր տեղի հոգևորականությանը, քանզի գտնում էր, որ բազմացեղ Իրանի պայմաններում կենտրոնախույս ուժեղ միտումներ ունեցող երկրում միայն կրոնը, և այն էլ շիիտական դավանանքը, կարող էր հիմք ծառայել կոնսոլիդացման համար:

Իրանի հայ ազգաբնակչության դասակարգային և սոցիալական կազմը տվյալ ժամանակաշրջանում ծայր աստիճան անմիատարր էր: Տեղի հայ հասարակության մի բևեռում գտնվում էին Նոր Ջուղայի խոշոր վաճառականությունը և բարձր հոգևորականությունը, որոնք անմիջական կապեր ունեին շահի հետ, մյուսում՝ քաղաքների և գյուղական վայրերի միջին և չքավոր խավերը:

Հյուսիսային մարզերի՝ Արտազի, Պարսկահայքի, Շամբի, Ղարադաղի, Թավրիզի, Մարաղայի և այլ քաղաքների մերձակա շրջանների հայ ազգաբնակչությունը հիմնականում գյուղական բնակիչներ էին, բացառությամբ Թավրիզի, Սալմաստի, Խոյի և որոշ այլ քաղաքների, ո-

րոնց բնակիչներն ավանդաբար զբաղվում էին արհեստագործությամբ և առևտրով: Սեֆյան Իրանի և օսմանյան Թուրքիայի միջև պատերազմների հետևանքով համաշխարհային առևտրական կապերի խախտումը 17-րդ դ. առաջին կեսին հանգեցրեց այն իրողությանը, որ Իրանի հյուսիսային մարզերի հայ վաճառականները ներդրավվեցին գերազանցապես ներքին առևտրում:

Սպահանի նահանգի հայ շինականների ճնշող մեծամասնությունը, չունենալով իր վարելահողը, վարձակալության իրավունքով մշակում էր տեղի իրանցի կալվածատերերի՝ արքաների և ցեղապետերի հողերը: Գյուղացիների և հողատերերի միջև բերքը բաժանվում էր միջնադարյան հնգանդամ բանաձևի՝ վարելահող, ջուր, սերմացու, լծկան անասուն և բանող ձեռքերի հիման վրա: Վարելահող կամ ջուր, կամ սերմացու, կամ էլ հաճախ և մեկը, և մյուսը չունեցող գյուղացիները համապատասխանաբար ստանում էին բերքի կեսը, մեկ երրորդը կամ մեկ հինգերորդ մասը:

Սպահանի նահանգի հայ շինականների մի մասը բնակվում էր հայկական եկեղեցիներին և վանքերին՝ Նոր Ջուղայի Ամենափրկիչ մայր տաճարին և մի շարք այլ եկեղեցական հաստատություններին պատկանող հողերի վրա: Իրանի հյուսիսային մարզերի հայ գյուղացիների նման նրանք այդչափ ծանր բեռան տակ չէին, ինչպես տեղի կալվածատերերի հողերի վրա գտնվող գյուղացիները:

Ավանդորեն համեմատաբար լավ վիճակում էին գտնվում Փերիայի շրջանի հայ գյուղացիները, որտեղ մի շարք պատմական և տնտեսական պատճառների, մասնավորապես կենտրոնական նահանգների նկատմամբ պետության հովանավորիչ քաղաքականության, ինչպես նաև Նոր Ջուղայի հետ սերտ կապերի շնորհիվ հողատերերի թիվն ավելի մեծ էր, քան Իրանի մյուս հայ գաղթավայրերում: Նշենք, որ Փերիայի շրջանում էին գտնվում Նոր Ջուղայի հայկական եկեղեցիներին և վանքերին պատկանող հողային հիմնական տիրույթները:

Հայ ազգաբնակչության համեմատաբար բազմաթիվ շերտ էին արհեստավորները: Նրանք հիմնականում կենտրոնացված էին Նոր Ջուղայում, Սպահանում և դրա մերձակայքում: 17-րդ դ. տեղի համայնքներում տասնյակ մասնագիտությունների վարպետներ կային: Այնպիսի սովորական արհեստավորների հետ միասին, որպիսիք են գորգագործները, կաշեգործները, կոշկակարները, ժամագործները, հյուսները, ջուլհակները, դաջողները, դերձակները, մուշտակագործները, մսագործնե-

ը, սափրիչները, ոսկերիչները և արծաթագործները, Նոր Ջուղայում և Սպահանում կային թնդանոթագործի, զինագործի, կղմինդրագործի, կավճագործի, ձիապահի և այլ մասնագիտական զբաղմունքներ: Նոր Ջուղայի և Սպահանի բնակիչների շրջանում կային այսպես կոչված ազատ պրոֆեսիաների ներկայացուցիչներ՝ ուսուցիչներ, բժիշկներ, թարգմանիչներ, գեղանկարիչներ, երաժիշտներ և այլ մասնագետներ: Նշվում են նաև ծովայինների և զինվորների մասնագիտությունները:

Առանձնապես հարկ է նշել թարգմանչի մասնագիտությունը: Այն ժամանակ թարգմանիչ էին դառնում Նոր Ջուղայի երիտասարդները, որոնք սպասարկում էին եվրոպական ներկայացուցիչներին՝ առևտրական գործակալներին, գործարար անձանց, ճանապարհորդներին և այլոց: Երկրով ճանապարհորդելիս նրանց վերցնում էին իրենց հետ, և այդպիսի դեպքերում նրանք կատարում էին ոչ միայն բացատրողի, այլև էքսկուրսավարի պարտականություններ:

Նոր Ջուղայի հայ վարպետների արտադրանքը կազմում էր ներքին և արտաքին շուկաներն արտահանվող ապրանքների կարևոր բաժինը: Հատուկ համբավ էին վայելում ոսկերչական իրերը, մետաքսյա գործվածքեղենը, գորգերը և այլ ապրանքներ:

* * *

Իրանի 17-րդ դ. – 18-րդ դ. սկզբի հայ ազգաբնակչության առավել ունեևոր խավը վաճառականությունն էր: Իրանի և Հայաստանի վրայով անցնող տարանցիկ առևտրին մասնակցելու փորձը, շուկայի իրավիճակի իմացությունը հնարավորություն ընձեռեցին հայ վաճառականներին, հատկապես Նոր Ջուղայի վաճառականներին, արագորեն առևտրական գործունեություն ծավալել Իրանում և նրա սահմաններից դուրս: Շահ Աբաս 1-ինը սկսեց նրանց օգտագործել հում մետաքսն արտասահման, հիմնականում եվրոպական երկրներ, արտածելու համար: 1618 թ. Նոր Ջուղայի վաճառականները ձեռք բերեցին Իրանում հում մետաքսի առևտուր անելու մենաշնորհի իրավունք: 17-րդ դ. 30-ական թվականներին Իրանից տարեկան արտասահման էր արտածվում 20 հազար հակ հում մետաքս. յուրաքանչյուր հակի քաշը 276 գրվանքա էր:

Իրանի, այդ թվում նաև Նոր Ջուղայի հայերի առևտրական խավը համասեռ չէր: Նոր Ջուղայի առևտրականներն, օրինակ, տարաբաժանվում էին երեք շերտի. խոշոր վաճառականներ, մեծածախ առևտրականներ, որոնք ապրանքներ էին մատակարարում խանութներին և կրպակ-

ներին, և մանր խանութպաններ, որոնք տեղական առևտրով էին զբաղվում[1]: Նոր Ջուղայում կային վաթսունից ավելի վաճառականներ, որոնք 17-րդ դ. կեսերին ունեին 10 հազարից մինչև 100 հազար թուման դրամագլուխ: Նրանցից առավել հարուստներն էին Սաֆրազյանները, Լազարյանները, Շահամիրյանները, Վելիջանյանները, Խալդարյանները և ուրիշներ:

17-րդ դ. կեսին Նոր Ջուղայի խոշոր վաճառականները միավորվեցին Նոր Ջուղայի հայ առևտրական ընկերության մեջ, որ նպաստեն իրենց առևտրական գործարքների հետագա զարգացմանը և ամրապնդեն մրցունակությունն Իրան ներթափանցող եվրոպական առևտրական ֆիրմաներին դիմակայելու խնդրում: Այդ գործում նրանց սատարում էր շահ Աբաս 1-ինը: Ընկերությունը մի շարք երկրներում, մեծ մասամբ Եվրոպայում, ուներ իր մշտական ներկայացուցիչները և բաժանմունքները:

Նոր Ջուղայի վաճառականներն օգտվում էին այն ժամանակվա համաշխարհային առևտրի բոլոր երեք ուղիներից: Դրանցից մեկն անցնում էր դեպի Թավրիզ, Կարին, Հալեպ, Զմյուռնիա և այնտեղից ծովով՝ դեպի Վենետիկ և Մարսել: Մի այլ ուղի Թավրիզի, Կասպից ծովի, Աստրախանի, Մոսկվայի և Արխանգելսկի վրայով անցնում էր, դարձյալ ծովով, դեպի Հյուսիսային Եվրոպա: Երրորդ ուղին սկիզբ էր առնում Պարսից ծոցից՝ Բուշիր ու Բենդեր-Աբաս նավահանգիստներից և ծովային ճանապարհով, շրջանցելով Աֆրիկայի հարավը, ձգվում էր դեպի Եվրոպա: Հայ վաճառականներն այդ նավահանգիստներում ապրանքները հանձնում էին եվրոպացի առևտրականներին, որոնք դրա փոխարեն առաքում էին այլ ապրանքներ: Նրանք հաճախ, ճանապարհածախսը վճարելով, իրենք էին Եվրոպա մեկնում:

Նոր Ջուղայի հայ վաճառականները, իրենց հիմնական ապրանքից՝ մետաքսից զատ, բոլոր տեսակի այլ ապրանքներ էլ էին վաճառում: Հնդկաստանից և Ճավա կղզուց նրանք բերում էին բամբակյա գործվածքեղեն, անուշաբույր նյութեր, մուշկ, ճենապակի, փղոսկր, քրքում, վերնիճ, կոկոսի ձեթ և այլ ապրանքներ: Եվրոպայից Իրան ներմուծում էին գունավոր թավիշ, բամբակյա նուրբ գործվածքներ, բրդյա գործվածքեղեն, կապար, անագ, ժամացույցներ, ապակի, բյուրեղապակի, աշտանակներ, ինչպես նաև ոսկեդրամ և արծաթադրամ: Հայ վաճառա-

1 Տեր-Ավետիսյան Ս. Նոր Ջուղա քաղաք. Թիֆլիս, 1937:

կանները Ռուսաստան էին տանում բրինձ, անմշակ նավթ, մարգարիտ, թանկարժեք քարեր, իսկ այնտեղից բերում էին մորթեղեն, սաթ, մետաղյա իրեր և զենք:

Տեղի հայ հասարակության մեջ ազդեցիկ դիրք ուներ բարձր հոգևորականությունը: Այն սերտ կապեր ուներ Նոր Ջուղայի խոշոր վաճառականության հետ և օգտվում էր իրանական իշխանությունների հովանավորությունից:

Տակավին 1604 թ., նախքան Սպահանի թեմի ստեղծումը, շահ Աբաս 1-ինը հրովարտակով վավերացրեց Սբ. Ստեփանոսի վանքից մալ և ջիզյա հարկերը գանձելու կարգը: Հրովարտակի տեքստից երևում է, որ նրա հայրը՝ Մուհամեդ Խոդաբանդան, իր ժամանակին նույնպես վանքին շնորհել է փաստաթուղթ, որի համաձայն ճանաչվում էր վանքից հարկեր գանձելու՝ հնուց ի վեր սահմանված կարգը: 1631 թ. շահ Սեֆին, իր հերթին, վավերացրեց Սբ. Ստեփանոսի վանքից հարկեր գանձելու կարգը: Սբ. Թադեոսի վանքի իրավունքները վավերացվել էին շահ Թահմազ 1-ինի՝ 1562 թ. հրովարտակով:

Հովանավորիչ քաղաքականություն էր վարվում նաև նախկին հայ իշխանների՝ ավատատերերի նկատմամբ, որոնք գյուղացիական զանգվածի հետ 17-րդ դ. Իրան էին բռնագաղթեցվել: Հոգևոր աստիճան ստանալով, նրանք շահի կողմից քալանթարներ՝ գյուղապետեր էին նշանակվում:

* * *

Հայերի՝ Իրան վերագաղթեցնելու առաջին տարիներին նրանց նկատմամբ տարվում էր հարկային մեղմ քաղաքականություն: Սպահանի և մերձակա շրջանների հայ վերաբնակիչների վրա շահ Աբաս 1-ինը տարածեց այն արտոնությունները, որոնք շնորհված էին կենտրոնական նահանգների բնակչությանը տակավին 16-րդ դ. վերջին: Հայերը մեկ տարով ազատվեցին շահի գանձարանը հարկեր վճարելուց: Այդ վկայող Առաքել Դավրիժեցին նշում է, որ հայերն այնուհետև էլ նորից ազատվեցին հարկեր վճարելուց:

Երբ հարկերի վճարման տարկետումը վերջացավ, Իրանի հայ ազգաբնակչությունը վճարում էր երկրի համար ավանդական մալ հարկը, որը գլխահարկն էր՝ հիմնական տուրքն ունեցվածքից: Առաջին երեք

տասնամյակում հայերն այդ հարկի հաշվին վճարում էին մեկ մախալ (4,6 գրամ) ոսկի՝ յուրաքանչյուր չափահաս տղամարդու դիմաց:

Հայ վաճառականները պիտի վճարեին տասը տոկոս՝ որպես մաքս իրենց վաճառած բոլոր ապրանքների համար, երեսուն երեք տոկոս՝ իրենց վաճառած ամբողջ հում մետաքսի և հիսուն ոսկե թուման՝ յուրաքանչյուր հակ մետաքսի համար, որը նրանք վերցնում էին շահից: Դրանից զատ, Նոր Ջուղայի հայերը վճարում էին հիսուն թուման ամենամյա տուրք՝ որպես քաղաքային և դրոշմատուրք՝ նավահանգիստներից օգտվելու համար:

Ա. Բաուսանի՝ «Պարսիկները» գրքի հեղինակի հաշվարկների համաձայն, Նոր Ջուղայի հայերը շահին որպես հարկեր էին վճարում այն ժամանակվա համար վիթխարի գումար՝ տարեկան 500 թուման: Միևնույն ժամանակ եվրոպացի և իրանցի մասնագետներն այն կարծիքին են, որ հայ վաճառականների վճարած մաքսատուրքերը ցածր, նվազագույն էին, եթե նկատի ունենանք առևտրական գործարքների հսկայական շրջանառությունները և դրանցից ստացված եկամուտները:

Հայ շինականները և արհեստավորները, ինչպես և Իրանի հիմնական մահմեդական բնակչությունը, վճարում էին տուրքեր բերքի, անասունների, հողից, ջրից օգտվելու իրավունքի, որպես վարկ վերցրած դրամագլխի, ինչպես նաև իրենց գիլդիաների համար:

Շահ Աբաս 1-ինի վարած հարկային քաղաքականությունն, այդ թվում նաև հայերի նկատմամբ, ինչ-որ ձևով տակավին պահպանվել էր նրա մերձավոր հետնորդների՝ Շահ Սեֆիի (1629–1642) և Շահ Աբաս 2-րդի (1642–1666) ժամանակներում: Սակայն շահ Սուլեյմանի (1666–1694) օրոք, Սեֆյանների դինաստիայի ընդհանուր թուլացման պայմաններում, Իրանի հայ ազգաբնակչության վրա բարդվեցին նոր, ավելի բարձր հարկեր: Երկրի հյուսիսային մարզերում, որտեղ հայերից հարկ վճարող 5 հազար 100 մարդ կար, մալ հարկը կազմում էր երեք թուման և 595 դինար: Հարկային այդ ծանրության արձագանքներն իրենց արտացոլումն են գտել այն ժամանակվա հայերեն ձեռագրերի հիշատակարաններում: Այսպես, Գրիգոր գրիչը 1641 թ. Սպահանում ստեղծած իր ձեռագրի հիշատակարանում նշում է, որ իր ստեղծագործությունն ավարտել է «Ի դառն (և) ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց...»: Նույնպես սպահանցի Վահրամ գրիչը 1651 թ. ձեռագրի հիշատակարանում, գրեթե կրկնելով իր դոր-

ծընկերոջ ասածը, ավելացնում է. «Նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց և ի սովութենէ հացի»[1]:

Հարկային բեռի ծանրացման հետ մեկտեղ սաստկացան Իրանի հայ ազգաբնակչության դեմ կրոնական հալածանքները: Հատկապես հաճախակի դարձան հայերի, ինչպես նաև մյուս ոչ մահմեդական կրոնական փոքրամասնությունների բռնի մահմեդականացման դեպքերը:

Հայ գյուղացիներին զանգվածաբար մահմեդականացնելու փորձեր ձեռնարկվեցին Սպահանի նահանգի շրջաններում: 1621 թ. այդօրինակ փորձ արվեց նաև Սպահանում: Երեց Հայրապետ գրչի ստեղծած ձեռագրում պարզաբանվում են այդ «միջոցառման» որոշ մանրամասնություններ. «Մինչ այսպիսի տառապանք կայր, որ զքրիստոնեայք նեղէին, թէ պարտքն այսաւր տուէք կամ տաճկացէք: Եւ զայն տեսեալ աստուածասէր, հեզահոգի և բարէմիտ ստացող սբ. Աւետարանիս ուսթայ պարոն Մարտիրոսն, և ոչ կարեաց հանդուրժել նոցա, այլ եդ զանձն իւր ի մահ, և գնաց ի դուռն թագաւորին, և համարձակ խօսեցաւ ընդ ոզիրս, ընդ տարողսն, և ընդ մեծամեծս և ասաց. «Մեք կարողութեամբ Աստուծոյ տամք զպարտք թագաւորին և ոչ տաճկանամք»: Եւ նոքա լուռ եղան: Եւ ազատեաց ի դրանէ թագաւորին աւելի քան զՅ (300) անձինս, և դարձան այր և կին, ծեր և տղայ ուրախութեամբ ի տունս իւրեանց...»[2]:

Շահ Աբաս 1-ինի հայերին ազատ արձակելու որոշման վրա ազդեց այն հանգամանքը, որ բռնի մահմեդականացման փորձի մասին լուրը հասել էր արտասահման: Իմանալով, որ հայ վաճառականներն իրենց կարավաններով կանգ են առել Փոքր Ասիայում և Եվրոպայում, շահը հասկացավ իր սխալը: Նա կանչեց խոջա Սաֆարին Նոր Ջուղայի քալանթարին և նրան խոստացավ հետ այսու այդօրինակ գործողություններ չձեռնարկել:

Սահմանափակվում էին հայերի իրավունքներն ընտանեկան-ժառանգական բնույթի գործերը շարիաթի դատարաններում քննարկելիս: Բանը երբեմն հասնում էր այնտեղ, որ դատավորները հայերին, հատկապես հայ շինականներին, ներկայացնում էին նվաստացուցիչ պահանջ-

1 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 18, 425:
2 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ 570:

ներ, որոնք վիրավորում էին վերջիններիս կրոնական զգացմունքները և մարդկային արժանապատվությունը[1]:

Շահ Սուլեյմանի և շահ Սուլթան Հուսեինի օրոք հայերի դեմ կրոնական հալածանքները սաստկանում են, հաճախակի են դառնում նրանց բռնի մահմեդականացման փորձերը: Հայերին հարկադրում էին փակել եկեղեցիները, նրանց արգելում էին զանգերը հնչեցնել (վերջիններս փոխարինվեցին փայտե տախտակներով): Նոր Ջուղայի բնակիչները հարկադրված էին փակել իրենց որոշ վանքեր:

16-րդ դ. վերջին քառորդից և հատկապես 17-րդ դ. երկրորդ կեսից սկսած եվրոպական կաթոլիկ միսիաները վերսկսվեցին, 14-րդ դ. ընդհատված, իրենց ներթափանցումն Իրան: Այդ միսիաները ներկայացնում էին դոմինիկյան, օգոստինոսականների, կնգուղակիրների, ճիզվիտների և կարմելիտների ուխտերը: Ինչպես և անցյալում, նրանց քարոզչական գործունեության հիմնական օբյեկտներից մեկը, ասորի-նեստորականների, հակոբիկյանների և այլոց հետ մեկտեղ, դարձավ տեղի հայ ազգաբնակչությունը:

Կաթոլիկ միսիոներներն իրենց քարոզչությունը ծավալեցին Նոր Ջուղայում, Սպահանում, Համադանում, Շիրազում, Թավրիզում և այլ վայրերում: Միսիոներների քարոզչական գործունեության գլխավոր օբյեկտն էր Նոր Ջուղայի համայնքը՝ հայկական կապիտալի այն ժամանակվա հիմնական կենտրոններից մեկը:

Կաթոլիկ միսիաներին, հատկապես կնգուղակիրներին և ճիզվիտներին, որոնք գտնվում էին Ֆրանսիայի թագավորի հովանավորության ներքո, ինչպես նաև կարմելիտներին, որոնք օգտվում էին Հռոմի պապի հովանավորությունից, հաջողվեց կաթոլիկ դավանանքի դարձնել Նոր Ջուղայի խոշոր վաճառականության մի մասին: Կաթոլիկություն ընդունեցին այն վաճառականները, որոնք սերտ կապեր ունեին Եվրոպայի կաթոլիկ երկրների, հատկապես Ֆրանսիայի հետ: Նոր Ջուղայի հայ կաթոլիկ համայնքի պարագլուխն էր խոշոր վաճառական Շահրիմանյանը, որն առևտրական բաժանմունքներ ուներ Եվրոպայի մի շարք երկրներում:

Կաթոլիկ միսիաների գործունեության դեմ հանդես է գալիս Նոր Ջուղայի խոշոր վաճառականության հիմնական խումբը, որին գլխավորում էր խոջա Նազարը: Այդ խումբը պայքար էր մղում Իրանում հայ

---

1 Տե՛ս Հ. Փ ա փ ա զ յ ա ն, Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ. պրակ 1 (15–16-րդ դդ.). Երևան, 1956, պրակ 2 (1601–1650 թթ.), Երևան, 1959:

ազգային եկեղեցու ավանդույթները պահպանելու համար: Խոշոր վաճառականները՝ հայկական միջավայրում կաթոլիկության ներթափանցման հակառակորդները, այդ նպատակներով օգտվում էին շահի հետ ունեցած կապերից: Ֆալսաֆիի՝ շահ Աբաս 1-ինի կենսագրի պնդմամբ, շահը հայերին ծածուկ թելադրում էր հաստատուն մնալ իրենց դավանանքին:

Արևմտյան կաթոլիկ միաբանությունների միսիաների գործունեությունն աշխուժացավ 17-րդ դարի վերջին և 18-րդ դ. սկզբին: Այս անգամ միսիոներները ձգտում էին օգտագործել տեղի հայ բնակչության քաղաքական և տնտեսական անկայուն վիճակը՝ Իրանի տնտեսության ճգնաժամի, պատերազմների և երկապառակությունների պայմաններում: Նրանց հաջողվեց կաթոլիկ դարձնել Նոր Ջուղայի և երկրի որոշ այլ քաղաքների բնակիչների ինչ-որ մասին:

Իրանահայության շրջանում կաթոլիկության տարածման դեմ հանդես էին գալիս հայ ազգաբնակչության միջին և ստորին խավերը՝ արհեստագործները, քաղաքի չքավորությունը, մանր վաճառականները և առևտրականները: Շահ Սուլթան Հուսեինը հայ հոգևորականության պահանջով Նոր Ջուղայից նույնիսկ վտարեց միսիոներներին՝ կարմելիտներին: Կաթոլիկական պրոպագանդայի դեմ կիրառվեցին դիմակայության գաղափարական տարբեր եղանակներ: Լեոյի պատկերավոր արտահայտությամբ, կաթոլիկ միսիոներների դեմ պայքարելու անհրաժեշտությունը հարկադրեց հայ հոգևորականությանը գրքեր հրատարակել:

* * *

Զգալով Սեֆյանների իշխանության թուլությունը, աֆղանները՝ երեկվա նրանց վասալները, ներխուժեցին Իրան և շուտով մոտեցան Սպահանին: Շահ Սուլթան Հուսեինի խորհրդականները նրան հուշեցին խարդախ ծրագիր՝ աֆղաններին որպես փրկագին հանձնել Նոր Ջուղան: Մնալով հակառակորդի հետ երես առ երես՝ հայերը հարձակվեցին աֆղանական ջոկատների վրա: Ընդսմին, նրանք սկսեցին պարսկերեն բառեր գոչել՝ ձևացնելով պարսկական բանակը: Որոշ ժամանակ նրանց հաջողվեց պաշտպանել Նոր Ջուղան, բայց ի վերջո քաղաքն ընկավ: Աֆղաններն այնուհետև պաշարեցին Սպահանը և հարկադրեցին նրա բնակչությանը հանձնվել: Սուլթան Հուսեինը գահից հրաժարվեց Մահմուդի՝ աֆղանների պարագլխի օգտին:

Ներխուժելով Նոր Ջուղա՝ աֆղանները հայերից պահանջեցին 120 հազար թուման՝ նրանց կյանքից չզրկելու համար: Այնուհետև գումարն իջեցվեց մինչև 70 հազար թուման: Հայերը չէին կարող այդպիսի գումար ժողովել, և Մահմուդը իր զորքին հրամայեց քաղաքը կողոպուտի ենթարկել: Կողոպտված ավարի թվում կար 62 աղջիկ: Նրանցից ոմանք փրկագնվեցին:

Աֆղանների՝ Իրան կատարած արշավանքից հետո Նոր Ջուղայի դերը վերջնականապես ընկավ, Սպահանի նման, որը կորցրեց երկրի մայրաքաղաքի իր կարևորությունը: Նոր Ջուղայի բնակիչների զգալի մասը՝ գերազանցապես նրա հարուստ և ունևոր խավը, աստիճանաբար սկսեց լքել քաղաքը, մեկնելով տարբեր ուղղություններով. Բուշիր նավահանգստի վրայով՝ Հնդկաստան, Բասրայի վրայով՝ դեպի Կովկաս և Ռուսաստան: Կովկաս և Ռուսաստան վերադաղթեցին նաև Ռեշտի և Էնզելիի հայերի բազում ընտանիքներ: Հայերի մի մասը, առավելապես միջին և ստորին խավերի ներկայացուցիչները, տեղափոխվեցին Իրանի հյուսիսային մարզերը, որ ավելի մոտ լինեին Հայաստանին:

Աֆղանների կողմից գրված Իրանից հայ գաղթականների հիմնական հոսանքն ուղղվեց դեպի Հնդկաստան՝ Իրանին առավել մոտ գտնվող առևտրական կենտրոնը: Այնտեղ դեռևս 17-րդ դ. սկզբին կար փոքրաթիվ հայ գաղութ:

Աֆղանների դեմ պայքարը գլխավորեց աֆշար ցեղի պարագլուխ Նադիրը, որն ազատագրեց Իրանը օտարերկրյա նվաճողներից և դարձավ շահ (1736–1747 թթ.): Նա հաղթեց երկիր ներխուժած թուրքերին: Այնուհետև, գրավելով Աֆղանստանը, Բելուջստանը, Այսրկովկասը, Հյուսիսային Կովկասի (Դաղստան) և Միջին Ասիայի (Խիվա, Բուխարա) մի մասը, Նադիր շահը ստեղծեց խոշոր տերություն:

Նադիր շահն ամբողջությամբ առած լոյալ վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ, որոնք նրա դաշնակիցներն էին թուրքերի դեմ մղած պայքարում: Չնայած այդ իրողությանը՝ նա 1746 թ. Նախիջևանից Խորասանի նահանգ վերաբնակեցրեց հազար հայ գերդաստան: Թեև, Աբրահամ Կրետացու վկայությամբ, նրանցից շատերն այնուհետև փրկագնվեցին:

Նադիր շահը, որը հովանավորում էր հայ եկեղեցուն և սերտ կապեր ուներ կաթողիկոս Աբրահամ Կրետացու հետ, Սբ. Թադեոսի վանքին շնորհեց վակֆի իրավունք:

Նադիր շահի սպանությունից հետո նրա հաջորդը՝ շահ Ադիլ Աշրաֆը, 1748–1749 թթ. հրովարտակով հաստատեց Սբ. Թադեոս վանքի՝ վակֆի իրավունքը: Սակայն շահ Մահմեդ Կաջարի (1786–1797) արշավանքների ընթացքում Սբ. Թադեոսի վանքը նոր ավերածությունների ենթարկվեց:

Իրանահայերի զգալի մասի՝ Հնդկաստան վերաբնակվելու հետևանքով Սպահանի թեմը վերանվանվեց Իրանա-Հնդկական թեմ: Թեմի կենտրոնն էր Նոր Ջուղան:

Իրանա-Հնդկական թեմի ստեղծումով էլ ավելի հստակ դարձավ Իրանի հայ բնակչության՝ երկու թեմական կազմավորման բաժանվելը: Սիմեոն Երևանցու տեղեկությունների համաձայն, 18-րդ դ. 70–80-ական թվականներին Իրանում կային, այսպես կոչված, նվիրակության մարզեր՝ հարավում Նոր Ջուղա կենտրոնով և հյուսիսում՝ Թավրիզ կենտրոնով: Հյուսիսային մարզերի թվին էին պատկանում նաև Գիլանի և Մազանդարանի նահանգների համայնքները:

14-րդ դ. երկրորդ կեսից Իրանի հայ գաղթավայրերի մշակութային կյանքում, ինչպես և ամբողջապես վերցրած Ասիայի երկրներում, անկման ժամանակաշրջան հաստատվեց: Իրանահայերի մշակույթի նոր վերելք տեղի ունեցավ 17-րդ դ.: Իրանահայերի մշակույթը, որն իր մեջ էր ներառել իրանական ժողովրդի մշակույթի լավագույն նմուշները, յուրօրինակ լրացում հանդիսացավ հայ մշակույթի համար, սակայն այն ընդհանրապես և ամբողջությամբ առած պահպանեց իր ազգային դեմքը:

17-րդ դ. սկզբին իրանահայերի մշակութային հիմնական կենտրոն դարձավ Նոր Ջուղան: 1633 թ. Ամենափրկիչ մայր տաճարին առընթեր թեմի առաջնորդ, գաղութի մշակութային նշանավոր գործիչ Խաչատուր Կեսարացին ստեղծեց դպրոց-սեմինարիա, որը պատմական որոշ վավերագրերում «Համալսարան» է անվանվում:

Խաչատուր Կեսարացին իր սանների հետ մեկտեղ 1639 թ. հիմնադրեց տպարան, որն, ինչպես գտնում են պատմաբանները, իր տեսակի մեջ անդրանիկն էր: Իրանում 1641 թ. լույս տեսան գաղութում և Իրանում առաջին տպագիր «Սաղմոս ի Դաւիթ», «Հարանց վարք» և այլ գրքեր: Այդ գրքերն ստեղծողներից մեկը Խաչատուր Կեսարացու սան Հովհաննես Ջուղայեցին էր, որը տպագրական գործը սովորել էր Իտալիայում: 17-րդ դ. 40–80-ական թվականների ժամանակահատվածում Նոր Ջուղայում տպագրվեցին նաև այլ գրքեր:

Այդ տարիներին Նոր Ջուղայում գործում էր մայր տաճարի դպրոցը, որը գլխավորում էր վարդապետ Կոստանդ Ջուղայեցին: Այնտեղ ուսուցանում էին եվրոպական և արևելյան լեզուներ, իսկ հիմնական դիսցիպլինների դասավանդումն ուներ առևտրատնտեսագիտական թեքում: Վարդապետ Կոստանդը ստեղծել էր հատուկ ձեռնարկ՝ «Հաշվեմատյան», որը բովանդակում էր ապրանքների գնացուցակներ, տարբեր երկրների տնտեսության և առևտրի վերաբերյալ տվյալներ, տեղեկություններ դրամական միավորների, չափերի և կշիռների և այլ այդօրինակ պարագաների մասին: Կոստանդ Ջուղայեցին «Աշխարհաժողով» գրքի հեղինակն է, որի ձեռագիրը պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում:

Բնիկ Նոր Ջուղայեցի էր 18-րդ դ. հայտնի հայ պատմաբան Խաչատուր Ջուղայեցին, որը գրել է «Պատմութիւն Պարսից» աշխատությունը: Այդ գիրքը նա գրել է 1779 թ.:

Ժամանակի հայ գիտնականներից աշխարհիկ գիտելիքներ մասսայականացնողներից մեկն էր Սիմեոն Ջուղայեցին (Սիմեոն Հռետորը), որը նշանավոր քերականագետ և փիլիսոփա էր: Սիմեոնը եղել է Խաչատուր Կեսարացու սանը, սովորել է նաև Էջմիածնում: Նոր Ջուղա վերադառնալուց հետո դասավանդում էր, այսպես կոչված, աշխարհիկ գիտություններ, ստեղծեց քերականության վերաբերյալ մի շարք աշխատություններ: Այնուհետև, գտնվելով Էջմիածնում, գրքեր գրեց տրամաբանության և իմաստասիրության վերաբերյալ: Մահացել է 1657 թ.:

Վարպետ Ոսկանը (Ոսկան Երևանցին) ծագումով սպահանցի էր, հայ լուսավորության և տպագրության նշանավոր գործիչ: Ծնվել է 1614 թ.: Սովորել է Խաչատուր Կեսարացու մոտ, այնուհետև Էջմիածնում: 60-ական թվականներին Հակոբ Ջուղայեցու կողմից ուղարկվել է Ամստերդամ, որտեղ Ոսկանի եղբայրը տպարանի համատեր էր: Այնտեղ 1668 թ. Ոսկանը իրականացրեց Աստվածաշնչի շքեղ հրատարակությունը հայերեն: 1669 թ. նույնպես Ամստերդամում լույս տեսավ Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը»: Ոսկանը նույն տարում հրատարակել է եւ 18 գիրք: Նա հայերեն գրքեր է տպագրել նաև Լիվոռնոյում: Եվրոպայում Ոսկանի գործունեությունը Էջմիածնի ձեռնարկած միջոցառումներից մեկն էր, որն ուղղված էր Իրանում հայ ազգաբնակչության շրջանում կաթոլիկ միսիոներների ծավալած քարոզչության դեմ:

Իրանում հայ ճարտարապետության 17-րդ դ. հուշարձան է Ամենափրկիչ տաճարը: Տաճարի շինարարությունը սկսվել է 1606 թ.: Դրա

առաջին կառույցը եղավ Ամենափրկիչ եկեղեցին: 1654 թ. եկեղեցին ավերվեց, և դրա տեղում 9 տարվա ընթացքում կառուցվեց Սբ. Հովսեփի տաճարը՝ մայր եկեղեցու հիմնական կառույցը: Այնուհետև կառուցվեցին թեմական առաջնորդարանի շենքը և զանգակատունը:

Շահ Աբաս 1-ինը կարգադրեց տեղի իրանցի ճարտարապետներին և վարպետներին օգնել հայերին տաճարի շինարարության գործում: Հետագայում նմանօրինակ օգնություն ցուցաբերվեց Նոր Ջուղայում հայկական այլ եկեղեցիների շինարարության գործում: Դա բացատրվում է նրանով, որ հայազգի վարպետներն, ավանդաբար գործ ունենալով քարի հետ, ծանոթ չէին հում աղյուսով շենքեր կառուցելու մեթոդին:

Ամենափրկիչ տաճարը, ինչպես նաև Նոր Ջուղան ամբողջապես, պահպանում է միջնադարի դիմագծերը: Այն շրջապատված է բարձր պարսպով, նրա տարածքն ունի մեկ մուտք՝ կամարածածկ անցումը: Տաճարի գմբեթն ավելի նման է մզկիթի գմբեթի, որն, ինչպես ենթադրում են, պիտի շեղեր հիմնական բնակիչների՝ մահմեդականների ուշադրությունը: Իսկ զանգակատունը կառուցված է կաթոլիկական ոճով՝ ճակատին աշտարակային ժամացույցով հանդերձ: Տաճարն ունի երկու սրահ՝ բարձր կամարներով հանդերձ: Նրա ներսի պատերը և առաստաղը ծածկված են յուղաներկ նկարներով, որոնք պատկերում են աստվածաշնչային ասքերի տարբեր անցքեր:

Նոր Ջուղայում է նաև Բեթղեհեմի եկեղեցին, որը կառուցվել է 1627–1635 թթ. ընթացքում: Այն ունի մեծ գմբեթ, որը խարսխված է շենքի հյուսիսային և հարավային կողմերի պատերից վեր խոյացող սյուների վրա: Նրա ներսում չկան հենասյուներ: Եկեղեցին ներսից ամբողջապես պատված է որմնանկարներով:

Իրենց ճարտարապետական լուծումներով և ձևերով ուշագրավ են նաև Նոր Ջուղայի ուրիշ շատ եկեղեցիներ: Շիրազում եկեղեցին կառուցվել է 1662 թ.: Ուշագրավ են առաստաղի վրա կատարված զարդանկարները: Դրանք նկարված են յուղաներկով և նախշազարդված են գորգի նմանողությամբ: Եկեղեցին վերակառուցվել է 1816 թ.:

Նոր Ջուղայի հայերի շրջանից են սերում մի խումբ նշանավոր գեղանկարիչներ և մանրանկարիչներ: Մի շարք ուշագրավ գործեր է ստեղծել մանրանկարիչ Հակոբ Ջուղայեցին: Դրանց թվին են պատկանում «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» մանրանկարը, ինչպես նաև Աստվածաշնչի զարդանախշումը, որն արված է 1610 թ.: Մի-

նաս ծաղկողը որմնանկարներով զարդանախշել է շահ Աբաս 1-ինի՝ Սպահանում գտնվող պալատը, Նոր Ջուղայի եկեղեցիները և հայ վաճառականների տները: Գեղանկարչության արվեստը Մինասը սովորել է Հալեպում, ոմն «ֆրանկից»: Վերադառնալով Սպահան՝ նա զբաղվում է ոչ միայն որմնանկարչությամբ, այլև դիմանկարչությամբ: Ենթադրվում է, որ Նոր Ջուղայում գտնվող Բեթղեհեմի եկեղեցու պատերի և առաստաղի որմնանկարները պատկանում են Մինասի վրձնին: Հովհաննես Մրկուզը կատարել է Ամենափրկիչ եկեղեցու պատերի և առաստաղի զարդանկարները: Շատ բան անձամբ զարդանկարելով՝ նա, ինչպես կարծում են մասնագետները, հրավիրել է նաև եվրոպացի վարպետների, և տաճարի զարդանկարներում նկատելի է այն ժամանակվա գեղանկարչության հոլանդական և իտալական դասական դպրոցների ազդեցությունը: Նոր Ջուղայից էր սերում նաև Բոգդան Սալթանովը (Աստվածատուր Սուլթանյանը)՝ պղնձե տախտակի վրա կերտած «Խորհրդավոր ընթրիքի» հեղինակը: Այդ ստեղծագործությունը ռուս ցար Ալեքսեյ Միխայլովիչին նվիրեց Նորջուղայեցի խոջա Զաքարիա Սահրադյանը 1660 թվականին: Հետագայում Բոգդան Սալթանովը դարձավ Մոսկվայի Զինապալատի նկարիչը:

Իրենց դպրոցը ստեղծած Նոր Ջուղայի նկարիչները հայ գեղանկարչության պատմության մեջ առաջին քայլը կատարեցին միջնադարյան գեղանկարչությունից դեպի ժամանակակից գեղանկարչություն:

Հայ գրչության կարևոր օջախներից մեկն էր Նոր Ջուղան 17-րդ դ. և 18-րդ դ. սկզբին: Այնտեղ ստեղծվում էին բազում ձեռագրեր: Դրանցից առավել արժեքավորներն են 1627 թ. ձեռագիրը՝ «Գիրք Սողոմոնի առակացն և երկոտասան մարգարէից», «Բանք Սողոմոնի, թուղթք Պողոսի կաթողիկոսի և այլն» (1641 թ.), 1664 թ. ստեղծված և շքեղորեն պատկերազարդված Աստվածաշունչը: Նոր Ջուղայի ձեռագրական օջախում ստեղծագործում էին բազում նշանավոր գրիչներ և ծաղկողներ: Այդ ձեռագրերի մի մասը, բացի Ամենափրկիչ տաճարից, պահպանվում են Նոր Ջուղայի այլ եկեղեցիներում, ինչպես նաև տեղացի մասնավոր անձանց մոտ: Նոր Ջուղայում ստեղծված ձեռագրերի զգալի մասը պահպանվում է աշխարհի տարբեր գրապահոցներում՝ Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (մոտ 200 ձեռագիր), Երուսաղեմում, Վենետիկում, Վիեննայում, Լոնդոնում, Բեռլինում, Փարիզում և այլուր:

Նոր Ջուղայում պահպանվում են նաև բազում ձեռագրեր, որոնք ստեղծվել են այլ վայրերում: Դրանք հիմնականում Էջմիածնում, Խոր վիրապում, Հաղպատում, Տարոնում, Բաղեշում և այլուր ստեղծված ձեռագրեր են: Գրչության կենտրոն էր նաև Սպահանը, ավելի ճիշտ՝ հայերով բնակեցված դրա արվարձանները: Առավել մեծ թվով ձեռագրեր են արտագրվել Թովրասական (Մարունան) արվարձանում, որտեղ ողջ 17-րդ դ. ընթացում ապրել և ստեղծագործել են գրչության բազում վարպետներ: Դրանցից մի քանիսը պահպանվում են Նոր Ջուղայի ձեռագրերի հավաքածուներում: Հայերը գրչությամբ զբաղվում էին նաև Իրանի այլ քաղաքներում և շեներում:

17-րդ դ. 30–40-ական թվականներից սկսած՝ ձեռագրեր ստեղծվեցին նաև Իրանի հյուսիսում գտնվող գրչության հին օջախներում՝ Սալմաստում, Խոյում և Մակվում: Մի քանի ձեռագրեր ստեղծվեցին Խաֆտվանում՝ Սալմաստի մարզի այն ժամանակվա ամենամեծ շենում, ինչպես նաև տեղի մի այլ՝ Ղալասար շենում: Առանձին ձեռագրեր են ստեղծվել Խոյի մարզի Մահլազան գյուղում, Արտազի մարզի Անձուկ գյուղում, Մակվում:

* * *

Իրանի հայկական գաղութը 19-րդ դ. սկզբին բաղկացած էր Ատրպատականի թեմից, որի կենտրոնն էր Սբ. Թադեոսի վանքը, և Իրանահնդկական թեմից՝ Նոր Ջուղա կենտրոնով:

Սուրբ Թադեոսի վանքի դերը, ճիշտ է կարճ ժամանակով, մեծացավ 19-րդ դ. հենց սկզբին: Դա պայմանավորված էր ռուս-պարսկական պատերազմների դիվանագիտական նախապատրաստումով: Ատրպատականի թեմի այն ժամանակվա առաջնորդ, արքեպիսկոպոս Սիմեոն Բզնունին, որը պարսկամետ կողմնորոշում ուներ, շահի գահի ժառանգորդ՝ Իրանի Թավրիզ նստավայրով հյուսիսային նահանգների փոխարքա Աբաս Միրզայի բարոյական և նյութական աջակցությամբ ձեռնարկեց վանքի տարածքում նոր տաճարի շինարարությունը: Այդ ձեռնարկման քաղաքական նպատակը «Նոր Էջմիածնի» ստեղծումը և, հետևաբար, նոր կաթողիկոսի նշանակելն էր՝ հայոց եկեղեցու կաթողիկոսությունը ռուսական, ինչպես նաև թուրքական ազդեցությունից զերծ պահելու համար: Այդ փորձը ձախողվեց, և 1820 թ. Սիմեոն Բզնունին հարկադրված եղավ լքել վանքը:

8

20–30-ական թվականներին գաղութը նոր վերափոխումների ենթարկվեց: Թուրքմենչայի՝ 1828 թ. պայմանագրից հետո, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցելու շնորհիվ, Իրանի հյուսիսային նահանգներից ավելի քան 50 հազար հայեր վերաբնակվեցին Երևանի և Նախիջևանի մարզերում: 1833 թ. Ատրպատականի թեմի կենտրոնը Սբ. Թադեոսի վանքից, որը գրեթե մնացել էր առանց իրեն շրջապատող հայկական շենների, փոխադրվեց Թավրիզ: Այդ ժամանակվանից է սկզբնավորվում Թավրիզի թեմը, որն ավանդաբար կոչվում էր նաև Ատրպատականի թեմ:

19-րդ դ. երկրորդ կեսին գաղութը հետագա վերափոխումների ենթարկվեց: Հայ գաղթավայրերի նոր օջախներ ստեղծվեցին Մեշխեդում, Քերմանշահում և այլ վայրերում: 20-րդ դ. սկզբին՝ Իրանում նավթի դարաշրջանի արշալույսին, հայկական համայնքներ առաջացան նաև երկրի բուն հարավում՝ Աբադանում, Ահվազում, Մեսջեդ-Սուլեյմանում, Աղա-Ջարիում և այլուր:

Այդ ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական մի շարք պատճառների հետևանքով Իրանի հարավային և հյուսիսային նահանգների հայ ազգաբնակչության մի մասը ստեղծեց կամ համալրեց Թեհրանի, Սուլթանաբադի (ներկայիս՝ Արակի), Ղազվինի, Ռեշտի, Էնզելիի, Կարադանի շրջանի, ինչպես նաև մի քանի այլ քաղաքների և շրջանների հայ բնակավայրերի օջախները:

19-րդ վերջին – 20-րդ դարի սկզբին Զղարմահալի և Փերիի շրջաններում ստեղծվեցին հայկական նոր շեներ: 19-րդ դ. կեսերին Փերիայի շրջանում կար 22 հայկական շեն: 1919 թ., ինչպես վկայում են մարդահամարի տվյալները, այնտեղ կար 27 հայկական գյուղ՝ 12130 շունչ բնակչություն ընդհանուր թվաքանակով: 20-րդ դ. սկզբին Զղարմահալի շրջանում կար 11 հայկական գյուղ: Շրջանի հայազգի բնակչությունը 1917 թ. հաշվվում էր 4272 շունչ:

Համեմատաբար երիտասարդ էր Թեհրանի հայ համայնքը, դրա լինելիությունը կախված էր Թեհրանի՝ որպես երկրի մայրաքաղաքի աճից ու զարգացումից: Թեհրանը մայրաքաղաք դարձավ 18-րդ դ. երկրորդ կեսին: Սակայն ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը այն շարունակում էր մնալ ոչ ավելի, քան երկրորդական կարգի քաղաք:

Հայերը Թեհրանում սկսեցին բնակություն հաստատել 18-րդ դարում: Սակայն մինչև 19-րդ դ. վերջը այնտեղ բնակվում էր ընդամենը

մոտ 1000 չունչ հայ: Իրենց մեծամասնությամբ նրանք բնակվում էին Դարվազե շահ Աբդուլ Ազի թաղամասում՝ առանձին շրջանում, որը ցարդ կրում է Մհալե արմանի անվանումը: Հայերը այնուհետև բնակություն հաստատեցին Դարվազե Ղազվին թաղամասում: Աստիճանաբար հայկական գերդաստաններ հաստատվեցին Դարվազե Դովլաթի թաղամասում, Հասանաբադում և այլուր: 1918–1921 թթ. քաղաքի հայազգի բնակչությունն ավելացավ Միջագետքից և Վան-Վասպուրականից փախստականների, ինչպես նաև Կովկասից եկածների հաշվին: 19-րդ դ. վերջին առաջին հայ վերաբնակիչները հայտնվեցին Արակ քաղաքում: 20-րդ դ. սկզբին տեղի հայ համայնքի նշանակությունն այնքան մեծացավ, որ այն դարձավ մերձակա չորս շրջանների՝ Ղազազի, Կամարի, Գյապլայի և Բուրվարիի կենտրոն, շրջանների, որոնք նախկինում միտում էին դեպի Համադան և Մալայիր: Դրան նպաստեց Արակի՝ այն ժամանակի Իրանի առևտրական կենտրոններից մեկի դիրքը: Քաղաքի հայ բնակչությունը բաղկացած էր տարբեր վայրերից եկածներից, որոնք այդտեղ էին եկել հայ ձեռնարկատերերին պատկանող գորգագործական ֆաբրիկաներում, ինչպես նաև հայ վաճառականների առևտրական տներում աշխատելու համար:

19-րդ դ. երկրորդ կեսին Ղազվինը նույնպես սկսեց բնակեցվել հայերով՝ հիմնականում Նոր Ջուղայից, Համադանից, Թավրիզից եկած ընտանիքների, ինչպես նաև Սպահանի նահանգի գյուղացիների հաշվին: Նրա հայազգի բնակչությունը հետագայում ավելացավ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ղազվինում կար 1,5–2 հազար հայ:

* * *

19-րդ դ. երկրորդ կեսին սահմանադրական միապետության և անձի իրավունքների մասին Իրան ներթափանցած գաղափարների ազդեցության ներքո շահի կառավարությունը հրապարակեց մի շարք փաստաթղթեր, որոնք վերջ դրեցին կրոնական հատկանիշով արվող սահմանափակումներին, արգելեցին բռնի մահմեդականացման պրակտիկան: Այդ գաղափարների շնորհիվ, ինչպես նաև Ռուսաստանում հաստատված «1836 թ. Կանոնադրության» և Թուրքիայում հռչակված 1863 թ. «Հայ ազգային սահմանադրության» ազդեցությամբ միջոցներ իրագործվեցին աշխարհիկ անձանց տեղական թեմերի ղեկավարությանը մասնակից դարձնելու ուղղությամբ:

20-րդ դ. սկզբին գաղութում մշակվեցին թեմական նոր կանոնադրություններ: Այդ կանոնադրությունների համաձայն, կազմավորվեցին ներկայացուցիչների ժողովներ՝ ընտրովի մարմիններ, որոնք թարմացվում էին որոշակի հաջորդականությամբ: Դրանք դարձան թեմերի յուրատեսակ բարձրագույն օրենսդիր մարմիններ: Դրանց թեմական խորհուրդներ ընտրելու իրավունք տրվեց, որոնք հանդես էին գալիս որպես բարձրագույն գործադիր մարմիններ:

Թեմական խորհուրդները բաղկացած էին աշխարհիկ անձանցից: Խորհրդի նախագահն էր թեմի առաջնորդը: Նա ուներ իր հոգևորական տեղակալը, որի պարտականությունն էր խորհրդի նիստերի աշխատանքներին մասնակցելը, իսկ թեմական առաջնորդի բացակայության դեպքում վերջինիս փոխարինել թեմական խորհրդի նախագահի պաշտոնում: Համայնքային խորհրդի նախագահն էր տեղի քահանան: Թեմերի առաջնորդներին ընտրում էին թեմական խորհուրդները, հաստատում էր Էջմիածնի կաթողիկոսը:

Իրանական պետությունը ճանաչում էր գաղութի թեմական կանոնադրությունը, իսկ թեմական առաջնորդների ընտրությունը և նշանակումը կատարվում էին իրանական իշխանությունների գիտությամբ ու համաձայնությամբ:

Թավրիզի թեմն իր թեմական կանոնադրությունը մշակել է 1901 թ.: Թավրիզի թեմական խորհրդի բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ այն, հյուսիսային մարզերի հայ գաղթավայրերը ղեկավարելուն զուգընթաց, իրականացնում էր նաև Թավրիզ քաղաքի գործադիր ժողովի և դրանից բխող մարմինների պարտականությունները:

Իրանա-հնդկական թեմն իր կանոնադրությունը մշակել է 1909 թ.: Ստեղծված լինելով 1905–1911 թթ. իրանական հեղափոխության տարիներին, այն իր վրա կրում էր երկրի կյանքում նոր հովերի դրոշմը: Դրա շնորհիվ տեղական համայնքային մարմիններն ավելի մեծ իրավունքներից էին օգտվում, քան, ասենք, հյուսիսային շրջաններում:

Հայերի դարավոր սովորույթների և հայոց եկեղեցու կանոնների համաձայն, գաղութի թեմական մարմիններն ունեին ընտանեկան և ժառանգական մի շարք գործեր տնօրինելու իրավունք. ամուսնություն, ամուսնալուծություն, որդեգրում, ժառանգելու, կտակելու և այլ խնդիրներ:

18-րդ դ. վերջին – 19-րդ դ. սկզբին Իրանում ուժեղացան կենտրոնախույս միտումները: Փերիա, Զղարմահալ, Կատվան, Գյապլա շրջաննե-

րի, ինչպես նաև հյուսիսային մարզերի՝ Սալմաստ, Ուրմիա և այլ վայրերի հայկական գյուղերը «կովախնձոր» դարձան շահական իշխանության և տեղական ավատատերերի միջև: Հայկական գյուղերի քալանթարները ըստ ամենայնի դիմադրում էին հայ գյուղացիների, հայկական գյուղերի և շրջանների վրա իրենց գերիշխանությունը հաստատելու նրանց փորձերին: Լինելով պետությունից հետո հայ գյուղացիների երկրորդ տերերը՝ տեղի ավատատերերը հանդես էին գալիս կենտրոնական իշխանության կողմից, ձգտելով իրենց կողմը գրավել տեղի գյուղացիներին: 1854 թ. Նասրեդին շահը, ընդառաջելով Իրանահնդկական թեմի առաջնորդ, եպիսկոպոս Թադևոս Բեկնազարյանի միջնորդությանը, Նոր Ջուղայից գանձվող հարկը երեք տարով պակասեցրեց 150 թումանի չափով և Փերիա շրջանից գանձվող հարկը նվազեցրեց 300 թումանով: 1855 թ. նա վերացրեց Իրանի հյուսիսում հայ շինականներից գանձվող մի շարք տուրքեր, վերացրեց Թավրիզում և Թեհրանում բնակվող հայերից գանձվող հարկերը, օրինականացրեց հայոց եկեղեցիների տիրույթները, իրականացրեց մի շարք միջոցառումներ տեղի հայերի օգտին:

Չնայած կենտրոնական իշխանության ջանքերին, Զղարմահալը 1872 թ., այնուամենայնիվ, միակցվեց տեղի ավատատերերի՝ բախտիարական խանների տիրություններին: 19-րդ դ. վերջին պետական հողատիրությունն Իրանում արգելակում էր արտադրական ուժերի զարգացմանը: Առևտրադրամական հարաբերությունների՝ աճը, երկրի ներքաշումը միջազգային փոխանակության ոլորտ հանգեցրին հողերի համակենտրոնացմանը մուլքադարների՝ խոշոր կալվածատերերի, վաճառականների, ազդեցիկ խանների և ցեղապետերի ձեռքին: Այդ պրոցեսի ընթացքում հայ շինականների, ինչպես նաև Իրանի գյուղացիների մեծամասնությունն, ամբողջապես վերցրած, զրկվեց հողերից, իսկ քալանթարները՝ իրենց երբեմնի իշխանությունից: Սալմաստում, օրինակ, տեղի ավատատերերը յուրացրել էին տասնյակ գյուղեր, այդ թվում՝ զուտ հայ ազգի բնակչության այնպիսի շեներ, որպիսիք էին Սավրան, Բայաջուկը, Մայլամը և այլք: Զղարմահալում կալվածատերերը 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին դարձան տեղի հայ գյուղացիների լիիրավ տերերը: Նրանց հողերը մասամբ գնեցին, մի մասն էլ ուժով զավթեցին:

Խոշոր հողատերերի ձեռքում հողի համակենտրոնացման ընթացքում հայերի հարուստ խավերը նույնպես միտում էին իրենց օգտագործման համար հողեր ձեռք բերել: Այդօրինակ փորձերից մեկը կատարեցին

Թումանյանների առևտրական տան ներկայացուցիչները: Նրանք սկսեցին հողամասեր գնել Ղարադաղում: Սակայն պատերազմը և տան հետագա սնանկացումն ի չիք դարձրին այդ փորձը:

Հայ գյուղացիության՝ տեղի հայ ազգաբնակչության ճնշող մասի աղքատացմանը զուգընթաց, իրանահայերի մի այլ մասի ձեռքում կուտակվում էր հարստություն: Վ. Մինորսկին, որը 1904 թ. այցելել է Սալմաստում և Խոյում գտնվող հայ բնակավայրերը, նշել է. «Կան ոչ միայն մի քանի վաճառականներ, որպիսիք են Բուդաղովը, Մանասարովը..., Արզումանովը, որոնք ամեն տարի հարյուր հազարավոր ռուբլիների գործեր են անում Ռուսաստանի հետ, այլև նրանց հետևից գալիս են միջին կարողության տեր առևտրականների մի ամբողջ զանգված, որոնց առևտրական գործերը կայուն և լուրջ հիմքերի վրա են դրված»:

Իրանում հայազգի ձեռնարկատերերի կազմավորումը հատկապես ցայտուն երևում է Թումանյանների առևտրական տան օրինակով: Նրանց նախապապ Մելիք Սարգիսը տակավին 1785 թ. Ղարադաղի իրենց Ոգան գյուղում հիմնադրել էր երկաթեղենի արտադրություն, որտեղ այլ ապրանքների հետ մեկտեղ պատրաստում էր պայտեր, որոնք լայն պահանջարկ էին վայելում: Նրա Թուման որդին պայտերը և երկաթյա իրերը, ինչպես նաև մետաքսը (բոժոժները) տարել է Թավրիզի շուկա: Իր Հարությունն որդու հետ միասին նա զբաղվել է նաև արտահանման և ներմուծման առևտրով: Աստիճանաբար Թումանյանների առևտրական տան բաժանմունքներ բացվեցին Իրանի հյուսիսային շատ քաղաքներում, ինչպես նաև Թեհրանում և կենտրոնական նահանգների մի շարք վայրերում: Իրանի սահմաններից դուրս այդպիսիք բացվեցին Երևանում, Թիֆլիսում, Աստրախանում, Բաքվում, Աստարայում և Մոսկվայում: Հոր մահից հետո Հարությունը իր ավագ որդուն նշանակեց Մոսկովյան բաժանմունքի կառավարիչ, մյուս որդուն՝ Բաքվում, իսկ կրտսերին՝ Մարաղայում: Անձամբ ինքը չորրորդ որդու՝ Սիմոնի հետ գործեր էր վարում Թավրիզում: Մարաղայում նրանք մթերում էին չիր արտահանության համար, Մերձկասպյան շրջաններում բնափայտի արժեքավոր տեսակներ էին մշակում:

19-րդ դ. վերջին գերդաստանի ներկայացուցիչներից մեկը բնակություն հաստատեց Մոսկվայում: Հարությունի երկու որդիները, որ ապրում էին Իրանում, փոխադրվեցին Բաքու: Նրանք ռուսահպատակ դարձան: Ընդհանուր առմամբ Թումանյանների տունն ուներ 40 բանկային գրասենյակ–բաժանմունք Իրանում և 10-ն էլ Ռուսաստանում:

Գործող գրասենյակներ կային նաև Կոստանդնուպոլսում, Լոնդոնում, Բեռլինում, Բրյուսելում և Ստոկհոլմում: Ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի վերջը Թումանյանների առևտրական տունը կատարում էր Իրանական կառավարության բանկային գործառնությունները: Թումանյանների տունը սնանկացավ 1917 թ. Ռուսաստանում կատարված հեղաշրջումից հետո:

Իրանում հայ ձեռնարկատերերը ստեղծեցին նաև մանր ձեռնարկություններ: Այսպես, 19-րդ դ. 90-ական թվականներին Էնզելիում կար կերոսին թորելու գործարան: Այն պատկանում էր Ծատուրյաններին և Գրիգորյաններին: Սարգևար և այլ քաղաքներում հայերը հիմնադրեցին բամբակազտիչ գործարաններ: Սուլթանաբադում (Արակում) ստեղծվեցին Կարագյոզյանների, Տելֆեյանների, Թավթանջյանների և այլոց առևտրական տներին պատկանող գորգագործական ձեռնարկություններ: 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին հայերը փոքր ֆաբրիկաներ և գործարաններ հիմնադրեցին նաև Ղազվինում, Թավրիզում, Մարաղայում և այլ վայրերում:

* * *

Իրանում առաջավոր գաղափարների ազդեցության և Կովկասում ու Ռուսաստանում հայ ազգային-ազատագրական շարժման ներգործության շնորհիվ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին գաղութում առաջացան մի շարք հասարակական կազմակերպություններ: Գործում էին բարեգործական ընկերություններ և միություններ:

1890 թ. Թավրիզում ստեղծվեց «Թավրիզի և Լիլավ թաղամասի կանանց միությունը»: Այն դարձավ Թավրիզում նոր կազմակերպությունների՝ «Կանանց Ատրպատականի բարեգործական ընկերության» և «Կանանց Թավրիզի բարեգործական ընկերության» ստեղծման նախատիպը: Երկու ընկերություններն էլ հիմնադրվել են 1895 թ.: Ընկերությունները մեծ օգնություն ցույց տվեցին դպրոցներին և տեղի հայ բնակչության չքավոր խավերին, ինչպես նաև փախստականներին: 1899 թ. «Կանանց Թավրիզի բարեգործական ընկերությունը» քաղաքում բացեց մանկապարտեզ Իրանում այդօրինակ առաջին հաստատությունը: 1901 թ. հիշյալ ընկերությունները միաձուլվեցին «Կանանց Թավրիզի միացյալ ընկերության» մեջ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թավրիզում ստեղծվեց կանանց մի այլ կազմակերպություն «Կարմիր խաչ» ընկերությունը:

Կազմավորման ժամանակի առումով դաղութում երկրորդը «Կանանց բարեգործական միությունն» է, որ հիմնադրվել է 1892 թ. Նոր Ջուղայում: Այն ղեկավարում էր «Կատարինյան» որբատունը: 1915 թ. Նոր Ջուղայում ստեղծվեց նաև կանանց «Կարմիր խաչ» միությունը: Նոր Ջուղայում կանանց մի այլ կազմակերպություն՝ «Մայրերի միությունը», առաջացավ 1918 թ.:

Կանանց առաջին կազմակերպությունների թվին է պատկանում նաև «Կանանց Ռեշտի հայ բարեգործական ընկերությունը», որ հիմնադրվել է 1899 թ.:

Դաղութի հասարակական հին կազմակերպություններից մեկն է «Հայ կանանց Թեհրանի բարեգործական ընկերությունը»: Ընկերությունն իր կազմակերպման ձևավորումը ստացել է 1907 թ.: Դրա գործունեությունը ծավալվել է 1913 թ.: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ընկերությունն օգնություն էր ցուցաբերում դպրոցներին և փախստականներին:

19-րդ դ. վերջին Իրանում սկսեցին ստեղծվել նաև «Հնչակ» և «Հայ հեղափոխական դաշնակցություն» հայ ազգային կուսակցությունների առաջին բջիջները: Լինելով արևմտահայերի ունևոր խավերի ներկայացուցիչներ, ռամկավար ազատականները կայուն դիրքեր չկարողացան գրավել իրանահայերի շրջանում:

Առավել կամ նվազ ակտիվ գործունեություն ծավալեցին տեղի հնչակները 1910 թ., Թավրիզում իրենց տպագիր օրգանի՝ «Զանգ» թերթի լույս տեսնելուց հետո: 1918 թ. այնտեղ սկսեց հրատարակվել նաև նրանց մի այլ թերթ՝ «Պայքարը»: Այդ թերթը գոյատևեց մոտ մեկ տարի և փակվեց 1919 թվականին:

Հայ հեղափոխական դաշնակցության առաջին բջիջներն Իրանում առաջացել են 19-րդ դ. 90-ական թվականներին, սկզբում՝ Սալմաստ, Մակու, Խոյ մարզերում, այնուհետև՝ Գիլան և Մազանդարան նահանգներում, Թավրիզ, Թեհրան, Նոր Ջուղա և այլ քաղաքներում: 20-րդ դ. սկզբին դաշնակցականների կազմակերպություններ ստեղծվեցին նաև Ուրմիա և Ղարադաղ մարզերում, Մարաղա, Համադան, Ղազվին և այլ քաղաքներում: Մինչև 1911 թ. այդ բջիջները, հանձինս տեղական կոմիտեների, ենթարկվում էին «Վրեժ» («Դավրեժի»՝ Թավրիզի կրճատված ձևը) կենտրոնական կոմիտեին: Հետագայում Իրանի դաշնակցականները Թեհրանի «Շահ» կոմիտեն վերափոխեցին «Շահաստան» կենտրոնական կոմիտեի:

19-րդ դ. Իրանի հասարակական կյանքում տեղի ունեցած վերափոխումների հետևանքներից մեկը հայերին երկրի պետական և վարչական ապարատում ծառայելու հնարավորություն ընձեռելն էր: 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին տեղի հայերի ներկայացուցիչների մի ամբողջ խումբ շահի արքունիքում, Իրանի մինիստրություններում և գերատեսչություններում զբաղեցնում էր կարևոր պաշտոններ:

Հայերի այդ խմբի մեջ էր Հովհաննես խան Մասեհյանը: Իր ծառայությունը սկսելով որպես արքունի թարգմանիչ՝ Հովհաննես Մասեհյանը 1901 թ. դարձավ Բեռլինում Իրանի դեսպանի խորհրդական, այնուհետև՝ գործերի հավատարմատար, իսկ 1912 թ.՝ Գերմանիայում Իրանի դեսպան: 1927 թ. նա նշանակվեց Իրանի դեսպան Անգլիայում, իսկ 1930 թ.՝ Ճապոնիայում:

Այդ ժամանակաշրջանում մի շարք մինիստրությունների համակարգում ծառայության մեջ էին Սեթ խան Աստվածատուրը (Ծատուրը), Հովհաննես խան Ազչալյանը, Դավիթ խան Դավթյանը: Շահի արքունիքում աշխատում էին հայազգի բժիշկներ, ոսկերիչներ և այլ մասնագետներ:

Իրանում դիվանագիտական թարգմանիչների պարտականություններ էին կատարում նաև Ենիկոլոպյան նշանավոր գերդաստանի ներկայացուցիչները՝ Մանուչար խանը, Միրզա-Ռոստոմը, Ափալար խանը, Սուլեյման խանը և այլք:

Իրանահայերից էր սերում նաև Մալկոմ (Մելքոմ) խանը՝ Նասրեդդին շահի անձնական համհարզը և նրա թարգմանիչը: 1858 թ. նա հիմնադրեց «Ադամնիյաթ» («Մարդկայնություն») ընկերությունը կամ, ինչպես այն ոչ պաշտոնապես անվանում էին «Ֆարամուշխանե» («Մոռացության տուն»)՝ եվրոպական մասոնական ժողովարանի պարսկական ինչ-որ տարբերակը: Նրա կոնցեպցիան էր. կրոնական հատկանիշով ստեղծված և ժողովրդապետության սկզբունքների վրա խարսխված սահմանադրությունը:

Մելքոմ խանի գործունեությունը նպաստեց իրանական հասարակության առաջադեմ մասի ինքնագիտակցության զարթոնքին: Նա առաջադրեց պառլամենտ հիմնադրելու, Ազգային բանկ ստեղծելու պահանջները: Իրենց դարն ապրած կարգերի իր քննադատությամբ Մելքոմ խանն օբյեկտիվորեն իրականացնում էր Իրանում բուրժուական հեղափոխության գաղափարական նախապատրաստումը:

* * *

Հանուն սահմանադրության շարժման ձևով 1905 թ. դեկտեմբերին Իրանում սկսված հեղափոխական պայքարին մասնակցություն ունեցան ինչպես տեղի, այնպես էլ Կովկասից եկած հայերը: Նրանց մեջ կային այն ժամանակվա համարյա բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները՝ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատներ և այլք: Նրանք հաճախ միասին էին հանդես գալիս, կազմելով հայկական ջոկատների հիմնական կորիզը:

Սահմանադրական շարժմանը հայերի մասնակցությունն առանձնապես ցայտուն դրսևորվեց Թավրիզի ապստամբության մեջ: 1908 թ. հունիսի 23-ին Թեհրանում տեղի ունեցած հակահեղափոխական հեղաշրջումից հետո նրանք օգնության խնդրանքով դիմեցին իրանցի և կովկասցի հեղափոխականներին:

Այլոց զուգընթաց, հեղափոխությանը մասնակցելու վերաբերյալ իր դիրքորոշումը սահմանեց նաև Հայ հեղափոխական դաշնակցության իրանական կազմակերպությունը, որն այն ժամանակ գաղութում առավել ազդեցիկ էր: 1906 թ. աշնանը դաշնակցության տեղական կոմիտեներն արտահայտվեցին հեղափոխությանը մասնակցելու օգտին: 1907 թ. փետրվարին Վիեննայում կայացած Հայ հեղափոխական դաշնակցության 4-րդ համագումարը որոշում ընդունեց իրանական սահմանադրական շարժմանը մասնակցելու վերաբերյալ: Կուսակցության այն ժամանակվա լիդերներից մեկը՝ Ռոստոմը (Ստեփան Զորյանը) 1907 թ. վերջին – 1908 թ. սկզբին բանակցություններ վարեց Իրանական մեջլիսի սահմանադրականների ներկայացուցիչների հետ՝ քննարկելով օգնություն ցուցաբերելու պայմանները[1]:

1908 թ. սեպտեմբերին Երևանում 35 մարտիկից բաղկացած ջոկատ կազմավորվեց Քեռու (Արշակ Գաֆաֆյանի) գլխավորությամբ: Հոկտեմբերի սկզբին ջոկատն անցավ Թավրիզ: Ջոկատն առաջին անգամ ռազմական գործողություններին մասնակցեց Ջուղա-Թավրիզ ճանապարհի վրա գտնվող Սարանդի համար մղված կռիվներին: Հաղորդակցության հատկապես կարևոր հանգույց Սարանդը գրավելու համար Թավրիզից ջոկատ ուղարկվեց, որի կազմում էր գտնվում Թավրիզցի հայերի մի խումբ, իսկ ուղեկցորդները Մուժամբար գյուղի հայ շինականներն էին: Քանի որ այն ժամանակ կառավարության կողմնակիցնե-

1 Տես Էլմար Հ. Եփրեմ, Թեհրան, 1964:

րի նպատակը հայերին շարժումից, այդ թվում սպառնալիքների միջոցով, հեռացնելն էր, ապա և օգտագործվեց ստեղծված առիթը՝ Սարանդի վրա արշավանքին Թավրիզի և Մուժամբարի հայերի մասնակցությունը: Տեղի ավատատերերի հրոսակախմբերը մոտեցան Մուժամբարին: Նախապես զգուշացված լինելով, Քեռու ջոկատից տասը մարտիկ Հրաչի (Պապաշայի) հրամանատարությամբ Թավրիզից եկան գյուղ: Գյուղը պաշտպանելու համար ոտքի ելավ նաև չինականների մի խումբ: Պաշարվածներին հաջողվեց մի շարք հարձակումներ հետ մղել, սակայն երեկոյան մոտ նրանք հարկադրված եղան, փամփուշտների պակասության պատճառով, բնակչությանը ժողովել եկեղեցում և վերջին մարտին նախապատրաստվել: Հրոսակախմբերը հարձակվեցին եկեղեցու վրա, բայց նրանց դիմավորեցին մարտիկների նախապատրաստած ռումբերի պայթյունները: Հարձակվողները նահանջեցին եկեղեցուց և, երկյուղ կրելով, որ պաշարվածներին Թավրիզից օգնության կարող են դալ, հեռացան մոտակա լեռները:

1909 թ. փետրվարին Քեռու ջոկատից Սամադ խանի հրոսակախմբերի թիկունքն ուղարկված մի խումբ մարտիկներ նրանց հարկադրեցին նահանջել:

Քեռու ջոկատը մնում է Թավրիզում մինչև այն պահը, երբ, օգտվելով քաղաքում սկսված սովից, Ռուսաստանի և Անգլիայի կառավարություններն այնտեղ ռուսական զորք մտցրին:

1908 թ. վերջին սահմանադրական շարժման վերելք նկատվեց նաև Գիլանում: Սահմանադրականների նպատակը Իրանում հեղափոխական նոր օջախ ստեղծելն էր՝ Թավրիզից կառավարական զորքի մի մասը հեռացնելու համար:

*Բաքվից Ռեշտ ժամանած հեղափոխականները կապ հաստատեցին իրանցի հեղափոխականների և դաշնակցական տեղի «Դիլյան» կոմիտեի հետ, որի ղեկավարն էր Եփրեմ Դավթյանը** *: 1909 թ. հունվարին հեղափոխականների միացյալ խումբը հարձակվեց Դարխանեի նահանգապետի պալատի վրա: Դարխանեի համար մղված մարտն ավարտվեց հեղափոխականների հաղթանակով:*

---

* *Եփրեմ Դավթյանը սերում է Ելիզավետպոլի նահանգի Բարսամ գյուղի գեղջկական ընտանիքից: 1890 թ. մտել է Կուկունյանի խմբի մեջ և թուրքական սահմանն անցնելիս ընկերների հետ միասին բռնվել է կազակների կողմից: 1899 թ. խմբի անդամները աքսորվեցին Սախալին: Եփրեմը կապմակերպեց փախուստ այնտեղից: Անլուր զրկանքներ կրելով, մի խումբ ընկերների հետ Սիբիրի վրայով հասավ Աստրախան: Այնտեղից նա փոխադրվեց Իրան:*

Ապստամբությունից երկու օր հետո Ռեշտ եկավ Սեփեհդարի՝ դիլանցի խոշոր կալվածատիրոջ, իրանական ծնունդ առած բուրժուազիայի ներկայացուցչի պատվիրակը՝ նրանց հետ դաշնության մեջ մտնելու առաջարկով: Ապստամբներին Սեփեհդարի հարելը հեղափոխությանն ամբողջապես բուրժուակալվածատիրական բնույթ հաղորդեց:

Հունվարի[1] վերջին հեղափոխականների հեծյալ ջոկատը Թեհրանի ճանապարհով Ռեշտից շարժվեց դեպի Ղազվին: Ճանապարհին այն սկսեց արագ համալրվել և շուտով դարձավ մի փոքր բանակ՝ 1,5 հազար շունչ թվաքանակով: Ապրիլի 21-ին, Ղազվինը շրջանցելով Թեհրանի և Ռեշտի ճանապարհների կողմից, այդ բանակը, որին միացան նաև Ղազվինի հեղափոխականները, գրավեց Ղազվինը:

Հունիսի կեսերին Ռեշտի և Ղազվինի հեղափոխականները սկսեցին շարժվել դեպի Թեհրան: Այդ ժամանակ շարժմանը հարեցին Իրանի հարավում նաև բախտիարյան խաները՝ Սարդար Ասադի գլխավորությամբ: Թեհրանի վրա արշավանքին բախտիարների մասնակցությունը, որոնք գրավել էին Սպահանը, այդ փուլում օբյեկտիվորեն նպաստեց հեղափոխության զարգացմանը:

Ղազվինցիներից բաղկացած հարվածային զորախումբը գլխավորեց Եփրեմը, որն ազդեցիկ դեմք էր դարձել հեղափոխական հրամանատարության բոլոր գործերում:

Հունիսի 29-ին բախտիարները միացան հեղափոխական բանակին Իրանական մայրաքաղաքի մատույցներում: Սակայն հարձակվողները հասկանում էին, որ ճակատային գրոհով անհնարին է քաղաքը գրավել: Այդ պայմաններում որոշվեց Թեհրան մտնել գաղտնի ճանապարհով: Թեհրան մուտք գործելու գաղափարը և պլանը պատկանում էին Եփրեմին[1]: Պլանի համաձայն, Եփրեմի ջոկատի և բախտիարների զորքի միացյալ ուժերը հունիսի 29-ի լույս 30-ի գիշերը աննկատ անցան կառավարական զորքերի դիրքերի միջով, շրջանցեցին Թեհրանը արևմուտքից և հյուսիսային՝ Յուսուֆաբադյան դարպասներով մուտք գործեցին քաղաք: Մի քանի օր Թեհրանում ընթանում էին համառ մարտեր, սակայն հակառակորդի ուժերն ի վերջո խորտակվեցին: Հունիսի 5-ին Մուհամմեդ Ալի շահը գահընկեց եղավ: 1906–1907 թթ. սահմանադրությունը վերականգնվեց: Սեփեհդարը դարձավ ռազմական,

---

1 Shuster Morgan. The Strangeing of Persia. London, 1910, XLVI. Fraster David. Persia and Tyrkey in Revolt. London, 1909, p. 141.

Սարդար Ասադը՝ ներքին գործերի նախարար: Եփրեմին առաջարկեցին Թեհրանի ոստիկանության պետի պաշտոնը:

Մուհամմեդ Ալի շահին տապալելուց անմիջապես հետո Իրանում բռնկվեցին հետադիմական ելույթներ: Այդ ելույթները ճնշելու համար կազմավորվեց ջոկատ, Եփրեմի և Սարդար Ասադի որդու՝ Սարդար Բահադուրի գլխավորությամբ: 1909 թ. վերջին – 1910 թ. սկզբին ջոկատը Զենջանում գերի վերցրեց տեղի իշխող մոլլա Կուրբան Ալիին, պարտության մատնեց մեծաղոր Ռահիմ խանին, որը ռուսական զորքերի աջակցությամբ հարկադրված եղավ անցնել Ռուսաստանի սահմանները: Փետրվարին ջոկատը վերադարձավ Թավրիզ, որտեղ նրան միացավ Քեռու ջոկատը: Այնտեղից Եփրեմը և Սարդար Բահադուրը գնացին դեպի Արդաբիլ և այն գրավեցին: Այնուհետև, գրավելով շահսևանների քոչելու ճանապարհի գլխավոր կետերը, նրանք հարկադրեցին վերջիններին հանձնվել:

Կառավարական ջոկատներն, իրենց հետ վերցնելով 59 առավել նշանավոր խաների, վերադարձան Թեհրան. Ռուսական դեսպանությունը 1910 թ. հունիսի 18-ից մինչև 25-ը տեղի ունեցած իրադարձությունների տեսության մեջ նշել է. «... Եփրեմի և Սարդար Բահադուրի ջոկատները հանդիսավորությամբ մտան Թեհրան հունիսի 18-ին ... Եփրեմը և Սարդար Բահադուրը ընթանում էին պալատական վեցաձի ծածկակառքով ... նախկին կարգերի նույնիսկ ողջ հզորության ժամանակ ոչ մի շահ այդչափ փայլուն հաղթանակներ չի տարել շահսևանների նկատմամբ, որոնց մարտակարգի հետևից քարշ չի տվել այդքան գերի խաներ...»[1]:

1911 թ. հուլիսի սկզբին նախկին շահ Մուհամմեդ Ալին ցարական կառավարության համար «աննկատելիորեն» Ավստրիայից Ռուսաստանի վրայով անցավ և ափ էլավ Կասպից ծովի հարավ-արևելյան կողմում Դյուամուշ-թափե վայրում: Միաժամանակ Քրդստանից շարժվեց նրա եղբայր Սալար-ուդ-Դովլեն:

Եփրեմը սպասում էր մինչև որ նախկին շահի բանակն էլ ավելի հեռանա Կասպիականի ափերից, «Թուրքմենական Վանդեա» իր հենակայանից: Օգոստոսի 24-ին կառավարական զորքերը ջախջախիչ պարտության մատնեցին նախկին շահի բանակին: Եփրեմը վերադարձավ

---

1 Сборник дипломатических документов... вып. IV. 1910, с. 242—243, 247.

Թեհրան, որտեղ նրան չնորհվեց սարդարի՝ Իրանի զինվորական բարձրագույն կոչումը:

Նոյեմբերին, օգտվելով ներքաղաքական բարդ իրադարձությունից և կուսակցությունների պայքարից, նախկին շահը երկրորդ անգամ փորձ արեց գահը ետ վերադարձնել: Սակայն այդ փորձն էլ ձախողվեց:

Դրանից հետո Բրդստանում նորից հայտնվեց Սալարը: Բահարի մոտակայքում, Համադանից ոչ հեռու, կառավարական զորքերը ջախջախեցին հակառակորդին, սակայն մարտում զոհվեց Եփրեմը: Թեհրանում 1912 թ. մայիսի 3-ից մինչև 9-ը ծավալված իրադարձությունների տեսության մեջ ռուսական դեսպանությունը հաղորդում էր. «Վերջին ժամանակվա ամենախոշոր իրադարձությունն անտարակույս Եփրեմի մահն է, որը զոհվեց քրդերի դեմ Համադանի մերձակայքում, սույն թվականի մայիսի 6-ին: Այդ օրը լուսաբացին Եփրեմն իր ֆիդայիներով հանդիպեց հակառակորդի առաջապահ ուժերին, ջախջախեց նրանց, փախուստի մատնեց և հետապնդեց մինչև Շուրիջե շենը ... Նշված գյուղը գրոհելու պահին, երբ Եփրեմն իր բժշկի (իրանցի մտավորական Զոհրաբ խանը – Հ. Մ.) և իր օգնականներից մեկի հետ (նրա համհարզ Ավետիսը – Հ. Մ.), մարտի դաշտում եղած զինվորական հեռադրիչ Մարկոյի վկայությամբ, վտանգն արհամարհելով, գտնվում էր աշտարակի ստորոտի մոտ, մի տան տանիքից նրա վրա, գրեթե դիմահար, համազարկ կատարվեց, որից էլ Եփրեմը և բժիշկը տեղում սպանվեցին, իսկ օգնականը ծանր վիրավորվեց»[1]:

Եփրեմի մահվանից մեկ ժամ անց կառավարական ջոկատների վրա հարձակվեց Սալարի կողմնակիցներից մեկը՝ Մուջալլալը, իր զորքով հանդերձ: Կառավարական զորքերը, որոնց հրամանատարությունը ստանձնեց Քեռին, հակադրոհի անցնելով, դլխովին ջախջախեցին Մուջալլալի զորքին:

1912 թ. սեպտեմբերին Սամադ խանը մի քանի անգամ Թավրիզը գրավելու փորձ կատարեց: Սակայն նրա գրոհները հետ մղվեցին: Այդ մարտերին մասնակցում էին հայկական ջոկատները՝ Նիկոլ Դումանի («Ղարա փափախի») հրամանատարությամբ:

Շուտով Թավրիզ մտան ռուսական զորքերը, և Թավրիզցիների դիմակայությունն ընկճվեց:

---

1 ՌԱՔԱ, ֆ. Պարսկական դրասեղան, գ. 3836, թ. 7:

Հայերի մասնակցությունը 1905–1911 թթ. իրանական հեղափոխությանը նպաստեց բացարձակ միապետության ռեժիմի վերացմանը Իրանում, չափավոր սահմանադրական կարգերի հաստատմանը: Իրանը թևակոխեց բուրժուադեմոկրատական վերափոխումների ժամանակաշրջանը:

* * *

19-րդ դ. կեսերից գաղութի մշակույթը սկսեց վերածնվել նոր, արդիական ոգով: Իրանահայերի մշակույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեին Թիֆլիսի, Կոստանդնուպոլսի և այլ քաղաքների հայ մշակութային կենտրոնները: Այդ առումով առանձնահատուկ դեր խաղացին Կովկասում և Ռուսաստանում գոյություն ունեցող հայկական մշակութային ակութները:

19-րդ դ. առաջին կեսին գաղութում երևան եկան աշխարհիկ հանրակրթական դպրոցներ: Դպրոց հիմնադրելու առաջին փորձը ձեռնարկվեց 1833 թ. Նոր Ջուղայում: Սակայն առաջին դպրոցը քաղաքում բացվեց միայն 1843 թ., երբ Սբ. Աստվածածնի եկեղեցուն կից կազմակերպվեց «Հայկազյան հայրենասիրական» դպրոցը: Այն կառուցելու միջոցներ տրամադրեց Կալկաթայի բնակիչ, բարերար Ա. Աբգարյանը: 1853 թ. դպրոցներ բացվեցին Սբ. Մինաս և Սբ. Ստեփանոս եկեղեցիներին առընթեր: 1854 թ. Նոր Ջուղայում բացվեց նաև օրիորդաց առաջին դպրոցը, որը կառուցվել էր «Կատարինյան» կուսանոցին առընթեր Ճավա կղզու բնակիչ Մ. Օրդանյանի միջոցներով:

1880 թ. այդ բոլոր դպրոցները միջոցների և ուսուցիչների անբավարարության պատճառով հարկադրված եղան միավորվել «Ազգային կենտրոնական դպրոցի» մեջ:

20-րդ դ. սկզբին, 1901–1905 թթ. ժամանակահատվածում, Նոր Ջուղայում Մոսկվայի բնակիչ, Ռափայել Պատկանյանի դպրոցական ընկեր Գևորգ Քանանյանի կտակով բացվեցին օրիորդաց դպրոց և «Գևորգ Քանանյան» մանկապարտեզը:

Չնայած այն հանգամանքին, որ դպրոց ստեղծելու առաջին փորձը ձեռնարկվել է Նոր Ջուղայում, իրանահայերը գաղութում ժամանակակից դպրոցական կրթության պատմությունը սկսում են 1835 թ. Թավրիզում «Արամյան» դպրոցի հիմնադրման ժամանակվանից: Այդ դպրոցում առաջին ուսուցիչներից մեկը եղել է Մեսրոպ Թաղիադյանը: 1875–1877 թթ. այնտեղ դասավանդել է նաև Րաֆֆին:

1883 թ. Թավրիզում՝ Ղալա թաղամասում բացվեց «Աննայան» օրիորդաց դպրոցը: 1905 թ. այն միացվեց «Արամյան» դպրոցին: 1882 թ. «Հայկազյան» դպրոց բացվեց Թավրիզի հայերով բնակեցված մի այլ թաղամասում՝ Լիլավում, իսկ 1895 թ.՝ «Թամարյան» դպրոցը:

Իրանական հեղափոխության շրջանում, 1909 թ., Թավրիզում բացվեց ևս մեկ դպրոց՝ «Թեմական կենտրոնական միջնակարգ դպրոցը»:

Թեհրանում հայկական դպրոցները երևան են եկել զգալիորեն ավելի ուշ: Դրանցից առաջինը հիմնադրվել է 1870 թ. Դարվազե Ղազվին թաղամասում: 1891–1892 թթ. Թեհրանում բացվեց նաև օրիորդաց դպրոց: Միաժամանակ 1891 թ. Դարվազե Ղազվին թաղամասում կառուցվեց «Ազգային դպրոց», իսկ 1903 թ.՝ Դարվազե Դովլաթի թաղամասում: Փոքր-ինչ ուշ, 1910 թ., Հասանաբադ թաղամասում բացվեց «Հայկազյան» դպրոցը:

19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին հայկական դպրոցներ սկսեցին երևան գալ Սալմաստի մարզում՝ Խաֆտվան, Փայաջուկ, Կալասար, Սարնա, Ախտախանա, Սավրա և այլ գյուղերում: 1904–1905 թթ. Սալմաստի մարզի հայկական դպրոցներում սովորում էր 800 աշակերտ:

1885 թ. դպրոց հիմնադրվեց Մարաղայում: Այնուհետև դպրոցներ երևան եկան Ուրմիայում, Մակվում, Ղարադաղում և Բարանդուզում: 20-րդ դ. սկզբին դպրոցներ բացվեցին Համադանում (1905 թ.), իսկ 1905–1909 թթ. ընթացքում՝ Ղազվինում, Մեշխեդում, Սուլթանաբադում, Ռեշտում և Էնզելիում:

Զղարմահալի շրջանում այդ ժամանակ դպրոցներ կային 8 գյուղից չորսում՝ Լիվասիանում, Վերին Կոնարկում, Մամուկայում և Սիտակում: Փերիայի շրջանում 27 գյուղից 10-ը ուներ դպրոց:

19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին գաղութում գրական ստեղծագործության բնորոշ առանձնահատկությունը նոր ձևերի պրպտումն էր, որը հանգեցրեց մի ամբողջ շարք առաջադիմական ստեղծագործությունների երևան գալուն: Այդ ժամանակաշրջանը կապված է նշանավոր թարգմանիչներ Հովհաննես Մասեհյանի և Հովսեփ Միրզայանի գործունեության հետ:

Հովհաննես Մասեհյանի հիմնական գործունեությունը թարգմանչական ասպարեզում այնուհետև ծանրացավ Շեքսպիրի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների վրա: 20-րդ դ. 20-ական թվականներին Վիեննայում Մխիթարյան դպրոցի հրատարակությամբ լույս տեսան նրա յոթ թարգմանությունը: Ներկայումս հայտնի են «Համ-

լետ», «Արքա Լիր», «Ռոմեո և Ջուլիետ», «Մակբեթ», «Ամառային գիշերվա երազը», «Շատ աղմուկ վասն ոչնչի», «Հուլիոս Կեսար», «Ինչպես կուզեք», «Անտոնիոս և Կլեոպատրա», «Կորիոլան», «Փոթորիկ» գործերի նրա թարգմանությունները:

1916 թ. մայիսին Շեքսպիրի մահվան 300-ամյակը նշող Շեքսպիրյան կոմիտեն Հ. Մասեհյանին Անգլիա հրավիրեց: Այնտեղ նա հանդես եկավ հայտնի ճառով:

Հովհաննես Մասեհյանը հայոց լեզվի բնագավառում նորարար է: Թարգմանությունների ընթացքում նրա ստեղծած հայերեն նոր բառերը հետագայում ընդունվեցին գրական աշխարհում և մտան շրջանառության մեջ:

Հայերենից և անգլերենից զատ, Հովհաննես Մասեհյանը տիրապետում էր ֆրանսերենին, գերմաներենին, պարսկերենին և արաբերենին:

Հովսեփ Միրզայանը թարգմանչական գործունեությամբ սկսել է զբաղվել 19-րդ դ. 90-ական թվականներին: Նա թարգմանել է Վալտեր Սկոտի (Սքոթի) «Լճի լեյդին» և «Կղզու լորդը» ստեղծագործությունները: Գտնվելով Թիֆլիսում, ընկերոջ ռուսերենի թարգմանչի օգնությամբ թարգմանել է Լերմոնտովի «Դևը»:

Թեհրանում նա թարգմանում է Լիտրոնի «Պոմպեյի վերջին օրերը», այնուհետև, 1905 թ. Բայրոնի «Ծովահենը»: 1910 թ. նա թարգմանել է նաև Է. Ռոստանի «Սիրանո դը-Բերժերակ» պիեսը:

1913 թ. Հովսեփ Միրզայանի ստեղծագործության մեջ սկսվում է պարսկական ժամանակաշրջանը: Նա Ասադու, Հաֆեզի, Բաբա Թահերի ստեղծագործություններից մի շարք հատվածներ է թարգմանել: Օմար Խայամի բանաստեղծությունների նրա թարգմանությունները մինչև օրս անգերազանցելի են համարվում: 30-ական թվականներին Հ. Միրզայանը երեք հատված է թարգմանել Ֆիրդուսու «Շահնամեից»: Հովսեփ Միրզայանին են պատկանում նաև Ռաբինդրանաթ Թագորի, որի հետ թարգմանիչը բարեկամական կապեր ուներ, մի քանի բանաստեղծությունների թարգմանությունները:

Գեղանկարչությունը գաղութում սկսել է երևան գալ և ձևավորվել 19-րդ դ. երկրորդ կեսին, Իրանում բուրժուական հարաբերությունների սկզբնավորման և Արևմուտքի գեղանկարչության ազդեցության պայմաններում: Իրանում այդ ժամանակաշրջանի հայկական արվեստի լավագույն ներկայացուցիչներից մեկը Հակոբ Հովնաթանյանն էր: Սերելով Հովնաթանյան նշանավոր գերդաստանից՝ նա 1815 թ. փոխադրվել

է Իրան, որտեղ ապրել և ստեղծագործել է, սկզբում՝ Թավրիզում, իսկ այնուհետև՝ Թեհրանում: Նասրեդդին շահի արքունիքում դարձել է արքունի նկարիչ: Շահը նրան շնորհել է «Նաղաշ բաշի» («նկարիչների գլխավոր») տիտղոսը: Հակոբ Հովնաթանյանը հիմնականում դիմանկարիչ էր: Հակոբ Հովնաթանյանի ստեղծագործության մեջ հայ գեղանկարչությունը, մասնավորապես պատկերանկարչությունը, միահյուսվում է Արևելքի, հատկապես Իրանի, գեղարվեստական ընկալումների հետ:

19-րդ դ. – 20-րդ դ. սկզբին գաղութում սկսեցին ժամանակակից տպարաններ հիմնադրվել, սկզբում՝ Նոր Ջուղայում, իսկ այնուհետև՝ Ռեշտում, Թեհրանում և Թավրիզում: Այդ տպարանների հիման վրա 19-րդ դդ. 80-ական թվականներին Ռեշտում տպագրվել է «Համայնք» թերթը, 90-ական թվականներին Թեհրանում՝ «Շավիղ», «Շարժում», «Աստղ արևելյան» թերթերը, Թավրիզում՝ «Գործ» (1903 թ.) և «Ազդարար Առաջնորդարանի» (1904 թ.) պարբերականները: Նոր Ջուղայում 1904–1908 թթ. լույս էր տեսնում «Նոր Ջուղայի լրաբեր» թերթը:

20-րդ դ. առաջին երկու տասնամյակում գաղութի հայկական լրագրերի մեծ մասը հրատարակվում էր Թավրիզում՝ «Առավոտ» (1909–1912 թթ.), «Զանգ» (1910–1912 թթ.), «Թավրիզի հայտարարություններ» (1910–1912 թթ.), «Միտք» (1912–1917 թթ.), «Ազդաղան» (1912–1919 թթ.), «Այգ» (1912–1920 թթ.) և մի շարք այլ պարբերականներ: 1912 թ. Թեհրանում «Փարոս» տպարանում տպագրվում էր «Արշալույս» օրաթերթը, 1919–1920 թթ.՝ «Առավոտը», ինչպես նաև որոշ այլ լրագրեր, որոնք կարճ ժամանակ գոյատևեցին:

19-րդ դ. Նոր Ջուղայի Ամենափրկիչ տաճարի սպասավորներին հաջողվեց ժողովել ձեռագրերի և գրքերի մի մասը, որոնք հափշտակվել էին քաղաքի հավաքածուներից պատերազմների, ավատատիրական երկպառակությունների և կապուտ-կողոպուտների ժամանակաշրջանում: 1905–1906 թթ. տաճարի բակում կառուցվեց առանձին շենք՝ թանգարան-մատենադարանի համար:

Նոր Ջուղայի մատենադարանում կան 10 հազարից ավելի հին ու նոր գրքեր: Այնտեղ կա 683 ձեռագիր գիրք, որոնցից 34-ը գրված է մագաղաթի վրա: Ամենահին ձեռագիրը 10-րդ դ. Ավետարանն է: Մատենադարանի հազվագյուտ վավերագրերից է 1098 թ. «Կանոնագիրք հայոց» ձեռագիրը: Մատենադարանի արժեքավոր ունեցվածքներից է շքե-

ղորեն պատկերազարդված 13-րդ դ. Ավետարանը (մանրանկարիչ՝ Իգնատիոս):

Մատենադարանում առանձին պահպանվում են Իրանի շահերի ֆիրմանները (հրովարտակները) և Էջմիածնի կաթողիկոսների կոնդակները:

Մատենադարանում պահպանվող տպագիր հրատարակությունների թվին են պատկանում Կասպից ծովի և Իրանի քարտեզները, ինչպես նաև 1695 թ. Ամստերդամում կազմված «Համատարած աշխարհացույց» քարտեզը:

Նոր Ջուղայի թանգարանն ունի 305 ցուցանմուշ. պատմական վավերագրեր և նյութեր, արվեստի գործեր (դիմանկարներ, քանդակներ և այլն), ժողովրդական ստեղծագործության իրեր (ազգային տարազներ, հագուստներ, զարդեր, գորգեր և այլն), եկեղեցական զարդեր:

Մատենադարանի եզակի ցուցանմուշներից են ինքնաշեն (փայտյա) տպատառերը և տպագրական հաստոցը, որով Նոր Ջուղայում 17-րդ դ. տպագրվել են գաղութում առաջին գրքերը:

ԵԳԻՊՏՈՍ

*Հայ-եգիպտական կապերը վերաբերում են դեռ նախաքրիստոնեական ժամանակներին**: *Դրանք առավել սերտ բնույթ ստացան մանավանդ բյուզանդական տիրապետության շրջանում, երբ բյուզանդական կայսրերը, շարունակելով հռոմեական ավանդույթները, իրենց եգիպտական բանակաթեմերը համալրում էին նաև շարքային ու հրամանատարական հայազգի զորականներով: Հուստինիանոս Առաջինի գահակալության շրջանում Եգիպտոսում էին ծառայում, օրինակ, Ներսես Ներքինը, Ներսես և Հովհաննես Կամսարականները, Հովհաննես Արշակունին՝ իր Արտվան և Հովհաննես որդիներով: Սրանց մի մասը ծառայել է նաև Լիբիայում: «Պարսից հպատակ» հայերի, այն է՝ Արևելյան Հայաստանից բերված զորքերի գլուխն անցած Ներսես Կամսարականը 538–539 թթ. Լիբիայում պատերազմում էր այստեղ թափանցած գոթերի դեմ: Լիբիայում գոթերի դեմ մղված պայքարը բյուզանդական վարչակարգի հանձնարարությամբ 546–547 թթ. գլխավորում էին Հովհաննես և Արտվան Արշակունիները: Հաջող պատերազմական գործողությունների համար Արտվան Արշակունին նշանակվում է ամբողջ Լիբիայի զորավար:*

7-րդ դարում Եգիպտոսում հաստատվեց արաբական տիրապետությունը: Այս շրջանում արդեն զգալի չափեր ունեցող հայ գաղութը, որ կազմված էր զինվորականներից և քաղաքացիական բնակչությունից, ստացավ զարգացման նոր հնարավորություն: Արաբ նվաճողները բարձր գնահատեցին այն ծառայությունը, որ արևմտահայերից բաղկացած գունդը մատուցեց նրանց՝ Եգիպտոսի գրավման անցքերի ժամանակ: Նորակառույց Ֆոսթաթ քաղաքի շուկան հենց այս շրջանում սկսեց կոչվել Վարդանի՝ նշված գնդի հրամանատար Վարդան ալ-Ռու-

---

* *Հատորի եգիպտահայ գաղութին վերաբերող հատվածը հիմնականում շարադրված է Հ. Խ. Թ ո փ ո ւ զ յ ա ն ի «Եգիպտոսի հայկական գաղութի պատմության» (Երևան, 1978) հիման վրա, ինչպես նաև Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն ի «Արաբական միացյալ հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը» (Կահիրե, 1960), Ն ո ւ յ ն ի «Պատմություն հայ դպրթականության», հ. 1 և 2 (Կահիրե, 1941, 1955), Մ. Հ. Գ ա ր տ ա շ յ ա ն ի, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության համար» (Կահիրե, 1943), Թ. Գ ո ւ շ ա կ յ ա ն ի «Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները» (Կահիրե, 1927), Գ. Մ ը ս ը ր լ յ ա ն ի «Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ» (Կահիրե, 1947), Հ. Թ ո ւ ռ շ յ ա ն ի «11–12-րդ դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից» («Արևելագիտական ժողովածու», հ. 2-րդ, Երևան, 1964) և այլ հեղինակների աշխատությունների, նաև հայերեն ձեռագրերի հիշատակարանների ու աղբյուրագիտական այլ կարգի նյութերի օգտագործմամբ:*

միի անունով: Սակայն որոշ ժամանակ անց Եգիպտոսի նոր նվաճողները սկսեցին կրոնական հալածանքը նաև հայերի դեմ, և հայ գաղութը բռնեց աստիճանական թուլացման ուղի, որը տևեց մինչև Ֆաթիմյանների դարաշրջանը (969–1171 թթ.):

Ֆաթիմյանների վարած հանդուրժողական քաղաքականության շնորհիվ Սիրիայից և Միջագետքից «բազմաքանակ հայեր մինչև երեսուն հազար, հավաքվեցին Եգիպտոսում» (Մ. Ուռհայեցի): 10-րդ դարում Եգիպտոսում հայերը արդեն ունեին իրենց եկեղեցին: 11-րդ դարի 70-ական թվականներին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը Ներսես Շնորհալու հորեղբայր Գրիգոր իշխանին (Գրիգոր Մագիստրոսի որդուն) նշանակեց եգիպտահայոց «կաթողիկոս» (առաջնորդ): Հաջորդ տասնամյակում եգիպտահայերի թիվը այնքան շատ էր, որ նրանք արդեն ունեին երկու «կաթողիկոս», այսինքն թեմական առաջնորդներ:

11–12-րդ դարերում Եգիպտոսում հայերի մեծաթիվ լինելը արտացոլում է գտել բազմաթիվ հայկական եկեղեցիների առկայության փաստում: Պատմիչ Աբու-Սահլի (ծագումով հայ) հաղորդմամբ, հայկական եկեղեցիներ էին գործում Կահիրեի Դեյր ալ-Խանդեկ թաղում, Զուեյլայում, երեք եկեղեցիներ Դուրա քաղաքում, ալ-Բասթին գյուղում, Գիզեի Սաֆդ-Մայտան ավանում, Ասիթում, Իֆթիհում, Գալուսանայում, ալ-Խուսուսում և այլուր[1]:

Եվ իրոք, Ֆաթիմյանների դարաշրջանը միջնադարի եգիպտահայ գաղութի պատմության ամենազարգացած փուլն էր: Այս շրջանում եգիպտահայ գաղութի ընդլայնմանն ու ամրապնդմանը զգալիորեն նպաստեցին նաև այնտեղ գտնված հայ զինական ուժերը: Խոսքը առաջին հերթին հայազգի զորավար Բադր էլ Ջամալիի մասին է: 11-րդ դարի կեսից Կիլիկիա, Կապադովկիա և Եգիպտոս անցած տարագիր հայության մի մասը, կտրված լինելով նստակյաց կյանքից, համախմբվում է տարագիր հայ զինվորականների շուրջը նրանց համար ստեղծելով շոշափելի զինական ուժ: Հայազգի զորապետերը, ելնելով ընդհանուր իրադրության պահանջից, թեև մահմեդականություն էին ընդունում, բայց, հենվելով իրենց հայազգի զինական ուժի վրա, սատար էին կանգնում հայ տարագիրների հոգսերին: Այդ զորականներից էր կրոնափոխ հայ զորավար Բադրը, որը, բարվոք համարելով ծառայության մեջ մտնել Եգիպտոսի Ֆաթիմյանների մոտ, 1064 թ. նշանակվում է Դամաս-

---

1 Թ ո փ ո ւ զ յ ա ն Հ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, էջ 16:

կոսի կայազորի պետ, իսկ հետագայում Ակկայի ծովաբերդի հրամանատար[1]: 1073 թ. Բադրը իր 6000 հայազգի զորքով Եգիպտոսի խալիֆ ալ-Մուսթանսիրի կանչով հասնում է նրան օգնության՝ արշավելով Կահիրե՝ այնտեղ ճնշելու թուրքական, նեգրական և նուբիական էմիրների ըմբոստությունը: Մաքրիզի վկայությամբ, խալիֆը Բադրի օգնությանն է դիմում այն ժամանակ, երբ երկրում տիրում էր «սաստիկ սղություն», և սկսվել էին հաճախադեպ խռովություններ, երբ «կացությունը խանդարվեցավ քաղաքներու մեջ, գործերը փոփոխության ենթարկվեցան, գունդերը խռովություն հանեցին... երբ բարօրությունն անհուսալի դարձավ ... երբ որ, կըսեմ, լավաթիները (ափրիկեցի ցեղ մը) տիրացան բարեբեր գյուղերուն և սեամորթներու ձեռքն անցավ Վերին Եգիպտոսը, երբոր վերջապես ցամաքային ու ծովային ճամփաները ծանր պահպանություններով միայն անցանելի դարձան ... այն ատեն Մուսթանսիր խալիֆը նամակով կանչեց զայն (Բադր էլ Ջամալին) որպեսզի իր տիրապետությունը կարգի դնելու պաշտոնը ստանձնե: Այս վերջինը պայման դրավ, որ իր ընտրած զինվորները (հայ զինվորները) հետը բերե և Եգիպտոսու զորքերու մեջը չձգե: Մուսթանսիր ընդունեց այս պայմանը»[2]:

Ահա Եգիպտոսի համար առաջացած ծանր պայմաններում, երբ Կահիրեն գտնվում էր մարդասպան Բալդաքուչի ձեռքում, իսկ խալիֆը աստանդական կյանք էր վարում, Բադրը հայկական զորքով շարժվում է դեպի Եգիպտոս: Հարյուր առագաստանավերով, ձմեռային անբարենպաստ պայմաններում, նա քառասուն օր նավարկելուց հետո հասնում է Կահիրե: Ճնշելով ապստամբությունը և սպանելով վարձկան էմիրներին՝ Բադրի զորքերը թե մայրաքաղաքում և թե գավառներում հաստատում են կարգ ու կանոն: Անհնազանդները մահապատժի են ենթարկվում, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվում է: Կահիրե վերադարձած Մուսթանսիր խալիֆը, որը 1072–1074 թվականների ծանր չրջանում ապաստանել էր Բադրի հայկական զորքի պաշտպանության վայրը հանդիսացող Ասկալոն, գոհ մնալով հայազգի զորավարի վճռական գործողություններից, ամբողջ իշխանությունը հանձնում է Բադրին, նրան կարգում վեզիր, գերագույն հրամանատար և գերագույն դատավոր:

---

1 Թ ո ւ ռ ջ յ ա ն Հ., 11 և 12-րդ դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից (տե՛ս «Արևելագիտական ժողովածու», հ. 2-րդ, էջ 304):

2 Մ ա ս ը ր լ յ ա ն Գ., Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 23–24:

Բադրը փորձում է կազմակերպված բնույթ տալ դեպի Եգիպտոս կատարվող հայոց գաղթին: Նրա վեզիրության օրոք ավելի է ուժեղանում հայերի գաղթը Եգիպտոս: 1094 թ. Բադրին վեզիրի պաշտոնում հաջորդում է նրա որդին՝ Շահնշահը (1094–1121), որի իշխանությունը Եգիպտոսում ավելի միահեծան է դառնում, քանի որ խալիֆայության գահ էր բարձրացել Մուսթանսիրի հնգամյա ժառանգը:

Մահմեդական հայեր Բադրի և Շահնշահի՝ մոտ հիսնամյա կառավարումը Եգիպտոսում զգալապես բարերար ազդեցություն է ունենում եգիպտահայ կյանքի վրա: Մեծ քաղաքներում սկսում են ամփոփվել առանձին հայկական թաղամասեր, հայերը հաստատվում են նաև գավառական քաղաքներում ու գյուղերում, պարապում այգեգործությամբ, արհեստներով, առևտրով: Վճռորոշ է դառնում նրանց մասնակցությունը երկրի արտաքին առևտրի մեջ: Նշանակալից չափեր է ընդունում հայկական եկեղեցիների և ճգնավայրերի կառուցումը:

Եգիպտահայ կյանքում նշանակալից էր Վահրամ Պահլավունու (Գրիգոր Մագիստրոսի թոռն էր և Ներսես Շնորհալու եղբայրը) դերը: Նա քրիստոնեական Նուբիային (Սուդանին) սահմանակից Գուսի նահանգապետն էր, և նրան հաջողվել էր տասնամյակների ընթացքում այստեղ ասուանցիներից կազմել հայկական կուռ բանակ: 1135 թ. Վահրամ Պահլավունին արշավում է Կահիրեի վրա՝ Հաֆիզ խալիֆին օգնության: Հաֆիզը նրան տալիս է վեզիրության պաշտոն: Վահրամը երկու հազար հայերի կարգում է կարևոր պաշտոններում՝ հեռացնելով անցանկալիներին: 1140 թ. ծերունազարդ Վ. Պահլավունին ստիպված էր Նուբիայի սահմանագլխին գտնվող հայկական Ճերմակ վանքերից նորից արշավել Կահիրե, անխնա պատժել հակառակորդներին և վերականգնել եգիպահայության իրավունքները: Այս անգամ ծերունի Պահլավունին հրաժարվում է վեզիրությունից և բավարարվում Հաֆիզին առընթեր գլխավոր խորհրդականի պաշտոնով:

Վահրամ Պահլավունու կարևոր ձեռնարկումներից մեկը Եգիպտոսի կենտրոնական իշխանությանը ենթարկվող և պետական գանձարանի կողմից վարձատրվող հայկական զորքի ստեղծումն էր, զորք, որը եգիպտական կառավարության հենակետն էր երկրում՝ կենտրոնախույս ուժերի դեմ պայքարելու և կարգը պահպանելու գործում: Այդ զորքը հիմնականում հավաքագրված էր սասունցի-խութեցիներից և իր գոյությունը պահպանեց երեսուն տարի՝ 1140–1172 թթ.: Այն վերացավ

Սալահեդդինի պետական հեղաշրջման հետևանքով, երբ տապալվեց Ֆաթիմյանների հարստությունը:

1168–1172 թթ., Եգիպտոսի վրա Սալահեդդինի և զուգի թուրքերի հարձակումների օրհասական օրերին Վահրամ Պահլավունու հիմնած հայկական զորքը հանդես եկավ եգիպտական ժողովրդի պաշտպանությամբ: Պարտություն կրած հակառակորդի զորքերը հարկադրված էին նահանջել դեպի Բեյն էլ Գասրեյնի «Հայկական տունը»: Սակայն քրդերն ու թուրքերը գերակշիռ ուժերի շնորհիվ կարողացան գրավել նաև «Հայկական տունը» և կոտորել նրա պաշտպաններին: Ավերելով Եգիպտոսը՝ Սալահեդդինի ավազակաբարո զորքերը վերջ դրին նաև 11–12-րդ դարերի եգիպտահայ գաղութի բարգավաճ կյանքին, այն գաղութի, որի բնակչության թիվը համեմատական տվյալներով այդ ժամանակ հասել էր մոտավորապես 100 հազարի[1]:

Եգիպտահայ գաղութի՝ փաստորեն վերացման այդ շրջանում Գուս նահանգում գտնվող հայության մի մասին հաջողվում է անցնել Եթովպիա, իսկ Կահիրեի և Հյուսիսային Եգիպտոսի հայության և հայ զորքի ազատված մասը ծանր դժվարությունների գնով տեղափոխվում է Սասուն:

1250 թ. Եգիպտոսը գրավեցին մամելյուկ սուլթանները: Այդ շրջանից սկսած՝ ընդհուպ մինչև 15-րդ դարի կեսերը Եգիպտոսը պարբերաբար հեղեղվում էր հայ գերիներով: 1375 թ. Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո Եգիպտոս տարված բազմահազար հայ գերիների թվում էր Լևոն 5-րդ թագավորը: 1440 թ. Շամշուլդե քաղաքից Եգիպտոս և Խորասան էին քշվել 10 հազար հայեր և վրացիներ: Հայ գերիների երեխաներին հավաքում էին զինվորական ճամբարներում, մահմեդականացնում և ծառայության մեջ դնում բանակում: Հայ գերիների մի մասն էլ լայնորեն օգտագործվում էր արհեստավորական արտադրության և գյուղատնտեսության մեջ:

Հայ եկեղեցում առաջացած հակալատինական միտվածությունը առիթ տվեց, որ մամելյուկ սուլթանները մեղմացնեն իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ: 1311 թ. Երուսաղեմի հայոց վանքը հռչակվեց պատրիարքություն: 1322–1323 թթ. եգիպտահայության վիճակը ավելի բարելավվեց այն բանից հետո, երբ հաշտություն կայացավ Եգիպտոսի և Հայկական Կիլիկիայի միջև: Հայ-եգիպտական հարաբե-

---

1 Թ ո ւ ռ ջ յ ա ն Հ., նշվ. աշխ., էջ 315:

րությունները կարգավորելու նպատակով 1325 թ. Եգիպտոս այցելեց Կիլիկիայի Կոստանդին կաթողիկոսը:

Մամելյուկ սուլթանների հանդուրժողականության շնորհիվ Կահիրեի մոտ հայկական Գոմ ալ-Արմանում գործում էր Ս. Մինաս եկեղեցին: Հայերը 1380-ական թվականներին իրենց եկեղեցական արարողություններն էին կատարում Կահիրեի Ս. Մարտինոս եկեղեցում: Ըստ Հովհ. Դարդելու 14-րդ դարի սկզբներին Կահիրեում կային հայ մեծամեծներ և պատվավորներ, որոնք «ի վաղուց հետէ բնակէին ի Քահիրէ և էին ստրուկք սուլթանին»[1]:

Օսմանյան տիրապետության սկզբնական տասնամյակներից, երբ մամելյուկների ներքին հակամարտությունները շատ հաճախ ուղեկցվում էին քրիստոնյա բնակչության կոտորածով կամ նրա ունեցվածքի անսքող կողոպուտով, եգիպտահայերից շատերը հեռացան երկրից, ոմանք էլ կրոնափոխ դարձան. «Մըսըր առաջին գնալոյս, որ թուին ՌԾԴ (1605) էր,– գրում է Գրիգոր Դարանաղցին,– բազում Ջուղայեցիք էին տաճկըցէր... որ խպտի երեց մի նախատեաց զմեզ վասն նոցա»:

Բայց այդ նույն ժամանակ սկսվել էր հայերի նոր հոսք Եգիպտոս կապված ջալալիների ասպատակությունների հետ: 17-րդ դարի սկզբներին միայն Կահիրեում Սիմեոն Լեհացին հաշվել է 200 տուն հայեր, որոնք ապրում էին Հայոց թաղում, ունեին իրենց Ս. Սարգիս եկեղեցին և Ս. Մինաս մատուռը: Կահիրեի Խան ալ-Խալիլ հռչակավոր շուկայում ժրաջան աշխատանք էին կատարում Կ. Պոլսից, Տիգրանակերտից և Հալեպից գաղթած հայ ոսկերիչ, զինագործ և այլ արհեստների տեր մարդիկ: Հայ ոսկերիչները նույնիսկ ունեին իրենց ընկերակցությունը, որի «ղույումճի պաշին» տիգրանակերտցի Խոջա Իպրահիմշան էր: Խան ալ-Խալիլում, Հինխանում և այլ շուկաներում հայ առևտրականները զբաղված էին տարբեր գործվածքների մեծածախ և մանրածախ առևտրով, իսկ Կահիրե եկած ջուղայեցի վաճառականները առևտրական սերտ կապեր էին պահպանում Հնդկաստանի, Արաբիայի, Եթովպիայի և Իտալիայի շուկաների հետ: 1610 թ. Կահիրե ժամանած եվրոպացի ճանապարհորդ Գեորգ Սանդիսի վկայությամբ, հայերը քաղաքի աշխատասեր բնակիչներից էին և վարում էին պարկեշտ կյանք:

18-րդ դարում միջազգային ապրանքափոխանակության մեջ եգիպտական կենտրոնների և մանավանդ Կահիրեի, Ռոզետի (Ռուշիտի), Դա-

---

[1] *Դարդելի Հովհ., Ժամանակագրութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 153:*

միետի, Ալեսանդրիայի դերի բարձրացումը խթանում է տեղի հայ գաղութի կյանքի աշխուժացմանը: 1749 թ. հիմնիվեր նորոգվում է Կահիրեի Ս. Սարգիս եկեղեցին: Դարավերջին զմյուռնահայերի ձեռքն է անցնում Ռուշիտի մաքսատունը: Եգիպտոսում, արաբական աղբյուրների վկայությամբ, բացի արդեն նշվածներից, գործել են ծագումով հայ նաև բազմաթիվ այլ պետական ու զինվորական գործիչներ՝ Յաղուբը կամ Հակոբը, Օսման Զելեբին, Ալի ալ-Արմանին, Սյուլեյման Բարեմ Զեյլուն, Մուստաֆա Զեբերջին, Նիկոլան (Նիկողայոսը) և ուրիշներ: 1771 թ. Թուրքիայի դեմ ընդհանուր դաշինք ստեղծելու նպատակով Եգիպտոսի կառավարիչ Ալի բեյը իշխան Օրլովի մոտ է ուղարկում Յակուբին (Հակոբին): Սրա առաքելությունը հաջող հետևանք է ունենում՝ Եգիպտոսը սկսում է Ռուսաստանից ստանալ թնդանոթներ, զինամթերք և այլն: 1798 թ. Ֆրանսիայի դեմ կռվող եգիպտական բանակում կային նաև հայազգի հրամանատարներ: Նրանցից էր, օրինակ, Նիկոլա հայը՝ ռազմական նավի պետը:

Ֆրանսիական ներխուժման և դրան հաջորդած մամելյուկ բեյերի ստեղծած անիշխանության շրջանում (1801–1804) եգիպտահայ գաղութը կանգնեց իսպառ վերանալու վտանգի առաջ: Սակայն 1805 թ., դառնալով Եգիպտոսի կուսակալ, Մոհամեդ Ալին վերջ տվեց մամելյուկների անիշխանական քաոսին և իրականացրեց մի շարք ռեֆորմներ, որոնք նպաստեցին երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացմանը: Զարգացման նոր փուլ բացվեց նաև եգիպտահայ գաղութի համար, հատկապես, երբ նորաստեղծ պետական մոնոպոլիաները պատվար կանգնեցին օսմանյան կապիտուլյացիաների ավերիչ ներգործության դեմ և զգալապես խթանեցին երկրի տնտեսական վերելքը: Հայ խոշոր սառաֆները և առևտրականները ևս տարբեր թելերով կապվեցին առևտրական մոնոպոլիաների հետ: Հաստատվելով Կահիրեում, Ալեքսանդրիայում՝ դամասկոսցի և հալեպցի հայ առևտրականներ և վարկատուներ Այվազը, Պոլոսը, Ֆաթալլան, Հինդին, Յուսուֆը, Սապպաղը, Խայյաթը և այլք, որոնք կրում էին արաբական անուններ, զգալապես օգնում էին Մոհամեդ Ալիին՝ խուսափելու եվրոպական բանկիրների կապալային փոխտվությունից: Միաժամանակ Մոհամեդ Ալին առևտրական կապիտալի խոշոր ներկայացուցիչների առաջ բացեց իշխանության դռները, և երևելի շատ հայեր մուտք գործեցին բարձր տեղեր՝ պաշտոններ զբաղեցնելով փոխարքայի կաբինետում և տարբեր դիվաններում: Հայերը մանավանդ բարձր պաշտոններ զբաղեցրին Եվ-

բոպական գործերի և եգիպտական վաճառականության դիվանում, այսինքն արտաքին գործերի և առևտրի ամենաբարձր օրգաններում: Այդ դիվանը հաջորդաբար գլխավորում էին Պողոս Յուսուֆյանը (մինչև 1844 թ.), Արթին Զրաքյանը (1844–1850) և Առաքել Նուբարյանը (1850–1853): Այդ դիվանի տարբեր բաժինների վարիչները և արտասահմանյան ներկայացուցիչները ըստ մեծի մասին հայեր էին, և պատահական չէ, որ օտարները դիվանը անվանում էին «Պալե արմենիան» (Հայկական պալատ):

Ստեղծված հանդուրժողական պայմաններում 1810–1840-ական թվականներին աճեց հայերի հոսքը Եգիպտոս: Մանավանդ մեծ էր պանդուխտների թիվը: Եգիպտոս էին գալիս հայ գաղթականներ Կ. Պոլսից, Զմյուռնիայից, Ակնից, Արաբկիրից, Հալեպից և այլ վայրերից:

1828 թ. Կահիրեում կառուցվեցին հայկական դպրատուն, հոգետուն, հիվանդանոց և հյուրանոց: 1839 թ. Կահիրեում ավարտվեց Սբ. Աստվածածին, իսկ 1843 թ. Սբ. Մինաս եկեղեցիների շինարարությունը: 1837–1841 թթ. Դարբ ալ-Գենինեում կառուցվեց Սբ. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին:

Մոհամեդ Ալիի հաջորդի Աբբասի (1849–1854 թթ.) օտարերկրացիների նկատմամբ կիրառած կաշկանդիչ քաղաքականությունից տուժեցին նաև եգիպտահայերը: Սակայն 60-ական թվականներից վերացվեցին Աբբասի արգելքները, և բարելավվեցին նաև եգիպտահայ գաղութի պայմանները: Հայերի առաջ վերստին բացվեց պետական գործունեության ասպարեզ. Սուդանի կառավարիչ նշանակվեց հայ Առաքելը, իսկ 1857 թ. երկաթուղու և տրանսպորտի վարչության պետ Նուբարը ապագա նշանավոր Նուբար փաշան:

Համեմատական տվյալները հավաստում են, որ եթե 19-րդ դարի սկզբին եգիպտահայ գաղութը հաշվվում էր մոտ 3000 մարդ, ապա նույն դարի 30–40-ական թվականներին այդ թիվը հասնում է շուրջ 10.000-ի: Որոշ տատանումներով հանդերձ, 1879 թ. եգիպտահայերի թիվը հավասար էր 8.000-ի: 19-րդ դարում հայերը հիմնականում տեղաբաշխված էին Կահիրեում և Ալեքսանդրիայում: Նրանք հաստատվել էին նաև Ռոզետում, Դամիետում, Զագազիգում, Թանթայում, Ասիութում և այլուր:

1880-ական թվականներին սկիզբ առավ հայ գաղթականության նոր հոսք դեպի Եգիպտոս, որը որոշ ընդհատումներով շարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտի տարիները: Բազմահազար գաղթականներ

90-ական թվականներին սկզբնապես ապաստան են գտնում եգիպտահայ եկեղեցիներում, դպրոցներում և այլուր: Գաղթականների կարիքները սկզբում հոգում էր ազգային առաջնորդարանը՝ ազգապատկան կալվածքների հաշվին, հետագայում օգնության եկան հայ մեծահարուստները: Լայն գործունեություն էր ծավալել Նպաստամատույց հանձնաժողովը:

1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածը խթանեց հայ նոր գաղթականության հոսքը դեպի Եգիպտոս, և «Բյուզանդիոնի» վկայությամբ, «դժբախտ ազգայինները, ամեն բանի կարոտ վիճակի մեջ սկսան գունդառագունդ դիմել Եգիպտոս»: 1915 թ. դեկտեմբերին երկու ֆրանսիական և մեկ անգլիական ռազմանավեր Սվեզիայից Պորտ Սաիդ տեղափոխեցին 4058 հայերի:

1887–1917 թթ. եգիպտահայ գաղութը ստվարանում է թե մասնակի և թե զանգվածային գաղթականներ ընդունելու հետևանքով: 1910 թ. գաղութում հաշվվում էր 12 հազար, 1913 թ.՝ 15 հազար, իսկ 1917 թ.՝ 17 հազար մարդ: Հայ գաղթականների հիմնական հատվածը, ինչպես միշտ, հաստատվում է Կահիրեում և Ալեքսանդրիայում: Հայերը բնակվում էին նաև Գիզեում, Թանթայում, Ասիութում, Ասուանում և շատ այլ տեղերում: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը հայերը կային նաև Եգիպտոսի տարբեր նահանգներում հաստատված հայ կալվածատերերին պատկանող ավելի քան քառասուն հայանուն գյուղերում:

* * *

Ինչպես հայկական մյուս գաղութներում, եգիպտահայոց մոտ ևս հիմնական զբաղմունքները արհեստագործությունը (19-րդ դարի վերջերից նաև արդյունաբերությունը), առևտուրը, մասամբ նաև գյուղատնտեսությունն էին:

Եգիպտահայերը հռչակված էին ոսկերչության (նաև արծաթագործության ու ակնագործության), դերձակության, ասեղնագործության, կոշկակարության, մուշտակագործության, ինչպես նաև մի շարք չինարարական արհեստների մեջ: Կային նաև հայ վառոդագործներ, ճուլարարներ, երկաթագործներ, պղնձագործներ, հացագործներ, կաշեգործներ և այլ արհեստավորներ:

Եգիպտահայերի հնագույն արհեստներից էր ոսկերչությունը (այդ թվում նաև արծաթագործությունն ու ակնագործությունը), որը զար-

գանում էր Կ. Պոլսի ոսկերչական շուկայի հետ համագործակցած: Կահիրեի հայ ոսկերիչները համախմբված էին Խան ալ-Խալիլի շուկայում:

Եգիպտահայերի գլխավոր արհեստներից էր դերձակությունը: Հայ դերձակներն էին մեծ մասամբ սպասարկում բարձր դասի մարդկանց պահանջները՝ կարելով բարդ ու շքեղ զգեստներ: Ասեղնագործության բնագավառում ևս ամենաբնտիր վարպետները հայերն ու հույներն էին: Կահիրեում և Ալեքսանդրիայում նրանք ունեին արհեստանոցներ և հռչակված էին իրենց արտադրած անթերի, շքեղ ու նրբաճաշակ բանվածքներով: Հայերը նշանավոր կոշկակարներ էին և մուշտակագործներ: Նրանք աչքի էին ընկնում նաև շինարարական արհեստներում:

19-րդ դարի կեսերից սկսած՝ բազմաթիվ արհեստներ ծանր հարվածներ ստացան եվրոպական մրցակիցներից և զրկվեցին իրենց երբեմնի նշանակությունից կամ էլ իսպառ վերացան, բայց մի շարք արհեստներ՝ ոսկերչություն, դերձակություն, կոշկակարություն, պղնձագործություն, որմնադրություն, որոնք բավարարում էին տեղական բնակչության պահանջները, շարունակում էին իրենց գոյությունը: Սրանց կողքին հայ արհեստավորները սկսեցին մասնակցել այնպիսի նոր արհեստների զարգացմանը, ինչպիսին էր տարբեր սարքերի, էլեկտրազանգերի, էլեկտրաշարժիչների, հին ավտոմեքենաների վերանորոգումը և այլն:

Միևնույն մասնագիտությամբ զբաղվող արհեստավորները համախմբված էին համքարությունների մեջ, որոնք ունեին քաղաքային իշխանությունների կողմից նշանակված իրենց գլխավորները: Համքարությունների մեջ միևնույն զբաղմունքի տեր մարդկանց կապողը տնտեսական, կրոնաբարոյական և հասարակական ընդհանուր շահերի դիտակցումն էր, փոխադարձ օգնության գաղափարը:

19-րդ դարի վերջին քառորդից սկսած՝ եգիպտահայերը, հարմարվելով երկրի տնտեսական զարգացման նոր ընթացքին, աչքի ընկնող մասնակցություն են ունենում արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության զարգացմանը: 1880-ական թվականներից սկսած հույն և հրեա վարպետների հետ միասին հայ վարպետները արմատավորեցին և խթանեցին սիգարետի արտադրությունը: Եգիպտոսի տարբեր քաղաքներում հայտնի էին Մաթոսյանների, Մելքոնյանների, Կամսարականների, Իփրիկյանների և այլոց ծխախոտագործական ձեռնարկությունները, որոնց արտադրության հռչակը հասել էր «աշխարհի չորս ծագերը»: Մաթոսյան ընկերության կապիտալը, օրինակ, 1901–1902 թթ. կազմում էր 150.000 եգիպտական ոսկի: Ընկերությունը ու-

ներ չորս խոշոր գործարաններ՝ Գիզեում, Ալեքսանդրիայում, Թանթայում և Ասիութում: Բարձր գնահատելով ընկերության ծառայությունները՝ եգիպտական կառավարությունը ընկերության հիմնադիր Հովհաննես Մաթոսյանին շնորհել էր բեյության աստիճան և պարգևատրել Նեղոսի առաջին և երկրորդ աստիճանի շքանշաններով:

Եգիպտահայ արդյունաբերողները բավական կարևոր դեր էին կատարում մետաղագործության զարգացման բնագավառում: Կահիրեի և Ալեքսանդրիայի ձուլարանները ըստ մեծի մասին պատկանում էին հայերին: Նրանք հիմնականում արտադրում էին շինարարության մեջ օգտագործվող երկաթյա և պղնձյա իրեր:

Հայերին պատկանող մի շարք մանուֆակտուրաներ 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին արտադրում էին կենցաղային գործածության իրեր՝ յաղմա, զարդաշղարշ, մանուսա և այլն:

19-րդ դարի առաջին տասնամյակներին հայ առևտրականներն ու առևտրավարկատուները բավական ամուր դիրքեր էին զբաղեցնում Եգիպտոսի տնտեսական կյանքում: Հայ սառաֆները այնքան էին հզորացել, որ 1887 թ. հիմնեցին առաջին եգիպտական բանկը: Սառաֆներն ունեին իրենց համքարությունները: Մինչև 1827 թ. Մոհամեդ Ալիի սառաֆբաշին էր Եղիազար ամիրա Պետրոսյանը, իսկ 1828–1847 թթ.՝ Ալեքսան Միսաքյանը: Հայ սառաֆների ձեռքում էր դրամահատարանը: Հայ առևտրական կապիտալը ամուր դիրքեր էր գրավել նաև վաճառականական դիվանում: Եգիպտահայ առևտրականները առևտրական հիմնարկներ ունեին Զմյուռնիայում, Կ. Պոլսում և եգիպտական քաղաքներում: Հայ վարկատու առևտրականները կարևոր դիրքեր էին զբաղեցնում գետային տրանսպորտում: Տարբեր ժամանակներում հայ սառաֆներին էին պատկանում Կահիրեի բաղնիքները, Մաթարիայի աղահանքերը, ձկան շուկաները և այլ օբյեկտների կապալային շահագործման մենաշնորհը:

19-րդ դարի 50–60-ական թվականներին եգիպտական շուկայում առևտրի կազմակերպման եվրոպական ձևերի արմատավորմամբ հետին պլան մղվեցին առևտրավարկատուները՝ սառաֆները: Նրանց տեղը զբաղեցրին եվրոպական բանկերը, և 1865 թ. արդեն երբեմնի խոշոր հայ առևտրականներից քչերն էին մնացել ասպարեզում: Եգիպտահայ վաճառականության քայքայումը շարունակվեց նաև հետագա տարիներին, և եգիպտահայ առևտրականները դարձան ձեռներեց միջնորդներ եվրոպական ձեռնարկությունների և եգիպտական շուկայի միջև՝

մեծ մասամբ զբաղվելով եվրոպական, առաջին հերթին՝ անգլիական ապրանքների մեծածախ և մանրածախ առևտրով:

Անգլիական տիրապետության հաստատումից հետո Եգիպտոսի ներքին և արտաքին առևտուրը ուժեղացավ, և 90-ական թվականներից սկսած եգիպտահայ առևտրականները հաջող կերպով մրցում էին հույների և հրեաների հետ: 1890–1900-ական թվականներին Կահիրեում հաստատվել էին «Գևորգ Թոփալյան», «Կ. Քեչյան», «Պաքըրճյան եղբայրք», «Ստեփան Իփլիկճյան», «Գևորգ Մուրադյան» և այլ վաճառատներ: Եգիպտահայ առևտրականների մասնակցությունը հատկապես նկատելի էր ներմուծման բնագավառում: Օրինակ, 1913 թ. 25 միլիոն եգիպտական ֆունտի արժողությամբ ներմուծված ապրանքներից 5 միլիոնը բաժին էր ընկնում հայ առևտրականներին: Հայերի ներմուծած ապրանքներն էին սննդամթերք, տարբեր գործվածքներ, չինանյութ, մեքենաներ, հեծանիվներ, զանազան սարքեր և այլն: Առանձնապես նկատելի տեղ էին բռնում նավթն ու ծխախոտը: Նավթի վաճառքով զբաղվում էր Ա. Ի. Մանթաշևի առևտրական ընկերության եգիպտական մասնաճյուղը:

Հողատիրության մեջ կատարվող փոփոխությունները, ինչպես նաև զարգացող առևտուրը նպաստեցին հայ կալվածատերերի երևան գալուն: 19-րդ դարի առաջին կեսին դրանց թվում էին Պողոս Յուսուֆյանը, Կարապետ Գալուստը և ուրիշներ, որոնք, ձեռք գցելով հողային մեծ տարածություններ, դրանք տալիս էին վարձակալության: 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբներին էլ ավելի մեծացավ հայ կալվածատերերի թիվը. նրանցից էին Նուբար փաշան, Պողոս բեյ Ղալին, Պողոս Կարապետը և այլք: Եգիպտոսի տարբեր նահանգներում առաջացան հայանուն էզեբներ կամ գյուղեր: Եգիպտոսի խոշոր կալվածատերերից էր Նուբար փաշան (Թամիեում): Նրան պատկանող միայն բամբակի պլանտացիաներն ունեին 12.000 ֆեդդան տարածություն: Մեծ չափերի հողեր ուներ նաև հայ լուսավորչական եկեղեցին:

Տնտեսապես զորեղ դիրքերի հասած հայերը մասնակցություն ցուցաբերեցին Եգիպտոսի ինքնուրույնության պայքարին: Հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, բարձր պաշտոններ զբաղեցնելով Մոհամեդ Ալիի դիվաններում, զգալի դեր էին կատարում Անգլիայի նվաճողական ծրագրերի ձախողման և Ալիի իշխանության ամրապնդման գործում: Հասնելով կառավարական ամենաբարձր դիրքերի՝ ա-

ռանձին հայ գործիչներ հաճախ վճռական ազդեցություն էին ունենում Եգիպտոսի պետական գործերի վրա:

Եգիպտոսի պետական խոշոր գործիչներից էր Պողոս Յուսուֆյանը: Նրա մասին Եգիպտոսի կառավարիչ Մոհամեդ Ալին ասում էր. «Կյանքումս համարյա միշտ մենակ եմ եղել, բացի Պողոս բեյից ուրիշ ոչ ոք չեմ ունեցել ինձ փոխարինելու համար»: Ըստ էության, Պողոս Յուսուֆյանը Եգիպտոսի պրեմիեր-մինիստրն էր: Նրա նախաձեռնության արդյունքն էին Եգիպտական նոր պետության կայացման հետ կապված շատ ծրագրերի հղացումն ու իրականացումը: Նրա նախաձեռնությամբ Եգիպտոսում մտցվեցին պետական մոնոպոլիաները, որոնք դարձան երկրի ինքնուրույնության գրավականը: Իրականում Պողոս բեյի ձեռքում էին գտնվում երկրի արտաքին, ներքին, ֆինանսական, առևտրական և մինչև անգամ զինվորական գործերը:

1830–1850-ական թվականներին Եգիպտոսում նշանավոր գործիչ էր Արթին Զարքյանը: Նա Մոհամեդ Ալիի կաբինետում դրսևորել է պետական գործչի փայլուն ընդունակություններ: 1891 թ. Զարքյանը գլխավորում է եգիպտական պատվիրակությունը Լոնդոնի կոնֆերանսում, 1894 թ. նշանակվում եվրոպական գործերի և եգիպտական վաճառականության նազիր: Հաղթահարելով մեծ դժվարություններ՝ նա կարողացավ բարեկարգել և անգլիական հյուպատոսների ոտնձգություններից պաշտպանել մաքսային և փոստ-հեռագրական վարչությունները, առևտրական դատարանները, բամբակի պլանտացիաները:

Նշանավոր գործիչ էր Նուբար փաշա Նուբարյանը: Մինչև 1865 թ. նա վարում էր բազմաթիվ պաշտոններ, որոնցից կարևորագույնը երկաթուղու վարչության պետի պաշտոնն էր: Նա չորս անգամ (1866 թ. մինչև 1888 թթ.) նշանակվել է Եգիպտոսի արտաքին գործերի նախարարի պաշտոնում, իսկ 1879 թ. մինչև 1896 թ. երեք անգամ ընդմիջումներով վարել է երկրի պրեմիեր-մինիստրի պաշտոնը: Ելնելով Եգիպտոսի շահերից՝ Նուբարը օգտակար էր համարում եգիպտացիների և եվրոպացիների համագործակցությունը, սակայն վերջիններիս ոչինչ չէր զիջում իր իշխանությունից և, Սաբրեի վկայությամբ, «նրանց պահում էր իր հանճարեղ ղեկավարության ներքո»:

1867–1876 թթ. ութամյա պայքարի ընթացքում Նուբարը իրականացրեց դատական ռեֆորմ, ստեղծեց քաղաքացիական, առևտրական, քրեական կոդեքսներ և հյուպատոսական դատարանները փոխարինեց

միջազգային կամ խառը դատարաններով, որոնք կազմված էին եգիպտացիներից և եվրոպացիներից:

Այսպիսով, հայ պետական գործիչները, Եգիպտոսի շահերին համապատասխան, մասնակցում էին ինքնուրույնության համար երկրի պայքարին՝ ակտիվորեն խթանելով նրա այդ ձգտումները:

* * *

19-րդ դարի 60-ական թվականներից սկսած՝ եգիպտահայ հասարակական կյանքը բնորոշվում էր տեղում ազգային սահմանադրության կիրառման համար մղված պայքարով: Այդ հողի վրա եգիպտահայ գաղութի ներքին կյանքը ալեկոծվում էր բավական բուռն պայքարով: Նախքան Ազգային սահմանադրության հռչակումը եգիպտահայերը պայքարում էին Երուսաղեմի հայոց պատրիարքության թեւարկության դեմ: Դա մի պայքար էր, որ մղվում էր հոգևորականության՝ հանրային գործերը վարելու մենաշնորհի դեմ՝ հանուն ժողովրդի ներկայացուցիչների մասնակցությամբ համայնքային վարչակառավարման օրգանների ստեղծման: Հետագայում ժողովրդի պայքարն ուղղվեց մեծատունների ավագաժողովի, թաղական խորհուրդների և բարձրաստիճան հոգևորականության այն ձգտումների դեմ, որոնք միտում էին ի չիք դարձնել տեղում Ազգային սահմանադրության սկզբունքների կենսագործումը: 1872 թ. և դրան հաջորդած շրջանում պայքարը մանավանդ սրվեց, երբ եգիպտահայ մեծատունները բարձիթողի արեցին նշված դիվանի ընդունված «Սահմանադրական հրահանգը», որն առաջարկում էր սահմանադրության կիրառումը՝ ըստ տեղական պայմանների: Եգիպտահայ աշխատավորության սահմանադրական պայքարը, հարկավ, արձագանք էր այն շարժումների, որ Կ. Պոլսի հայ արհեստավորությունն ուղղել էր հանուն սահմանադրության կիրառման:

1907 թ. Կ. Պոլսի պատրիարքարանը, եգիպտահայ գաղութում առաջացած նոր պայմաններին համապատասխան, «Սահմանադրական հրահանգը» փոխարինեց 28 հոդվածներից բաղկացած մի նոր կանոնադրությամբ, որը կոչվում էր «Վարչական հրահանգ վիճակին Եգիպտոսի»: Նոր կանոնադրությունը հիմնված էր Ազգային սահմանադրության «ընդհանուր սկզբանց վրա և պատշաճեցված տեղական հանգամանքներուն»:

Ըստ «Վարչական հրահանգի», Կահիրեի և Ալեքսանդրիայի հայկական գաղութները դարձան միևնույն առաջնորդական թեմի երկու իրա-

վահավասար վիճակները: Նրանցից յուրաքանչյուրը ուներ ազգային, գավառական կամ երեսփոխանական, կրոնական, քաղաքական ժողովներ, ինչպես նաև եկեղեցու, վարժարանի, աղքատաց, դերեզմանատան հոգաբարձություններ: Վերացվեցին ուսումնական, տնտեսական, դատաստանական և թաղական խորհուրդները, և դրանց պարտականությունները ստանձնեցին քաղաքական ու կրոնական ժողովները, մասամբ էլ՝ հոգաբարձությունները:

Բոլոր ժողովներում նախագահում էր թեմական առաջնորդը, իսկ բացակայության դեպքում՝ առաջնորդական տեղապահը կամ առաջնորդական փոխանորդը: Թեմական առաջնորդին ընտրում էր թեմական ընդհանուր գավառական ժողովը, իսկ նրա փոխանորդին՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի քաղաքական ժողովների համատեղ նիստը: Առաջնորդի ընտրության արդյունքները ուժի մեջ էին մտնում Կ. Պոլսի ազգային կենտրոնական վարչության և Բ. Դռան հավանությունը ստանալուց հետո: Սուլթանական բարաթը ստանալուց հետո եգիպտական կառավարությունը առաջնորդին պաշտոնապես ճանաչում էր որպես եգիպտահայ համայնքի կրոնապետ:

Կազմական իր կանոնագիրն ուներ եգիպտահայ կաթոլիկական համայնքը: Վերջինս ստեղծվել էր տակավին 18-րդ դարի կեսերից, թեև պաշտոնապես ճանաչվեց միայն 1831 թ., երբ Բ. Դուռը հատուկ ֆերմանով հաստատեց Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից անկախ «կաթոլիկ միլլեթի» գոյության իրավունքը: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի վերջը եգիպտահայ կաթոլիկ թեմը վարչականորեն ենթակա էր Կ. Պոլսի, իսկ հետագայում՝ Զմմառի վանքի կամ Լիբանանի հայ պատրիարքությանը: Թեմի գործերը վարում էին թեմական առաջնորդները՝ հաշվետու լինելով միայն պատրիարքությանը:

Ըստ կազմական կանոնակարգի՝ Եգիպտոսի հայ կաթոլիկ թեմը ևս կազմված էր երկու՝ Կահիրեի և Ալեքսանդրայի վիճակներից: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր վարչական ժողովը և հարակից այլ օրգաններ՝ բոլորն էլ վիճակավոր առաջնորդի նախագահության ներքո: Վարչական ժողովը օժտված էր բավական լայն իրավունքներով և վերահսկում էր համայնքի շարժական և անշարժ գույքը, բոլոր տեսակի սեփականությունները:

Եգիպտահայ ավետարանականները կազմում էին եգիպտական ազգային-ավետարանական համայնքի հայկական հատվածը: 1906 թ. նրանք փորձեցին ստանալ ինքնուրույն համայնքի կարգավիճակ, նույ-

նիսկ պատրաստեցին հատուկ կանոնադրություն, որը, սակայն, եգիպտական իշխանությունները չհաստատեցին՝ պատճառաբանելով, որ բոլոր բողոքականները, անկախ ազգային պատկանելությունից, մտնում են մեկ հասարակության մեջ՝ «բրոթեսթյան միլլեթի անվան տակ ... ղպտի բողոքականներու օրինական հովանիին ներքո»:

Եգիպտահայերը ակտիվ վերաբերմունք դրսևորեցին Հայկական հարցի լուծման համար մղված պայքարի հանդեպ: Եվ արևմտահայ քաղաքական շրջանակները եգիպտահայությանը կարևոր տեղ էին վերապահում այդ խնդրում: Մկրտիչ Փորթուգալյանի համոզմամբ՝ եգիպտահայերը «պատվավոր մի դիրք պիտի բռնեն մեր ազգային վերանորոգության պատմության մեջ»: Եգիպտահայ հրապարակախոս Լազյանը հայ գաղութների հայրենասիրական ուժերին կոչ էր անում միավորվել և ստեղծել մի կենտրոնական վարչություն կամ գերագույն ժողով՝ կենտրոնատեղի ունենալով Եգիպտոսը: 1885 թ. նոյեմբերի 23-ին Կահիրեի հայ հասարակության ներկայացուցիչները ընտրեցին հանձնաժողով, որը պետք է դիմումներ աներ եվրոպական պետություններին՝ արևմտահայության վիճակը թեթևացնելու խնդրանքով: Առաջին դիմումը, 250 կահիրաբնակ հայերի ստորագրությամբ, ուղարկվեց լորդ Սոլսբերիին, բայց Անգլիայի արտգործնախարարությունից պատասխանեցին, թե Բ. Դռանը այս խնդրով դիմումներ անելու ժամանակը պետք է որոշվի հետագայում:

1880-ական թվականների կեսերին եգիպտահայ գաղութում ստեղծվեց «Հառաջդիմասեր» հայրենասիրական կազմակերպությունը, որի մեջ համախմբված երիտասարդները արևմտահայ պայքարի ելքը կապում էին Ռուսաստանի հետ: 1886 թ. ապրիլի 4-ին Կահիրեում տեղի ունեցավ «Հառաջդիմասերի» հիմնադիր ժողովը: Նույն տարվա վերջին Ալեքսանդրիայում կազմակերպվեց «Փրկատենչ» ընկերությունը, որը հետագայում վերանվանվեց «Արմենիայի» և դարձավ «Հառաջդիմասերի» մասնաճյուղը: Կազմակերպության անդամների թիվը հասնում էր 300-ի: Եգիպտահայերը ջերմորեն արձագանքում էին «Հառաջդիմասերի» կոչերին, նրան ցույց տալիս դրամական օգնություն: 1889 թ. Ալեքսանդրիայում սկսեց լույս տեսնել ընկերության շաբաթաթերթը «Նեղոսը»: Սակայն կազմակերպության անդամների և թերթի նկատմամբ իշխանությունները ձեռնարկեցին հետապնդումներ, ձերբակալություններ և հրապարակային դատավարություն: Ոստիկանական ճնշումների ներքո ընկերությունը գնալով թուլացավ և ի վերջո կազմալուծվեց:

Եգիպտահայ հասարակության տարբեր խավերը պահանջում էին Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի հիման վրա բարեփոխումներ կատարել Արևմտահայաստանում, բայց տարբեր ձևով էին պատկերացնում դրանց իրականացումը. հարուստ վերնախավի մի մասը այս շրջանում թուրքական կառավարությունից էր ակնկալում արևմտահայության վիճակի բարվոքումը, ազատականները այն կապում էին Եվրոպայի, իսկ ազգային-դեմոկրատական գաղափարներով տոգորված խավերը՝ Ռուսաստանի օգնության հետ:

1890-ական թվականների սկզբներին Կահիրեում հանդես եկան Հնչակյան առաջին խմբակները, որոնք, օգտվելով Եգիպտոսում առկա համեմատական ազատ պայմաններից, կարճ ժամանակում վերածվեցին բավական բազմամարդ կազմակերպության: 1897 թ. Հնչակյաններից անջատված հատվածը, վերանվանվելով «Վերակազմյալ Հնչակյան կուսակցություն», իր կենտրոնը հաստատեց Եգիպտոսում: Եգիպտոսի նրա օրգանը՝ «Ազատ բեմը», սուր քննադատության էր ենթարկում Հնչակյանների սոցիալիստական գաղափարախոսությունն ու դիրքորոշումը: «Ազատ բեմը» գտնում էր, որ Հնչակյանները ռուս ընկերվարականների հետ իրենց ձախորդ գործունեությամբ կվտանգեն ամբողջ հայության քաղաքական ապագան՝ չնչտելով, որ «հայերի փրկությունը ազգայնական ըլլալուն մեջ է և ոչ երբեք ընկերվարական»:

1899 թ. մայիսի 21-ին վերակազմյալները միտինգներ կազմակերպեցին Կահիրեում և Ալեքսանդրիայում՝ Լահեի «ընկերակցության վեհաժողովի» հետ միամտորեն կապելով քաղաքական ակնկալություններ: Ընդունվեց այդ վեհաժողովին ուղղված բանաձև-հեռագիր՝ պահանջելով «Հայաստանի մեջ իրական բարենորոգումներ ապահովել եվրոպական տերության հսկողության տակ»: Նման բովանդակությամբ հեռագրեր ուղարկվեցին վեց տերությունների արտաքին գործերի մինիստրներին, ԱՄՆ-ի պրեզիդենտին:

Վերակազմյալ Հնչակյանները քաղաքական ակնկալություններ չունեին Ռուսաստանից և հաճախ քննադատում էին նրա քաղաքականությունը: Նրանք Կահիրեում հակառուսական ցույց կազմակերպեցին՝ կապված հայկական եկեղեցական կալվածների բռնագրավման հետ:

Թուրքական նոր հարստահարությունների դեմ կաթողիկոսական պատվիրակության բողոք-դիմումներին սատար կանգնելու նպատակով 1904 թ. մայիսի 2-ին Կահիրեի Վարիետե թատրոնում Վերակազմյալ

հնչակյանները կազմակերպեցին բողոքի միջազգային մեծ միտինգ, որի ժամանակ ճառերով հանդես եկան հայ, արաբ և եվրոպացի քաղաքական գործիչներ:

Եվրոպական պետությունների հանդեպ Վերակազմյալ հնչակյանների ունեցած հույսերը սնանկ դուրս եկան, և դա հասցրեց կուսակցության պառակտմանն ու կազմալուծմանը:

1905–1906 թթ. եգիպտահայ մի շարք երևելի գործիչներ հանդես եկան «Հայկական ընդհանուր միություն» կազմակերպելու առաջարկով: Նրանց մտահղացմամբ՝ այդ միությունը, ընդգրկելով ազգի բանիմաց և կարող տարրերը, պետք է իր ձեռքն առներ նրա ղեկավարման գործը: 1906 թ. Պողոս Նուբարի, Յակուբ Արթինի, Անդրանիկյանի գլխավորությամբ և վերակազմյալ հնչակյաններ Վահան Թեքեյանի, Միհրան Տամատյանի, Էոժեն Բաբազյանի, Լևոն Մկրտչյանի և այլոց մասնակցությամբ ստեղծվեց գաղութահայ խոշոր բարեգործական ընկերությունը՝ «Հայ բարեգործական ընդհանուր միությունը»: Եգիպտահայ նշանավոր գործիչների աջակցությամբ մի շարք նախկին արմենականներ, վերակազմյալ հնչակյաններ և այլ գործիչներ Բուլղարիայում բանակցություններ վարեցին՝ ազգային-հեղափոխական կազմակերպությունների «Ընդհանուր միություն» ստեղծելու նպատակով: Հաջորդ տարի բանակցությունները շարունակվեցին Եգիպտոսում, և սեպտեմբերի 15-ին «Գաղափարական միության» և Վերակազմյալ հնչակյան կուսակցության միաձուլումով կյանքի կոչվեց «Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությունը», որը նպատակ ուներ Տաճկահայաստանը ազատագրել սուլթանական բռնակալական լծից և այնտեղ հաստատել սահմանադրական կարգ՝ Հայկական հարցը լուծելով ոչ թե Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործման, այլ Հայաստանի անկախության միջոցով: Սակայն կազմակերպությունը գրեթե կյանք չունեցավ, և 1908 թ. կրկին հավաքվելով Ալեքսանդրիայում՝ կուսակցության ղեկավարները (Գ. Պողիկյան, Մ. Տամատյան, Մ. Նաթանյան և ուրիշներ) հայտարարեցին, թե կազմակերպությունը լուծարվելով՝ իր ամբողջ կազմով միաձուլվում է «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն» անունով քաղաքական կազմակերպությանը, որը հիմնել են միացյալ կուսակցության լիազորները: ՀՍՌԿ-ն սկզբից ևեթ հայտարարեց, որ հրաժարվում է «ծայրահեղ աշխարհայացքներե և վիճելի ընկերային վարդապետություններե»: Սակայն Վերակազմյալ հնչակյանների զգալի մասը չմիաձուլվեց ոչ Գաղափարական միության և ոչ էլ

ՀՍՌԿ-ի մեջ և շարունակեց դեռ միաժամանակ գործել որպես ինքնուրույն կազմակերպություն:

1912–1914 թթ., երբ Հայկական հարցի պատմության մեջ նոր տեղաշարժեր էին առաջացել՝ կապված մանավանդ Բալկանյան պատերազմների հետ, եգիպտահայերը նույնպես լուրջ ջանքեր են գործադրում նպաստելու համայն հայությանը մտահոգող այդ հարցի լուծմանը: 1912 թ. Գևորգ Ե կաթողիկոսից ստացվում է նոյեմբերի 8-ի թվակիր «Ծածկաբար պաշտոնագիրը», որը եգիպտահայոց առաջնորդարանին հանձնարարում էր «տաճկահայ եղբայրց տառապագին վիճակին ի դարման» դիմումներ կատարել եվրոպական մեծ պետություններին և Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Ըստ այդմ, նույն թվականի դեկտեմբերի 13-ին եգիպտահայերի անունից հեռագիր-դիմումներ են ուղարկվում մեծ տերությունների կառավարություններին՝ խնդրելով օգնել արևմտահայությանը ընդդեմ ճնշման և սիստեմատիկ ջարդերի: Դիմում-հեռագրեր էին ուղարկվել ռուսական ցարին, Անգլիայի և Իտալիայի թագավորներին, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին: Նիկոլայ Երկրորդին հղած հեռագրում եգիպտահայերը, ի միջի այլոց, գրում էին. «Վստահելով Ձեր վսեմության մտահոգությանը և Ձեր կայսրության փառավոր ավանդույթներին, խոնարհաբար խնդրում ենք (Ձեր) շնորհը վերանձն նախաձեռնության՝ ասիական Թուրքիայում ճնշված մեր քրիստոնյա եղբայրների օգտին: Թախանձում ենք հայերի կյանքի, ինչքի, պատվի պաշտպանությունը»:

1912 թ. նոյեմբերի 10-ին ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակով Պողոս Նուբարը նշանակվում է կաթողիկոսական պատվիրակ՝ դրծակից ունենալով Գևորգ եպ. Ութուճյանին, Մինաս Չերազին, Հակոբ Արթինին, Հարություն Մոստիչյանին: Ստեղծվել էր ազգային պատվիրակություն, որը եվրոպական պետությունների կառավարություններին և Կ. Պոլսում նրանց դեսպաններին պետք է տեղեկագիր ներկայացներ և բացատրեր արևմտահայոց իրավազուրկ կացությունը և արևմտահայ նահանգներում բարեփոխումների իրականացման անհետաձգելի կարևորությունը:

1913 թ. մայիսին Եգիպտոսի դաշնակցական ենթակոմիտեները, հնչակյան մասնաճյուղերը և սահմանադրական ռամկավար ակումբները համախմբվելով ստեղծեցին «Միջկուսակցական խառն մարմին», որի նպատակն էր գործնականապես և նյութապես նպաստել երկրի ժողովրդի սահմանադրական իրավունքների պաշտպանությանը, նրա քաղա-

քացիական և ազգային ապահովությանը, ինչպես նաև գալիք վտանգներին դիմագրավելու ուժին: Միջկուսակցական մարմինը ձգտում էր շարժման մեջ ներգրավել եգիպտահայ գաղութի բոլոր շրջանակները: «Հայտարարության» մեջ ասված էր, թե շարժումն ու նրա նպատակը կուսակցական չեն, «այլ համաժողովրդական, նույնքան թանկագին չեզոք հասարակության համար, որքան հեղափոխականին, նույնքան հրամայական անկուսակցային ժողովրդին համար, որքան կուսակցական շարքերուն»[1]:

1913 թ. հունիսի 4-ին եգիպտահայ շուրջ 60 երևելիներ, արձագանքելով Միջկուսակցական մարմնի կոչին, Կահիրեի ազգային սրահում գումարեցին ժողով և միաձայն հայտարարեցին, թե քաղաքական ներկա պայմաններում հայ ժողովրդի բոլոր խավերը պետք է համախմբվեն հայ դատի պաշտպանության համար և ազգի ինքնապաշտպանությունը դարձնեն անհետաձգելի գործ:

1913 թ. հունիսի 8-ին Կահիրեի Պրենտանիա թատրոնի դահլիճում տեղի ունեցավ Միջկուսակցական մարմնի միտինգը՝ անվանի գրող Տիգրան Կամսարականի նախագահությամբ: Ճառերով հանդես եկան հայ, արաբ և եվրոպացի քաղաքական գործիչներ: Իր ընդունած բանաձևում միտինգը ողջունում էր Եգիպտոսի հայ գաղութի համերաշխական շարժումը, բողոքում արևմտահայ նահանգներում տիրող անապահով վիճակի դեմ և դրանցում բարենորոգումների իրականացման միակ պայմանը համարում էր եվրոպական երաշխավորությունը: Բանաձևում նշված էր նաև, որ եգիպտահայությունը պատրաստ է իր նյութական և բարոյական աջակցությունը բերելու արևմտահայության կյանքի, գույքի և պատվի պաշտպանության գործին: Բանաձևը ուղարկվեց մեծ տերությունների արտաքին գործերի մինիստրներին, Կ. Պոլսի դեսպաններին, Բարձրագույն դռանը, Ամենայն հայոց կաթողիկոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարքին, Փարիզի ազգային պատվիրակությանը և եգիպտական թերթերին:

Բալկանյան պատերազմները խանդավառ հույսեր ներշնչեցին նաև եգիպտահայությանը: Այդ մթնոլորտում էլ կազմակերպվեց Ազգային ինքնապաշտպանության կոմիտեն, որը համախմբում էր Վերակազմյալ հնչակյան և Սահմանադրական ռամկավար կուսակցությունների լիբերալ ուղղություններից դժգոհ տարրերին: Նրա նախաձեռնողը նախկին

1 «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 48:

հնչակյան գործիչ Միհրան Տամատյանն էր: Կոմիտեն պաշտպանում էր Կիլիկիայում զինված ապստամբություն բարձրացնելու ծրագիրը, որը ծագեց Բալկանյան պատերազմի նախօրյակին՝ ապավինած Հունաստանից խոստացած զինական օգնությանը: Սակայն հունական կառավարությունը շուտով հրաժարվեց զենքով օգնելու իր խոստումից, իսկ Ազգային ինքնապաշտպանության կոմիտեին չհաջողվեց առագաստանավերով բեռնված զենքը հասցնել Զորք-Մարզվան, որովհետև գերմանական հածանավը շարունակ հերթապահում էր Կիլիկիայի ափերի մոտ:

Համաշխարհային պատերազմի տարիներին եգիպտահայությունը որոշակի նախաձեռնություն հանդես բերեց Պաղեստինում և Սիրիայում ֆրանսիական դրոշի տակ թուրքերի դեմ մարտնչող հայ կամավորական ստորաբաժանումների ստեղծման գործում: 1917 թ. Հայ ազգային պատվիրակությունը ընդառաջեց ֆրանսիական կառավարության առաջարկությանը՝ կամավորներ տրամադրելու մասին և բանակցություններ սկսեց եգիպտահայ քաղաքական կազմակերպությունների հետ: Վերջիններս պատրաստակամություն հայտնեցին աջակցելու գործի հաջողությանը, քանի որ ֆրանսիացիները խոստանում էին պատերազմի ավարտից հետո Կիլիկիայում հաստատել հայկական անկախ կամ ինքնավար պետություն: 1917 թ. նոյեմբերի 11-ին Կահիրեում դաշնակցության, ռամկավարների, վերակազմյալ հնչակյանների, Հայ բարեգործական ընդհանուր միության, Եգիպտահայ նպաստամատույցի, Զինվորական օգնության ֆոնդի և Հայ կարմիր խաչի պաշտոնական ներկայացուցիչների հանդիսավոր նիստում կազմվեց Հայ ազգային Միությունը, որը և ստանձնեց հայ կամավորական շարժման ղեկավարությունը: Շուտով Կահիրե ժամանեցին ֆրանսիական բանակի ներկայացուցիչները և Հայ ազգային միության հետ սկսեցին կամավորների հավաքագրումը: Շատ այլ շրջանների հայերի հետ միասին եգիպտահայերը ևս արձագանքեցին դաշնակիցների կոչին, և կազմվեց հայկական լեգեոնը: Հավաքագրվեցին շուրջ 4000 կամավորներ: Չնայած հայկական լեգեոնը խիզախորեն մարտնչեց թուրքերի դեմ, սակայն ֆրանսիացիները դրժեցին իրենց խոստումը և 1921 թ. Կիլիկիան հանձնեցին քեմալականներին:

Պատերազմի ժամանակ եգիպտահայերը ևս լծվեցին հայ գաղթականներին օգնելու գործին: 1915 թ. ստեղծվեց Եգիպտահայ նպաստամատույց մարմինը, որ միավորում էր տարբեր քաղաքական հոսանքների ներկայացուցիչների: Գործելով մինչև 1920 թ., Եգիպտահայ նպաստա-

մատույց մարմինը հանգանակեց 5 միլիոն եգիպտական դահեկան՝ այն ուղարկելով Կովկասի, Էջմիածնի, Պորտ Սաիդի, Բաղդադի, Ադանայի և այլ տեղերի հայ գաղթականներին: 1920 թ. օգոստոսին, երբ սովը և համաճարակները սպառնում էին Հայաստանի ժողովրդի գոյությանը, Եգիպտոսում կազմակերպվեց այսպես կոչված «Ոսկե ֆոնդի» հանգանակությունը: Եգիպտահայերը նվիրաբերում էին ոչ միայն ոսկե դրամ, այլև ոսկեղեն զարդեր և դրանք ուղարկում Հայաստանի սովյալներին:

* * *

19–20-րդ դարերում եգիպտահայ մշակույթը դարձավ գաղութահայ մշակույթի նկատելի դրսևորումներից մեկը: Եգիպտահայ գաղթօջախներում զարգացում ապրեցին դպրոցները, պարբերական մամուլը, տպագրական գործը, մշակութային ընկերությունները, գրադարան-ընթերցարանները, թատերական կյանքը և այլն: Մշակույթի զարգացմանը հիմնականում նպաստում էին արևմտահայ մտավորականության ներկայացուցիչները, որոնք գալիս և հաստատվում էին Եգիպտոսում: Նկատելի էր նաև արևմտահայ մշակույթի անմիջական ազդեցության դերը:

Եգիպտահայերը առաջընթաց քայլ կատարեցին մատաղ սերնդի ուսման բնագավառում: Ըստ որոշ տվյալների, դեռևս ֆրանսիական գրավման տարիներին Հարթ ալ-Զուելյայի հայոց եկեղեցուն կից գործել է դպրատուն: 1828 թ. Սբ. Աստվածածին եկեղեցուն կից, Եղիազար ամիրայի ծախսերով Կահիրեում բացվում է առաջին հայկական մասնավոր դպրոցը: Դա տարրական դպրոց էր, որտեղ կրոնից բացի, դասավանդվում էին նաև հայերեն, արաբերեն և թվաբանություն: Դպրատանը գրագետ քահանաների կողքին դասավանդում էին նաև Կ. Պոլսից և Զմյուռնիայից հրավիրված դասատուներ: 1854 թ. Եղիազարյան դպրատանը փոխարինեց Մովսես Խորենացու անվան արդիական դպրոցը. այն կառուցվեց Կահիրեի Բալուկ թաղում՝ մեծահարուստ Կարապետ Գալուստի միջոցներով, որը դպրոցին էր կտակել իր պատկառելի հարստության զգալի մասը: 1840-ական թվականներին Ալեքսանդրիայում սկսեց գործել Արամյան դպրոցը, որը 1867 թ. վերանվանվեց Պողոս-Բեյյան (Պողոս Յուսուֆյան), հավանաբար, դպրոցական նոր շենք տեղափոխվելու պատճառով: Խորենյան դպրոցը երկսեռ էր, իսկ Արամյան կամ Պողոս-Բեյյան դպրոցը մինչև 1866 թ. ուներ միայն արական բաժին:

Երկու դպրոցներում էլ ուսուցումը ձրի էր: Աշակերտներին անվճար տրվում էին դասագրքեր, գրենական պիտույքներ, համազգեստ և օրական մեկ անգամ ճաշ: Այդ դպրոցներում դասավանդում էին հայերեն, ֆրանսերեն, վայելչագրություն, արաբերեն, կրոնագիտություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, երաժշտություն, գեղագրություն և այլ առարկաներ: Դպրոցները գտնվում էին թեմական առաջնորդի և վերջինիս կողմից նշանակված հոգաբարձուների վերահսկողության տակ:

Նշված երկու հայկական դպրոցները մինչև 1880-ական թվականները ընդգրկում էին հազիվ 120 աշակերտ, և բազմաթիվ հայ երեխաներ սովորում էին Կահիրեի և Ալեքսանդրիայի օտար դպրոցներում: Մի շարք հայ երիտասարդներ, ի շարս եգիպտացիների, այս շրջանում պետական միջոցներով կրթություն էին ստանում Ֆրանսիայի, Ավստրիայի և Անգլիայի ուսումնական հաստատություններում՝ տարբեր մասնագիտությունների գծով:

1880-ական թվականներին հաջորդած տարիներին (1890–1917 թթ.) եգիպտահայ դպրոցների թիվը մեծացավ՝ 1914 թ. հասնելով 11-ի՝ 1590 աշակերտով: Կահիրեում գործում էին Խորենյան դպրոցը, Անարատ հղիության քույրերի միաբանության դպրոցը, 1897–1900 թթ.՝ Սմբատ Բյուրատի կենտրոնական երկսեռ կրթարանը, Հայ ավետարանական դպրոցը:

Սովորողների թվաքանակի և ուսուցման մակարդակի տեսակետից առաջին տեղը գրավում էր Խորենյան դպրոցը, որը 1897 թ. իր հիմնադրի անունով վերանվանվեց Գալուստյան վարժարան: Այն շուտով վեցամյակից վերածվեց ութամյա դպրոցի, որն ուներ իր մանկապարտեզը՝ ամբողջ Եգիպտոսում առաջին մանկապարտեզը: 1907 թ. դպրոցը տեղափոխվեց հարմարավետ նորակառույց շենք՝ Կահիրեի Մաարուֆ արդիական թաղում: Նոր շենքի կառուցման ծախսերի դերակշիռ մասը հոգացել էր Պողոս Նուբարը:

Գալուստյան վարժարանից հետո շարունակում էր աչքի ընկնել Ալեքսանդրիայի Պողոսյան (Պողոս-Բեյյան) դպրոցը, որը 1888 թ. տեղափոխվեց նորակառույց առաջնորդարանի առաջին հարկը: Դպրոցը ժամանակին դարձավ 8-ամյա, ուներ իր մանկապարտեզը: Հայկական դպրոցներ էին գործում նաև շրջանային քաղաքներում: Եգիպտոսում հայկական դպրոցներ ունեին հայ կաթոլիկ և ավետարանական համայնքները:

Եգիպտահայ կրթական և մշակութային կյանքի զարգացումը մի հայտնի չափով աղերսվում էր մշակութային ընկերությունների գործունեության հետ: 1880 թ. Կահիրեում հիմնադրվեց «Ուսումնասիրաց ընկերությունը», խնդիր ունենալով բարոյապես և նյութապես օգնել Խորենյան դպրոցին: 1884 թ. կեսերից Կահիրեում գործում էր «Կահիրեի հայոց բարեգործական ընկերությունը», որը լայն հասարակական-լուսավորական գործունեություն էր ծավալել և բաժնետիրական հիմունքներով առաջացած գումարներից օգնում էր նաև Խորենյան դպրոցին: 1897 թ. Կահիրեում հիմնադրվեց «Արաբկիրի հայոց կրթասիրաց ընկերությունը», որի նպատակն էր միջոցներ հավաքել Արաբկիրում դպրոց հիմնադրելու համար: Եռանդուն գործունեություն էր ծավալել Կահիրեի «Ընթերցասիրաց ընկերությունը»: Այն հիմնադրել էին հայ պանդուխտ երիտասարդները, որոնք կարողացան բացել լսարան-ընթերցարան քաղաքի հայության շրջանում հետաքրքրություն առաջացնելով հայ մշակույթի նկատմամբ: Կահիրեում մշակութային-կրթական նպատակներով գործում էին նաև բազմաթիվ այլ ընկերություններ և ակումբներ:

1898 թ. Կահիրեում կազմակերպվեցին մի շարք հայրենակցական ընկերություններ: Նրանց նպատակն էր օգնության ձեռք մեկնել 1894–1896 թթ. ջարդերի ժամանակ որբացած հայ երեխաներին: Դրանցից էին Վասպուրականի, Ակնի, Սեբաստիայի, Արաբկիրի որբախնամ կամ որբասիրաց ընկերությունները:

Մշակութային ընկերություններ կային նաև Ալեքսանդրիայում: Այստեղ գործում էին «Հայկական մատենադարանի» կամ, ինչպես հետագայում վերանվանվեց, «Ժողովրդական գրադարան-ընթերցարանի ընկերությունը», «Տիգրան Երկաթ ժողովրդային միությունը», «Զեյթունի բարեսիրաց ընկերությունը», «Հայ կաթողիկե բարեգործական ընկերությունը» և այլն: Ալեքսանդրիայում յուրօրինակ ակումբ-ընթերցարանի դեր էին կատարում «Կիլիկիա» և «Սասուն» սրճարանները:

1912–1915 թթ. եգիպտահայ գաղութում ասպարեզ էին իջել մի շարք պատանեկան և երիտասարդական ընկերություններ, որոնք զբաղվում էին նոր սերնդի ֆիզիկական դաստիարակությամբ: Ալեքսանդրիայում գործում էին «Կամք», իսկ Կահիրեում «Արարատ» մարմնամարզական միությունները: Սպորտային շարժման ոգեշնչող ղեկավարը պոլսահայ նշանավոր մարզիկ Շավարշ Քրիսյանն էր:

Եգիպտահայ գաղութում լույս էին տեսնում մի շարք պարբերականներ: 1865 թ. մարտի 16-ին Կահիրեում լույս տեսավ «ազգային, քաղաքական և բանասիրական» կիսամսյա «Արմավենի» լրագիրը: Լրագիրը հետևողականորեն ձգտում էր ամրապնդել լուսավորչական եկեղեցու ազդեցությունը: «Արմավենին» շատ կարճատև կյանք ունեցավ՝ նույն տարում այն դադարեց լույս տեսնել: Կարճատև կյանք ունեցավ նաև եգիպտահայ հաջորդ պարբերականը՝ «Նեղոսը», որը լույս տեսավ 1889 թ. Ալեքսանդրիայում: 1897 թ. Կահիրեում լույս ընծայվեց «Փարոսը», որից սկսած՝ պարբերականների զարգացումը բուռն ընթացք ընդունեց, և մինչև 1917 թ. եգիպտահայ գաղութում լույս տեսան 58 անուն հայերեն, հայատառ թուքերեն, ֆրանսերեն և անգլերեն խիստ այլազան պարբերականներ՝ օրաթերթեր, շաբաթաթերթեր, կիսամսյա լրագրեր, ամսագրեր, տարեգրքեր և այլն: Դրանց բոլորին հատուկ էր խայտաբղետ բովանդակությունը: Պարբերականներում տպագրվում էին ազգային, քաղաքական, տնտեսական, գրական-գեղարվեստական, մանկավարժական և այլ բնույթի նյութեր: Սակայն առավել շատ տեղ էր տրվում եգիպտահայ ներքին կյանքը հուզող հարցերին: Լավագույն պարբերականներ «Փյունիկը» (Սմբատ Բյուրատ), «Ազատ խոսքը» (Երվանդ Օտյան), «Շիրակը» (Արփիար Արփիարյան) և ուրիշներ ձգտում էին հայկական կյանքում արմատավորել առաջադիմական, դեմոկրատական գաղափարներ:

Եգիպտահայ գաղութում, ճիշտ է կարճ ժամանակով, գործել են երկու հրատարակչական ընկերություններ: Եգիպտահայ առաջին տպարանները հիմնվեցին 1830-ական թվականներին, սակայն դրանց կյանքը շատ կարճատև եղավ: Տպարանական գործը աշխուժացավ 1890-ական թվականներից, երբ Կահիրեում և Ալեքսանդրիայում հիմնվեցին բազմաթիվ տպարաններ, որոնցից մի քանիսը լուրջ ձեռնարկություններ էին, հագեցված էին արդիական սարքավորումներով, ունեին մի քանի լեզվով տառեր և սպասարկում էին ոչ միայն հայ պարբերական մամուլը, այլև կատարում էին առևտրին վերաբերող նյութերի տպագրություններ:

Աստիճանաբար զարգացում էր ապրում գրքերի հրատարակության և դրա հետ միասին գրավաճառության գործը:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբների եգիպտահայ պատմության և մշակույթի հետ առնչվում էին հայ գրականության անվանի գործիչներ Երվանդ Օտյանի, Արփիար Արփիարյանի, Վահան Թեքեյա-

նի, Տիգրան Կամսարականի, Տիգրան Երկաթի, Սմբատ Բյուրատի, Տիգրան Արփիարյանի և շատ ուրիշների գրական, գիտամանկավարժական և հրապարակախոսական գործունեության որոշ տարիները: Այդ տարիներին նրանք տվել են բարձրարժեք ստեղծագործություններ, գործուն մասնակցություն բերել եգիպտահայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին:

Եգիպտահայ մշակույթի ուշագրավ էջերից էր գաղութի թատերական կյանքը, որը բնութագրվում էր տեղական թատերախմբերի և հյուրեկ դերասանախմբերի բեմադրություններով: Մինչև 1900-ական թվականները տեղական մշտական գործող թատերախմբեր գաղութում չեն եղել: Որպես կանոն, դրանք կազմվում էին ըստ այս կամ այն ներկայացման հանդեպ եղած նախասիրությունների, գործում և կազմալուծվում էին, հանդես էին գալիս նորերը: Ներկայացումները տրվում էին որևէ ազգային հաստատության դպրոցի, հիվանդանոցի կամ աղքատների օգտին:

1900–1910 թթ. հանդես եկան մի շարք ոչ պրոֆեսիոնալ դերասաններ և նպաստեցին թատերական կյանքի աշխուժացմանը: Լ. Շիշմանյանի, Գ. Թերզիբաշյանի, Լ. Նիզամյանի, Գ. Իփրիկյանի, Քյուրքչյանի և տարբեր արհեստներով և աշխատանքներով զբաղված շատ այլ անձանց ջանքերի շնորհիվ կազմակերպվեցին «Փայլակ» և «Հայ բեմ» թատերախմբերը: Տեղական թատրախմբերի խաղացանկը ընդգրկում էր հայ թատերական գրականության լավագույն նմուշները, ինչպես օրինակ, Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ Բ», Թ. Թերզյանի «Սանդուխտ կույս», Սմբատ Բյուրատի «Վարդանանք», Բաֆֆու «Սամվել», Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտ», Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար», «Ջար ոգի», Ե. Օտյանի «Ջավալլը» և այլ պիեսներ: Եգիպտահայ առավել տաղանդավոր դերասանները հանդես էին գալիս նաև հայկական մյուս գաղութներում: Օրինակ, Սոֆիայում և Վառնայում մեծ հաջողությամբ անցան Լևոն Շիշմանյանի հյուրախաղերը:

Գաղութում հանդես էին գալիս նաև այսպես կոչված կես-պրոֆեսիոնալ խմբերը: Դրանք կազմված էին լինում մեկ-երկու պրոֆեսիոնալ դերասանի մասնակցությամբ: Եգիպտահայ պատմության փայլուն էջերից էր «Վարդանանց պատերազմի» բեմադրությունը Սիրանույշի մասնակցությամբ: Հռչակավոր դերասանուհին, ընդառաջելով Հառաջադիմասեր ընկերության հրավերին, անփորձ դերասանների հետ բեմ էր բարձրացել Վարդան Մամիկոնյանի կնոջ՝ Վարդանույշի դերում: 1887

Թ. փետրվարի 2-ին Կահիրեի Էոզբեկիեի թատրոնում կայացած այդ ներկայացումը պսակվեց մեծ հաջողությամբ:

Թ. Ֆասուլյաճյանի, Հ. Ալեքսանյանի և Ֆելեկյան քույրերի գլխավորած ոչ պրոֆեսիոնալ թատերախմբերը բեմադրում էին թուրքերեն լեզվով մելոդրամաներ: Դրանք, սակայն, լուրջ հաջողություն չէին գտնում թատերական բարձր ճաշակ ունեցող եգիպտահայոց շրջանում և անցնում էին կիսադատարկ դահլիճներում:

1906–1907 թթ. մեծ հաջողությամբ անցան Արմեն Արմենյանի կազմակերպած կես-պրոֆեսիոնալ թատերախմբի բեմադրությունները՝ հայկական և արևմտաեվրոպական պիեսների խաղացանկով, այդ թվում՝ Էմին Տեր-Գրիգորյանի «Դամոկլյան սուրը», Ա. Շիրվանզադեի «Եվդինեն», Իբսենի «Ուրվականները», Ալ. դե Մյուսեի «Վաղաժամ վճիռը» և այլն:

Գաղութի թատերական կյանքում իսկական գեղարվեստական իրադարձություններ էին պոլսահայ և կովկասահայ թատերախմբերի հյուրախաղերը: Մանավանդ լայն ընդունելություն էր գտել Սերովբե Պենկլյանի թատերաերաժշտական խումբը, որի մեջ ընդգրկված էին արևմտահայ թատրոնի լավագույն ներկայացուցիչներ Մնակյանը, Թրյանը, Զափրաստը, Կյուրեղյանը, Կյումուշյանը, Սիրանույշը, Գարագաշյան քույրերը, Աստղիկը, Աղավնի-Զաբելը և ուրիշներ, թվով 45 դերասան-դերասանուհիներ: Խմբի խաղացանկում էին Զուխաճյանի «Լեբլեբիջին», ֆրանսերենից թարգմանված բազմաթիվ օպերետներ՝ «Մադամ Անկոն», «Ժիրոֆլե-Ժիրոֆլան», «Լի Բրիգան», «Լա ռել Էլենը», ինչպես նաև զավեշտական ոդևիլներ՝ «Փեմբե կղը», «Բարեկենդանի հարսը», «Զրաղացպանի աղջիկը» և այլն: Դերասանախումբը Կահիրեում ներկայացումներ էր տալիս Էոզբեկիեի, իսկ Ալեքսանդրիայում՝ Ալհամբրիայի նշանավոր թատերասրահներում:

Պենկլյանի առաջին ներկայացմանը՝ «Լեբլեբիջիի» բեմադրությանը, որը պսակվեց մեծ հաջողությամբ, ներկա էին Նուբար փաշան և ուրիշ պետական անձինք՝ «հանդերձ ընտանյոք» և «հոյակապ անդամուհիք Կահիրեի հայ դաղթականության»: «Արևելքի» վկայությամբ՝ Կահիրեի թերթերը «համակրական ջերմ ոճով մը խմբագրյալ հոդվածներ հրապարակեցին... առհասարակ դրվատեցին ընդհանուր դերասանայ և ի մասնավորի Պենկլյանի և Սիրանույշի ճարտարությունն, որ հաճախ բուռն ու երկարատև ծափահարություններ կորզեց հանդիսականներեն»: 1887 թ. Պենկլյանի դերասանախումբը կրկին Եգիպտոսում էր, և Նուբար

փաշայի միջնորդությամբ նրա առջև բացվել էին խդիվիալ՝ արքունական թատրոնի դռները: Խդիվ Թևիկը հովանավորում է հայ դերասաններին՝ նրանց տալով առատ նվերներ: Հետագա տարիներին ևս Պենկլյանի խումբը քանիցս հյուրախաղերով այցելում է Եգիպտոս՝ դրավելով հայ և օտար հանդիսատեսի ուշադրությունը:

1917–1908 թթ. Եգիպտոս ժամանեց կովկասահայ թատերախումբը: Ալեքսանդրիայում և Կահիրեում խումբը ներկայացրեց հայ և եվրոպական դրամատուրգների մի քանի պիեսներ՝ «Մեդեա», «Պաղտասար աղբար», «Դավաճանություն», «Համլետ», «Զավակը» և այլն:

1911 թ. Եգիպտոս հրավիրված Կոմիտասը Ալեքսանդրիայում տալիս է մի շարք դասախոսություններ և համերգներ: Նա դասախոսում է հայ գեղջկական և եկեղեցական երաժշտության ծագման, զարգացման և արդի վիճակի մասին: Ալեքսանդրիայում նա կազմակերպում է 190 հոգուց բաղկացած երգչախումբ: Կոմիտասի համերգները լուրջ իրադարձություններ էին Կահիրեի և Ալեքսանդրիայի երաժշտական կյանքում առհասարակ: Եգիպտական թերթերը տպագրեցին բազմաթիվ դրվատական հոդվածներ՝ նշելով նաև Կոմիտասի և նրա գործի միջազգային նշանակությունը: Կոմիտասի համերգի ազդեցությամբ Ալեքսանդրիայի ֆրանսիական թերթերից մեկը գրել է. «Անցյալ երեկո Ալհամբրիայի բեմին վրա հայ ժողովրդի հոգին էր, որ ամբողջովին թրթռաց. հոգի մը՝ համակ եռանդ, զոր ոչ մեկ ուժ պիտի կրնար բանտել կամ մարել: Դիշերվան սարսուռին մեջ ներդաշնակ խոսքեր և հնչյուններ, ցեղին զգացմունքներովն արյունված և շաղագույն, կիջնեին խաղ առ խաղ. ցեղի մը, որ իր հպարտությունը կպահեր և իր փոքրիկ համայնքեն իսկ ճոխություններ կպարգևեր մարդկության»:

Եգիպտական թերթերը, հայ և օտար, դրվատալից հոդվածներ հրապարակեցին նաև Արմենակ Շահմուրադյանի համերգների մասին, որոնք նա տվեց 1912 թ. Կահիրեում և Ալեքսանդրիայում: «Հոսանք» թերթի գնահատականով՝ երգիչը «իր զմայլելի ձայնով թովեց, սքանչացուց, գինովցուց ներկաները»:

Ուշագրավ էին եգիպտահայ նվագախմբերի համերգները: 1899–1900 թթ. Ալեքսանդրիայում իր գործունեությունը սկսեց եգիպտահայ առաջին նվագախումբը՝ իտալացի դիրիժոր Բուչիավելլիի ղեկավարությամբ: Խումբը կատարում էր հայ և եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ: 1901–1902 թթ. Կահիրեում սկսեց գործել «Ա-

բարատյան ազգային նվագախումբը»՝ Ֆրանսիացի դիրիժորի ղեկավարության ներքո:

20-րդ դարի սկզբներին եգիպտահայերը տվեցին կերպարվեստի մի շարք գործիչներ (Շապանյան, Սքառչելի՝ Յակուբ Արթինի դուստրը, Առաքելյան, Կարապետյան, Շիշմանյան): Եգիպտոսում կային անվանի հայ ճարտարապետներ (Կարո Պալյան, Լևոն Նաֆիլյան, Զարքյան, Նուրյան, Տամատյան և այլն): Նաֆիլյանը հռչակված էր իբրև բազմահարկ շենքերի կառուցող, իսկ Կ. Պալյանի կառուցած շենքերը «պարզության և ներդաշնակության գլուխգործոցներ էին»:

Այսպիսով, եգիպտահայ գաղութը ունեցել է ուրույն մշակութային կյանք, որը, լինելով հայ մշակույթի անբաժան հատվածներից մեկը, ծառայել է տեղի հայության հոգևոր-մշակութային պահանջների բավարարմանը:

Հայ-սիրիական առնչությունները ունեն ավելի քան երկու հազարամյա պատմություն: Հելլենիստական դարաշրջանում Սիրիայում և Միջագետքում հիմնվեցին քաղաքներ, որոնք առևտրական կապեր էին պահպանում նաև Հայաստանի, հատկապես Փոքր Հայքի և Ծոփքի քաղաքների հետ: Հայ-սիրիական կապերը զարգացման առավել նպաստավոր պայմանների մեջ հայտնվեցին Տիգրան 2-րդի օրոք, երբ, գրավելով Միջագետքի և Սիրիայի մեծ մասը, հայոց արքան տիրեց նաև հելլենիստական աշխարհի միջազգային այնպիսի մի կարևոր ճանապարհի, որպիսին Պարսից ծոց-Զևգմա-Անտիոք ճանապարհն էր: Հայոց նոր մայրաքաղաք Տիգրանակերտը դարձել էր Արևելքում միջազգային առևտրի խոշոր կենտրոններից մեկը: Տիգրան 2-րդի աշխարհակալությունից հետո էլ դեռ երկար ժամանակ Սիրիան Հայաստանի հետ կապված էր Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհով, որը Միջին Ասիա տանող մայրուղու հատվածներից մեկն էր:

Առևտրատնտեսական կապերը Սիրիայի և Հայաստանի միջև սերտ բնույթ էին կրում 5-րդ դարի երկրորդ կեսից սկսած, ինչպես նաև արաբական տիրապետության շրջանում, երբ միջազգային առևտրի կարևոր օղակների դեր խաղացող Սիրիայի և Միջագետքի քաղաքների հետ Հայաստանը կապված էր մի քանի ճանապարհներով, և նրա քաղաքները աչքառու մասնակցություն էին ցուցաբերում Արևելք-Արևմուտք առևտրական գործառնություններին:

Հին ժամանակներից ի վեր, քաղաքական հանգամանքների և առևտրատնտեսական կապերի բերումով, Միջագետքում և Սիրիայում սկսում է հաստատվել հայ բնակչություն: Առաջին դարի կեսերին Խառանից ոչ հեռու, դաշտային և լեռնային վայրերում կային հայկական գյուղեր[1]: Հնագույն ժամանակներից սկսած՝ հայերը կազմում էին Ուռհայի (Եդեսիայի) բնակչության զգալի մասը: Փավստոս Բուզանդը նույնիսկ ենթադրում է, թե «Ուռհա քաղաք չինեալ է նախնեացն մերոց»: Հայերը Պաղեստինում (մեծ մասամբ՝ Երուսաղեմում) հնուց ի վեր հիմնել էին իրենց վանքերը: Հակաքաղքեդոնական պայքարը հովանավորող Օմար խալիֆը (634–644) թույլ տվեց Երուսաղեմից վտար-

---

1 *Հ. Խ. Թ ո փ ո ւ զ յ ա ն, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, էջ 8–9:*

ված հայ, աղվան և ասորի հակաքաղքեդոնականներին վերադառնալ սուրբ քաղաքը և տեր կանգնել իրենց վանքերին ու կալվածքներին[1]:

Արաբների տիրապետության շրջանում արտադաղթի դիմած հայության նկատելի հատվածը հանգրվանեց Սիրիա-Միջագետքում՝ 8-րդ դարում կազմելով բավականին խոշոր թվաքանակ: Հովհան Օձնեցի կաթողիկոսը (716–728) Սիրիա է ուղարկում երեք եպիսկոպոս, որպեսզի այնտեղի հայերը հավատարիմ մնան ազգային եկեղեցուն և չընկրկեն քաղքեդոնականության առաջ:

12–13-րդ դարերում հայերը արդեն կազմում էին Սիրիայի և Հյուսիսային Միջագետքի ազգաբնակչության նկատելի տարրերից մեկը: Առավել մեծ հայկական գաղթօջախներ էին հաստատվել մանավանդ Հյուսիսային Սիրիայում և վերին Միջագետքում: Ընդարձակ տիրություններ ունեին Պահլավունիները, Հայաստանից գաղթած այլ իշխանները, ինչպես նաև բյուզանդական բանակի հայ զորականները: 10-րդ դարում հայերը ասորիների հետ միասին կազմում էին Ուռհայի իշխանության բնակչության ճնշող մեծամասնությունը: Ուռհայում հաստատված էր հայ եպիսկոպոսական աթոռ:

Հայկական նշանավոր գաղթավայրեր կային Սամոսատում (Շամշատ), Թլպաշարում, Բիրեջիկում, Սրուճում, Ամիդում, Մոսուլում և այլ տեղերում: Սիրիայի հայաշատ քաղաքներից էր Անտիոքը, ուր 10–13-րդ դարերում հաստատված էր հայ եպիսկոպոսական աթոռ: Մեծ մասամբ հայաբնակ էին Անտիոքի հարևան Սելևկիան (Սվեդիա), Կասիոսը (Քեսապ), Ալեքսանդրեսը, Շաղրը՝ իրենց շրջակա գյուղերով:

12–13-րդ դարերում հայկական գաղթօջախներ ձևավորվեցին նաև Լատակիայում, Հոմսում, Տրիպոլիում, Ակրայում: Այս վերջինը 13-րդ դարի կեսերին, Երուսաղեմի անկումից հետո, դառնում է խաչակիրների գլխավոր կենտրոնը՝ ղեկավար ունենալով հայ իշխանի: Հայերի թիվը նշանակալից էր Երուսաղեմում. այստեղ հայերն ապրում էին առանձին թաղերում, որոնցից մեկը կոչվում էր Ռյուգա Արմենորիում:

Սիրիայի և Միջագետքի հայկական գաղթօջախների հիմնական զբաղմունքը 11–13-րդ դարերում երկրագործությունն էր: Այդ գործությունն ու պտղաբուծությունը զարգացման բարձր աստիճանի էին հասել: Մշակվում էր նաև բամբակ, որից պատրաստվում էին բեհեզներ

---

1 Ղ. Ա լ ի շ ա ն, Հայապատում. հ. 1, Վենետիկ, 1901, էջ 520:

և այլ գործվածքներ: Հայերը պատրաստում էին նաև բրդյա և մետաքսյա գործվածքներ:

Սիրիայի և Միջագետքի հայկական գաղութները զարգացած առևտրաարհեստագործական կենտրոններ էին և ակտիվ մասնակիցը լևանտյան առևտրի մեջ, որը մինչև 13-րդ դարը հիմնականում ընթանում էր սիրիական ծովափի վրայով:

11–13-րդ դարերում, չնայած թուրք-սելջուկների և խաչակիրների արշավանքների հետևանքով առաջացած քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր վերուվարումներին, Սիրիայի և Միջագետքի հայկական գաղութները պահպանել էին իրենց գոյությունը և շարունակում էին նշանակալից դեր խաղալ այդ վայրերի տնտեսական և մշակութային կյանքում:

Եթե 13–15-րդ դարերում, մամելյուկների կողմից սիրիական ծովափը գրավելու հետևանքով, Արևելք-Արևմուտք առևտրական ուղին փոխել էր իր ուղղությունը և անցնում էր Էգեյան ծով-սևծովյան նեղուցներ-Ղրիմ-Ազով ուղիով, ապա 15-րդ դարի կեսերից սկսած, հատկապես Կ. Պոլիսը թուրքերի կողմից գրավելու հետևանքով, այդ ուղին դառնում է դժվարանցանելի, և միջազգային առևտրաապրանքափոխանակման մեջ վերստին կարևորություն են ստանում սիրիական տարածքները, մանավանդ Թավրիզ-Հալեպ ճանապարհը: Այս շրջանում, 14-րդ դարի վերջերից սկսած, գնալով զորանում է հալեպյան գաղութը: 15–18-րդ դարերում ապրելով առևտրատնտեսական և մշակութային բավականին զարգացած վիճակ: Հայերը քաղաքում ունեին իրենց Սբ. Աստվածածին եկեղեցին[1], որի հովանու տակ 1429 թ. Ստեփանոս Երեցը գրել է մի ժողովածու: 1499–1500 թթ. հալեպահայ մեծատուն ռեյիս Իսայի միջոցներով քաղաքում կառուցվում են հայոց առաջնորդարանի շենքը, ուխտավորական հյուրատունը («Հոգետունը») և մի նոր եկեղեցի՝ Սբ. Քառասուն Մանկանցը:

15–18-րդ դարերի հալեպահայ գաղութը կազմավորվել էր Հայաստանի այլևայլ վայրերից և տարբեր պատճառներով այնտեղ եկած հայերից: Հալեպահայության մեջ նկատելի թիվ էին կազմում ջուղայեցիները, երևանցիները, արցախցիները, էրզրումցիները, սեբաստացիները, սասունցիները, ուռհայեցիները և այլք: Սիմեոն Լեհացու վկայութ-

1 Ա. Սյուրմելյան, Պատմություն Հալեպի հայոց. հ. 3, Փարիզ, 1950, էջ 26:

յամբ, 1616 թ. Հալեպում կար 300 տուն հայ: 1652 թվականին Հալեպի հայության թիվը հասնում էր ավելի քան 20 հազարի:

16-րդ դարի կեսերից Սիրիայի տարբեր քաղաքներում առաջացան եվրոպական առևտրական հաստատություններ, որոնք հիմնականում Հալեպում էին փոխանակում իրենց մահուդը արևելյան ապրանքների և առաջին հերթին հում մետաքսի հետ, որը 16–18-րդ դարերում Եվրոպայի և Մերձավոր արևելքի միջև կատարվող ապրանքափոխանակության հիմնական ապրանքն էր: Ավելի քան մեկ ու կես դար (16–17-րդ դարերում) Հալեպի՝ Արևելքի այդ «մեծ մայրաքաղաքի», մետաքսի շուկայում, որը Սիրիայում ամենախոշորն էր, տիրապետող դիրքերը գտնվում էին հայ վաճառականների ձեռքին: Տարբեր ժամանակներում Հալեպում գործել էին հայ երևելի խոջաներ Սաֆարը, Խաչիկը, Նազարը, Փանոսը, Պետիկը և ուրիշներ՝ իրենց ձեռքում պահելով առևտրի ամենակարևոր լծակները՝ Հալեպի «կումրուկն, մութասիպությունն, սուպաշությունն, խաներն, փողերանոցը» և այլն[1]:

Քաղաքի հայ վաճառականները սեփական միջոցներով և իրենց հաշվին Ֆրանսիա էին տեղափոխում Սիրիայի և Պարսկաստանի հում մետաքսի խոշորագույն մասը: Իրենց գործունեության ընթացքում նրանք 16-րդ դարում ստիպված էին պայքարել Սիրիայում նստած վենետիկյան կունցի (հյուպատոսի) և նրա գործակալների դեմ:

16–17-րդ դարերում հալեպահայ առևտրական դասի ներկայացուցիչները աշխույժ առևտուր էին անում Վենետիկում, Լիվորնոյում, Ամստերդամում, Մարսելում և այլ քաղաքներում՝ ամենուրեք ունենալով առևտրի ազատ պայմաններ: Ֆրանսիայի Լյուդովիկոս 13-րդ թագավորը (1610–1643) հատուկ հրովարտակով իր հովանավորության տակ էր առել իրենց ապրանքներով Արևելքից Ֆրանսիա եկող հայ վաճառականներին:

Հալեպի հայ վաճառականները բարգավաճ առևտուր էին անում Հոլանդիայում: 1616 թ. հալեպահայ խոջաները՝ Պետիկն ու Սանոսը, Ամստերդամում հում մետաքսի վաճառքի համար պայմանագիր էին կնքել տեղացիների հետ, պայմանագիր, որում խոջա Պետիկը հանդես էր գալիս որպես Հոլանդիայի «նորին մեծության թագուհու էմինը», այսինքն՝ առևտրական գործերի ներկայացուցիչը Սիրիայում:

---

1 *Ա. Սյուրմելեան, Պատմութիւն հայերէն ձեռագրաց Հալեպի. հ. 1, Երուսաղէմ, 1935, էջ 151:*

Հալեպահայ գաղութին բնորոշ էր նաև արհեստների զարգացումը: Հալեպահայերը համբավավոր ոսկերիչներ էին, սաղաֆագործներ, ներկարարներ, դերձակներ, մուշտակագործներ, մագաղաթ և թուղթ կոկողներ, բուսական յուղ և քիմիական ներկեր պատրաստողներ և այլն:

16–17-րդ դարերում ունիթորական շարժումը, որը լայն տարածում էր գտել Մերձավոր արևելքում, այդ թվում նաև Սիրիայում, չնայած տնտեսական և քաղաքական առատ խոստումներին, առանձնապես լուրջ հաջողություն չարձանագրեց Սիրիայի հայերի շրջանում: Մեկդարյա աղմկարարությունից հետո, 17-րդ դարի վերջերին, նրան հաջողվեց հայ եկեղեցուց անջատել ընդամենը մի քանի հազար հայ՝ մեծ մասամբ հալեպահայեր: Սակայն հակակաթոլիկական պայքարը հարկադրեց հայ կաթոլիկ համայնքի առաջնորդ Արծիվյանին իր աթոռը Հալեպից տեղափոխել Լեռնային Լիբանան և ի վերջո 1749 թ. հաստատվել հայ կաթոլիկների նորակառույց վանքում՝ Զմմառում:

15–18-րդ դարերում հալեպահայ գաղութը կերտեց մշակութային ուշագրավ արժեքներ: Մանավանդ նկատելի է գաղութի թողած ձեռագրական ժառանգությունը: Հալեպի դասատանը շուրջ հարյուր տարվա ընթացքում (16-րդ – 17-րդ դարերում) ստեղծվել են հարյուրավոր ձեռագրեր, որոնցից ավելի քան երկու հարյուրը պահպանվել են առ այսօր: Դրանք ավետարաններ են, սաղմոսներ, տաղարաններ, բժշկարաններ և այլն: Ուշագրավ է, օրինակ, Մուրադ Սարգսի պատրաստած արհեստագիտական ձեռնարկը՝ «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց» վերնագրով: Ձեռագիրը նպատակ ուներ օգնել հայ ոսկերիչներին և ակնագործներին: Մուրադը դասակարգել է ավելի քան երեսուն տեսակ ազնիվ քարեր՝ նկարագրելով դրանցից յուրաքանչյուրի տարբերակները, հատկությունները և մշակման եղանակները: Պատահական չէր, որ Մուրադ Սարգսի ձեռագիրը լույս է տեսել Պետերբուրգում՝ Քերովբե Պատկանյանի թարգմանությամբ:

Հալեպահայերը որոշակի արժեքներ են ստեղծել գեղանկարչության բնագավառում: Մինչև այսօր Հալեպի հայկական եկեղեցիներում պահպանվել են 17–18-րդ դարերի հալեպահայ նկարիչների շատ գործեր:

* * *

Սիրիայի և Միջագետքի հայկական գաղթօջախների պատմությունը երբեք չի ընդհատվել, և 19–20-րդ դարերում ևս դրանք շարունակում էին մնալ որպես հայաշատ գաղթավայրեր: 19-րդ դարում օսմանյան

տիրապետության տակ գտնվող Սիրիան բաժանված էր վարչատարածքային հետևյալ միավորումների՝ Հալեպի, Սիրիայի, Բեյրութի վիլայեթներ կամ նահանգներ և Լեռնային Լիբանանի և Դեյր Էզ-Զորի մութասարիֆաթներ: Այդ բոլոր միավորումներում էլ կային հայկական համայնքներ, որոնցում 1870–1880-ական թթ. հաշվվում էին 80–85 հազար հայեր: Հայաշատ կենտրոններից էին Հալեպն ու նրա սանջակը, Անտիոքը, Ջեբել Մուսայի և Ջեբել Ակրայի գյուղերը, Քեսապը, Բեյլանի կազայի հայաբնակ գյուղերը, Ալեքսանդրետի կազայի գյուղերը, Լատակիան և այլն:

19–20-րդ դարերում Սիրիայի և Լիբանանի հայ գաղութների հիմնական զբաղմունքները արհեստներն էին, առևտուրը և գյուղատնտեսությունը:

Մինչև 19-րդ դարի 40-ական թվականները Սիրիայի քաղաքները արհեստագործության նշանավոր կենտրոններ էին, իսկ Հալեպը բամբակյա, բրդյա և մետաքսյա գործվածքների արտադրության համար ստացել էր Արևելքի Մանչեստր անունը: 40-ական թվականներից սկսած՝ եվրոպական ապրանքների ներհոսքը խիստ բացասաբար է անդրադառնում արհեստագործության զարգացման վրա: Եվ այդուհանդերձ, 19-րդ դարի կեսերից Սիրիայում սկսում է աշխույժ զարգացում ապրել արհեստագործությունը՝ կապված սննդի, հագուստեղենի, կենցաղային և առևտրի միջոցներին սպասարկող առարկաների արտադրության հետ: Հայերը իրենց ակտիվ մասնակցությունն ունեին Սիրիայում բոլոր արհեստների զարգացման մեջ՝ թե որպես նշանավոր վարպետներ և թե որպես ձեռնարկատերեր:

Արհեստագործության կարևոր ճյուղերից էր գորգագործությունը, որով զբաղվում էին նաև Հալեպի, Դամասկոսի և այլ վայրերի հայերը: 1898 թ. Հալեպում բացվում է վարպետ Կարապետ Քհհեայանի գորգագործական արհեստանոցը, որը 1912 թ. արդեն դարձել էր խոշոր ձեռնարկություն՝ 120 դազգահով և շուրջ 600 աշխատավորով: Ձեռնարկության արտադրանքը, բացի ներքին շուկայից, սպառում էր գտնում նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում: 1908 թ. ձեռնարկության գորգերը Հալեպում կազմակերպված տոնավաճառ-ցուցահանդեսում արժանանում են ոսկե մեդալի:

Ամենատարածված արհեստներից էր ջուլհակությունը: Քաղաքներում և գյուղերում հայ չքավորի բնակարանից անբաժան էին ջուլհակի «հորը» և դազգահը: Ջուլհակությունը «որքան այրերու, նույնքան և

կանանց համար» ապրուստի միջոց էր: Զուլհակությամբ զբաղվում էին թե արհեստանոցներում, թե տնային պայմաններում: Հայ ջուլհակագործները արտադրում էին ոսկեթել կամ արծաթաթել, գունավոր նախշերով զարդարված մետաքսյա և բամբակյա գործվածքներ, որոնք օգտագործվում էին արևելյան զգեստներ, վարագույրներ, սփռոցներ, ծածկոցներ և կենցաղային այլ նշանակության իրեր պատրաստելու համար: Տեքստիլ արդյունաբերության և գորգագործության արտադրանքի որակը շատ բանով պայմանավորված էր ներկերով: Սիրիական գործվածքներում տարածված էին կարմիր, կապույտ գույները և դրանց երանգները, ինչպես նաև ոսկեգույնն ու դեղինը: Այդ գույները ստանալու համար հայ ներկարարները ևս օգտագործում էին բուսական, կենդանական և հանքային ներկանյութերը: Եվրոպականին համարժեք կապույտը ստացվում էր լեղակի շնորհիվ, որին Սիրիայի հայ ներկարարները ծանոթ էին դեռ 17-րդ դարի վերջերից: Հայ ներկարարները մանվածքը կարմիր գույնով ներկելիս կիրառում էին «Այնթափի ներկարարների ընկերության» մշակած եղանակը և ստանում եվրոպականին մոտ արդյունք:

Ոսկերչության մեջ ևս Սիրիայի հայ արհեստավորները բարի անուն էին վաստակել: Նրանց մոտ բավականին ցցուն արտահայտություն ուներ աշխատանքի բաժանումը. մասնագիտացված ճյուղեր էին արծաթագործությունը, սատեքյարությունը և մխալայջիությունը, որոնք դարձել էին ոսկերչության ինքնուրույն ճյուղեր: Սատեքյարները ձույլ ոսկուն, կռելու և այլ եղանակով, տալիս էին ցանկացած ձևը, իսկ մխալայջիները տաշում և զետեղում էին թանկագին քարերը: Եվրոպայի ճանապարհորդները, ի շարս այլ ազգի վարպետների, դրվատանքով էին խոսում նաև հայ ոսկերիչների աշխատանքի մասին:

Չնայած եվրոպական կենցաղային իրերի ներթափանցմանը, Սիրիայում 19-րդ դարում դեռևս լայն տարածում ունեին տեղի պղնձագործ վարպետների պատրաստած կենցաղային և խոհանոցային գործածության առարկաները: Մանավանդ լայն սպառում էին գտնում Հալեպի և Դամասկոսի հայ վարպետների պատրաստած քանդակազարդ ջահերն ու կանթեղները, ափսեները, դրվագրված վառարանները:

Սիրիայի տարբեր քաղաքներում աշխատում էին նաև երկաթագործ, զինագործ, տարբեր մեքենաներ նորոգող հայ վարպետներ:

Ըստ առօրյա հագուստի նկատմամբ բնակչության ունեցած ճաշակի 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, երբ արևելյան զգեստները աստիճա-

նաբար իրենց տեղը զիջում են եվրոպական հագուստաձևին, դերձակությունն էլ ըստ այդմ բաժանվում է արևելյան և արևմտյան ճյուղերի: Հայերը ոչ միայն համբավավոր դերձակներ էին, այլև ասեղնագործողներ, կոշկակարներ և այլն: Հայ կանայք տնային պայմաններում մեծ վարպետությամբ պատրաստում էին վարագույրներ, ծածկոցներ, բոխչաներ, ներքնազգեստներ, գլխաշորեր, թաշկինակներ, գոտիներ և այլ առարկաներ, որոնք, տեղում վաճառվելուց բացի, արտահանվում էին ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Շվեդիա, Գերմանիա և այլ երկրներ:

Սիրիայի տարբեր քաղաքներում հայերը զբաղվում էին նաև բազմաթիվ այլ արհեստներով: Հալեպում, օրինակ, հացագործների մեծամասնությունը Սասունից գաղթած հայերն էին, առհասարակ հայերն էին զբաղվում ապխտագործությամբ: Զգալի թիվ էին կազմում հայ քարակոփ, ատաղձագործ, կահույքագործ, ժամագործ և այլ մասնագիտությամբ զբաղվող վարպետները:

Հալեպում գործում էին համքարություններ, որոնք կառուցված էին ազգային սկզբունքով: Հայկական համքարությունները գործում էին առանձին և պահպանել էին միջնադարից եկած հայ համքարական կանոնները: Հայ համքարությունները պահպանեցին իրենց գոյությունը ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

19-րդ դարի կեսերից սկսած Արևելք-Արևմուտք առևտրական կապերում նշանակալիորեն բարձրանում է Սիրիայի և Լիբանանի քաղաքների դերը: Բեյրութը դառնում է այն գլխավոր դարպասը, որով ողջ Սիրիան կապվում էր արտաքին աշխարհի հետ: Այդ նավահանգստով էին անցնում նաև դեպի Կիլիկիա, Արևելյան Անատոլիա, Միջագետք, Պարսկաստան և այլ երկրներ տարանցվող եվրոպական ապրանքները: Առևտրի նշանակալից կենտրոններ են դառնում Ալեքսանդրետը, Սելևկիան (Սվեդիան): Հալեպը դարձել էր դեպի հյուսիս՝ Կիլիկիա, ներքին գավառներ, ինչպես նաև Միջագետք ու Պարսկաստան տարվող ապրանքների գլխավոր կենտրոնատեղին: Քաղաքում կային մեծ և ընդարձակ շուկաներ, քարակոփ շինվածքով վաճառատեղիներ, քարավանատներ, իջևանատներ և այլն:

Առևտուրը բոլոր նշված կենտրոններում հիմնականում կենտրոնացված էր քրիստոնյաների՝ հայերի և հույների, ինչպես նաև Սիրիա եկած եվրոպական ներկայացուցիչների ձեռքում: 40-ական թվականներից սկսած Սիրիայի քաղաքներում ծայր առած առևտրական աշխույժ շարժումը իրեն է ձգում նաև Կ. Պոլսի հայ առևտրավարկատուներին (սա-

բաֆներին): 1849 թվականին Սիրիայի մաքսատների շահագործման իրավունքը պատկանում էր պոլսահայ Միսաք Միսաքյանին: Նմանօրինակ գործունեությամբ Սիրիայում դարի կեսերին հայտնի էին նաև այլ պոլսահայեր՝ Մկրտիչ Ճեզայիրլյանը, Պետրոս Սեֆերյանը և ուրիշներ: Զդիմանալով Օտոմանյան բանկի և եվրոպական վարկային գործակալությունների հետ ունեցած մրցակցությանը՝ հայ սարաֆները շուտով սկսում են իրենց կուտակած հսկայական միջոցները ներդնել առևտրի մեջ:

1850-ական թվականներից Բեյրութում գործում էր Անտոն Մսըլյանի (Անթուն Մասրիի) կառուցած առևտրական խոշոր կենտրոնը: Դա լայնածավալ մի շենք էր, որի առաջին հարկը զբաղեցնում էին մեծածախ առևտրով զբաղվող վաճառականները, պահեստները, իսկ երկրորդ հարկը՝ ներմուծող և արտահանող առևտրական գրասենյակները: Բեյրութի խոշոր շուկան կառուցել էր Հովհաննես Ղուկասյանը (Հաննա Ղուկասը): Այդ շուկան հայտնի էր Սուք ալ-Արման (Հայերի շուկա) անունով[1]:

Բեյրութի և Հալեպի հայ առևտրականների մի մասը սերտ կապեր էր հաստատել Լոնդոնում, Մանչեստրում, Փարիզում և Լիվորնոյում հաստատված պոլսահայ և զմյուռնահայ ներկայացուցիչների հետ և նրանց հետ միասին զգալի մասնակցություն ուներ եվրոպական ապրանքները ներմուծելու և տարածելու գործում:

19-րդ դարի վերջերին հալեպահայ առևտրականները գնալով իրենց դիրքերը զիջեցին օտարերկրյա կապիտալի ճնշմանը՝ իրենց ձեռքում պահելով հիմնականում այն գործարքները, որոնք կատարվում էին Սիրիայի ներքին գավառների շուկաների հետ: «Վաճառականք հոս երկու շարք մասերու կբաժանվին,– գրում էր «Բյուզանդիոնի» թղթակիցը 1898 թ.,– անոնք որ Եվրոպայի հետ հարաբերություն ունին և անոնք, որ գավառներու հետ գործ ունին: Հայոց՝ Եվրոպայի հետ ունեցած հարաբերությունները, բաղդատմամբ օտարներու, շատ քիչ տեղ կբռնեն, իսկ գավառներու հետ էն կարևոր գործն իրենց ձեռքն է»[2]:

Ի տարբերություն Հալեպի, հայերի առևտրատնտեսական գործունեությունը Բեյրութում, դարի 80-ական թվականներից սկսած, գնալով ընդլայնվում է: Քաղաքում միջնորդական մեծ գործարքներ էին իրա-

---

1 *Ս. Հ. Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, հ. 1, Պեյրութ, 1951, էջ 242–243, 256–257:*

2 *«Բյուզանդիոն», 8.02.1898:*

կանացնում այնտեղ եկած կեսարացի, ուռհայեցի, ադանացի, մարաշցի առևտրականները: Մարաշի Խրլաքյան առևտրական հիմնարկի Բեյրութի գործակալները, օրինակ, ամեն տարի հազարավոր ոսկու ապրանք էին ստանում Եվրոպայից և բերում Կիլիկիա և ներքին գավառները: Դարավերջին Բեյրութում մանուֆակտուրայի վաճառքի 1/3-ը գտնվում էր հայերի ձեռքին:

Բեյրութահայ առևտրականները զբաղվում էին նաև մանվածքեղենի, ներկերի, կաշվի, նավթի, օճառի և այլ ապրանքների առևտրով: Նրանք մեծ մասամբ ներմուծող և տարանցող առևտրականներ էին, սակայն նրանցից խոշորագույնները աչքի էին ընկնում նաև արտաքին առևտրի մեջ: Օրինակ, Բեյրութի Կյուլպենկյան հիմնարկը, որի սյուներն էին Գալուստ, Հովհաննես և Գառնիկ Կյուլպենկյանները, ոչ միայն ներմուծում էր Բաքվի նավթարդյունաբերական ընկերությունների արտադրանքը, այլև արտահանում էր Հաուրանի, Հոմսի, Համայի հացահատիկը:

19-րդ դարի վերջին — 20-րդ դարի սկզբներին, բացի Հալեպից և Բեյրութից, հայերը մասնակից էին նաև Սիրիայի մյուս քաղաքների առևտրական կյանքին: Դամասկոսում և Լատակիայում կային նաև առանձին խոշոր հայ առևտրականներ: Նրանցից էին, օրինակ, դամասկոսաբնակ Գրիգորյան եղբայրները: Եվրոպայից մեքենաներ ներմուծող նրանց վաճառատունը ուներ երկու հարյուր հազար ոսկի կապիտալ:

Արհեստագործական և առևտրի ասպարեզում կատարված տեղաշարժերը փոփոխություններ էին առաջացնում գաղութի հասարակական հարաբերություններում, խթանում նահապետական բարքերի քայքայումը:

Սիրիայի հայկական գաղութի ազգաբնակչության նկատելի հատվածը կազմում էր գյուղացիությունը: Լայն տարածում էին գտել մանր տնտեսությունները՝ գյուղացիական սեփականության (մուլքի իրավունքով) և վարձակալության (մուքասարա) ձևով: Վերջինիս էությունն այն էր, որ սակավահող կամ հողազուրկ գյուղացին մշակում էր ֆեոդալի տրամադրած հողակտորը և որոշակի ժամկետից հետո, երբ հողը սկսում էր բերք տալ, կատարվում էր նրա բաժանումը, և գյուղացին համարվում էր հողակտորի կեսի, երբեմն մեկ երրորդի, մեկ չորրորդի կամ ավելի փոքր մասի սեփականատեր:

Սիրիայի բնակլիմայական պայմանները հնարավորություն էին տալիս մշակելու ընդարձակ տարածություններ: Ամենատարածված և բեր-

քառատ կուլտուրան ցորենն էր: Մշակվում էին նաև գարի, վարսակ, բրինձ, պիստակ, ձիթապտուղ, խաղող, ծխախոտ և այլ կուլտուրաներ: Անտիոքի և Բեյլանի կազաների հայ գյուղացիները զբաղվում էին հացահատիկային, բանջարաբոստանային և տեխնիկական կուլտուրաների մշակությամբ: Վերջիններից արժեքավոր էր հատկապես ռեգլիսը կամ սուսը, որն օգտագործվում էր դեղագործության, ինչպես նաև տարբեր տեսակի օշարակների պատրաստման մեջ:

Սիրիայի հայերը նշանավոր այգեգործներ էին. նրանք աճեցնում էին խաղողի շուրջ տասը ազնիվ տեսակներ, նարինջ, կիտրոն, խնձոր, սալոր, թուզ, նուշ և այլն:

Հայ գյուղացիների հիմնական զբաղմունքներից էր ծխախոտագործությունը՝ մանավանդ Անտիոքի, Ջիսր Շուղրի և Լատակիայի կազաներում: Մեծ սպառում ուներ մանավանդ աբու ռիհա կոչված բուրավետ ծխախոտը, որի նկատմամբ մշտական պահանջարկ կար Եգիպտոսում, Անգլիայում և Գերմանիայում:

Դառնալով Ֆրանսիական Ռեժիի վարչության մենաշնորհը՝ ծխախոտագործությունը լայն զարգացման հնարավորությունից զրկվեց, որովհետև այդ վարչությունն էր որոշում ծխախոտի ցանքատարածությունների չափը, տեսակը, գինը:

Սիրիայի ծովամերձ շրջանների գրեթե բոլոր գյուղերում զբաղվում էին շերամապահությամբ, սակայն այն առավել զարգացած էր Անտիոքի կազայի հայաբնակ գյուղերում: Իրենց արտադրանքի քանակով և շերամ բուծելու վարպետությամբ Հյուսիսային Սիրիայում մեծ համբավ էին վաստակել Պիթիաս հայկական գյուղի շերամագործները: Նրանք 25 գրամ սերմից ստանում էին 40–45 քաշ (1 քաշը=1282 գր.) խոզակ, այն դեպքում, երբ 20–25 քաշը համարվում էր բավարար արդյունք: Սիրիահայ գյուղացիների արտադրած մետաքսահումքի («Իսկենդուրունի մետաքսը») մի մասը արտահանվում էր Ֆրանսիա և այլ երկրներ, իսկ մյուս մասն օգտագործվում էր Հալեպի, Դամասկոսի և Անտիոքի մետաքսագործարաններում:

Սիրիահայ գյուղացիությունն ապրում էր նյութական շատ սուղ, իսկ բազմաթիվ վայրերում՝ աղքատ պայմաններում: Տարատեսակ հարկերի ծանր լուծը և հողի մշակման նախնադարյան եղանակները նրա ծանր կացության հիմնական պատճառն էին: Արտաքին շուկայում գյուղատնտեսական մթերքների նկատմամբ աճող պահանջը և գյուղացիական տնտեսությունների հյուծումը խոշոր հողատերերին մղում էին

ավելի ու ավելի հաճախ օգտագործելու պարհակային աշխատանքը՝ սեփական ապրանքային տնտեսություն ստեղծելու համար: Գյուղացիները պարտավոր էին վարել ու ցանել «պարոնի» (Սիրիայի հայ գյուղացիները այդպես էին անվանում ֆեոդալ-կալվածատերերին) արտերը, հավաքել բերքը, աշխատել նրա տան, գոմի և ախոռի կառուցման վրա և կատարել այլ բազմաթիվ աշխատավճարումներ:

Անտիոքի հայ գյուղացիները պարտավոր էին պարոն կալվածատիրոջը «նվերներ» տալ ուրախության և տխրության առիթներով: Երբ պարոնը խրախճանք էր սարքում կամ հյուրեր ընդունում, գյուղացիները հարկադրված էին նրա սեղանին դնել իրենց լավագույն մթերքներից: Փոխադարձաբար պարոնը մասնակցում էր գյուղացիների ուրախություններին: «Ոչ ոք կարող է յուր աղջիկը կամ տղայն նշանել կամ կարգել առանց գիտության պարոնին, անոր հավանությունն ընդունելու, և այս ոչ թե ձրի, այլ քանի մի հարյուր դահեկան տալով իբր պսակադրամ»,— նկատել է «Սիոնի» թղթակիցը[1]:

Մանր բեռ էր հողօգտագործման կիսարարության կամ վարձակալության ձևը, որի հետևանքով գյուղացու վաստակի պատկառելի մասը անցնում էր հողատեր-կալվածատիրոջը: Ապրանքադրամային հարաբերությունների զարգացման պայմաններում ֆեոդալները ձգտում էին արդյունավճար այդ ռենտան փոխարինել դրամայինով, հանգամանք, որը ավելի էր ծանրացնում գյուղացիների վիճակը: «Թե քրիստոնյա և թե անքրիստոնյա գյուղատերը,— նկատում է «Սիոնի» նույն թղթակիցը,— խեղճ գյուղացի հայոց ոսկորները կծծեն, և բուրդին հետ մորթն ալ վիրավորելով կխուզեն»: Նրանք խլում էին գյուղացիների «վարուցանքը, մինչև անգամ բերաննուն պատառը»[2]:

Այսպիսով, ֆեոդալակալվածատիրական հողատիրության պայմաններում Սիրիայի բազմազգ գյուղացիության վիճակը գնալով վատթարացավ: Մանրացավ նաև սիրիահայոց նշանակալից հատվածը կազմող հայ գյուղացիների սոցիալ-տնտեսական դրությունը:

* * *

19-րդ դարում սիրիահայ համայնքի հասարակական կյանքը պղտորում են Ֆրանսիայի և Հռոմի պապի հովանավորությամբ այստեղ գոր-

1 «Սիոն», 1866, էջ 100:
2 Նույն տեղում, էջ 100–101:

ծող կաթոլիկ քարոզիչները: 1840-ական թվականներին Սիրիայում գործում էին Ֆրանսիացի շուրջ 300 քարոզիչներ, որոնք բարեգործական և մշակութային ցուցանակի տակ միսիոներական-քաղաքական լայն աշխատանք էին ծավալել՝ ձգտելով Ֆրանսիայի ազդեցության տակ պահել և նրա շահերին ծառայեցնել տեղի կաթոլիկական համայնքները: Իրենց նպատակին հասնելու համար նրանք լուրջ նշանակություն էին տալիս դպրոցական գործի ծավալմանը, ըստ այսմ՝ 1880-ական թվականներից սկսած՝ նրանք հիմնում են տարրական և միջնակարգ դպրոցներ:

Սիրիայի և Լիբանանի կաթոլիկական համայնքների նկատմամբ ցուցաբերած շահագրգռվածությամբ աչքի էր ընկնում նաև Ավստրիան: Վերջինիս կառավարության տրամադրած դրամական միջոցներով Սիդայում, Սուրում, Տրիպոլիում, Լատակիայում գործում էին դպրոցներ, իսկ Դամասկոսում՝ հատուկ կուրսեր՝ միսիոներներ պատրաստելու համար:

Ֆրանսիայից և Ավստրիայից բացի, Սիրիայի բազմազգ բնակչության շրջանում որոշ ուշացումով միսիոներական աշխատանք են սկսում ծավալել նաև Անգլիայի, Պրուսիայի և ԱՄՆ-ի հոգևոր ներկայացուցիչները: 1841 թ. Երուսաղեմում հիմնադրվում է անգլո-պրուսական եպիսկոպոսություն: 1880 թ. Սիրիայում և Պաղեստինում գործող բողոքական համայնքների թիվը սկզբնական 7-ից բարձրանում է 175-ի: Այդ համայնքների դպրոցներն ու եկեղեցիները նպաստ էին ստանում անգլիական կառավարությունից և Անգլիայի կրոնա-բարոյական տարբեր կազմակերպություններից:

Մինչև 19-րդ դարի 20-ական թվականների վերջերը Թուրքիայում կաթոլիկները ենթարկվում էին հալածանքների, որոնք մանավանդ սաստկանում էին Ֆրանս-թուրքական հարաբերությունների վատթարացման ժամանակ: 1828 թ. Մահմուդ 2-րդը 12.000 հայ կաթոլիկների իրենց հոգևոր պետերի հետ միասին Կ. Պոլսից աքսորեց Փոքր Ասիայի խորքերը: Աքսորյալները ի վերջո հաստատվեցին Լիբանանում: 1818–1820 թթ. զգալի թվով հայ կաթոլիկներ էին հաստատվել Սաիդայում: Լիբանան անցած հայ կաթոլիկների մի զգալի մասը գալիս էր նաև Սիրիայից, որտեղ նույնպես այդ տարիներին նրանք ենթարկվում էին հալածանքի:

Օսմանյան միլլեթների տրոհումից հետո Ֆրանսիական կառավարությունը ջանքեր է թափում Թուրքիայում հայ կաթոլիկ համայնքի

վարկի և հեղինակության բարձրացման ուղղությամբ: 1860 թ. հայ կաթոլիկ պատրիարքը Լեռնային Լիբանանի մարոնական և հույն կաթոլիկ պատրիարքների հետ միասին ստորագրում է Նապոլեոն 3-րդ կայսեր պաշտպանությունը հայցող մի դիմում, որի պատրվակի տակ ֆրանսիական զորքերը ներխուժեցին Սիրիա:

Լեռնային Լիբանանի ինքնավար մարզի ստեղծումը բավականին բարվոքեց հայ կաթոլիկ հոգևորականության դիրքերը. վերջինս հնարավորություն ստացավ առավելագույնս օգտվելու Ֆրանսիայի և Վատիկանի շնորհներից: Մարզի առաջին կառավարիչ, հայ կաթոլիկ Դաուդ փաշայի միջնորդությամբ սուլթանը և Ֆրանսիայի կայսրը շքանշաններով պարգևատրեցին հայ կաթոլիկ պատրիարքին: Իր հերթին, Զմմառում նստած կաթոլիկ հայոց պատրիարքի միջնորդությամբ, Հռոմի պապը հայազգի կառավարչին շնորհեց ասպետության առաջին կարգի շքանշան:

Այդ բոլորը նպաստեցին հայ կաթոլիկական համայնքների դիրքերի ամրապնդմանը: Կ. Պոլսում, Հալեպում, Բեյրութում, Դամասկոսում, Երուսաղեմում և այլ վայրերում մեկը մյուսի հետևից երևան եկան հայ կաթոլիկ համայնքներ, և 1840–1850-ական թվականների 30.000-ի փոխարեն 1860-ական թվականներին Թուրքիայում հայ կաթոլիկների թիվը հասավ 100.000-ի: Առաջացած բարենպաստ պայմանները հնարավորություն տվեցին կաթոլիկ կղերին 1868 թ. պատրիարքական աթոռը Զմմառից տեղափոխել Կ. Պոլիս: Հայ կաթոլիկ պատրիարք Անտոն Հասունը Հռոմի կողմից ճանաչվեց որպես «պատրիարք տանն Կիլիկիո»: Դա հայ կաթոլիկական շարժման բարձրակետն էր: Անտոն Հասունի որդեգրած հռոմամոլ դիրքորոշումը, որով կաթոլիկ դավանությունը դասվում էր ազգից վեր, կաթոլիկ հայության շրջանում հարուցեց ներհամայնքային հակամարտություններ: Հակահասունյան դիրքերում կանգնած Անտոնյան միաբանությունը և նրա վանքերն ու եկեղեցիները այդ պատճառով փակվեցին, զգալի թվով հայ կաթոլիկ համայնքներ քայքայվեցին, բազմաթիվ հայ կաթոլիկներ վերադարձան ազգային եկեղեցու դիրկը:

Այդուհանդերձ, թե կաթոլիկ և թե բողոքական քարոզիչները Սիրիայում զբաղված էին «մարդորսությամբ» և հայաբնակ գյուղերն էին մտնում երփներանգ խոստումներով: Դավանափոխության դիմաց նրանք թշվառության ճիրաններում գալարվող հայ գյուղացիներին խոստանում էին դրամական օգնություն և պաշտպանություն, բացում

էին արական և իգական դպրոցներ, հայ աղքատ երեխաներին անվճար բաժանում էին հագուստ և սննդամթերք, կառուցում էին եկեղեցիներ:

Միսիոներների քարոզչությունը սիրիահայ գրեթե բոլոր գյուղերում զուգակցվում էր հակամարտություններով, կռիվներով, դատ ու դատաստաններով, որովհետև ազգային եկեղեցուն հավատարիմ մնացած հայ մեծամասնությունը դեմ էր դուրս գալիս քարոզիչների և նրանց կուրորեն կուլ գնացած հայերի ոտնձգություններին:

Այսպիսով, քրիստոնյաներին հովանավորելու ուղղությամբ եվրոպական պետությունների վարած քաղաքականությունը խիստ բացասաբար էր ներգործում Սիրիայի հայության վրա, քանի որ միսիոներների ոտնձգությունները դառնում էին առաջացած ծանր պայմանների լրացուցիչ մասը:

* * *

Մինչև Ազգային սահմանադրության ընդունումը Կ. Պոլսի հայոց պատրիարքները գրեթե չէին զբաղվում Սիրիայի հայկական համայնքների գործերով: Հալեպի, Անտիոքի, Բեյլանի և հյուսիսային Սիրիայի մյուս համայնքները կամ թեմերը գտնվում էին Սսի կաթողիկոսի, իսկ Լատակիայի, Դամասկոսի և Բեյրութի համայնքները Երուսաղեմի պատրիարքի իրավասության տակ: Սսական յուրաքանչյուր թեմ գլխավորում էր Տանն Կիլիկիո կաթողիկոսի նշանակած առաջնորդը, որը գործերը վարում էր եկեղեցականների, բանկալապետի և մյութեսելիմի միջոցով: Մյութեսելիմն եկեղեցապատական կալվածների տնօրինողն էր և հաշվետու էր Սսի կաթողիկոսի առաջ, եկեղեցականները ապահովում էին եկեղեցու պայծառությունն ու մաքրությունը, կարգավորում ծիսակատարությունները, իսկ բանկալապետը եկեղեցու դրամարկղի պատասխանատուն էր, նրան էին ենթարկվում մոմտունն ու մոմավաճառները:

Թե Սսի կաթողիկոսների և թե Երուսաղեմի պատրիարքների, ինչպես նաև թեմական առաջնորդների և վեքիլ վարդապետների հենարանը աղայական դասն էր: Հայ աղաները, գործելով նահանգային վարչության և պետական աստիճանավորների հովանավորությամբ, իրենց մենաշնորհն էին դարձրել համայնքային գործերը, և, ըստ էության, նրանք էին նշանակում բոլոր նշված եկեղեցական պաշտոնյաներին:

Այսօրինակ պայմաններում հայ համայնքներում գնալով ուժեղանում էր ներքնախավերի պայքարը աղայական առանձնաշնորհումների

դեմ: Սիրիայում հակաղայական-դեմոկրատական պայքարի օջախ էր հալեպահայ գաղութը, որտեղ 1860-ական թվականներին շարժումը գլխավորում էր Հովհաննես Քյուրքճյանոֆը: Սիրիահայ գաղութում սահմանադրության համար մղված պայքարը համահնչյունն էր Կ. Պոլսում ամիրաների դեմ էսնաֆների մղած պայքարին:

1863 թ. մարտի 18-ին Բարձրագույն դռան կողմից հաստատվեց Ազգային սահմանադրությունը: 1865 թ. սկզբներին Հալեպ հասավ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի շրջաբերական-հրահանգը համայնքային վարչակառավարման մարմինները սահմանադրության համաձայն վերակազմելու մասին: Սակայն դրան հետևեց Սսի աթոռի կամքը թելադրող գաղտնի նամակը, որը հրահանգում էր չգործադրել սահմանադրությունը: Այնտեղ ասված էր. «Մի գործադրեք սահմանադրությունը, գուցե վրդովմունք մը ըլլա, այլ սպասեք»: Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանափակվում էին Սսի կաթողիկոսների և Երուսաղեմի հայոց պատրիարքների իրավունքները, և Կ. Պոլսի հայոց Ազգային ընդհանուր ժողովին էր վերապահվում վանական հաստատությունների «մատակարարության հասույթից և ծախուց ընդհանուր տեսչության ու քննության իրավունքը»: Բացի այդ, Երուսաղեմի և Սսի վանքերը պարտավոր էին հատուկ կանոնադրություն կազմել և այն ներկայացնել Ազգային ժողովի հաստատմանը: Այսպիսով, Երուսաղեմի և Սսի աթոռները զրկվում էին եղած սահմանափակ ազատությունից, ինչպես նաև եկամտի աղբյուր հանդիսացող թեմերից: Սակայն մինչև 1870-ական թվականները, երբ համաձայնություն կայացավ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և Սսի աթոռի միջև, Սիրիայի հայ համայնքներում ձախողվեցին Սահմանադրություն գործադրելու փորձերը: Այդ համաձայնությամբ Հալեպի թեմը դրվեց երկակի վերահսկողության տակ: Գավառական ժողովի և թեմական ընտրությունը Սսի կաթողիկոսի հավանությանն արժանանալուց հետո միայն կարող էր ներկայացվել Կ. Պոլսի ազգային ժողովի հաստատմանը: Երուսաղեմի հայոց պատրիարքը նույնպիսի իրավունքներից օգտվում էր Լատակիայի, Դամասկոսի և Բեյրութի թեմերում: Հալեպի թեմի սահմանադրական ժողովներն ու խորհուրդները, գտնվելով Կ. Պոլսի Ազգային վարչության և Սսի կաթողիկոսների շահերի բախման կիզակետում, վերածվել էին «քառակուսի անվի»: Թեմական ժողովներում աթոռ գրված Սսի կողմնակից աղանները և Կ. Պոլսի կողմնակից էֆենդիները անընդհատ վիճում էին և հար-

ցները լուծելու փոխարեն դատարկ կրքեր էին բորբոքում, նրանց նիստերը հաճախ ավարտվում էին կռվով և անարդյունք:

Այսպիսով, Ազգային սահմանադրությունը Սիրիայի և Լիբանանի հայ գաղութներում փաստորեն չգործադրվեց: Ազգային-թեմական ժողովներն ու խորհուրդները անվանական էին, և դրանց հիմքում ընկած դեմոկրատական սկզբունքները համարյա դեր չէին խաղում սիրիահայ հասարակական կյանքում: Թեմական առաջնորդի ընտրության հետ կապված անիմաստ վիճները և կամայականությունները տեղիք էին տալիս փողոցային կռիվների, ծեծկռտուքների ու խոշտանգումների և խստիվս բացասաբար անդրադառնում սիրիահայ գաղութի ներքին կյանքի վրա:

Ինչպես բոլոր օսմանահպատակ քրիստոնյաները, Սիրիայի և Լիբանանի հայերը նույնպես ենթարկվում էին ազգային-քաղաքական ամենաբիրտ ճնշման, զրկված էին ամենատարրական իրավունքներից, ամեն քայլափոխի ոտնահարվում էր նրանց մարդկային արժանապատվությունը:

Մինչև 19-րդ դարի վերջերը Սիրիայում և Լիբանանում ուժի մեջ էր դեռևս 1808 թ. հրապարակված Յուսուֆ փաշայի ֆերմանը: Ըստ այդ ֆերմանի քրիստոնյաներին և հրեաներին արգելվում էր խոսել արաբերեն, մահմեդականի նման հագնվել, թամբած ձի հեծնել, սուր կրել, տնային ծառայող պահել, գինի վաճառել և այլն: Նրանք պարտավոր էին մոտեցող մահմեդականի առաջ ոտքի կանգնել, նրան ճանապարհ տալ, գլուխ խոնարհել: Քրիստոնյաները տնից դուրս գալիս պետք է հանեին կրած խաչերը, թաղման թափորին մասնակցեին լռակյաց: Մահմեդականը իրավունք ուներ վարելահողի վերածել այն գերեզմանոցները, որոնք այլևս չէին օգտագործվում: Հայերը պարտավոր էին եկեղեցու զանգերը հնչեցնելու համար ձեռք բերել հատուկ ֆերման:

Օգտվելով հայերի իրավազուրկ վիճակից՝ մոլեռանդ մահմեդականները ոտնձգություն էին կատարում նրանց ազգապատկան կալվածների վրա: Մանր մի բեռ էր օթևանատուրքը, ըստ որի, մահմեդական ճանապարհորդը, սկսած մուրացկանից մինչև պետական ամենաբարձր պաշտոնյան, իրավունք ուներ երեք օր հյուրընկալվելու քրիստոնյայի տանը: Վերջինս իրավունք չուներ հրաժարվել հյուրընկալություն կատարելուց և պարտավոր էր «հյուրին» հայթայթել այն ամենը, ինչ որ նա կպահանջեր: Իշևանի պարհակը հատկապես ծանր էր գյուղերում ապրող հայ ազգաբնակչության համար: Այս պարհակը մյուս պարհակնե-

ից տարբերվում էր նրանով, որ հաճախ ոտնահարվում էին քրիստոնյա բնակչության ընտանեկան սրբությունները: Մահմեդականը կարող էր առևանգել, կողոպտել, սպանել քրիստոնյային և մնալ անպատիժ կամ էլ տուգանք վճարելով ազատվել: «Մինչև անգամ Ասորիքում, այն երկրում, որը տաճկական ուրիշ գավառներից քրիստոնյաների համար ավելի ապահով է համարվում,– գրել է նշանավոր արևելագետ Ա. Կրիմսկին,– մահմեդականը սպանելով քրիստոնյային անպատիժ է մնում. սկզբում մի որևէ հյուպատոսի պահանջով նա բանտ կնստի, իսկ երեք օրից հետո տաճիկ կառավարության շնորհիվ ազատ կհամարվի, և բոլորին ծանոթ մարդասպանը հպարտ կերպով անցուդարձ կանի այնպիսի բազմամարդ փողոցով, ինչպես Բեյրութի Բուրճն է»[1]:

Հարկավ, հարստահարվում էին նաև մահմեդական աշխատավորները, սակայն մի էական տարբերությամբ. մահմեդականի անձն ու գույքը անձեռնմխելի էին կողմնակի ոտնձգություններից: Դատարանը վերականգնում էր նրա իրավունքները և պատժում հանցավորներին, մինչդեռ քրիստոնյաները ըստ էության զրկված էին դատարանին դիմելու իրավունքից, դատարան, որը կենտրոնացված էր մահմեդական հոգևորականության ձեռքում, և հարցերը վճռվում էին ըստ Ղուրանի դրդմանների, այսինքն, իսլամական իրավունքի հիման վրա, ըստ որի մահմեդականի և քրիստոնյայի հարաբերությունները չեն կարող այլ կերպ լինել, քան սուբկատիրոջ և ստրուկի հարաբերությունները:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո խոշոր չափեր ընդունեց չերքեզների և չեչենների հոսքը դեպի Արևմտահայաստան, իսկ այնտեղից էլ Սիրիայի հայերով բնակեցված շրջանները: Սրանց դաղթը կազմակերպում էին թուրքական պետական աստիճանավորները տալով դայթակղեցուցիչ խոստումներ: Սակայն նրանց տեղ հասցնելուց հետո կառավարությունը այլևս չէր զբաղվում դաղթականներին նպաստ տալու հարցով, և նրանք հայտնվում էին խորը թշվառության մեջ:

Սիրիա անցած չերքեզ դաղթականների մեծ մասը բաժին ընկավ Հալեպի նահանգին: Չերքեզական բնակավայրեր հաստատվեցին հյուսիսային Սիրիայի հայահոծ գյուղախմբերին հարևան վայրերում: Չերքեզները առանձնապես մեծ թիվ էին կազմում Անտիոքի, Բիլիսի, Հարիմի, Մեմբիջի և Մարաշի կազաներում: «Ոչ մի բան չի կարող արդա-

1 Ա. Կրիմսկի, Մահմեդական աշխարհն ու իր ապագան, Վաղարշապատ, 1916, էջ 105–106:

բացնել այն, ինչ անցյալ տարի ձեռնարկեց թուրքական կառավարությունը՝ զինված մարդկանց մի ամբողջ ամբոխ լցնելով այն երկիրը, որի անմեղ բնակիչները նույնիսկ սովոր չեն զենք կրել»[1]*,– գրում էր անգլիական հյուպատոսը:*

Կենսամիջոցներից զրկված և ոտից գլուխ զինված այդ գաղթականները իսկական պատուհաս դարձան Հալեպի նահանգի հայության գլխին: Քաղաքներում և գյուղերում աներևակայելի չափեր էին ընդունել կողոպուտն ու հափշտակությունները: Կողոպուտն ու սպանությունները այնքան մեծ ծավալ են ընդունում, որ օտարերկրյա միսիոներները տեղական իշխանություններից պահանջում են ապահովել իրենց անձի և գույքի անձեռնմխելիությունը: Ջստանալով այդպիսի երաշխիք՝ նրանք հեռանում են Հալեպից:

1894 թ. թուրքական իշխանությունները ուժեղացրին ազգային ճնշումները Հալեպի նահանգում: Սկզբնական շրջանում դրանք այստեղ ընդունում են զանգվածային ձերբակալությունների և աքսորի տեսք: Սակայն 1895–1896 թվականներին Հալեպի նահանգը ևս դառնում է հայկական կոտորածների ասպարեզ: Առաջին հարվածը ստանում է Ուրֆայի հայությունը: Ռուսական գերագույն շտաբի փոխգնդապետ Տեմիլովի հաղորդման համաձայն, Ուրֆայում հայերի կոտորածը կատարվել է 1895 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Ջարդարարները ներխուժում էին հայկական թաղամասերը և վերսկսում կոտորածն ու կողոպուտը: Միայն 2000 հայեր հրկիզվում են եկեղեցում: Այդ բոլորը կատարվում է սուլթանական կառավարության հրամանով, թուրքական զորքի և համիդիե հեծելազորի մասնակցությամբ: Ջարդարարները ավելի մոլեգնությամբ են գործում Հալեպի նահանգի ներքին շրջաններում: Բիրիջիկում, օրինակ, հայերից ոչ մի շունչ չէր մնացել: Մահից փրկվածները ստիպված մահմեդականություն ընդունեցին:

1909 թ. Ադանայի ջարդերի ժամանակ ոտքի են ելնում նաև Հալեպի նահանգի թուրքերը: Ապրիլյան կոտորածները սարսափելի կերպարանք ընդունեցին Բեյլանում, Քեսապում, Այասում, Մարաշում, Քիլիսում, Օսմանիեում և հայաբնակ այլ վայրերում: Հալեպի նահանգի ոչ մի հայաբնակ գյուղ չխուսափեց կոտորածից ու կողոպուտից:

Այսպիսով, Սիրիայի հայությունը գրեթե նույն չափով բաժանում էր Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայության դառն ճակատագիրը:

---

1 Положение армян в Турции, М., 1896, с. 71.

Սիրիայի և Լիբանանի հայերը բարբարոսաբար կեղեքվում և կողոպտվում էին, ենթարկվում ազգային դաժան ճնշման ու կոտորածների: Հավատարիմ մնալով Աբդուլ Համիդ 2-րդի հայաջինջ քաղաքականությանը՝ երիտթուրքերը Սիրիայում ևս հայերի դեմ անպատիժ հանցագործության էին մղում համիդիե գնդերին, թուրք, չերքեզ և չեչեն ընչաքաղց տարրերին: 1895–1896 թթ. և 1909 թ. զանգվածային կոտորածները սպառնում էին բնաջնջել արյունահեղ ասպատակություններից թուլացած և տնտեսապես քայքայված սիրիահայ դարավոր գաղթօջախները: Զորք-Մարզվանի, Քեսապի և այլ վայրերի հայերի դիմադրական պայքարը և արաբ ժողովրդի հայանպաստ դիրքորոշումը զգալապես նպաստեցին նրանց գոյության պահպանմանը:

Սակայն Սիրիայի հայությանը սպասում էին ավելի ծանր ժամանակներ. ամբողջ արևմտահայության հետ միասին նա նույնպես 1915–1916 թթ. ենթարկվեց դաժան հալածանքների, տեղահանության և կոտորածների: Հալեպի, Բեյրութի և Սիրիայի նահանգների հայերին աքսորելու հրամանը ստացվել էր դեռևս 1915 թ. սկզբներին, սակայն տարբեր պատճառներով նրա գործադրումը ձգձգվեց: Բեյրութ քաղաքի փոքրաթիվ հայությունը թեև չաքսորվեց, սակայն ոստիկանությունը խուզարկեց հայերի բնակարանները, բռնագրավեց նրանց ունեցվածքը, կործանեց Սբ. Նշան վանքը: Բեյրութի նահանգի հյուսիսային շրջանների հայությանը լիովին բաժին ընկան աքսորի դառնությունները. այս վայրերի հայերը լրիվ տեղահանվեցին, իսկ նրանց շարժական և անշարժ գույքը բռնագրավվեց:

Հալեպի նահանգներում եղեռնի առաջին զոհը դարձավ Այնթապ քաղաքի հայությունը: 1915 թ. օգոստոսին քաղաքը լրիվ դատարկվեց հայերից: Հեռուներ քշվեցին և աքսորի ճանապարհին սովի ու մահվան ենթարկվեցին Բեյլանի, Քիլիսի, Կաթմայի կամ Կոտմայի, Քեսապի և այլ վայրերի հայերը: Միայն ջեբելմուսացիներին հաջողվեց, մերժելով աքսորի հրամանը, հերոսական դիմադրությամբ պաշտպանել իրենց կյանքն ու պատիվը:

Հալեպն ու նրա շրջանները բռնագաղթված հայերի քարավանների գլխավոր հանգրվանն էին, որտեղից նրանք այնուհետև քշվում էին անապատ: 1915 թ. այստեղ եկան զեյթունցիների առաջին քարավանները: Ամռանն ու աշնանը Հալեպ հասան Կիլիկիայի և արևելյան նահանգների հայության բեկորները: 1915–1916 թթ. ավելի քան 350.000 հայեր հանգրվանել էին Հալեպում, ուր միաժամանակ մնալուց հետո

քշվել անապատ: Հարավային Սիրիայում հայ աքսորյալների քարավանների գլխավոր հանգրվանն էին Դամասկոսը և նրա արվարձանները: Դամասկոսից և Հալեպից աքսորյալներին քշում էին փոքր հավաքակայաններ, Սիրիական անապատին ավելի մոտ գտնվող վայրերում՝ Մեսքենե, Դեյր Էզ-Զոր, Ռաս ուլ-Այն, Ռակկա, Ջերաբլուս և այլն: Աքսորյալների մեծամասնությունը դանդաղ մեռնում էր՝ հյուծված քաղցից ու ծարավից: Հազարավոր հայեր դառնում էին կառավարության հրահանգով զինվորական իշխանությունների ձեռնարկած կոտորածների զոհը:

Համաշխարհային պատերազմի ավարտին Սիրիայի տարբեր քաղաքներում մնացել էին 70–75 հազար հայեր: Հազարավոր հայեր դեռևս մնում էին Սիրիական անապատում, թուրքական և արաբական աստիճանավորների հարեմներում: Մուդրոսի զինադադարի պայմանագրի 22-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր Անտանտի պետություններին հանձնել բոլոր ռազմագերիներին, այդ թվում նաև բռնագաղթեցված հայերին: Անապատ քշված ու կենդանի մնացած հայերը հնարավորություն էին ստանում վերադառնալու իրենց հայրենի վայրերը: Ծավալ ստացավ որբահավաքի գործը: Հալեպում հիմնադրվել էր մի որբանոց, որը ֆինանսավորում էին մի շարք ամերիկյան բարեգործական ընկերություններ: Որբահավաքի գործի հաջող ընթացքին մեծապես նպաստեցին Հիջազի գահակալ Հուսեյն իբն Ալին և նրա որդի Էմիր Ֆեյսալը: Գահակալը դեռ 1918 թ. սկզբներին կարգադրել էր հայերին հանձնել «մեծ ու փոքր, ամուսնացած ու ամուրի աղջիկներն ու մանչերը»[1]:

Կիլիկիայի աղետից հետո, երբ 1921 թ. քեմալականները զավթեցին այդ երկրամասը, մեծ թվով հայեր, որոնք մինչև այդ հասցրել էին աքսորից վերադառնալ իրենց հայրենի տները, վերստին ալիք առ ալիք շարժվեցին Սիրիա: Սիրիայի ամենաբազմամարդ հայաշատ քաղաքը կրկին դարձավ Հալեպը: 1918 թ. այստեղ կային շուրջ 60, 1919–1920 թթ.՝ 35, 1921–1922 թթ.՝ 75, իսկ 1923–1924 թթ.՝ 48 հազար հայեր: Վերջին թվից 35 հազարը գաղթականներ էին: Այստեղ հայեր եկան տարբեր վայրերից և հատկապես Կիլիկիայից[2]:

---

1 «Կիլիկիա», 27.06.1919:

2 1918–1924 թթ. սիրիահայության և լիբանանահայության թվաքանակի մասին տվյալները մանրամասն տե՛ս Հ. Խ. Թ ո փ ո ւ զ յ ա ն, նշվ. աշխ., էջ 169–171:

Հայաշատ էր Ալեքսանդրետի սանջակը: Աքսորված սանջակցիներից միայն քչերին հաջողվեց վերադառնալ հարազատ վայրը: Այնտեղ հաստատվեցին մեծ մասամբ կիլիկիացի հայերը՝ թվով 17.800 մարդ:

Վերականգնվեց նաև Լատակիայի հայ գաղթօջախը, որի նախկին բնակիչները զոհ էին գնացել եղեռնին: 1823–1824 թթ. Լատակիայում և նրա շրջակայքում հաստատվել էին ավելի քան 4.000 հայեր:

Հյուսիս-արևելյան Սիրիայում ևս ձևավորվեցին հայկական գաղթօջախներ՝ ի հաշիվ այստեղ Ուրֆայից, Տիգրանակերտից, Մարդինից և այլ վայրերից եկած հայության: Գաղթօջախներ ստեղծվեցին Ջերաբլուսում, Կամիշլիում, Ռակկայում, Թել-Սեմիրում և այլ տեղերում: 1918–1919 թթ. համալրվեց նաև Դամասկոսի հայկական գաղութը:

Կիլիկիայի աղետից հետո բազմահազար հայեր ապաստան գտան նաև Լիբանանում: 1923–1924 թթ. Բեյրութում և նրա արվարձաններում կային 25.000 հայեր, Տրիպոլիում՝ 1900, Բեկաայի շրջանում՝ 2000, Սայդայում՝ 1500, Անթիլիասում, Ջունիում, Ղազիրում և այլն՝ 3000: Ընդհանուր առմամբ՝ 1923–1924 թթ. Սիրիայում և Լիբանանում հայերի թիվը հասնում էր մոտ 140.000-ի, որոնց 2/3-ը նոր գաղթականներ էին: Ահա այս հայերն էին, որ տասնամյակ առ տասնամյակ զորանալով ձևավորվեցին և կյանքի կոչեցին արդի սփյուռքի ամենահայահոծ և երևելի հատվածները՝ Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութները:

* * *

Սիրիայի հայկական գաղթօջախներում մշակույթի զարգացումը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին լայն հնարավորություն չի ունեցել: Համեմատաբար առաջընթաց քայլ է կատարվել մատաղ սերնդի ուսման և դաստիարակության ասպարեզում: Դպրոցական գործը համեմատաբար լավ դրված է ունեցել Հալեպում, չնայած այստեղ ևս կրթօջախները հաճախ չեն գտնվել պատշաճ բարձրության վրա: 1840-ական թվականներին քաղաքում գործող 19 քրիստոնյա դպրոցներից 4-ը պատկանում էր հայ համայնքին, ընդ որում դրանցից 1-ը առաքելական, իսկ 3-ը հայ կաթոլիկների դպրոցներն էին: Սրանց հիմնադրման թվականը հայտնի չէ: Հնարավոր է, որ դրանք հիմնադրված լինեին շատ վաղուց: Տարրական տիպի այս դպրոցներում երեխաները սովորում էին հայերեն և արաբերեն լեզուներ, թվաբանություն, եկեղեցական երաժշտություն և այլ առարկաներ:

Հալեպահայ երեխաների ուսման գործը սկսեց համեմատաբար բարելավվել 1850–1860-ական թվականներին: 1853 թ. Սբ. Քառասուն մանկանց եկեղեցուն կից բացվեց առաջին հայկական ծաղկոցը (մանկապարտեզը), իսկ 1862 թ. Հովհ. Քյուրքճյանոֆի աղջիկների մասնավոր վարժարանը: Մի քանի տարի անց, այս վերջինի փակվելուց հետո, Սբ. Քառասուն մանկանց եկեղեցուն կից գործող արական դպրոցը վերածվում է երկսեռ դպրոցի՝ արական և իգական առանձին բաժիններով:

1880-ական թվականներից հալեպահայության թվաքանակի աճի և բարեկեցության համեմատաբար բարձրացումը նպաստեցին կրթական կյանքի աշխուժացմանը: Զգալիորեն աճեց սովորողների թիվը, և 1897 թ. քաղաքում կառուցվեց երկհարկանի վայելուչ դպրոցական շենք, որը լիովին համապատասխանում էր ժամանակի պահանջներին: Եթե 1878–1880 թթ. հալեպահայ առաքելական և կաթոլիկ 5 դպրոցներում սովորում էին 232 աշակերտ, ապա 1908–1911 թթ. Հալեպի հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական 7 դպրոցների սովորողների թիվը հասել էր 905 աշակերտի:

Հալեպի հայկական դպրոցները գլխավորապես սպասարկում էին աշխատավոր խավերի երեխաներին, այնինչ բարեկեցիկ խավերը դերադասում էին իրենց զավակներին կրթության տալ օտար վարժարաններում: Եղած դպրոցների մեջ ամենանշանավորը 1876 թվականից Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի անունը կրող Ներսիսյան արական դպրոցն էր, որտեղ 1906 թ. սովորում էր 450 աշակերտ. նրանցից 200-ը ձրիավարժ էին, իսկ մնացածները վճարում էին չնչին վարձ՝ յուրաքանչյուր աշակերտ՝ շուրջ կես ոսկի:

Ներսիսյան դպրոցը տարրական նախակրթական էր՝ չորս, երբեմն էլ 5 և 6 դասարաններով: Այստեղ դասավանդվում էին հայոց լեզու, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, օտար լեզուներ, թվաբանություն, ֆիզիկա, քիմիա, ընդհանուր պատմություն, կրոնագիտություն, գծագրություն, մարմնամարզություն և այլն:

Հայկական դպրոցներ էին գործում Հալեպի նահանգի մյուս հայաշատ շրջաններում: 1880-ական թվականներին, երբ դպրոցական գործի զարգացմանը նոր խթան հաղորդվեց, հայկական դպրոցներ սկսեցին բացվել Քեսապում, Ալեքսանդրետում, Սվեդիայում, Անտիոքում, Բեյլանում և այլուր: Սակայն հայկական դպրոցներ ունեին ոչ բոլոր համայնքները՝ գլխավորապես հնարավորությունների բացակայության պատճառով: 1901–1922 թթ. Անտիոքում և նրա մերձակա գյուղերում

(Սվեդիա և այլն) կային տասը տարրական դպրոցներ՝ 487 աշակերտներով, Ալեքսանդրետում գործում էին երկու (արական և իգական), Բեյլանում՝ մեկ արական դպրոց՝ 100 աշակերտով:

Դամասկոսի, Լատակիայի և Բեյրութի հայկական դպրոցները գտնվում էին Երուսաղեմի պատրիարքարանի վերահսկողության տակ: Վեքիլ-վարդապետները և նրանց աջակցող թաղական խորհուրդները դրամական միջոցներ էին հայթայթում դպրոցների գոյությունն ապահովելու համար: Դամասկոսում առաջին հայկական դպրոցը բացվել էր 1849 թ.: Դարավերջին այդ դպրոցում սովորում էին 310 երեխա: Բեյրութում առաջին դպրոցը հիմնվեց 1859 թ.: 20-րդ դարի սկզբից քաղաքում սկսել էր գործել նաև հայկական մասնավոր դպրոց: 1890-ական թվականներին Լատակիայում և համանուն կազայում կային հայկական երկու միջնակարգ, երեք արական և երեք իգական դպրոցներ՝ 530 աշակերտներով:

Լեռնային Լիբանանում բավական վաղ ժամանակներից գործում էր Զմմառի հայ կաթոլիկ վանքի հոգևոր դպրոցը, դպրոց, որը որոշ ընդհատումներով գոյատևում է առ այսօր:

Սիրիահայ գաղութում նոր սերնդի կրթության գործը չէր սահմանափակվում հայկական դպրոցներով: Ղազիրի ճիզվիտական սեմինարիայում (հիմնադրված 1846 թ.), Բեյրութի սիրիական բողոքական կոլեջում (հիմնդր. 1866 թ.) և հետագայում դրանց հիմքի վրա ստեղծված ֆրանսիական (Սեն-Ժոզեֆ) և ամերիկյան համալսարաններում զգալի թվով հայ ուսանողներ էին սովորում նաև Սիրիայից: 1881–1918 թթ. այդ համալսարաններից ավարտական վկայականներ էին ստացել 315 հայ շրջանավարտներ՝ բժիշկներ, դեղագործներ, բուժակներ և այլն:

Սիրիայում հայ երեխաների կրթության գործը մի շարք հանգամանքների և առաջին հերթին դրամական միջոցների պակասի պատճառով ուներ նկատելի թերություններ: Դպրոցներում սովորող երեխաները կազմում էին դպրոցահասակների միայն մի մասը, երեխաներից շատերը, մանավանդ գյուղական վայրերում, զուրկ էին դպրոց հաճախելու հնարավորությունից, խիստ սահմանափակ էին դասատուների գիտելիքները և այլն: Զնայած նշված և այլ կարգի թերություններին, դպրոցները նկատելի դեր էին կատարում այլակրոն և այլալեզու միջավայրում հայերի ազգապահպանման, երեխաների հայեցի դաստիարակության գործում:

Սիրիահայ մշակութային կյանքի դրսևորումներից էին մշակութային ընկերությունները, որոնցից շատերը նկատելի դեր են կատարել դպրոցական գործի կազմակերպման և զարգացման, հայ մարդկանց կուլտուր-կենցաղային հանգստի կազմակերպման և հասարակական կյանքի այլ ասպարեզներում: Ամենահնագույն ընկերությունը «Ռուբինյան միությունն» էր, որը հիմնադրվել էր 1846 թ., Հալեպում: Նրա գլխավոր նպատակը արաբախոս հայերի շրջանում հայերեն լեզվի տարածումն էր: 1860 թ. գործում էր Հ. Քյուրքճյանոֆի գլխավորած «Արամյան առևտրական ընկերությունը», որի ուշադրության կենտրոնում գտնվում էր «Հայոց լուսավորության» խնդիրը: 1880 թ. գործունեություն էր ծավալել «Ուսումնասիրաց ընկերությունը», հետապնդելով ազգային-ազատագրական նպատակներ: Հալեպի հայ երիտասարդության նկատելի մասը մտել էր «Ընկերության» մեջ, որպեսզի ի կատար ածի «առ ազգն ունեցած պարտականությունը»: Կային հայ կանանց կողմից հիմնադրված մի շարք ընկերություններ և միություններ, որոնց հիմնական գործունեությունը ներառում էր ազգային կուլտուր-կրթական խնդիրներ: Մշակութային ընկերություններ էին գործում Դամասկոսում, Բեյրութում, Լատակիայում և որոշ գյուղական վայրերում:

19-րդ դարի 60-ական թվականներից սկզբնավորվում է սիրիահայ պարբերական մամուլը: 1862 թ. Հալեպում սկսեց լույս տեսնել «Ցռաթ» թերթը: 1913 թ. նույն Հալեպում հրատարակվում էր «Աղբյուր» խմորատիպ պարբերականը:

ԵԹՈՎՊԻԱ

Ըստ պահպանված տեղեկությունների, կարելի է ենթադրել, որ սկսած մ.թ. առաջին դարերից՝ հայ վաճառականները առևտրական գործարքներ էին կատարում Կարմիր ծովի եթովպական ափերին: Հայ և եթովպացի ժողովուրդների հնագույն կապերի մասին վկայում է Արևելքում ստեղծված մի ավանդություն, որը ժամանակին գրի է առել Մովսես Խորենացին և ըստ որի քաղդեական Տևտամոս թագավորը օգնական զորք է ուղարկել Պիրամոսին, և այդ զորքի մեջ եղել է եթովպացիներից բաղկացած զորամաս՝ հայազգի զորավար Զարմայրի հրամանատարության ներքո:

Հայ-եթովպական գործուն հարաբերությունները, փոխայցերը, գուցե նաև հայերի գաղթօջախների առաջին կղզյակները այս երկրում երևան են եկել 5-րդ դարում, ավելի կոնկրետ՝ 451 թ. քաղկեդոնիկ ժողովից հետո:

Հայ-եթովպական հարաբերությունները հիմնականում սկզբնավորվել են կրոնական հիմքի վրա, սակայն միաժամանակ ունեցել են քաղաքական որոշակի ուղղվածություն, որովհետև արևելյան ժողովուրդները, մերժելով բյուզանդական եկեղեցուն հպատակվելը, հակադիր դիրք են բռնել Բյուզանդական կայսրության նկատմամբ: Դա մի պայքար էր, որն ավելի մերձեցրեց ոչ մեծ ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին ու եթովպացիներին:

Հայաստանի և Եթովպիայի միջև քիչ թե շատ կանոնավոր հարաբերությունները սկիզբ են առնում մանավանդ 6-րդ դարից սկսած: Հայ և եթովպական եկեղեցիների միջև պահպանվել են մշտական կապեր, որոնք դրսևորվել են հայ և եթովպացի եկեղեցական գործիչների փոխադարձ այցելություններով: 11-րդ դարից սկսած՝ այս հարաբերությունները պահպանվել էին մասնավորապես Երուսաղեմի մեջ, որտեղ հաբեշները, խաչակիրներից հալածված, ապավինել էին հայերի հովանավորությանը[1]: 14-րդ դարում հաբեշ եպիսկոպոս Եվստաթեոսը, որն իր կրթությունը ստացել էր Եթովպիայի հայ գաղութում, 1344 թ. հարկադրված է լինում իր աշակերտներով փոխադրվել Հայկական Կիլիկիա[2]:

---

1 Ն ա լ բ ա ն դ յ ա ն Հ., Հայերը և Եթովպիան («Արև», 15.II.1935):

2 Թ ո ւ ռ ջ յ ա ն Հ., Հաբեշ կրոնական գործիչ Եվստաթեոսը և հայ եկեղեցին (տես «Էջմիածին», 1956, № 4–5, էջ 97–99):

Հնագույն հայկական մնայուն գաղթօջախը Եթովպիայում, ըստ պատմական աղբյուրների, կազմավորվել է յոթերորդ դարում: Դա տեղի է ունեցել քաղաքական հետևյալ իրադրության մեջ: Արաբական խալիֆայությունը, նվաճելով Պաղեստինը, Սիրիան և Եգիպտոսը ու սկսելով հալածանք քրիստոնյաների դեմ, առաջ բերեց քրիստոնյա դաղթականության մի մեծ հոսանք, որը, շարժվելով Թեբե-Սուդան-Նաբադ ցամաքային ճանապարհով, եկել և հաստատվել է ներկայիս Եթովպիայի տարածքում: Պաղեստինում և Սիրիայում ապրող հայերի մի մեծ խումբ, կորցնելով հայրենիք վերադառնալու հույսը, միացել է գաղթականների այդ հոսանքին, գնացել և հաստատվել է Աքսումի թագավորության սահմաններում գտնվող՝ ներկայիս Դեսիե քաղաքի մոտ: Հայկական այդ համայնքը աղբյուրներում հայտնի է «Հայք» և «Հայկական կղզի» անուններով:

Հայ գաղթականներն այստեղ ապրել են համախմբված, մի վայրում, որտեղ հայ ճարտարապետական ոճով կառուցել են իրենց եկեղեցին. այն կոչվում էր Սուրբ Ստեփանոս, որը կանգուն է մնացել մինչև 1527 թ.:

Հայ-եթովպական հարաբերությունների և Եթովպիայի հայկական գաղթօջախի պատմության ճանաչված հեղինակ Հ. Թուրշյանը գրում է, թե «Հայկական գաղթօջախը իր սեփական օրինակելի զորքով, կուլտուրական և առևտրական ծավալուն գործունեությամբ դարեր շարունակ աչքի ընկնող դաստիարակիչ «կղզի» է հանդիսացել Հաբեշստանի պատմության մեջ»[1]:

Եթովպիայի հայկական այս գաղթօջախը սոցիալական ի՞նչ կազմ, ինչքա՞ն բնակչություն, ի՞նչ զբաղմունք է ունեցել: Շատ բան մեզ հայտնի չէ: Եղած առանձին համառոտ տեղեկությունները հաղորդում են եթովպական աղբյուրները: Պրոֆ. Վ: Բոլոտովը, որն աշխատություն է նվիրել Եթովպիայի հայությանը, համոզված է, որ Հաբեշստանում հաստատված «Հայքը», հայկական բնակչության «կղզիով», իր Սուրբ Ստեփաբոս վանքի հետ, շատ մեծ ազդեցություն ուներ երկրում, այնքան մեծ, որ Նեգուստ Նեգեշտիները չէին կարող երկրում հողաբաժանման հարցում հաշվի չառնել «Հայքի» կարծիքը: Ավելին, «Արքաների փառք» և «Արքաների հարստություն» հաբեշական մատյաններում հիշատակություններ կան այն մասին, որ Սողոմոնյան հարստության վե-

1 Նույն տեղում:

բականգնման գործում կդալի դեր է խաղացել «Հայքի» վանքի առաջնորդներից Գևորգ Նասչայեցին:

Եթովպական մատենագրության մեջ հայկական այս գաղթօջախի մասին ուշադրության արժանի հետևյալ տեղեկությունն է պահպանվել. Մարիամ Նեգուս Նեգնշդիի (1468–1478 թթ.) ժամանակագրությունում պահպանված ոչ ընդարձակ մի տեղեկություն խոսում է այն մեծ դիրքի և հեղինակության մասին, որը վայելում էր «Հայկական կղզին» ոչ միայն ժողովրդի, այլ նաև երկրի գահակալների մոտ: «Իսկ ինքը՝ թագավորը,– վկայում է ժամանակագիրը,– վեր կացավ իր ամբողջ զորքով և գնաց մինչև որ հասավ Յաչեկո գավառը: Հայքի մարդիկ ընդառաջ եկան և դիմավորեցին մեծ պատվով: Եվ երբ թագավորը տեսավ Հայքի մարդկանց մատուցած պատիվն ու նրանց զորքի փառահեղությունը, զարմացավ, շատ ողջունեց նրանց և թույլ տվեց, որ վերադառնան իրենց տեղը»[1]:

Արաբական արշավանքների ժամանակ հայկական գաղթոջախի այս կղզյակը ժամանակավոր լճացում և անկում ապրեց: Այն թե եթովպական և թե արաբական աղբյուրներում առաջվա մեծությամբ չի հիշվում: Բայց Սալահ էդ-Դինի՝ եգիպտահայերի նկատմամբ ցուցաբերած վայրագությունների ժամանակ մի մեծ խումբ եգիպտահայեր ստիպված անցան Եթովպիա՝ մարդաշատ դարձնելով «Հայկական կղզին» և առևտրաշահ քաղաքներում հիմնելով նոր գաղթակետեր: Աղբյուրները նշում են, որ նոր եկող հայերը հիմնականում արհեստավորներ և գյուղատնտեսությամբ զբաղվողներ էին, իհարկե, կային նաև վաճառականներ:

Խաչակրաց արշավանքների ժամանակ մեծ թվով հայեր ևս ապաստան գտան Եթովպիայում: Նրանց հետ այստեղ եկան նաև նշանակալից թվով վաճառական ու արհեստավոր հայեր: Այս հայերը ևս բնակություն հաստատեցին իրենց հայրենակիցների մոտ՝ մարդաշատ դարձնելով «Հայքը»:

Եթովպական տեղեկությունները վկայում են, որ հայկական Ս. Ստեփանոս վանքը կդալի դեր է խաղացել ոչ միայն հայկական, այլ նաև եթովպական մշակույթի մեջ: Եթովպական միջնադարյան գրականության գոհարներից մեկը՝ «Տիրամոր փառաբանությունը» երկը, գրվել է այս վանքում, նրա վանահայր Գևորգի կողմից: Այն հայտնի է նաև

1 Абессинские хроники XIV – XV вв., М. – Л., 1936, с. 92.

«Կույսի երգեհոնը» վերնագրով: Որոշ ուսումնասիրողներ անգամ փորձել են ճշտել այն գրելու ժամանակը՝ 1440 թ.[1]:

Եթովպիայի «Հայ կղզու» և նրա վանքի հետ են կապված հայ-եթովպական մատենագիտական մի շարք աղերսներ: Ակադ. Բ. Տուրաևը և Հակոբ Գրիգորը, օրինակ, եթովպական ձեռագրերում հայտնաբերել են Գ. Լուսավորչի վարքի և նրան վերագրվող մի քանի ճառերի՝ հայերենից կատարված թարգմանությունները: Բեռլինի, Լոնդոնի և Փարիզի եթովպական ձեռագրերի հավաքածուներում Հակոբ Գրիգորը իր հետազոտությունների ընթացքում հանդիպել է մի քանի ձեռագրերի, որոնցում զգալի տեղ է տրված հայոց եկեղեցուն, հայ սրբերին, հատկապես Գրիգոր Լուսավորչին: Այդ ձեռագրերից մեկը կրում է «Հայերի հավատքը» վերնագիրը և ամբողջությամբ նվիրված է հայոց եկեղեցուն: Եթովպերեն լեզվով եղած ձեռագրերից մեկում Հակոբ Գրիգորը հանդիպել է մեկ այլ ձեռագրի, որում Գր. Լուսավորչին նվիրված են տասնյակ էջեր: Ձեռագրի այդ հատվածն ունի «Հայաստանի պատրիարք սուրբ Գրիգորի կյանքն ու մարտիրոսությունը» վերնագիրը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները փոփոխություններ բերեցին նաև Եթովպիայի կյանքում: Նախ պորտուգալացիները, ապա Հնդկաստան գնացող մյուս եվրոպացիները, որոնք անցնում էին Եթովպիայի ծովեզրերով, անպայման կանգ էին առնում նրա նավահանգիստներում, ջրով, սննդամթերքով համալրում իրենց պաշարը և նոր շարունակում ճանապարհը: Եվրոպական ժողովուրդներից առաջինը պորտուգալացիները ծանոթացան Եթովպիային: Սկզբից ևեթ երկու երկրների շահերը փոխադարձվեցին: Հարցն այն է, որ Պորտուգալիա-Հնդկաստան ուղու վրա անխուսափելի էր պորտուգալական նավերի կանգառը Կարմիր ծովի ափերի նավահանգիստներում: Իր հերթին, Եթովպիայի համար օրավուր աճող թուրքական և մուսուլմանական վտանգը եթովպացիներին ստիպում էր դաշնակիցներ որոնել քրիստոնյա պետությունների մեջ: Նման առավել հարուստ դաշնակիցը Եթովպիայի համար առաջին հերթին մնում էր Պորտուգալիան:

16-րդ դ. Նեգուստ Նեգեշի Լենտա Դանգելը, խուսափելով հետապնդումներից, մահացավ անապատում: Թագավորամայր Հեղինեն, որը թափառական կյանք էր վարում մի խումբ հավատարիմ մարդկանց հետ, որոշեց օգնության խնդրանքով պատվիրակություն ուղարկել

---

1 Ն ա լ բ ա ն դ յ ա ն Հ., նշվ. աշխ.:

Պորտուգալիա: Դիվանագիտական այս խիստ կարևոր խնդիրն իրականացնելու համար անհրաժեշտ էր նախ և առաջ Եթովպիայի շահերին հավատարիմ հմուտ դիվանագետ, լեզուներ իմացող մեկը: Այդ վստահությանն արժանացավ հայկական գաղթօջախի աչքի ընկնող անդամ, պալատում քաջ հայտնի Մաթևոսը: Եթովպական աղբյուրներում այդ մասին կարդում ենք. «Այդ նույն ժամանակ՝ 1513 թվականին, Պորտուգալիայի թագավորի մոտ Եթովպիայից դեսպան ուղարկվեց հայ Մաթևոսը»[1]: Դա եթովպական առաջին դիվանագետն էր Եվրոպայում:

Ուսումնասիրողներից ոչ մեկը ոչ մի կասկած չի հայտնել եթովպական դեսպանի հայ լինելու մասին. վեճ է գնացել միայն նրա զբաղմունքի շուրջ: Ոմանք գտնում են, որ նա պալատական ծառայող է եղել, ոմանք նրան համարում են վաճառական, ոմանք էլ՝ հոգևորական: Կարևորն այստեղ նրա՝ ինչ զբաղմունքի տեր լինելը չէ, այլ այն, որ Եթովպիայի համար այդ ծանր ժամանակ հայազգի մարդու է վստահվել նման լուրջ առաքելություն: Հեղինե խնամակալ թագուհին և նրա շրջապատը լավ էին հասկանում այն դերը, որը Եթովպիան, որպես կապող օղակ, խաղում էր Եվրոպայի և Հնդկաստանի միջև կատարվող առևտրում: Ճիշտ է, Եթովպիայի նկատմամբ թշնամական վերաբերմունք ուներ Թուրքիան, սակայն արաբական երկրների հետ նրա հարաբերությունները թշնամական չէին, այնպես որ ակնկալվող եթովպա-պորտուգալական դաշինքը ձեռնտու էր նաև Պորտուգալիային: Սակայն անհրաժեշտ էր այս գեղեցիկ ծրագիրն իրականացնող հմուտ դիվանագետ. «Այդ մարդը մի հայ եղավ: Այդ տարիներին արքունիքում էր ապրում մի հայազգի վաճառական Մաթևոս անունով, խելացի, հնարամիտ, պարկեշտ, փորձառու մեկը: Նա թե վաճառականության և թե դիվանագիտության առաքելություններով հաճախ էր ճամփորդել Պարսկաստանում, Եգիպտոսում, Պաղեստինում, Հուրմուզում և այլ վայրերում»[2]: Մաթևոսը հաճախ էր կառավարության կողմից ուղարկվում՝ եթովպական ապրանքներ փոխանակելու: Ճիշտ է, եթովպական

---

1 Եթովպահայ դեսպան Մաթևոսի հաղորդումների հիման վրա 1531 թ. Լիսաբոնում լույս է տեսնում Դամիան Գետցի «Ավետիս մեր հայր թագավորին՝ Հովհաննես երեցի գտնվելու մասին» գիրքը:

2 Тураев Б. А. Из армяно-абиссинских сношений. Факты. Эфиопские фрагменты Эчмиадзинской библиотеки. Молитвы и анафора, приписываемая св. Гр. Просветителю в эфиопских рукописях, СПб., 1912, с. 3.

ապրանքներ փոխանակելու գործը անում էին նաև հույները, բայց հայերն ավելի հարգի էին:

Ուշագրավ են Մաթևոսի ճանապարհորդության հանգամանքները: Ծովային ճանապարհով ուղևորվելով Մաթևոսը 1510 թ. հասնում է Գոա պորտուգալական փոխարքայության կենտրոնը Հնդկաստանի արևմտյան ափին: Հայտնի չէ, թե ինչո՞ւ է Մաթևոսը երկարացրել իր ուղին: Կարելի է ենթադրել, որ նա ուզեցել է հանդիպել իրեն ծանոթ պորտուգալացիների կամ հենց փոխարքայի հետ, ինչ-որ բաներ պարզել: Ինչևէ, հարցը մնում է բաց. հայտնի է միայն, որ եթովպական հայազգի դեսպանը Գոա հասնելուց հետո կասկածվում է թուրքական լրտեսության մեջ և բանտարկվում տեղի պորտուգալական իշխանությունների կողմից: 1513 թ. Գոա եկած նոր փոխարքա Ալբուկերկեն, լսելով որ ձերբակալվել է Պորտուգալիա մեկնող եթովպական դեսպանը, ազատում է Մաթևոսին: Վերջինս, մեծ դժվարություններ հաղթահարելով, միայն 1513 թ. հասնում է Լիսաբոն: Նա Լիսաբոնում ներկայացավ Պորտուգալիայի թագավոր Էմանուելին (1495–1521), որը մեծամեծ պատիվներ տվեց հայազգի դեսպանին և 1515 թ. նրա հետ դաշինք կնքեց:

Դեսպան Մաթևոսը Պորտուգալիայում ընդունվում է շատ մեծ պատիվներով: Նրա այցը մեծ հետաքրքրություն է առաջ բերում նաև եվրոպական երկրներում, քանի որ, հանձին քրիստոնյա Եթովպիայի, հանդես էր գալիս հակաթուրքական դաշնակից տվյալ տարածաշրջանում:

Տասնամյա թափառումներից հետո Մաթևոսը վերադառնում է Եթովպիա և 1520 թ. մայիսի 23-ին, մայրաքաղաք դնալու ճանապարհին տարափոխիկ հիվանդությունից մահանում է[1]:

Այսպիսով, 1510–1520 թվականներին Հաբեշստանից Պորտուգալիա մեկնած հայ Մաթևոսին՝ հավանաբար, «Հայքի» վանքի վանահորը, վիճակվեց Եվրոպային առաջին անգամ ստույգ տեղեկություններ հաղորդել այդ երկրի մասին: Դամիան Գետցի գիրքը, որը, ինչպես ակնարկվեց, հիմնված էր Մաթևոսի հաղորդած տեղեկությունների վրա, առաջին գիրքն էր, որ Եվրոպայում գրվել է Եթովպիայի մասին: Հաբեշստանի մասին Եվրոպայում լույս տեսած երկրորդ գիրքը նույնպես կապված է Մաթևոսի գործունեության հետ: Մաթևոսին հաջողվել էր մեծ հետաքրքրություն առաջ բերել Պորտուգալիայում, և նրա հետ Հաբեշստան են գալիս երեք պորտուգալացիներ՝ Ալվարեսը, Բերդուդեսը և

---

1 Тураев Б. А. նշվ. աշխ.:

Կոստանդիոզոն[1]: Դամիան Գոտցի գրքի լույս ընծայումից ինը տարի հետո Լիսաբոնում լույս է տեսնում Ֆերդինանդ Ալվարեսի գիրքը ("No Preste Ioan des Indias", 1540)[2]:

Բացի Մաթևոսից, եթովպական պալատում կային նաև այլ հայ մարդիկ, որոնք հասել էին մյուս օտարերկրացիներին անմատչելի պաշտոնների:

Եթովպիայի ժողովրդի՝ երկրում ապրող հայերի նկատմամբ ցուցաբերած վստահությունն ու բարյացակամ վերաբերմունքը և նրանց կապերը հաշվի առնելով՝ եվրոպացիները ևս աշխատել են Եթովպիայի հետ քաղաքական հարաբերությունների մեջ մտնել եթովպահայերի միջոցով: Հայտնի է, օրինակ, որ 17-րդ դ. Ֆրանսիան Եթովպիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և դեսպաններ փոխանակելու նպատակով Եթովպիա ուղարկեց Կահիրեի ֆրանսիական միսիայում աշխատող եթովպահայ Եղիա Ենովքին: 1678 թ. քաղաքական մեծ միսիայով Փարիզից Եթովպիա եկավ Հովհաննես արքեպիսկոպոսը, որը ժամանակին զբաղեցրել էր Աղթամարի կաթողիկոսի և Կ. Պոլսի պատրիարքի աթոռները: Հայ դիվանագետ-հոգևորականը Եթովպիայում բազմաթիվ հանդիպումներ ունեցավ երկրի արքունիքի և պետական բարձր պաշտոնյաների հետ և բանակցություններ վարեց ֆրանսիական պետության անունից: Վերադառնալով՝ նա գրեց իր համառոտ նոթերը, որոնք կարևոր սկզբնաղբյուր են 17-րդ դ. Եթովպիայի քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքն ուսումնասիրելու համար[3]:

Եթովպիայի դիվանագիտության պատմության մեջ նշանավոր գործիչ էր հայազգի Մուրադը: Այս գործչի մասին խոսել են թե հայ և թե եթովպացի ու եվրոպացի հեղինակները: Եթովպական կառավարության անունից նա շատ անգամներ է դիվանագիտական առաքելություններ կատարել դեպի Հնդկաստան, Եգիպտոս, Արաբիա, Թուրքիա և այլ երկրներ: Առավել հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել այս դիվանագետի՝ մեկ այլ անձի հետ միասին դեպի Հնդկաստան կատարած ուղևորությունների մասին:

---

1 Թ ո ւ ռ ջ յ ա ն Հ., Հայ-հաբեշական առնչությունները XVII–XVIII դարերում, ձեռագիր, էջ 6:

2 Նույն տեղում, էջ 7:

3 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա ր շ ա կ, Հայ եպիսկոպոսի մը այցելությունը ի Հապեշիստան ԺԷ դարուն, Գահիրե, 1946 [գրքում զետեղված է Հովհաննես վրդ. (Թյուրճիի) ուղևորությունը. «Պատմութիւն Հապեշստանա գնալոյ և դալո ճանապարհին ի թուին ՌՍԻ 1678»]:

Մուրադի Հնդկաստան կատարած այցերի մասին շատ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ֆրանսիացի Ֆրանսուա Բերնիեն, որը 20 տարի ապրել է Մեծ Մողոլի մայրաքաղաք Դելիում, եղել է երկրի գահակալ Ահուրենգզեբի լժիշկը և հաղորդակից է եղել պալատի բոլոր իրադարձություններին: Իր ուղևորության սկզբում նա Մուրադի մասին հետևյալն է հաղորդում. «Իմ Հնդկաստանում եղած ժամանակ շատ երկրներից դեսպաններ եկան Հնդկաստան, որոնք մեծ ընդունելության արժանացան Ահուրենգզեբի կողմից: Այդ եկած պատվիրակություններից հատկապես արժե առանձին խոսել եթովպական թագավորության դեսպանի մասին: Եթովպիայի թագավորը ... դեսպանության պարտականությունը կատարելու համար ընտրել էր երկու հոգու: Պետք է ենթադրել, որ նրանք պալատի առավել աչքի ընկնող, նշանակալի դեմքերից էին, որոնք ի վիճակի էին իրականացնելու այնքան գեղեցիկ մտածված պլանը: Նրանցից առաջինը մահմեդական վաճառական էր ... երկրորդը քրիստոնյա էր՝ հայ վաճառական և մեծացել էր Հալեպում: Նա Եթովպիայում հայտնի էր Մուրադ անունով: Ես նրան նույնպես տեսել էի Մոկայում, ուր ինձ հիանալի խորհուրդներ է տվել»[1]*:*

Այնուհետև Ֆ. Բերնիեն հիշում է, որ Մուրադը Եթովպիայի թագավորի հանձնարարությամբ ամեն տարի գալիս է Մոկա և ընծաներ բերում Հնդկաստանի արևմտյան ծովափում հաստատված եվրոպական առևտրական ընկերությունների ղեկավարներին:

Եթովպական թագավորի դեսպանները երկարատև և արկածալի ուղևորությունից հետո հասնում են Սուրաթ, ուր կողոպտվում են զինվորների կողմից: Դեսպաններին փրկում են միայն նրանց մոտ հայտնաբերված Ահուրենգզեբին ուղղված նամակները: Ի վերջո, բավականին տառապանքներից հետո, եթովպական դեսպանները հասնում են Դելի, ուր արժանանում են Մեծ Մողոլի գահակալի ընդունելությանը: Ահուրենգզեբը հարգանքով է ընդունում Մուրադին, զրույց ունենում նրա հետ, վերցնում Եթովպիայի թագավորի նամակները: Իմանալով, որ նա և ընկերը կողոպտվել են, նրանց բավականին մեծ գումար է տալիս, որպեսզի նրանք Հնդկաստանում ապրած ժամանակ դժվարություններ չքաշեն և հետ դառնալիս ճանապարհածախս ունենան:

---

1 *Տե՛ս* Франсуа Берние-ի "История последних политических переворотов в государстве Великого Могола" *գրքում:*

Մի ամբողջ էջ է կազմում հայ դեսպանի ձեռքով Ահուրենգզեբի կողմից Եթովպիայի թագավորին ուղղարկած թանկարժեք նվերների ցուցակը: Հետաքրքիր այս փաստը խոսում է այն մասին, թե ինչպիսի մեծ վստահություն են տածել երկու օտար տերությունների գահակալները հայ մարդու նկատմամբ:

Ինչպես վկայում է Ֆ. Բերնիեն, Մուրադին մի շարք անգամներ Ահուրենգզեբը պալատ է հրավիրել և մտերմիկ զրույց ունեցել նրա հետ: Ֆ. Բերնիեն հիշում է, որ Եթովպիայի հայ դեսպանը առիթը բաց չի թողել Մեծ Մողոլի գահակալին շատ ավելին ասելու, քան պետք էր. իր թագավորի զորքի հզորության, Եթովպիայի յուրահատկությունների, կենցաղի, բարքերի, սովորությունների մասին և այլն:

1603 թ. Եթովպիա թափանցած (ըստ ոմանց՝ հայազգեստ) Պայիսը շատ արագ սովորեց տեղի լեզուն, դպրոց բացեց և, օգտվելով գահը խլած Զադենգել իշխանի հովանավորությունից, որը կաթոլիկություն էր ընդունել, սկսեց կաթոլիկություն քարոզել: Կաթոլիկությունը դարձավ պետական կրոն: Սակայն կարճ ժամանակ անց կաթոլիկության դեմ սկսված կատաղի պայքարը ավարտվեց հաղթանակով: Իշխանության գլուխ անցած Ֆասելիդասը օրենք հրապարակեց, որով մահվան էին դատապարտվում Եթովպիա թափանցած օտարերկրացիները՝ հատկապես սպիտակամորթները: 16-րդ դ. երկրորդ կեսից մինչև 18-րդ դարի սկիզբը գործած այս օրենքը չէր տարածվում միայն հայերի ու հույների վրա:

Եթովպիայում հայերի վայելած մեծ հեղինակության և վստահության մասին է խոսում հետևյալը. պատմությունից հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ ապահովության համար օտարազգի վաճառականները և քարոզիչները Արևելք և Աֆրիկայի երկրներ, հատկապես Եթովպիա էին մտնում հայ վաճառականի տարազով, իրենց ներկայացնում էին որպես հայեր: Փաստ, որը խոսում է այն մասին, որ Եթովպիա մտնող և գուցե նաև հաստատվող հայերն իրենց վարք ու բարքով, եթովպացիների նկատմամբ ունեցած վերաբերմունքով այնքան էին հարգված և վստահելի, որ «հայի տարազը» օտարի համար դարձել էր ապահովության գրավական:

Եթովպացի և եվրոպացի հեղինակները միաբերան վկայում են, որ Եթովպիայի արտաքին առևտուրը 16–18-րդ դարերին գրեթե լիովին գտնվում էր եթովպահայ վաճառականների ձեռքում: Նրանք էին տոն տալիս նաև երկրի արհեստների որոշ ճյուղերի զարգացմանը:

Իտալացի աշխարհագրագետ Բիչինկը, խոսելով Հաբեշստանի մասին, ասում է, որ «վաճառականութիւն երկրի... ի ձեռս հայոց»: Հաղորդելով այս վկայությունը՝ Գ. Ագոնցը կասկածում է նրա իսկությանը, ավելացնելով, թե «բայց այս դուցե եղև ի հնումն, քանզի ի մերում ժամանակի ի հայոց հազիւ ոք գնայ անդ»[1]: Գ. Ագոնցը իր աշխարհագրությունը շարադրել է 19-րդ դարի սկզբին, այսինքն՝ երբ համաշխարհային առևտրի մեջ ընկել էր հայ վաճառականության մասնակցության բաժինը, սակայն վիճակն այդպես չէր «ի հնումն», այսինքն՝ 1600–1750 թվականներին, երբ արտաքին առևտրի բարձունքները գտնվում էին հայ վաճառականների ձեռքին: Ինչպես այդ ժամանակաշրջանում, այնպես էլ դրանից առաջ Եթովպիայի արտաքին դիվանագիտական հարաբերությունների իրագործման համար նախապատվությունը տրվում էր հայ վաճառականներին: Ինչպես տեսանք, Հաբեշստանի կողմից Եվրոպա ուղարկված առաջին դեսպանը կրոնավոր և վաճառական Մաթեոսն էր (1510–1520 թթ.): Հայ վաճառականության վերելքի ժամանակ հաբեշները Հնդկաստան են ուղարկում հալեպցի վաճառական Մուրադին (1660-ական թվականներին), իսկ այնուհետև Լյուդովիկոս 14-րդի մոտ են գործուղում նույն այդ Մուրադի եղբորորդուն՝ նույնպես վաճառական Մուրադին (1680-ական թվականներին): Հայ վաճառականության՝ արտաքին առևտրում ունեցած դերի մասին էր խոսում նաև այն փաստը, որ եթովպացի արքունի գանձապետության պաշտոնը, որի ֆունկցիաների մեջ էր մտնում նաև արհեստավորական արտադրության վերահսկողությունը, սերնդեսերունդ վարում էին հայ վաճառականները՝:

Հիշյալ ժամանակ եթովպական արքունիքում կային մի շարք հայ պաշտոնյաներ: Նրանցից մեկը՝ Ուստա Սելեֆը, բարձրացել էր կայսրի գանձապետի պաշտոնին: Հետաքրքիր է, որ այդ պաշտոնում իրար են հաջորդել Ուստա Սելեֆի որդին՝ Հովհաննեսը և թոռը՝ Պողոսը: Հասկանալի է՝ հատուկենտ հայերը չէին, որոնք հաստատվել և առևտուր էին անում Եթովպիայում և հասել էին երկրի գանձապետի ու դեսպանի բարձր պաշտոններին: Հատկապես մայրաքաղաքում և ծովափնյա քաղաքներում ապրում էին զգալի թվով հայեր, որոնք ժողովրդի և երկրի

---

1 Ա գ ո ն ց Գ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Գ, Վենետիկ, 1902, էջ 527:

2 Թ ո ւ ռ շ յ ա ն Հ., Հայ-հաբեշական հարաբերությունները (ձեռագիր աշխ.), էջ 6–12:

շահերին իրենց հավատարիմ ծառայության համար այնքան մեծ վստահություն էին վայելում թե հարեշ ժողովրդի և թե երկրի կառավարող վերնախավի, անգամ գահակալների մոտ, որ նրանց երբեմն վստահվում էին նույնիսկ տեղացիների համար դժվար հասանելի պաշտոններ:

Հաջորդ ժամանակների վերաբերյալ եթովպահայ գաղթօջախների մասին հավաստի փաստեր քիչ կան:

Եթովպիայի հայկական գաղթօջախների նոր շրջանի սկիզբը համարվում է 1866 թվականը, և այն կապվում է Պողոս Մարգարյանի անվան հետ, որը, հաստատվելով Ադիս-Աբեբայում, լուրջ աշխատանք է կատարել եթովպահայ համայնքը կազմակերպելու ուղղությամբ:

19-րդ դ. վերջին տասնամյակում, հատկապես 1895–1896 թվականներին, Եթովպիա եկող հայերի թիվն ավելացավ 90-ական թվականների կոտորածներից հետո, երբ Թուրքիայից փախած հայ գաղթականական խմբերը զանգվածաբար սկսում են գալ և հաստատվել նաև Եթովպիայի զանազան քաղաքներում:

Ադիս-Աբեբայի ռուսական դեսպանատան բժիշկը ցարական արքունիք ուղարկած իր մի զեկուցագրում հետևյալ պատկերավոր տեղեկությունն է հաղորդում հայ գաղթականների գալու, բնակավորվելու և ժրաջան աշխատանքի մասին. «Երբ մի նոր հայ գաղթական է գալիս, նրա առաջին գործը լինում է իր համար ապրուստի հարմարությունները. վերցնում է մի կտոր ամայի հող, որի վրա նա մի համեստ, բայց մաքուր բնակարան է կառուցում, հետո սկսում է շուրջը ցանկապատելով պտղատու ծառեր տնկել կամ բանջարանոց մշակել, այնպես որ՝ մի քանի ժամանակից հետո կտեսնենք հանկարծ, որ ամայի հողը դարձել է գեղեցկություն ներկայացնող մի տեսարան»[1]:

Այս շրջանի հայ գաղթականության մեջ զգալի թիվ էին կազմում արհեստավորները ու դյուղացիները, հանգամանք, որը հիմնովին փոխում է հայ գաղթականության դասային կազմը. առաջ գաղթավայրի բնակչության հիմնական մասը կազմում էին առևտրականներն ու պետական պաշտոնյաները, մինչդեռ այժմ գերակշռում էին արհեստավորները և դյուղատնտեսության մեջ աշխատողները: Հայ արհեստավորները զբաղվել են 28 զանազան մասնագիտություններով: Առանձնապես մեծ թիվ էին կազմում ոսկերիչները, զինագործները և երկաթագործները: Հայ արհեստավորներից ոմանք զբաղվել են նաև փղոսկրի մշա-

---

1 Ա ր ա ր յ ա ն Գ., Արևմինայի հայ գաղթականությունը («Մուրճ», 1904, № 7, էջ 65):

կությամբ: Հայ արհեստավորները Եթովպիայում գործել են առանձին-առանձին չունենալով մրցակիցներ և երկար ժամանակ որոշ արհեստների մենատիրությունը պահելով իրենց ձեռքում:

Հայ արհեստավորները Մենելիք թագավորին կատարելագործված արհեստների մասին առաջին գաղափար տվողներն էին: Շատ անգամ նյութական վնաս կրելով, նրանք աշխատում են ցույց տալ իրենց ընդունակությունները[1]: Հայերը այս շրջանում դարձել էին Եթովպիայում շատ արհեստների հիմնադիրները և տարածողները: Հայ արհեստավորները հաճախ վերցնում էին եթովպացի աշակերտներ և նրանց սիրով սովորեցնում իրենց արհեստը: Պետական ծառայության մեջ գտնվող հայ արհեստավորներն արդեն ի պաշտոնե տեղացիներին սովորեցնում էին իրենց արհեստների նրբությունները: Եթովպաբնակ Բաթաբան Հայկը այդ մասին գրում է. «Հայն ըլլալով մեծ մասամբ արհեստավոր և անմիջական շփման մեջ գտնվելով բնիկ տարրին հետ, անոր սովորեցուցած է իր արհեստը, հասուցած է շատ մը արհեստավորներ և օգտակար հանդիսացած եթովպացիներին ոսկերչության, թիթեղագործության, կահույքագործության, գորգագործության և այլնի մեջ»[2]:

Համբավավոր էր հատկապես ոսկերիչ Տիգրան Հեպեյանի գործունեությունը: Նրա ջանքերով տասնյակ եթովպացիներ սովորեցին ոսկերչությունն և տարածեցին այդ արհեստը երկրով մեկ:

Հայ արհեստավորներն այստեղ չունեին սպառման լայն շուկա և հաճախ իրենք էին ստիպված լինում զբաղվել իրենց արտադրանքի վաճառքով:

Եթովպահայերի մեջ զգալի թիվ էին կազմում գյուղացիները, որոնք հաստատվել էին գլխավորապես քաղաքամերձ վայրերում: Հայերի մեջ կային նաև այսպես կոչված ազատ մասնագիտության տեր մարդիկ՝ ճարտարապետներ, դեղագործներ, ատամնաբույժներ, մեքենագետներ և այլն: Նկատելի էր եթովպահայերի դերը նաև երկրի մշակութային զարգացման գործում: Այդ փաստը չի վրիպել օտարերկրացիների աչքից: «Անուրանալի է,— գրում է եվրոպացի մի ճանապարհորդ,— որ հայերը որոշ կուլտուրական դեր են կատարում... Նրանք մյուս եվրոպացի հնդիկ կամ արաբ գաղթականների նման միմիայն շահադիտական ձգտումներե չեն առաջնորդված, իրենց ամենահամեստ դիրքում ան-

---

1 Ա ր ա բ յ ա ն Գ., նշվ. աշխ.:

2 Բ ա թ ա բ ա ն Հ ա յ կ, Արդի եթովպիա և հայ գաղութը, Ատիս Ապեպա, Վենետիկ, 1930, էջ 165:

գամ խրատական օրինակ են ներկայացնում բնիկների վերաբերմամբ...»[1]:

Այս շրջանում թեև եթովպահայոց մեջ վաճառականները մեծ թիվ չէին կազմում, բայց զգալի էր իրենց մասնակցությունը Եթովպիայի տնտեսական կյանքին, մասնավորապես արտաքին առևտրի մեջ: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին Եթովպիայում գործում էին հայկական տասը առևտրական տներ՝ իրենց մասնաճյուղերն ունենալով ասիական և եվրոպական մի քանի երկրներում: Հայ առևտրականները ներմուծում էին երկաթեղեն, զենք, զինամթերք, մետաքս, կապար, բամբակեղեն, ապակեղեն, ներկեր, զանազան մեքենաներ, գործիքներ և այլն, արտահանում էին մորթեղեն, սուրճ և այլն: Հատկապես նկատելի էր հայերի դերը զենքի և ռազմամթերքի մատակարարման ասպարեզում: 19-րդ դարի վերջից, տարիներ շարունակ, հայերի ձեռքում էր գտնվում եթովպական բանակին հրետանի և այլ զենքեր մատակարարելու գործը: Սկզբում հայերը ներմուծված զենքը, ռազմամթերքը և մյուս ապրանքները փոխանակում էին փղոսկրի, մեղրամոմի և արտահանվող այլ ապրանքների հետ:

Նոր մայրաքաղաք Ադիս-Աբեբայի հիմնադրմամբ առաջացան որոշ դժվարություններ հաղորդակցության և մատակարարման գործում: Հայ վաճառականներն առաջիններից էին, որ հմտորեն կարողացան կազմակերպել ապրանքների փոխադրումը Ադիս-Աբեբա–Դիրե-Դավա–Ջիբութի գծով՝ հնարավորություն տալով ստեղծելու անխափան կապ երկրի կենտրոնի, Կարմիր ծովի և Ադենի ծոցի միջև: Նման ձեռներեցությունն էլ ավելի է բարձրացրել նրանց հեղինակությունը տեղացիների և կառավարության աչքում:

Հնուց ի վեր բավականին սերտ, բարեկամական հարաբերություններ են գոյություն ունեցել հայերի և եթովպացիների միջև: Դրանում, անշուշտ, որոշակի նշանակություն է ունեցել երկու ժողովուրդների դավանակից լինելը:

Ձեռներեց մի շարք հայեր, շահելով եթովպական արքունիքի վստահությունը, առաջ են քաշվել պետական ղեկավար աշխատանքների: Բավական է ասել, որ այնպիսի կարևոր պաշտոն, ինչպիսին արքունիքի գանձարանի կառավարչությունն է, վստահվել է հայ պաշտոնյաների: Քսան տարուց ավելի երկրի գլխավոր ճարտարապետն է եղել Գրիգոր

---

1 Ա ր ա բ յ ա ն Գ., նշվ. աշխ., էջ 66:

Հովյանը: Նրա կառուցած բազմաթիվ շենքերը, հատկապես առողջապահական հիմնարկները աչքի են ընկնում Եթովպիայի գանազան քաղաքներում: Ավելի ուշ շրջանում ճանաչված ճարտարապետներից է եղել Մինաս Խերպիկյանը: Նրա ստեղծած հատակագծերով Եթովպիայի գանազան վայրերում կառուցվել են բազմաթիվ ճանապարհներ, կամուրջներ և ճանապարհաշինական այլ կառույցներ:

Եթովպական Հովհան թագավորի մոտիկ խորհրդականներն են եղել հայազգի Կապրո Որդեն և Միրաճ Որդեն եղբայրները: 1874 թվականից սկսած Մենելիք թագավորի բժշկապետն էր Պողոս Մարգարյանը: Ավելի նոր ժամանակներում Մենելիք Երկրորդի ոսկերչապետն էր Տիգրան Հեպեյանը: Նրա ձեռքով են պատրաստվել Մենելիքի թագերը, որոնցից ամեն մեկը, ըստ ականատեսների վկայության, ոսկերչական արվեստի գլուխ գործոցներ են:

Անձնվեր և հավատարիմ ծառայության համար բազմաթիվ հայեր արժանացել են Եթովպական կառավարության բարձր շքանշանների և պարգևների: Եղել են հայեր, որոնք պարգևատրվել են անգամ «Սողոմոնյան» կոչվող շքանշանով, մի շքանշան, որը թագավորական տան անդամներին էր միայն շնորհվում:

Երախտագիտորեն գնահատելով հյուրասեր Եթովպացիների բարյացակամ վերաբերմունքը՝ հայերը աշխատել են իրենց ուժերի ներածին չափ օգտակար լինել հաբեշ ժողովրդին: Եթովպիայի համար ծանր փորձությունների ժամանակ, երբ Եթովպացի ժողովուրդը զենք է վերցրել պաշտպանելու իր ազատությունն ու անկախությունը, հայերը եղել են նրա կողքին: Օտար նվաճողների դեմ Եթովպիայի մղած պայքարի պատմության մեջ մեծ անուն է վաստակել Սարգիս Թերզյանը, որը Եթովպիայում հայտնի է Սարգիս Թելլիք («Մեծ») մականունով: 1882 թ. գալով Եթովպիա՝ նա սկզբում հաստատվում է Հարարում, իսկ հետո մտնում զինվորական ծառայության մեջ՝ Մենելիք թագավորի զորաբանակում: Մարտերում ցույց տված իր արտակարգ քաջության և ձեռներեցության համար նրան առաջ են քաշում պետական բարձր պաշտոնի և նշանակում Կելետեսայի ու Բեյոկաբոպայի շրջանների կառավարիչ: Արևելյան շրջանների միավորման համար Մենելիք 2-րդի կատարած արշավանքների ժամանակ դարձյալ դրսևորվում է Թերզյանի կազմակերպչական, վարչական և ռազմական տաղանդը: Սոմալիների հակաեթովպական ելույթները զսպելուց հետո Մենելիք 2-րդը նրան, որպես Հարարին քաջատեղյակ անձի, հանձնարարում է գրավել քաղաքը, որն

այն ժամանակ գտնվում էր Էմիր Աբդուլլայի իշխանության տակ: Թերզյանը, մի խումբ երիտասարդներով, գիշերային հարձակումով, գրեթե առանց կռվի զինաթափ է անում քաղաքը պաշտպանող կայազորը և հնարավորություն ստեղծում, որ Մենելիքն իր զորքերով մտնի քաղաք: Այս հաղթանակից հետո, տարիներ շարունակ, նա մեծ հմտությամբ վարել է Նալեի, Կամպուլայի, ապա Կելետեսայի կառավարչի պաշտոնները՝ հսկելով երկրի ապահովությունն ու անկախությունը:

Ս. Թերզյանը նաև հմուտ դիվանագետ էր: Նա քանիցս ղեկավարել է Լոնդոն, Բեռլին, Վիեննա, Հռոմ, Բրյուսել, Վաշինգտոն և այլ երկրներ ուղարկվող եթովպական դիվանագիտական և առևտրական պատվիրակությունները: Նա էր, որ առաջին անգամ կազմակերպեց Եվրոպայից մեքենաների ներմուծումը, երկաթգծի կառուցումը Ջիբութի–Ադիս-Աբեբա գծով և ապրանքների տեղափոխումը երկաթուղով: Թերզյանը կազմակերպել էր եթովպական բանակի զինումը ժամանակակից զենքով, հատկապես հեռահար հրետանիով և արագահարված հրացաններով: Ամերիկյան «Վաշինգտոն պոստ» թերթը, հաղորդելով Եթովպիայի կառավարական պատվիրակի՝ ԱՄՆ-ի մայրաքաղաք ժամանելու լուրը, հետևյալն է գրել Եթովպիայի պատվիրակի անձնավորության մասին. «Սարգիս Թերզյանը պատերազմների հերոս է: Եթովպիայի պատվիրակը ունեցել է վիպական կյանք: Անվախ և անխոց մարտիկ Սարգիս Թերզյանը, թեև ծնունդով հայ է, իրականության մեջ՝ Եթովպիո Բիսմարկն է ... մասնակցել է Մենելիք 2-րդի պատերազմներին, սովորեցրել է նրան օգտագործել ֆրանսիական արագահարված զենքը, որով բնաջինջ արեցին Իտալիայի լավագույն զինվորներից 10.000 հոգի մի քանի տարի առաջ»[1] (խոսքը 1895 թ. դեկտեմբերին Ամբա Ալազայի մոտ Ռասա Մակոնենի կողմից իտալական զորքերի ջարդի մասին է, որտեղ եթովպացիները իտալացիների համար անսպասելի օգտագործեցին Թերզյանի գնած նորագույն զենքերը):

Սակայն Եթովպիայի թշնամիները Ս. Թերզյանի գլխի համար խոստացել էին հսկայական դումար: Չկարողանալով ուրիշ ճանապարհով նրան դուրս հանել ասպարեզից՝ նրանք հազար փորձանք անցած, պատերազմներում մահացու վերքեր ստացած, բայց ողջ մնացած հերոսին դավադրաբար սպանեցին գերմանական դեսպանատան բակում:

---

1 «Պայքար», 12.V.1860:

Թերզյանը, բարձրանալով Եթովպիայի առաջին քաղաքացու աստիճանին, միաժամանակ հայ գաղթավայրի ամենից ակտիվ, ամենից հայրենասեր անդամներից մեկն էր: Նա երբեք չի կտրվել գաղթավայրի ամենօրյա կյանքից և հոգսերից: 1893–1896 թթ. Համիդյան սպանդից ազատված բազմաթիվ հայ ընտանիքների նա իր սեփական ծախսով բերեց և հաստատել տվեց Հարարում: Համիդյան ջարդերից փրկված հայերին բարյացակամ ընդունեց և հովանավորեց նաև ինքը՝ Եթովպիայի գահակալ Մենելիք 2-րդը: Զայրացած թուրք բարբարոս ջարդարարների վայրագություններից և եվրոպական տերությունների անտարբերությունից հայասեր կայսրը ցավով հայտնել է. «Իսոս որ սահմանակից չէ Թուրքիային, որպեսզի կարողանա հայերին պաշտպանել կոտորածից:

Եթովպիայի հայ գաղթականները սերտ կապերի մեջ էին իրենց հայրենակիցների ու հայրենիքի հետ: Նրանք ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս հայրենիքում տեղի ունեցած այս կամ այն իրադարձությանը: 1913 թ., երբ արծարծվում էր Թուրքիայում ապրող հայության հարցը, Եթովպիայի հայերը հանգանակություն են կատարել և հավաքած գումարը մի հանրագրով, որի տակ ստորագրել էին 64 հոգի, ուղարկել են Էջմիածին, կաթողիկոսին՝ խնդրելով օգտագործել «ցավատանջ հայրենյաց» կարիքների համար: Հանրագրի մեջ եթովպահայերը կաթողիկոսից խնդրել են նաև, որ նա «ամեն միջոցներով բարեհաճի ձեռք բերել իրականացումն ապահովության Թուրքիո հայոց կյանքին ու պատիվին՝ շահագրգռելով այդ սուրբ դատին Արևելքից քրիստոնյաներու պատմական պաշտպան սրբազան Ռուսաստանը»[1]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եթովպահայերը բազմաթիվ կամավորներ են տվել Եգիպտոսի ռազմաճակատում թուրքական բանակների դեմ կռվող զորամասերին: 1915 թ. աղետյալներին օգնելու նպատակով Ադիս-Աբեբայում կազմակերպվում են հայրենակցական միության մի քանի մասնաճյուղեր, որոնք ընդունում, տեղավորում և աշխատանքով ապահովում են հայ գաղթականներին:

Թեֆերի Հայլե Սելասիե Առաջինը, Երուսաղեմում գտնված ժամանակ, որդեգրում և իր հետ Ադիս-Աբեբա է տանում քառասուն հայ որբերի: Կայսրը նրանց տեղավորում է քաղաքի կենտրոնում, երկրի մեծահարուստներից մեկի առանձնատանը և, նրանց երաժշտություն սո-

1 Բ ա թ ա բ ա ն Հ., նշվ. աշխ., էջ 290:

վորեցնել տալով, կազմում արքունիքի նվագախումբը: Այդ խումբը հայտնի է «Արպա լիճոճ» («40 մանկունք») անունով: Այդ նվագախմբի ղեկավար Գ. Նալբանդյանի գրչին է պատկանում Եթովպիայի պետական հին հիմնի երաժշտությունը, որն առաջին անգամ կատարել է նվագախումբը՝ հեղինակի ղեկավարությամբ: «40 մանուկներ»-ից շատերը հետագայում վարել են պետական և կառավարական մի շարք պաշտոններ:

1935 թվականին, երբ Եթովպիան մահվան ու կենաց կռիվ էր մղում իտալական գաղութարարների դեմ, բոլոր քառասուն որբերն էլ մեկնել են ռազմաճակատ և մասնակցել կռիվներին: Նրանցից եղել են նաև սպանվածներ: Հայլե Սելասիեն անգամ ռազմաճակատում հոգատարությամբ էր շրջապատել իր սաներին: Ականատեսների վկայությամբ, նա աշխատել է նրանց իր մոտ պահել, նահանջի ծանր օրերին հետաքրքրվել է նրանցից յուրաքանչյուրի ամենօրյա ճակատագրով, աշխատել է նրանց տեղավորել ռազմաճակատի ապահով մասերում և խիստ վշտացել, երբ հայ երիտասարդներից մեկն ու մեկը զոհվել է:

Եթովպիայի հայ գաղթականությունը ցրված է եղել երկրի տարբեր քաղաքներում: Ադիս-Աբեբայից բացի, հայ գաղթօջախներ կային Դիրե-Դավա և Հարար քաղաքներում: Դիրե-Դավայում հայ բնակչություն է հաստատվել 1902 թվականին՝ երկաթուղու շինարարության ժամանակ, որին հայերը գործուն մասնակցություն են ունեցել: Հետագայում, երկաթուղու շինարարության ավարտից հետո, հայերից ոմանք մնացել են այդ քաղաքում և հիմք դրել հայկական փոքրիկ գաղթօջախին: Հայ համայնքն այստեղ ստեղծել էր իր վարչական մարմինը, կառուցել փոքրիկ մատուռ: Գաղթօջախը նոր գաղթականություն է ընդունել 1916 թ.:

Հարարի հետ հայերը ծանոթ էին համեմատաբար վաղուց. 1895 թ. ջարդերից ազատված հայերն են կազմել այն հիմնական կորիզը, որի շուրջը հետագայում համախմբվել է գաղթօջախը: 1916 թ. Հարար են գալիս 200-ի չափ հայ նոր գաղթականներ: Այս երկու քաղաքների հայ գաղթականության մեծ մասը զբաղվել է արհեստագործությամբ: Եղել են նաև առևտրով զբաղվող առանձին անհատներ:

1920–30-ական թվականներին Եթովպիայի հայ համայնքները հիմնում են իրենց ղեկավար մարմինը, որը կոչվում է «Եթովպահայ գաղութային ժողով»: Այն ընտրվում էր եթովպահայերի ընդհանուր ազգային ժողովի կողմից, չորս տարին մեկ անգամ և բաղկացած էր յոթ հոգուց: Ազգային ժողովը հաստատվել և օրինականացվել է Եթովպիա-

յի ներքին գործերի նախարարության կողմից: Եթովպիայի համայնքի հովվությունը, ենթակա լինելով Եգիպտոսի թեմին, գաղութային ժողովի ընտրվելուց հետո հաստատման է ներկայացվում Եգիպտոսի հայոց ազգային ժողովին: «Գաղութային ժողովի» մեջ մտնում են «Ուսումնական խորհուրդը», «Եկեղեցական հոգաբարձությունը», «Հայ տիկնանց միությունը»:

Եթովպահայերը սիրով են կապված եղել Մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ: 1925 թ. Ադիս-Աբեբայի բնակիչ Գրիգոր Հովյանը իր թողած կտակում խոշոր գումար է հատկացնում Երևանում շատրվան կառուցելու կամ գրադարանների համար գրականություն գնելու համար:

Տեղացի ժողովրդի նկատմամբ Եթովպիայի հայերի նվիրվածությունը ցայտուն դրսևորվել է 1935 թ. իտալական ֆաշիզմի դեմ հաբեշ ժողովրդի մղած ազգային ազատագրական պատերազմում: Արդեն համառոտակի նշվեց այդ պատերազմին «40 հայ մանուկների» խմբի հերոսական մասնակցության փաստը: Եթովպիայի վրա Իտալիայի կատարած հարձակման նախօրյակին հայ համայնքում կազմակերպվել է «Եթովպիայի գերիշխանությունը և հառաջադիմությունը պաշտպանող միություն», որի նպատակն էր ամեն կերպ կամավորներով, նյութապես և այլ միջոցներով օգնել եթովպական ժողովրդին՝ զորավիգ կանգնելու երկրի պաշտպանությանը: 1935 թ. հուլիսի 28-ին միության ներկայացուցիչներն այցելում են Հայլե Սելասիե թագավորին և եթովպահայերի անունից վստահեցնում, որ իրենք պատրաս են ամեն տեսակ զոհաբերության՝ երկիրը թշնամուց պաշտպանելու համար: Նրանք իրենց հետ պալատ են բերում երկրի պաշտպանության համար եթովպահայերի շրջանում հանգանակված պատկառելի մի գումար: Թագավորը, հուզված հայ կամավորներից մեկի ելույթից, հայտարարում է. «Ձեր այս բացառիկ ցույցը զիս խորապես կհուզե, այլ նաև զգացված եմ անծայր աստիճան ինձ հայտնելու, որ եթե ի սկզբանե ի վեր իմ զգացումներովս հայասեր եմ եղել, բան մը, որ իմ երջանկահիշատակ հորս ալ հատուկ մեկ պարագան էր, սխալված չեմ իմ այս տածած սիրույս մեջ: Ես ոչ միայն զձեզ կսիրեմ իբրև իմ հպատակներս և իբրև Եթովպիո բնակչության մաս կազմող մեկ տարր մը, այլ նաև կսիրեմ հայ ժողովուրդը, որ միշտ սիրով և համակրանոք կվերաբերվի Եթովպիո մեր այս սիրելի հայրենիքին հանդեպ: Ես սիրով կընդունիմ ձեր այսօրվա պատրաստակամությունը, զոր այս վայրկյանեն իմ տրամադրության տակ կդնեք: Երբ դուք, ինքնաբեր, կամավոր պատրաստակամությամբ կուգաք միա-

նալ մեր սիրելի Եթովպիո նվիրական պաշտպանության, ես կգովեմ և կգնահատեմ ձեր այս քայլը և կսիրեմ զձեզ իբրև իմ հարազատ ժողովրդյանս զավակները»[1]:

Հայ կամավորների խումբը կազմվում է Ադիս-Աբեբայի, Ասմարայի և այլ վայրերի երիտասարդներից, իսկ հայերի մի այլ խումբ էլ կատարում է ոչ պակաս պատասխանատու առաջադրանք. նա ղեկավարում է բանակին ռազմամթերքով, հանդերձանքով, սննդով ապահովելու դժվարին գործը: Փակելով երկաթուղային ճանապարհները և խճուղիները՝ թշնամին հավատացած էր, որ նահանջող եթովպական բանակը, զինամթերքի և սննդի պակասի հետևանքով, կքայքայվի: Սակայն մատակարարման գործի եթովպացի և հայ ղեկավարները, դժվարին, գրեթե անանցանելի ճանապարհներով, իտալական սավառնակների կրակի տակ, կարողանում էին կազմակերպել եթովպական բանակի մատակարարումն այնպես, որ դժվարություններ չեն առաջացել ոչ նահանջի և ոչ էլ ճակատամարտի ժամանակ:

Իտալական ֆաշիզմի դեմ մղած պատերազմի ընթացքում հերոսի մահով ընկան տասնյակ հայ երիտասարդներ: Արտակարգ հերոսությամբ աչքի ընկավ կամավոր Բաբկեն Սեֆերյանը: Նա մեն-մենակ, իր գնդացրով կարողացել էր կասեցնել թշնամու գերակշիռ ուժերի գրոհը և հնարավորություն տվել իր գնդին կանոնավոր նահանջելու: Եվ երբ թշնամին գլխի է ընկել, որ տարբեր տեղերից կրակ տեղացողը մի գնդացրորդ է, անցել է գրոհի: Անհավասար մարտում զոհվում է հայ կամավորը: Եթովպացիները հայ ռազմիկի դիակը թաղել են արժանավայել հարգանքով՝ եղբայրական գերեզմանում: Սեֆերյանի անունը մտել է Օկդենի ճակատամարտի հերոսների ցուցակի մեջ[2]:

Բաբկեն Սեֆերյանը եզակի չի եղել. նման ճակատագիր է ունեցել նաև գնդացրորդ Ստեփան Փափազյանը, որը Վոլվուլի ճակատամարտում, հակառակ նահանջի հրամանի, շարունակել է կռվել երկու օր, կասեցրել թշնամու առաջշարժումը՝ հնարավորություն տալով իր զորամասերին նահանջելու: Նա ևս զոհվել է Եթովպիայի ազատության համար:

Իտալական զորքերը, երբ մոտեցել են մայրաքաղաքին, 12 հայ երիտասարդներ, Գևհերյանի ղեկավարությամբ, իրենց հետ վերցնելով

---

1 «Փունիկ», 1958, № 12, էջ 25:

2 Դ. եպ. Փ ո ղ ա տ յ ա ն, Եթովպահայերն իտալական գրավումներեն առաջ («Պայքար», Բոստոն, 10.IV.1960):

զենք, զինամթերք և ուտելիքի մեծ պաշար փակվել են հայոց եկեղեցում և կռվել ֆաշիստների դեմ: 1936 թ. մայիսի 19-ին, շրջապատման մեջ գտնված ժամանակ, Գևհերյանը իր մի նամակում գրել է. «Գիշերցերեկ հրաձգությունները պատերազմի դաշտի վերածած էին ամբողջ մայրաքաղաքը, եկեղեցվո ապաստանածներս, արևելք և արևմուտք, հյուսիս և հարավ, դռները պատնեշներով պահպանված և պատնեշներու ետին զորավոր հրացաններով կծկված, առավոտեն մինչև երեկո տասնյակ անգամներ հարձակվող խուժանի վրա կրակելով, թե եկեղեցին և թե մեզ կպաշտպանեինք: ... Գիշերը հարձակումները դրեթե կդադարեին, սակայն ցերեկը հրացաններու և գնդացիրներու համար ստիպված էինք պոռալով խոսիլ: Աննկարագրելի էր, խժդժությունները աչքերնուս առջև, ճամփու վրա, ուր կդիտեինք պատնեշի ծակերեն»[1]:

Հայ ընտանիքների զգալի մասը Ադիս-Աբեբան գրավելուց առաջ, իսկ մի մասն էլ դրանից հետո, հեռանում են քաղաքից: Հեռանալու հիմնական պատճառը պարենամթերքի ծանր վիճակն էր և հայերի նկատմամբ ֆաշիստների կիրառած դաժանությունները: Իտալական օկուպացիոն զորքերը Ադիս-Աբեբայում բռնագրավում են հայկական դպրոցը, նրան հարակից շենքերը և հայերից ոմանց ձերբակալում:

Եթովպական ժողովուրդը ծնկի չեկավ. զավթիչների դեմ դուրս եկան տասնյակ պարտիզանական ջոկատներ, որոնք հերոսաբար մաքառեցին ֆաշիստների դեմ: Այս պայքարում իրենց համեստ մասնակցությունն ունեցան նաև եթովպահայերը:

1936 թ. իտալական գաղութային իշխանություններին հաջողվում է ձերբակալել երկրի 10 աչքի ընկնող քաղաքական խոշոր դեմքերին, որոնք մեղադրվում էին մարշալ Գրացիանիի իտալական գաղութային զորքերի գլխավոր հրամանատարի դեմ մահափորձ կատարելու մեջ: Ձերբակալվածների մեջ էր Աբրահամ Քյորհեճյանը: Իտալական իշխանությունները Քյորհեճյանին, որպես առավել վտանգավոր թշնամու, իր ընտանիքի հետ միասին տեղափոխում են Իտալիայի քաղաքներից մեկը: Քյորհեճյանը և նրա ընտանիքը մնացել են բանտում 7 տարի և ազատվել ու Եթովպիա վերադարձել միայն ֆաշիստական Իտալիայի պարտությունից հետո:

Եթովպիայում հայկական առաջին դպրոցը բացվել է Ադիս-Աբեբայում 1918 թ.: Այն կոչվել է «Ազգային արարատյան վարժարան»:

---

1 «Պայքար», 30.IV.1960:

կարճ ժամանակ անց դպրոցը բաժանվում է երկու դպրոցների՝ «Սահակյան-Մեսրոպյան» և «Արարատյան»: Երկու դպրոցների ծախսերն էլ ապահովում է «Եթովպահայ գաղութի ժողովին» կից «Ուսումնական խորհուրդը»՝ հայերին նվիրաբերած գումարներով: 1932 թ. Գևորգովի նվիրաբերությամբ կառուցվեց հայկական դպրոցի երկհարկանի նոր շենքը՝ բոլոր հարմարություններով: Նոր շենքը կրկին միավորեց բաժանված դպրոցները:

Ազգային վարժարան ընդունվում են երեք տարին լրացած երեխաները, որոնք «նախակրթարանը», որը փաստորեն մանկապարտեզն է, ավարտելուց հետո վեց տարեկանից սկսում են դպրոցական ուսուցումը: Դպրոցը 7-ամյա է: Ուսուցանում են հայոց լեզու, հայոց պատմություն, անգլերեն, ֆրանսերեն, եթովպերեն: Ուսուցման մեջ կարևոր տեղ է գրավում գեղագիտական դաստիարակությունը: Հաճախ են կազմակերպվում հանդես-մրցույթներ, որտեղ երեխաները ցուցադրում են իրենց գիտելիքները: Լավագույն ժամանակներում դպրոցն ունեցել է 200 աշակերտ: Դաստիարակության գործին անհունորեն նվիրված մի խումբ հայ մանկավարժներ ոչ մի ջանք չեն խնայել և չեն խնայում հայրենասիրական ոգով դաստիարակելու հայ տղաներին և աղջիկներին: Դասավանդվում են նաև երաժշտություն և այլ առարկաներ:

Արևելյան Աֆրիկայի ամենից մեծ արդիական տպարանը, որը պատվերներ էր ընդունում նաև Աֆրիկայի զանազան երկրներից, պատկանում էր Իլյաս և Գևորգ Ճիլահյան եղբայրներին: Երկրի երկրորդ խոշոր տպարանը ևս պատկանում էր հայի՝ Սուրմելյանին, հետո այն անցավ Զագրյան եղբայրներին:

Առևտրական խոշոր գործակալություն էին հիմնել Սիճերյանները, որ երկար տարիներ զբաղված էին ավտոմեքենաների, դյուղատնտեսական և այլ մեքենաների մեծածախ առևտրով: Հակոբ Բեհսինիլյանի ձեռքում էր էլեկտրական ապրանքների թե առանձին և թե մեծածախ առևտուրը, որը հետագայում անցավ նրա տղաներին՝ Էդդի և Հրայր Բեհսինիլյաններին: Հայ վաճառականների ձեռքում էր կենտրոնացված գոհարեղենի և գորգերի վաճառքի զգալի մասը: Եթովպիայում հայտնի էին բժիշկներ Բեհսինիլյանը, Վարդգես Թոփյանը, դեղագործներ Արշավիր Թերզյանը, Վարուժան Պրուսլյանը և ուրիշներ:

Եթովպահայության բավականին հարուստ և ապահով վիճակը, բնականաբար, նպաստում էր ազգային կյանքի ծաղկմանը: Եթովպիայում

հայ քաղաքական կուսակցություններ չկան, երիտասարդ սերունդը դաստիարակվում է հայրենասիրական ոգով:

Գաղութում հնուց ի վեր շարունակում է գործել «Գաղութային» ժողովը, որն այսօր էլ համարվում է գաղութի ղեկավար մարմինը: Նա է նշանակում եկեղեցու և դպրոցի հոգաբարձությունը, հաստատում գաղթօջախի միությունների վարչությունները: Գաղթօջախը մտնում է էջմիածնապատկան Եգիպտոսի հայկական թեմի մեջ: Աչքի ընկնող կազմակերպություններ են «Հայ ընդհանուր բարեգործական միության» մասնաճյուղը և «Եկեղեցասեր տիկնանց միությունը», որը հիմնվել է 1965 թ.: Միությունը զանազան միջոցառումներ է կազմակերպում հանդեսներ, երեկոներ և այլն: Ստացված եկամուտը հատկացվում է Գևորգով դպրոցին:

Գաղութում գործում է մարմնամարզական «Արարատ» միությունը, որը կազմակերպվել է 1943 թ., ապա վերակազմվել 1965 թ.: Միությունն ունի 9 հոգուց բաղկացած վարչություն: Համայնքում գործում են 30 հոգուց բաղկացած երկսեռ «Արարատ» համույթը, թատերական խումբը: Մարմնամարզական «Արարատ» միությունն ունի երկհարկանի շենք, բարեկարգ մարզահրապարակ, բասկետբոլի և վոլեյբոլի խմբեր:

Գաղթօջախում կան երկու երգչախմբեր «Կոմիտաս» և «Մուրադյան» անուններով:

Հետաքրքիր է գաղութի նշանավոր գործիչ Գևորգովի ազգանվան պատմությունը: Դարի սկզբում Մաթիկ Գևորգովը Ջիբութի նավահանգստում ուներ խոշոր առևտրական և մատակարարման տուն, որտեղ իրենց պակասն էին համալրում նավահանգիստ մտնող նավերը: 1904–1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմ մեկնող ռուսական նավերը նույնպես մատակարարվում էին Մաթիկ Գևորգյանի այս տան կողմից: Ռուսները նրան անվանում էին Գևորգով, մի անուն, որը հետագայում փոխանցվեց Մ. Գևորգյանին ու ողջ հայ համայնքին:

Եթովպահայ մշակութային կյանքի կարևոր երևույթներից է «Փյունիկ» ամսաթերթը, որը սկսել է հրատարակվել 1958 թ.: «Փյունիկի» առաջին համարում տպագրված խմբագրականում շարադրված են թերթի նպատակները.

«ա) Տալ եթովպահայ գաղութի պատմությունը...

բ) Տալ Եթովպիո – Ափրիկեի առաջին և միակ քրիստոնյա երկրի և պետության պատմությունն ու աշխարհագրությունը, որ մեր ժողո-

վուրդը կվայելե բարեխնամ կառավարության և հայասեր վեհապետին, Նորին Վեհափառության Հայլե Սելասիե Ա-ի համակրանքն ու գուրգուրանքը:

գ) Սատարել մեր մշակույթին, պատմությանը և հայությանը հայ պահող սրբություններուն, եկեղեցիին և հայ ընտանիքին պահպանմանը, առանց որոնց դժվար պիտի ըլլա հայը հայ պահել հայրենիքեն հեռու այս օտար ափերուն վրա»:

Ամսաթերթ «Փյունիկը» կատարում է շատ ավելի մեծ և խրախուսելի աշխատանք, քան խոստացել է: Ամսաթերթը չի սահմանափակվում հայկական և եթովպական շրջանակներով. Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթի կողքին այնտեղ կարելի է կարդալ տիեզերական ճառագայթներին նվիրված հոդված, «Հայերեն ուղղագրության համառոտ դասընթացի» կողքին՝ ամենաարդիական գիտական հարցերին նվիրված հոդվածներ և այլն:

Հայերը Եթովպիայում երկար ժամանակ չունեին աղոթատեղի: Սկզբում Դերե-Դավայում՝ 1927 թ. կառուցեցին մի փոքրիկ մատուռ, ապա 1934 թ. Ադիս-Աբեբայի կենտրոնական պողոտայում ձեռք բերեցին բավական մեծ հողակտոր և ազգային բարերար Միհրան Մուրադյանի նվիրաբերած դրամով կառուցեցին ներկայիս Սուրբ Գրիգոր շքեղ եկեղեցին, որը հայկական ճարտարապետության մի կոթող է:

Հայլե Մարիամի վարչակարգի տարիներին հայերի մի մասը գաղթեց այլ երկրներ: Հայկական գաղթօջախը թեև տնտեսապես թուլացած և փոքրացած է, բայց այսօր էլ գոյատևում է և ապրում է ազգային կյանքով:

ԿԻՊՐՈՍ

Կիպրոսահայ գաղութը[1] *հայ գաղթականության այն հատվածներից է, որը, սկսած խորը միջնադարից, ցայսօր անընդմեջ պահպանել է իր գոյությունը, անկախ այնտեղ հաստատված հայերի թվաքանակից: Կիրպրոսահայ գաղութի մշտատև գոյության հիմնական պատճառը թերևս կղզու աշխարհագրական դիրքն է: Գտնվելով Միջերկրականի արևելյան հատվածում՝ Հայկական Կիլիկիային, առհասարակ Արևմտյան Հայաստանին և Մերձավոր արևելքի հայաշատ շրջաններին մերձակա, կղզին, որի տարածությունը մոտ 9300 քառ. կմ է, շարունակ համալրվել է հայկական գաղթականական խմբերով, որոնք մերթ մեծացրել են նրա հայության թվաքանակը, մերթ էլ սակավացրել՝ առանձին խմբերով հեռանալով գոյապահպանման համար տվյալ պահին ավելի բարենպաստ վայրեր (Սիրիա, Լիբանան, Եգիպտոս): Հայերը հնուց ի վեր սերտ հարաբերություններ են ունեցել Կիպրոսի հետ, որը, փաստորեն, լինելով Փոքր Ասիայի մի հատվածը, սերտորեն կապված էր Հայկական Կիլիկիայի հետ:*

Կիպրոսահայերի մասին առաջին պատմական հիշատակությունները վերաբերում են 4–5-րդ դարերին: Տվյալ դեպքում խոսքը չէ թե հայ գաղթօջախի առկայության, այլ կղզու վրա եղած առանձին հայերի (առևտրականներ, զինվորականներ, պաշտոնյաներ) մասին է: 6-րդ դարում բյուզանդական Մորիկ կայսրը Աղձնիքից և մերձեփրատյան շրջաններից Կիպրոս է աքսորում նշանակալից թվով հայ ապստամբների:

868 թ. բյուզանդական Վասիլ I-ին կայսեր հայազգի զորավար Ալեքսիոսը Կիպրոսը ազատագրեց արաբներից և յոթ տարի կառավարում էր այնտեղ: Նրա հրամանատարության տակ կային նաև հայկական զորախմբեր: Այս յոթ տարիներին հայկական կյանքը կղզու վրա աշխուժանում է, սակայն շուտով արաբները կրկին օկուպացնում են կղզին, և հայ գաղութը անկում է ապրում ու զարգացման նոր ընթացք է բռնում միայն մեկ դար հետո, երբ 958 թ. բյուզանդական զորավար Վասիլ

---

1 *Կիպրոսի հայկական գաղութի մասին տե՛ս* Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն, *Կիպրոս կղզին (իր անցյալն ու ներկան) (Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1927, 21-րդ տարի, Փարիզ, էջ 192–239): Այսուհետև՝* Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն: Բ ա կ ո ւ ր ա ն, *Կիպրոս կղզի, Նիկոզիա, 1903 (այսուհետև՝* Բ ա կ ո ւ ր ա ն): Ն. Ա կ ի ն յ ա ն, *Հայ Կիպրոս, «Հանդես ամսօրյա», 1937, №6–8:* Ա. Գ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ա. Երևան, 1964, էջ 411–417:*

Հայկազնը Կիպրոսը նորից գրավում է արաբներից: 965 թ. Կիպրոսում իշխում էր Վահրամ հայ դուքսը՝ իբրև կղզու բյուզանդական կառավարիչ[1]:

Կիպրոսահայ գաղութի վերընթացը հիմնականում կապված էր Կիլիկիայում հայկական պետության հաստատման և հզորացման հետ: Կիլիկիայում Ռուբինյան իշխանության հաստատումից հետո (1080 թ.) հայ-կիպրոսյան հարաբերությունները գնալով ընդլայնվում և սերտանում են: Հենց այդ շրջանից էլ նշանակալից թվով հայեր խումբ առ խումբ, տարբեր շարժառիթներով, անցնում են Կիպրոս: Հայերի թվաքանակի մեծացմանը զուգահեռ կազմակերպված ձև է ընդունում նրանց հոգևոր-եկեղեցական կյանքը: Ստեղծվում է առանձին հոգևոր թեմ, որի առաջնորդ Թեոդոս եպիսկոպոսը 1179 թ. մասնակցում է Հռոմկլայի ժողովին:

Կղզու վրա հայերի թվի նշանակալից լինելը վկայվում է նաև հետևյալ փաստով. երբ 1191 թ. խաչակիրների երրորդ արշավանքի մասնակից անգլիական թագավոր Ռիչարդ 1-ին Առյուծասիրտը հարձակվեց Կիպրոսի վրա, կղզու իշխան Կոմնենոսի հրամանով Լիմասոլի հայերն ու հույները, որոնք քաղաքի հիմնական բնակիչներն էին, փակում են իրենց տների դռները՝ Ռիչարդին դիմադրելու համար: Հայերն ու հույները դատարկում են քաղաքը: Հենվելով Բենեդիկտի ժամանակագրության վրա՝ Ա. Ալպոյաճյանը նշում է, թե քաղաքների և գյուղակների պահապան հայերն ու հույները քաշվում են լեռները և վերադառնում են միայն կղզուց Ռիչարդի հեռանալուց հետո: Իրենց բնակավայրերը վերադարձած հայերն ու հույները Կոմնենոսի ազգական մի կրոնավորի հռչակում են «Կիպրոսի կայսր»:

Կիպրոսում Լուսինյան հարստության հաստատման ժամանակ (1192 թ.) հայերը կղզու քաղաքներում և գյուղերում արդեն պատկառելի թիվ էին կազմում[2]:

Լուսինյանների տիրապետության սկզբնական շրջանում կղզու հայ և հույն համայքները այնքան էլ բարենպաստ վիճակի մեջ չհայտնվեցին, և դրա պատճառը խաչակիրների տիրակալությունն էր: Վիլբրանդ դը Օլդենբուրգի վկայությամբ, երբ Լուսինյանները հաստատվեցին Կիպրոսում, հայերն ու հույները, որոնք մեծ մասամբ հողագործներ

---

1 Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն, նշվ. աշխ., էջ 211:

2 Բ ա կ ո ւ ր ա ն, նշվ. աշխ., էջ 50: Տե՛ս նաև Mas Latri, Historiae de l'Ile de Chypre, II, p. 75, III, p. 592:

էին, դարձան նրանց հարկատու ճորտ մշակները[1]: Սակայն Կիլիկիայի Լևոն 2-րդ (1185–1219) թագավորից սկսած Կիլիկիայի և Կիպրոսի առնչությունները բարեկամական են դառնում: 1210 թ. Լևոն Բ-ն ամուսնացավ Կիպրոսի թագավոր Ամորի Լուսինյանի դստեր՝ Սիպիլի (Զապելի) հետ: Խնամիական և քաղաքական կապերը գնալով բարվոքեցին հայերի դրությունը, որոնք դիտվում էին որպես կղզու բնիկ բնակչության «ամենեն ավելի հարգված և նպաստավորված մասը ... ինչ որ արդար փոխարինություն էր այն դաշնության, որ ֆրանկաց (խաչակիրների – Վ. Մ.) հետ կազմեր էին անդրծովյան պատերազմներու սկիզբեն ի վեր, կնքելով զայն իրենց արեամբ», – վկայում է Մաս Լատրին[2]:

Խնամիական և բարեկամական կապերը հայկական Կիլիկիայի և Կիպրոսի միջև այնքան էին սերտաճել, որ Գվիդոն Լուսինյանը բազմեց հայոց գահին: Կիպրոսի թագավոր Պետրոս 1-ինը ճանաչվեց նաև իբրև թագավոր հայոց: 1367 թ. նա Այասն ազատագրեց թուրքմեն հրոսակներից: Թեև Կիլիկիայում թագավորում էր Կոստանդինը, ի պատիվ տարած հաղթանակի նրա անվամբ դրամ հատվեց, որի վրա դրոշմված էր «Պետրոս թագավոր Հայս. շինեալ ի քաղաքին Սիս»: Նույնիսկ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո Կիպրոսի թագավորները երկար ժամանակ կրում էին թագավոր Երուսաղեմի, Կիպրոսի և Հայաստանի տիտղոսը[3]:

13–15-րդ դարերում կիպրոսահայ գաղութը ծաղկուն վիճակ է ապրում՝ մասնակից դառնալով կղզու տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներին: Հայ վաճառական-առևտրական դասը հաստատվել էր կղզու քաղաքներում՝ Լիմասոլ, Նիկոզիա, Ֆամագուստա: Հայերը երկրագործությամբ էին պարապում Մեսորեի դաշտում և Քիրենյան լեռնաշղթայի հովիտներում[4]: Կային հայկական գյուղեր՝ Սաբաթարիքոն, Քրոնոքիբոյը, Բլադագան[5] և այլն: Նիկոզիայում հայերը մի առանձին թաղ էին զբաղեցնում: Այս շրջանում, օտար աղբյուրների վկայությամբ, հայերի ձեռքին էր կենտրոնացված կղզու ողջ առևտուրը:

---

1 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 380:
2 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 212:
3 Նույն տեղը, էջ 213:
4 Բակուրան, նշվ. աշխ., էջ 51:
5 Mas Latri, նշվ. աշխ., էջ 105–106:

Կիպրոսի հայերը իրենց ներկայացուցիչներն ունեին նաև կղզու բանակում, մասնակցում էին նրա պաշտպանությանը՝ ինչպես Լուսինյանների (1192–1489), վենետիկցիների (1489–1571), այնպես էլ թուրքական կառավարման շրջանում: Մանավանդ նկատելի է եղել նրանց մասնակցությունը կղզու մայրաքաղաք Նիկոզիայի պաշտպանությանը: Հայոց զինվորական առանձին խմբեր կային, որոնց մասին հիշատակություն է պահպանվել Մաքիրասի Քրոնիկոնում[1]: Ըստ այդ Քրոնիկոնի, երբ Պետրոս Բ Լուսինյանի օրով ջենովացիները հարձակվեցին կղզու վրա, գունդստաբլ Հակոբը զորքերին առաջնորդեց դեպի Նիկոզիա և առանձնացնելով 300 հոգի, շարժվեց Լառնակայի վրա, նրա զորքին միացան տեղացի հայերը և ջենովացիներին թույլ չտվեցին ցամաք դուրս գալ: Արաբների դեմ մղված անընմեջ կռիվների ժամանակ ևս տեղի հայերը լուրջ մասնակցություն են ունեցել կղզու պաշտպանությանը:

Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո Կիպրոս են գաղթում մեծ թվով հայեր: Տակավին 1335 թ., երբ եգիպտական արաբները արշավեցին Կիլիկիայի վրա, մեծ թվով հայեր անցան Կիպրոս, հատկապես Ֆամագուստա: Մանավանդ մեծ էին 1403 և 1421 թթ. կատարված գաղթերը, երբ թվով 30000 տուն (1403 թ.) հայերի և հայ գաղթականական խմբերի (1421 թ.) մի մասը հանգրվան է գտնում Կիպրոսում[2]: Կոստանդին Կեսարացի կաթողիկոսի օրոք (1307–1322) Կիպրոս էին անցել հալածանքի ենթարկված հայ աղանդավորներ[3]:

Սսի անկումից հետո Կիպրոսի թագավորները կղզու վրա հաստատեցին հայկական արքունական տիտղոսներ՝ ի նշան իրենց ժառանգական իրավունքների:

Վենետիկյան հանրապետության տիրակալության տարիներին (1489–1571) գաղութը շարունակում էր ապրել տնտեսական և եկեղեցական աշխույժ կյանք: Վենետիկյան ծերակույտը հրահանգել էր Կիպրոսում իր առաջին կուսակալ Օդոստոս Բարբարիկային հայերին ևս սահմանված նպաստներ տալ՝ ըստ նրանց եկամուտի, և կղզուց հայոց հեռանալու պարագայում նրանց տեղը առանց ծերակույտի գիտության, ուրիշ անձանց չդնել:

---

1 M a r c h ē r a s. Cronique. տե՛ս, Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1927, էջ 214:

2 Ա լ ի շ ա ն, Սիսուան, էջ 560:

3 Ա լ ի շ ա ն, Հայապատում, էջ 152:

Հայերը, համբավ ունենալով ցամաքային առևտրի ոլորտում, դառնում են Կիպրոս ժամանած վենետիկյան առևտրանավերի առաջին և կարևոր այցելուներն ու նրանց բերած ապրանքների գնորդները: Այս շրջանում Կիպրոսում գործածվող հինգ լեզուների մեջ կարևոր տեղ էր բռնում հայերենը լատիներենից հետո: Դա վկայում է հնագետ մատենագիր Մարտին Քրուզիոսը (1526–1607): Նույն դարի լատին հեղինակ Նիկոզիացի Ստեփանոս Լուսինյանը (1537–1590) հայտնում է, որ հայերենը դասվում էր գործածվող լեզուների շարքը և, ըստ նույն մատենագրի, Սբ. Մարկոսի տոնի ժամանակ լատիներենի կողքին գործածվում էր նաև հայերենը: Հայոց լեզվի նման դիրքերի պահպանումը, անշուշտ, վկայում էր 15–16-րդ դարերում Կիպրոսում հայոց բազմաքանակ լինելու մասին, հանգամանք, որն իր արտահայտությունն էր գտել կղզու վրա հայ եպիսկոպոսական երկու աթոռների (Նիկոզիայում և Ֆամագուստայում) գոյության փաստում: Այս փաստը չէր վրիպել նաև վերը նշված հեղինակ Ստեփանոս Լուսինյանի տեսադաշտից:

Թուրքական տիրապետության (1571–1878) շրջանում, թեև սկզբնապես թուրքական իշխանությունը ինչ-որ չափով հանդուրժողական վերաբերմունք է դրսևորում հայերի նկատմամբ և նրանց է վերադարձվել Սբ. Աստվածածին եկեղեցին, բայց Կիպրոսի հայկական գաղութը թե՛ տնտեսական և թե՛ այլ բնագավառներում գնալով անշքացում է ապրում: Դա մի հայտնի չափով պայմանավորված էր նրանով, որ կղզին կորցրել էր իր առևտրական դերն ու նշանակությունը:

18-րդ դարում երբեմնի շեն ու ծաղկուն կիպրոսահայ գաղութը լիովին անշքացել էր: Ըստ անգլիացի ճանապարհորդ Ռիչարդ Բոգոքի, որը այցելել էր Կիպրոս, Նիկոզիայում հայերը թեև ունեին եկեղեցի, բայց խիստ չքավոր էին, նույն վիճակում էին նաև լեռնային շրջանում ապրող սակավաթիվ հայերը: Այդուհանդերձ, գաղութը հարատևում էր, ուներ իր հոգևոր վարչությունը և առաջնորդը: Թուրքական շրջանի վերջին առաջնորդը (1878 թ.) Կարապետ վրդ. Բագրատունին էր:

1878 թ. թուրք-անգլիական գաղտնի պայմանագրով, որ կնքվեց Բեռլինի կոնգրեսի ժամանակ, Կիպրոսն անցավ Անգլիային: Այդ ժամանակ կղզում շատ քիչ հայեր էին բնակվում, որոնք աղքատ մարդիկ էին և ապրում էին եկեղեցու եկամուտներով: Ինչպես որ թուրքական շրջանում էր, անգլիացիների ժամանակ ևս Կիպրոսը հայերին զարգանալու լայն հեռանկարներ չի ընձեռում, և այդ պատճառով էլ հայերը լուրջ ակնկալիքներ չունեին կղզին կարևոր ազգային օջախ դարձնելու ուղ-

ղությամբ: 1897 թ. անգլիական կառավարչությունը կղզու վրա ստեղծեց «Արևելյան և գաղութային ընկերություն»՝ նպատակ ունենալով նրա միջոցով քաջալերել հայերի գաղթը դեպի Կիպրոս: Գնվում են 4 ագարակ, Նիկոզիայում հիմնվում են շերամապահական վարժարան և մետաքսի մանարան, ուր աշխատում էին հայերը: Սակայն այս ձեռնարկումները, անբավարար ֆինանսավորման պատճառով, մնացին անարդյունք:

1896 թ. համիդյան ջարդերի ժամանակ Պոլսից, Այնթափից և այլ վայրերից Կիպրոս են գաղթում 5600 հայեր, որոնց մի մասը, չգտնելով ապրուստի միջոցներ, հեռանում է կղզուց: Կիպրոսի հայ ազգային դործերը այս շրջանում և դարասկզբին շարունակում էր վարել թաղական խորհուրդը՝ առաջնորդի գլխավորությամբ: Նիկոզիայում և Լառնակայում գտնվող 5 հայկական շենքերը և երկու խանութները տարեկան բերում էին 300 անգլիական ոսկի, որով հոգում էին առաջնորդի, քահանայի և ուսուցիչների ծախսերը[1]:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին Կիպրոսի հայերը հիմնականում ապրում էին Նիկոզիայում, Լառնակայում, Ֆամագուստայում և Լիմասոլում: 1921 թ. Կիլիկիայից հեռացած հայության մի մասը հանգրվանում է Կիպրոսում՝ հայության թիվը հասցնելով 5700 հոգու, որի մի մասը, չգտնելով ապրուստի միջոցներ, հեռանում էր կղզուց, և 1927 թ. հայերի թիվը այնտեղ հավասար էր 3640 հոգու[2]:

Կիպրոսահայերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին զբաղվում էին արհեստներով, երկրագործությամբ, առևտրով և ծառայություններով: Կիպրոսի հայոց կյանքին քաջատեղյակ Բակուրանի վկայությամբ, թիթեղագործության և ներկարարության գլխավոր վարպետները հայեր էին: Վերջիններիս մենաշնորհն էր ժամագործությունը: Նիկոզիայում հայերն ունեին օճառի և ձեթի գործարաններ[3]:

Կիպրոսահայերը ապրել են երկարատև եկեղեցական և կրթական-մշակութային կյանք: Անկախ հայ բնակչության քանակական ելևէջներից, գաղութում մշտապես գործել է հայ եկեղեցին: 14–15-րդ դարերին կղզու գլխավոր քաղաքներում հայերն ունեին եկեղեցիներ և վանքեր,

---

1 Բ ա կ ո ւ ր ա ն, նշվ. աշխ., էջ 87:
2 Թ ե ո դ ի կ, Ամենուն տարեցույց, 1927, էջ 226:
3 Բ ա կ ո ւ ր ա ն, նշվ. աշխ., էջ 89:

երկու թեմ իրենց առաջնորդ եպիսկոպոսներով, որոնցից մեկը նստում էր Նիկոզիայում, իսկ մյուսը Ֆամագուստայում: Ըստ Ստ. Լուսինյանի նրանք ենթարկվում էին Կիլիկիայի հայոց հայրապետին: Դեռևս 1307 թ. Կիպրոսից Նիկոդայոս եպիսկոպոսը մասնակցում է Սսի եկեղեցական ժողովին:

Կիպրոսահայերի եկեղեցական կենտրոններից նշանավորները Նիկոզիայի Սբ. Աստվածածին եկեղեցին է և Սբ. Մակար վանքը: Սբ. Աստվածածնի շենքը կառուցվել է 1310 թ.: Վկայություններ կան այն մասին, որ Սբ. Աստվածածինը հնուց ի վեր, դեռևս թուրքական տիրակալության հաստատումից շատ և շատ առաջ, եղել է հայկական հոգևոր կենտրոն: Այդ աղերսով 1668 թ. ուշագրավ վկայություն է թողել Թովմա Աստապակեցին. «... և մինչդեռ կազմեաք զեկեղեցին գտաք յորմ եկեղեցւոյն մարմարիոնեայ Խաչ մի զոր կազմեալ էր յՋ և յԹ թուումն (1460): Այլև պատմութիւնս իմն սակս երաժշտութեան յՋ և Ժ և Զ թուին: Եղել սկզբան Այսմավորացս ի Սարգիս եպիսկոպոսե, որ էր լեալ առաջնորդ քաղաքիս Լաւքօշա: Գտաք նաև որ է սկիզբն Ճաշու գրոցն եղել Դաւիթ եպիսկոպոսի ումեմնէ յՋԾԳ (1504) թվ.: ... սոքին երեքեան թիւքս հաստատահիմն վկայութեամբ ցուցանեն զլինել տաճարիս սրբոյ ի ձեռս Հայոց յառաջագույն քան զդալն Տաճկաց»[1]:

Ակներև է, որ գրիչ Թովման այս հիշատակարանը թողել է այն անախորժություններից խուսափելու համար, որոնք առաջ էին եկել եկեղեցու նկատմամբ հույների հավակնությունների պատճառով: Սակայն ակնհայտ է նաև այն, որ Թովմայի ժամանակ էլ (17-րդ դարի 60-ական թվականներ), ամենայն հավանականությամբ, հույները դեռ շարունակում էին իրենց պայքարը եկեղեցուն տիրանալու համար:

Թերևս ամենահին հայկական եկեղեցական կոթողը Կիպրոսում Ֆամագուստայից ոչ հեռու գտնվող Սբ. Մակարի վանքն է, որ զետեղված էր Քիրիենիս-Քարբաս լեռնաշղթայի վրա, լեռների մեջ և հյուսիսից տարածվում էր մինչև ծովը: Վանքը կոչվել է նաև Կապույտ վանք: Վերջինիս մասին Երուսաղեմի ձեռագրերից մեկում պահպանված հիշատակարանը վկայում է, որ այն գոյություն է ունեցել հնուց ի վեր. «Գրեցաւ գիրքս այս ձեռամբ անիմաստի մեղացելոյ Յոհաննիսի սպասաւորի աստուածային բանի ի թուականիս Հայկազեան սեռի ՋԿՋ (1317) ի Կիպրոս կղզի ի դուռն Աստուծոյ մոր տաճարին Աստուածած-

---

1 Բ ա կ ո ւ ր ա ն, նշվ. աշխ., էջ 69:

նի, որ է վանք և կոչի Կանաչուր, ի քաղաքս Մաղուսա», այսինքն՝ Ֆամագուստա:

Վանքում հնուց ի վեր կար հայ միաբանություն: 1618 թ. Գր. Դարանաղցին այնտեղ հանդիպել է վանահորը և միաբաններին: Կապույտ վանքը 1650–1750 թթ. ծաղկուն վիճակում էր, ուներ մեծ հողատարածքներ, դառել էր ուխտատեղի: 1811–1818 թթ. ղրիմեցի Սիմոն աղան վերանորոգում է վանքը: 1902 թ. այդ հողերը վանքը տվել էր չորս վարձակալների՝ 5 տարի ժամանակով, տարեկան 150 անգլիական ոսկով: Կիպրոսահայ գաղութում կրթական գործը ևս, ըստ հնարավորին, պատշաճ ուշադրության առարկա է հանդիսացել: Դեռևս 1880-ական թվականներից Սբ. Աստվածածնին առընթեր գործում էր տղաների դպրոց, իսկ 1902 թվականից՝ նաև աղջիկների դպրոց: Երկսեռ աշակերտների թիվը 50 հոգի էր: 20-րդ դարի սկզբներին Սբ. Մակարի վանքում ևս կար փոքրիկ մի դպրոց, որ պահվում էր Կիպրոսի անգլիական կառավարությունից տրվող նպաստով:

Կիպրոսահայ կրթական կարևոր օջախներից էր Նիկոզիայի Մելիքյան վարժարանը, որը գործել է 1865 թ. սկսած: 1921 թ. Արթին Մելիքյանի ընտանիքի նվիրատվությամբ կառուցվել է դպրոցական շենք, և դպրոցը եկեղեցու բակից տեղափոխվել է այնտեղ: 1927 թ. դպրոցն ուներ 420 աշակերտ: 1897 թ. Նիկոզիայում հաստատվում է հայկական կրթական որբանոցը, որը գոյատևեց 7 տարի: Որբանոցի տնօրեն Բակուրանը հիմնեց տպարան՝ առաջին հայկական տպարանը Կիպրոսում:

Կիպրոսի հայկական կրթօջախների մեջ առանձնանում է Մելքոնյան դպրոցը: Այն հիմնվել է Մելքոնյան եղբայրների կտակով: Ամբողջ գումարը՝ 600.000 անգլիական ոսկի, ի պահ դնելով դրամատների մեջ, Կարապետ Մելքոնյանը (իր եղբայր Գրիգորի մահից հետո դրամի միագլուխ տերը) նրա տոկոսները տրամադրեց թուրքահայ որբ և չքավոր տղաների կրթությանը: Կահիրեում ստեղծվեց խնամակալություն՝ Զավեն սրբազանի նախագահությամբ: 1924 թ. Նիկոզիայից հարավ, քաղաքից ոչ հեռու գնվեց «Ծաղկաբլուր» կոչվող հողամասը և կատարվեց Մելքոնյան կրթական հաստատության հիմնադրությունը. կառուցվեցին եռահարկ քարաշեն զույգ կրթարանի շենքերը՝ իրենց հարակից շինություններով: Նախ բացվեց տղաների, ապա աղջիկների դպրոցը՝ տարեկան 10–12 հազար անգլ. ոսկու ծախսով, երբ սովորողների թիվը հասնում էր 500-ի:

Բակուրանից հետո Կիպրոսում (Լառնակայում) 1924 թ. տպարան հիմնեց Մ. Մոստիչյանը, որը հրատարակում էր «Արաքս» պարբերականը:

Կիպրոսահայ հասարակական-մշակութային կյանքում նկատելի դեր էին խաղում «Հայ ուսանողաց Միությունը», «Հայ լեգեոնական միությունները» ՀՀԴ ենթակոմիտեները, «Հայակումբը», հայուհյաց և պատանյաց ընկերությունները և այլ կազմակերպություններ:

Կիպրոսի հայկական գաղութը իր նպաստն է բերել հայ գրչության զարգացման գործին: Ժամանակին Սբ. Մակարի վանքից Նիկոզիայի հայկական եկեղեցին փոխադրվեցին 65 ձեռագրեր: Կիպրոսահայ գաղութում ստեղծվել են մի շարք հայերեն ձեռագրեր: Այսպես, 1289 թ. Խաչատուր քահանան «ի խնդրոյ սրբասէր և պատուական քահանայի Աբրահամայ» ընդօրինակում է ավետարան «ի կղզիս, որ կոչի Կիպրաւս, ընդ հովանեաւ սուրբ Վառվառայ և սուրբ Զորաւարին Սարգսի»: 1280-ին Պերե երեցը Սբ. Աստվածածին եկեղեցում ընդօրինակում է ավետարան: 1310–1312 թթ. Կիպրոսում գրչությամբ էր պարապում նշանավոր գրիչ Ստեփանոս Գույները ընդօրինակելով մի շարք ձեռագրեր: 1317 թ. Հովհաննես գրիչը ընդօրինակում է «Խորհրդածութիւն սրբազան պատարագի» ձեռագիրը[1] և այլն:

---

1 *«Հանդէս ամսօրյա», 1927, էջ 380–381:*

ԱՖՂԱՆՍՏԱՆ

Աֆղանստանի հայ գաղթօջախները, որոնք սովորաբար Պարսկաստանի գաղթօջախի մի ճյուղն են համարվում, անցել են երեք տարբեր շրջաններ:

Աֆղանահայության հնագույն ճյուղը վերաբերում է Արշակունյաց ժամանակաշրջանին: Պարսիկների կողմից բազմաթիվ հայեր են տարվել և բնակեցվել Խուժաստանում, Սակաստանում, Խորասանում, Նիշապուրում և այլուր: Հայ գաղթականների այս զանգվածների զգալի մասը հետագայում շարժվել է դեպի Արևելք և մշտական բնակություն հաստատել ներկայիս Աֆղանստանի տարածքում[1]:

Աֆղանստանի ժամանակակից տարածքը դարձյալ բռնի տարված հայ գաղթականության երկրորդ շրջանը վերաբերում է 14-րդ դարին: Այս երկրորդ խմբի հայ գաղթականների մի զգալի մասը բնակեցվել է Ղանդահարում և Քաբուլում, մնացածները՝ երկրի հյուսիսում[2]:

19-րդ դարի կեսերին համաշխարհային մամուլում տարածվեց մի տեղեկություն, որ գախս էր լրացնելու Սիմեոն կաթողիկոսի հաղորդածը Աֆղանստանի հայ գաղթականության մասին: Վերջին աֆղանական խռովություններից ամենահզորը, ինչպես հայտնի է, եղել է Ղզլայ ռազմատենչ ցեղի ապստամբությունը, որը նպատակ է ունեցել տապալել էմիր Աբդուլ Ռահման խանին և նրան փոխարինել Էուբ խանով: Եվրոպական թերթերի թղթակիցները, որոնք անձամբ եղել են ղզլայների մեջ և դարձել դեպքերին ականատես, միաբերան պնդում են, թե ղզլայները, որոնք բաղկացած էին 10.000 ընտանիքներից, ունեն բուն հայկական ծագում: Անգլիական թերթերից մեկի թղթակիցը, որպես հավաստի ապացույց, բերում է ղզլայների ազգագրական կենցաղային բազմաթիվ սովորություններ, որոնք իրենց վրա կրում են հայկական դրոշմ: Լրագրողի պնդմամբ, հենց իրենք՝ ղզլայները, ընդունում են, որ իրենց նախնիները հայեր են եղել[3]:

Լրագրողների հաղորդած այս լուրերը հիմք ընդունել և հաստատել, որ ղզլայները անվիճելիորեն նախկին հայ գաղթականների իսլամացած ժառանգներն են, դժվար է: Բայց այդ տեղեկությունները հիմք չկա

---

1 Երիցյան Ա լ., Հնից ու նորից (նյութեր ազգային պատմության համար). տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1886, № 86:

2 Արձագանք, 1887, № 17, էջ 253:

3 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ. գործ. 63 (Աֆղանստան), էջ 1:

նաև հերքելու և պետք է որ ունենան պատմական ճշմարտության հատիկ:

Հաջորդ երրորդ շրջանի գաղթականությունը կապված է 17-րդ դարի երկրորդ կեսի հետ: Բունագաղթերից բացի, այս նոր շրջանի հայ գաղթականությունը, որը հիմնականում հաստատվել էր Ղանդահար և Քաբուլ քաղաքներում, գաղթի այլ պատճառներ էլ ուներ: Արևելքին քաջատեղյակ հայ, հատկապես ջուղահայ առևտրականները չէին կարող աչքաթող անել այդ քաղաքները, որոնցով անցնում էր Արևելքի առևտրական խոշոր զարկերակներից մեկը[1]:

1722 թ. Սպահանը գրաված և ավերած աֆղան Միր Մահմուդը կողոպտեց նաև Նոր Ջուղան և իր հետ բռնի տարավ Նորջուղայեցի 60 հայ արհեստավորական ընտանիքներ ու բնակեցրեց Քաբուլում[2]: Մի քանի տարի անց աֆղանները Սպահանից տարան 200 ընտանիք հայ արհեստավորներ, մոտ 500 մարդ, և բնակեցրին Քաբուլում[3]:

Քաբուլի հայ գաղթականները ապրել են շատ թե քիչ մխիթարական վիճակում: Այստեղ հաստատված մի բուռ հայ արհեստավորներն ու առևտրականները իրենց հավաքած միջոցներով Բալա-Հիսար փողոցի վրա, Ջելալաբադ ամրոցի դարպասի մոտ 1737 թ. կառուցել են եկեղեցի: Այս փողոցի վրա են գտնվել հայ արհեստավորների արհեստանոցներն ու վաճառականների խանութները: Քաղաքից մոտ մի մղոն հեռավորության վրա եղել է հայկական գերեզմանատունը: Ըստ տեղեկությունների, հայերն այդ ժամանակ վայելում էին կրոնական ազատություն: «Քաբուլի մեջ գտնվող հայերը,– գրում է Ռաֆֆին,– այս ժամանակ աֆղանական կառավարության բարձր պաշտոններու գլուխ անցան, շատերը պատերազմական բանակներու գլուխ բարձրացան»[4]: Սակայն համեմատաբար բավարար կյանք ունեցող այս գաղթօջախը շատ կարճ միջոցում անկում ապրեց, և նրա անդամների մեծ մասը ցրվեց այլ վայրեր:

1763 թ. Աֆղանստան է ուղարկվում Անանիա վարդապետը: Նա խնդիր է ունեցել այս խուլ ու անծանոթ երկրում հայ մանուկներին

---

1 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 5994, էջ ա–բ:

2 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, դործ. 63 (Աֆղանստան), էջ 3:

3 Թաղիադյան Մ. Պատմություն հին Հնդկաստանի, Կալկաթա, 1848, էջ 174:

4 Մելիքզադե (Ռաֆֆի), Հայերը Քաբուլի մեջ, «Մշակ», 1880, № 101:

մայրենի լեզվով ուսուցանել գրագիտություն և ի մի հավաքել ու համախմբել հայրենիքից հեռացած ու հավաքական կյանքից զրկված հայերին: Քաբուլի ճանապարհին Անանիան վախճանվում է: Հաջորդ տարի նույն նպատակով Աֆղանստան է ուղարկվում Գրիգոր վարդապետ Սանահնեցին: Այս շրջանում Աֆղանստանի հայության թվի մասին ոչ մի տեղեկություն չունենք: Ըստ երևույթին, այդ ժամանակ այս թիվը բավականին մեծ եղած պետք է լիներ, որ Անանիա և Գրիգոր վարդապետները առաջադրանք ունենային Աֆղանստանի հայաշատ վայրերում կառուցել եկեղեցիներ և տեղի հայության համար ձեռնադրել քահանաներ: Աֆղանստանի հայերին ուղարկած իր կոնդակում կաթողիկոսը պատվիրել էր հնազանդվել Էջմիածնի իրենց առաջնորդին և թույլ չտալ օտար կրոնավորների մուտքը հայկական համայնք[1]:

Հայտնի չէ, թե արդյոք հաջողություն ունեցա՞վ Գրիգոր Սանահնեցին, թեև կա հիշատակություն այն մասին, որ նա հայկական երկու եկեղեցի է կառուցել Աֆղանստանում[2]: Սա վերջին փորձն էր, երբ Էջմիածինը աշխատում էր կամուրջ գցել Աֆղանստանի հայ դաղթականների ու հայրենիքի միջև:

Իրար հաջորդող անբարենպաստ քաղաքական դեպքերը փակեցին Պարսկաստանի վրայով Աֆղանստան տանող ճանապարհները, և կտրվեց կապող վերջին թելը աֆղանահայերի հետ: Որոշ ժամանակ կարծես Աֆղանստանի հայերի գոյությունն իսկ մոռացվեց: Միայն տարիներ անց, երբ Միջին Ասիան դարձավ Աֆղանստան տանող միակ անվտանգ ճանապարհը, հայ առևտրականները նորից երևացին նրա շուկաներում: Դարձյալ նրանք էին, որ նամակներով կամ անձամբ սկսեցին տեղեկություններ հաղորդել այստեղի մոռացված հայ դաղթականների մասին:

Ինչպես Քաբուլում ապրող 150 հայ ընտանիքները, այնպես էլ մյուս քաղաքներում և գյուղերում բնակվող հայությունը կանգնած էին ձուլման վտանգի առաջ: Զրկված հայրենիքի հետ ունեցած կապից՝ մահմեդականանալուց բացի նրանք այլ ելք չունեին: Կաթոլիկ միսիոներները ևս քնած չէին. օգտվելով հայ հոգևորականների բացակայությունից՝ նրանք հայ «հոգիներ էին որսում»[3]: Աֆղանստանի հայ դաղութի այս ծանր վիճակի մասին 18-րդ դ. վերջին հայտնի դարձավ Հով-

---

1 Նույն տեղում, էջ 533:

2 «Արձագանք», Թիֆլիս, 1896, էջ 7:

3 «Ավետիք», Գ տարի, 1938, էջ 280:

սեփ արքեպ. Արղությանին: Նա էր, որ, օգտվելով Բուխարայում վախճանված ոմն մեծահարուստ վաճառական Բեժանյանի կտակից, ձեռք մեկնեց Միջին Ասիա և Քաբուլ[1], ձեռնարկելով եռանդուն միջոցառումներ Քաբուլի գաղութի հետ կապերը վերականգնելու համար: Էջմիածին ուղարկած նամակների մեջ նա կաթողիկոսին խնդրում է մտահոգվել Աֆղանստանի հայերի վիճակով և միջոցներ ձեռնարկել ու փրկել նրանց ձուլումից: Արղությանը, չսպասելով Էջմիածնի միջոցառումներին, ինքն անձամբ սկսում է փոխհարաբերությունների մեջ մտնել աֆղանահայ համայնքի հետ՝ գրագրություն հաստատելով բուխարաբնակ հայ խոջա Սաֆարի հետ: Հայ համայնքի մասին նրա ստացած լուրերն առավել քան անմխիթար էին: Նամակներում աֆղանահայերը հայտնում էին իրենց անտերունչ լինելը և խնդրում հոգևոր հովիվներ ուղարկել: Ժամանակին Սիմեոն Երևանցին փորձում է բավարարել Աֆղանստանի հայերի խնդրանքը, բայց անհաջող. ճանապարհների դժվարությունները թույլ չեն տալիս Էջմիածնից հոգևորականներ ուղարկել Քաբուլ: Անհաջող են անցնում նաև Նոր–Ջուղայի առաջնորդի կողմից մարդիկ ուղարկելու փորձերը: Սիմեոն Երևանցին ստիպված իր հերթին դիմում է Հովսեփ Արղությանին և, բացատրելով գործի էությունը, նրան հանձնարարում է բավարարել աֆղանահայոց խնդրանքը[2]: Ձեռներեց Արղությանը շուտով նամակ է ուղարկում Էջմիածին, որով հայտնում է, որ, կատարելով կաթողիկոսի հանձնարարությունը, Աստրախանի վրայով երկու հոգևորական է ուղարկել Աֆղանստան: Արղությանը նրանցից պահանջում է հաղորդել «... զամենայն որպիսութիւն նոցա», նշելով՝ «թե որպէս են, զի՞նչ արհեստ ունեն, ի՞նչ են անունք երևելիոցն, որդիք նոցա կարդալո՞ց են, թե՞ չէ, դովլաթու շահն ողորմութիւն ունէ՞ դոցա վերայ, թե՞ չէ...»[3]:

1775 թվականին Լահոռից, ապա նաև՝ Շահջհանաբադից բազմաթիվ հայ զինագործներ են տեղափոխվում Քաբուլ՝ աֆղանական բանակին զենքեր պատրաստելու և զինման գործը գլուխ բերելու նպատակով:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին Քաբուլի հայ գաղութը նվազել, հասել էր 30–40 տան: Ղանդահարի հայության թիվն ավելի քիչ էր, իսկ մնացած վայրերի հայությունը գլխովին ձուլվել էր, բացի առանձին անհատներից: 19-րդ դարի հատկապես 30–40-ական թվա-

1 «Արձագանք», 1896, № 86:

2 Դիւան Հայոց պատմութեան, գիրք ԺԱ, էջ 73:

3 «Արձագանք», 1891, № 86:

կանների աֆղանահայ համայնքների, ավելի շուտ՝ նրանց մնացորդների մասին տեղեկությունները համեմատաբար շատ են: Դրանք հիմնականում հաղորդում են անգլիական ճանապարհորդները և Քաբուլ ժամանած անգլիական սպաներն ու նրանց ուղեկցող հոգևորականները: Մեզ են հասել 19-րդ դարի 70-ական թվականներին կաթոլիկական առաքելության կողմից գրված մի քանի հաշվետվություններ՝ Քաբուլի հայերի մասին: 1832 թ. Քաբուլ այցելած կաթոլիկ քարոզիչ Ժոզեֆ Վոլֆը, որը եղել էր հայկական համայնքում և հոգացել տեղի հայերի հոգևոր հոգսերը, հաղորդում է, թե այնտեղ ապրում են միայն մի քանի տասնյակ կղզիացած հայ ընտանիքներ՝ գրեթե կտրված արտաքին աշխարհից: «Այս փոքր համայնքը տարիներ շարունակ կողոպտվել և սնանկացել է կառավարության կողմից... Նա մեծապես վնասվել է այդ երկրում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից, անօրինականություններից և արյունահեղություններից: Հենց միայն անցյալ տարի բազմաթիվ հայեր ամիրի կողմից բանտեր էին նետվել, և Փեշևարի միսիայի միջնորդության շնորհիվ է, որ նրանք բանտից արձակվել են»[1]:

Փեշևարի կաթոլիկ միսիայի նման հոգատարությունը պատահական չէր: 1832 թ. սկսած՝ քարոզիչները աչքաթող չէին անում Քաբուլի հայ համայնքը: Նրանք գրեթե ամբողջ համայնքի կյանքը առել էին իրենց ձեռքը: Փեշևարի միսիոներական դպրոցում նրանք տեղ էին տալիս ոչ միայն հայ պատանիներին, այլ նույնիսկ աղջիկներին: Միակ նպատակը, որ հետապնդում էին միսիոներները, հայ համայնքի կաթոլիկացումն էր:

1842 թ. քարոզիչ Ջ. Ն. Ալլենի և կապիտան Բալվելիի «Հայ քրիստոնյա փոքրիկ համայնքի մասին» զեկուցագրից երևում է, որ հայերը շարունակում էին կղզիացած կյանք վարել Բալհիսար ամրոցին կից մի նեղ փողոցում: Նրանց հիմնական զբաղմունքը Շիրազի գինի պատրաստելն էր, կային նաև այլ արհեստավորներ[2]: Նման պայմաններում հայ գաղութը, բնականաբար, չէր կարող զարգանալ կամ պահպանվել: Մ. Թաղիադյանը, որը ժամանակին տեղեկություններ է հավաքել աֆղանահայերի մասին, ամենամռայլ գույներով է նկարագրել նրանց կյան-

---

1 S e t h M. J. Armenians in India ("Armenians at Cabul, a Christian Colony in Afganistan"), Calcutta, 1935, p. 201-207.

2 *Նույն տեղում:*

քը 19-րդ դարի 40-ական թվականներին: Նա հայտնում է, որ Քաբուլում մնացել էին ընդամենը 50 տուն հայեր:

1876 թ. էմիրի հատուկ հրամանով հայերը, հրեաների հետ միասին, որոնք մինչ այդ ազատ էին ամեն տեսակի զինվորական ծառայություններից և հարկերից, ենթակա դառան զինակոչման և հարկադրվեցին: 1890-ական թվականներին Աֆղանստանում քիչ թվով հայեր էին մնացել: Պահպանվել է Աբդուլ Ռահման խանի մի ֆերմանը, որը նա ուղղել է Կալկաթայի հայերին: Նամակը բավականին հետաքրքիր է Աֆղանստանի հայ գաղութի պատմության համար, ուստի տեղին է բերել այն որոշ կրճատումներով. «Շատ բարևներից և երախտիքներից հետո, թող հայտնի լինի Կալկաթայի հայ հասարակությանը, որ հանգուցյալ Նադիր շահի գահակալության տարիներին (թող աստված նրան հանգիստ շնորհի) ոչ մեծ թվով ընտանիքներ, որոնց մեջ հաշվվում էին մոտ հինգ հարյուր հայազգի մարդիկ, եկան այս երկիրը... Չնայած այն բանին, որ ինչպես մեր նախորդների, այնպես էլ այժմ մեր գահակալության տարիներին, նրանք չեն զգացել և չեն զգա որևէ անհանգստություն և վնաս: Ընդհակառակը, նրանք բոլորը, մեծ և փոքր զբաղեցրել են և զբաղեցնում են նշանակալից պաշտոններ և աֆղանական կառավարությունից ստանում են աշխատավարձ, այնպես, որ նրանք գեղեցիկ բարեհաջողությունների են հասել կյանքում, այնուամենայնիվ, նրանք իրենց դժբախտ են զգում սեփական ազգի հասարակության պակասի պատճառով»[1]:

Այս նախաբանից հետո էմիրն անցնում է իր ֆերմանի բուն նպատակին. «Ցանկալի է, որ դուք ելնելով մեր ազգային և կրոնական զգացմունքներից և համակրանքից, տաս-տասներկու կրթված կամ արհեստի գիտակ հայ ընտանիքներ տեղափոխեք Աֆղանստանի տերության սահմանները և այդպիսով մխիթարեք տեղի իրենց հայրենակիցներին իրենց մենակության մեջ և հենց իրենք էլ իրենց կյանքն անցկացնեն բարեկեցության մեջ»:

Նամակում նա խոստանում է, որ Հնդկաստանից Աֆղանստան տեղափոխվել ցանկացող հայերը մինչև տեղ հասնելը բոլոր պահակային կետերում կապահովվեն սննդամթերքով և գիշերելու տեղերով, և տեղ հասնելիս նրանցից յուրաքանչյուրը կաշխատի իր մասնագիտությամբ:

---

1 «Մուրճ», 1896, № 6, «Արձագանք», 1897, էջ 263–256:

Էմիրը հավատացնում էր, որ հայերն իր երկրում կապրեն «ապահով և խաղաղ կյանք»:

Աբդուլ Ռահման խանը իր հրավերն ավելի հեղինակավոր դարձնելու համար նամակը Կալկաթա է ուղարկում իր վառոդապետ Սերվուրդին խանի (ազգությամբ հայ Ղուկաս Հովսեփյանի) միջոցով: 1896 թվականի մայիսի 25-ին Կալկաթայի հայերը ուղարկում են իրենց պատասխան նամակը էմիրին: Այդ նամակն իր բովանդակությամբ արևելյան ամենաճարպիկ և խորամանկ դիվանագետների նախանձը կարող էր շարժել: Մի ամբողջ էջ բարեմաղթություններ հղելուց հետո նրանք գրում են, որ ոչ միայն Կալկաթայի, այլև Հայաստանի, Թուրքիայի և Իրանի «համառորեն աշխատող և հավատարիմ ծառայող շատ հայեր անշուշտ կհավաքվեն Ձերդ բարձրության գահի շուրջը, որին թող անփոփոխանք պահի Աստված: Բայց մենք շատ ենք ցավում, որ հենց այժմ որևէ հայ ընտանիք հազիվ թե ցանկություն հայտնի հեռանալ այստեղից, քանի որ նրանք բարեհաջող գործում են զանազան ասպարեզներում, և գրեթե բոլորը կապված են բարեկամական կապերով, որից հազիվ թե ցանկանան կտրվել...»[1]: Նրանք այնուհետև խորհուրդ էին տալիս էմիրին ավելի բարելավել տեղի հայերի վիճակը, որն օրինակ կհանդիսանա մյուս հայերի համար: Այդ պատասխան նամակում հայերը միաժամանակ գրում են. «Մենք թույլտվություն ենք խնդրում ներկայացնելու Ձերդ բարձրության ուշադրությանը հետևյալ հարցը, որ Ձերդ բարձրությունը համաձայնվի Աֆղանստանի հայ մանուկներին ուսման ուղարկել Հնդկաստան, գուցե՝ Կալկաթա, ընդհանուր կրթության և մասնագիտական ուսուցման համար: Ավարտելուց հետո նրանք կվերադառնան տուն, որպեսզի հատուցեն հարազատ կառավարությանը ազնիվ և հավատարիմ ծառայությամբ...»[2]:

1897 թ. էմիրի վերաբերմունքը դեպի իր հպատակ հայերը փոխվեց: Անհասկանալի պատճառով Աբդուլ Ռահմանը, որը շահագրգռված էր հայերի՝ Աֆղանստան գալով և բարելավում էր նրանց վիճակը, հատուկ հրամանով երկրից բռնի ուժով արտաքսեց բոլոր հայերին: Նրանք ամբողջությամբ անցան Հյուսիսային Հնդկաստան: Կարճ ժամանակ անց միայն հայտնի դարձավ, որ էմիրը կատարել էր իր բարեկամ արյունռուշտ սուլթան Աբդուլ Համիդի ցանկությունը, որն իր հավատակցին

---

1 S e t h M. J. Armenians in India. p. 204-205.

2 Նույն տեղում:

հատուկ նամակով խնդրել էր արտաքսել հայերին՝ որպես անհավատարիմ հպատակների:

Դժբախտաբար, Փեշևար արտաքսված հայ գաղթականներով չզբաղվեցին ոչ Էջմիածինը և ոչ էլ Նոր Ջուղան: Նրանց բախտին և ճակատագրին անտարբեր գտնվեցին նաև Կալկաթայի և Հնդկաստանի մյուս հայ համայնքների եկեղեցիներն ու մեծահարուստները: Նրանք բացարձակապես ոչինչ չարեցին անհետացումից փրկելու համար այդ փոքրիկ համայնքը: Մ. Սեթը իր «Հայերը Հնդկաստանում» գրքում, մեզ անծանոթ աղբյուրից քաղելով, մեջ է բերել հետաքրքիր մի տեղեկություն, ըստ որի, Փեշևարում հաստատված հայերն իրենց հետ Քաբուլից բերել էին պատկառելի հնության ձեռագրերի մի մեծ ժողովածու:

Աֆղանստանի մյուս վայրերի հայկական համայնքների մասին եղած տեղեկությունները կցկտուր են: Հենրի Ռավլինսոնը «Անգլիացիները և ռուսներն Արևելքում» գրքում տվել է Զինաստանին սահմանամերձ աֆղանական Ղաշխա քաղաքի մարդահամարը. այնտեղ քաղաքի բնակիչների թվում են նաև 300 հայեր: Ռավլինսոնի հաղորդումը պետք է հավաստի համարել, քանի որ գեներալը ձեռքի տակ է ունեցել անգլիական գաղութային զորքերի հաղորդած տվյալները և ինքն էլ անձամբ եղել է Ղաշխայում[1]:

Զինաստանին սահմանակից այս փոքրիկ քաղաքում 300 հայերից բաղկացած համայնքի գոյությունը զարմանալի չէ. Ղաշխան առևտրական քաղաք-հենակետ էր Զինաստանի հետ կատարվող մետաքսի առևտրում:

---

1 Major General sir Henri Ravlinson, England and Russia in the East, London, 1896, p. 241.

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հայերի հաճախակի այցերը Հնդկաստան, շփումը հնդիկ ժողովրդի հետ, ծանոթանալը երկրի սոցիալ-տնտեսական կյանքին նպաստեցին նրան, որ 15-րդ դ. կեսերից Հնդկաստանի ծովափնյա առևտրաշահ քաղաքներում սկսեցին հիմնվել հայկական առաջին համայքները, որոնց շուրջ հետագայում առաջացան կազմակերպված գաղթօջախներ: Հնդկաստանում հաստատված հայերը բացառապես զբաղվում էին առևտրով, մասամբ նաև արհեստներով: Ավելի ուշ, երբ Հայաստանում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցան ցնցող իրադարձություններ, հայրենիքից հարյուր հազարավոր հայեր բռնեցին գաղթի ճանապարհը: 17–18-րդ դդ. շատ հայեր ապաստան գտան նաև Հնդկաստանում: 16–17-րդ դդ. գրված հայերեն մի ձեռագրում մատնացույց են արվում աշխարհի, այդ թվում նաև Հնդկաստանի այն. վայրերի շուկաները, ուր երկարատև կամ ժամանակավոր հաստատվել էին հայ վաճառականներ. «Որ յԱրևելից գնամք ի յԱրևմուտ, կալցուք յառաջ Մլթան, Լահոռ, Սարհնդն, Ջահանապատ, Աքպարապ, Հունդուվան, Խուռջայ և Հնդուան, Բանկալայ, Բիհար-Փաթանայ, Բնարիս Մով, Ղազիփուռ, Ջալալափուռ, Շահզատափուռ, Խէրապատ, Դովլաթապատ, Դարեհապատ, Սրնջ, Բերանփուռն, Սուրաթն, Գուջրաթ, Օզրակապատ, Շագառն, որ է Էստոնք տարիզ ի Դաքանայ: Հեյտարապատ, Մուշլի պատարն, Փէկու»[1]:

Հնագույն տեղեկությունները Հնդկաստանում հաստատված առաջին հայկական մնայուն գաղթօջախի մասին առնչվում են Հնդկաստանում քրիստոնեության տարածման պատմությանը: 780 թ. հայազգի մի վաճառական, Թովմաս անունով, ցամաքային ճանապարհով հասել էր Մալաբարի ծովափ և տեղի կառավարիչ Շեռ Ռամի կողմից ստացել ծովափին հաստատվելու և առևտրի իրավունք: Օգտվելով Շեռ Ռամի հովանավորությունից՝ Թովմասը Հնդկաստան է հրավիրել իր հայրենակից վաճառականների և հոգևորականների, կառուցել է տվել եկեղեցի, զբաղվել քրիստոնեության տարածմամբ[2]: Գրեթե բոլոր եվրոպացի ու-

---

1 *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5994, թ. 3ա–3բ:*

2 G i b b o n E. The decline and fall of the Roman Empire, London, vol. V, p. 54-55; A n v i l l e A. D. Eeclesiastics, London, 1901, p. 617; C o l i n s R. Missionery Enterprises in India, London, 1899, p. 96. *Կ յ ո ւ լ պ ե ն կ յ ա ն Ռ. Հնդկահայերի պատմությունից, Երևան, 1973, էջ 15–16:*

սումնասիրողները, որոնք շոշափել են Հնդկաստանում քրիստոնեության տարածման հարցը, անպայման անդրադարձել են Թովմասին և նրա քարոզչություններին: Այսպես, քարոզիչ Ալվարո Պետենդոն, որը 1515–1518 թվականներին Հնդկաստանում զբաղվել է քարոզչություններով, Պորտուգալիայի թագավորին ուղարկած մի նամակում գրում է. «Թովմասի անվան համայնքը Հնդկաստանում հիմնվել է հետևյալ կերպ. մի տարեց հայ վաճառական, որը հասել էր Մալաբար, կորցնելով հայրենիք վերադառնալու ամեն մի հույս, տեղի կառավարիչներից գնեց մի փոքր հողակտոր, որից ստացված եկամուտով ապրում էր իր որդիների հետ»[1]: Մեկ այլ պորտուգալացի քարոզիչ Ֆրանցիսկո դե Սյուզին, 16-րդ դ. սկզբում գրում է. «Այս հայն ուներ բազմաթիվ զավակներ, որոնք ամուսնացել էին տեղացիների հետ և ստեղծել իրենց բազմանդամ ընտանիքները: Նրանք ապրում էին Կլանագոթում, Կոնտուրգում, Կոտեդում, Դիմասլութում և այլ ավաններում: Այստեղ ապրում էին բազմաթիվ այլ հայեր»[2]:

Հավաստի է այն իրողությունը, ըստ որի Հնդկաստան տանող ուղիներին քաջածանոթ հայերը, սկսած 8-րդ դ. վերջերից, մշտական բնակություն էին հաստատել Հնդկական հողում, ունեին իրենց կազմակերպված համայնքը, եկեղեցին:

Թեև հաջորդ դարերի վերաբերյալ Հնդկաստանում մշտապես հաստատված հայկական համայնքների մասին քիչ են մեզ հասած տեղեկությունները, սակայն հայերի Հնդկաստան անընդմեջ կատարած այցերը և հայ-հնդկական, հատկապես տնտեսական անընդմեջ կապերի մասին տեղեկությունները շատ են: Հայկական գաղթօջախները Հնդկաստանում տեղաբաշխված էին հիմնականում հետևյալ վայրերում:

Ագրա – Հայկական հնագույն և մարդաշատ գաղթօջախներից մեկը գտնվել է Մեծ Մողոլի մայրաքաղաք Ագրայում: Դրա հիմնադրման գործին մեծապես նպաստել է երկրի գահակալ Ջալալուդդին Աքբարը (1556–1605): «Նա քաջատեղյակ էր առևտրի բնագավառում հայերի ազնվությանն ու բանիմացությանը,– գրում է Մ. Սեթը:– Ուզում էր նրանց միջոցով զարգացնել իր երկրի առևտուրը»[3]: Դա գուցե և այդպես էր, բայց կար նաև մեկ այլ հանգամանք: Աքբարը լավ էր հասկա-

1 Նույն տեղում, էջ 17:
2 N e i l l S. History of Christianity in India, Cambrige, 1894, p. 390.
3 S e t h M. J. Armenians of Agra and Clavior, Calcutta, 1930, p. 30.

նում, որ Հնդկաստանի ծովափնյա քաղաքներում հաստատվող եվրոպական հզոր ընկերությունները շատ վտանգավոր մրցակիցներ են առևտրում, ուստի փորձում էր գուջարաթցի, պարսիկ, արաբ և մյուս օտարազգի վաճառականներից ստեղծել մի միասնական բռունցք՝ նրանց հակադրելով եվրոպական վաճառականներին: Եվ քանի որ դեռևս Աքբարի կառավարման տարիներից առաջ Հնդկաստանում կային հաստատված մեծահարուստ հայ վաճառականներ, որոնց գործունեությանը Աքբարը ծանոթ էր, նա աշխատում էր օգտագործել հայերի հնարավորությունները:

Աքբարը հայերին սիրաշահելու նպատակով իր նոր մայրաքաղաք Ագրայում նրանց հողամաս հատկացրեց և նպաստավոր ամեն պայման ստեղծեց հայերի անկաշկանդ գործունեության համար: Թե ինչ սիրալիրություն էր հայերի նկատմամբ ցուցաբերել Աքբարը, երևում է այն փաստից, որ Հնդկաստանի գահակալը Ագրայում հաստատվող հայեր համար պետության ծախսերով 1562 թ. կառուցել է եկեղեցի[1]: «Զայս բան լսելով,– գրում է Թովմաս Խոջամալյանը,– եկին Նոր Ջուղայոյ վարդապետ, քահանայ և շատ տուն հայեր յԱքպարաբատ (այդպես էին հայերը կոչում Ագրան), որ շատ պատուով, թագաւորն, պարգևեաց նոցա հինգ հազար բեգհա գետին վասն տուն, պարտեզ և այլ պիտանի տեղեր չինելոյ»[2]:

Ագրայում հաստատվելու եկած հայերը հենց առաջին օրերից կառուցել են բնակարաններ, առևտրական և արհեստագործական տներ, խանութներ և այլն:

Մեզ հասած բազմաթիվ փաստեր խոսում են այն մասին, որ Աքբարը այնքան մեծ վստահություն է ունեցել երկրի նոր քաղաքացիների նկատմամբ, որ իր պետության բարձրագույն մի քանի պաշտոններ վստահել է նրանց: Հատկապես մեծ թիվ էին կազմում հայ դիվանագետ թարգմանիչները: Ի դեպ, հայուհի է եղել Աքբարի թագուհիներից մեկը՝ Մարիամ Զամանի Բեգումը[3], որի դամբարանը առ այսօր պահպանվում է Ագրայի հայկական գերեզմանատանը: Փաթեհփուռ Սիքրիում պահպանվում է նաև Մարիամի պալատը:

Աքբարի պետության բարձրագույն դատավորներից մեկի պաշտոնը վստահված էր հայի, հայուհի էր պալատի բժշկուհի Հուլիանան:

---

1 A n n i B a s i l. Armenian Settlements in India, Calcutta, 1969, p. 56.

2 Խ ո ջ ա մ ա լ ե ա ն Թ. Պատմութիւն Հնդկաց. Կալկաթա, 1848, հավելվածը:

3 Դ. ե պ. Փ ո ղ ա տ յ ա ն, Ագրայի հայերը, Բեյրութ, 1963, էջ 28:

Ագրայի որպես երկրի մայրաքաղաքի դերի բարձրացմանը համընթաց բարձրացավ և ծաղկում ապրեց նաև հայկական գաղութը: Հայերը, օգտվելով Աքբարի հովանավորությունից, սկսեցին ակտիվ մասնակցություն բերել ոչ միայն Ագրայի, այլև ողջ Հնդկաստանի տնտեսական, առևտրական կյանքին: 16-րդ դ. վեջերին և 17-րդ դ. սկզբին Ագրա այցելած հայր Օ. Ֆելիքսը ևս վկայում է, թե Ագրայի հայկական համայնքը ամենից հարուստն էր, և որ հայերն այստեղ բարձր դիրքեր էին գրավում Աքբարի և նրա հաջորդների պալատում:

Ագրայի հայ գաղթօջախի 1624–1643 թվականների պատմության համար հետաքրքիր սկզբնաղբյուր է նաև Մոնրիկեի ուղեգրությունը: Նրա վկայության համաձայն, այս ժամանակաշրջանում Ագրայի հայկական համայնքի կյանքը հասել էր իր զարգացման գագաթնակետին: Նա հատկապես նշում է Ագրայի հայկական քարվանսարայի մասին, ուր հայերը քննարկում էին իրենց համայնքի ներքին կյանքին վերաբերող հարցերը և կնքում գործարքներ ու պայմանագրեր իրենց և եվրոպացիների միջև: Ագրա եկած օտարերկրացիները այստեղ գործնական խորհուրդներ էին ստանում:

Ագրայի հայ համայնքն այնքան մեծ հեղինակություն ուներ, որ նրան այցելում էին անգամ հնդիկ արքաները: 17-րդ դարի սկզբներին Հնդկաստան այցելող ճանապարհորդ Տավերնիեն իր ուղեգրության մեջ նշել է նման մի այցելության մասին Շահ Ջհանի կողմից:

17-րդ դարի Ագրայի հայ գաղթօջախի վիճակի, հատկապես նրա սոցիալական կազմի մոտավոր պատկերը տալիս են հայկական գերեզմանատան վիմագիր արձանագրությունները: Հայ մեծանուն վաճառականների կողքին այստեղ հանդիպում ենք պետական ու քաղաքական գործիչների, դեսպանի, զինվորականների, զինագործների, քարկոփ վարպետների և զանազան զբաղմունքի տեր մարդկանց տապանաքարերի: Գերեզմանաքարերի վրա եղած արձանագրությունները հնարավորություն են տալիս ոչ միայն պատկերացում կազմելու հայ բնակչության զբաղմունքի, այլև տվյալ երկրին նրանց մատուցած ծառայությունների մասին: «Այս արձանագրությունները միևնույն ատեն զորավոր ապացույց են,– գրում է Ա. Ալպոյաճյանը,– որ հայերը սոսկ եսասիրաբար իրենց համար չեն աշխատած և միայն դրամ դիզելու չեն ձգտած, այլ ծառայած են նաև երկրին, իբր պաշտոնատարներ, զորապետներ, ռազմագետներ, թնդանոթաձիգ և թնդանոթ ձուլողներ, անշուշտ, ի շահ տերության և ոչ իրենց անձին»: Այս տապանաքարերը ի-

րենց արձանագրություններով իսկապես «քարինք են, որք կաղաղակեն, թե հոն ապրած է ԺԵ դարեն մինչև ԺԹ դարուն սկիզբը, երկու երկուք ու կես դարու ժամանակամիջոցին մեջ հայ գաղութը մը ոչ միայն վաճառականներու, որոնք ապահովաբար քաջալերված էին մոնկոլ վնհապետներեն»[1]:

Ոչ միայն Ագրայի, այլև ողջ հնդկահայ պատմության մեջ առավել հետաքրքիր դեմքերից է հասարակական-քաղաքական գործիչ, բանաստեղծ և երգահան Միրզա Ալեքսանդր Ջուլդարնայնը: Նրա մասին նույնիսկ հետագայում ավանդազրույց է ստեղծվել: Ըստ այդ ավանդազրույցի, Ագբարի թագավորության տարիներին Հնդկաստան էր եկել Հակոբջան անունով մի հայ վաճառական և հաստատվել Քաշմիրում: Այս քաղաքն այցելած Աքբարը, պատահականորեն տեսնելով այդ հայի երեխային, շատ է հավանել նրան, ու քանի որ այդ ժամանակ ինքը երեխաներ չուներ, որդեգրել է նրան ու ծնողների հետ տեղափոխել Ագրա: Մայրաքաղաքում հայ մանուկը մեծացել է Աքբարի մեկ տարի անց ծնված ավագ որդու՝ Ջահանգիրի հետ և հետագայում ստանձնել Ջամբահարի կառավարչի պաշտոնը: Հետագայում, գժտվելով արդեն գահակալ դարձած Ջահանգիրի հետ, նա հեռացել է քաղաքական ասպարեզից և իրեն նվիրել բանաստեղծության, երգ ու երաժշտության և դարձել հռչակավոր[2]: Ագրայի հայ գաղթօջախի բարգավաճ վիճակը, դժբախտաբար, երկար չտևեց: 1658 թ. Մեծ Մողոլի գահակալ Ահուրենգզեբը Դելիի մոտ կառուցեց մի նոր քաղաք, Ագրայից նոր մայրաքաղաք տեղափոխեց բնակչությանը՝ անվանելով այն Ահուրանգաբադ: Ագրան հետզհետե անշքացավ և խամրեց: Նրա հետ փոքրացավ նաև հայկական գաղթօջախը, և 19-րդ դ. կեսերին Ագրայում կային միայն հատ ու կենտ հայեր:

Լահոռ – Վաղ շրջանում հայ գաղթօջախ է ստեղծվել Հնդկաստանի հյուսիսում գտնվող Լահոռ քաղաքում: Սկսած 16-րդ դարի վերջերից՝ հայերը Իրանից հաճախ են եկել այնտեղ և առևտրական գործարքներ կատարել: Այդ ժամանակից էլ Լահոռում կազմակերպվում է հայկական գաղթօջախ և շուտով հայտնի դառնում այն աստիճանի, որ Էջմիածնից հատուկ նվիրակ է ուղարկվում այնտեղ՝ հանգանակության նպատա-

---

1 Ալպոյաճյան Ա. Պատմություն հայ գաղթականության, հ. Դ, Կահիրե, 1961, էջ 399:

2 Խոջամալեան Թ. նշվ. աշխ., հավելվածը:

կով: Տեղական իշխանությունները, ինչպես Ագրայում էր, հովանավորում են այնտեղ հաստատված հայերին:

Լահոռում հայ գաղթօջախի բնակչության ստվարացմանը նպաստում է այն հանգամանքը, որ 17-րդ դարի սկզբին տեղի կառավարիչների մեջ եղել են նաև հայեր՝ նախ Միրզա Իսկանդարը, ապա նրա որդին՝ Զուլ Գարնայնը[1]:

Գաղթօջախի սկզբնավորման ժամանակաշրջանի ճշտման խնդրում օգնում են հայկական տապանաքարերը, որոնք ամփոփված են 1625 թվին Զուլ Գարնայնի կողմից հայերին ու մյուս քրիստոնյաներին տրամադրած գերեզմանոցի տարածքում[2]:

18-րդ դարասկզբին պարսկահայերի տեղաշարժի հետևանքով հայերի թիվը Լահոռում այնքան մեծացավ, որ ժամանակակիցների վկայությամբ, այստեղ նրանք հիմնեցին իրենց առանձին թաղամասը՝ կրպակներով, արհեստավորների խանութներով և այլ շենքերով: 18-րդ դարում Լահոռի գաղթօջախն այնքան էր մեծացել, որ պահում էր արքեպիսկոպոսական իրավունքով եկեղեցական: 18-րդ դարի կեսերին Լահոռի շրջանի հնդկական բանակի հրամանատարական կազմի մեջ կային հայեր:

Լահոռի հայ գաղթօջախում աչքի էին ընկնում արհեստավորները, հատկապես զինագործները: Լահոռի հայ զինագործ արհեստավորների մեջ մեծ հռչակ է վայելել թնդանոթներ ձուլող Շահնազարը, որն իր ծառայությունների համար ստացել էր խանի տիտղոս: Պահպանվել է հայ զինագործի՝ 1761 թվականին ձուլած թնդանոթներից մեկը՝ «Զամզա»-ն, որն օգտագործվել է Պանիպատի ճակատամարտում:

Այդ նույն ժամանակ Շահնազարի հայրենակիցը՝ Գորգին խանը, Բենգալիայի նավաբ Միր Քամի 1760–1761 թթ. հայ զորահրամանատարը, Մոնղհիրում զբաղված էր նույնանման թնդանոթներ ձուլելով իր նավաբի համար: «Սա ցույց է տալիս,– գրում է Սեթը,– որ հայերը, բացի Հնդկաստանում նշանավոր վաճառականներ լինելուց, նաև հրազենի ու հսկայական թնդանոթներ ձուլելու մեծ վարպետներ են եղել»[3]:

---

1 S e t h M. Armenians in India, from the earliest times to the present day. Calcutta, 1935 (այսուհետև մեջբերումները՝ AI ձևով).

2 Տ ե ր - Հ ո վ ն ա ն յ ա ն Պ. Պատմություն Նոր Զուղայի, հ. 2, Նոր Զուղա, 1880–1881, էջ 158:

3 S e t h M. Armenians in India. AI, p. 203-206.

Աֆղանական արշավանքները, դրանց հաջորդած բռնագաղթերը և տնտեսական կյանքի լճացումը Լահոռի հայերին ստիպում են տեղափոխվել երկրի առավել ապահով շրջանները, հատկապես առևտրաարհեստագործական աշխույժ կենտրոններ դարձած ծովափնյա քաղաքները, դրա հետևանքով Լահոռի հայ գաղթօջախը 18-րդ դարի վերջին սկսում է խամրել:

Սուրաթ – Սուրաթը՝ Հնդկաստանի ծովափնյա նշանավոր նավահանգիստն ու առևտրական կենտրոնը, հայերին ծանոթ էր շատ հին ժամանակներից: Սուրաթը ծովափնյա առաջին քաղաքն էր, ուր հանդիպվան էին առնում այն հայերը, որոնք Պարսկական ծոցի նավահանգիստներից նավերով գաղթում էին Հնդկաստան և հետզհետե տարածվում երկրով մեկ:

Սուրաթի հայ գաղթօջախի հաստատման ժամանակը ևս ճշտվում է հայկական գերեզմանատան շիրմաքարերի արձանագրություններով, որոնցից հնագույնը թվագրված է 1579-ով[1]: Այն, որ հանդուցյալը եղել է տեղի հայ քահանայի կինը, ըստ ինքյան խոսում է 16-րդ դարավերջին Սուրաթում կազմակերպված, իր քահանան, հավանաբար նաև մատուռը կամ եկեղեցին ունեցող հայ գաղթօջախի առկայության մասին: Մ. Սեթը, հիմք ունենալով «մի հայ աշխարհագրի» վկայությունը, գրում է, որ Սուրաթի հայ գաղթօջախը հնում իրոք ունեցել է սեփական եկեղեցի[2]:

Սուրաթի հայերի տնտեսական բարգավաճ վիճակը հաշվի առնելով՝ անգլիական Արևելահնդկական ընկերությունը 1688 թ. հարկ համարեց առևտրատնտեսական պայմանագիր կնքել Սուրաթի հայության հետ՝ հանձինս նրա ղեկավար խոջա Փանոս Քալանթարի: Այդ պայմանագրով հայ վաճառականները Հնդկաստանում և նրա շրջակա երկրներում ստացան Անգլիայի քաղաքացու բոլոր արտոնություններն ու իրավունքները: Նրանք իրավունք ստացան ազատ ապրել և առևտուր կատարել անգլիահպատակ բոլոր վայրերում, ազատ երթևեկել անգլիական նավերով[3] և այլն:

Սուրաթի գաղթօջախը բարգավաճել է 17-րդ դարի երկրորդ կեսին: Ըստ եվրոպացի ականատեսների, սուրաթահայ վաճառականների ձեռքին էր գտնվում քաղաքից արտահանվող և ներմուծվող ապրանքների

---

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում, էջ 226:

3 S e t h M. The armenians and East India Company, Calcutta, 1926, p. 212.

մեծ մասը: Հայ խոջաները իրենց առևտրական գործարքները իրականացնում էին սեփական, երբեմն՝ օվկիանոսային նավերով[1]:

18-րդ դ. վերջերին սկսեցին երևան գալ գաղթօջախի թուլացման առաջին նշանները, դրա հիմնական պատճառները անգլիական և ֆրանսիական իշխանությունների հայահալած քաղաքականությունն էր և Հնդկաստանը նվաճելու համար անվերջանալի կռիվները: Այդ է վկայում 1783 թ. Սուրաթից գրված մի նամակ. «Այսօր մենք տագնապալի ժամանակներ կանցկացնենք, քանի որ անգլիացիները պատերազմի բռնված էին գաղղիացիներու և Հայդոր Ալու հետ, այժմ կկռվին հոլանդացվոց հետ ...Մեր վաճառականները կորսնցուցին 200.000 ռուփի: Վերջերս մենք նորեն կորսուցուցինք 250.000 ռուփի: Միայն մեր Սուրաթի վաճառականները՝ 600.000-են ավելի դրամ»: Հաղորդելով այս տխուր փաստերը, նամակագիրն ավելացրել է, որ «Հայերի համար միևնույն վիճակն է ամբողջ Հնդկաստանի մեջ...»:

1777 թվին Սուրաթում «400 ծխական ժողովրդի համար կառուցվեց եկեղեցի»[2]:

Մալաբայի ծովափնյա շրջանի՝ 1550–1650 թթ. հայ գաղթօջախի մասին են խոսում նույնպես այն բազմաթիվ գերեզմանաքարերը, որոնք հասել են մինչև մեր օրերը: Թեև շիրմաքարերի վրա մեծ մասամբ ննջեցյալի անուն-ազգանունները չեն պահպանվել, սակայն նրանց վրա առկա են «հայ», «հայազգի» և «խոջա» բառերը:

Մադրասի հայ գաղթօջախի՝ մինչև 1650-ական թվականների պատմության վերաբերյալ փաստերն ընդհանուր բնույթի են: Հետո միայն դրանք հարուստ են դառնում և հնարավորություն տալիս ավելի պարզ պատկերացում կազմելու գաղթօջախի մասին: Ժամանակաշրջանի առավել հետաքրքիր անցուդարձերից մեկը վկայվում է Բրիտանական թանգարանում պահվող փաստաթղթերով: Դրանց համաձայն, Մալաբուրի շրջանի պորտուգալական գաղութային իշխանությունները երկիրը հասցրել էին այնպիսի վիճակի, որ ապստամբած ժողովուրդը Գոլկոնդայի կառավարիչ Աբդուլլահ Քութաբի 20.000-անոց զորքերի օգնությամբ շրջանից դուրս է շպրտել նրանց: Ավերված Մալաբայի և նրա շրջակայքի տնտեսական կյանքը վերականգնելու և կարգավորելու գործը վստահվել է գործունյա և մեծ հեղինակություն վայելող հայազ-

---

1 Ալպոյաճյան Ա. Պատմություն հայ գաղթականության, հ. 2, էջ 306–307:

2 Նույն տեղում, էջ 308–309:

գի Մարկոս Ռոգազին: Բնական է, տեղի հայկական գաղութը պետք է բավականին ստվար լիներ և ծանրակշիռ հեղինակություն վայելեր ոչ միայն տեղի բնակչության մեջ, այլև հնդիկ կառավարողների շրջանում, որպեսզի հայ մարդուն վստահվեր մի ողջ երկրամասի կառավարումը: Թե 1662 թվից սկսած քանի տարի է հայ գործիչը կառավարել այնտեղ, հայտնի չէ. գիտենք միայն, որ 1698 թ. նա շարունակում էր մնալ իր պաշտոնում: Այդ մասին են վկայում մի շարք հետաքրքիր փաստեր, որոնցից մեկը Լոնդոնի Բրիտանական թանգարանի հայերեն ձեռագրերից մեկի հիշատակարանն է, որտեղ ասված է. «Արդ գրեցաւ ի քաղաքին որ կոչի Զինի Փաթանայ... Եւ իշխող և իշխան քայսէր զպարոն Ղօգազին և հռչակ մեծամեծաց և խոսակից թագաւորաց և ի պարծանս քրիստոնեէից: Արդ եղև թիւն փոքր ՂԳ, նադար ամսոյ ԻԵ-ում»: Նույն թանգարանի արխիվում պահվում է նաև Մարկոս Ռոգազի (Խոզազ) 1664 թ. փետրվարի 4-ին անգլիական թագավոր Կառլոս 2-րդին ուղարկած պորտուգալերեն նամակը, որն ստորագրված է մաքուր և պարզ հայերեն՝ «Մարկոս Ռըգազ»[1]:

Մադրասում և նրա շրջակա վայրերում հայաշատության մասին են վկայում 1707, 1712 և 1729 թթ. Ս. Թովմասի բլրագագաթին, Ս. Ջորջի ամրոցի ներսում և Մալաբարում կառուցված երեք հայկական եկեղեցիները:

Մադրասում հաստատված հայերը անտարբեր չեն եղել դեպի հյուրընկալ հնդիկները: Հայտնի է, որ երբ հայերը մեծ շուքով ընդունել են Արկոտի նավաբին, վերջինս, որպես շնորհակալության նշան, նրանց տվել է բավական մեծ առևտրական արտոնություններ: Հայերը, պարտքի տակ չմնալով, ծախսել են 30.000 հուն («հունը» կամ «խունը» հավասար է 3-ից 8 ռուպու) և Մադրասի մոտակայքում, Մալման գյուղի սահմանում հոսող Ադյար գետի վրա կառուցել բաղմակամար մի կամուրջ, որը հայտնի է եղել, «Մալմանլոնդյան կամուրջ» անունով[2]: Դարձյալ հայերն են, որ 1726 թ. դեպի Ս. Թովմասի բլրագագաթի շինությունները տանող քարքարոտ զառիվերի վրա կառուցել են 160 լայն աստիճաններով մի ճանապարհ[3]: 133 աստիճաններով նման մի

---

1 C o n y b e r e F. C. Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, p. 218.

2 Գ ր ի գ ո ր յ ա ն Ա. Հայք ի Հարավային Հնդկաստան. «Բազմավեպ», 1922, էջ 185:

3 Նույն տեղում, էջ 185:

ճանապարհ էլ հայերը կառուցել են Մալման գյուղի մոտակայքի բլրի վրա: Նույն ժամանակ հայերի ջանքերով կառուցվել են նաև մի շարք այլ շինություններ՝ այդ քաղաքի աղքատների համար[1]:

Մադրասի հայկական գաղթօջախն առաջին ծանր հարվածն ստացավ, երբ անգլո-ֆրանսիական միջգաղութատիրական հակամարտության պայմաններում 1746 թ. ֆրանսիացիները, Լալլի հրամանատարությամբ, գրավեցին քաղաքը և գրեթե հիմնահատակ կործանեցին այն: Սակայն հայերը կարճ ժամանակում կարողացան ոչ միայն վերականգնել իրենց ավերված տները, խանութներն ու արհեստանոցները, այլև, ինչպես վկայում է 1749 թ. սեպտեմբերի 2-ի Ս. Դավթի ամրոցում տեղի ունեցած նիստի արձանագրությունը, «ֆինանսավորեցին տեղի հնդիկ բնակիչներին վերականգնման ժամանակ կարիքները հոգալու համար»[2]:

18-րդ դարի կեսերից մադրասահայության համար սկսվեց ոչ միայն տնտեսական զարթոնքի, այլև ազգային-լուսավորական շարժման մի շրջան, որ իր հետքը թողեց ինչպես հնդկահայ գաղթօջախների, այնպես էլ ողջ հայ ժողովրդի պատմության մեջ:

Մադրասի հայկական գաղթօջախը բացառիկ խոշոր դեր է ունեցել հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության ձևավորման գործում: Նա քաղաքական զարթոնքի մունետիկն է հանդիսացել հայ իրականության մեջ նոր ժամանակներում՝ տալով այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Հովսեփ Էմինը, Հարություն քահանա Շմավոնյանը, Հակոբ Շահամիրյանը և ուրիշներ:

Հնդկաստանը այն նպաստավոր միջավայրն էր, ուր վաղուց ի վեր հաստատվել ու առևտրական լայն գործունեություն էին ծավալել հայերը: Եվրոպացիների՝ Հնդկաստան գալուց շատ առաջ հայ վաճառականները մասամբ իշխում էին հնդկական շուկայի վրա: Սկզբում հայ և եվրոպական առևտրականների հարաբերությունները վատ չէին, սակայն նրանց՝ Հնդկաստանում հաստատվելուց հետո վիճակը փոխվեց. սկսվեց կատաղի պայքար եվրոպական, առաջին հերթին անգլիական, և այլ ընկերությունների ու հայ վաճառականների միջև: Նյութական լայն հնարավորություններ և թիկունքում ռազմական մեծ ուժ ունեցող

---

1 Նույն տեղում, էջ 186:

2 Թ. ա ր ք ե պ. Գ ո ւ շ ա կ յ ա ն, Հնդկահայք, Երուսաղեմ, 1941, էջ 44–45:

եվրոպացիների մրցակցությանը դիմանալու համար ցրիվ գործող հայ առևտրականները հարկադրված եղան եվրոպացիների օրինակով միավորվել: Միավորվելու առաջին փորձերը կատարվեցին Մադրասում, ուր հայկական ստվար բնակչություն էր ապրում: Մադրասը Հնդկական թերակղզու արևելյան ափի վրա գտնվող ամենից խոշոր և բանուկ նավահանգիստն էր: Այստեղ էին կենտրոնացած ինչպես եվրոպական, այնպես էլ հայկական առևտրական մրցակից գլխավոր ուժերը:

Փոքրաթիվ հայ վաճառականների այս համախմբումը, սակայն, օգուտ չտվեց. հայ վաճառականները բացահայտ պարտություն կրեցին: Պարտության պատճառը, իհարկե, հայ վաճառականների անշրջահայացությունը և կամ նախաձեռնության պակասը չէր, այլ այն, որ մրցությանը միջամտեց բռի ուժը. անգլիական, հոլանդական և ֆրանսիական առևտրականների թիկունքում կանգնած էին նրանց պետությունները, որոնք ամեն մի միջոց գործադրում էին անպաշտպան հայ վաճառականների դեմ: Այս անհավասար մրցության մեջ շատ ցայտուն դրսևորվեց հայ վաճառականների քաղաքական որբությունը, և այդ ամենը ստիպեց նրանց սթափվելու. հայ վաճառականն սկսեց մտածել հայ անկախ պետություն ունենալու մասին:

Հնդկահայ վաճառականների շփումը և մրցությունը եվրոպական զարգացած, քաղաքական ու կուլտուրական մեծ փորձ ունեցող առևտրականների հետ ուսուցողական խոշոր նշանակություն ունեցան: Դա հնարավորություն տվեց նրանց մոտիկից ծանոթանալու գոյություն ունեցող եվրոպական առաջադեմ դաղափարախոսություններին և դրանք օգտագործելու իրենց ընթացիկ քաղաքական ծրագրերի նախագծումների ժամանակ:

Երբ է կազմակերպվել մադրասահայ ազատագրական խմբակը և քանի հոգի են եղել նրա կազմում, ստույգ հայտնի չէ: Գիտենք միայն, որ խմբակի կենտրոնական դեմքը, նրան ուղղություն տվող անձնավորությունը եղել է Շահամիր Շահամիրյանը: Խմբակը 1771 թ. հիմնում է իր տպարանը՝ նպատակ ունենալով հայերեն լեզվով հրատարակելու հայ ժողովրդի ինքնագիտակցությունն արթնացնող, ազատագրական պայքարը պրոպագանդող գրականություն:

Մադրասի հայկական այդ տպարանում 1772 թ. Մովսես Բաղրամյանի հեղինակությամբ լույս է տեսնում «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» վերնագրով գրքույկը, որը փաստորեն Մադրասի հայրենասիրական խմբակի քաղաքական կոչն էր, ղարթոնքի ազդարարը: Գրքի տիտ-

դոսաթերթում նշվում էր, որ նա գրված է «Սակս սթափելոյ երիտասարդութեան և մանկանց Հայկազեանց ի վեհերոտեալ և հեղգացեալ թուլութենէ քնոյ ծուլութենէն»: Գրքի սկզբում նախ տրվում են Հայաստանի համառոտ պատմությունը և աշխարհագրությունը, պատկերվում է այն ծանր վիճակը, որի մեջ գտնվում է Հայաստանը օտար լծի տակ. «Կարկաչահոս մեր գետերը արյան փոխվեցին, կաթնաբուխ և մեղրածորան մեր աղբյուրները լեղի դարձան»,– գրում է Մ. Բաղրամյանը: Մայր Հայաստանի անունից ողբում է նրա թշվառ վիճակը. «երբեմնի ծիրանազգեստ մայր թագուհի էիր չքնաղ, ամբողջ հայ ժողովրդի համար, իսկ այժմ ձորձ հագած անմխիթար, այրիացած ես և լլկված օտարի կողմից»:

Նա կոչ է անում սթափվել, ազգային ինքնագիտակցության դալ: «Եկեք դուրս գանք թմրության քնից, եկեք սթափվինք,– բացականչում է նա,– Եկեք միասին մտածենք, մինչև երբ մեր արյուն-քրտինքը, վաստակը թողնենք հափշտակելու օտարին»:

Հայ երիտասարդության հայրենասիրական զգացմունքները արթնացնելու նպատակով հեղինակը դիմում է ընթերցողներին հայ աղջիկների անունից: «Առեք,– ասում է նա,– թշնամիներից մեր վրեժը, այդ են պահանջում գեղապաճույճ Արամյան աղջիկները»: Հեղինակը համոզված է, որ «Հայաստանի վրայից կանցնի մառախլապատ և խավարամած աղջամուղջը գիշերվա, դուրս կգա արեգակը, կանցնի դժնդակ ձմեռը, և վրա կհասնի ծաղկածին մանուշակաբեր գարունը, որով կզվարճանա մայր Հայաստանը»:

«Յորդորակի» կարծիքով, ներկա վիճակից հայ ժողովրդի բարձրանալու միակ միջոցը իր զավակներին կրթության տալն է, դաստիարակելը: Նա առաջարկում է ամենուրեք բացել դպրոցներ և բարձրացնել հայ երիտասարդության ինքնագիտակցությունը, նրանց սրտում բորբոքել հայրենասիրություն:

«Յորդորակի» հրատարակումը ամպրոպի պես պայթեց հայ իրականության մեջ: Նրա երևան գալը ողջունում են հայ ազատամիտ շրջանները: Սակայն առանձնակի մերժումով է այն ընդունում էջմիածինը: Սիմեոն կաթողիկոս Երևանցին բանադրանքի է ենթարկում Մովսես Բաղրամյանին և Շահամիրյանից պահանջում հավաքել տպագրված բոլոր գրքերը և այրել: Նա «Յորդորակը» համարում է «դիվաշունչ» գիրք, իսկ իրեն Բաղրամյանին, «պակաս ի խելաց», առանց շրջահայացողության և «աղայաբարո»:

Գրքույկի հեղինակը, սակայն, Մովսես Բաղրամյանը միայնակ չէր. նա Մադրասի հայրենասեր խմբակի մշակած ծրագրին գրական ձև տվողն էր միայն: Այնպես որ կաթողիկոսի սպառնալիքն ուղղված էր նաև Շահամիրյանի և նրա գլխավորած խմբակի դեմ:

Սակայն անհրաժեշտ է խիստ ըմբռնումով մոտենալ նաև Սիմեոն կաթողիկոսի վերաբերմունքին: Թուրք-պարսկական դաժան տիրապետության պայմաններում, զրկված լինելով իրական որևէ ուժի օգնությունից, Սիմեոն կաթողիկոսը տվյալ դեպքում դրսևորում էր պատասխանատվություն իր ժողովրդի հանդեպ, պատասխանատվություն, որ թելադրվում էր նրա զբաղեցրած բարձր դիրքով:

1788–1789 թվականներին Մադրասի տպարանում լույս է տեսնում «Որոգայթ փառաց» գրքույկը, որը պարունակում էր ապագայում Հայաստանում ստեղծվելիք ժողովրդական հանրապետության սահմանադրության նախագիծը: Ուշադրավ են այն հարցերը, որոնք առաջ են քաշված ազատագրական խմբակի կողմից: Ամենից հատկանշականն այն է, որ Մադրասի հայ հայրենասերները որոշակի պաշտպանում են այն տեսակետը, որ Հայաստանի նոր պետությունը պետք է լինի ոչ թե միապետություն, այլ սահմանադրական հանրապետություն: Կառավարությունը, ըստ այդ սահմանադրության, ընտրվում է ժողովրդի կողմից երեք տարի ժամանակով: Գործադիր իշխանության գլուխ է կանգնում հանրապետության նախագահը: Հայտարարվում է կրոնի և խղճի կատարյալ ազատություն: Ստեղծվում են զանազան նախարարություններ: Պետական բոլոր պաշտոնյաներն ընտրովի են: Կազմակերպվում և զինահանդերձվում է 90 հազար հոգուց բաղկացած պետական մշտական բանակ: Պետական գումարները գոյանում են ժողովրդից գանձվող զանազան տուրքերից ու հարկերից, որոնք հավաքվում են ժողովրդից ըստ ունեցվածքի:

Մադրասի հայ հայրենասիրական խմբակը անցյալի հայ պետականության հիմնական սխալներից մեկը, որը դարձել է նրա կործանման պատճառը, համարում էր կառավարման միապետական ձևը: Մադրասահայերը չէին ընդունում ստրկությունը և ճորտությունը: Շահամիր Շահամիրյանը իր նամակներից մեկում խորհուրդ էր տալիս Հերակլ 2-րդին Վրաստանում վերացնել ճորտությունը:

Մադրասահայերի կարծիքով, նոր կարգերը պետք է հիմնված լինեն միայն օրենքի վրա: Օրենք չեղած տեղում չի կարող լինել ոչ արդարություն, ոչ հավասարություն և ոչ էլ ազատություն: Ժողովուրդն է,

որ պետք է լինի կառավարողը: Երկրի օրենքները պիտի համապատասխանեն ժողովրդի գոյավիճակին: Նրանք առաջ են քաշել նաև եկեղեցին պետությունից անջատելու հարցը:

Ուշադրության արժանի է այն, որ Մադրասի հայրենասերները ճիշտ են նշել հայ ժողովրդի ազատագրման ուղիները և ճիշտ ծրագրել, թե ուժերի ինչ համագործակցություն պետք է լինի: Նրանք այն տեսակետն են պաշտպանել, որ հայ և վրաց ժողովուրդները թշնամու դեմ պետք է հանդես գան միասնաբար:

Մադրասի հայրենասերների կարծիքով, Հայաստանի ազատությունը իրական և հաստատուն կարող է լինել միայն այն դեպքում, եթե Մեծ Ռուսաստանն իր վրա առնի Հայաստանի հովանավորությունը: Հովսեփ Արղությանը Մինաս Դիլանյանին հղած մի նամակում, խոսելով Շահամիրյանի խմբի այս տեսակետի մասին, հետևյալն է գրում. «Նրանք բոլոր ազգի փրկությունը ռուսական կառավարությունից են սպասում և ողջ ազգի ուշադրությունը հրավիրում այս կետի վրա»:

Մադրասի խմբակը, առաջադրելով Հերակլի աջակցության և Ռուսաստանի հովանավորության հարցերը, սակայն գտնում էր, որ հայ ժողովուրդն իր հույսն իր վրա պետք է դնի, ինքը պետք է կռվի իր ազատությունը, «եթե ոչ, ապա ո՞ւմ երբեք լինի փույթ առ այն, որ մեք վասն մեր ոչ ջանամք»:

Մադրասի հայրենասերները մեծ հույսեր էին կապում Ղարաբաղի մելիքների հետ:

Հարց է առաջանում. որքա՞ն իրական էին Մադրասի հայրենասեր խմբակի առաջադրած լուսավորական գաղափարները և նրանց գծած ազատագրական ուղին: Դեռևս ժամանակակիցները մեղադրել են Շահամիրյանին, որ նա ճիշտ չի ըմբռնում ժամանակը, ցանկանում է ժողովրդին բարձրացնել մարտի Թուրքիայի և Պարսկաստանի դեմ՝ առանց հաշվի առնելու հետևանքները: Ղուկաս կաթողիկոսն իր 1789 թ. սեպտեմբերի 11-ին Շահամիրյանին գրած նամակում ճիշտ չի համարում այն կարծիքը, որ Էջմիածինը իբր թե չի ցանկանում հայ ժողովրդի ազատագրությունը. «... Միթե յիմար իցեմք, որ ի տառապանաց զերծանիլ չկամիցեմք. ձկունք, որսացեալք ի ցանցս, և թռչունք ըմբռնեալք, ջանան զերծանիլ, ապա որքան ևս առավել բանականքս բաղձամք և ազատութեան»: Նա բացատրում է, որ «նոքա (այսինքն՝ պարսիկները և

թուրքերը – Ռ. Ա.) իբրև զաւազ ծովու են և մեք սակաւաւորք, նոքա ըստ աշխարհային հանդամանուց զորաւորք և մեք տկարք»[1]:

18-րդ դարի վերջին երկու տասնամյակներում հայ հասարակական առաջադեմ շրջանների, այդ թվում Արղությանների ու Լազարյանների միջոցով դիվանագիտական աշխատանքներ են ծավալվում ռուսական արքունիքում՝ աշխատելով արագացնելու ռուսական զորքերի մուտքը Հայաստան: Եվ դա արվում էր այնպիսի եռանդով, որ Արղությանը Շահամիրյանին գրած իր նամակներից մեկում անհրաժեշտ է համարել այդ շտապողականության համար դիտողություն անել[2]:

Մադրասահայերի խմբակը 1788 թվականին լույս ընծայեց «Տետրակ, որ կոչուի նշաւակ...»-ը, որը փաստորեն Մադրասի հայկական գաղթօջախի ինքնավարության կանոնադրությունն էր: Այս կանոնադրությունը կազմելիս նրանց հիմնական խնդիրն է եղել առաջին հերթին թույլ չտալ հայությանը հեռանալ ազգային արմատներից և ամեն տեսակի օգնություն և աջակցություն ցույց տալ օգնակարոտ հայությանը:

Մադրասցիները հիմնել են իրենց ընդհանուր դրամարկղը, որը կոչվել է «Սունդուկ որբոց»: Դրամարկղի գումարները հավաքվել են անդամների պարտադիր և կանոնավոր մուծումներից: Հավաքված միջոցներն օգտագործվել են դպրոցների, բարեգործության և ազգային այլ օգտակար նպատակների համար: Թ. Ավդալբեկյանը, որը հանդամանորեն ուսումնասիրել է «Նշաւակ»-ը, գտնում է, որ Մադրասի «սնդուկը» «բարեգործական-ազգասիրական, բայց միաժամանակ առևտրական ձեռնարկություն է՝ կշռադատված և զուտ գործարար հիմունքներով»[3]:

Ինչքա՞ն ժամանակ էր ուժի մեջ մնալու մադրասահայ ինքնավարությունը: Նրա կազմողները այդ հարցին հետևյալ պատասխանն են տվել «Նշաւակ»-ի մեջ. «Ինքնավարությունը պետք է պահպանի իր գոյությունը մինչև այն երջանիկ օրը, երբ Աստված բավական համարի թափառական հայ ժողովրդի տառապանքները, գտնվի մեր երկրի կառավարիչը, և հնարավոր կլինի հայ ժողովրդի օտարության մեջ թափծող մնացորդներին ցնծությամբ վերադառնալ իրենց մոր՝ գորովագութ Արարատյան աշխարհի գիրկը»:

---

1 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4501, թ. 262ա:

2 Նույն տեղում:

3 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2690, թ. 102ա:

Կալկաթա – 17-րդ դ. 50-ական թվականներին անգլիացիները նոր-նոր էին հաստատվում Բենգալիայի Հուգլի գետի գետաբերանի տարածքում: Այստեղ հաստատվելու համար նրանք ուղիներ են փնտրում և հարցը գլուխ բերելու համար դիմեցին հայերի օգնությանը: Թե ինչո՞ւ նրանք կանգ առան հայերի վրա, բացատրում են իրենք՝ անգլիացիները. «Անհրաժեշտ է ասել, որ հայերը Դելիի այն հպատակներից էին, որոնց նկատմամբ կառավարության կողմից կար մեծ հարգանք և հովանավորություն: Հայերի նկատմամբ այդ հարգանքը գալիս է դեռևս Աքբարի ժամանակներից: Նրանք դրան արժանացել էին ազնվության և լոյալության համար»:

1690 թ. հայերի միջնորդությամբ անգլիացիները Մեծ Մողոլից ստացան Բենգալիայում առևտրական ֆակտորիա հաստատելու իրավունք: Նույն թվականին նրանք հիմնեցին Կալաթան: 1894 թ. Մեսրոպ Սեթը Կալիկաթայի տարածքում հայտնաբերեց 1630 թ. հայերեն արձանագրությամբ շիրմաքար, որը որոշ ուսումնասիրողների հիմք տվեց հայերին համարել Կալկաթայի հիմնադիրներ[1]:

Կալկաթայի բարձրացմանը համընթաց կազմավորվում է հայկական գաղթօջախը: 1724 թ. հայերն այնքան էին շատացել այստեղ, որ հարկ է եղել կառուցելու ազգային եկեղեցի, որը հետագայում ստացավ Ս. Նազարեթ անունը: 1734 թ. հայ հարտարապետ Ղևոնդի նախագծով շենքին կից ավելացվեց զանգակատուն:

18-րդ դ. կեսերին տարբեր երկրների առևտրում և Հնդկաստանի ներքին շուկայում Կալկաթայի հայերի առևտրական գործարքները այնքան մեծ էին, որ դրանք հնարավորություն տվեցին նրանց կառուցելու իրենց նավակայանը՝ պահեստներով և անհրաժեշտ բոլոր շինություններով: Հայերի բնակության փողոցներից մեկը կոչվում էր Հայկական: Հայկական էր կոչվում նաև Կալկաթայից ոչ հեռու գտնվող լեռներից մեկը: Կալկաթայի հայ անվանի գործիչներից մեկի՝ Սարգսի անունով էր կոչվում Կալկաթայի մեկ այլ փողոց[2]:

17-րդ դ. 30–40-ական թվականներին հնդկահայերն արդեն ունեին Հնդկական օվկիանոսի ջրերում լողացող մի ողջ նավատորմ: Հոլանդական առևտրահնդկական ընկերության՝ 17-րդ դ. կեսերին վերաբերող գրագրություններից մեկը հաղորդում է, թե Եվրոպայից կենտրոնները

1 S e t h M. The old Christians in Calcutta, Calcutta, 1932, p. 3.
2 Bruces Annals of the Honorable East India Company, vol. III, p. 140-141.

խորհուրդ էին տալիս Հնդկաստանում գործող իրենց ներկայացուցիչներին «մերձափնյա առևտրում բացառապես օգտվել հայերին պատկանող շարժուն, փոքրածավալ նավերից»[1]: Անգլիական Արևելա-Հնդկական ընկերության ծառայող Վաթսոնը իր՝ Լոնդոն ուղարկած մի զեկուցագրում վկայում է, որ 1657 թ. Մաչուլիփաթանում զարմանքով է տեսել «20-ից ավելի առագաստանավեր, որոնք լողում էին դեպի Պեգու, Ցեյլոն, Իրան և այլ վայրեր»[2]: Մեկ այլ վկայությամբ, 1688 թ. Հարավ-արևելյան Ասիայի երկրներից Եվրոպա հասած նավերի մեջ եղել են 16 հայապատկան առևտրանավեր[3]:

Դեռևս հնուց հայկական նավերը վարում էին հայ ծովայինները, որոնք լավ համբավ ունեին Հնդկաստանում և Արևելքի ու Եվրոպայի մյուս երկրներում: «Հայերը,– գրում է Ղ. Ինճիճյանը,– երևելի նավապետներ եղած են ... որոնք մեծ նավեր բանեցնելով՝ վարպետ եղան Պենկալիայի առջևին ծոցին մեջ ու Գանկես կամ Կընկա գետին մեջ: Երբ եվրոպացիք հասան Հնդկաստան, այն ատեն հայ նավապետները անոնց առաջնորդ եղան և ճամփաներ կցուցնին գետին մեջ նավարկելու...»[4]:

Հայ նավավարներն ու լոցմաններն աշխատում էին ոչ միայն Հնդկական օվկիանոսի ջրերում: Արևելա-Հնդկական ընկերության փաստաթղթերից երևում է, որ հայ նավավարները վերցվում էին նաև այն նավերի վրա, որոնք լողում էին Սուրաթ-Լոնդոն ծովային ուղիով: Կապիտաններ և լոցմաններ չլինելու դեպքում, նրանց երբեմն փոխարինում էին ճանապարհներին քաջատեղյակ հայ վաճառականները:

Աշխարհի շատ նավահանգիստներում ծանոթ անձինք էին հնդկահայ նավավարներ Գասպար, Դավիթ և Խաչիկ Ջուղայեցիները և շատ ուրիշներ: Նրանց վարած նավերից էին «Արշակ», «Գուսան Ջուղայի», «Արարատ», «Հռիփսիմե», «Աննա-Մարիա», «Հիրո» և հայկական անուններով այլ նավեր: Հետագայում Հնդկաստանում հայապատկան նավերն սկսեցին կոչվել իրենց տերերի անուններով՝ «Հարություն-Աբգար», «Հովհաննես-Սարգիս», «Հովսեփ-Մանուկ» և այլն:

Ազգային դրոշից զուրկ հայ նավավարները ստեղծել էին իրենց կարմիր-դեղին-կարմիր եռաշերտ դրոշը՝ դեղին շերտի վրա դառան պատկե-

---

1 Նույն տեղում, էջ 144:

2 The diaries of Straunsham master. 1675, vol. II, London, 1911 p. 114.

3 R o y C h a r d u r i, Don company in Cormandel, London, 1967, p. 128.

4 Ի ն ճ ի ճ յ ա ն Ղ. Դարապատում (1755–1757), Վենետիկ, 1824, էջ 246:

րով: Ինչպես իրենց հայրենակից ջուղայեցիների տարազը ցամաքային ճանապարհորդության ժամանակ, այնպես էլ այս դրոշը ծովագնացության ընթացքում անցաթղթեր էին աշխարհի շատ նավահանգիստներում ազատ ելք ու մուտք անող հնդկահայերի համար: Եվրոպական և ասիական առանձին պետությունների կամ ընկերությունների նավերը, ապահովության և ազատ ելումուտի համար երբեմն լողում էին հայկական դրոշի տակ:

Հայերն այնքան նավեր ունեին Հնդկական օվկիանոսի ջրերում և Հնդկաստանի նավարկելի գետերում, որ հետագայում կարիք առաջացավ ստեղծելու հայկական «ծովային ապահովագրության ընկերությունը», որն իր բաժանմունքներն ուներ Լոնդոնում, Սինգապուրում, Չինաստանում և Հնդկաստանի ծովափնյա քաղաքներում: Հնդկահայերը Մալաբարի, Բենգալիայի և մյուս ծովափերին ունեին սեփական «Հայկական» կոչվող նավակայաններ՝ նրանց կից պահեստներով:

Կալկաթայի հայկական համայնքի սոցիալական պատկերը զգալիորեն տարբերվում էր մյուսներից: Կալկաթայի հայերի հիմնական զանգվածը կազմում էին արհեստավորները, նավահանգիստներում և այլուր աշխատող բանվորները, զանազան հիմնարկներում ծառայողները՝ բժիշկներ, իրավաբաններ, ճարտարապետներ և այլն: Հատկապես նշանավոր էին հայ ծովայինները, որոնք տեղերին անծանոթ օտարերկրյա նավերը Հուգլիով հասցնում էին Կալկաթա և ետ տանում:

Կալկաթայի համայնքն ուներ իր ղեկավար մարմինը՝ եկեղեցական վարչությունը: Վարչությունն առաջնորդվել է ներքին կանոնադրությամբ՝ համակերպված տեղի պայմաններին և ենթակա կառավարության հսկողությանը: Վարչության ղեկավար մարմիններն ընտրվում էին ժողովրդի կողմից՝ չորս տարին մեկ անգամ: Ընտրված ներկայացուցիչները կոչվում էին «Կոմիսարներ», նրանցից բացի, կային «ավանդապահներ»[1]:

Կալկաթայի հայկական համայնքի պատմությունը ժամանակագրական առումով գլխավորապես ներառում է 19–20-րդ դարերը:

Սեիդաբադ *(Մուրշիդաբադ) – Մեծ Մողոլի մեկ այլ հզոր գահակալ Ահուրենգզեբի (1658–1707) արքայական ֆերմանով հայերն ազատ իրավունք ստացան Բենգալիայի մայրաքաղաք Մուրշիդաբադի արվարձան Սեիդաբադում հիմնելու իրենց մշտական գաղթօջախը: Այդ դաղ-*

---

1 B o l t s N. The Consideration of India, London, 1781, p. 179.

թոջախի մասին Հնդկաստանի պատմության լավագիտակ Բոլթսը վկայում է հետևյալը. «Հայերը, որոնք միշտ էլ հայտնի են եղել Հնդկաստանում իրականացվող առևտրական գործարքներով, հնուց նշանակալից գաղթոջախ ունեին նաև Բենգալիայում, մասնավորապես Սեիդաբադում: Նրանց առևտրի իրավունքը նույնպես հաստատվել էր Մեծ Մողոլի հրամանով»: Հայերին Ահուրենգզեբը տվել էր հում մետաքս և հակով կտոր վաճառելու մենաշնորհ՝ ընդամենը երեք տոկոս առևտրամաքսով: Ահուրենգզեբի հրովարտակով հայերն ստացել էին մի շարք այլ արտոնություններ ևս[1]: Հայերի նկատմամբ մեծ հոգատարություն է ցուցաբերել նաև Ահուրենգզեբի որդին՝ Մուազգամ շահ Ալամ 1-ինը (Բահադուր շահ 1-ին – 1707–1712): Հնդկահայերի հոգևոր առաջնորդ Ստեփանոս վարդապետը, լինելով շահի մտերիմը, կարողացավ Մեծ Մողոլի հաջորդներին հաստատել տալ այդ ֆերմանը, որով Սեիդաբադի հայերը, 3,5 տոկոս մաքս վճարելով, ազատ առևտրի իրավունքներ և մի շարք այլ արտոնություններ ստացան[2]:

Հայերը 1758 թ. Սեիդաբադում կառուցեցին իրենց եկեղեցին: Քաղաքում հայերի խանութներն ու արհեստանոցները հիմնականում համախմբված էին կենտրոնի փողոցներից մեկի վրա, որը կոչվում էր Հայկական շուկա[3]:

Հիմք ընդունելով հայկական եկեղեցու շրջապատում եղած հայկական տները՝ ուսումնասիրողները իրավացիորեն ենթադրում են, որ Սեիդիբադը ունեցել է հայկական ինքնամփոփ թաղամաս: Հայերն այստեղ ունեին լեղակենու (հնդիկոնի) արտեր և այն մշակելու համար «գործանոցներ»:

Սեիդաբադից բացի, մեծ թվով հայեր էին ապրում նաև բուն մայրաքաղաքում՝ Մուրշիդաբադում: Այստեղ ապրող հայերը գլխավորապես զինվորականներ էին ու զինագործներ, որոնք 1756–1764 թթ. կամավոր կերպով զենք վերցրեցին և միացան հնդիկ ժողովրդի հակաանգլիական պայքարին:

Զիչրա ((Զինսուրահ) – Բենգալիայի հարուստ քաղաքներից մեկը Հուգլի գետի վրա կառուցված Զինսուրահն էր, որը հայ գրականության մեջ հայտնի է Զիչրա ձևով: Զինսուրահը, որպես առևտրական հենակետ, հոլանդացիները հիմնել են 1625 թ.: Քաղաքի հիմնադրման ա-

---

1 Նույն տեղում:

2 Ազգասեր, Կալկաթա, 1846, № 40:

3 Թ. ա ր ք ե պ. Գ ո ւ. շ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 172:

ռաջին օրերից այնտեղ հայեր կային, իսկ նրանց մասին ճշտված առաջին տեղեկությունները վերաբերում են 1645 թ.[1]: 17-րդ դ. վերջին 1695–1697 թթ. ընթացքում, կառուցվում է հայկական եկեղեցի: Այստեղ հայերն ունեին առևտրական ընկերություններ[2]:

Զիչրայի հայերը ծանոթ դեմքեր էին Բենգալիայի արքունիքում: Եվ պատահական չէր այն հանգամանքը, որ անգլիացիները Բենգալիայի ռաջայի մոտ պատվիրակություն ուղարկելիս որպես միջնորդ ընտրեցին Զիչրայի հայ գաղթօջախի ղեկավար Իսրայել Սահրադին[3]:

Զիչրայում կային նաև հայ կալվածատերեր, որոնք ունեին լեղակենու պլանտացիաներ:

Զինսուրահի հայերի դերը զգալի էր ապրանքների արտահանման մեջ ինչպես դեպի Հնդկաստանի քաղաքները, այնպես էլ Ասիայի և Եվրոպայի շուկաները: Արտահանման հիմնական նյութը մետաքսն էր[4]: Միաժամանակ հայերը նշանակալից մասնակցություն էին ցուցաբերում բենգալական շուկաներում պահանջարկ ունեցող ապրանքների ներմուծմանը: Արտահանման և ներմուծման գործարքները կատարելիս հայերն օգտվում էին արտոնյալ վիճակից:

Հիրավի, ակնառու էր Բենգալիայի ներքին և արտաքին շուկայում հայերի խաղացած դերը: Ըստ 1753 թ. Բենգալիայից արտահանված գործվածքեղենի չափերի վերաբերյալ անգլիացի հետազոտող Դ. Թեյլորի կազմած աղյուսակի, եթե պարսիկ վաճառականներն արտահանել էին 100.000 ռուպու, հնդիկ վաճառականները՝ 200.000, անգլիացիները՝ 200.000, ֆրանսիացիները՝ 250.000, հոլանդացիները՝ 100.000, ապա հայ վաճառականներն արտահանել էին 500.000 ռուպու արժողության մետաքս[5]:

Բոմբեյ – Բոմբեյը ժամանակին աննշան փոքրիկ մի քաղաք էր Հնդկաստանի արևմտյան ծովափին: Կղզին, որի վրա գտնվում էր քաղաքը, 1661 թ. պորտուգալացիները հանձնեցին անգլիացիներին: Անգլիական ընկերությունը նույն թվին իր կենտրոնը, որը գտնվում էր Սուրաթում, տեղափոխվեց առավել ապահով Բոմբեյ: Ընկերությունը միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի Սուրաթից նոր կենտրոն տեղա-

---

1 S e t h M. Armenians in India, AI, p. 303.

2 A n n i B a s i l, Armenian settlements in India, p. 1929.

3 S e t h M. Armenians in India, AI, p. 304.

4 Խ ա չ կ յ ա ն Ց. Հայելի փոքրիկ, Կալկաթա, 1869, էջ 26:

5 T e i l o r S. A. A descriptive and historieal..., London, 1858, p. 130-131.

փոխվեն արևմտյան Հնդկաստանի առևտրում կշիռ ունեցող նավատեր, մեծահարուստ հայ վաճառականներ[1]: Սուրաթի տարեգրություններից երևում է, որ հրավիրվածների մեջ են եղել նաև Սուրաթի հայերից շատերը: Անգլիացիները հայերին սիրաշահելու նպատակով հողամասեր հատկացրեցին նրանց՝ տներ, պահեստներ և եկեղեցի կառուցելու համար[2]: 1666 թ. Խոջա Մինասը, Խոջա Դիլանը և շատ այլ մեծահարուստ հայեր Սուրաթից տեղափոխվեցին և մշտական բնակություն հաստատեցին Բոմբեյում՝ ծնունդ տալով, ավելի շուտ՝ աշխուժացնելով բարձրացող հայ գաղթօջախը:

Հայերին Սուրաթից, Լահոռից և Հնդկաստանի մյուս վայրերից Բոմբեյ «հրավիրելը» ունեցել է իր նպատակը, որը պարզ կերպով շարադրված էր Ընկերության մի փաստաթղթում: Անգլիացիները նպատակ են ունեցել հայերի միջոցով Բենգալիայի, հատկապես Հուգլիի և մյուս շրջաններից բերվող ապրանքները Եվրոպա արտահանել Բոմբեյի վրայով: Բոմբեյի խորհուրդը անդամ Լոնդոնից հրաման է ստացել ամեն կերպ աջակցել և պաշտպանել հայերին, նրանց ապրանքը տեղափոխել Եվրոպա՝ անգլիական նավերով, ընդհանուր առմամբ հայերի համար ստեղծել շուկա և այլն[3]:

18-րդ դարի կեսերից Բոմբեյում գործում էր հայկական առևտրական ընկերություն, որը Հնդկաստանի տարբեր քաղաքներում հաստատված հայերին կազմակերպված ձևով ապրանքներ, հատկապես հակերով մետաքս էր ուղարկում՝ փոխադարձաբար ստանալով այդ քաղաքների տեղական արտադրանքները և դրանք իր հերթին ուղարկելով Ասիայի և Եվրոպայի մի շարք երկրներ[4]:

Սակայն այն գաղթօջախը, որի ստեղծմանը նպաստեցին անգլիացիները, «միայն վաղանցիկ փառքով մը փայլելե ետք չիջավ և կորսնցուց շատ բան...»[5]: Դրա պատճառների սպառիչ պատասխանը տվել է Ա. Ալպոյաճյանը. «Անգլիացիք նպաստավոր կերպով հովանավորեցին հայերը, որչափ ատեն որ անոնցմե օգուտ մը կսպասեին: Հայերը խաբվեցան այդ ժամանակավոր հովանավորութենեն, զոր անգլիացիք ընծայեցին, վասնզի անգլիացիք անմիջապես, որ ամրապես տեղափոխվեցան, հայե-

---

1 S e t h M. Armenians and the East India Company, Calcutta, 1926, p. 4.

2 Նույն տեղում, էջ 5–6:

3 Brices Annaes of the Honrable EastIndia Company, vol. 1, p. 325.

4 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա. Պատմութիւն հայ գաղթականության, հ. Գ, էջ 358:

5 Նույն տեղում, էջ 361:

րեն երես դարձուցին և մրցակիցներ դարձան հայոց և ուզեցին ընկճել հայ վաճառականները իբրև վտանգավոր հակառակորդներ: Եվ հաջողեցան առանց այլևայլի հայերուն միայն փչրանքներ թողուլ: Հնդկահայ գաղութը մեծապես ընկճեցավ»[1]:

Անգլիացիները նպատակ են ունեցել հայ վաճառականների միջոցով պարսկական մետաքսը նույնպես Եվրոպա ուղարկել Բոմբեյի վրայով: «Այս իրավունքները հայերին տալը,– կարդում ենք Ընկերության փաստաթղթերից մեկում,– պետք է իրականացվի այն պատճառով, որ հայերը առևտրական գործարքներն իրականացնում են սեփական կապիտալով և փոխատվություններով, որոնք տրվում են տեղացիներին փոքր շահով և հավաքվում այնպիսի մեթոդներով, որ չեն առաջացնում նրանց զայրույթը: Նրանք գնում և վաճառում են առավել անհրաժեշտ այն ապրանքները, որոնք կարող են Բոմբեյը վերածել հայերի համար առևտրական կենտրոնի: Դրա տնտեսական շահը ընկերության համար անհաշիվ կլինի»[2]: *Ընկերությունն անգամ առաջարկել է տաֆտայի Բոմբեյ բերելը խրախուսելու համար հայերին տալ 30 տոկոս շահ*[3]:

Անգլիացիները շահագրգռված էին ոչ միայն հայ վաճառականներով: Նրանց հետաքրքրում էին նաև հայ արհեստավորները: Հավանաբար, դա էր պատճառը, որ Լոնդոնում Ընկերության ղեկավարությունը առաջարկել էր նաև նոր կառուցվող Մադրասի մի թաղամասը հանձնել հայերին, որոնք կարող են համոզել իրենց հայրենակից վարպետ արհեստավորներին գալ և բնակություն հաստատել այնտեղ: Նույն գրությունով առաջարկվել է հայերին թույլատրել (իրենց հաշվին հողի վարձը վճարելու պայմանով) եկեղեցի կառուցել: Նույնիսկ խորհուրդ է տրվել թաղամասը, հայերին սիրաշահելու համար, կոչել նրանց հայրենի Նոր Ջուղայի անունով[4]:

Հայտնի է, որ անգլիական կառավարության 17-րդ դարի վերջերին հատուկ խարտիայով Արևելա-հնդկական ընկերությունը իրավունք ստացավ զորք հավաքագրել: Ընկերությունը սկզբնական շրջանում աշխատում էր այդ զորքերը կազմավորել տեղի քրիստոնյաներից և եկվոր տարրերից, որպեսզի վստահելի բանակ ունենա: Այդ նպատակով

---

1 *Նույն տեղում, էջ 361–362:*

2 *Տե՛ս* The English factories in India, p. 297:

3 S e t h M. J. Armenians and the EastIndia Company, p. 8.

4 *Նույն տեղում:*

5 Т а т а р и н о в а К. Н. Очерки по истории Англии, М., 1958, с. 205.

Լորդերի պալատը խորհուրդ տվեց վարձել հայ զինվորներ՝ տալով նրանց ճանապարհածախսը, կառավարական պարգևատրում և անգլիական զինվորներին հավասար աշխատավարձ[1]:

Կարճ ժամանակ անց Բոմբեյում իր ակտիվ գործողությունն սկսեց ծավալել հայ գաղթօջախը, որը նոր բարձրացող քաղաքի առևտրական կյանքում ուներ իր որոշակի տեղը: Շուտով Բոմբեյի հայերը տնտեսապես այնքան զորացան, որ 1668–1670 թթ. դրեթե ամբողջությամբ գնեցին անգլիացիների կողմից Բոմբեյ բերված ողջ մահուդը[2]:

Գնալով քաղաքն իր վրա վերցրեց Սուրաթի դերը: Պարսից ծոցից եկող նավերի համար, որոնցով հայերը հասնում էին Հնդկաստան, առաջին կայան դարձավ Բոմբեյը: Այստեղ էին հավաքվում առաջին եկվորները, ապա ցրվում Հնդկաստանի հայաշատ քաղաքները:

Հայկական ոչ մեծաթիվ գաղթօջախներ են եղել նաև Հնդկաստանի այլ քաղաքներում: Նոր գաղթօջախների հիմնումը կապված էր գործունեության նոր շրջանակներ փնտրելու և անգլիական հալածանքներից խուսափելու հետ:

Դաքա – Առևտրաշահ այս քաղաքում առաջին անգամ սկսել են հաստատվել «եղբայրությամբ միաբանված» մի խումբ ջուղայեցիներ, 18-րդ դ. սկզբին: Առաջին հայերն են եղել Ավետիս Ղազարը, Առաքել Խաչիկը, Մարգար Բալթազարը, Խոջա Թոմմասը և ուրիշներ:

Դաքայի հայերը սկզբում գործել են պորտուգալացիների հետ, բայց շուտով ձեռք են բերում հողային մեծ տարածություններ (նրանցից Մարգար Պողոսը ուներ հինգ գյուղեր)[3] և կազմակերպում ջուլհի մշակություն: Այնքան է մեծ եղել ջուլհի մշակման գործում հայերի դերը, որ նրանց համարում են ջուլհի մշակման և արտադրության կազմակերպման «սիմոնները» Հնդկաստանում: Ինչպես Հնդկաստանի շատ վայրերում, այնպես էլ Դաքայում հայերն ապրել են հավաքական կերպով «Արմենոլա» (Հայկական) փողոցի վրա:

Սկզբնական շրջանում հայերը եկեղեցի չունեին, նրանք հաճախում էին պորտուգալական եկեղեցի, որի բակում կան հայկական գերեզմաններ՝ 1714 թվից: Քաղաքի գաղթօջախը սկսել է մարդաշատ դառնալ 18-րդ դ. 70–80-ական թվականներից: Մեծահարուստներ Միքայել Սարգսի, Աստվածատուր Գևորգի, Խոջա Պողոսի և Մարգար Պողոսի ծախսե-

1 Bruces Annals of the Honorable East-India Company, vol. II, p. 617 -618.
2 C e r s o n J. The Origin of Bombay, London, 1900, p. 258.
3 S e t h M. J. Aremnians in India. AI, p. 571-573.

րով Հայկական փողոցի վրա 1781 թ. կառուցվել է հայկական եկեղեցի: Ենթադրվում է, որ դրանից առաջ հայերն այստեղ ունեցել են փայտակերտ մատուռ:

Դաքայի հայության հետագա պատմության մասին քիչ բան է հայտնի: Տեղի քահանայի թողած տվյալներով, այստեղ 1876 թ. կար 90 անձից բաղկացած 25 տուն հայ, իսկ 1917 թ.՝ 10 տուն հայ՝ 41 անձերով[1]:

Հայկական փոքրիկ գաղթօջախ է եղել Բենգալիայի հին մայրաքաղաք Մոնգհիրում: Այստեղ հաստատված հայերը ծառայում էին Բենգալիայի արքունիքում, զբաղվում վաճառականությամբ: 1756–1763 թթ. այստեղի հայերը հմուտ զինագործներ էին:

Փոքր, բայց իր նշանակությամբ զգալի է եղել հայկական գաղթօջախը Հուգլիում: Դեռևս Աքբարը իր կառավարման տարիներին Հուգլիի կառավարիչ «ջագիրդար» է շնորհել իր պալատի աչքի ընկնող ծառայող Հակոբին, իսկ Աքբարի ժառանգների օրոք «ջագիրդարության» իրավունքներն անցան նրա որդուն՝ Զոզ Գարնայնին:

Հուգլիի կառավարիչ Սեիդ Աբդուլա խանը 1720 թ. Մորշիդաբադ ուղարկած իր մի զանգայի մեջ հաստատում է, որ հայերը ընդամենը 5 տոկոս մաքս էին վճարում, որը հետագայում դառավ 5,5 տոկոս: Հուգլին հանդիսացել է մի յուրօրինակ կենտրոն, ուր հայերը միջնորդի դեր են խաղացել Հնդկաստանի տարբեր շրջանների ապրանքափոխանակությունում:

Թեև փոքրաթիվ, բայց ազդեցիկ հայկական համայնք է եղել Դելիում: Դելիի հայերի մեծ մասը թագավորական ծառայության մեջ գտնվող դիվանագետներ, թարգմանիչներ, բժիշկներ, խոշոր վաճառականներ էին: Մեծ չէր նաև Նսրովարի հայության թիվը: Մեզ հասած հայատառ երկու արձանագրություններ վերաբերում են 1743 և 1750 թթ.: Քաշմիրում եղած հայերը նույնպես մեծաթիվ չէին: Այստեղ է, ըստ ավանդության, Աքբարը հանդիպել տեղի նշանավոր վաճառական Իսկանդար Զուղայեցու տղային, որին որդեգրել է և տվել Զուլ Գարնայն անունը:

Հայկական ոչ մեծ համայնքներ են եղել Մոլթան, Փեշիվար, Բենարես *և տասնյակից ավելի այլ քաղաքներում:*

---

1 *Թ. ա ր ք ե պ. Գ ո ւ շ ա կ յ ա ն, Հնդկահայք, էջ 183–184:*

* * *

Հնդկաստան թափանցող եվրոպացիները շուտով համոզվեցին, որ ի դեմս հայերի Հնդկաստանի առևտրում ունեն լուրջ մրցակիցներ: Հնդկական ներքին և արտաքին առևտրում հիանալի մասնագիտացած, գնվող և վաճառվող ապրանքներին քաջատեղյակ, երկրի կառավարական շրջաններում վստահություն վայելող հայ վաճառականների համար ստեղծվել էին բարենպաստ պայմաններ, որից օգտվելով՝ նրանք ընդլայնում էին իրենց առևտրական շրջանառությունները: Սկզբնապես եվրոպացիները, իրազեկ լինելով հայ վաճառականների՝ Հնդկաստանում գրված դիրքին ու կապերին, աշխատում էին օգտագործել դրանք: Ինչպես նշվեց, նրանք միայն հայերի միջամտության շնորհիվ իրավունք ստացան Հնդկաստանի զանազան վայրերում ֆակտորիաներ կառուցելու: Արևելա-Հնդկական ընկերությունը, հայերի կապերը և հնարավորություններն օգտագործելու նպատակով, Սուրաթում 1688 թվականին հայ առևտրականների ներկայացուցիչ խոջա Փանոս Բալանթարի հետ համատեղ գործելու պայմանագիր է կնքում[1]: Արևելա-Հնդկական ընկերության կողմից հայերին տրված առանձնաշնորհումները կոնկրետ ձևակերպված են պայմանագրի երկրորդ կետում. «Նրանք (հայերը – Ռ. Ա.) ազատ իրավունք ունեն բնակվելու Ընկերության բոլոր քաղաքներում, ավաններում և կայաններում: Առևտուր անել և կալվածքներ ստեղծել, տներ կառուցել, քաղաքային (վարչության ներում) պաշտոններ և աստիճաններ ստանալ, ինչպես անգլիացի ծնվածները: Ունեն իրենց կրոնը պաշտելու բացարձակ ազատություն... Հայերից հարկեր և տուրքեր պետք է առնվեն ոչ ավելի, քան այն, որը գանձվում է Ընկերության պաշտոնյայից կամ ծնունդով անգլիացուց»:

Ժամանակի ընթացքում անգլիացիները, որոնց այլևս պետք չէին առևտրի ասպարեզում «հայ դաշնակիցները», սկսեցին նրանց ենթարկել բացահայտ կազմակերպած հալածանքների և հետապնդումների: Հնդկահայերի նկատմամբ հալածանքների պլանը մշակվում էր Լոնդոնում: Հայերի նկատմամբ կազմակերպված բազմաթիվ հալածանքներից մեկի մասին է խոսում անգլիական Արևելա-Հնդկական ընկերության նշանավոր ծառայող Վ. Բոլթսը. «Հարյուրավոր ուրիշ մարդկանց նման, որոնք ապրում են Հնդկաստանում, հայերը նույնպես զբաղվում են իրենց խաղաղ առևտրով Բենգալիայի սահմանակից շրջաններում, որոնք

---

1 Պայմանագիրն ամբողջությամբ տպագրվել է «Ազդասեր»-ում (տե՛ս 1846, №№ 37, 38, 39, 40):

զավթվել են Ընկերության կողմից: Հայերի այդ առևտուրը մեծապես վնասում էր նահանգապետի և նրա բարեկամների շահերին: Կալկաթայի խորհուրդը որոշեց լիկվիդացնել հայերին: Ընկերության զինվորները հանկարծակի ձերբակալեցին հայերից շատերին՝ խլելով նրանց ունեցվածքը: Ձերբակալվածներին մի քանի ամիս պահեցին բանտերում՝ չներկայացնելով ոչ մի մեղադրանք: Այդ հայերի ընտանիքներին հասցրին ծայրահեղ աղքատության»:

1746 թ. Մադրասի ծովափին մոտ անգլիական ադմիրալ Գրիֆֆին զենքի միջոցով, ծովահենային մեթոդով բռնագրավեց հայկական մի առևտրանավ՝ 120.000 ռուպի արժողությամբ ապրանքով[1]: Անգլիական դատարանը արդարացրեց ծովահեն ադմիրալին, ասելով, որ նա խլել է «թշնամու նավ»: «Դաշնակից» հայերն անգլիացիների համար արդեն դարձել էին «թշնամի»:

Հայտնի են տասնյակ նման այլ դեպքեր ևս: Դա էր հիմնական պատճառը, որը հայերին ստիպեց զենք առնել և հնդիկ ժողովրդի հետ կողք կողքի կռվել ընդհանուր թշնամու դեմ: Հայերի զանգվածային մասնակցությունը հնդիկ ժողովրդի հակաանգլիական պայքարին տեղի է ունեցել Բենգալիայում՝ 1756–1763 թթ., որի մանրամասն նկարագրությունը տվել է դեպքերին ժամանակակից Թովմաս Խոջամալյանը[2]:

18-րդ դ. 40–50-ական թվականներին անգլիական ազդեցությունը Բենգալիայի և նրա հարևան Բիհարի ու Օրիսսոյի վրա դարձավ բացարձակ տիրապետող, այն աստիճանի, որ այդ մարզերում առևտուր անելու համար հնդիկներն ու հայերը պետք է ստանային անգլիացիների թույլտվությունը[3]: Բենգալիայի նավաբ Ալլահվերդին երկրում առևտրով զբաղվող բոլոր առևտրականների իրավունքները հավասարեցրեց, իսկ նրա հաջորդ Սիրաջ ուդ Դոուլին գործեց ավելի վճռական. զորքով հարձակվեց նավաբի հրամանին չենթարկվող անգլիական ընկերության կենտրոն Ֆորտ Վիլյամի (Կալկաթա) վրա, ավերեց այն և անգլիացի անկոչ հյուրերին դուրս շպրտեց այնտեղից: Ինչպես վկայում են այս իրադարձությունների ականատեսները, Ֆորտ Վիլյամի վրա գրոհող հնդկական զորքերի մեջ կային նաև հայ աշխարհազորա-

---

1 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա. Պատմություն հայ գաղթականության, հ. Գ, էջ 308:

2 Տե՛ս Խ ո ջ ա մ ա լ ե ա ն Թ. Պատմութիւն հնդկաց, Կալկաթա, 1841:

3 А б р а м я н Р. Армянские источники по истории Индии в 18-ом веке, Ереван, 1968, с. 345.

յիններ[1]: Հայկական զորաջոկատը կազմված էր ոչ թե վարձկաններից, այլ կամավոր աշխարհազորայիններից:

Մադրասից և Հնդկաստանի մյուս շրջաններից Բենգալիա ժամանած անգլիական զորքերը և տեղի անգլիամետ ռաջաների միացյալ զորքերը պարտության մատնեցին Սիրաջ ուդ Դոուլին և նրան փոխարինեցին նախ՝ Միր Ջահարով, ապա՝ Միր Քասիմով (Քասուլ Ալի խան): Վերջինիս նավար դառնալուն մեծապես նպաստեցին հայերը[2]: Նոր նավաբը, իշխանության գլուխ անցնելով, ի տարբերություն իր նախորդի, ուզում էր իր երկիրը կառավարել ինքնուրույն: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր հավատարիմ դաշնակիցներ գտնել, կանոնավոր զինված ու վարժեցրած բանակ ստեղծել, վերացնել երկրի տնտեսությանն ու առևտրին խանգարող արգելքները և այլն: Միր Քասիմը նպատակին հասնելու համար իր շուրջը համախմբեց Բենգալիայի հայրենասերների մի խումբ, որի մեջ կային շատ հայեր՝ Գրիգոր Հարությունյանի գլխավորությամբ, որը հետագայում Հնդկաստանի դահակալ Ալի Գոուհարի (Շահ Ալիմ 2-րդ – 1759–1806) կողմից ճանաչվեց որպես Բենգալիայի, Բիհարի և Օրիսսոյի զորքերի գլխավոր հրամանատար և ստացավ Գորգին խան անունը[3]: Գր. Հարությունյանի հայրը և ավագ եղբայրը Հնդկաստանում մեծ ճանաչում ունեցող վաճառականներ էին, ինքը ևս երիտասարդ տարիներին Մորշիդաբադում զբաղվել էր առևտրով: Երեսուն տարեկանում դառնալով Բենգալիայի զորքերի գլխավոր հրամանատար՝ մինչև իր եղերական մահը հավատարմորեն ծառայեց հնդիկ ժողովրդի շահերին:

Հնդկահայերից շատերը, հատկապես նրանք, որոնք դժգոհ էին անգլիացիների վարած քաղաքականությունից, արագ կերպով սկսեցին համախմբվել իրենց հայրենակցի շուրջը: Նրանցից շատերին նավաբի կողմից վստահվեցին զինվորական և տնտեսական բարձր պաշտոններ: Ուսումնասիրողներից ոմանք համոզված են, որ անգլիացիների դեմ մղված պայքարում Գորգին խանը իր հայրենակիցներից ստանում էր ֆինանսական մեծ օգնություն[4]: 1760 թ. սկսած՝ շատ արագ մեծացավ հայ կամավորների ջոկատը:

---

1 D o d w e l l H. H. The Cambrige history of India, London, 1929, vol. V, p. 147.

2 А н т о н о в а К. А. Английское завоевание Индии в 18-ом веке, М., 1961, с. 85.

3 *Խ ո ջ ա մ ա լ յ ա ն Թ. նշվ. աշխ., էջ 75:*

4 А н т о н о в а К. А. *նշվ. աշխ., էջ 94:*

Նավաբի և Գորգին խանի առաջին գործը եղավ կանոնավոր և մարտունակ բանակ ստեղծելը, որի կազմում հավաքվեցին 15.000 հեծյալ և 25.000 հետևակ զինվորներ[1]: Հնդկաստանի պատմության ուսումնասիրող Մարշմանը, խոսելով այս բանակի և նրա թնդանոթների ու զենքի մասին, գրում է, որ «այն կարող էր պատիվ բերել Ընկերության ցանկացած բանակի»[2]:

Բենգալական բանակի հրամանատարության մեջ մեծ թիվ էին կազմում նրա հայազգի հրամանատարները: Ֆրանսիացի Ռայմոնդը հատկապես գովեստով է խոսում Մարգար Քալանթարյանի մասին. «Այս հայը զինվորական կրթությունը ստացել էր Հոլանդիայում և մի անգամ չէր, որ ցույց էր տվել իր ռազմական տաղանդը: Իր վրա դրված աջադրանքները, անգամ կրիտիկական պահերին, նա կատարում էր ընթացքից, վճռականորեն»[3]: Աղբյուրները մեծ գովեստով են խոսում նաև Հարությունն Մարգար Նոր Ջուղայեցու մասին. «Միր Քասիմի այս գեներալը,– նշում է Մարշմանը,– իր անունը փառաբանեց անգլիացիների դեմ մղված պատերազմներում»[4]:

Թ. Խոջամալյանը, որն այս իրադարձությունների գլխավոր սկզբնաղբյուրն է, հիշում է նաև բենգալական բանակի բարձրաստիճան հրամանատարներ «գեներալներ» Գրիգոր նահապետ Այվազյան Նոր Ջուղայեցուն, Պետրոս Աստվածատրյանին, Սուքիաս Ավետիսյան Ատրպատականցուն, Հովհաննես Նազարեթյան Թավրիզեցուն, Ղազար Հակոբյանին: Սրանց կողքին հիշվում են նաև հարյուրապետներ Մկրտիչ Զաքարյանը, Մելքոմ Աստրախանը, Գրիգոր և Հակոբ Ջուղայեցիները[5]: Մինչև Գորգին խանի բենգալական բանակի գլխավոր հրամանատար դառնալը հայ կամավորների թիվը 240 էր[6], հետո ավելացավ:

Բանակի կազմավորումից հետո Գորգին խանի առջև հառնում է շատ դժվարին մի խնդիր եւ: Անհրաժեշտ էր բանակը զինել իր ժամանակի զենքով: Գորգին խանը Բենգալիայի հին մայրաքաղաք Մոնգհիրում հնդիկ և հայ զինագործների ջանքերով կարողացավ կազմակեր-

---

1 Խոջամալեան Թ. նշվ. աշխ., էջ 71:

2 Marchman J. C. The history of India from the earliest period to the close of Lord Daehouses administrator, 1871, p. 301.

3 «Բազմավեպ», Վենետիկ, 1880, էջ 240–241:

4 Marchman J. C. նշվ. աշխ., էջ 301:

5 Խոջամալեան Թ. նշվ. աշխ., էջ 82–83:

6 Bolts. նշվ. աշխ., էջ 306:

պել զենքի արտադրություն[1]: Հնդիկ նշանավոր գիտնական և գրող Զաթերջին այդ մասին գրում է. «Բարձրանալով բենգալական բանակի գլխավոր հրամանատարի բարձր պաշտոնին՝ Գորգին խանը կարողացավ կազմակերպել թնդանոթաձիգ զինվորների ջոկատներ, մարզեց և հանդերձավորեց եվրոպական զորքերի մեթոդներով: Թնդանոթները և հրացանները, որոնք նա արտադրեց, իրենց որակով գերազանցում էին եվրոպականին»[2]: Մոնգհիրի զորանոցներում արտադրվում էին նաև վառոդ, արկեր, ատրճանակներ:

Կազմակերպված բանակ ստեղծելուց և զինելուց հետո Բենգալիայի ղեկավարությունը, անգլիացիների դեմ վճռական գործողությունների անցնելուց առաջ, սկսեց ամրապնդել իր սահմանները: Ռազմական բոլոր գործողություններին, ինչպես վկայում են աղբյուրները, ակտիվ մասնակցություն են բերել հայ հրամանատարները և Հայկական զորաջոկատը[3]:

Ռազմական միջոցառումներից հետո Բենգալիայի ղեկավարությունը անցավ տնտեսականին: Անգլիացիներին մյուսներին հավասար վիճակի մեջ դնելու համար վերացրեց «դաստակներով» (առևտուր անելու թույլտվության փաստաթուղթ) առևտուրը, որը հնդիկ, հայ, պարսիկ առևտրականներին դնում էր հավասար իրավիճակի մեջ[4]:

Բենգալական կառավարության այս որոշումը ծանր հարված էր հասցնում Հնդկաստանում գործող անգլիական Ընկերությանը: Բանակցությունների ճանապարհով հաջողության չհասնելով՝ Կալկաթայի անգլիական Ընկերությունը որոշեց զենքի ուժով լուծել խնդիրը: Անգլիացիները որոշեցին հանկարծակի հարձակումով գրավել Մոնգհիրը, Փաթնան և բենգալական մյուս կենտրոնները և թելադրել իրենց կամքը: Անգլիական 4.600 հոգիանոց բանակը հանկարծակի դրոհով գրավեց Փաթնա ամրոցը: Բենգալական բանակը, իր հերթին, հանկարծակի դրոհելով՝ շրջապատեց քաղաքը գրված անգլիական զորքերին. քաղաքի մեջ էին Մարգար Քալանթարյանի և Հակոբ Ղազարյանի գնդերը: Քաղաքը շրջապատողների թվում էր նաև հայկական զորաջոկա-

---

1 S e t h M. J. Gorgin Khan (Khoja Gregor, the Armenians commander and the minister of Navab Mir Casim of Bengal), Calcutta, 1929, p. 7-8.

2 M a r c h m a n J. *Նշվ. աշխ., էջ 301–302:*

3 *Խ ո ջ ա մ ա լ է ա ն Թ. Նշվ. աշխ., էջ 86:*

4 Dutt R. The economic histroy of Bengal, London, 1907, p. 192.

տը[1]: Բենգալական բանակը գրոհով հետ առավ Փաթնան: Անգլիացիները տվեցին 370 սպանված, չհաշված վիրավորներին[2]:

Բենգալական բանակի գրոհը ղեկավարում էր Մարգար Քալանթարյանը, որն արժանացավ զինվորական բարձրագույն գնահատականի՝ «Զախմախջադի» կոչման: Ի պատիվ հայկական զորաջոկատի բարձրացվեց խաչի նշանով դրոշ[3]:

Հայ հրամանատարները և հայկական զորաջոկատը ակտիվ մասնակցություն ունեցան նաև հետագա իրադարձություններին: Նահանջող անգլիական զորքերի մնացորդներին և նրանց միացած անգլիական ջոկատներին հնդիկները շրջապատեցին Սոցհնի դաշտում՝ Գանգեսի ափին: Հայկական զորաջոկատը շրջապատողների մեջ էր: Իրենց զորաջոկատներով այստեղ էին նաև Զաքարիա Ջուղայեցին, Մելքոմ Աստրախանցին, Նիկողայոս Երևանցին: Թեթև հաղթանակների սովոր անգլիացիները առաջին իսկ գրոհից հետո զենքը վայր դրեցին[4]: Հակաանգլիական պայքարի այս օրերին շատ բարձրացավ Գորգին խանի հեղինակությունը: «Միր Քասիմին միանալ սկսեցին,– գրում է Կ. Անտոնովան,– անգլիական վայրագություններից դժգոհ տարրերը... Նավաբին մեծ օգնություն էին ցույց տալիս Գևորգ (այդպես է Գորգին խանին կոչում նա, նախկինում՝ հայ զամինդար) խանի ռազմական ուժերը, որոնք ֆինանսական օգնություն էին ստանում Կալկաթայի հայ վաճառականներից»[5]:

Այս անհաջողություններից հետո Կալկաթայի խորհուրդը փորձեց գաղտնի բանակցություններ վարել հայերի հետ և նրանց գրավել իր կողմը: Գորգին խանը հետևյալ պատասխանն է տվել խորհրդի առաջարկին. «Աստված հեռու պահի ինձ նման ստոր գործ կատարելուց: Նման ստոր, անօրեն արարքը հեռու է հայ մարդուց: Հայ մարդը ում որ ծառայում է, ծառայում է հավատարմորեն մինչև վերջ»[6]:

Հաջորդ բոլոր իրադարձություններին հայերը շարունակում են ցույց տալ ակտիվ մասնակցություն: Վճռական ճակատամարտը բենգալական բանակի և անգլիացիների միջև տեղի է ունեցել Գանգեսի

---

1 Խ ո ջ ա մ ա լ ե ա ն Թ. նշվ. աշխ., էջ 90–91:
2 Նույն տեղում, էջ 91:
3 Նույն տեղում, էջ 91–92:
4 Նույն տեղում, էջ 94:
5 А н т о н о в а К. А. նշվ. աշխ., էջ 94:
6 Խ ո ջ ա մ ա լ ե ա ն Թ. նշվ. աշխ., էջ 93:

վտակներից մեկի դաշտում: Փոփոխակի հաջողություններով այն տևել է քառասուն օր: Հնդիկները այս ճակատամարտում տարել են մի շարք փայլուն հաղթանակներ: Նրանցից մեկի՝ Ուղխունալոյի կռիվների մասին Մարշմանը գրել է. «Բենգալական բանակը դեռ ոչ մի անգամ նման խիզախությամբ չէր կռվել, որքան այս ճակատամարտում: Հնդիկներին հաջողվեց անգլիացիների թիկունքը անցնել և խլել երկու թնդանոթ»[1]: Այս և հաջորդ մի քանի հաջողությունները դժբախտաբար չզարգացվեցին: Ճակատամարտը գլխավորող բենգալական բանակի հրամանատարներից մեկի՝ էլգասցի բախտախնդիր սմոդի դավաճանության պատճառով բենգալական բանակը պարտվեց: Այս պարտությանը նպաստեց նաև բենգալական բանակի գլխավոր հրամանատար Գորդին խանի չարանենգ սպանությունը, որը նենգաբար կազմակերպեցին անգլիացիները: Բենգալական պարտված բանակի զինվորները, չցանկանալով այլևս մնալ Բենգալիայում, հեռացան այնտեղից: Նրանց մի մասը ծառայության անցավ հնդկական մյուս՝ դեռևս անկախ իշխանությունների բանակներում: Այս իրադարձություններից հետո անգլիացիների վարած քաղաքականության արդյունքը եղավ այն, որ Բենգալիայում սկսված սոսկալի սովը տարավ 10 միլիոն մարդկային կյանք:

Լոնդոնում լորդերի պալատը մշակեց հնդկահայերի նկատմամբ վարվելիք քաղաքականությունը: Հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները, կամայականություններն ու հալածանքները հասցրեցին նրան, որ նրանց մեծ մասը ստիպված անցավ Հնդկաստանի այլ շրջաններ և հարևան երկրներ, որոնք դեռ չէին ընկել անգլիացիների լծի տակ:

* * *

19-րդ դ. սկզբում հնդկահայ գաղթօջախների քարտեզը նախկինի համեմատ զգալիորեն փոխվել էր: Նրանցից շատերը կամ վերացել էին, կամ վերացման դռանն էին: Հնդկահայ գաղթօջախներից միայն Կալկաթան և Մադրասն էին, որ ոչ միայն չէին նվազել, այլև աշխուժացում էին ապրում, և հնդկահայ ազգային-մշակութային կյանքը կենտրոնացել էր այդ քաղաքներում: Կալկաթայի հետ է կապված հնդկահայ տպարանների, պարբերական մամուլի, դպրոցների, ազգային ու մշակութային միությունների և ընկերությունների գործունեությունը:

---

1 Антонова К. А. նշվ. աշխ., էջ 97:

19-րդ դ. սկզբներից սկսած փոխվել էր նաև հնդկահայ գաղթավայրերի սոցիալական պատկերը: Եթե առաջներում հայ բնակչության հիմնական մասը կապված էր առևտրի հետ, ապա այժմ հանդես էին եկել արհեստավորներ, զանազան հիմնարկություններում աշխատող գործավարներ, իրավաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ, օրավարձու բանվորներ և այլն:

Հայ առևտրականների մի մասը սնանկացավ չդիմանալով եվրոպական մրցակցությանը: Նրանցից միայն քչերը հասկացան ժամանակի ոգին, վերակառուցվեցին, աշխատեցին իրենց կապիտալը դնել արդյունաբերության մեջ, հիմնել գործարաններ և ֆաբրիկաներ: Եղան հայեր, որոնք, ինչպես նշվեց, միավորվելով հիմնեցին ազգային առևտրական միություններ և ընկերություններ. դրանք իրենց մասնաճյուղերն ունեին աշխարհի, հատկապես Արևելքի մի շարք երկրներում: Այդ ընկերություններն իրենց առևտրական գործարքներն իրականացնում էին սեփական հայանուն նավերով:

Երբ Ավստրալիայում բացվեցին ոսկու հանքերը, ու ոսկու տենդը համակեց նաև հնդկահայերին, շատ հայ վաճառականներ իրենց փրկությունը որոնում էին «ավետյաց երկիր» գնալու մեջ, սակայն առաջին իսկ գնացողները շատ կարճ ժամանակում կորցնում էին ունեցածը և հուսախաբ վերադառնում: «Բազումք ի մերազնէից,— գրում է «Եղբայրասեր»-ի խմբագիր Տեր-Հարությունյանը,— ի կողմանց գնացին անդ (Ավստրալիա — Ռ. Ա.) սակաւ ոսկոյ, ուր տարաբախտապէս գտան և ոչինչ, այլ ընդհակառակը կորուսին զոր ինչ և ունէին. ոմանք վերադարձան զուրկ ընչից... խորհրդակցեմ զի մի ոք ցանկացի վերստին գնալ անդ ի փորձ վիճակին իւրոյ»[1]:

Հնդկաստանի հայ գաղթօջախներում, մասնավորապես Կալկաթայի հայ համայնքում, բնակչության զգալի մասը 19-րդ դարում կազմում էին արհեստավորները. նրանց մեջ մեծ ճանաչում ունեին ոսկերիչները, որոնք պահում էին իրենց արհեստանոցները: Նրանք մեկ-երկու հոգով միանում և կազմում էին փոքրիկ համքարություն: Հայ ոսկերիչները Կալկաթայում այնպիսի համարում ունեին, որ շատ հաճախ պատվերներ էին ստանում ոչ միայն Հնդկաստանից, այլ նաև Եվրոպայի և Ասիայի երկրներից:

---

1 «Ուսումնասեր», Սինգապուր. 1853, № 90:

Հնդկահայ համայնքներում, մասնավորապես Կալկաթայում, նշանակալից թիվ էին կազմում իրավաբանները[1]: Նրանց մեջ մեծ հեղինակություն է ունեցել Քեմբրիջի համալսարանն ավարտած Գրիգոր Պոլը, որը ղեկավար պաշտոններ է վարել Հնդկաստանի բարձրագույն դատարանում: Նա է, որ պաշտպանել է Միքայել Նալբանդյանի՝ Մասեհ Բաբաջանյանի կտակի կապակցությամբ Կալկաթայի դատարանում հարուցած հայցը և շահել այն[2]: Ճանաչված իրավաբաններ էին նաև Հ. Առաքելը, Ս. Սարգիսը և ուրիշներ: Հայ բժիշկների նախասիրած ճյուղը եղել է վիրաբուժությունը:

19-րդ դարում ևս հնդկահայ գաղթօջախները տվեցին մի քանի հայտնի զինվորականներ, որոնցից ամենանշանավորը Հակոբ Պետրոսյանն էր, որը տարիներ շարունակ հավատարմությամբ ծառայել է Գլավիորի ռաջաներին: Տաուեդ Ռայոի կողմից նա արժանացել էր դնդապետի աստիճանի: Ռաջան նրա հրամանատարության տակ է դրել 12 հետևակային և 4 հեծելազորային գունդ՝ 150 հրետանիով: Հայ զորավարը փայլել է հատկապես 1843 թ. դեպքերից հետո, երբ հնդիկ ժողովուրդը կռվում էր անգլիական գաղութարարների դեմ: Նրա զինվորական տաղանդի մասին գովեստով են խոսում և երախտագիտությամբ հիշում ժամանակակից հնդիկ բարձրաստիճան զինվորականները[3]: Նրա բանակում կար հայկական փոքրիկ ջոկատ: Հնդկաստանից ուղարկված մի թղթակցության մեջ, ուր խոսվում է Հակոբ Պետրոսյանի մասին, ասված է. «Զինուոր էին ընդ նովաւ այլք բազումք ի հայոց ի նշանաւոր կարգս զօրականին»[4]:

Հոր ճանապարհով են գնացել նրա որդիները՝ Հովհաննեսը, Հակոբը, որը բարձրացավ մինչև գնդապետի աստիճանի և 1850 թվականին զոհ գնաց մի դավադրություն[5]: Տեղի հայկական գերեզմանատանը թաղված է մի այլ հայ բարձրաստիճան զինվորական՝ Հայդարաբադի զորքերի գնդապետ Մովսես Մանուկը, որը 1837–1851 թթ. եղել է Հայդարաբադի նիզամի աչքի ընկնող զինվորականներից մեկը[6]:

---

1 «Ազգասէր Արարատեան», 1848, հ. Ա, էջ 44:
2 Մատենադարանի արխիվ, անհատական ֆոնդ № 233, վավ. № 256:
3 «Ազգասէր Արարատեան», 1848, հ. Ա, էջ 44:
4 «Արմավենի», Գահիրե, Ա տարի, 1937–1938, էջ 224:
5 S e t h M. J. Armenians of Agra and Clavior, 1930, p. 9.
6 «Արմավենի», Ա տարի, էջ 224:

Կալկաթայի կենտրոնական փողոցներից մեկը կոչվում է «Հայկական»: «Հայկական» էր կոչվում Կալկաթայից ոչ հեռու գտնվող լեռնաշղթաներից մեկը: Կալկաթահայ նշանավոր դեմքերից մեկի՝ Սարգսի անունով է կոչվում Կալկաթայի մի այլ փողոց: «Հայկական» է կոչվել Կալկաթայի խոշոր նավահանգիստներից մեկը, ուր կանգնում էին հայերի նավերը:

Հնդկահայ գաղթօջախների սոցիալական տարբեր խավերի մեջ կար որոշակի ձևավորված շերտավորում և ներքին պայքար. այն մասամբ արտացոլում է գտել հնդկահայ մամուլում: Ըստ տեղեկությունների, Կալկաթայում որոշակիորեն ձևավորվել էր երկու խմբավորում. մեծահարուստների՝ Մարտիրոս Մկրտչյանի և այսպես կոչված «ռամիկ»-ների՝ Հովսեփ Ստեփանյանի գլխավորությամբ: Հակոտնյա այս խմբավորումների պայքարը ծավալվել էր հատկապես համայնքի վարչության ընտրության հարցում: Եղել են դեպքեր, երբ աշխատավորության ներկայացուցիչները հրաժարվել են ընտրություններին մասնակցելուց այն պատճառաբանությամբ, թե «... էս ա որ ասում ան՝ խեղճ մարդիքըն որ ժողովումն վոտ (քվե) չունինք, գնանք, ինչ առենք. ուրենք ում կամենան՝ ընտրում ան»: Ըստ որում, խուլ բողոքներ են եղել թե՝ «...չում ե՞ըբ պիտի կոմիսարքն հարուստիքն ընտրվեն»[1]: «Եղբայրասեր»-ի թղթակիցներից մեկը, խոսելով հակառակորդ հարուստ խավի ներկայացուցիչների մասին, գրել է, թե նրանցից «հազար կամ երկու հազար ռուփոյ կարողութեան տէրը, մեծ համարում ունենալով, կբռանանայ ի վերայ չքաւորաց և աղքատաց...»[2]:

1820 թ. համայնքի նվիրաբերած դրամներով և կալկաթաբնակ Հարություն Պետրոսի թողած գումարով Կալկաթայում հիմնվեց աղքատանոց[3]: Աղքատանոցի միջոցները հետագայում համալրվում էին զանազան հանգանակությունների, նվիրատվությունների կտակարարների թողած դրամների միջոցով: Այդ աղքատանոցում ձրի խնամք էին ստանում հարյուրավոր հայեր: Աղքատանոցն ունի «Հյուրանոց», ուր գաղթական հայերը երեք ամիս ձրի բնակվում են:

1806 թ. Մադրասում լույս է տեսել «Անցք կամ գործիք» վերնագրով Մադրասի հայ գաղթօջախի պատմության համար արժեքավոր ժողովածու, ուր ամփոփված են Մադրասի հայկական համայնքի ժողովնե-

---

1 «Շտեմարան», Կալկաթա, 1822, էջ 69:

2 «Եղբայրասեր», 1862, № 2, էջ 224:

3 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա. Պատմություն հայ գաղթականության, հ. Գ, էջ 334:

րի արձանագրությունները: Այդ արձանագրություններից երևում է, որ գաղթօջախն ապրել է հասարակական ակտիվ կյանք, համայնքի ժողովներում քննարկվել են հրատապ շատ հարցեր, որոնց թվում նաև՝ Հայաստանի ազատագրման հարցը: Ելույթ ունեցողների մեծ մասը հանձին Ռուսաստանի տեսել է այն ուժը, որը «կարկառել է ձեռքը առ փրկութիւն և ազատութիւն մեր»[1]: Ուշագրավ է, որ հռետորներից մեկը կոչ է արել հայ ժողովրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքի համար հնդկահայերի անունից շնորհակալան գիր ուղարկել Ռուսաստանի «մարդասէր և օրհնեալ» կառավարությանը[2]:

Հայաստանում հաստատվելիք կարգի մասին հնդկահայ գաղթօջախներում գոյություն է ունեցել երկու կարծիք. նրանցից մեկը չափավոր է եղել, իսկ մյուսը՝ ակտիվ: Ակտիվ հոսանքի կողմնակիցները գտնում էին, որ «Ամենայն քաղաքացիքն համախմբեալ օգնականութիւն ուղարկեն առ տունն Հայոց՝ թէ պաշտօնեայ, թէ դրամ, թէ արհեստավոր, թէ զէն, ինչ որ կարողանան ուղարկեն»[3]:

«Շտեմարանի» խմբագիրը, որն ավելի հակված էր դեպի այն խումբը, որը հույսը դրել էր Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրության վրա, հրապարակում է կաթողիկոսի կոնդակը Հայաստանի ծանր վիճակի մասին թուրքական լծի տակ և հորդորում Հայաստանի ազատագրության անհրաժեշտությունը՝ կոչ անելով. «Հայկազունք քաջալերացուք, միշտ ձմեռ չէ լինելոյ»[4]:

1827 թ. ռուսական զորքերի կողմից Երևանի գրավման և հայ ժողովրդի վրայից պարսկական դարավոր լծի թոթափման լուրը շատ արագ հասավ հնդկահայ գաղթօջախները՝ ուրախություն պատճառելով դրանց բոլոր խավերին: Հոգու անսահման հրճվանքով շնորհավորական բազմաթիվ նամակներ եկան հեռավոր Հնդկաստանից Էջմիածին: Մադրասահայերի կողմից Ներսես Աշտարակեցուն ուղարկված նամակում ի միջի այլոց ասված էր. «Անպատմելի ցնծութեամբ անձին, ամենազուարճ հրճուանօք սրտի և խանդաղատական բերկրանօք հոգւոյ ընդգրկեալ համբուրեցաք զաւետաւոր, զաւետաբեր... և պատմագրական ծանուցումն ազատութեան Հայրենեաց մերոց Աստուածընտիր մա-

---

1 Երեմյան Ա. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի Մադրասի դրոշակակիրները. «Էջմիածին», 1948, № 10–12, էջ 38:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 41:

4 «Շտեմարան», էջ 773:

սինն Հայաստանեայց աշխարհի և հոգևոր մօրն մերոյ սրբոյ աթոռոյն էջմիածնի ի յԱստուածապարտ զօրաց... Վեհափառ կայսերն ամենայն ռուսաց Նիկողայոսի... Ապաքէն այսուհետև Տունն Հայկայ պարտական և երախտապարտ է օրհնեալ և բարեբարոյ ազգին ռուսաց և տանն մեծի Պետրոսի...»[1]:

Շատ ջերմ ու հուզիչ շնորհակալական նամակ էր գրել Մեսրովբ Թաղիադյանը՝ ուղղված «Ազգասեր հասարակութեան Հայոց, փրկեալ քաղաքին Երևանայ»: «Աչքներդ հազար լոյս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն չարչարանքիցն ազատվեց, քրիստոնէից տէրութեան ներքոյ ընկավ...,– գրել է նա: –Իմ լավ քաղաքացիք, էսպէս երջանիկ բախտի, որ դուք եք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն և Արշակունի թագավորութեան ժամանակումն էլ չէին պատահել»[2]: Հնդկահայության պատկերացմամբ, արդեն եկել էր այն ժամանակը, երբ պիտի իրականանար հայ ժողովրդի դարավոր բաղձանքը՝ ստեղծվեր անկախ-ազատ Հայաստան: Սկսած հասարակ արհեստավորներից մինչև մեծահարուստ վաճառականներն այնպես էին ոգևորված կատարվածով, որ պատրաստակամություն էին հայտնում վերադառնալ իրենց պապերի թողած հայրենիքը և լծվել նրա լուսավորման, բարգավաճման գործին:

19-րդ դարի 30–40-ական թվականներին հնդկահայության մեջ քաղաքացիություն ստացավ հատկապես այն կարծիքը, թե հայ ժողովրդի կենտրոնավայրը պիտի դառնա Արարատյան Հայաստանը կամ այլ խոսքով՝ Ռուսիայի շնորհիվ ազատագրված հայ բնաշխարհը՝ Արարատի շուրջը սփռված հայաբնակ վայրերի հետ միասին:

Հնդկահայ գաղթօջախների հայրենասեր, առաջադեմ շրջաններին հուզում էր կարևոր մի հարց ևս: Նրանք լավ էին հասկանում, որ հայությունը Հնդկաստանում, հեռու մայրենի բառ ու բանից, օտար շրջապատում դատապարտված է «սուզվելու օտար ազգերի օվկիանոսում» և անհայտանալու: Հայության ազգային նկարագիրը պահպանելու միակ փրկարար ելքը մնում էր ազգային լեզվով դպրոցներ բանալը, ազգային մշակույթը զարգացնելը, եկեղեցին: Դեռևս 1797 թ. ազգային դպրոց բացելու գաղափար տվեց բարերար Մատուր Մուրադխանյանը: Նպատակն իրականացնելու համար բարերարը հատկացրեց 8.000 ռուպի: Դպրոց բացելու խնդիրը մինչև 1816 թ. բավական ժամանակ մնաց բաց:

---

1 Մաշտոցի անվան Մատենադարան, ֆ. Կաթող. արխիվ, թղթ. № 58, վավ. 303:

2 Նույն տեղում, թղթ. № 61, վավ. 788:

1816 թ. Սեպտեմբերում ապրող մի հայրենասեր ջուղայեցի նորից առաջ քաշեց ազգային դպրոց բացելու խնդիրը և այդ նպատակի համար նվիրաբերեց 20000 ռուբլի դրամ և կոչով դիմեց հնդկահայությանը՝ Կալկաթայում ազգային դպրոց բացելու նպատակով կազմակերպելու հանգանակություն: Մինչև այդ Մադրասում գործում էին Հարությունն Գալուստյանի և Սուրբ Սանդուխտ դպրոցները: 1821 թ. հայերի հավաքած դրամով Կալկաթայում բացվեց ազգային դպրոց, որը կոչվեց «Մարդասիրական ճեմարան»: Ճեմարանը մինչև 1842 թ. երկսեռ էր: 1847 թ. աղջիկների բաժինը, սովորողների պակասի պատճառով, փակվեց: Դպրոցն ուներ նաև դիշերօթիկ բաժին: Դիշերօթիկում մեծ մասամբ սովորում էին Իրանից, Հնդկաստանի մյուս քաղաքներից եկած հայ երեխաները: Զքավոր ծնողների երեխաների համար ուսումը ձրի էր: Սկզբնական շրջանում ճեմարանի ուսումնական ծրագրում ճնշող է եղել լեզուների դասավանդումը՝ գրաբար, անգլերեն, լատիներեն, հունարեն, ֆրանսերեն և պարսկերեն: Դասավանդել են նաև բնագիտություն, աշխարհագրություն, մաթեմատիկա և աստղաբաշխություն[1]:

Ճեմարանը ղեկավարվում էր համայնքի ընտրած հոգաբարձության կողմից: Ճեմարանի առաջին դեմքը գլխավոր վարժապետն էր: Այստեղ առաջին ուսուցիչներ են եղել Մարտիրոս Դավթյանը, Մեսրովբ Թաղիադյանը, Հովհաննես Ավդալյանը և ուրիշներ[2]:

Երկարամյա ընթացքում ճեմարանը տվել է հարյուրավոր շրջանավարտներ: Նրանցից շատերը հետագայում դառել են հայ մշակույթի ճանաչված երախտավորներ: Հայերի հետ Մարդասիրականում սովորել են նաև հնդիկ երեխաներ[3]:

Մարդասիրական ճեմարանում, աղջիկների բաժինը փակվելուց հետո, հայ աղջիկների ուսուցումը մինչ 1847 թ. մնացել էր բարձրթողի վիճակում: Մ. Թաղիադյանի ջանքերով 1847 թ. բացվեց «Սուրբ Սանդխտյան» աղջկաց դպրոցը: Գլխավոր ուսուցչուհին Շուշան Թաղիադյանն էր[4]: Դպրոցը կարճ կյանք ունեցավ: Դպրոցում հիմնականում սովորում էին լեզուներ, նկարչություն, երաժշտություն, տնարա-

---

1 Տե՛ս Կարգադրութիւնք Մարդասիրական ճեմարանին հայոց, որ ի Կալկաթա. «Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 1844, № 208:

2 Սանթրոսյան Մ. Լ. Արևելահայ դպրոցը 19-րդ դ. առաջին կեսին, Երևան, 1964, էջ 429:

3 Լազարևիչ Պ. Ստորագրութիւն Կալկաթա քաղաքին. Կալկաթա, 1849, էջ 29:

4 «Ազդասեր», 1849, հ. 1, № 25, էջ 40:

րություն, կար ու ձև[1]: Կալկաթայից Զիչրա տեղափոխված դպրոցը 1855 թ. Շուշան Թաղիադյանի մահից հետո փակվեց:

Կալկաթայում «Ս. Սանդխտյան» դպրոցին զուգահեռ գործել է հայ աղջիկների տնային դպրոց[2]:

1843–1860 թթ. Հայկական դպրոց է գործել նաև Մադրասում[3]:

1922 թ. Դավիթ Դավթյանի նվիրատվությամբ Կալկաթայում բացվել է «Դավթյան օրիորդաց վարժարանը», որը 1949 թ. միավորվեց «Մարդասիրական ճեմարանին»[4]:

Մադրասում է տպագրվել հայերեն առաջին պարբերականը «Ազդարարը» (1794–1796 թթ.): Պարբերականը հիմնադրել, խմբագրել և իր հիմնած տպարանում տպագրել է Հարություն քահանա Շմավոնյանը: «Ազդարարը» հրապարակել է կրոնաբարոյախոսական, պատմական, գեղարվեստական և այլ բնույթի հոդվածներ: «Ազդարարի» հրատարակած հոդվածների հիմնական ուղղվածությունը ջերմ հայրենասիրությունն է, մայր հայրենիքում ողջ հայությանը հավաքվելու բաղձանքը:

1822 թ. Կալկաթայում սկսում է լույս տեսնել «Շտեմարան» պարբերականը: «Շտեմարանի» խմբագիր-հրատարակիչն էր Մարտիրոս Շիրազեցի Մկրտչյանը: Պարբերականում հրատարակված նյութերը բազմազան էին: «Բարոյախոսական» հոդվածների կողքին, որոնցում բյուր օրինակ քննադատության են ենթարկվել «անխիղճ հարուստները» և պաշտպանվել են աղքատների իրավունքները, տպագրված են բազմաթիվ խառը նյութեր, թղթակցություններ, տեղեկություններ հայկական համայնքի ներքին կյանքի վերաբերյալ: Մեկ տարի հրատարակվելուց հետո պարբերականը փակվել է:

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Արարատյան ընկերության» Կալկաթայում հրատարակված «Ազգասեր» (1845–1848 թթ.) շաբաթաթերթը և նրա շարունակությունը կազմող «Ազգասեր Արարատյան» սկզբում տասնօրյա, ապա կիսամսյա պարբերականները (1848–1852 թթ.): Երկու պարբերականներն էլ խմբագրել է մանկավարժ, գրող, լուսավորիչ Մեսրոպ Թաղիադյանը:

---

1 *Կարգ ու կանոնք Ս. Սանդուխտ դպրոցի օրիորդաց, բացեալ յամի Տեառն 1847 ի Կալկաթա, Կալկաթա, 1847, էջ 34:*

2 *Լ. ե ո, Մ. Թաղիադյան. տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1917:*

3 *«Մասեաց աղավնի», 1860, № 2:*

4 *«Զարթոնք», Բեյրութ, 1956, № 313:*

Երկու պարբերականներում էլ հրատարակված նյութերը բազմազան էին. տեղեկատու լուրերի, հայտարարությունների կողքին տպագրվում էին պատմաբանասիրական ուսումնասիրություններ, հրապարակախոսություններ, հայրենասիրական, բարոյական, խրատական բանաստեղծություններ, լուսաբանվում էր հայ գաղթավայրերի ազգային, հասարակական-մշակութային կյանքը և այլն:

Կալկաթայում Եղիազար Տեր-Հարությունյանի խմբագրությամբ լույս է տեսել «Եղբայրասեր» թերթը (1862–1863 թթ.), որի հիմնական նպատակն է եղել ազգային ձուլման դեմ պայքարը, հայ մշակույթի զարգացումը:

Հնդկահայ գաղթօջախներում հրատարակվել են մի քանի այլ պարբերականներ ևս: «Ծաղկաստանը» լույս է տեսել 1822 թ. Բոմբեյում, եղել է վիմատիպ: 1820 թ. Կալկաթայում լույս է տեսել «Հայելի կալկաթյան» շաբաթաթերթը: 1844 թ. Բոմբեյում տպագրվել է «Բոմբեյի հայոց լրագրաթուղթը», ապա «Ազդարար» երկշաբաթաթերթը քաղաքական և բանասիրական լրովանդակությամբ: Կալկաթայում 1863–1865 թթ. հրատարակվել է Մադրասի «Բանասերը»: Երկու տարի հրատարակվելուց հետո այն փակվել է: 1892 թ., երկու տարի հրատարակվելուց հետո փակվեց նաև Հովսեփ Մելիք-Բեգլարյանի հրատարակած անգլիալեզու «Վան»-ը: Ջերմ հայրենասիրական ուղղություն ունեցող այս պարբերականը նպատակ է ունեցել քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա:

Առաջին հայկական տպարանը Հնդկաստանում հիմնադրվել է Մադրասում, Շահամիր Շահամիրյանի կողմից 1772 թ.: Տպարանի հիմնադրումը կապված էր հնդկահայ գաղութում ծայր առած հայ ազգային-ազատագրական գաղափարախոսության հետ: Այս տպարանում հրատարակված առաջին գիրքը «Այբբենարանն է», ապա նրան հաջորդել են Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի Յորդորակը» (1772), Շահամիր Շահամիրյանի «Գիրք անուանեալ Որոգայթ փառացը» (1773) և այլն: Երկրորդ տպարանը հիմնադրել է Հարություն քահանա Շմավոնյանը: Այս տպարանում է տպագրվել հայկական առաջին պարբերական «Ազդարար»-ը: Մադրասում գործել են նաև երկու այլ տպարաններ (1809–1812 թթ.):

1796 թ. Կալկաթայում Հ. Ստեփանյանը հիմնադրեց տպարան: Ապա իրար հաջորդեցին Ավետ Ջնթլումյանի (1811–1817), նրա որդիների (1820), Պողոս Հորդանանյանի (1820–1821), Օհանասիյուռ ընկերութ-

յան, Անգլիական եպիսկոպոսական ճեմարանի (1827–1841), Պողոս Վիչինյանի «Արծիվ» (1846–1851), «Արարատյան ընկերության» (1845–1848), «Ազգասեր Արարատյան» (1848–1852) տպարանները, որոնցում լույս են տեսել տասնյակ պարբերականներ, օրացույցներ, դասագրքեր, գեղարվեստական երկեր: Կալկաթայի վերջին տպարանը հիմնել է Հովհաննես Խաչիկյանը, ուր տպագրվել են նրա հեղինակած 10 գրքերը:

Մշակութային կազմակերպություններն ու միությունները հնդկահայ գաղութում սակավաթիվ էին: Նրանցից հնագույնը 19-րդ դ. սկզբին Բոմբեյում հիմնադրված «Օհանասփյուռյան ընկերությունն» է, որի մտահոգությունն էր հայությանը հեռու պահել ձուլումից: 20-րդ դարի սկզբին Կալկաթայում հիմնվեց «Մարզական ակումբը», որն ուներ ֆուտբոլի, ռեգբիի, խոտի հոկեյի և մարզական այլ խմբեր: 1920 թ. դարձյալ Կալկաթայում հիմնադրվեց «Հայկազյան մշակութային միությունը», որին կից գործում էին զանազան ինքնագործ խմբեր: Մինչև վերջերս գործում էր Մ. Սեթի ջանքերով 1909 թ. հիմնադրված ճեմարանի շրջանավարտ սաների միությունը:

1915–1918 թթ. Կալկաթայում գործել է «Հայ կանանց բարեգործական ընկերությունը»: 1920–1968 թթ. դարձյալ Կալկաթայում եռանդուն գործունեություն է ծավալել «Հայկական մշակութային ընկերությունը»:

20-րդ դարի սկզբին և հետագայում, Կալկաթայից բացի, հնդկական մյուս քաղաքներում հայկական համայնքների փոքրիկ կղզյակներ կային միայն: Փոքրաթիվ հայեր կենտրոնացան Կալկաթայից 186 մղոն հեռավորության վրա գտնվող Ասանսոլում, ինչպես նաև Գնանբուդում:

ՉԻՆԱՍՏԱՆ

Հեռավոր Չինաստանը Արևելքի այն երկրներից է, ուր հայերը ոտք են դրել վաղնջական ժամանակներից: Հայերը, ըստ Եվրոպացի ուսումնասիրող Հ. Վելսի բերած փաստերի, ոչ միայն ապրանքներ էին բերում Հայաստան, այլև առևտրական գործարքներ կնքում Չինաստանում հաստատված հայ վաճառականների հետ[1]: Ըստ Ֆ. Հյումի, նեստորական քարոզիչների մեջ Չինաստանում եղել են նաև հայեր[2]: Ճապոնացի հետազոտող Եսիյո Սայեկին, որը ուսումնասիրել է նեստորականների գործունեությունը Չինաստանում, հետաքրքիր տեղեկություն է բերում 578 թ. Չինաստանում հաստատված Սարգիս անունով մի քրիստոնյա հայ ընտանիքի մասին, որի նախնիները եկել էին Արևմուտքից, հաստատվել ներկայիս Գանսու նահանգում և աչքի ընկնող դեր էին խաղում երկրի առևտրական կյանքում[3]:

Նեստորական ասորիների, Մերձավոր արևելքի մյուս ժողովուրդների և մասնավորապես հայերի համար Չինաստանում գործելու բարենպաստ վիճակ ստեղծվեց Տան հարստության կառավարման տարիներին (618–907): Այդ դարաշրջանում հայերը նկատելի մասնակցություն են ունեցել Չինաստանի և Արևմտյան Եվրոպայի տնտեսական կապերին: Ե. Ի. Կիչանովի համոզմամբ, հիշյալ ժամանակաշրջանում Չինաստանի մի շարք վայրերում, հատկապես նրա մայրաքաղաքներում՝ Զանյանում (Կումդան), Լոյանում (Սարգո), հավանաբար նաև ծովափնյա նավահանգիստներում հայերը կառուցել են քրիստոնեական վանքեր և եկեղեցիներ: «Դրանք, իհարկե, կյանքի էին կոչվում ոչ թե ազգությամբ չին քրիստոնյաների հոգևոր կարիքների բավարարման, այլ այն վաճառականների և այլ գործերով զբաղվող քրիստոնյաների համար, որոնք հասնում էին Չինաստան և հաճախ մշտական կամ ժամանակավոր հաստատվում այնտեղ»[4]:

Ակադ. Լ. Խաչիկյանը և պրոֆ. Հ. Փափազյանը նույնպես համոզված են, որ Տան հարստության ժամանակ Չինաստանում հաստատված են և-

---

1 W e l l s H. The outline of history, London, 1895, p. 475.

2 H y u m F. V. The nestorian monuments in China, Chikago, 1909, p. 41-42.

3 S a c k y Y. The nestorian documents and relies in China, Tokio, 1951, p. 86.

4 К и ч а н о в Е. И. Сирийское несторианство в Китае и Центральной Азии. "Палестинский сборник", вып. 26(29), филология и история, М., 1978, с. 76—77.

ղել հայկական համայնքներ: Նրանք իրենց այդ համոզմունքը աշխատում են հաստատել նաև հետևյալ փաստով. «Չինական հնագետները հայտնաբերել են հիշյալ ժամանակաշրջանից պահպանված բազմաթիվ հախճապակյա գունազարդ արձանիկներ..., որոնք պատկերել են Չինաստանում հայտնի տարբեր ազգությունների ներկայացուցիչների՝ ույգուրների, ալթայցիների, թոխարցիների, կաշգարցիների, քաշմիրցիների, խորեզմացիների, պարսիկների, սեմական ժողովուրդների (հավանաբար՝ հրեայի)՝ իրենց ազգային բնորոշ դիմագծերով, տարազով, երբեմն էլ զբաղմունքը բնորոշող որևէ մանրամասնով»: «Այդ արձանիկների շարքում,– շարունակում են նրանք,– հայի ազգային հատկանիշներով՝ արծվաքիթ, սև բեղ-մորուքով տղամարդկանց երեք արձանիկներ՝ պատկերված ծալապատիկ նստած դիրքով, յուրաքանչյուրի գոգին՝ մեկական տիկ»[1]: Լ. Խաչիկյանի և Հ. փափազյանի կարծիքով, այդ արձանիկները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում Չինաստանում հայեր են ապրել:

Հայկական մնայուն գաղթօջախների հիմնումը Չինաստանում կապված է նաև մոնղոլական առաջին արշավանքների հետ: Հայտնի է, որ մոնղոլները տասնյակ հազարավոր հայերի քշեցին և տարան ներկայիս Աֆղանստանի և Չինաստանի հյուսիսային և արևմտյան շրջանները, ուր և նրանք հիմնեցին իրենց գաղթօջախները՝ բախտակից ասորի նեստորականների կողքին: Այստեղ հաստատված հայ տարագիրները սկսեցին զբաղվել իրենց նախասիրած զբաղմունքով՝ արհեստագործությամբ, առևտրով, գուցե նաև հողագործությամբ: Օգտվելով չինացիների բարյացակամ վերաբերմունքից՝ հայերը շուտով թափանցեցին երկրի խորքերը և հասան Խաղաղ օվկիանոսի ափերը:

Դեռևս 1145 թ. Եվրոպա էր հասել մի խուլ համբավ ոմն Հովհաննես երեցի մասին, որը թեոկրատական աշխատանք է կատարել Հեռավոր արևելքում: Ըստ Պլանո Կարպինիի (1246), Լոմժցումելի (1248) և Ռուբրոքի (1253), Հովհաննես երեցը հանձնարարական է ունեցել տեղեկություններ հավաքել Հեռավոր արևելքի քրիստոնյա համայնքների վերա-

---

1 Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը, Երևան, 1984, էջ 27–28: Տե՛ս նաև Dovalie J. Les Armeniens en Chine et Asie Centrale au moyen age. Meleges de sinologie affair à Paul Demivelle, t. II, Paris, 1974, p. 1-17 (տե՛ս 94–95 էջերի լուսանկարները):

բերյալ[1]: Հայտնի է, որ Հեռավոր արևելքում քրիստոնյա համայնքներ կային միայն Չինաստանում և այնտեղ տանող ուղիների վրա: «Երեց» բառն իսկ հուշում է, թե ո՞վ պետք է եղած լինի հիշյալ Հովհաննեսը:

1892 թ. Չինաստանի սահմանագլխին՝ Սեմիրեչյեի Պիշպեկ գյուղի նեստորականների հին գերեզմանատան պեղումների ժամանակ Ն. Ն. Պանդուսովը հայտնաբերեց հայերեն և ասորերեն արձանագրություններով գերեզմանաքար: Ակադ. Ն. Յա. Մառը առաջինը վերծանեց այդ արձանագրությունները: Ասորերեն վերծանված արձանագրությունը հայտնում է. «Այս է հայոց եպիսկոպոս Հովհանի շիրիմը»: Իսկ գերեզմանաքարի կենտրոնի խաչի շուրջ եղած հայերեն արձանագրության բովանդակությունն էր. «ՏՐ ՅՍ ՏՐ ՔՍ Յովհան հայոց եպիսկոպոս ի թուս Հայոց ՉՀԲ գրեցաւ յիշատակ» (Տէր Յիսուս, տէր Քրիստոս Յովհան հայոց եպիսկոպոս ի թուին Հայոց ՉՀԲ (1323) գրեցաւ յիշատակ»[2]: Ակադ. Ն. Մառը, հրատարակելով այս արձանագրությունը, եկել է հավաստի եզրակացության. «Այն հանգամանքը, որ պիշպեկյան գերեզմանոցում թաղված է հայոց եպիսկոպոս Հովհանը, և նրա հիշատակը հավերժացվել է 1323 թվակիր հայատառ հուշարձանով, մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ այստեղ մենք գործ ունենք ոչ թե ճակատագրի բերումով աշխարհի այս հեռուները շպրտված անհատի, այլ շատ թե քիչ զգալի հայկական գաղթօջախի հետ»[3]: Գրիգոր, Պողոս, Սարգիս և հայկական այլ անուններով հանդիպող ասորատառ արձանագրությունները, որոնք վերաբերում են նշված ժամանակաշրջանին, ինչպես նաև հայկական «Սուրբ Մատթեոս» վանքի գոյության փաստը, որը հաճախ է հիշատակվում ժամանակի կաթոլիկ քարոզիչների կազմած քարտեզներում, վկայում են Չինաստանի և նրան մերձակա երկրների հետ հայերի ունեցած կապերի կամ այնտեղ բնակվելու մասին:

Չինաստանի հայկական հին համայնքների մասին հետաքրքիր փաստեր են պահպանվել Արևելքի երկրներում Ֆրանչիսկյան միաբանության գործունեությանը նվիրված ուսումնասիրություններում, այս շրջաններում գործած հոգևորականների՝ Հռոմ ուղարկած զեկուցագրե-

---

1 Ա շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ ազատագրական պայքարի պատմության, հ. 1, 1957, էջ 201–202:

2 Մ ա ր ր Ն. Յա. Надгробный камень из Семиречия с армяно-сирийской надписью 1323 г. — "Труды Восточной комиссии Московского археологического общества", СПб., 1889, т. 8, с. 344—349. Խ ա չ ի կ յ ա ն Լ. Հայ պատմագրության անհայտ էջերից. Պատմա-բանասիրական հանդես, 1972, № 4, էջ 243–244:

3 Մ ա ր ր Ն. Յա. նշվ. աշխ., էջ 345–346:

ռում և նամակներում: Հայերի վերաբերյալ եղած տեղեկությունները հիմնականում վերաբերում են 14-րդ դարին:

Թայվանի նեղուցի Ցղյան Զժոյ նավահանգիստը (պարսիկներին և արևելյան մյուս ժողովուրդներին հայտնի Զեյթուն անունով) 13-րդ դ. վերջին և 14-րդ դ. սկզբին իր բազմամարդությամբ և բազմահարուստ շուկաներով հայտնի էր ողջ Արևելքում: Այստեղ կային և ազատ գործում էին տարբեր ազգերի համայնքներ, կրոնական միություններ: Քաղաքը հաճախ էին գալիս Հռոմից ուղարկված բարձրաստիճան հոգևորականներ, որոնց նպատակն էր հոգալ կաթոլիկ հավատացյալների հոգսերը, հավատափոխ անել այլադավաններին և այլն: Նման բարձրաստիճան կաթոլիկ հավատացյալներից մեկը, որը բավականին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել ֆրանսիացի կաթոլիկ քարոզիչների Զինաստանում կատարած աշխատանքների մասին, նշում է, թե 1294 թ. Զինաստան հասած ֆրանսիացի Ժան դը Յուվենիոն, քրիստոնյա համայնքներից առաջինը հանդիպել է հայկական համայնքին, որի կողմից նա աջակցություն է ստացել[1]: Նրան հաջողվել է նեստորականների դեմ մղված դավանաբանական պայքարում հայերի օգնությամբ որոշակի հաջողությունների հասնել[2]: Մեկ այլ կաթոլիկ քարոզիչ Անդրեաս Պերուճան, 1326 թ. Ցղյան Զժոյից Հռոմ ուղարկած նամակում հայտնում է, թե տեղում Մոնդ Յուվենիոյի առաջին և խոշոր հաջողությունը եղել է այն, որ նրա ջանքերի շնորհիվ հայկական համայնքից մի մեծահարուստ հայուհի ընդունել է կաթոլիկություն և իր հաշվին 1309–1310 թթ. կառուցել մի գեղեցիկ եկեղեցի: Մոնդ Յուվենիոն իր առաջին հաջողություններից մեկը համարում էր Զինաստանում ապրող շատ հայերի նեստորականների ազդեցությունից հեռացնելը[3]: Պեռեգրինո վանականի հավաստմամբ, Զինաստանում ապրող հայերից շատերը ոչ միայն իրենք էին ընդունում կաթոլիկություն, այլև աջակցում էին Մոնդ Յուվենիոյին իր քարոզչությունների ժամանակ[4]:

---

1 Historie nestorienne (Cronologie de série), 2ᵉ partie. Potrologie orientale, t. XIII, Paris, 1819, p. 545.

2 G r o u s s e t R. Histoire des croisades et du Royome. Brone de Jerusalem, t. III, Paris, 1954, p. 527.

3 P i k e r t o n J. Travers of Benidict from Bengals in the Mogol Empire to China in 1602. London, 1991, vol. 1, p. 282.

4 Les voyage en Asia au XIVᵉ siecle du bien Pordenone, religieux de St. François et H. Cordies, p. 449-454.

Դը Կաստելոն, խոսելով այս վայրերի հայկական դաղթօջախների մասին, գրում է, թե Մոնդ Յուվենիոյին, հավանաբար, հաջողվել էր տեղի հայկական համայնքին ամբողջությամբ ընդունել տալ կաթոլիկություն: Մինչև Ժան դը Մոնդ Յուվենիոյի Չինաստան գալը հայկական համայնքը զրկված էր եկեղեցի ունենալու հնարավորությունից, «քանի որ նեստորականները, որոնց ազդեցությունը շատ էր մեծ հայկական համայնքի վրա, թշնամի էին մյուս քրիստոնյա ուղղություններին և արգելում էին հայերին եկեղեցիներ կառուցելու»: Հայտնելով այս բոլորը նա շարունակում է. «Ժան դը Մոնդ Յուվենիոն, հակառակ նեստորականների արգելքների, կարողացավ օգտվել քրիստոնյա մյուս համայնքների, առաջին հերթին, հայերի աջակցությունից և կառուցել եկեղեցիներ: 1310 թ. հայերը կառուցեցին մի գեղեցիկ եկեղեցի»[1]:

Ժան Դովալիեն արխիվներում հայտնաբերել է 14-րդ դ. սկզբին Չինաստանում գործող կաթոլիկ հայերի՝ Եվրոպա ուղարկած երկու զեկուցագրեր, որոնցում մի շարք հետաքրքիր տեղեկություններ կան հայերի մասին: «Այս նամակներից պարզվում է,— գրում է Ժ. Դովալիեն,— որ 14-րդ դ. սկզբում Ցզյան Չժոյում գոյություն ուներ հայկական համայնք, որը, անկասկած, եկել էր ծովային ճանապարհով՝ հնդիկ առևտրականների հետ: Նամակներում եղած փաստերը թույլ են տալիս կռահել, որ հիշյալ ժամանակ հայկական համայնքը ծաղկման և զարգացման մեջ էր ... այս հանգամանքը չի կարող զարմանք առաջացնել նրանց մոտ, որոնք ծանոթ են հայերի առևտրական կարողություններին և ճարպկությանը»: Ցզյան Չժոյում հայկական դաղթօջախը բավական երկար է գոյատևել: 1906 և 1908 թթ. Պոլ Էմանուելի՝ այստեղ կատարած պեղումների ժամանակ հայտնաբերվել են ասերբեն, պարսկերեն, արաբերեն գրություններով շիրմաքարեր: Պ. Էմանուելի և մի քանի այլ ուսումնասիրողների կարծիքով, ասորատառ արձանագրություն ունեցող շիրմաքարերի մի մասը անառարկելիորեն պատկանել է հայերին: Նման շիրմաքարերից ամենից ուշ թվագրվածը վերաբերում է 1644 թ.[2]: Հետագայում, երբ հայերի թիվը Ցզյան Չժոյում նվազեց, հայկական եկեղեցին անցավ եվրոպացի կաթոլիկների տրամադրության տակ, որոնք այն դարձրին մայրավանք:

---

1 P i k e r t o n J. նշվ. աշխ., էջ 289:

2 Dovalie J. նշվ. աշխ., էջ 114–117:

Ֆրանչիսկյան հոգևորականների գրագրություններից հայտնի է դառնում նաև, որ դեռևս 1264 թվականին հայկական համայնք կար Յան Բալիքում (Պեկին), ընդ որում Յան Բալիքի հայկական համայնքն այնքան էր մարդաշատ և տնտեսապես հարուստ, որ ֆրանչիսկյան և կաթոլիկ մյուս քարոզիչների միջև պայքար էր գնում համայնքը իրենց ազդեցության տակ գցելու համար:

Քաղելով եվրոպական արխիվներից՝ Ժան Դովալիեն Յան Բալիքի հայկական հին համայնքի մասին գրում է. «Յան Բալիքում նույնպես կար հայկական համայնք, որի մասին մեզ տեղեկություն է հաղորդում Պեռեգինո դը Կաստելոն: Մաղկում ապրող այդ համայնքը հիմնվել էր ավելի վաղ, նա արդեն գոյություն ուներ Ժան դը Մոնդ Կոռվինոյի ժամանակներում: Հայտնի է, որ Ժան դը Մոնդ Կոռվինոն Չինաստան է հասել որպես ֆրանչիսկյան քարոզիչ, 1289 թվականին: Երկար քարոզչություններից հետո նա եկավ Յան Բալիք և դառավ տեղի քրիստոնյաների եպիսկոպոս»[1]: Վերջինիս հաջողվել է 1305 թ. տեղի հեթանոս և քրիստոնյա համայնքներից դավանափոխ անել 4.000 մարդու: Ըստ Պեռեգինո դը Կաստելոյի, «Քրիստոնյա համայնքների դավանափոխ եղած այս անդամների մեծ մասը հայեր էին»: Հայտնելով այս ամենը՝ դը Կաստելոն շեշտում է, որ «հայկական համայնքները գրեթե ամբողջությամբ անցան կաթոլիկության»[2]:

Միաժամանակ դը Կաստելոն նաև պարզաբանում է այն հարցը, թե ինչու հայերն ընդունեցին կաթոլիկություն: Պարզվում է, որ հայերը, զրկվելով իրենց եկեղեցուց, հավանաբար նաև հայրենիքի հետ ունեցած կապերից, ստիպված էին ապրել նեստորականների սովորություններով և հետևել նրանց եկեղեցուն: Երբ Ժան դը Մոնդ Կոռվինոյին հաջողվեց կառուցել կաթոլիկ եկեղեցիներ, «այլազգի այլ քրիստոնյաների հետ հայերը նույնպես շրջվեցին դեպի լատին քարոզիչները»[3]:

Պեռեգինո դը Կաստելոյի առաջնորդության տարիներին հայերը Յան Բալիքում կառուցեցին մի նշանավոր եկեղեցի: Խոսելով այս հետաքրքիր փաստի մասին՝ Ժան Դովալիեն հարց է տալիս. «Ո՞րն էր այդ հայկական համայնքի կարևորությունը: Ո՞րքան անդամներ կային համայնքում: Հայկական եկեղեցին ունե՞ր արարողություն, ծեսեր կատարող հոգևորական, կայի՞ն մի քանի հոգևորականներ և այլն»: Ինքը՝

1 Նույն տեղում, էջ 12:

2 Նույն տեղում, էջ 13:

3 Նույն տեղում, էջ 16–17:

ուսումնասիրողը, տալիս է իր բարձրացրած հարցերի պատասխանը. «Այն հանգամանքը, որ հայկական համայնքը կարողացել է կերտել մի գեղեցիկ եկեղեցի, թույլ է տալիս եզրակացնելու, որ հայկական այս համայնքն ուներ այնպիսի հսկայական եկամուտներ, որոնք, անկասկած, չունեին Յան Բալիքի մյուս այն համայնքները, որոնք ընդունել էին քրիստոնեություն»[1]:

Հետագայում, 16–17-րդ դարերում էլ, երբ Չինաստանը դեռ շարունակում էր փակ մնալ օտարերկրացիների առաջ, ինչպես Միջին Ասիայի սահմանամերձ շրջաններում, այնպես էլ երկրի հարավում՝ Կանտոնում, Մակաոյում, Շանհայում, Հոնկոնգում կային հաստատված հայկական ոչ մեծ դաղթօջախներ՝ կազմված հիմնականում վաճառականներից և առևտրականներից:

Չինաստանում քարոզչություններ կատարող պորտուգալացի հայր Մաթևոս Ռոչլիին փնտրող կաթոլիկ հոգևորական Բենեդիկտո Գոսիեն 1602 թ. հասավ Քաբուլ: Այստեղ Բենեդիկտո Գոսիեն, որը չինական լեզվին և ճանապարհներին անծանոթ էր, տեղի կաթոլիկ միսիայի խորհրդով իր հետ առավ «Իսահակ հային», որը քաջ գիտեր և չինարեն և Չինաստանի խորքերը տանող ուղիները:

1604 թ. դուրս գալով Քաբուլից՝ Բ. Գոսիեն հայազգի թարգմանիչ ուղեկցողի հետ անցավ Աղսու–Քուչա–Կարաշշահր–Թուրֆան–Համի քաղաքներով և հասավ Չինաստանի Սուչժոու քաղաքը: Զգիմանալով ճանապարհների դժվարություններին՝ Գոսիեն մահացավ: Թաղելով Գոսիեին՝ «Իսահակ հայը», ինչպես նրան հիշում են քարոզիչները, իր հետ առնելով Բ. Գոսիեի օրագրությունները, թղթերը և փրկված իրերը, շարունակեց ուղին և հասավ Չինաստանի մայրաքաղաք Պեկին: Այստեղ նա գտավ կաթոլիկ քարոզիչներին և այդ ամենը հանձնեց նրանց: Պեկինում իրեն ընդունող Նիկողայոս Տրիգոնեսին Իսահակը բազմաթիվ լրացուցիչ տեղեկություններ հաղորդեց իրենց ուղևորությունների, անցած ճանապարհի, հանդիպած քրիստոնյա համայնքների և այլնի մասին: Ն. Տրիգոնեսը հայ Իսահակի պատմածները գրի առավ և կարճ անց, 1618 թ. Եվրոպա վերադառնալուց հետո, Ֆրյոլնում հրատարակեց Չինաստանում քրիստոնյա համայնքների գործունեության վերաբերյալ շատ հետաքրքիր նորություններ պարունակող մի աշխատություն:

---

1 Նույն տեղում, էջ 17:

Իսահակ հայի կողմից փրկված այս նկարագրություններից և թելադրած հուշերից պարզվում է մի շատ հին աշխարհագրական թյուրիմացություն. մինչև 17-րդ դ. 20-ական թվականները Եվրոպայում հայտնի չէր, որ Արևելքի Խաթա, Խաթայ երկիրը Կիտայն է (Չինաստանը), նրա մայրաքաղաք Յան Բալիքը՝ Պեկինը: Փաստորեն այս թյուրիմացությունը առաջին անգամ պարզվեց Իսահակ հայի ջանքերով[1]:

Գոսիեի գրառումներում հաճախ ենք հանդիպում հայերի, որոնք ապրում էին Չինաստանում և գործուն մասնակցություն ունեին Չինաստանից Տիբեթի, Նեպալի և Հնդկաստանի վրայով կատարվող առևտրին: Գոսիեի թողած նկարագրություններում տեղ են գտել բազմաթիվ այլ փաստեր այն մասին, որ առևտրի և քարոզչությունների համար դեպի Հեռավոր արևելք և Չինաստան մեկնած եվրոպացի վաճառականներին և հոգևորականներին ուղեկցում էին ճանապարհներին քաջատեղյակ և լեզուներ իմացող հայերը:

Ռուս ուսումնասիրող Ի. Պոլիկտովը, որը մի քանի հետաքրքիր աշխատություններ ունի եվրոպացի ճանապարհորդների՝ Արևելքում կատարած ուղևորությունների մասին, հավաստում է, որ այդ եվրոպացիները հիմնականում եղել են արևելյան շուկաներն ուսումնասիրող հետախույզներ՝ և այդ պատճառով էլ ուղևորությունների ժամանակ իրենց հետ վերցնում էին Արևելքի երկրներ, տվյալ դեպքում Չինաստան տանող ուղիներին, առևտրի մեթոդներին, տեղի վարք ու բարքին ծանոթ հայերի:

18-րդ դ. վերջից մեզ են հասել մի շարք հետաքրքիր վավերագրեր չինաբնակ հայեր վերաբերյալ: Դրանք զեկուցագրեր են Չինաստանում ապրող մի քանի հայերի կտակների մասին: Դրանցից մեկը կանտոնաբնակ գանձակեցի Մնացական Ղասապյանի կտակն է: Հայրենիքից հեռացած և օտարության մեջ հարստացած գանձակեցին խոշոր մի գումար է կտակել իր հայրենի երկրին[3]: Մի այլ վավերագրում խոսվում է չինաբնակ Հովհաննես Մաթևոսյանի մասին, որը 80.000 ռուպի էր կտակել Նոր Նախիջևանի հայությանը[4]: Հիշատակվում են նաև Չինաս-

---

1 Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու Հաշվեմատյանը, էջ 30:

2 Կարինյան Ա. Բ. Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956, հ. 1, էջ 146:

3 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ, մասն 3, էջ 312:

4 Նույն տեղում:

տանում ապրող մի շարք այլ հայերի՝ հայրենիքին թողած կտակագրումներ:

Տեղեկություններ կան, որ 18-րդ դ. վերջում չինահայ վաճառականները սկսել են հալածվել և կողոպտվել այստեղ հասած և հաստատված անգլիացիների կողմից: Հատկապես հայտնի էր 1783 թ. Կանտոնի հայության նկատմամբ անգլիացիների սադրած անհիմն մեղադրանքների և մասսայական կողոպուտի փաստը: Թեև չինական իշխանությունները հայերին վերցրել են պաշտպանության տակ, այնուամենայնիվ, հայերի զգալի մասը թողեց Կանտոնը և հեռացավ Մակաո և Հնդկաչինի այլ վայրեր[1]:

Ակադ. Հր. Աճառյանը չինահայ դաղթօջախների գոյության երկրորդ փուլը հնդկահայ դաղթօջախների մի ճյուղը համարելով՝ շեշտում է, որ հայերը 17–18-րդ դարերում, օգտվելով չինական իշխանությունների հովանավորությունից և չին բնակչության համակրանքից, հասել էին մեծամեծ պաշտոնների Չինաստանի տարբեր վայրերում. «Չինաստանը միշտ էլ փակ է պահել իր դռները օտարների, հատկապես քրիստոնյաների համար: Բայց հայը բացառություն էր և նրա համար բացարձակ ազատություն կար: Հայ վաճառականը այնքան սովորական էր Չինաստանում, որ ճիզվիտ քարոզիչները ազատ ելք ու մուտք ունենալու նպատակով հայ վաճառականի զգեստ էին հագնում»[2]: Հույժ ուշագրավ է Էմանուել Կանտի հետևյալ դիտարկումը. «...Մյուս քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ տիրապետում է առանձնահատուկ գործարար ինչոր ոգի, նրանք զբաղվում են փոխանակությամբ՝ հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվիննեայի ափերին գտնվող Կորսու հրվանդանը: Այս հանգամանքը ցույց է տալիս յուրահատուկ ծագումը խելամիտ և աշխատասեր այս ժողովրդի, որը, շարժվելով հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, կտրում անցնում է հին աշխարհի ողջ տարածքով և կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել բոլոր այն ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ»[3]:

Ինչպես նշվեց, 17–18-րդ դդ. Չինաստանը շարունակում էր փակ մնալ օտարերկրացիների համար: Եվ չնայած դրան, Չինաստանի՝ Մի-

---

1 Ա բ ր ա հ ա մ յ ա ն Ա. Գ. Համառոտ ուրվագիծ հայ դաղթավայրերի պատմության, Բ, Երևան, 1967, էջ 329:

2 ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ 23, մասն Բ, էջ 3:

3 K a н т Э. Соч. т. VI, М., 1966, с. 527.

ջին Ասիային սահմանամերձ շրջաններում, հավասարապես նաև երկրի հարավի ու արևելքի ծովափնյա քաղաքներում (Շանհայում, Հոնկոնգում, Մակաոյում և այլուր) կային զգալի կշիռ ունեցող հայկական համայնքներ, որոնց մասին գիտեին շատ երկրներում:

Ինչպես հայտնի է, անգլիական Արևելա-Հնդկական ընկերությունը Սուրաթում 1688 թ. հայ առևտրականների ներկայացուցիչ խոջա Փանոս Քալանթարի հետ կնքեց առևտրական մի պայմանագիր, որով հայերին տրվեցին անգլիական առևտրականի իրավունքներ: Հայ վաճառականները այդ պայմանագրով կարող էին ազատ ել ու մուտ ունենալ և առևտրական գործարքներ կատարել անգլիացիների տնտեսական և քաղաքական ազդեցության տակ գտնվող բոլոր շրջաններում, այդ թվում նաև Չինաստանում հաստատված առևտրական ֆակտորիաներում[1]: Հայերը իրավունք ստացան իրենց ապրանքը տանել Չինաստան և այնտեղից ապրանք արտահանել առանց մաքսի՝ ինչպես սեփական, այնպես էլ հնդկական և անգլիական նավերով: Նման արտոնությունները բնականաբար ավելի աշխուժացրին հայերի առևտրական գործունեությունը չինական շուկաներում[2]:

19-րդ դարի սկզբին նոր իրադրության մեջ Հնդկաստանից, Իրանից, Ինդոնեզիայից հայ գաղթականության նոր հոսք է սկսվում դեպի Չինաստան: Դրանք գլխավորապես այդ երկրների առևտրական շուկաներից և տնտեսական ոլորտներից դուրս մղված և գործելու նոր շրջաններ փնտրող ձեռներեց մարդիկ էին: Այս ժամանակ Չինաստան եկող հայերը նոր գաղթօջախներ չեն հիմնում, այլ միայն թարմացնում, աշխուժացնում են հները: Նոր շրջանում չինահայ գաղթօջախների աշխարհագրական քարտեզը մնաց անփոփոխ:

Հայերի հիմնական զբաղմունքը շարունակում էին մնալ առևտրի միջազգային շրջանակները: Նրանք հազվագյուտ էին թափանցում ներքին առևտրի ոլորտ: Հայ առևտրականները մինչև 19-րդ դ. առաջին կեսը գործում էին իրարից անկախ, անմիաբան, երևույթ, որն արժանացել էր Մ. Թաղիադյանի դիտողությանը: Ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա, հատկապես անգլիական առևտրական հզոր ընկերությունների մրցակցությանը դիմանալու համար հայ վաճառականական դասը սկսում է միավորվել և կազմել ազգային առևտրական ընկերութ-

1 S e t h M. J. Armenians and the East India Company, Calcutta, 1926, p. 5-7.

2 Նույն տեղում, էջ 8:

յուններ: Այդպես եղավ նաև Չինաստանում: 1850 թ. հայկական յոթ առևտրատներ միացան և կազմեցին հզոր մի ընկերություն, որն իր մասնաճյուղերն ուներ ինչպես Չինաստանի, այնպես էլ Հեռավոր արևելքի մի շարք երկրներում: Երբ Մ. Թաղիադյանը 1850 թ. լսում է, որ հայ վաճառականների թիվը ավելացել է ևս մի քանիսով, բացականչում է. եթե Չինաստանի հայերը «ամենքին միաբանեցին ի մի տուն և յընկերութիւն և զամենայն գործառնութիւն իւրեանց սիրով և խորհրդով կատարեցին, անշուշտ հաւատամք, որ զկնի քանի ամաց՝ Հայկազանց ընկերութիւն ի Չին՝ զերևելի տեղին գրաւէ ի մէջ ամենայն վաճառատանց Կանթոնայ»[1]: Մ. Թաղիադյանը գտնում է, որ նման միասնությունը կկրճատի հայ առևտրականների ծախսերը, որոնք կատարվում են պահեստների, գրասենյակների, նավերի և այլնի վրա՝ առանձին-առանձին:

1850-ական թվականների Չինաստանում ճանաչում ուներին Հնդկաստանում գործող «Արևելյան ապահովչաց հայկական ընկերության» մասնաճյուղը և առևտրատները Կանտոնում, Շանհայում, Հոնկոնգում և այլուր:

«Սեթ Աբգարյան ընկերությունը» 19-րդ դ. Չինաստանում գործող ամենից նշանավոր առևտրական հայկական ընկերությունն էր, որի առևտրական նավերով կատարվող գործարքները ընդգրկում էին միջազգային շրջանակներ: Հայկական այդ ընկերության սեփական նավերը չինական ջրերից հասնում էին Բրիտանական կղզիներ՝ ճանապարհին մտնելով Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի բազմաթիվ նավահանգիստներ:

Հայ վաճառականները նկատելի դիրք էին գրավում նաև Չինաստանում և հարևան շրջաններում գործող «Միացյալ շոգենավային», «Բորասաթ լեղակի», «Գետանավային», «Նավաքարշ» և մի քանի այլ ընկերություններում: Հայկական այս ընկերությունները արդեն զուտ առևտրով զբաղվող միություններ չէին միայն: Դրանք արդեն առևտրաարդյունաբերական ընկերություններ էին, և Մ. Թաղիադյանի համոզմամբ, նրանք պետք է դառնային ազատագրված Հայաստանի տնտեսական վերաշինությանը օժանդակող գործոն[2]: 19-րդ դ. կեսերին

---

1 Ազգասեր Արարատյան, 1850, Հ. Բ, էջ 390:

2 Կ ա ր ի ն յ ա ն Ա. Բ. նշվ. աշխ., էջ 351:

Կանտոնում հայերը ունեին «երևելի գործարաններ»: Տեղեկություններ կան նաև Կանտոնում հայ առևտրականների հիմնած բանկի մասին:

1880-ականի կեսերից հայերի վիճակը Չինաստանում սկսեց վատթարանալ, որը կապված էր չին ժողովրդի գաղութացման և շահագործման հետ: Իրար հաջորդող անգլո-չինական պատերազմները, որոնք ավարտվեցին Չինաստանի ծանր պարտությամբ, և Տայպինական ապստամբության պարտությունը, որին հաջորդեց օտար տերությունների կողմից երկրի օկուպացումը, ծանր հարված հասցրեցին Չինաստանի տնտեսությանը: Չինական կառավարությունը երկրի գրեթե բոլոր նավահանգիստները բացեց եվրոպացիների առաջ: Այս նավահանգիստներում գանձվող բոլոր առևտրամաքսերը հավաքում էին ոչ թե չինացիները, այլ անգլիացիները, ընդ որում այդ մաքսերը ավելի բարձր էին, քան չինական կառավարության հավաքած հարկերը: Անգլիացիները հայերին արգելում կամ խանգարում էին շահութաբեր ապրանքներ ներմուծել և արտահանել: Հայկական առևտրանավերի գործունեության շրջանակները սահմանափակվեցին միայն չինական ջրերով[1]:

Չինահայ ամենանշանավոր մտավորականը Հովհաննես Ղազարյանն էր: Նա ծնվել է 1778 թ. Մակաոյում, վաճառականի ընտանիքում: Փոքր հասակից ընդունակություններ է ցուցաբերել չինարենի մեջ: Տասը տարեկան հասակում ուղարկվել է Կանտոն, ուր նա յոթ տարի ուսումնասիրել է չինարեն և եվրոպական լեզուներ: Սկզբում Հ. Ղազարյանը Կանտոնում զբաղվում էր չինարեն լեզվի ուսուցչությամբ և թարգմանություններով, միաժամանակ գրագրի պաշտոնով ծառայում էր պորտուգալացիների մոտ: 1805 թ. Սերամփուրի միսիոներների խնդրանքով Հ. Ղազարյանը ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի անգլերենից չինարենի թարգմանությանը: Թարգմանության առանձին գլուխներ տպագրվեցին նույն Սերամփուրում: Ըստ չինագետների դա Աստվածաշնչի առաջին և լավագույն թարգմանությունն է չինարեն լեզվով:

Դեպի Չինաստան հայ գաղթականության զգալի հոսք է տեղի ունեցել 20-րդ դ. սկզբներին: Նախքան համաշխարհային առաջին պատերազմը հայերը Չինաստան էին գնում Միջին Ասիայից, Ռուսական կայսրության հեռավորարևելյան շրջաններից, Կովկասից: Եղեռնից և պատերազմից հետո Չինաստան էին անցնում նաև արևմտահայության բեկորներից: Գաղթականների այս նոր հոսանքով Չինաստանի նախկին

1 Սիոն, Երուսաղեմ, 1959, էջ 276:

գաղթօջախները ստվարացան, կազմակերպվեցին նորերը: Մարդաշատ դառան հատկապես երկրի հյուսիսային շրջանների՝ Խարբինի, Մանջուրիայի, Զանչունի, Չին-արևելյան երկաթուղու վրա գտնվող քաղաքների գաղթօջախները[1]: Այս նոր եկողների հիմնական մասը կարիքից նեղված, տնից, տեղից և հայրենիքից զրկված գաղթականներ էին:

Խոշոր վաճառականների և ընկերությունների տեր հայերի այս շրջանում արդեն չենք հանդիպում: Շատ թե քիչ միջին կարողության տեր վաճառականների կողքին, հատկապես Չինաստանի հյուսիսում, մեծ թիվ էին կազմում արհեստավորները, երկաթուղային ծառայողները, ինժեներները, շինարարները, երկրաչափները, մեխանիկները: Հայերի մի զգալի մասը զբաղված էր քաղցրավենիքի և հացաբուլկեղենի պատրաստմամբ և վաճառքով[2]:

Ճշգրտված թվական տվյալներ չինահայերի թվի մասին չունենք: Մեզ հասած երկու չափաբերականներից իմանում ենք, որ 1910–1924 թթ. հայ քահանան արձանագրել էր 415 ծնունդ, 233 պսակ, 104 մահ[3]:

Հայրենասեր գործիչների ջանքերով Խարբինում կառուցվեց փայտաշեն մատուռ, կազմակերպվեցին գաղթօջախների ազգային և մշակութային կյանքը սատարող «Ազգային ընկերությունը», «Հայ թատերասիրական ընկերությունը», «Հայ երաժիշտների խումբը» և այլն: Պահպանվել է 83 ստորագրություններով էջմիածնին հղած ընդարձակ մի նամակ-համախոսական, որտեղ մանրամասն տեղեկություններ են հաղորդվում չինահայ գաղթօջախների 1915–1916 թթ. կյանքի տարբեր կողմերի մասին[4]: Ի թիվս այլ հարցերի, նամակագիրները բարձրացնում էին նաև Խարբինում ազգային եկեղեցի ունենալու խնդիրը, «որը կարող է գոնե մասամբ սատար դառնալ չինահայությանը հեռու պահելու աստիճանական ուծացումից, գոնե մասամբ կնպաստի հայկական գաղթօջախների հայությանը ազգային հավատքով, կրոնով, կենցաղով, կյանքի կացութաձևով մնալ հայ, չձուլվել»[5]: Նամակագիրները էջմիածնի գերագույն հոգևոր խորհրդին տեղյակ էին պահում, որ տեղական իշխանություններից ստացել են 420 սաժեն հողակտոր (մեկ այլ վավերագրում այդ հողակտորը առանց փախհատուցման նվիրաբերել

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, դ. 4714, էջ 2–3:
2 Նույն տեղում, դ. 4719, թ. 3:
3 Նույն տեղում, դ. 4751:
4 Նույն տեղում, դ. 4751, դ. 4719:
5 Նույն տեղում, դ. 4717:

էին չինացիները) եկեղեցի կառուցելու համար: Չինահայերը Էջմիածնից խնդրում էին թույլ տալ այդ հողի վրա հայկական եկեղեցի կառուցել[1]: Էջմիածինը հարգում է չինահայերի այս խնդրանքը և թույլ է տալիս Խարբինում կառուցել եկեղեցի[2]: 1923 թ. չինահայերը ձեռնամուխ են լինում եկեղեցի կառուցելու համար հանգանակությանը: Հատկապես առատաձեռն են լինում Զանչունի հայերը, որոնք այդ նպատակի համար նվիրաբերել էին 1300 ոսկի ռուբլի: Խարբինի հայերը հավաքել էին 900 ոսկի ռուբլի[3] և այլն: 1923 թ. Խարբինի հայկական եկեղեցին արդեն պատրաստ էր, որին տրվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ անունը[4]: Նրան առընթեր կառուցվել էին օժանդակ շինություններ:

Չինաստանի հայկական գաղթօջախների հայրենասեր շրջանները կազմեցին համայնքների աշխատանքը ղեկավարող «Կանոնադրություն», որը կառավարության կողմից հաստատվեց 1922 թ. փետրվարի 9-ին[5]: «Կանոնադրությունը» բաղկացած էր 46 բաժիններից: Նրա առաջին պարագրաֆում ասված էր. «Կանոնադրությունը նպաստում է հիմնելու ազգային ընկերություն, որի նպատակն է լինելու Չինաստանում ապրող բոլոր հայերին համախմբելու ազգային գաղափարի շուրջ»: «Ընկերությունը» իր գլխավոր խնդիրն էր համարում իր բոլոր անդամների կյանքի, գույքի, ունեցվածքի ապահովությունը և հարկ եղած դեպքում նրանց նյութական օժանդակություն ցույց տալը: «Կանոնադրությունը» նախատեսում էր նաև բժշկական ձրի օգնություն կազմակերպել հիվանդ հայերին և այլ դիմողներին:

Խարբինում հայկական եկեղեցու կառուցումը և «Կանոնադրության» ընդունումը զգալի աշխուժացում առաջ բերեց չինահայ գաղութներում: Ավելի հաճախակի դարձան ազգային հավաքները, ժողովները: Եկեղեցուն կից կառուցված սենյակներում, ճիշտ է, ոչ պարբերաբար, քահանաները գրել-կարդալ էին սովորեցնում հայ մանուկներին: Ստեղծվեցին ազգային նոր կազմակերպություններ: Եկեղեցին դառել էր նաև չինահայ գաղթօջախները հայրենիքի հետ կապող օղակ:

Գրանցված է Չինաստանում ապրող հայերի հետևյալ շնչագրությունը. Մանջուրիա՝ 160, Խարբին՝ 560, Մուգդեն՝ 45, Շանհայ՝ 90, Հոն-

---

1 Նույն տեղում, գ. 4717, թ. 7բ:

2 Նույն տեղում, գ. 3712:

3 Նույն տեղում, գ. 4713, թ. 8:

4 Նույն տեղում, գ. 4717, թ. 7բ:

5 Նույն տեղում, գ. 4712, թ. 1–6:

կոնգ՝ 20, Տյանցզին՝ 70, Զանչուն՝ 200 չունչ հայեր: Այս շնչագրության մեջ չեն մտել մի շարք փոքր քաղաքների և հայոց հոգևոր կենտրոնին ենթարկվող հայերը[1]: Նույն ժամանակ հայեր էին ապրում նաև Չինաստանի Խայլար, Դայրեն, Ցիցիկար, Սինչան, Ցինդաո քաղաքներում: Դժբախտաբար, թվական տվյալներ այդ գաղթօջախների հայության վերաբերյալ չունենք[2]:

Խարբինին զուգընթաց երեսնական թվականների վերջերին մարդաշատ էր Շանհայի հայկական գաղութը: Հայերի թիվը այստեղ մոտենում էր 600-ի: Նրանք տարբեր մասնագիտության և զբաղմունքի տեր մարդիկ էին: Կային մեծահարուստ վաճառականներ, արդյունաբերական ընկերությունների բաժնետերեր, միջին և մանր առևտրականներ, արհեստավորներ, ազատ մասնագիտության տեր մարդիկ: Միմյանց աջակցելու և օգնելու նպատակով հայերը Շանհայում հիմնել էին իրենց ազգային դրամատունը[3]: Հայերի մեջ կային տնատերեր: Քաղաքի խոշորագույն մարդադաշտը Հայկ Ասատրյանի սեփականությունն էր:

Շանհայի հայերը մշակութային, ազգային, ընկերական կյանքը սատարելու նպատակով կազմել էին «Հայոց տուն», ուր տարբեր առիթներով՝ ժողովների, երեկոների, հանդիպումների, միջոցառումների էին հավաքվում տեղի հայերը[4]: Այստեղ 1951 թ. Վարդան Զաղալյանի ջանքերով հիմնվեց «Հայ երիտասարդական միությունը», որը հետագայում վերածվեց «Հայ բարեգործական միության»[5]:

Սկսված համաշխարհային երկրորդ պատերազմը, Ճապոնիայի կողմից Չինաստանի բռնազավթումը ծանր փորձություն եղան նաև չինահայության համար: Օկուպացիոն իշխանությունների կողմից հայերը դիտվեցին որպես կայսրության թշնամիներ և շրջափակվեցին համակենտրոնացման ճամբարներում: Նրանց մի մասը քաղցից, հիվանդություններից, ճապոնական խժդժություններից զոհվեց[6]:

Խարբինի, Մանջուրիայի և հյուսիսային Չինաստանի հայերը անսահման ուրախությամբ դիմավորեցին խորհրդային բանակի զինվորներին: Մի առանձին ջերմությամբ և ազգային հպարտությամբ հայերը

---

1 Նույն տեղում, գ. 4706:
2 Նույն տեղում, գ. 4737, թ. 26բ:
3 Նույն տեղում, գ. 4734:
4 Նույն տեղում, գ. 4735:
5 Նույն տեղում, գ. 4737:
6 Նույն տեղում, գ. 4736, վավ. 8, թ. 1:

դիմավորեցին խորհրդային բանակի հայազգի զինվորներին և սպաներին[1]: 1945 թ. օգոստոսի 19-ին հայերն ազատվեցին համակենտրոնացման ճամբարներից:

Պատերազմի ծանր տարիներին չինահայերի ազգային բոլոր կազմակերպություններն ու միությունները դադարել էին գոյություն ունենալ: Հետպատերազմյան առաջին հավաքը տեղի ունեցավ 1946 թ. մայիսի 26-ին, որն ստեղծեց ազգային նոր վարչություն[2]:

Մինչև 1950 թ. կեսերը շարունակում էր գործել հայերի «Հոգաբարձության մարմինը», որը ղեկավարում էր չինահայերի կյանքը: Կար և գործում էր նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին[3]:

«Կուլտուրական հեղափոխության» տարիներին տուժեցին նաև հայերը: Նրանց մեծ մասը հեռացավ Չինաստանից: Քանդվեցին հայոց եկեղեցին, նրան հարակից կառույցները, գերեզմանատունը: Այսօր Չինաստանում գրեթե հայեր չեն մնացել, եղածների մասին էլ դժբախտաբար տեղեկություններ չկան:

---

1 Էջմիածնի վեհարանի արխիվ, գ. 603, էջ 137:

2 Նույն տեղում, գ. 604, էջ 163:

3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գործ 4936:

ԲԻՐՄԱ

Բիրմայի հայկական գաղթօջախի հիմնման պատմությունը առնչվում է Բիրմայի նշանավոր կառավարողներից մեկի՝ Տաբենշվեստիի (1531–1550) երկիրը միավորելու նպատակով կատարած արշավանքներից մեկի հետ: 1541 թ. նա ձեռնարկում է մոնական Մարտաբան քաղաքի գրոհը և քաղաքն առնելուց հետո Տաբենշվեստիին իր հետ տանում է ինչպես մոնների, այնպես էլ այնտեղ ապրող օտար վաճառականների հարստությունը: Բիրմայի պատմության ճանաչված մասնագետ Ջ. Հարվեյը օտար վաճառականների շարքում հիշում է նաև հայերին[1]: Տակավին 1541 թ. առաջ Բիրմայի առևտրաշահ քաղաքներում արդեն կային հաստատված և վաճառականությամբ զբաղվող հայեր: Այս ենթադրությունը հաստատում է գտնում անգլիական մեկ այլ աղբյուրում: Բիրմական գահակալները հաճախ էին իրենց բանակը, հատկապես պահակազորը, համալրում օտարերկրացիներով: Ըստ վերոհիշյալ աղբյուրի, «1545 թ. Բիրմայի թագավոր Տաբենշվեստիը իր պահակազորում ուներ հայ զինվորներ»[2]: Այդ մասին հաղորդող հեղինակը նշում է, որ հայ զինվորները իրենց քանակով գրավում էին երկրորդ տեղը և աչքի էին ընկնում իրենց մարզվածությամբ[3]: Ջ. Հարվեյը բերում է նաև թագավորին ծառայող հայերի թիվը՝ «263 նիզակակիրներ»[4]:

Բիրմայի հնամենի գաղթավայրերից մեկը գտնվել է Ավայում: 17-րդ դարում «Գտանէին անդ բազումք ի հայոց... ունեն և եկեղեցի գեղեցիկ և պայծառ և ոսկեզօծեալ զանգակատուն առ նովաւ և սենեակք բնակարանք քահանայից»[5]: Բնական է, որ «ոսկեզօծեալ» եկեղեցի կարող էր ունենալ բարեկեցիկ կյանք ունեցող համայնքը միայն: Այս համայնքը հովվելու համար Էջմիածնից ուղարկվում է հոգևոր հովիվ[6]:

Այս շրջանում Ավայի հայերը հիմնականում զբաղվում էին վաճառականությամբ: Աշխարհագրագետ Պեշենգի վկայությամբ, «Վաճառականութիւն մեծամեծ իրաց, մանաւանդ ականց, է ի ձեռս նոցա»: Հայտ-

---

1 H a r v e y G. History of Burma, London, 1925, p. 155.

2 "Bevegal. Pasts and Presents", Calcutta, 1816, octoberde cember, p. 271.

3 *Նույն տեղում:*

4 H a r v e y G. *Նշվ. աշխ., էջ 158:*

5 *Ա գ ո ն ց Ս. Գ. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Դ, Վենետիկ, 1806, էջ 162:*

6 *Նույն տեղում, էջ 163:*

նի է, որ արտաքին առևտրում թանկարժեք քարերի, նավթի, անտառանյութի արտահանումը պետական մենաշնորհն էր: Բացառություն էին կազմում հայերը: Հատկապես մեծ չափերի էր հասնում հայերի արտահանած տիկա ծառի տախտակը, որն օգտագործվում էր նավաշինության մեջ[1]:

Անգլիական Արևելա-Հնդկական ընկերության ներկայացուցիչներից մեկը, որը 1660 թ. այցելել էր Բիրմա և բանակցություններ վարել թագավորական պալատի հետ, վկայում է, որ գրեթե ամբողջությամբ պալատին մոտ կանգնած հայերի ձեռքին էր սուտակի վաճառքը[2]:

16–17-րդ դդ. կեսերին հայ վաճառականների առևտրական համայնքների կղզյակներ կային նաև Պեգուում, Ամուրապարայում, Սիրիամում և Մանլեյում: Լուկյանովը Բիրմայում հաստատված առաջին հայերի մասին գրում է. «Կանբուններին հարստության ղեկավարները շատ էին գնահատում հայերին: Եկած շատ հայերի՝ որպես եվրապական և ասիական, այդ թվում նաև բիրմական լեզուներ իմացողների, կիրթ, ձեռներեց մարդկանց հրավիրում էին նավահանգիստներում աստիճանավորների, թարգմանիչների և վարչական այլ աշխատանքների: Հայերից շատերը,– շարունակում է նա,– 17-րդ դ. Բիրմայում հասել էին բարձր պաշտոնների, և նույնիսկ եվրոպացիների հետ կատարվող բոլոր գործողությունները դառել էին նրանց մենաշնորհը»[3]:

Բիրմական հողում հնագույն հայկական համայնքներից մեկը գտնվել է Սիրիամում: Այստեղ հայերը վայելել են թագավորի հովանավորությունը: Այստեղ ևս նրանցից շատերը հասել էին բարձր պաշտոնների: Երկրի «գանձապետն» էր Նիկողայոս Ջուղայեցին[4]:

Հայկական հատկապես հին գաղթօջախները երբեմն ամբողջությամբ զոհ էին դառնում Բիրմայում տեղի ունեցող հակամարտություններին: 1743 թ. անգլո-բիրմա-մոնական բախումներից մեկի ժամանակ բիրմացիների կողմից շրջապատված Սիրիամում հայերը հալածվեցին թե մոնների և թե բիրմացիների կողմից: Կրոնական մի տոնի առթիվ հայկական եկեղեցու զանգահարությունը դիտվեց որպես թշնամուն հաղորդվող ազդանշան: Հայոց քահանան՝ Սարգիսը և ժամհարը գլխատվեցին[5]:

---

1 *Սիոն, 1959, էջ 169:*

2 M a l c o l m H. Travels in East Asia of the Burman Empire, Boston, 1889, p. 74.

3 H a r v e y G. History of Burma, Bombey, 1919, p. 156.

4 *Ա գ ո ն ց Ս. Գ. Նշվ. աշխ., էջ 152–153:*

5 *Ա վ ե տ ո ւ մ յ ա ն Խ. Արամայիս, Կալկաթա, 1846, էջ 15:*

Բոլոր եվրոպացիների, այդ թվում նաև հայերի ողջ ունեցվածքը կողոպտվեց, տները, եկեղեցին այրվեցին: Այս ողբերգությունից շատ չանցած՝ հայերը կարողացան սթափվել և նորից վերականգնել իրենց վիճակն ու վարկը: Անգլիական հեղինակները նշում են, որ հայերը կառավարությունում նորից բարձր դիրքերի հասան: Նրանք հատկապես մեծ գովեստով են խոսում սուտակի խոշոր վաճառական, նավատեր, նավավար խոջա Սիմոնի մասին, որը հաճախ էր հանդես գալիս որպես անգլիական ընկերությունների և Բիրմայի կառավարության միջնորդ:

1756 թ. անգլիացիները, առանց բիրմական պետության համաձայնության, գավթեցին Նեգրեսեյ կղզին, կառուցեցին ամրություններ և սկսեցին նախապատրաստվել երկրի նվաճմանը: Բիրմացիների մի քանի նախազգուշացումները անգլիացիներին՝ դադարեցնելու ամրոցի կառուցումը, արդյունք չտվեց: Բիրմայի թագավոր Ալունպայը անգլիացիներին Նեգրեսյից վռնդելու գործը հանձնարարեց հայկական համայնքի աչքի ընկնող դեմքերից մեկին՝ Գրիգոր Այվազյանին, որը Ռանգունի մաքսատան ղեկավարն էր: Գր. Այվազյանը դիմեց ռազմական խորամանկության: Նա անգլիացիների մոտ հայտնի էր որպես վաճառական: Օգտվելով այդ բանից՝ նա լուր ուղարկեց, թե ապրանք է բերում վաճառելու: 1759 թ. աշնանային մի օր, լավ զինված մի ջոկատ՝ ծպտված վաճառականների և բեռնակիրների հագուստի տակ, մոտեցավ կղզուն: Անգլիացիները, ոչինչ չկասկածելով, նրանց թույլ տվեցին ափ իջնել: Մտնելով ֆակտորիա, զինվորները հատուկ ազդանշանով դուրս քաշեցին սրերը և սկսեցին կոտորել անգլիացիներին: Ֆակտորիան հիմնահատակ ավերվեց: Գրիգոր Այվազյանը այս հաղթանակի համար արժանացավ բարձր պատվի՝ Սիրիամի կառավարչի պաշտոնին[1]: Հետագայում նրան վստահվեց օտարերկրացիների հետ հարաբերությունների և երկրի բոլոր մաքսատների ղեկավարի պաշտոնը:

Այս իրադարձություններից հետո հայերի արտոնությունները շատ ավելի ընդարձակվեցին: Ռանգունում հայերը կառուցեցին եկեղեցի, քաղաքը դառավ հայաշատ: 18-րդ դ. վերջերին — 19-րդ դ. սկզբներին հայ գաղթօջախների վիճակը դառել էր կայուն, հայերի գործունեության շրջանակները ընդարձակվել էին: Առևտրականների, արհեստավորների, զանազան կարգի ծառայողների կողքին երևան էին եկել պլանտատորներ: Հայերին էր պատկանում Մանդալայից հյուսիս ընկած լե-

1 Սիոն, 1959, էջ 169:

ղակենու խոշոր պլանտացիաներից մեկը: Հայերը այստեղ և Սիմլեում ունեին լեղակի պատրաստման գործարաններ[1]: Հայերին էր պատկանում նաև կենտրոնական Բիրմայում նավթի արդյունահանման մենաշնորհը[2]:

19-րդ դ. կեսերին Բիրմայի հայ գաղթօջախներից աչքի էր ընկնում Մոուլմեյն նավահանգիստը: Այստեղ հաստատված հայերը հիմնականում զբաղվել են ծովային գործի հետ կապված աշխատանքներով՝ ծովայինից, նավաշինարարից, նավավարներից մինչև նավահանգստի կառավարիչներ: Այստեղ միայն Հովհաննես Սարգիսը կառուցել է 10 նավ[3]: Հայերը նավակառուցման կայաններ ունեին նաև Ռանգունում: Այստեղ է կառուցվել Բիրմայի ժամանակի խոշորագույն նավերից մեկը «Եղիսաբեթը»[4]:

Ինչպես Հնդկաստանում, Ինդոնեզիայում, այնպես էլ Բիրմայում հայերը աներեր կանգնել են իրենց նոր հայրենիքի պաշտպանության դիրքերում. «Մինիստր (Սարգիս Մանուկը – Ռ. Ա.) և մյուս հայերը անգլիացիների դեմ պայքարի ժամանակ (խոսքը 1824–1826 թթ. անգլո-բիրմական առաջին պատերազմի մասին է – Ռ. Ա.) մեծ ծառայություններ են մատուցել Բիրմայի թագավորական կառավարությանը: Հատկապես մեծ է եղել հայերի դերը պատերազմի հետևանքները վերացնելու ասպարեզում: Առանձին հայեր անմիջապես մասնակցեցին անգլիացիների դեմ մղվող պատերազմներին»[5]: «Նախարարն այն՝ Սարգիս Մանուկ, հայ պաշտօնեայք և հայք յոյժ պիտանի գտան ի ժամանակի պատերազմին ընդ անգղիացւոց...» – ասված է մի թղթակցության մեջ: Դրա համար էլ երկրի դահակալը «առ ազգն մեր» ցույց է տալիս «կողմնասիրական մարդասիրութիւն»[6]: Հայերը և նախարար Սարգիս Մանուկը պետությանը օգնելու համար տվել էին 400.000 ռուպի[7]:

Անգլո-բիրմական առաջին և երկրորդ պատերազմների տարիներին այնքան էր շեշտված հայերի հակաանգլիական կողմնորոշումը, որ պա-

---

1 ՀՀ ԳԱ Պատմ. ինստ. արխիվ, գործ 63, Բիրմա, 43:

2 Մուրճ, 1909, էջ 74:

3 Ազգասեր, 1848, №5, էջ 36:

4 Նոր Ազդարար, Կալկաթա, 1950, №17:

5 Լույս, Կոստանդնուպոլիս, 1876, №6, էջ 225 (տե՛ս նաև Тер-Мкртчян Л. Х., Тер-Мкртчян Л. К. Из истории армянской общины в Бирме.— Народы Азии и Африки, 1961, №3, с. 136).

6 Լույս, Կ. Պոլիս, 1875, №ԺԱ:

7 Մուրճ, 1905, №5:

տերազմից հետո անգլիական տիրապետության տակ անցած շրջաններում նրանք դիտվում էին որպես անգլիական թագի թշնամիներ, ձերբակալվում ու հալածվում էին, բռնագրավվում էր նրանց ունեցվածքը:

1875 թ. Բիրմայի մայրաքաղաքը Ամուրապարայից տեղափոխվեց Մանդալայ: Նոր մայրաքաղաք տեղափոխվեցին նաև հայերը: Հայերի նկատմամբ բարեկամաբար տրամադրված երկրի դահակալը նրանց ձրի հողամաս հատկացրեց՝ բնակարաններ և եկեղեցի կառուցելու համար: Նա ֆինանսավորեց նաև եկեղեցու կառուցումը:

Դահակալ Մինչունը, նոր մայրաքաղաքում հենվելով հայրենասեր կողմնակիցների վրա, սկսեց իրականացնել միջոցառումներ, որոնք սահմանափակում էին անգլիացիների թափանցումը երկիր: Չնայած դավադրությանը, որի ժամանակ սպանվեցին դահաժառանգը, նրա չորս եղբայրները, երկու նախարարներ, մի քանի այլ պաշտոնյաներ, այնուամենայնիվ, Մինչունը կարողացավ իրեն հավատարիմ կողմնակիցների շնորհիվ (որոնց մեջ զգալի թիվ էին կազմում հայերը) իշխանությունը պահել իր ձեռքին: Խռովարարների դեմ կռվի ժամանակ առանձին հայեր սպանվեցին ու վիրավորվեցին: Ժամանակակիցները հատկապես գովեստով են խոսում Եղիազար Գալստյանի մասին, որը թագավորին է ներկայացրել մոտ քառասուն «յապստամբիցն կալեալ և կապեալ»[1]: Մինչունի համար ճակատագրական այդ օրերին մի քանի հայեր թագավորի կողմից արժանացան պարգևների:

1850 թ. մեծ հրդեհի ժամանակ մոխրի վերածվեց Ռանգունի կեսը: Այրվեցին ու մոխրի վերածվեցին նաև հայոց եկեղեցին, շատ հայերի տները, խանութները և պահեստները[2]:

Բիրմական դահակալներ Մինդունի (1853–1878) և նրա որդի Տիբոյի (1878–1885) կառավարման ժամանակ արտակարգ բարդ էր երկրի արտաքին քաղաքական դրությունը: Չնայած զիջումներին, անգլիացիները օր ավուր զավթում էին նորանոր շրջաններ: Բիրմական պալատը փնտրում էր հզոր դաշնակից անգլիական ագրեսիայի դեմն առնելու համար:

Դաշնակից գտնվելու նպատակով Բիրման մեծ պատվիրակություն ուղարկեց Պարսկաստան և Եվրոպա, սակայն այդ դեսպանություններից և ոչ մեկը հաջողության չհասավ: Հետաքրքրական է, որ այդ դեսպա-

---

1 Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի Մատենադարան, ձեռագիր № 2805, թ. 539:
2 Նույն տեղում:

նությունների ուղեկցողների և թարգմանիչների մեջ եղել են շատ բիրմահայեր:

Անհաջողություններից հետո Մինդունը փորձեց կողմնորոշվել դեպի Ռուսաստանը: Ուսումնասիրողները համոզված են, որ առաջին տեղեկությունները Ռուսաստանի մասին Բիրմայում տվել են տեղի հայերը, որոնք էլ Մինդունին փորձել են կողմնորոշել դեպի Ռուսաստան: Ընդ որում դա ասում են թե ռուս, թե եվրոպացի և թե հայ հետազոտողները: Անգլիական դեսպանության ղեկավարներից մեկը՝ Ա. Ֆրայերը, 1855 թ. օգոստոսի 31-ին ուղարկած գաղտնի մի զեկուցագրում նկատել է, որ «Բիրմայում ապրող հայերը և հնդիկները համակրում են ռուսներին և ցանկանում են, որ նրանք ներխուժեն Հնդկաստան և Պեգուն վերադարձնեն Բիրմային»[1]: Ա. Ֆրայերը Մանդուրայում վարված բանակցությունների ժամանակ համոզվել է, որ հայերը ոչ միայն ունեն հակաանգլիական տրամադրություններ, այլև նպաստում են նրան, որ հատուկ միսիա ուղարկվի Ռուսաստան: Նա նույնիսկ կասկած է հայտնել, թե Բիրմայի հայ գաղթօջախներում անհավանական չէ, որ լինեն ռուսական գործակալներ[2]:

Ռուս ճանապարհորդ Ի. Մինաևը իր հուշերում գրում է, որ ինքը պալատում եղած ժամանակ ականատես է դարձել այն բանին, որ Մինդուն թագավորը «Հայ լուսավորչական եկեղեցու արքեպիսկոպոս Գրիգորին նամակ է տվել՝ Հայոց կաթողիկոսին հանձնելու համար»[3]:

Հայոց արքեպիսկոպոսի՝ Բիրմա կատարած այցի, Բիրմայի պալատում և թագավորի հետ ունեցած հանդիպումների մասին հատկապես շատ են գրել «Մեղու Հայաստանին» և «Մասիսը»: Պարզվում է, որ Մինդունի խնդրանքով հայկական այդ պարբերականներում տպագրված առանձին հոդվածներ թարգմանաբար ներկայացվել են նրան: Մինդունը դառել էր «Մասիսի» բաժանորդագիր և նրա խմբագրին պարգևատրել է բիրմական շքանշանով[4]:

Պահպանվել են հետաքրքիր վկայություններ, որոնք լույս են սփռում Գրիգոր արքեպիսկոպոսի և Բիրմայի թագավոր Մինդունի խորհրդավոր հանդիպումների և նամակագրությունների վրա: Պարզ-

---

1 N a r v e y G. *նշվ. աշխ., էջ 230–231:*

2 B a n e r j e e A. Ch. Annexation of Burma, Calcutta, 1944, p. 22.

3 П а ш и н о П. П. Бирманский император Тибо. Гражданин, СПб., 1878, № 20 – 21.

4 *Մասիս, 1876, 23 փետրվարի, 1877, 14 ապրիլի:*

վում է, որ Մինդունը նպատակ է ունեցել Գևորգ Դ. Կաթողիկոսի միջնորդությամբ ռուս-բիրմական հակաանգլիական դաշինք ստեղծել: Նման դաշինք ստեղծելուն մեծապես նպաստել են պալատին մոտ կանգնած մի խումբ բարձրաստիճան բիրմահայեր[1]:

20-րդ դ. սկզբին Բիրմայում հայերը ընդհանուր առմամբ բավարար վիճակ ունեին: Թեև նրանց մի մասը շարունակում էր զբաղվել առևտրով, սակայն նրանց կողքին մեծ էր նաև արհեստավորների, պետական հիմնարկներում և մասնավոր ընկերություններում ծառայողների թիվը: Կային նաև իրավաբաններ, ճարտարապետներ և այլն: Ստեփանոս և Մինաս եղբայրները իրար հաջորդեցին Սպահանում Բիրմայի հյուպատոսի պաշտոնում:

Ողջ Բիրմայում մեծ հեղինակություն ուներ ճարտարապետ Մարտինի կազմակերպությունը: 1916 թ. հայկական այս ընկերությունը համարվում էր աշխարհում արծաթ, կապար և ցինկ արտահանող ամենից հարուստ ընկերություններից մեկը: 1920 թ. այս ընկերության ջանքերով կառուցվեցին և ջրարկվեցին Բիրմայի ամենից խոշոր առևտրանավերը՝ «Արարատը» և «Արմենիան»: Հետագայում ընկերությանը միացավ «Նահապետյան Ընկ.»-ը և այն վերանվանվեց «Մարտին և Նահապետյան Ընկ.»: Ընկերությունը հատկապես կառուցողական մեծ աշխատանքներ է կատարել երկրի անկախության ստանալուց հետո: Հայկական այս ընկերությունն է կառուցել Բիրմայի անկախության հուշարձանը, Ռանգունի օդանավակայանը, բազմաթիվ բնակելի և վարչական շենքեր, կամուրջներ և այլն:

Մեկ այլ ձեռներեց գործիչ՝ Արամայիս Տեր-Գասպարյանը, 1901 թ. հիմնեց «Ներմուծող և արտահանող Գասպարյան ընկերությունը», որը գործեց մինչև 1960 թ.:

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Բիրմայում «Շելոկ» կոչվող հիմնարկը կաուչուկի միակ ընկերությունն էր:

Սկսած 1907 թ. Ռանգունի և Բիրմայի մյուս հայ դաղթօջախները առաջնորդվել են երկրի բարձրագույն դատարանի կողմից վավերացված, 47 կետից բաղկացած «Կանոնադրությամբ»: Այսօր, ցավոք, «Կանոնադրությունը» չի պահպանվել: Հավանաբար այն շատ ընդհանրություններ ուներ Ինդոնեզիայի, Չինաստանի և մյուս երկրների հայկա-

---

1 Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 227, վավ. 244, 245: Տե՛ս Ռ. Աբրահամյան, Բիրմայի հայ դաղթօջախի պատմությունից.— Պատմա-բանասիրական հանդես, 1988, N 2, էջ 107–119:

կան գաղթօջախների նմանատիպ «Սահմանադրությունների» և «Կանոնադրությունների» հետ:

20-րդ դ. 20-ական թվականներին բիրմահայ գաղթօջախները զգալի աշխուժություն ապրեցին Նոր Ջուղայից և Հնդկաստանից ելած նոր եկողների հաշվին: Միայն Ռանգունում նրանց թիվը անցավ 400-ից:

Բիրմահայության թվի ավելացումը առաջ բերեց նաև ազգային կյանքի աշխուժացում: 1911 թ. նրանց ազգային ժողովներից մեկը քննության հարց էր դարձրել թուրքական տիրապետության տակ գտնվող իրենց ազգակիցների վիճակը: Ժողովը կաթողիկոսին հղած նամակում գրում էր. «Արևելքի այս հեռու Բիրմանա կոչվող աշխարհում տարագիր ընկած հոգևոր հարազատ որդիք Հայությանդ հույս ենք հայտնում, որ վերջապես տաճկաց սահմանադրությունն վերջ պիտի դներ դարեր ի վեր հալածված ու նահատակված իր ամենահավատարիմ ժողովրդի՝ տաճկահայ մեր սիրելի եղբայրների և քույրերի հալածմանը, և ապահովություն հաստատվեր մեր եղբայրների և քույրերի կենաց, պատվի և գույքի համար: Սակայն ցավոք տեսնում ենք, մերձ չորս տարվան և անապահովությունը կյանքի, պատվի և գույքի, և նահատակվում են մեր անմեղ եղբայրներն ու քույրերը: Ուստի Բիրմանիայում ապրող հայ համայնքս միաձայն բողոքում ենք այն անիրավությանց դեմ և դիմելով Ձեր ամենապատիվ վեհափառությանն... աղերսում ենք Ձեր հայրապետական իրավունքները գործ դնելով ուր որ անկն պատշաճ եք գտնում, որպեսզի վերջ դնելով մեր տաճկահայ եղբայրների և քույրերի հարստահարությանցն, կյանքի, պատվի և գույքի ապահովություն հաստատվի Տաճկաստանում մեր եղբայրների համար»[1]:

Նամակը ստորագրել են Ռանգունի և Բիրմայի մի շարք այլ քաղաքների հայերի 193 ներկայացուցիչներ:

Կաթողիկոսին հղած այս նամակին կցված է աշխարհի բոլոր մեծ տերություններին հղած բողոք-նամակ, ուր նշվում է, թե հայերի ապահովության համար ինչ է պարտավոր իրականացնել թուրքական կառավարությունը: Այս փաստաթղթի վերջում մեծ տերությունների ղեկավարներին Բիրմայի հայերը խորհուրդ են տվել դյուրահավատ չլինել և չհավատալ թուրքերի՝ ռեֆորմներ անցկացնելու խոստմանը, «...քանի

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 677, էջ 83–96:

որ բոլոր դեպքերում, երբ թուրքերը ռեֆորմներ են խոստանում, բանը վերջանում է ջարդերով»:

Առնելով 1915 թ. եղեռնի ահավոր լուրը՝ Բիրմայի հայերը առաջին իսկ օրը հավաքեցին և օգնակարոտ իրենց եղբայրներին ուղարկեցին 15.000 ռուպի[1]: Հայերը կարողացան ազատել անգլիական գերության մեջ եղած թուրքական բանակի 130 հայազգի գերիների[2]: Բիրմահայերի բազմատեսակ օգնությունը եղեռնի զոհերին շարունակվեց նաև հաջորդ տարիներին:

1917 թ. Ռանգունում գործել սկսեց «Հայկական ակումբը», որը հայության հավաքատեղին էր: Հաջորդ տարին բարեգործության նպատակով բացված «Հայ տիկնանց միությունը» առաջին իսկ օրերից մեծ դեր խաղաց հազարավոր հայ որբերի՝ աղետի գոտուց Ամերիկա և այլ երկրներ տեղափոխելու գործում[3]:

1917 թ. Բիրմայում գտնվող Թ. Գուշակյանը Ռանգունում հիմնեց ՀԲԸՄ մասնաճյուղը, որն իր առաջին իսկ հավաքում հօգուտ եղեռնի աղետյալների հանգանակեց 20.000 ռուպի[4]: 1919 թ. Ընկերությունը մի նոր հանգանակությամբ հավաքեց 14.000 դոլար, իսկ 1923 թ. շատ ավելին:

1923 թ. Ռանգունում ստեղծվել է «Մեսրոպյան ազգասիրաց միությունը»: Բիրմայի հայ երկսեռ երիտասարդությանը հայ պահելը, հայոց լեզվի ուսուցումը, ազգային, ընկերային հանդիպումներն ու հավաքույթները կազմակերպելն էր 1930 թ. հիմնադրված «Հայկական առաջադիմական ընկերության» նպատակը[5]: Իր գոյության ավելի քան քսան տարիների ընթացքում այն սրբությամբ կատարեց իր ստանձնած խնդիրը: «Ընկերությունը» մինչև ճապոնական գրավումները անգլերեն լեզվով հրատարակում էր «Առաջ» թերթը, որը խմբագրում էր Միքայել Գասպարյանը[6]:

1930 թ. հայ երիտասարդությանը ի մի հավաքելու նպատակով կազմակերպվեց «Հայկական սպորտային ակումբը», որն ուներ ֆուտբոլի,

---

1 Արարատ, 1915, էջ 167:
2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1310:
3 Նոր Ազդարար, 1950, №1, էջ 18:
4 Պայքար, 1958, 2 նոյեմբերի:
5 Հայաստանի կոչնակ, Նյու-Յորք, 1932, էջ 242:
6 Ալիք, 1932, 1 հունվարի:

վոլեյբոլի, խոտի հոկեյի և այլ խմբեր: Խոտի հոկեյի խումբը 1931, 1932 և 1933 թ. շահել է խոտի հոկեյի ոսկե մեդալները[1]:

1935 թ. ՀԲԸՄ Բիրմայի մասնաճյուղը լուծարվեց, որի փոխարեն ստեղծվեց «Բիրմայի հայ բարեգործական ընկերություն» անկախ կազմակերպությունը, որը մինչև պատերազմը զգալի գործ կատարեց:

Բիրմայում 1930-ական թվականներին մղված հակաանգլիական շարժումը գլխավորում էր «Լիգա» կուսակցությունը: Նրա Լիդերներից էր իրավաբան Բաո Մաոն (Բաո Մավ), որը բուդդայական դարձած ջուղայեցի Եղիա Կարապետյանն էր: Նա հետագայում դառավ Բիրմայի լուսավորության նախարարը, ապա առաջին վարչապետը: Տարիներ անց Դ. եպ. Փոլադյանի հետ իր զրույցի մեջ ասել է, որ ինքը հպարտ է իր հայ անցյալով:

Ճապոնացիների կողմից Բիրման օկուպացնելուց հետո հայերի վիճակը կտրուկ փոխվեց: Ինչպես օկուպացված մյուս երկրներում, այստեղ էլ հայերը դիտվեցին որպես կայսրության թշնամիներ և ավելի քան երկու տարի «սարսռազդեցիկ ոդիսական ունեցան»: Շատ հայեր զոհվեցին համակենտրոնացման ճամբարներում: Հայերի տների մեծ մասը ավերվեց ռմբակոծությունից, կիսավեր դառավ Ռանգունի հայոց եկեղեցին[2]:

Պատերազմի տարիներին հայերն իրենց համեստ մասնակցությունն ունեցան Բիրմայի պաշտպանության գործին: Դ. Փոլադյանը նրանցից հիշում է գնդապետներ Դ. Վրթանեսյանին, Ն. Ծատուրյանին, հազարապետ Օ. Մինասյանին: Ճապոնացիներից Ռանգունի ազատագրման համար մղված մարտերում աչքի են ընկել Ռոբերտ, Արամ, Հովհաննես, Գևորգ Աղնավուրյանները: Ռանգունի մոտ Արամը զոհվեց[3]:

Բիրմահայությունը պատերազմից հետո մեծ ճիգերի գնով կարողացավ վերականգնել գաղթօջախի կյանքը: Սակայն երկրի ղեկավարության «Բիրման միայն բիրմացիների համար» լոզունգը հայերի վիճակը դժվարացրեց:

1950-ական թվականներին Բիրմայում գտնվող Դ. Փոլադյանը հետևյալ տեղեկությունն է հաղորդում տեղի հայերի մասին. «Ռանգունի հայերը ընդհանրապես իրար համերաշխ գործողությամբ, փոխա-

---

1 Ալիք, 1935, 25 օգոստոսի:

2 Դ ա ս պ ա ր յ ա ն Մ., Երկրորդ համաշխարհային պատերազմը և Հեռավոր արևելքի հայ գաղթօջախները, Նոր Ազդարար, 1950, № 1, էջ 15–16:

3 Սիոն, 1959, էջ 171:

դարձ սիրով ու հասկացողությամբ իրարու հանդեպ վստահությամբ՝ օրինակելի տիպար դաղութ մը կհանդիսանան, կազմելով մեծ ընտանիք մը»[1]:

Ռանգունի հայոց եկեղեցին վերաշինվելուց հետո այլևս քահանա չունեցավ: Չնայած դրան, հայերը հավաքվում էին այստեղ, երբեմն ինքնուրույն ծիսակատարություններ կատարում, մտքեր փոխանակում համայնքի ազգային, ընտանեկան հարցերի շուրջ:

1 Նույն տեղում:

Մալակա թերակղզու արևմտյան ափի մոտ գտնվող Պինանգ համանուն քաղաք-նավահանգստով կղզին, որպես Չինաստանի հետ կապող ծովային ուղիների վրա գտնվող հենակետ, առևտրական աշխարհին վաղուց է հայտնի: Հայերը դեռևս XVII դ. վերջերին Պինանգում առևտրական գործարքներ էին կատարում, սակայն հայկական մնայուն գաղթօջախն այստեղ սկսել է կազմավորվել XVIII դ. վերջերից: Պինանգում հաստատված առաջին հայերը Հնդկաստանում, Չինաստանում, Բիրմայում և Ինդոնեզիայում գործող հայկական խոշոր առևտրական ընկերության ներկայացուցիչներն էին: Արդեն XVIII դ. Պինանգում կազմվել էին հայկական առևտրատներ և կազմակերպություններ, որոնք համարձակ մրցակցություն էին ծավալել եվրոպական, առաջին հերթին անգլիական, առևտրական ընկերությունների հետ:

XIX դ. սկզբին (1822 թ.) Պինանգ քաղաք-նավահանգստի կենտրոնական փողոցներից մեկի վրա կառուցվեց հայկական եկեղեցի՝ օժանդակ շենքերով հանդերձ: Հայ մեծահարուստ վաճառական, ազգային գործիչ Խաչատուր Գալստյան Շիրազեցին եկեղեցին կառուցելու համար հողամաս ձեռք բերելու և կառույցը ֆինանսավորելու գործում վճռական դեր է խաղացել: Անգամ եկեղեցու ծախսերը հոգալու և քահանային աշխատավարձով ապահովելու նպատակով նա իր երկու խանութներից ստացվող եկամուտը եկեղեցուն է հատկացրել: Սակայն վերջինիս կառուցման ծախսերի մեծ մասը հավաքվել է տեղի «հայազգի հայրենասէր բնակչաց հայեցվոց» հանգանակությամբ, որոնք ցուցաբերել են «զնախանձելի օրինակ աստուածասիրութեան և ազգասիրութեան, յայսմ հեռավոր կողմն աշխարհի»[1]:

1869–1870 թթ. Հնդկաստան և Հեռավոր արևելք կատարած այցի ժամանակ Երուսաղեմի նվիրակ Հովհաննես վարդապետ Մեծիփեկյանը եղել է նաև Պինանգում: Նա աշխատել է հավաքել այն նշխարները, որոնք մնացել էին երբեմնի հայկական գաղթօջախից: Շնորհիվ Հ. Մեծիփեկյանի հասու են դարձել մի շարք հետաքրքիր փաստեր, որոնց օգնությամբ մասամբ հնարավոր է լինում վերականգնել Պինանգի հայության պատմության առանձին էջերը: Հ. Մեծիփեկյանը տալիս է Պինանգի հայոց եկեղեցու հետևյալ նկարագրությունը. «Երկայնութիւն

1 *Ազգասեր, Կալկաթա, 1846, թիվ 66, էջ 115:*

քսան և երկու քայլ և լայնութիւն ինն քայլ կարի սիրոյն տեսլեամբ շինութիւն մի է: Ի հիւսիս և հարաւ և ի յարևմուտս սրահ ձգեալ է սիւնազարդ հաստատուած շինուածքով յաղիւսեայ թրձեալ ութ և տասն սիւն ի հիւսիս, ութ և տասն սիւն ի հարաւ ի միջի վանդակապատ գեղեցիկ սալայատակ կազմեալ և աստիճանս վերելից: Շուրջ եկեղեցեաւ պարտէզ զանազան ծառոց և ծաղկանց և խոնարհ պարսպապատ ի վերայ չորից արքունական ճանապարհաց դրունս թողլով — և բնակութիւն քահանայի ուր ուրօք վայելուչ: Ամենայն ինչ եկեղեցւոյս վայելուչ է քան այլոց ազգաց յեկեղեցւոց և ձևաւոր Կալկաթա, Ռանգունայ և Մանղլեու — յեկեղեցեաց մերոց»[1]: Այս տեղեկությունը արժեքավոր է նաև նրանով, որ եկեղեցին վաղուց քանդվել և նրա փոխարեն այլ շենք է կառուցվել:

Հ. Մեծիփեկյանը բերել է նաև ինչպես եկեղեցու որմերին եղած, այնպես էլ նրա բակի այժմ արդեն ոչնչացված շիրմաքարերի հայերեն բազմաթիվ արձանագրություններ[2]: Միաժամանակ ուղեգրողը տեսել է նաև գետնատարած, առանց արձանագրության շիրմաքարերով բազմաթիվ գերեզմաններ:

Հ. Մեծիփեկյանի ընդօրինակած այս արձանագրությունները հերքում են որոշ ուսումնասիրողների այն կարծիքը, թե Պինանգի հայկական գաղթօջախի թիվը նրա բարգավաճման շրջանում հաշվվել է մի քանի մեծահարուստ ընտանիք: Հասկանալի է, որ նման քանակությամբ հայերը մի քանի տարվա ընթացքում տասնյակ ննջեցյալներ տալ և սեփական գերեզմանուտուն ունենալ չէին կարող: Միաժամանակ այս փաստը ցույց է տալիս, որ մինչև XIX դ. 60–70-ական թվականները Պինանգի հայկական համայնքը, իրոք, եղել է բազմանդամ: Ինչպես շատ տեղերում, այնպես էլ այստեղ հայերն ապրել են հավաքական կյանքով, և հավանաբար հենց այդ ժամանակ էլ իր անունը ստացել է հայաբնակ «Հայկական» կոչվող փողոցը[3]:

1830–1840-ական թվականներին՝ Սինգապուրի արագ բարձրացման և միջազգային առևտրի խոշոր կենտրոն դառնալու տարիներին, թեև այնտեղ շատ հայեր տեղափոխվեցին, սակայն Պինանգում հայկական կյանքը կանգ չառավ: Հատկապես լայն էր նավատեր հայ վաճառա-

---

1 Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռագիր № 2805, էջ 352:

2 Նույն տեղում, էջ 362:

3 Կ ա ր ի ն յ ա ն Ա. Բ. Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956, էջ 361:

կանների գործունեության շրջանակը, որը ներառում էր «Բրիտանիա, այլ կողմանք Եւրոպիոյ, Ամերիկա, Մաւրիտեա, Կալկաթա և մօտաւոր կողմանք նորա, Մադրաս եւ կողմն նորա, Բումբայ, Սիլան, Մուլմեյն և մօտաւոր կողմանք նորա, Տեննասերիմ, Աչին, Սենեստան, Բաթաւիա, Սիամ, Դելի» և այլն[1]:

1840–1841 թթ. Պինանգ եկած 353 և դուրս մեկնած 354 առևտրանավերի մեջ զգալի տեղ են գրավել հայերին պատկանող «Հերոս», «Արտաշ», «Հարութիւն Աբգար», «Հովհաննես Մանուկ» և բազմաթիվ այլ հայանուն նավեր: «Ազգասերը» 1846 թ. հրատարակել է հետևյալ հետաքրքիր փաստը. այն ժամանակ, երբ 1844–1845 թթ. Պինանգի նավահանգիստ են մտել անգլիական հինգ, եվրոպական տարբեր երկրներից երեք, Ամերիկայից ժամանած երեք առևտրանավեր, Սինգապուրից, Մադրասից, Կալկաթայից, Բոմբեյից, Ռանգունից, Բաթավիայից այստեղ են հասել հայ վաճառականներին պատկանող 111 նավեր՝ հպարավոր տոննա բեռներով[2]: Այդ վիճակը գրեթե անփոփոխ պահպանվել է նաև հաջորդ մի քանի տարիներին:

1851 թ. էջմիածնապատկան հայկական թեմերի մեջ մտնող գաղթօջախների շարքում հանդիպում ենք Պինանգին[3]: XIX դ. 50–70-ական թվականներին Պինանգում գործող հայկական կազմակերպություններից ամենանշանավորները Հնդկաստանում գործող «Արևելյան ապահովելոց» առևտրաարդյունաբերական ընկերության և նշանավոր «Աբգարյան ընկերության» մասնաճյուղերն էին: Վերջինս կառավարում էր Մատուր Հարությունյան-Անտոնյանը՝ իր տասներեք շնչից բաղկացած ընտանիքով: Ի դեպ, նա նաև տեղի հայ քահանա Հակոբ Հայրապետյանի հետ միասին ղեկավարում էր Պինանգի հայկական համայնքը: Պինանգի հայությունն ամուր թելերով կապված էր հայրենիքի, հատկապես հարևան երկրների հայկական գաղթօջախների հետ և հաղորդակից էր հայկական կյանքին: Հեռավոր այս կղզում էլ հայերը հայկական թերթեր էին ստանում: Դեռ ավելին, «Ազգասերը», «Ազգասեր Արարատյանը», «Ուսումնասերը» ոչ միայն ընթերցողներ, այլ նաև թղթակիցներ և «գործակալներ» ունեին Պինանգում:

XIX դ. կեսերին Պինանգը շարունակում էր մնալ որպես հարուստ հայկական գաղութ, Հեռավոր արևելք հասած գրեթե բոլոր նվիրակնե-

---

1 Ազգասեր, 1846, թիվ 71, էջ 155–156:

2 Նույն տեղում, 1847, հ. Դ, էջ 64:

3 Ազգասեր Արարատյան, 1851, հ. Գ, թիվ 72, էջ 569:

ը՝ Էջմիածնից, Նոր Ջուղայից թե Երուսաղեմից, այցելում էին նաև Պինանգ: Պահպանվել է Երուսաղեմի Նվիրակ Հ. Մեծիփեկյանի առաջարկով տեղի հայերին Պինանգի քահանա Հայրապետ Բաշխամյանցի՝ 1869 թ. դեկտեմբերի 2-ին հղած ուղերձը՝ հանգանակություն անելու հորդորով[1]: Պինանգից «Աբգարյան ընկերության» ղեկավարությանը նվիրակը տեղեկացնում էր, որ պինանգահայությունը ակտիվորեն մասնակցել է հանգանակությանը:

Հովսեփ Անտոնյանի և Արշակ Սարգսյանի մոտ 1917 թ. պահվում էր եկեղեցապատկան մի գումար, որից 300 ոսկի բաժին էր հանվել «ի նպաստ ազգային կարեաց հանդանակութեան գործին[2]: Պինանգի հայերը 1917 թ. Թ. Գուշակյանին խնդրել են միջնորդել կաթողիկոսի առաջ՝ տնօրինելու իրենց մոտ մնացած եկեղեցապատկան գումարը և կարգադրություն անելու նաև հայկական եկեղեցու տարածքի հետագա ճակատագրի վերաբերյալ:

1927 թ. «Արևում» տպագրված համառոտ մի հաղորդագրությունից իմանում ենք, որ Պինանգում կային հայեր, որոնք քաղաքում պահում էին մի քանի խոշոր հյուրանոցներ: Հիշյալ ժամանակ հայկական դաղթօջախի ճանաչված անդամներից էին Էդգարյան հայտնի ընտանիքի զավակներ Արշակ և Սարգիս Էդգարյանները, Զարլզ Աբգարը, որը նշանավոր Աբգարյան տան զավակն էր և «ինքն է շինել իր կյանքի պատմությունը, չի ապավինել իր նշանավոր միլիոնատեր պապի և հոր ավանդներին... և սեփական ջանքերով բարձրացել է քաղաքի ամենից ճանաչված և մեծահարուստ մարդկանցից մեկի աստիճանին»: Մի քանի անգամ «միլիոնատեր եղած, կորսուցած և նորեն գտած է»: 1927 թ. նա նորից «սանդուղքի առաջին աստիճանին բարձրացած է»: Հետաքրքիր է, որ աշխարհի հեռավոր անկյունում միլիոնատեր այս հայն «արտասովոր հետաքրքրությամբ ուզում է իմանալ ամեն բան, ամեն մի մանրամասնություն Հայաստանի մասին, կարդում էր այն ամենը, ինչ կար հայրենիքի վերաբերյալ և ուզում էր իր հարստությամբ վերադառնալ հայրենիք, իր հետ բերելով իր միլիոնները և մասնակից դառնալ հայրենիքի վերաշինության» գործին:

1930-ական թվականների սկզբին Պինանգում մնացել էին հատուկենտ հայկական ընտանիքներ: Տեղական իշխանությունները, օգտվե-

---

1 Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռագիր № 2605 դ, էջ 353:

2 Գ ո ւ շ ա կ յ ա ն Թ. նշվ. աշխ., էջ 249:

լով այն բանից, որ հայերն այլևս եկեղեցի չեն հաճախում, և այն խարխլվել էր, որոշել էին խլել հայերին պատկանող եկեղեցու տարածքը և քանդել եկեղեցին՝ նրա տեղում այլ շինություն կառուցելու համար: Իշխանությունների այդ որոշման դեմ Սինգապուրի հայերի եկեղեցական վարչությունը բողոքեց: Դատարանը երկար քաշքշուկից հետո ստիպված եղավ վճիռ կայացնել հօգուտ հայերի, և հայոց եկեղեցին մնաց անձեռնմխելի: Բայց հետագայում Սինգապուրի հայոց եկեղեցական վարչության անդամներ Ս. Հովհաննիսյանը, Մ. Հակոբյանն ու քահանա Ս. Շամամյանը եկեղեցին, դրան կից կառույցները և շրջակայքի հողամասը 34.000 դոլարով վաճառում են ու հիմնում «Խաչատուր Գալստյան» անձեռնմխելի ֆոնդը, որի տոկոսներով մինչև 1950-ական թվականները պահվում էր Սինգապուրի Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցին[1]: Պինանգի եկեղեցու հոգաբարձու Արտաշես Սարգսյանի ջանքերով կորստից փրկվեց նաև Պինանգի եկեղեցու գույքը, որը հանձնվեց Սինգապուրի հայոց եկեղեցուն:

Վերջին հայերը Պինանգից հեռացան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Նրանք քաղաքի հռչակավոր «Օրիենտալ» հյուրանոցի տեր Տիգրան, Սարգիս, Արշակ և Մարտիրոս Սարգսյան եղբայրներն էին: Սարգսյանները վաճառեցին ինչպես «Օրիենտալը», այնպես էլ Պինանգի հյուսիսում գտնվող ամառանոցային վայրի իրենց հյուրանոցները և հեռացան: 1957 թ. իր կարճատև այցի ժամանակ Թ. Գուշակյանն այստեղ տեսել է միայն մի քանի տուն հայ: Հայկական եկեղեցին Թ. Գուշակյանը գտել է կիսավեր վիճակում: «Սրբավայրը,– գրել է նա,– կմնա կրոնական հաստատության մը վայելուչ իր պատկառազդիկ դիրքին մեջ, սրբված, սալարկված և շրջափակված՝ իր ծոցին մեջ ամփոփելով տասնյակ տապանաքարեր, որոնց վրա դրաբարը անմահ կնիքը կդնե իր անմեռ գեղեցկությամբ: Խորանին տեղը կանգնած է գոթական դմբեթով և սյուներով քարուկիր ամենասիրուն տաղավար մը, որը կլրացնե սրբավայրին եկեղեցական մեծավայելչությունը»[2]:

Եթե նախկին որոշ գաղթօջախներում որպես անցյալի հուշ գոնե մնացել են հայկական անուններ կրող փողոցներ, հայկական եկեղեցիներ և հայատառ, մամռակալող շիրմաքարեր, ապա Պինանգի հայկական անցյալից այսօր այդ էլ չի մնացել: Վերջին հուշը հայկական եկե-

---

1 Պայքար, Բոստոն, 24.VI.1958:

2 Նույն տեղում:

ղեցու տարածքում մնացած մոտ քսան գերեզմաններն էին, որոնք եկեղեցու տարածքին տեր դարձած վարչությունը քանդեց: Ննջեցյալների աճյունները տեղափոխվեցին անգլիական գերեզմանոց և ամփոփվեցին մի գերեզմանում:

Սինգապուր կղզում ծովափին, անգլիական գաղութային քաղաքականության նշանավոր գործիչ Թ. Ռաֆլզը 1819 թ. հիմնեց առևտրական ֆակտորիա, որը և հետագայում դարձավ Սինգապուր քաղաքի հիմքը: 1824 թ. Մալակայի Ջոխորթայի սուլթանությունը Սինգապուր կղզին ամբողջությամբ հանձնեց Արևելա-Հնդկական առևտրական ընկերությունը: Թ. Ռաֆլզի հիմնած փոքրիկ ավանը շատ արագ սկսեց աճել և շուտով դարձավ հարավ-արևելյան Ասիայի նավահանգստային խոշորագույն առևտրական կենտրոններից մեկը: Այդ ժամանակներից էլ հայերը սկսեցին հաստատվել Սինգապուրում: Ըստ Ա. Միրոյանի, «Հայերը Սինգապուրում եղել են դեռևս մինչև անգլիացիների գալը 1819 թվականից»: Դեռևս 1820 թ. այնտեղ կային հայկական առևտրական երեք ընկերություններ[1]: Այդ ընկերությունների ղեկավարներ Արիստակես և Հարություն Սարգսյաններն ու Խաչիկ Մովսիսյանն այստեղ էին տեղափոխվել Մալակայից:

Սկզբնապես Սինգապուր էին գալիս հիմնականում մադրասահայերը, ապա նրանց հետևեցին Հնդկաստանում և նրա հարևան երկրներում ապրող ջուղահայերը: Սրանց մեծ մասը հմուտ, բազմափորձ, եվրոպական վաճառականների հետ ունեցած մրցակցության բովում թրծված վաճառականներ էին, որոնց հիմնականում այստեղ էր հասցրել առևտուրը: Սակայն, առևտրականներից բացի, Սինգապուր էին տեղափոխվում նաև այլ զբաղմունքի հայեր, որոնք կատարում էին զանազան ծառայություններ և հանձնարարականներ հայկական առևտրատներում, ընկերություններում և այլ հիմնարկներում:

Սինգապուրի բարձրացումից հետո նրանից ոչ այնքան հեռու գտնվող Մալակա քաղաքը կորցրեց իր նախկին առևտրատնտեսական նշանակությունը: Դրա հետևանքով շատ վաղուց, դեռևս հոլանդական ներխուժումներից առաջ ստեղծված Մալակայի հայկական գաղթօջախը երկարամյա ծաղկուն կյանքից հետո սկսեց անկում ապրել: Գործելու լայն շրջանակներից և հնարավորություններից զրկված հայերը գրեթե ամբողջությամբ տեղափոխվեցին Սինգապուր: 1820–1822 թթ. Սինգա-

---

1 M i r r o i a n Ar. The Comprehensive Armenian adress book of Australia. Sidnei, 1983, p. 21.

պուր տեղափոխվեց նաև հարևան Պինանգ կղզու հայության որոշ մասը[1]:

Այսպիսով, ծայրագույն արևելքի առևտրաշահ նավահանգստային քաղաքն իր մեջ առավ Հնդկաստանից, Պինանգից, Մալակայից և Հեռավոր արևելքի մյուս շրջաններից եկած հայերին: Ներդաղթող հայերը Սինգապուրի կենտրոնում կողք կողքի կառուցեցին բազմաթիվ տներ, խանութներ, պահեստաշենքեր և այլն: Հայերին պատկանող այդ տները կազմեցին Սինգապուրի կենտրոնական փողոց-հրապարակներից մեկը: Երբեմնի հայաշատ այդ փողոցը մինչև այսօր էլ կոչվում է իր հին՝ «Հայկական փողոց» անունով: Այն Սինգապուրի չորս հայանուն փողոցներից ամենամեծն ու հնագույնն է:

Սինգապուրում հաստատված հայերը ուշի ուշով հետևում էին Նոր Ջուղայում և մայր հայրենիքում կատարվող իրադարձություններին: Նրանք քաջատեղյակ էին Անդրկովկասում ռուսական բանակների առաջխաղացմանը և Հայաստանի փրկությունը Թուրք-իրանական դարավոր լծից կապում էին Ռուսաստանի հետ: Ռուսական բանակների կողմից Երևանի ազատագրման և հայ ժողովրդին ռուսական հովանավորության տակ առնելու լուրը հասավ նաև հեռավոր Սինգապուրի հայությանը: Այստեղ էլ, Արևելքի մյուս գաղթօջախների հայության նման, կազմակերպեցին հանդիսություններ, ժողովներ, ուր սրտաբուխ, շնորհակալական ջերմ խոսքեր ասվեցին ռուս ազատարար բանակի հասցեին, էջմիածին և Ռուսաստան ուղարկվեցին շնորհակալական նամակներ և այլն[2]:

Ինչպես ամենուր, այստեղ ևս կազմավորված հայկական գաղթօջախի առաջին հոգսը եղել է եկեղեցու կառուցումը: Սինգապուրի հայոց եկեղեցու հիմնադրումից մինչև 1895 թ. պահպանված տոմարները բավական հետաքրքիր փաստեր են պարունակում Սինգապուրի հայկական գաղթօջախի ազգային-եկեղեցական կյանքի վերաբերյալ: Պարզվում է, որ դեռևս մինչև եկեղեցու կառուցումը հայերը Սինգապուրում ունեին ազգային «եկեղեցական կառավարչական մարմին»[3], որը ղեկավարում էր գաղթօջախի ազգային կյանքը: «Կառավարչական մարմինը» 1830

---

1 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա. Պատմություն հայ գաղթականության, հ. Դ, մասն Ա, Կահիրե, 1961, էջ 444–445:

2 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 59, վավ. 597:

3 Պայքար, Բոստոն, 4.VII.1957:

թ. դեկտեմբերի իր հերթական ժողովներից մեկում գաղթօջախի ներքին կյանքի վերաբերյալ ընդունել է մի շարք որոշումներ: Այս ժողովում էլ հայերը համաձայնության են գալիս Սինգապուրում եկեղեցի կառուցել: Ի դեպ, այդ ժամանակ այստեղ ապրող եվրոպական ազգերից ոչ մեկը դեռևս եկեղեցի չէր կառուցել: 1835 թ. հայերը ձեռնամուխ եղան եկեղեցու կառուցմանը, որն ավարտվեց 1936 թ.: Նույն թվականի մարտի 24-ին այն օծվեց, և ժողովրդի ցանկության համաձայն, նրան տրվեց սբ. Գրիգոր Լուսավորչի անունը[1]: Գրեթե նույն ժամանակ եկեղեցու բակում կառուցվեց բավականին ընդարձակ երկհարկանի տուն, որը, քահանայի բնակարան լինելուց բացի, Սինգապուրի հայության համար ծառայում էր որպես հավաքատեղի և ժամանակավոր հյուրանոց նոր եկած կամ ծերացած ու աղքատ հայերի համար:

XIX դ. 30–40-ական թվականներին Սինգապուրի հայության թիվը հաշվվում էր մի քանի հարյուր: Եռանդուն հայերը ավելացրեցին իրենց տների, խանութների թիվը: «Հայկականի» կողքին արդեն կային «Սարգսյան փողոցը» ի պատիվ Հովհաննես Շահնազար Սարգսյանի և «Մարտիրոսյան նրբուղին»[2]: XIX դ. 30-ական թվականների համար Սինգապուրի մի քանի հարյուր հայությունը նկատելի թիվ էր, քանի որ պաշտոնական տվյալների համաձայն, 1830 թ. Սինգապուրում ապրում էր ընդամենը 4500 մարդ: 1830-ական թվականներից հայտնի էր Խ. Մովսիսյանի անունը, որին պատկանում է ծովից տարածք նվաճելու և այդ տարածքի վրա շինություններ կառուցելու առաջին գաղափարը. դրա համար նա արժանացել է հիշատակության և գնահատականի Սինգապուրին նվիրված ուսումնասիրություններում: Շարունակում էին իրենց ակտիվ գործունեությունը Արիստակես և Հարություն Սարգսյան եղբայրները: Կարճ անց Սինգապուրում հայտնի դարձան Հակոբ Հարությունյանը, Եսայի Զաքարյանը, Սիմոն Ստեփանյանը, Մարտիրոս Աբգարը, Սեթյան եղբայրները և ուրիշներ, որոնք խոսուն դեր ունեցան քաղաքի առևտրատնտեսական կյանքում:

1840–1850-ական թվականներին Սինգապուրում և նրանից դուրս մեծ ճանաչում ուներ Բազիլ Զոակիմի (Բարսեղ Հակոբի) ադամանդի վաճառքի տունը, որը մասնաճյուղեր ուներ աշխարհի շատ երկրներում: Բազիլ Զոակիմի առևտրատունը, գրասենյակները և խանութները

---

1 Նույն տեղում:

2 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա. նշվ. աշխ., էջ 444–445:

գտնվում էին «Ներսես Բազիլ» փողոցի վրա, որը հայանուն չորրորդ փողոցն էր Սինգապուրում: Այս փողոցը մինչև վերջին ժամանակներս պահպանում էր իր հայկական անունը[1]: Բազիլ Ջոակիմի երեք զավակներն էլ փաստաբաններ էին, որոնք Սինգապուրում, Կուալա-Լումպուրում հիմնել էին իրավաբանական ծառայությունների հիմնարկներ: Դրանցից երկուսը մինչև վերջերս գործում էին իրենց հիմնադիրների անվան տակ:

1842 թ. Սինգապուրի հայերն արդեն ունեին կազմակերպված ազգային կյանք և առևտրական համարձակ գործարքներ էին կատարում: Նրանք ապրանքներ էին ներմուծում և արտահանում եվրոպական երկրներ: Ինչպես երևում է Իսահակ վարդապետի օրագրությունից[2] և «Ազգասերի» հրատարակած նյութերից, հայերը առևտուրը կատարում էին սեփական նավերով և կախման մեջ չէին օտար նավատերերից:

XIX դ. 40–50-ական թվականներին Սինգապուրի հայ գաղթօջախի ակնառու դեմքերից էր Ս. Ստեփանոսյանը՝ «Աբգար և Ստեփանոսյան» առևտրատան տնօրենը: Ահա թե ինչպես է Մ. Թաղիադյանը բնութագրել Ս. Ստեփանոսյանին՝ նրա մահվան առթիվ գրած մահախոսականում. «Նրա մոտ խորհրդո աղերսական իջաներ անգլիացին ի վտանգու վաճառաց իւրոց, և զամենազոր յանճարն զճար հաներ տառապանացն: Աղքատ և հպարտ մալայացին զհայն իբրև զոք զուարթնոցն ... բազմահնար չինացին դիմեր զնա զոր հանապազ, և մեծագանձն բորնեացին անկաներ նպաստեաց նորա...: Իսկ նա արդարև այր մարդասեր զամենեսինն ընդուներ սիրով յանձնանձեր դթով հորդորեր աննախանձ խորհրդովն ի շահ և ի յօգուտ անձանց»: Նրան էին դիմում նաև իր հայրենակիցները «վասն պէս պէս կարեանց իւրեանց...: Ծովահայեաց և ընդարձակ տուն նորա ասպնջական վայելուչ էր ամենայն մերազգի վաճառականաց, պանդխտոցն և աստանդելոց»[3]:

Սինգապուրում ևս հայերի մշտական մրցակիցներն ու հակառակորդները անգլիացիներ էին: Սկզբում մեկ-երկու մեծահարուստ հայերի, ապա ընդհանրապես բոլորի դեմ սկսվեց կազմակերպված հալածանք:

1849–1853 թթ. Սինգապուրի հայության կյանքի հայելին էր հանդիսանում նույն թվերին տեղում հրատարակված «Ուսումնասեր» քաղա-

---

1 Mirroian Ar. նշվ. աշխ., էջ 32–33:

2 Ազգասեր, Կալկաթա, 1846, հ. Բ, թիվ 45, էջ 204:

3 Նույն տեղում, թիվ 16, էջ 125:

քական, գիտական և առևտրական երկշաբաթաթերթերը: Այն սկզբում տպագրվում էր Ա. Սեթյանի «Արփի» վիմադարանում: Հետագայում «Ուսումնասերի» հիմնադիրը կազմակերպեց իր «Մասիս» վիմադարանը, որտեղ էլ տպագրվում էր պարբերականը: «Ուսումնասերի» խմբագիր-հրատարակիչը Գ. Գալստյանն էր: 1849 թ. նա ձեռնամուխ է եղել «Ուսումնասերի» հրատարակմանը, իսկ 1853 թ. դադարեցրեց երկշաբաթաթերթի տպագրությունը և հեռացավ Ավստրալիա[1]:

Սինգապուրում, Հնդկաստանում, Բիրմայում, Ինդոնեզիայում «Ուսումնասերի» խմբագիրն ուներ իր համախոհները: Թերթը Կալկաթայում, Մադրասում, Բոմբեյում, Բաթավիայում, Ռանգունում, Պինանգում, Կանտոնում, Սուրաբայայում, Ջապարայում և այլուր պահում էր գործակալներ, որոնք ոչ միայն թղթակցում էին թերթին, այլև նպաստում նրա տարածմանը: «Ուսումնասերը» գործակալ է ունեցել անգամ Զմյուռնիայում:

«Ուսումնասերի» բոլոր համարներն ունեին հատուկ առաջնորդողներ, որոնցում անդադար հոլովում էին «ազգ», «լուսավորություն», «հայրենասեր», «ազգասեր» բառերը: «Ուսումնասերը» առաջին հերթին մանրամասն տեղեկություններ էր տպագրում Սինգապուր մտնող նավերի, դրանց ջրածավալի, այդ նավերի բերած ապրանքների քանակի, տեսականու մասին: Այդ մանրամասն ցուցանակներում հանդիպում են բազմաթիվ հայանուն և հայերին պատկանող նավեր: «Ուսումնասերի» նյութերը տեղեկացնում էին նաև հայ վաճառականներին հետաքրքրող ապրանքների տեսականու մասին: Արևելյան ավանդական համեմունքները և կիսֆաբրիկատներն իրենց առաջնային տեղը զիջել էին երկաթին, արճճին, պողպատին, նավթին, չինանյութին, սղնձին և այլն:

Որպես կանոն, Սինգապուր էին գալիս հիմնականում Հնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի և նրանց հարևան երկրների այն հայերը, որոնց առևտրական ասպարեզներից դուրս էին մղում եվրոպական երկրների առևտրական ընկերությունները: «Ուսումնասերը» լուրերի բաժնում տեղ է տվել նաև Սինգապուրի հայերի ներքին կյանքի մանրամասներին, հայկական եկեղեցու ժողովներին: Երբեմն հոդվածներ և տարբեր լուրեր են հրատարակվել նաև Հնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի,

---

1 Կարինյան Ա. Բ. Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956, էջ 373:

Զինաստանի հայկական գաղթօջախների ներքին կյանքի վերաբերյալ, որոնք «Ուսումնասերին» էին ուղարկում նրա գործակալները:

«Ուսումնասերը», քաղվածքներ անելով Պոլսի և Եվրոպայի հայկական թերթերից, իր ընթերցողներին բազմաթիվ հետաքրքիր լուրեր էր հաղորդում Ռուսաստանում ապրող հայերի մասին, մի առանձին ոգևորությամբ մեկնաբանում այս կամ այն հայի՝ Ռուսաստանում ունեցած հաջողությունը:

Սինգապուրի հայերն ունեին «Ազգային ժողով», որը պարբերաբար հավաքել և քննարկել է գաղթօջախի ներքին կյանքին վերաբերող տարբեր հարցեր: «Ազգային ժողովն» ամենամյա իր հավաքում ընտրել է «կառավարչություն»՝ աթոռակալի ղեկավարությամբ: Հավանաբար, «Ազգային ժողովը» հիմնադրվել է 1833 թ.:

1870-ական թվականներին, ականատեսների վկայության համաձայն, Սինգապուրում ապրում էին մոտ հարյուր տուն հայեր, «որոնք Հնդկաստանի՝ Անգլիայի լծեն ազատ կողմերուն վաճառականության մեծ մասը ձեռքերնին կպահեն»[1]:

XIX դ. վերջին թուրքական կառավարության կազմակերպած հայկական կոտորածների և վայրագությունների մասին լուրերը հասան նաև Սինգապուր: Այստեղ էլ հայերն իրենց բողոքի ձայնը բարձրացրին հանուն իրենց եղբայրների պաշտպանության: 1895 թ. հունվարի 25-ին Սինգապուրի հայերի «Եկեղեցական մարմինը» գումարում է իր արտակարգ նիստը, որը տեղի հայության անունից հատուկ նամակով դիմում է կաթողիկոսին՝ «խնդրելով ... դիմել առ վեհափառ մեծ կայսրն Նիքոլայ, զի նա միջամուխ լիցի վասն հայոց տառապելոց ի Հայաստան և փրկեսցի զնոսա ի չար կապանաց տաճկան»[2]:

XX դ. սկզբին Սինգապուրի հայկական համայնքը, թեև փոքրացած, բայց շարունակում էր գոյատևել խառնալեզու և բազմակրոն այդ քաղաքում: Դեռ շարունակում էին գործել հայկական մի քանի առևտրատներ, անգամ ընկերություններ, որոնք իրենց մասնաճյուղերն ունեին Ասիայի և Եվրոպայի մի շարք երկրներում: Հայերին էին պատկանում քաղաքի ամենախոշոր հյուրանոցներից մի քանիսը:

XX դ. սկզբին Սինգապուրի հայկական գաղութի վերաբերյալ թռուցիկ, բայց հետաքրքիր տեղեկություններ է թողել «Գանեցի» կեղծան-

---

1 Զագրճեան Հ. Եփ. Պատմութիւն հայոց հայկազեան տէրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակն, Վիեննա, 1872, էջ 441:

2 Մանկավարժանոց, Թիֆլիս-Պետերբուրգ, 1897, № 1, էջ 8:

վամբ մի հեղինակ: Պարզվում է, որ 1914 թ. Սինգապուրում ապրում էին մի քանի տասնյակ տուն հայեր, որոնք հիմնականում զբաղվում էին պանդոկապանությամբ: Նրանք տիրում էին Սինգապուրի երեք հռչակավոր պանդոկներին, որոնցում միայն միլիոնատերերն ու նշանավոր վաճառականներն էին իջևանում: Կային նաև հանձնակատարներ, ընդարձակ խանութներ ունեցողներ «բոլորն էլ նյութական լավ վիճակում»[1]:

1917 թ. Սինգապուրի հայ գաղթօջախը, թեև փոքրացած, բայց շարունակում էր գոյատևել: Հայկական գաղթօջախում հատ ու կենտ մնացել էին անցյալի մեծահարուստ նոտաբլները: Ստեփանոս Պողոսի, Եդգարյան եղբայրների և Միքայել Մարտինի առևտրական տները դեռևս աչքառու դիրք ունեին Սինգապուրում: Նրանցից առաջինները մասնաճյուղեր ունեին նաև Լոնդոնում և Բանգկոկում[2]: Սինգապուրի հայերը իրենց «կյանքին ու ընտանեկան հարկին մեջ եվրոպականացված կարգ ու սարքին հետ կպահեն ազգային բոլոր պարզությունը և հայկական ոգով ջերմությունը: Եվ այս բոլորը դպրոցի և մամուլի բացակայության պայմաններում, հեռու հեռաստանում ընկած մի փոքրիկ կղզում»[3]:

Վերադարձի ճանապարհին Թ. Գուշակյանը 1917 թ. նորից այցելում է Սինգապուր: Նախօրոք եղած պայմանավորվածության համաձայն, Սինգապուրի հայկական համայնքի սեպտեմբերի 6-ի ընդհանուր ժողովում կազմակերպվեց Հայկական բարեգործական ընկերության Սինգապուրի մասնաճյուղը:

Սինգապուրի հայությունը ևս ճապոնական զավթումների տարիներին նյութական և մարդկային ծանր կորուստներ կրեց: Պատերազմի հենց սկզբին անգլիական զինվորական իշխանությունները բռնագրավեցին հայկական եկեղեցին և հարակից կառույցները՝ դրանք վերածելով ռազմամթերքի պահեստի և ռազմական շտաբի: Նման օբյեկտը չէր կարող վրիպել ճապոնական ռազմական ավիացիայի աչքից, և այն ռմբակոծվեց: Եկեղեցին և հարակից կառույցները մեծապես տուժեցին և կիսավեր դարձան[4]:

---

1 Վան Տոսպ, Վան, 1914, թիվ 22–24:

2 Գ ո ւ շ ա կ յ ա ն Թ. Հնդկահայք, Երուսաղեմ, 1947, էջ 339:

3 Նույն տեղում:

4 Նոր Ազդարար, Կալկաթա, 1954, թիվ 14–16, էջ 55:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո համակենտրոնացման ճամբարներից ազատված հայերը սկսեցին վերադառնալ քաղաք, վերաշինել իրենց տները, վերականգնել քայքայված տնտեսությունը և ձեռնամուխ լինել հին գործին:

1950-ական թվականներին Սինգապուրի հայկական գաղթօջախի սոցիալական պատկերը առաջվանը չէր: Նախկին վաճառականներին փոխարինելու էին եկել ավտոդրասենյակների վերակացուները (Ջ. Սարգսյան և Բ. Հովհաննիսյան), դրասենյակի տարբեր պատասխանատու պաշտոնավարներ (Մարտիրոս և Մկրտիչ Մելքումյաններ, Գ. Մելքոնյան, Ն. Հովհաննիսյան և ուրիշներ), պանդոկի տերեր, կառավարիչներ և ծառայողներ (Դ. Գասպարյան, Գ. Առաքելյան), նշանավոր իրավաբաններ (Գ. Սեթյան, Ն. Քրիստոփորյան): Կային նաև ապրանքներ ներմուծող և արտահանող վաճառականներ (Ա. Գալուստյան, Հ. Հարությունյան)[1]: Հայերն ունեին իրենց «Հայկական ակումբը»: Պահպանվում էին այստեղի հայերի ավանդական դարձած հավաքները, փոխադարձ այցերը և այլն: Շարունակում էր գործել Սինգապուրի հայոց եկեղեցու կառավարչական մարմինը, որը բաղկացած էր հինգ անդամ-անդամուհիներից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկար ժամանակ նրա անդամներն էին Ա. Առաքելյանը, Բ. Հովհաննիսյանը, Ջ. Սարգսյանը, Գ. Մելքոնյանը: Եկեղեցու կառավարչական մարմնին կից կար նաև նրա ղեկավար կազմի մեջ մտնող երեք անդամներից կազմված եկեղեցու անդամապահ մարմին: 1954 թ. Սինգապուրում Ա. Միրզոյանի կատարած շնչագրությունից երևում է, որ այն ժամանակ գաղթօջախում «բարեկեցիկ կյանք էին վարում 60 չունչ հայեր»[2]:

Սինգապուրի հայկական գաղթօջախը, թեև փոքրացած, այսօր էլ գոյատևում է: Հայերը շարունակում են առաջվա նման զբաղվել առևտրով, ոմանք զանազան ծառայություններ են կատարում վարչական հիմնարկներում, կան հյուրանոցային գործով զբաղվողներ:

---

1 Նույն տեղում, էջ 53:

2 Mirroian Ar. նշվ. աշխ., էջ 33:

ՀՈՆԿՈՆԳ
(ՍՅԱՆԳԱՆ)

Այս փոքրիկ հայկական գաղթօջախի կազմավորման ժամանակի մասին Հոնկոնգի համալսարանի պրոֆ. Հինդեյ Ռայթը հետևյալն է գրել. «Ես իմ հետազոտությունների ընթացքում հանդիպել եմ հայերի, որոնք Հոնկոնգ և Մակաո են եկել շատ ավելի կանուխ, քան պորտուգալացիները»[1]: Մինչև անգլիացիների կողմից Սյանգ կղզին զավթելը հայերը այնտեղ փաստորեն պորտուգալացիների և անգլիացիների մրցակիցներն էին առևտրի մեջ, ունեին իրենց առևտրանավերը, առևտրական տներն ու կազմակերպությունները: Բացի ինքնուրույն գործող «տեղացիներից», որոնք մշտական էին հաստատվել այստեղ, կային նաև շատ հայեր, որոնք ներկայացնում էին Շանհայի, Կանտոնի, Հնդկաստանի և Հեռավոր արևելքի մյուս հայկական առևտրական կազմակերպությունների մասնաճյուղերը: Այստեղ էլ հայերը, օգտվելով առևտրի ասպարեզում իրենց համար ընձեռված ազատություններից և արտոնություններից, միջնորդի դեր էին խաղում տեղական իշխանությունների և եվրոպացիների միջև, հանդես էին գալիս որպես թարգմանիչներ:

Հայ գաղթօջախը Հոնկոնգում կազմակերպված կյանք է ապրել սկսած 18-րդ դ. կեսերից: Հոնկոնգում հաստատված հայերը հիմնականում առևտրով զբաղվող ջուղահայեր էին: Թեև նրանց մասին թվական տվյալներ չկան, բայց դատելով այն բանից, որ այնտեղ էլ, որպես էջմիածնապատկան համայնք, անհրաժեշտ է համարվել նվիրակներ ուղարկել, պետք է, որ բավականին հայեր եղած լինեն:

Դեռևս 1757 թ. չինական կայսրության հատուկ հրովարտակով, Գուանչժոուից բացի, չինական բոլոր նավահանգիստները փակվեցին օտարերկրյա նավերի համար: Անգամ «բաց» հայտարարված Գուանչժոում ոչ մի օտարերկրացի իրավունք չուներ հաստատվելու և չինարեն սովորելու: Հայտնի են փաստեր, երբ օտարներին չինարեն սովորեցնող չինացին գլխատվել է: Բացառություն էին կազմում միայն հայերը:

Չնայած անգլիացիների կողմից հայերի նկատմամբ կազմակերպված հալածանքներին և անհավասար մրցակցությանը՝ Հոնկոնգի հայությունը առաջին շրջանում կարողացավ ոչ միայն դիմանալ, այլև որոշ բարգավաճում ապրել:

---

1 *Արև., Կահիրե, 26.VII.1958:*

1870-ական թվականներին Հարություն Գրիգորյանի և նրա Հարոլդ, Կյուրեղ, Դենիս եղբայրների ձեռքում էին գտնվում ադամանդի վաճառքի տասը խոշոր տներից չորսը:

1877 թ. Հոնկոնգի հայկական համայնքին այցի եկած Գրիգորիս արքեպիսկոպոսը, որին սիրով են ընդունել տեղի հայերը, հիշում է Խաչիկ և Թեոփիլ Պետրոս Ծատուրյան եղբայրներին, որոնց գործը «փոխանակագիր տալ և ընդունելն է վասն դրամատանց և վաճառականաց», Հովհաննես Ղևոնդ Ավետումյանին, որը իր հայրենակից Սըր պոլ Զաթըրի նման զբաղվում էր ծովից հող նվաճելով: Վերջինս եռանդուն գործիչ էր, չիներենի քաջ գիտակ: «Նման սորին,— վկայում է Գրիգորիս արքեպիսկոպոսը,— չտեսայ խոսող չինարեն»[1]:

19-րդ դ. վերջին հայկական համայնքի աչքի ընկնող դեմքերից էր բազմաթիվ ձեռնարկների հեղինակ Տիգրան Գրիգորյանը: Հետագայում նա դարձավ նավային խոշոր ընկերության տնօրեն: Քաղաքի ներմուծման և արտահանման գրասենյակի պետն էր Հարություն Սեթյանը: Նա միաժամանակ հնդկերենից անգլերեն և չինարեն գլխավոր թարգմանն էր:

19-րդ դ. վերջին Հոնկոնգի նշանավոր բժիշկներից էր Պողոս Հորդանանյանը, որի ջանքերով կղզուց գրեթե վերացավ մալարիան: «Դարձյալ իր բարեգործումների ծրագիրներու միջոցով կարելի եղած էր աղքատ չինացիներու տեղավորում մաքուր և ներկայանալի տուներու մեջ իրագործել». դա հայ բժշկին մեծ համբավ և ժողովրդականություն էր բերել[2]:

Չնայած սակավաթիվ լինելուն՝ Հոնգոնգի հայերը զգալի դեր էին խաղում տեղի արտաքին առևտրում: Հատկապես գործունեության մեծ շրջանակ ուներ Հայկ Իփեկլյանի հիմնած ադամանդի վաճառքի տունը, որը մինչ օրս էլ գործում է: Համաշխարհային ճանաչում ունեցող հայկական այս ընկերությունը իր բաժանմունքներն ունի Ճապոնիայում, Տաիլանդում, Անգլիայում, ԱՄՆ-ում, Ինդոնեզիայում, Ֆիլիպիններում, Ֆրանսիայում, Ավստրալիայում և այլուր:

19-րդ դարում Հոնկոնգի հայերից ականառու դիրքեր ունեին նաև խոշոր նավատեր վաճառականներ Ղազար Ա. Աբգարը, Աբգար Մ. Աբգարը, Ջնթլում Ղազար Աբգարը և ուրիշներ, որոնք ունեին սեփական

---

1 Արարատ, 1877, էջ 235:

2 Նույն տեղում:

առևտրատներ և ընկերություններ: Նրանք առևտրական գործարքներ էին իրականացնում Եվրոպայի և Ասիայի խոշորագույն բազմաթիվ քաղաքներում[1]:

19-րդ դ. վերջերին մի քանի մեծահարուստ հայեր Հոնկոնգ եկան Կանտոնից, Շանհայից, Ռանգունից և այստեղ առևտրական լայն գործունեություն ծավալեցին:

Գրիգորիս արքեպիսկոպոսի վկայությամբ, Հոնկոնգի բոլոր հայերը շատ սերտ կապերի մեջ են եղել միմյանց հետ, օգնել-օժանդակել են միմյանց:

Ժամանակին Հոնկոնգի ոչ միայն հայկական համայնքի, այլև ողջ կղզու ամենից նշանավոր դեմքը եղել է Սըր Պոլ Զաթըրը՝ Պողոս Խաչիկ Աստվածատրյանը: 1859 թ. պատանի Պողոսը քրոջ հետ հասել է Հոնկոնգ, մխրճվել նրա տնտեսական կյանքի մեջ: Իր ձեռներեցության և ջանքերի շնորհիվ հասել է Հոնկոնգի «ամենանշանավոր, ամենաազդեցիկ, ամենահարուստ մարդու աստիճանին», դարձել նրա «թիվ առաջին քաղաքացին»: Օտար և հայկական թերթերը նրա մասին խոսելիս միաբերան նշել են, որ «Հոնկոնգ քաղաքը հառաջացնող և պայծառացնող ամեն մի ծրագրի և շինության մեջ իր բաժինը և ակտիվ մասնակցությունն է ունեցել Սըր Պոլ Զաթըրը»[2]: Նա էր Հոնկոնգի նավահանգստի ծովը նվաճելու և նրա վրա կառույցներ կանգնեցնելու դաղափարն առաջարկողը, ֆինանսավորողն ու իրականացնողը: Նրա այս նախաձեռնությունը ժամանակակիցները համարել են «դարուս ամենահանդուգն, ամենաընդարձակ, ամենահանճարեղ ծրագրերից մեկը»[3]: Ֆրասիական Վիշի քաղաքում Սըր Պոլ Զաթըրի հետ հանդիպումից հետո «Սանդի Թայմս» թերթի թղթակից Թ. Կոննորը նրա մասին գրել է. «Սըր Պոլ Զաթըրը հավանաբար հանդիսանում էր կայսրության ամենահայտնի և միևնույն ժամանակ ամենահզոր և, ինչ որ շատ կարևոր է, ամենաբարեբար դեմքը: Հոնկոնգում նա կանգնած է ամեն ինչի գլուխ: Առանց նրա ոչինչ չի ձեռնարկվում: Նրա ձեռքում են առևտրական նավատորմը, բանկային գործը, միջազգային բանկային ընկերությունները՝ մինչև Փարիզ ու Լոնդոն: Նա խոշորագույն հողատեր է: Այս ամենով հան-

---

1 Ա լ պ ո յ ա ճ յ ա ն Ա. Նշվ. աշխ., հ. Գ, էջ 292, Արև, 28.VII.1958:
2 Նոր դար, Թիֆլիս, 1884, էջ 179:
3 Արևելք, Կ. Պոլիս, 1879, էջ 170:

դերձ նա մեծահոգի բարերար է, ամենաբարի ու շռայլ մարդը ողջ Չինաստանում»[1]:

Հայազգի բարերարի օժանդակությամբ են կառուցվել Հոնկոնգի համալսարանը, քաղաքի բազմաթիվ դպրոցներ, բնակելի տներ, հիվանդանոցներ: Հիշյալ հիվանդանոցներից մեկը ղեկավարում էր տեղացիների մեջ մեծ համբավ ունեցող և հարգանք վայելող բժիշկ Հ. Հորդանանյանը:

Սըր Պոլ Զաթըրը 1876–1926 թթ. ղեկավարել է Հոնկոնգի հաշտարար դատարանը, քառասուն տարի եղել է Հոնկոնգի գեներալ-նահանգապետի առաջին խորհրդականը: Նույնքան ժամանակ Սըր Պոլ Զաթըրը Հոնկոնգի գործադիր և օրենսդիր խորհուրդների անդամ էր: Դեռևս 1902 թ. կառավարությունը նրան շնորհեց «Սըր» տիտղոսը. նա առաջինն էր, գուցեև վերջինը Հոնկոնգում ապրող օտարազգիներից, որ արժանացել է այդ տիտղոսին: Նա քանիցս մասնակցել է համաբրիտանական և միջազգային միջոցառումների՝ որպես Հոնկոնգի ներկայացուցիչ:

Հասնելով «Հոնկոնգի առաջին քաղաքացու» աստիճանին՝ նա սերտ կապեր է ունեցել իր ազգակիցների հետ, հովանավորել և շռայլորեն օգնել է նրանց, սատար եղել նրանց բոլոր հայրենասիրական ձեռնարկումներին: Սըր Պոլ Զաթըրը իր դրամով Կալկաթայում կառուցել է 24 սենյականոց շենք՝ օգնության կարոտ, աղքատ ու ծերացած հայերի համար, որտեղ ապրողները ստանում էին նաև թոշակ[2]: Նա 1924 թ. սիրով ընդունել է Էջմիածնի նվիրակ Սահակ եպիսկոպոս Ավետյանին: Ազգային լեզուն և նկարագիրը պահպանած Սըր Պոլ Զաթըրը մեծապես հետաքրքրվել է Հայաստանում կատարվող վերափոխումներով: Նա Էջմիածնի նվիրակին խնդրել է իր համակրանքները հաղորդել վերաշինվող հայրենիքի ղեկավարներին: Բաժանվելիս Էջմիածնի կարիքների համար Սըր Պոլ Զաթըրը Սահակ եպիսկոպոսին է հանձնել 50000 ֆունտ ստերլինգի նվիրատվության չեկ[3]: Հաջորդ տարին նրան այցելել է Էջմիածնի մեկ այլ նվիրակ՝ Ռուբեն վարդապետը և երկար զրույց ունեցել, պատմել է նրան Հայաստանի վերաշինության մասին: Հայրենասեր բարերարը Ռուբեն վարդապետին հայտնել է, որ ինքը թեև Էջմիած-

1 Արև, 1926, հուլիսի 8:
2 Նույն տեղում:
3 ՀԽՍՀ ԿՊՊԱ, ֆ. 409, ց. 1, գործ 4708, թ. 16:

նին և Հայաստանին նոր է դրամ նվիրել, բայց Հայաստանին վերաշինության համար նորից սիրահոժար նվիրում է 1000 ոսկի[1]:

Հատկապես մեծ են եղել ազգային նպատակների համար Սբր Պոլ Զաթբրի թողած կտակագումարները: Տարբեր առիթներով բարերարը Կալկաթայի Ս. Նազարեթ հայոց եկեղեցուն է նվիրաբերել 750.000 ռուպի[2]: Մահվանից առաջ այդ եկեղեցուն է նվիրել նաև իր ողջ ունեցվածքը, բացի հախճապակու իր հավաքածուից, որը գնահատվում էր 2.500.000 ստերլինգ, և որը Պոլ Զաթբրը նվիրել էր Հոնկոնգին[3]:

Պոլ Զաթբրի նպաստով պահվում և կրթություն են ստանում բոլոր այն հայերը, որոնք սովորում են Կալկաթայում իր իսկ ավարտած «Մարտին» կոլեջում:

Սբր Պ. Խ. Աստվածատրյանը մահացել է 1926 թ. 80 տարեկան հասակում: Նրա պալատը, որը կառուցված է իտալական մարմարից, մահից հետո վերածվեց թանգարանի, ուր պահվում էին չինական, հնդկական, մալայական արվեստի մեծարժեք գործեր: Այդ արժեքների մի մասը կողոպտվեց ճապոնական գրավումների ժամանակ և արվեստի աշխարհին հայտնի մնաց ժամանակին հրատարակված կատալոգներից միայն: Երախտապարտ հոնկոնգցիները իրենց բարերարի անունով են կոչել քաղաքի երկու կենտրոնական փողոցները «Աստվածատրյան» և «Սբր Պոլ Զաթբր»: Այսօր Հոնկոնգում ապրում են հատ ու կենտ հայ ընտանիքներ: Շարունակում է գործել ադամանդի առևտրի «Իփեկլյան ընկերության» մի մասնաճյուղը: Վերջին ժամանակներս գաղութը աննշան աշխուժություն ապրեց: Այնտեղ սկսեցին գալ և բնակություն հաստատել չինաբնակ բազմաթիվ հայեր, որոնց մեծ մասը, սակայն, հեռացավ Ավստրալիա:

---

1 Նույն տեղում:

2 Արև, 1.VIII.1956:

3 Նույն տեղում:

ՄԻՋԻՆ ԱՍԻԱ

19-րդ դարի վերջին Միջին Ասիայում հայ գաղթավայրերի կազմավորումն ամբողջապես կապված էր այդ երկրամասի ռուսական գաղութացման հետ: Պատմական համեմատաբար կարճ ժամանակաշրջանում առավելապես իսլամ դավանող թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված այդ տարածաշրջանում երևան եկան մնայուն հայ գաղութներ:

Միջին Ասիայում 19–20-րդ դդ. հայ գաղթավայրերի պատմության մեջ կարելի է առանձնացնել հստակորեն տարբերակվող երեք ժամանակաշրջան. 1) հայկական գաղութների գոյացման և լիարժեք զարգացման ժամանակաշրջան (1881–1917), 2) ազգային հաստատությունների բռնի վերացման և ազգային կյանքի սահմանափակման ժամանակաշրջան (1917–1939), 3) էթնիկական և մշակութային ուժգնորեն կերպափոխման և ուծացման պրոցեսներում հայ ազգաբնակչության ներգրավման ժամանակաշրջան (1939–1991): Սույն եռահատորյակի ժամանակագրական շրջանակները թույլ են տալիս ծանրանալ միայն առաջին ժամանակաշրջանի պատմության վրա:

19-րդ դարի վերջին քառորդին անգլո-ռուսական հակասությունների և զարգացող ռուսական բուրժուազիայի շահերի ազդեցությամբ ցարիզմը ձեռնամուխ եղավ Միջին Ասիայի միակցման եղրափակիչ փուլի իրականացմանը՝ Թուրքմենիայի նվաճմանը: Ստոլետովի արշավախմբի կողմից 1869 թ. Կրասնովոդսկը հիմնադրելուց, մի շարք հետախուզություններից և դեպի Անդրկասպիայի խորքը առաջ շարժվելու անհաջող փորձերից հետո ռուսական բանակի հարամանատարությունը տրվեց գեներալ Սկոբելևին, որը 1881 թ. գրոհով վերցրեց թուրքմենների գլխավոր պատվարը՝ Գեոկ-Թեփե ամրոցը և այնուհետև գրավեց ամբողջ Ախալ-Թեքինյան օազիսը: 1884 թ., դիտակցելով հետագա դիմադրության անօգուտ լինելը, նոր կազմավորված Անդրկասպյան մարզի մեջ «կամավոր» մտան նաև Մերվի թուրքմենները: Գրեթե քառորդ դար անց, ցարի 1897 թ. դեկտեմբերի 26-ի հրամանագրով, Անդրկասպյան մարզը մտցվեց Թուրքեստանի գեներալ նահանգապետության կազմի մեջ և դարձավ «Ռուսական Թուրքեստանի» 5 մարզերից մեկը:

Անդրկասպյան երկրամասը դարձավ Թուրքեստանի հայ գաղութացման անդրանիկ և գլխավոր օջախը: Հենց Անդրկասպիայից էր, հենվելով տեղի հայ համայնքների վրա, զարգանում հայերի հետագա տեղաշարժը դեպի Միջին Ասիայի խորքը: Արդեն 19-րդ դարի սկզբին ռուսա-

կան հպատակություն ունեցող հայերը, որպես ռազմական և առևտրական գործակալներ, գործուն մասնակցություն են ունենում դեպի Կասպից ծովի արևելյան ափը ձեռնարկվող ռուսական արշավներին: 1813 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, դերբենդցի վաճառական, հայազգի Իվան Մուրադովը ռուսական զինվորական իշխանությունների հանձնարարությամբ Մանգիշլակում կապեր է հաստատում թուրքմենների տոհմապետ Քիյաթ-խանի հետ: 1830 թ. մերձկասպյան թուրքմենների ռուսական նշմարվող կողմնորոշումն ուժեղացնելու նպատակով կոմս Պասկևիչն Անդրկասպիա ուղարկեց յասավուլ Լալաևին: Միաժամանակ, առափնյա թուրքմենների հետ աշխույժ առևտուր էին ծավալում Աստրախանի հայազգի վաճառական-ձկնարդյունաբերողները: 1839–1841 թթ. մերձկասպյան թուրքմենների հետ առևտուրն ընդլայնելու համար կազմակերպվեց Թիֆլիսցի վաճառական, հայազգի Էրիվանդովի երկու արշավ, որը, չնայած պարսկական իշխանությունների դիմադրությանը, հասավ ռուս-թուրքմենական կապերի էական ամրապնդման: Աշուր-Ադա կղզում ծովային կայան (1842) և Մանգիշլակում Նովո-Պետրովսկ ամրոցը (1846) հիմնադրելուց հետո առաջացան հայ և ռուս վաճառականների ու ձկնարդյունաբերողների մշտապես գործող առևտրական ֆակտորիաներ: 70-ական թվականների վերջին Աստրախանից, Շուշիից, Նախիջևանից դաղթած հայերն արդեն կազմում էին մշտական վերաբնակիչների առաջին խմբերը Մանգիշլակի Ալեքսանդրովսկ ամրոցում (նախկին Նովո-Պետրովսկ ամրոց) և Կրասնովոդսկում, որոնք դարձել էին դեպի Անդրկասպիայի խորքը ռուսական բանակի հետագա առաջխաղացման գլխավոր հենակետերը:

Կրասնովոդսկի հիմնադրումը դրեց ռուսական զորքերի պլանաչափ առաջխաղացման սկիզբը: Ռազմական կամպանիաների նախապատրաստմանը և անցկացմանը հայերն ամենագործուն մասնակցությունն էին ունենում: 1879–1880 թթ. Անդրկասպիայում ռուսական զորքերի հրամանատարությունը կենտրոնացել էր նշանավոր հայազգի գեներալներ, ռուս-թուրքական պատերազմի մասնակիցներ Ի. Դ. Լազարևի և Ա. Ա. Տեր-Ղուկասովի ձեռքին: Անդրկասպիայում ռազմական գործողությունների ընթացքում հրամանատարությունը քանիցս նշել է կապիտան Տեր-Ղազարովի, շտաբս-կապիտան Լազարևի մարտական ծառայությունները, «երևանցիների երեք վաշտի» մարտական քաջարի գործողությունները: Դրանից զատ, ռուսական բանակին ուղեկցում էր պարենավաճառների (մարկիտանտների), սայլապանների և մանր առևտրա-

կանների հոծ բազմությունը, որը բանակն ապահովում էր փոխադրամիջոցներով, պարենով և խոտով: Այդ բազմության մասը կազմում էին հայերը: Զորքերին խոշոր մատակարարումներ էին ապահովում ռուսական հպատակություն ունեցող հայազգի վաճառականներ Մելիքովը, Ղուկասովը, Տեր-Օհանովը, Խուբլարովը և այլք: Հայերից էր կազմված նաև զինվորական թարգմանիչների մեծ մասը:

Եկվոր բնակչության զանգվածային վերաբնակեցումը դեպի Անդրկասպյան երկրամաս սկսվեց 1881 թ., ռուսների կողմից Ախալ-Թեքինյան օազիսը գրավելուց հետո: Գաղթականների հիմնական հոսանքները գալիս էին Այսրկովկասից, Ռուսաստանի ներքին նահանգներից և սահմանակից Իրանից: Այդ վերաբնակիչների նկատելի մասը, հատկապես առաջին տարիներին, կազմում էին հայերը՝ Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներից գաղթած գյուղացիներ և բանվորներ, արհեստավորներ: Հայերի մեջ հանդիպում էին նաև Իրանից և Թուրքիայից գաղթածներ:

Տնտեսական առումով բոլորովին չզարգացած նոր տարածքների միակցումը Ռուսաստանին լայն հնարավորություններ էր ընձեռում ներքին և արտաքին առևտրի, ձեռնարկատիրության, արդյունագործության և արհեստների զարգացման համար: Նվաճումից հետո առաջին տասնամյակում մարզը դարձավ լայն դաշտ առավելապես մանր առևտրականների, կապալառուների, գնորդների գործունեության համար, որոնցից շատերն, այդուհանդերձ, այդ գործառնությունների շնորհիվ խոշոր կարողություններ ստեղծեցին և դարձան երկրամասում նշանավոր վաճառականներ և ձեռնարկատերեր:

Այսրկովկասից դեպի Անդրկասպյան երկրամաս հայ ազգաբնակչության գաղթի մշտապես առկա պատճառներից մեկը դարձավ 19-րդ դ. վերջին և 20-րդ դարի սկզբին ազգամիջյան հակասությունների սրումը (մասնավորապես, հայերի և կովկասյան թաթարների միջև մշտական բախումները): 1905–1907 թթ. նախօրեին և տարիներին այդ հակասությունները կազմակերպված ջարդերի բնույթ ստացան ու դարձան Շուշիից, Բաքվից, Ելիզավետպոլից, Նախիջևանից և Այսրկովկասի այլ քաղաքներից ու շեներից զգալի թվով հայազգի փախստականների՝ Անդրկասպիա վերաբնակվելու պատճառ:

Անդրկասպիայում հայազգի նորաբնակների շրջանում բավականին հաճախ էին հանդիպում պարսկահպատակներ՝ սահմանակից Իրանից գաղթածներ: Նրանցից ոմանք ռուսահպատակություն էին ընդունում,

մյուսները, տեղի իշխանություններից անձնագիր ստանալով, տասնամյակներ շարունակ բնակվում էին Անդրկասպիայում՝ որպես կանոն, գործուն կերպով մասնակցելով Պարսկաստանի հետ տնտեսական կապերի զարգացմանը: Այստեղ հանդիպում էին նաև Թուրքահպատակ հայեր: Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կառավարության կողմից 19-րդ դ. 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային ոչնչացումը դարձավ Ռուսական կայսրության սահմաններում հայ փախստականների հայտնվելու պատճառ: Նրանցից ոմանք անցան նաև Անդրկասպյան երկրամաս: Նրանց վիճակը խիստ ծանր և ըստ էության անլեգալ էր տեղի ցարական վարչակազմի, մասնավորապես, Անդրկասպյան մարզի պետ Կուրոպատկինի անբարյացակամ վերաբերմունքի պատճառով, որը 1894 թ., պատասխանելով ռազմական մինիստրության՝ հայ փախստականներին բնակեցնելու վերաբերյալ հարցին, կտրուկ առարկում էր նրանց՝ երկրամասի սահմաններում բնակեցնելու դեմ, նշելով, որ տեղի հայերի թվաքանակը առանց այդ էլ մեծանում է սպառնալի արագությամբ:

Հայերից ոմանք Թուրքեստան էին ընկնում նաև որպես աքսորյալներ: Նրանք մեծ մասամբ ազգային հայրենասիրական և սոցիալիստական քաղաքական կուսակցությունների գործիչներ էին, որոնք կամավոր կամ էլ իրենց հեղափոխական կազմակերպությունների հանձնարարությամբ Անդրկասպյան երկրամասն ընտրում էին որպես իրենց ապագա աքսորի վայր: Նրանց մեջ կային ամենատարբեր դասերի, այդ թվում նաև հոգևորականության ներկայացուցիչներ:

Հայ բնակչության՝ մշտական բնակություն հաստատելու պրոցեսն ուներ որոշակի առանձնահատկություններ: Ամենից առաջ անհրաժեշտ է նշել, որ Թուրքմենիան նվաճելու պահին այստեղ քաղաքատիպ բնակավայրեր չկային: «Հնում և միջին դարերում այստեղ գոյություն ունեցած բոլոր քաղաքները ռուսական նվաճումից շատ առաջ վերածվել էին ավերակների, դրանց փոխարեն կային միայն Թուրքմեն-քոչվորների աուլներ»[1]: Ռուսաստանի ներքին նահանգներից ռուս վերաբնակիչների և Իրանից գաղթած պարսիկների հետ միասին հայերը բնակություն էին հաստատում ռուսական զորքերի ամրավայրերում, Անդրկասպյան երկաթուղու գծի երկայնքով, Պարսկաստանի և Աֆղանստա-

---

1 Бартольд В. В. История изучения Востока в Европе и России. Соч., т. IX, г. XVIII, М., 1977, с. 50.

նի հետ սահմանային առևտրի տեղերում: Հենց այս կերպ, սկզբնապես ռուսներից, հայերից և պարսիկներից բաղկացած բնակատեղիների հիման վրա էլ Անդրկասպիայում առաջացան քաղաքներ՝ Կրասնովոդսկը, Կզըլ-Արվատը, Ասխաբադը, Մերվը, Թեջենը և մյուս նվազ խոշոր բնակավայրերը, որոնք դարձան գործնականում թուրքմեններին անծանոթ, ռուսականացված եվրոպական քաղաքակրթության տարածման յուրօրինակ էպիկենտրոններ:

Փոքր ինչ այլ կերպ էր ընթանում եկվոր բնակչության հիմնավորումը Թուրքեստանի այլ շրջաններում, որտեղ բնակվում էին ուզբեկներ և տաջիկներ: Այստեղ վերաբնակիչների զանգվածային բնակության վայրեր դարձան ասիական տիպի բավականին խոշոր քաղաքներ՝ Տաշքենդը, Սամարղանդը, Բուխարան, Կոկանդը, Զարջոուն, Ֆերգանան և մյուսները: Եկվորները դրանցում բնակվում էին անջատ և համահավաք կերպով, որի հետևանքով այդ քաղաքները շուտով ասես թե երկու մասի՝ եվրոպական և ասիական «նոր և հին քաղաքների» էին բաժանվել: Այդ քաղաքներում հայ բնակչությունը հիմնականում հանդես է գալիս Միջինասիական և Օրենբուրգ-Տաշքենդյան երկաթուղիները միացնելուց հետո՝ աստիճանաբար Անդրկասպիայից ներթափանցելով Զարջոու, Սամարղանդ, Բուխարա, Տաշքենդ, Կոկանդ և Միջին Ասիայի այլ քաղաքներ:

Անդրկասպյան մարզի տնտեսական, վարչական և մշակութային գլխավոր կենտրոնը դարձավ Ասխաբադը՝ բնակավայր, որը երևան էր եկել 1881 թ. համանուն առվի մոտակայքում, ռուսական ռազմական ամրության տեղում: Քաղաքն արագ մեծացավ և բարեկարգվեց, կառուցվեցին եկեղեցիներ և դպրոցներ, քաղաքային հիվանդանոց:

Մերվում «նոր քաղաքի» հիմքը դրվեց 1884 թ.: Ռուս ծառայողները, հայ առևտրականները, նրանց օրինակով նաև թուրքմեններից ոմանք, սկսեցին բնակվել Մուրդաբ գետի ձախ ափին՝ ռուսական ամրության դիմաց: Քաղաքը դարձավ տնտեսական առումով առավել զարգացած Մերվ գավառի վարչական կենտրոնը:

Տակավին 1874 թ., Անդրկասպյան զինվորական բաժին կազմավորելու ժամանակից ի վեր, Կրասնովոդսկը՝ որպես դեպի Անդրկասպիայի խորքը ռուսական առաջխաղացման հենակետ և «Միջին Ասիայի ծովային դարպաս», ռազմաստրատեգիական և տնտեսական կարևոր դեր էր խաղում: Այն պահպանեց Միջին Ասիայի տարանցիկ խոշոր կետի իր

նշանակությունը նաև մարզի կենտրոնն Ասխաբադ փոխադրելուց հետո:

Երկրամասը Ռուսաստանի կողմից նվաճելուց հետո, արդեն առաջին տասնամյակներում, Անդրկասպիայի խոշոր բնակավայրերից մեկը դարձավ Կզըլ-Արվատ ամրությունը՝ շնորհիվ այստեղ տեղակայված երկաթուղային արհեստանոցների: Թեջենի օազիսի գավառական կենտրոն դարձավ քաղաքատիպ փոքր բնակավայր Թեջենը: Այս համեմատաբար խոշոր քաղաքատիպ կենտրոններից բացի, Անդրկասպիայում երևան եկան մի շարք քաղաքանման բնակավայրեր՝ Իլոտանը, Սերախսը, Կուշկան, Թախթաբազարը, Դուշակը, Կարա-Կալան, Կազանջիկը, Ջեբելը, Ուզուն-Ադան, Ջիկիշլյարը և այլն:

Անդրկասպիայի քաղաքատիպ ավանների եկվոր բնակչությունն առաջին, առավել դժվարին տարիներին, կազմված էր գերազանցապես ռուսներից, հայերից և պարսիկներից: Հետագայում այստեղ բնակություն հաստատեցին բավականին շատ կովկասյան թաթարներ, ուկրաինացիներ, լեհեր, գերմանացիներ, բուխարացի և եթովպացի հրեաներ, խիվացիներ և աֆղաններ: Կովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների դեպի երկրամաս վերաբնակվելու նախաձեռնությունն ամբողջապես հայերին էր պատկանում. «Հայերի հետ մեկտեղ,– 1891 թ. ցարին հղած հաշվետվության մեջ գրում էր մարզի պետ Կուրոպատկինը,– Կովկասից եկան պարսիկները. կովկասյան թաթարները, վրացիները և այլք. դրանք բոլորը ընթանում էին հայերի հետքերով»[1]: Հայերը բնակություն էին հաստատում բացառապես քաղաքներում և քաղաքատիպ ավաններում:

Միջին Ասիայի ռուսական գաղութացման խնդիրներից և այդ կապակցությամբ այստեղ եվրոպական տիպի քաղաքային բնակավայրերի արագ զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ ցարական իշխանությունները ոչ միայն ջանում էին դեպի մարզը ներգրավել ռուս ազգաբնակչություն, այլև բավական բարյացակամորեն (հատկապես սկզբնական շրջանում) էին վերաբերվում հայերի և նույնիսկ պարսիկների վերաբնակեցմանը:

1883–1884 թթ. մարզի եկվոր բնակչությունը կազմում էր 4 հազար մարդ, որոնցից 1,5 հազարից ավելին հայեր էին: Եկվոր բնակչության

---

1 Центральный государственный архив Туркменстана (ЦГАТ). Ф. И–1, оп. 2, д. 7747, л. 4 об.

թվաքանակն արագ աճում է Անդրկասպյան երկաթուղու շինարարությունն ավարտելուց հետո: 1900 թ. մոտերքը մարզում արդեն ապրում էր մոտ 50 հազար վերաբնակիչ՝ 22842 ռուս, 9046 պարսիկ, 6136 հայ, 3911 կովկասյան թաթար և լեզգի, 885 գերմանացի, 770 լեհ, 757 հրեա, 247 վրացի և մոտ 5 հազար այլ ազգությունների պատկանող եկվորներ:

Այդ ժամանակ արդեն վերաբնակիչների մեծ մասը, այդ թվում նաև հայերը, վերջնականապես մշտական բնակություն էր հաստատել, տեղափոխել ընտանիքները, սեփական տներ էր ձեռք բերել: Այսպես, իշխանությունների կողմից 1900 թ. Ասխաբադում նշված 2144 մասնավոր տներից 793-ը պատկանում էր ռուսներին, 704-ը՝ պարսիկներին, 431-ը՝ հայերին, 183-ը՝ կովկասյան թաթարներին:

1912 թ. մոտերքը Անդրկասպյան մարզի բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում էր 482011 մարդ: Ընդսմին եկվոր բնակչության տարեկան միջին աճը մոտավորապես 3–4 անգամ գերազանցում էր բնիկների աճի տեմպերը: Թուրքմենները կազմում էին բնակչության ընդհանուր թվաքանակի 60,2, ղըրղըզները (ղազախները)՝ 1,7, աֆղանները՝ 0,6, լեհերը՝ 0,5, գերմանացիները՝ 0,3 և մյուսները՝ 2,0 տոկոսը: Թուրքեստանի հայ բնակչության ընդհանուր թվաքանակն այդ ժամանակ կազմում էր մոտավորապես 15–16 հազ. մարդ: Դրա գերակշիռ մասն առաջվա պես կենտրոնացած էր Անդրկասպիայում, սակայն բավական համահավաք հայ համայնքներ էին կազմավորվել նաև Միջին Ասիայի այլ քաղաքներում: Օրինակ, Սամարղանդում այդ ժամանակ եղել է 1119, Կոկանդում՝ 425, Անդիջանում՝ 393, Ֆերգանայում՝ 189, Նամանգանում՝ 104 հայ:

Միջին Ասիայի հայ ազգաբնակչության թիվը շարունակում էր աճել նաև հաջորդ տարիներին: Համաձայն «Թուրքեստանյան հանրապետության 1917–1923 թթ. վերաբերյալ վիճակագրական տեղեկատուի» տվյալների, խորհրդային իշխանություն հաստատելու ժամանակների մոտերքը Թուրքեստանում բնակվել է մոտավորապես 20 հազար հայ, ընդ որում նրանցից 18 հազարն ապրել են երկրամասի քաղաքներում և քաղաքային բնակավայրերում:

Ռուսաստանի հաջողությունները Թուրքեստանի և հատկապես Անդրկասպիայի գաղութացման գործում անքակտելիորեն կապված էր ոչ միայն ռուսների, այլև հայերի, պարսիկների, լեհերի, գերմանացիների, հրեաների, եվրոպացի ու արևելցի այլ եկվորների կենսագործու-

նեության հետ, որոնք կազմում էին քաղաքների բնակչությունը և գաղութատիրական ժամանակաշրջանում երկրամասի տնտեսական ու մշակութային վերափոխման գլխավոր ուժն էին: Այս պարագան հաշվի առնելու անհրաժեշտությունը ցարական իշխանությունների՝ ոչ ռուս ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած քաղաքականությանը չափազանց անհետևողական բնույթ էր հաղորդում: Դա հատկապես ցցունորեն էր դրսևորվում հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքում, որոնց՝ երկրամասի տնտեսական վերափոխման մեջ ունեցած ակնառու դերի հետ հարկադրված էր հաշվի նստել տեղի վարչակազմը: Այսպես, եթե առաջին, առավել դժվարին ժամանակաշրջանում իշխանությունները միանշանակ սատարում էին հայ գաղութաբնակներին՝ նրանց բացահայտորեն օգտագործելով որպես ռուսական ազդեցության առաջատար գործակալներ ու միջնորդներ ռուսական վարչակազմի և բնիկ՝ միջին ասիացի բնակչության միջև, ապա արդեն 90-ական թվականների կեսերից նրանք ավելի հաճախ էին դժգոհում հայ ազգաբնակչության դերի ուժեղացումից: «Անդրկասպյան երկրամասը,– 1892 թ. վրդովված դանդատվում էր ներքին գործերի մինիստրությանը Կուրոպատկինը,– 10 տարվա ընթացքում զգալի չափով հայկական անկյուն դարձավ ինչպես թվաքանակի, այնպես էլ, գլխավորապես շնորհիվ այն դերի, որ այդ ազգաբնակչությունը ստանձնել է մարզում, իր ձեռքը վերցնելով առևտուրը, արհեստագործություններն ու կապալները... Արդեն հիմա էլ,– շարունակում էր նա,– հայերն Անդրկասպյան մարզում կազմում են համերաշխորեն համախմբված համայնքներ գլխավոր բնակավայրերում՝ Ասխաբադում, Մերվում, Կզըլ-Արվատում»: Ռազմական մինիստրությունը, նույնպես ակնհայտորեն անհանգստացած երկրամասի «հայկական գաղութացմամբ», նշում էր, թե քանի որ «ռուսահպատակ հայերը նեղված չեն, ինչպես օրինակ, հրեաները, բնակության վայր ընտրելու հարցում, Թուրքեստանում հայերի բնակություն հաստատելը կարելի է միայն սահմանափակել՝ տեղի իշխանությունների կողմից համապատասխան միջոցառումներ ձեռնարկելով»:

Հայերի վերաբնակությունը Անդրկասպիայում և նրանց հետագա միգրացիան դեպի Թուրքեստանի խորքը հարկադիր չէր և ընթանում էր տարբերայնորեն: Ցարական իշխանությունների լոյալությունը Ռուսական կայսրության ազգային շրջաններից բնակչության և, մասնավորապես, հայազգի վերաբնակիչների՝ դեպի Միջին Ասիա վերաբնակության նկատմամբ ամբողջապես որոշվում էր գաղութացման քաղաքական

նպատակներով, որի գլխավոր խնդիրներից մեկը նվաճված տարածքներում քրիստոնեական հավատի զգալի քանակությամբ զանգվածային բնակչություն ստեղծելն էր: Բացի այդ, ի դեմս Թուրքեստանի և Անդրկասպիայի առևտրաարդյունաբերական նորելուկ բուրժուազիայի, որի բավական ազդեցիկ մասը կազմում էին հայազգի վաճառականներն ու արդյունաբերողները, ռուսական իշխանությունները դատան հետամնաց ավատատիրական-նահապետական կացութաձևը ուժգնորեն սոցիալ տնտեսական վերակառուցման ենթարկելու և նոր կապիտալիստական հարաբերություններ արմատավորելու գործիքը:

* * *

Մինչև Ռուսաստանին միակցելը թուրքմենական ցեղերի շրջանում գերիշխում էին ավատատիրական-նահապետական հարաբերությունները: Հիմնական զբաղմունքն արոտային անասնապահությունն էր, ինչպես նաև «ալամանը»՝ կազմակերպված ավազակային հեծյալ ասպատակությունը, որն առավելապես ուղղված էր Պարսկաստանի կողմը, որի նկատմամբ թուրքմենական ցեղերը հնուց ի վեր անբարյացակամ վերաբերմունք ունեին: Երկրամասի նվաճումը Ռուսաստանի կողմից կտրուկ փոխեց թուրքմենների պատմական ճակատագիրը: Միասնական կենտրոնացված իշխանության հաստատումը, երկաթուղու անցկացումը, եկվոր, այդ թվում նաև քրիստոնյա, բնակչության զգալի զանգվածների հայտնվելը, եվրոպական տիպի քաղաքային բնակավայրերի կազմավորումը, ներքին և արտաքին առևտրի, արհեստագործությունների և արդյունաբերության արագ զարգացումը Ռուսական կայսրության կազմում Անդրկասպիան ներառելու անմիջական արդյունքներն էին և, միաժամանակ, հետամնաց երկրամասի տնտեսական ու մշակութային համեմատաբար արագ զարգացման նախապայմանները:

Չնայած համեմատաբար սակավաքանակությանը՝ հայ ազգաբնակչությունը երկրամասի տնտեսական վերափոխման գործում հույժ նկատելի դեր էր խաղում: Շնորհիվ իր աշխատասիրության, առևտրաձեռնարկուական ունակությունների, լեզուների, բարքերի և սովորությունների իմացության, ընդհանրապես նոր, ընդ որում մահմեդական միջավայրում շատ արագ հարմարվելու կարողության, հայերը դարձան ըստ էության տարածաշրջանը տնտեսապես վերակառուցելու Ռուսաստանի գլխավոր գործակալը: Ռուսաստանի համար հայերի դերը հատկապես արժեքավոր էր Մեծ Բրիտանիայի հետ 20-րդ դ. սկզբին հանուն Հյուսի-

սային Իրանի շուկաների ծավալած առևտրական կատաղի մրցակցության մեջ: Ռուսաստանյան հպատակություն և քրիստոնեական հավատ ունենալով՝ հայերը ոչ միայն չէին հանդիպում իրենց տնտեսական գործունեության մեջ այն էական սահմանափակումներին, որոնք կայսրության օրենսդրությամբ նախատեսվում էին օտարերկրացիների, մահմեդականների և հրեաների համար, այլև օգտվում էին տեղի իշխանությունների որոշակի աջակցությունից, իսկ կայսրության սահմաններից դուրս, օրինակ, Իրանում և Աֆղանստանում՝ Ռուսաստանի դիվանագետների պաշտպանությունից:

Հայ առևտրական խավն արդեն գործուն կերպով մասնակցում էր ռուս թուրքմենական կապերի զարգացմանը և Անդրկասպիայի հետագա նվաճման գործընթացին: Մանգիշլակում, Ալեքսանդրովսկ ամրոցում արդեն գոյություն ուներ մի ամբողջ հայկական բնակավայր՝ «Հայկական արվարձան»: Այստեղ մշտապես բնակվող հայերը Ռուսաստանից և Այսրկովկասից բերված սպառողական ապրանքների առևտուր էին անում՝ միաժամանակ տեղի բնակչությունից գնելով բուրդ, կաշի և ձուկ: Գնված ապրանքն արտահանվում էր Աստրախան՝ «Կովկաս և Մերկուրի» ընկերության նավերով և նավակներով, որպիսիք ուներ ամրոցաբնակ գրեթե յուրաքանչյուր հայ առևտրական: Հայերը Միխայլովսկի ծովածոցում գտնվող Ուզուն-Ադա ամրության առևտրականների գերակշիռ մասն էին կազմում, ամրություն, որն Անդրկասպյան երկաթուղու սկզբնակետն էր և երկրամաս ներմուծվող ապրանքների պահեստավորման վայրը:

Առաջ շարժվելով դեպի Թուրքմենիա՝ ռուսական բանակն իր ճանապարհին ստեղծում էր փոքր ամրություններ, որոնց բնակչությունը սկզբնապես բաղկացած էր սակավաթիվ կայազորներից, վարչակազմի աստիճանավորներից և առևտրականներից: Զինվորական և քաղաքացիական վարչակազմը հիմնականում ռուսներից էր բաղկացած, առևտրականներն՝ առավելապես հայերից և պարսիկներից:

Անդրկասպիայում առևտրի զարգացման գլխավոր օջախներ դարձան քաղաքատիպ բնակավայրերը՝ Ասխաբադը, Կզըլ-Արվատը, Թեջենը, Կաախկան, Սերախսը, Իլոտանը, Թախտաբազարը, Կերկին, ինչպես նաև Կրասնովոդսկը և Մերվը, որոնք նախքան միակցումը նկատելի առևտրական դեր էին խաղում՝ շնորհիվ դրանց վրայով Խիվայից դեպի Իրան անցնող քարավանային ուղիների:

Երկրամասը նվաճելուց հետո առաջին տասնամյակում, երբ ծնունդ առնող քաղաքների սպառողական պահանջարկը տակավին աննշան էր, շահույթի կարևորագույն աղբյուր էին զորքերին պարենի և խոտի մատակարարումները, որոնց մեծ մասը նույնպես հայերի ձեռքին էր գտնվում: Այսպես, 1890 թ. կապալների համար պետության բաց թողած 340 հազար ռուբլի ընդհանուր գումարից հայերին բաժին էր ընկնում 275 հազար ռուբլի: «Հայերը,— նշում էր Կուրոպատկինը,— ռուսների հետ մեկտեղ երկրամաս գալով որպես մարկիտանտներ և սայլվորներ, առաջին իսկ քայլերից իրենց ձեռքն առան մանր առևտուրը, խմիչքի առևտուրը, զորքերին մատակարարումներ կատարելը և այլն: Այժմ նրանցից շատերը խոշոր առևտրականներ են դարձել»: Իշխանությունների կողմից 1896 թ. նշված 1514 առևտրական հաստատություններից հայերին էր պատկանում 35,1 տոկոսը: Որպես կանոն, նրանց ձեռքերում էին կենտրոնանում առևտրական առավել խոշոր հաստատությունները: Ռուսաստանից և Կասպիականի արևմտյան ափից հայ առևտրականները մարզ էին ներմուծում մանածագործական, գալանտերիայի ապրանքներ և նպարեղեն, երկաթեղեն, խմիչքներ, կերոսին ու շինափայտ: Ռուսաստան և Այսրկովկաս էին արտահանվում բուրդ, ոչխարի մորթի, գորգեր, կարպետներ, բրդյա և մետաքսյա գործվածքեղեն, ձկնեղեն ու նավթ:

19-րդ դ. վերջին Անդրկասպիայում արդեն ձևավորվել էր բավական ազդեցիկ հայ վաճառականության մի խավ, որն ուներ խոշոր կապիտալ: Ամենահարուստ վաճառականներից մեկը բնիկ շուշեցի Մ. Մ. Սարուխանովն էր, որը կերոսինի պահեստներ ուներ Ուզուն-Ադայում և Ասխաբադում: Մանածագործական ապրանքի մեծածախ առևտուր, կտորեղենի և գալանտերիայի խանութներ, ալյուրի պահեստախանութ և գարեջրի պահեստ ուներ Ասխաբադում Ն. Մ. Տեր-Մկրտիչևը: Մերվի առավել խոշոր վաճառականներից մեկն էր Շուշիի գավառի Խաչմազ շենի բնակիչ Կ. Ի. Ավետիսովը, որն արդյունաբերական ապրանքների խանութ և բամբակի պահեստ ուներ Մերվում: Գալատերիայի, նպարեղենի, սպասքեղենի առևտրի խանութներ, գինու և սպիրտի մեծածախ վաճառքի պահեստներ ունեին Մերվում և Ասխաբադում Բահատուրով եղբայրները: Նպարեղենի և տարբեր խմիչքների առևտուր էր անում Ասխաբադում և Կզըլ-Արվատում շուշեցի Ն. Ի. Բոդգանովը: Ասխաբադում մանածագործական ապրանքների և ալյուրի պահեստ ուներ Զանգեզուրի գավառի Ագարակ շենի բնակիչ Խ. Ա. Մնացականովը: Անդր-

կասպիայում հարյուր հազարավոր ռուբլի շրջանառություն ունեցող առևտրական հաստատությունների տեր էին նաև բազում ուրիշ հայ վաճառականներ: Հայ խոշոր առևտրականներ են հանդես գալիս նաև Թուրքեստանի այլ մարզերում Սամարղանդում, Կոկանդում, Ֆերգանայում, Բուխարայում, Անդիջանում, Տաշքենդում և մյուս քաղաքներում: Հայ առևտրականների մեծ մասը ռուսահպատակություն ուներ, սակայն նրանց շրջանում պատահում էին նաև պարսկահպատակներ: Հայ վաճառականներից շատերը առևտրական գիլդիաների անդամ էին, ունեին կառավարական պարգևատրումներ, Թուրքեստանի քաղաքների «պատվավոր քաղաքացիություն»:

Ավելի հաջողությամբ գործերը վարելու համար հայ վաճառականները միավորվում էին կազմակերպությունների «փոխադարձ վարկի ընկերություն»-ների մեջ, որոնց նպատակն էր իրենց անդամների փոխադարձ վարկավորումը: 1899 թ. Մերվի վաճառականներ և արդյունաբերողներ Կ. Սաղաթելովը, Ա. Պետրոսյանցը, Գ. Ղուկասյանցը, եղբայրներ Մ. և Դ. Մելիք-Մկրտիչևները, Կ. Քոչարովը, Տեր-Ասծատուրովը և այլք դիմեցին Անդրկասպյան մարզի պետին՝ խնդրելով արտոնել իրենց հիմնադրած «Մերվի՝ Միջին Ասիայում առաջին փոխադարձ վարկի ընկերության» գործունեությունը: Հաջորդ տարում նույնպիսի ընկերություն հիմնադրվեց նաև Ասխաբադում: Նրա վարչության կազմը մտան Ասխաբադի նշանավոր վաճառականներ՝ Ն. Մ. Տեր-Մկրտիչևը, Խ. Ա. Մնացականովը, Ռ. Գ. Կաճկաճևը, Օ. Ջերքեզովը, Ա. Ի. Ազատովը, Մ. Ս. Անանյանցը, Տեր-Հակոբովը:

20-րդ դարի սկզբին, պահպանելով առևտրում մենաշնորհ դիրքը, ընդլայնելով և մեծացնելով գործառությունների մասշտաբները, հայ վաճառականությունն իր շրջանից առանձնացնում է եղբայրներ Ն. և Ա. Տեր-Մկրտիչևների, Խ. և Ս. Մնացականովների, Ի. Ս. Տեր-Սարգիսովի, Վ. Դ. Հարությունովի, Ա. Ա. Գևորգովի, Ս. Հախնազարյանցի, Գ. Աբիյանցի, «Ա. Ներսիսյանց և ընկ.» և այլոց առևտրական մի շարք խոշոր ֆիրմաներ: Որոշ հայ վաճառականների կարողությունը հաշվվում էր միլիոնավոր ռուբլիներով: Հայ առևտրական կապիտալը գործուն կերպով ներթափանցում է Միջին Ասիայի խորքը: Զարջոուում, Կոկանդում, Սամարղանդում, Տաշքենդում, Անդիջանում և այլ քաղաքներում հայտնվում են տեղի հայերին պատկանող մեծ թվով առևտրական հաստատություններ:

Հայ առևտրական խավը հույժ կարևոր դեր էր կատարում նաև արտաքին առևտրի զարգացման մեջ: Թուրքմենիան նվաճելուց հետո Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև ծավալվեց իսկական առևտրական պատերազմ հյուսիսարևելյան Իրանի շուկաների համար: Մի շարք առավելությունների՝ տարածքների սահմանակից լինելու, Միջինասիական երկաթուղու, առևտրական գործուն գործակալների՝ հայերի առկայության շնորհիվ, Ռուսաստանն արդեն 10–15 տարի անց իր գերիշխանությունը հաստատեց Խորասանի շուկաներում: Հատկապես Մեծ Բրիտանիայի դժգոհությունն էր հարուցում ռուսական ազդեցության ներթափանցումն Աֆղանստանում, որտեղ անգլիացիների մենաշնորհ դիրքն ավանդական էր: Թուրքեստանի հայ վաճառականությունն այդ պրոցեսներում չափազանց էական դեր էր կատարում:

Արդեն 80-ական թվականների սկզբին ռուսական հպատակություն ունեցող մի շարք հայ առևտրականներ, ռուսական իշխանություններից համապատասխան վկայականներ ստանալով, ներթափանցում են Հյուսիսային Իրան՝ առևտրական և այլ նպատակներով:

19-րդ դ. վերջին Անդրկասպիայում քարավանային առևտրի գլխավոր կենտրոններ էին. Կրասնովոդսկը, որը տարանցիկ կետ էր եվրոպական Ռուսաստանի, Կովկասի և Միջին Ասիայի հետ կատարվող առևտրում, Ասխաբադը, որը բավականին մեծ առևտուր էր կատարում Իրանի հետ, և Մերվը, որը խոշոր դեր էր խաղում Իրանի, Աֆղանստանի, Խիվայի և Բուխարայի հետ կատարվող առևտրում: Արտահանության հիմնական ապրանքներն էին կտորեղենը, կերոսինը և շաքարը: Իրանից կայսրության սահմաններն էին ներմուծվում հում մետաքս, սև և կանաչ թեյ, պարսկական և թուրքմենական գորգեր, արևելյան գալանտերիա, տեղական սպասքեղեն, բուրդ, բամբակ, ոչխարի մորթի: Հայերը Պարսկաստանում, Անդրկասպյան մարզի պետին առընթեր արտգործնախարարության պաշտոնյայի վկայությամբ, «ռուսական ապրանքների առևտրի համարյա միակ միջնորդ կոմիսիոներներն էին»: Արդեն 80-ական թվականներին Հյուսիսային Իրանում ռուսների «Կուդրին և ընկ.» խոշոր ֆիրմայի հետ մեկտեղ ռուսական մանածագործական ապրանքների աշխույժ առևտուր էր անում հայազգի վաճառական Ղուլյանցի ընկերությունը: Միայն 1889 թ. այն վաճառել է 3075 փութ ռուսական կտորեղեն՝ 107 հազար ռուբլի գումարով: Հայ վաճառականները ռուսական ապրանքների աշխույժ առևտուր էին ա-

նում Կոչանում, Բուջնուրդում, Սեբզևարում, Տուրբեթում և Խորասանի այլ քաղաքներում:

Հայ վաճառականությունը գործուն մասնակցում է ռուս-իրանական առևտրին հատկապես 90-ական թվականների սկզբին: Պորուչիկ Բաումգարտենը, որը 1894 թ. զինվորական իշխանությունների հանձնարարությամբ ճանապարհորդում էր Իրանում, նշել է, որ այդ երկրում ռուսական առևտուրն ամբողջապես գտնվում է ռուսահպատակ հայերի ձեռքին: «Խորասանում, ինչպես և ամբողջ Պարսկաստանում,– գրել է Բաումգարտենը,– Ռուսաստանի շահերի ներկայացուցիչները բացառապես հայերն են, շնորհիվ իրենց շարժունակության, առևտրական խելամտության, իսկ գլխավորապես լեզուների, բարքերի սովորությունների իմացությամբ նրանք մինչև հիմա առևտրի ռահվիրաներն են»: Միայն Սեբզևարում նա նշել է հայկական 11 ֆիրմա, որոնք ռուսական ապրանքի առևտուր էին անում: 19-րդ դ. վերջին Իրանի հետ նավթամթերքների խոշոր առևտուր էր անում «Անդրկասպյան և Սարուխանով» հայկական ֆիրման: Միայն 1897 թ. ապրիլից մինչև հունիս ընկած ժամանակահատվածում այդ ֆիրմայի վստահյալ Հովհաննիսյանն Իրան էր արտահանել 8 հազար փութ կերոսին: Իրան կերոսին էին առաքում նաև ուրիշները, որոնք Անդրկասպիայի տարածքում սովորաբար Անդրկասպյան երկաթուղու երկայնքով և Իրանին սահմանակից բնակավայրերում, նավթամթերքների մեծածախ առևտրի պահեստներ ունեին:

Նկատելիորեն բարդ էր ընթանում առևտրական փոխհարաբերությունների զարգացումը Աֆղանստանի հետ, որտեղ նույնիսկ 19-րդ դ. վերջին քրիստոնյա վաճառականի, առավել ևս ռուսահպատակի հայտնվելն աներևակայելի էր: Սկզբնապես Աֆղանստանի հետ առևտուրը հիմնականում ընթանում էր Բուխարայի վրայով, քանզի մուտքն Աֆղանստան ռուսներին և ընդհանրապես բոլոր օտարերկրացիներին, բացի բուխարացիներից, արգելված էր: Սակայն արդեն այդ ժամանակ առանձին հայ վաճառականներ փորձում էին առևտրական կապեր հաստատել այդ երկրի հյուսիսային նահանգների աֆղանների հետ, որոնք ձգտում էին դեպի Ռուսական Թուրքեստանի շուկաները: 1888 թ. Հյուսիսային Աֆղանստան այցելեց ռուսահպատակ հայազգի Մովսեսովը, որն իր առևտրական գործերում արժանացավ Զար վիլայեթի կառավարիչ Իսխակխանի աջակցությանը: Այնուհետև Աֆղանստանի հետ կապերն ընդլայնվում են Կուշկայի և Քերքիի վրայով անցնող ուղիների

հայտնվելու շնորհիվ: Այդ երկրի հետ առևտրին հատկապես ուժեղ խթան հաղորդեց 1897 թ. Մերվ-Կուշկա երկաթուղու Կուշկայի ճյուղի անցկացումը, որն առևտրի և տարանցիկ առևտրի խոշորագույն կենտրոններից մեկը՝ Մերվ քաղաքը, կապեց աֆղանապարսկական սահմանի հետ. դրա շնորհիվ Թախտաբազարում և Քերքիում հայտնվում են Հերաթից և այլ վայրերից եկած աֆղան վաճառականներ, որոնք բերում էին բամբակ, բուրդ, կաշվեղեն, դորգեր, ցորեն և այլ ապրանքներ:

Տարանցիկ առևտրի խոշորագույն կենտրոն դարձավ Քերքին՝ փոքր մի քաղաք, որը գտնվում էր Աֆղանստանի, Անդրկասպիայի և մնացյալ Թուրքեստանի սահմանի վրա: Թուրքեստանի ադմինիստրացիայի վկայությամբ, հայ վաճառականները, տիրապետելով առևտրի ժամանակակից եղանակներին, տեղական բանկերում և Մոսկվայում վարկ ունենալով, «կարողացան արտահանման լայն հիմունքներով կտորեղեն արտածել՝ մաքսի վերադարձմամբ հանդերձ»: Դրանից զատ, աֆղան վաճառականները Իրանում ռուսական ապրանք էին գնում հայկական ֆիրմաներից:

1901 թ. սահմանային Սերախս ամրությունից դուրս եկավ մերվցի խոշոր վաճառական Մ. Ա. Աստվածատուրովի առևտրական քարավանը: Քարավանի ճանապարհին Աստվածատուրովը Մեշխեդում հանդիպեց ռուսական գլխավոր դեսպանորդ Պանա Ֆիդինի, իսկ Հուսեյն-Աբադում՝ ռուսական փոխհյուպատոս Միլլերի հետ, որը խիստ զայրացել էր, որ հայազգի վաճառականին հաջողվել է այդպես արագ հաղթահարել բարդ և վտանգավոր երթուղին: Նկարագրելով տեղի շուկաների վիճակը և նշելով ռուսական ապրանքների նկատմամբ վիթխարի պահանջարկը՝ Աստվածատուրովը Կուրոպատկինին հասցեագրված հատուկ զեկուցագրում առաջարկում էր անգլիական և գերմանական ապրանքները դուրս մղելու համար իր անցած ուղու մի շարք կետերում ստեղծել սպառողական մեծածախ ապրանքների խոշոր պահեստներ: Նրա կարծիքով, դա կհանգեցներ Բելուջստանի, Սեիստանի և Աֆղանստանի հետ ռուսական առևտրի դիրքերի արագ ամրապնդմանը:

Հայ վաճառականությունը գործուն մասնակցում էր Խիվայի և Բուխարայի հետ կատարվող առևտրին: 1893 թ. Խիվայից Կրասնովոդսկ եկած 29 քարավանից 23-ը պատկանում էր հայ վաճառականներին: Բուխարա էր արտահանվում Անդրկասպյան մարզի Թեջեն գավառում հայ վաճառականների դնած հացահատիկը: Որոշ ապրանքներ հայ վաճառականներն արտածում էին նաև եվրոպական երկրներ: «Դորգերը և

կարպետները՝ Քերքիի շրջանի հպարտությունը,– գրել է Բ. Լիտվինովը,– արտահանության ենթակա ապրանքներ էին: Այժմ նույնիսկ Մարսելն ունի Քերքիում գործակալներ, որոնք, անշուշտ, հայեր են»: Անդրկասպիայի հայ վաճառականները Լեհաստան, Գերմանիա և Ավստրիա էին արտահանում Կասպիականի ձկնամթերքը:

20-րդ դարի սկզբից արագորեն մեծանում են Իրանի հետ կատարվող առևտրի ծավալները: Ռուսաստանը վերջնականապես հաստատվեց Խորասանի շուկաներում, Պարսկաստանում երկաթուղիներ կառուցեց, հիմնադրեց մուրհակների զեղչման-վարկավորման բանկ, 1900 և 1902 թվականներին շահին 30,5 մլն ռուբլու վարկեր տրամադրեց, որի շնորհիվ նրան հաջողվեց 1901 թ. առևտրական համաձայնագիր կնքել, որը խիստ շահավետ էր Ռուսաստանի համար:

Նախկինի պես ռուս-իրանական առևտրին գործուն կերպով մասնակցում էին Ղուլյանցի, Ներսիսյանցի, Գևորգովի, Տեր-Սարգիսովի, Աբրահամյանցի, Գասպարյանցի և այլոց հայկական առևտրական տները և ֆիրմաները: «Պարսկաստանի հետ կատարվող մեր ապրանքափոխանակությանը,– հաղորդվում էր Ս. Կոնոպկայի «Թուրքեստանի երկրամաս» աշխատության մեջ (1913 թ.), – անմիջական մասնակցությունը կենտրոնացված է հայերի և պարսիկների ձեռքերում»: Հայկական որոշ ֆիրմաների առևտրական շահույթը միլիոնավոր ռուբլիների էր հասնում: Այսպես, ըստ որոշ տվյալների, «Եղբայրներ Տեր-Մկրտիչևների առևտրական ֆիրմայի» Իրանի հետ 30 տարվա ընթացքում կատարված կտորեղենի առևտրից ստացված շահույթը 20 միլիոն ռուբլի է կազմել»: 20-րդ դ. երկրորդ տասնամյակի սկզբներին այդ ֆիրմայի՝ Իրանի հետ կատարվող առևտրի տարեկան շրջապտույտը կազմել է 20–25 մլն ռուբլի[1]*:*

Չնայած Մեծ Բրիտանիայի դիմադրությանը՝ շարունակում էր զարգանալ նաև ռուս-աֆղանական առևտուրը: 1901 թ. կերոսինի արտահանությունը Աֆղանստան թույլատրվեց ասխաբադցի հայազգի վաճառական Տ. Մ. Հախումյանին: 1902 թ. այդ վաճառականն արդեն նավթամթերքների մեծածախ առևտրի պահեստներ ուներ Թախտաբազարում, Տաշքենդում և Կուշկայում:

Առևտրի մասշտաբներն էլ ավելի մեծացան 20-րդ դ. երկրորդ տասնամյակի սկզբին: Ամրապնդվեց Մերվի՝ որպես Խիվայի, Բուխարայի,

---

1 ЦГАТ, ф. И – 1, оп. 2, д. 12724, л. 125.

Աֆղանստանի և Իրանի հետ առևտրական կենտրոնական կետի նշանակությունը: Հայկական ֆիրմաներից Աֆղանստանի հետ խոշոր առևտուր էր անում «Տեր-Մկրտիչև եղբայրների» առևտրական տունը: Մաքսատների գերատեսչության տվյալների համաձայն, 1915 թ. այդ ֆիրմայի վստահյալ Ա. Սարգսյանցը Աֆղանստան է արտահանել կտորեղենի և շաքարի խոշոր խմբաքանակներ, կայսրության սահմաններ է ներմուծել բուրդ, բամբակ, ոչխարի մորթի, գորգեր, կարպետներ, չթեր և այլ ապրանքներ: Զգալի խմբաքանակով կերոսին էր արտահանում Աֆղանստան «Նոբել եղբայրների» ֆիրմայի վստահյալ Ա. Նազարյանցը: Սահմանակից երկրների հետ ապրանքների ուժգին փոխանակություն զարգացնելով, հանդես գալով որպես Արևելքում Ռուսաստանյան առևտրի առաջավոր գործակալներ՝ Թուրքեստանի հայ վաճառականությունն էական ավանդ էր ներմուծում ռուս-իրանական և ռուս-աֆղանական բարիդրացիական հարաբերությունների զարգացման, պատմամշակութային այն անդունդն հաղթահարելու մեջ, որն իրանալեզու ժողովուրդներին բաժանում էր սլավոններից, ամբողջապես Ռուսաստանի աշխարհաքաղաքական ազդեցության ուժեղացման մեջ՝ Միջին Արևելքում:

Հայ առևտրական բուրժուազիան, բավական պատկառազդու կապիտալ ունենալով, արդյունաբերության և արդյունահանության զարգացումից մեկուսի չէր մնում:

Սկսեցին զարգանալ արդյունաբերության այնպիսի ճյուղեր, որպիսիք էին բամբակազտումը և սննդարդյունաբերությունը: Մոտավորապես 19-րդ դ. 90-ական թվականների սկզբից երևան են գալիս բամբակազտիչ, ձիթհան, օճառի, ալրաղաց և այլ առաջին ձեռնարկությունները, զարգանում են ձկնորսությունը, աղի, նավթի, բնական այլ հանածոների արդյունահանումը, խաղողագործությունը և գինեգործությունը: Ձեռնարկությունների և արդյունագործության կազմավորման և հետագա զարգացման բնագավառում ակնառու դեր էր խաղում տեղի հայ բնակչությունը:

Գերակա զարգացում ստացավ բամբակենու արմատավորման հետ կապված բամբակազտիչ արտադրությունը: Հայ վաճառականներից առաջիններից մեկը Ն. Մ. Տեր-Մկրտիչևն էր, որը 90-ական թվականների սկզբին ուշադրություն դարձրեց զարգացող բամբակագործության մեջ կապիտալ ներդնելու շահավետության վրա: Զբաղվելով բամբակի մեծաքանակ գնումով՝ նա արդեն մի քանի տարի հետո դարձավ Անդր-

կասպյան մարզում բամբակի ամենախոշոր վաճառականներից մեկը: 90-ական թվականների կեսին մոտ Տեր-Մկրտիչևը, վաճառական Պեյրոսը և Մինդերի ֆիրման գործնականապես իրենց ձեռքերում էին կենտրոնացրել Ասխաբադի և Թեջենի գավառներում բամբակի մեծաքանակ գնումը: Բամբակի մենաշնորհ գնման նպատակով Տեր-Մկրտիչևը կիրառում էր աուլների բնակչությանը խոշոր գումարների դրամական կանխավճար բաժանելու պրակտիկան: Այսպես, միայն 1896 թ. նա որպես կանխավճարումներ ղեհկաններին էր բաժանել 35 հազար թուման (մոտ 700 հազար ռուբլի): Տեր-Մկրտիչևը բամբակ էր գնում ոչ միայն Անդրկասպիայում, այլև Թուրքեստանի այլ մարզերում, ինչպես նաև Իրանում և Աֆղանստանում: 90-ական թվականների կեսին Մերվի վաճառականներից մեկն էլ Գևորգովը, աչքի ընկավ որպես բամբակի մեծաքանակ գնորդ, որը խիստ մրցակցության մեջ էր Տեր Մկրտիչևի և Պեյրոսի հետ:

Շուտով հայ վաճառականների բամբակի մեծաքանակ գնորդների շրջանից հայտնվեցին նաև բամբակազտիչ ձեռնարկությունների տերեր: Տակավին 1893 թ. հայկական «Աթաբեկյանց և ընկ.» ֆիրման Կոկանդում կառուցեց բամբակազտիչ գործարան:

1897 թ. Մերվի վաճառական Կ. Սաղաթելովը գնեց Բորնեմանի շոգեաղացը և այն վերածեց բամբակազտիչ գործարանի: 1900 թ. այդ ձեռնարկությունում զտվեց 19 հազար փութ բամբակ: 1899 թ. Թեջենի գավառում գործարկվեց վաճառական Միրզոյանցի բամբակազտիչ գործարանը, իսկ 1902 թ. Մերվում հայ վաճառական Ն. Բ. Անտոնովի գործարանը: 1903 թ. ի վեր Ասխաբադում Ն. Տեր-Մկրտիչևին էր պատկանում բամբակազտիչ և ձիթհան գործարանը: 1908 թ. Մերվում հանդես եկան բամբակազտիչ ևս երկու ձեռնարկություն, որոնք պատկանում էին Ավետիսով եղբայրներին և Հեյդարովներին: Հաջորդ տարիներին հայ ձեռնարկատերերը ստեղծեցին ևս մի շարք նոր ձեռնարկություններ ոչ միայն Մերվում և Ասխաբադում, այլև մյուս քաղաքատիպ ավելի փոքր բնակավայրերում առավելապես Մերվի և Թեջանի գավառներում:

Հայազգի խոշոր բամբակարտադրողների շահերը չէին սահմանափակվում միայն Անդրկասպիայի սահմաններում: Այսպես, Տեր-Մկրտիչևների առևտրական տունը, հաշվի առնելով բամբակենու մշակման համար Ֆերգանայի հովտի հիանալի բնապայմանները, մտավ Կոկանդում գործող «Բամբակագործության ընկերության» փայատերերի

կազմի մեջ: Թուրքեստանում 1914 թ. առևտրական տանը պատկանող բամբակի պլանտացիաներ ունեին նաև Հայազդի այլ ձեռնարկատերեր՝ Կոստանդովը, Ասրյանցը, Օհանովը, Հարությունովը, Ավագովը: Թեջանի գավառում Ավագովի 500 դեսյատին նորագույն տեխնոլոգիայով մշակվող պլանտացիաները տարեկան տալիս էին 20 հազար փթից ոչ պակաս բարձրորակ հում բամբակ: Հայ պլանտատորները խոշոր գումարներ էին ներդնում ոռոգման, բամբակենու տեսականին բարելավելու, գյուղատնտեսական այլ միջոցառումների մեջ:

Բամբակագործության և բամբակզտիչ արդյունաբերության զարգացման հետ սերտորեն կապված էր նաև ձեթի և օճառի արտադրության երևան գալը: 1893 թ. Մերվի վաճառականներ՝ եղբայրներ Գ. և Ս. Պետրոսյանցները, հետաքրքրվելով բամբակի սերմի օգտագործմամբ, կառուցեցին մարզում ձիթհան առաջին գործարանը: Բամբակի և քնջութի սերմերը գնվում էին տուլներում, տեղի բնակչությունից, իսկ պատրաստի ձեթը վաճառվում էր Մերվում: 1900 թ. միավորվելով Մերվի հայտնի վաճառական Խ. Ղուկասյանցի հետ, նրանք նշանակալիորեն ընդլայնեցին արտադրությունը՝ գործարանի տարեկան արտադրողականությունը հասցնելով 43 հազար փութ ձեթի և 15 հազար փութ օճառի: 19-րդ դարի վերջերին Ասխաբադում ձիթհան ձեռնարկություն ուներ Ն. Տեր-Մկրտիչևը: 1902 թ. հայազդի վեց նոր ձեռնարկատերեր Ն. Բ. Անտոնովի գլխավորությամբ ևս մեկ ձիթհան գործարան հիմնադրեցին Մերվում: Ձեթից և օճառից բացի, ձիթհան գործարանները նաև արտադրության մնացորդների՝ քուսպի առևտուր էին անում: 1911 թ. Պետրոսյանցի, Անտոնովի և Նաումովի՝ Մերվում գտնվող գործարանները տարեկան մոտ 150 հազար փութ քուսպ էին արտադրում, որը մասամբ տեղում էր վաճառվում, մասամբ էլ Գերմանիա էր առաքվում: Տեր-Մկրտիչևի՝ Ասխաբադում գտնվող գործարանն ամեն տարի մոտ 100 հազար փութ քուսպ էր ուղարկում Գերմանիա:

Ապրանքային բամբակագործությունն, անշուշտ, որոշիչ գործոն էր երկրամասի գյուղատնտեսական զարգացման մեջ, սակայն միաժամանակ զարգանում էին նաև գյուղատնտեսական արտադրության այլ ճյուղերը՝ հացահատիկային երկրագործությունը, խաղողագործությունը և գինեգործությունը: Հացահատիկային երկրագործության և ներքին սպառողական շուկայի զարգացմանը զուգընթաց երևան եկան ալրաղաց առաջին՝ մեխանիկական ձեռնարկությունները և շոգեաղացները: 1890 թ. հայազդի վաճառական Սարուխանովը Սերախսում կառու-

ցեց մարզում առաջին շոգեալրաղացը: 1891 թ. գործարկվեց «Արցախ» ընկերության շոգեալրաղացը, որն առաջինն էր Ասխաբադի գավառում: 1896 թ. մոտերքը այն ամիսը 18 հազար փութ հացահատիկ էր աղում՝ ալյուրով ապահովելով Ասխաբադի համբարակային գերատեսչությունը: Ընկերության անդամներ էին Սարուխանով եղբայրները, Գ. և Պ. Գևորգովները, Բ. Տեր-Սարգիսովը, Ս. Հովհաննիսյանցը: 1899 թ. Թեջանում շոգեաղաց կառուցեց վաճառական Ե. Գ. Միրզոյանցը: Օրական 900 փութ հացահատիկ աղացող շոգեաղացը պատկանում էր Մերվի վաճառականներ և արդյունաբերողներ Գ. Պետրոսյանցին և Խ. Ղուկասյանցին: 1915 թ. վերաբերող տվյալների համաձայն, Մերվի գավառում շոգեաղացներ ունեին Աթայանցը, Ամունցը, Գամանդը, «Փարոս» ընկերությունը, Յուզբաշյանցը, Տեր-Ստեփանովը, Նազարյանցը, Փիրումովը և այլք:

Հայ վերաբնակիչներն ուշադրություն դարձրին նաև օղեգործական արտադրության զարգացման հնարավորության վրա: Գինեգործության պատկառելի փորձ ունենալով՝ հայերը սկսեցին գինի պատրաստել, սկզբում Թուրքեստանից և Պարսկաստանից բերված խաղողից, իսկ այնուհետև՝ մարզում խաղողագործության զարգացմանը զուգընթաց խաղողի տեղական տեսակներից: Առաջին օղեթորման գործարաններն Ասխաբադում հայտնվեցին արդեն 1884 թվականին: Դրանք պատկանում էին Գ. Մելիք-Սահակովին, Մ. Տեր-Խաչատրյանին, Բ. Բեգլարյանին և ավստրիացի Կ. Սկոկանին: Հայերն օղեգործությամբ էին զբաղվում նաև մարզին սահմանակից Իրանի շրջաններում: 80-ական թվականների սկզբին նրաք հյուսիսարևելյան Իրանի քաղաքներից մեկում մի քանի օղեթորման գործարաններ հիմնադրեցին: Այդ հանգամանքն անգլիական գործակալությունն օգտագործեց տեղի մահմեդականների դժգոհությունը հրահրելու համար: Մինչդեռ թուրքմեններն, ի տարբերությունը պարսիկների, առլներում գինի պատրաստող հայերին միանգամայն լոյալ էին վերաբերվում: «Մահմեդական բնակչությունը,– հաղորդում էր մարզի իշխանությունը,– արդեն իր կրոնական համոզմունքների պատճառով գինեգործությամբ զբաղվել չի կարող, բայց մոլեռանդ չլինելով, առլներում գինի պատրաստող հայերի նկատմամբ հանդուրժող է և նրանց խաղող է վաճառում փութը 40 կոպեկից մինչև 1 ռուբլի»: 1896 թ. Նիժնի Նովգորոդում կայացած համառուսաստանյան տոնավաճառում Անդրկասպյան մարզից ներկայացված ցուցանմուշների շարքում կային Ավանեսով եղբայրների, Հակոբովի, Ծատու-

ղովի, Մուրադովի, Խուբովի արտադրած օղիները և գինիները: Հաջորդ տարիներին նույնպես հայերն առաջատար դեր էին խաղում երկրամասում գինեգործության զարգացման մեջ:

Մարզում արտադրվում էին ոչ միայն ոգելից, այլև ոչ ալկոհոլային խմիչքներ, որոնք Միջին Ասիայի շոգ կլիմայի պայմաններում մշտական և լայն պահանջարկ ունեին: Ոչ ոգելից խմիչքներ արտադրող առաջին ձեռնարկություններից մեկը Ասխաբադում 1896 թ. հիմնադրեց հայազգի Ալահվերդովը: 1907 թ. քաղաքում արդեն կային 5 այդպիսի ձեռնարկություն: Դրանք պատկանում էին Ալահվերդովին, Ասրյանցին, Ուլիցկուն, Զեգելմանին և Մեդնովին: Կրասնովոդսկում ոչ ոգելից խմիչքների պատրաստմամբ զբաղվում էր հայազգի Բալիևը, Կուշկայում՝ Գարանյանցը:

Խիստ նկատելի էր հայերի դերը ձկնորսության զարգացման մեջ: Առավելապես Աստրախանից եկած լինելով՝ նրանք Թուրքմենիան Ռուսաստանին միակցելուց շատ առաջ Կասպիականի արևելյան ափին զբաղվում էին այդ արդյունագործությամբ: Մինչև հայերի գալը թուրքմենները եռաժանիով էին ձուկ որսում և չգիտեին այն որպես պաշար մթերելու եղանակները: Հայերը նրանց սովորեցրին արդյունագործական ձկնորսություն, և երբ նրանք հեռագնաց նավակներ ունեցան, սկսեցին ապագա որսի հաշվին նրանց ձկնորսական սարքեր և կանխավճար տրամադրել: Արդեն 80-ական թվականներին աստրախանցի խոշոր ձկնարդյունաբերող հայազգի Ս. Մ. Լիոնոզովը, պայմանագրով վերցնելով Կասպիականի հարավ-արևելյան հատվածի ձկնորսական պարսկական ջրերը, դրանք կապալով հանձնեց Աստրախանի հայ այլ ձկնարդյունաբերողներին: Արդեն 19-րդ դարի վերջին «Գ. Ս. Լիոնոզովի (որդու) հարավկասպիական ձկնարդյունահանող ընկերությունն» այդ ջրերում լիակատար մենաշնորհ ուներ: Ձկնապրանքներն առաքվում էին ոչ միայն Ռուսաստան և Այսրկովկաս, այլև արտասահման՝ Լեհաստան, Գերմանիա, Ավստրիա:

20-րդ դ. սկզբին Կրասնովոդսկի գավառի ձկնորսական բոլորը 17 արտելները պատկանում էին հայազգի ձկնարդյունաբերողներին: Դրանցից ամենախոշորներն ունեին Ա. Աբրահամովը և Յակով Սերգիյանցը. առաջինը՝ 6, իսկ երկրորդը՝ 4 ձկնորսական արտել: Մանգիշլակի գավառում ձկնորսական 13 արտելներից 8-ը պատկանում էր ռուսներին, իսկ 5-ը՝ հայերին: Ձկնորսական արտելներ ունենալուց զատ,

հայերը ձուկ էին գնում ինքնուրույն որս անող գրեթե բոլոր թուրքմենական բնակատեղիներում:

Նախքան Ռուսաստանին միակցելն Անդրկասպիայի բնական հարուստ պաշարները գործնականում չէին մշակվում: Թուրքմենիայում առաջինը նավթ արդյունահանելով սկսեց զբաղվել «Նոբել եղբայրների» ֆիրման: 1914 թվականի մոտերքը, բացի նշված ֆիրմայից, նավթահանությամբ զբաղվում էին. բաքվեցի վաճառական Հաջինսկին, «Զարքեն» ընկերությունը, «Վիշաու» ֆիրման, «Կասպիականի ընկերությունը», «Արամազդ» ֆիրման, «Փիթոևի ընկերությունը», Մայիլովի, Մուխթարովի և Մանթաշևի ֆիրմաները, «Լյուբորադ ընկերությունը», «Շագիրտ ընկերությունը» և մյուսները: Այդ ֆիրմաների բաժնետերերի նկատելի մասը հայեր էին:

Անդրկասպիայի աղահանքերի մշակման ուղղությամբ շոշափելի գործունեություն ծավալեց կրասնովոդսկցի վաճառական Ն. Տեր-Ավանեսովը: 20-րդ դարի սկզբին նա 10 տարով վարձակալել է Ուզբոյ գետի հունի երկայնքով ընկած և Մոլլա-Կարա վայրում գտնվող աղահանքերը: Գործը լավ հիմքերի վրա դնելով՝ նրան հաջողվեց գնել ևս երկու խոշոր աղահանք (որոնք պատկանում էին իշխան Լոբանով-Ռոստովսկուն և Ալտմանին) և փաստորեն մենակ տիրանալ Մոլլա-Կարայի աղահանքերին: Անդրկասպյան երկաթուղու Ջեբել կայարանում նա կառուցեց աղաց և աղը պահպանելու ծածկով պահեստներ: 1905 թ. Մոլլա-Կարայում գտնվող Տեր-Ավանեսովի աղահանքերից արդյունահանվեց մոտ 115 հազար փութ աղ, իսկ Բալա-Իշեմ վայրում՝ 252 հազար փութ: Բացի Տեր-Ավանեսովից, աղ էին արդյունահանում Ս. Մ. Միրզոյանցը, Մ. Գրիգորյանցը, Տեր-Իսրայելովը և ուրիշներ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբի մոտերքը մարզում երևան են գալիս աղ արդյունահանող մի շարք բաժնետիրական ընկերություններ, որոնց բաժնետերերի մի մասը հայերն էին:

Հայերը երկրամասում մասնակցում էին նաև այլ օգտակար հանածոների՝ կրաքարի, թերթաքարի, երկաթահանքի, ծծմբի, ալաբաստրի և այլ հանքանյութերի մշակմանը:

Հայ բնակչությունը զբաղվում էր նաև այլազան արհեստներով, աշխատանքային պրոֆեսիաներով: Հայերի զգալի մասն ուներ տնայնագործական ոչ մեծ արհեստանոցներ՝ հյուսնաատաղձագործական, դարբնի, դերձակի, կոշկակարի, կառապանության և արհեստավորների փոքր թվաքանակ ունեցող այլ ձեռնարկություններ, փռեր, հյուրանոց-

ներ, ճաշարաններ, դուքաններ, խմիչքի մառաններ և այլն: Հայերի շրջանում հաճախ էին հանդիպում հազվադեպ պրոֆեսիաների ներկայացուցիչներ՝ ոսկերիչներ, տպագրիչներ, քարտաշներ, կահույքագործներ, լուսանկարիչներ, հմուտ խոհարարներ, դիզայներներ և այլն, կոշկակարներ և դերձակներ: Հարկ է նշել առանձնապես հայ շինարարների դերը, որոնք գործուն մասնակցություն են ունեցել Անդրկասպյան երկաթուղու, Ամու-Դարյայի վրա Զարգուի կամրջի, երկաթուղային կայարանների և դեպոների, մաքսատների և սահմանապահ պահակակետերի, եկեղեցիների և մզկիթների, դպրոցների ու հիվանդանոցների, մասնավոր տների և պետական շենքերի շինարարությանը, քաղաքների փողոցների անցկացմանը, պուրակներ, զբոսայգիներ դցելու և այլ հանրօգուտ աշխատանքներին:

* * *

Ռուսական կայսրության կազմում Թուրքեստանի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքն աչքի էր ընկնում մի շարք առանձնահատկություններով: Բնիկ և եկվոր բնակչության միջև պատմամշակութային խորը տարբերությունները դարձան էթնո-մշակութային յուրօրինակ իրավիճակի պատճառ: Անդրկասպիայի քաղաքների բնակչությունը դարձավ տարբեր ժողովուրդների, լեզուների, կրոնների մշակույթների իսկական կոնգլոմերատ, այդ նույն ժամանակ առվների բնակչությունը շարունակում էր մնալ առավելապես թուրքմենական: Ռուսաստանից և նրա ազգային ծայրամասերից եկածները՝ ռուսները, հայերը, հրեաները, լեհերը, ինչպես նաև գերմանացիները, հույները և այլ եվրոպացիներ դարձան արևմտյան քաղաքակրթության ռուսացած տարբերակի գործուն տարածողներ, մինչդեռ բնիկ թուրքմեն, ինչպես և պարսիկ ու ասիացի եկվոր բնակչությունը շարունակում էր մնալ պահպանողական, ֆեոդալանահապետական բարքերի, սովորույթների և ավանդույթների կրող: Անդրկասպիայում մահմեդականների շրջանում ապրելն առանձնահատուկ դրոշմ էր դնում ցանկացած քրիստոնյայի վրա, մյուս կողմից, մահմեդական բնակչությունը, հատկապես քաղաքներում, շատ արագ յուրացնում էր եվրոպական կենսակերպի սոցիալական և բարոյական նորմերը: Այդ առանձնահատկությունը բնորոշ էր ողջ Թուրքեստանի հասարակական կյանքի համար, բայց առանձնապես ցայտուն էր դրսևորվում Անդրկասպիայում:

Հայ ազգաբնակչության իրավական կարգավիճակը որոշվում էր մի շարք գործոններով: Նախ, հայերը որպես ռուսահպատակներ, ի տարբերություն, օրինակ, պարսիկների, օգտվում էին ռուսաստանյան քաղաքացիության բոլոր իրավունքներից: Նրանք կարող էին ազատորեն բնակվել կայսրության ողջ տարածքում, ձեռք բերել անշարժ և այլ սեփականություն, առանց որևէ սահմանափակության զբաղվել առևտրաձեռնարկուական և տնտեսական այլ գործունեությամբ, գործուն մասնակցել հասարակական, քաղաքական և մշակութային կյանքին:

Կարևոր նշանակություն ուներ հայերի դերը երկրամասում տնտեսական նոր հարաբերություններ զարգացնելու մեջ, քանզի ի դեմս հայ առևտրաարդյունաբերական շրջանների, ցարական իշխանություններն ունեին կայուն սոցիալական հենարան և իրենց շահերն իրականացնելու գործիք: Դրանից զատ, հայերը, լավ իմանալով արևելյան ժողովուրդների լեզուները, բարքերն ու սովորությունները, անհողդողդ նվիրված էին քրիստոնեությանը, որն անտարակույս համապատասխանում էր Միջին Ասիայի ռուսական գաղութացման քաղաքական և քաղաքակրթական նպատակներին: Հայ բնակչության իրավական կարգավիճակի վրա էական ազդեցություն էր թողնում նրա համառ ձգտումը կրթության և լուսավորության նկատմամբ, տեղի հայ մտավորականության և գործարար մարդկանց գրագիտության բարձր տոկոսն ու գործուն մասնակցությունը հասարակական կյանքին:

Գլխավոր այն գործոնը, որը որոշում էր հայ բնակչության իրական իրավական կարգավիճակը, եվրոպացի և ասիացի բնակչության միջև հարաբերություններ հաստատելու, քրիստոնեության և մահմեդականության, արևմտյան և արևելյան պատմամշակութային ավանդությունների միջև նրա յուրօրինակ միջնորդի դեր խաղալն էր:

Արդեն առաջին տարիներին հայ վերաբնակիչներն իրենց ազգային կյանքը համախմբելու և ներդաշնակելու համառ ձգտում ցուցաբերեցին: Շուտով քաղաքային բնակչության գրեթե բոլոր էթնիկական խմբերը՝ ռուսները, հայերը, պարսիկները, հրեաները, կովկասյան մահմեդականները, բուխարացիները, ինչպես նաև Իրանից եկած կրոնական, փախստական բեհաիստները, կազմեցին իրենց ազգային համայնքները: Նրանց գլխավորում էին ազգային փոքրամասնությունների հեղինակավոր ներկայացուցիչները «ավագները», որոնք էական մասնակցություն էին ունենում քաղաքի տնտեսությունը վարելու, էկոնոմիկան զարգացնելու, կրթության, առողջապահության, բարեգործության,

հանցագործությունների սահմանափակման, ազգամիջյան բախումների կարգավորման հետ կապված հարցերի լուծմանը: Ազգային համայնքների կազմավորումը յուրօրինակ, թող թե վարչականորեն սահմանափակված, ազգային-մշակութային ինքնավարության մի ձև էր, որը թույլ էր տալիս իրականացնել ներէթնիկական համախմբման և իրենց ազգային կյանքը զարգացնելու ազգային փոքրամասնությունների ձգտումը:

Ազգային համայնքներ կազմելու թույլատրումն իշխանությունների հարկադրյալ զիջումն էր: Առաջին տարիներին, երբ ռուսականացման պրոցեսը տակավին նոր էր սկսվում, իշխանությունները ստիպված էին հանդուրժել բնակչության ոչ ռուս խմբերի ազգային ներկայացուցչությունը: Նմանօրինակ ներկայացուցչության առկայությունը խթանում էր ազգային հայրենասիրական միտումներ և չէր կարող ջղագրգռություն չպատճառել ցարական վարչակարգի ազգայնամոլ տրամադրություններ ունեցող աստիճանավորներին: 1909 թ. մարզի նոր պետ գեներալ-լեյտենանտ Եվրեինովը, որն ինչպես և Կուրոպատկինը, համակված էր ազգայնամոլ նախապաշարումներով, կարգադրեց արգելել ռուսահպատակների ազգային համայնքները՝ հետայդու պահպանելով միայն պարսկական և ավդանական համայնքները: Այդ որոշումը կյանքի կոչվեց ռուսների, հայերի, հրեաների, լեհերի և այլ եվրոպացիների հակակառավարական ակտիվ ելույթներով և, ընդհակառակը, 1905–1907 թթ. ռուսական վարչակարգի նկատմամբ ռուսաստանյան և օտարահպատակ մահմեդականների ամբողջապես լոյալ վերաբերմունքով:

Ի միջի այլոց, բնակչության ոչ ռուս էթնիկական խմբերի ազգային համախմբման պրոցեսը կասեցնելու փորձերը սակավ արդյունավետ էին: Չնայած ազգային համայնքների ձևական արգելմանը՝ ազգային համայնքների կոնսոլիդացումը Թուրքեստանում շարունակում էր ուժեղանալ, երևան էին գալիս և ակտիվորեն գործում կրոնական, լուսավորական, բարեգործական ու ազգային այլ կազմակերպություններ: Բացի այդ, ռուսական գաղութային վարչակարգի ոչ բոլոր ներկայացուցիչներն էին ազգայնամոլ տրամադրություններով համակված: Նրանցից ոմանք, օրինակ, մարզի պետեր Կոմարովը, Բոգոլյուբովը, Սուբբոտիչը ազգային փոքրամասնություններին միանգամայն լոյալ էին վերաբերվում, իսկ հայերին նույնիսկ բացահայտ համակրանքով:

Հայ վերաբնակիչների կյանքում ակնառու դեր էր խաղում հայ առաքելական եկեղեցին: Գործելով վաճառականության և մտավորականության հետ համատեղ՝ այն Թուրքեստանում հայ գաղութների յուրօրինակ առանցքը դարձավ: Ասխաբադում և Կզըլ-Արվատում առաջին հայկական եկեղեցիները երևան եկան Էջմիածնի Սինոդի և տեղի հայ համայնքների նախաձեռնությամբ: 1884 թ. սեպտեմբերին մարզի պետ գեներալ-լեյտենանտ Կոմարովը թույլատրեց Ասխաբադում կառուցել Միջին Ասիայի առաջին հայ առաքելական եկեղեցին: 1890 թ. եկեղեցուն առընթեր բացվեց եկեղեցական ծխական ուսումնարան: 1892 թ. մոտերքը այն ուներ 60-ից ավելի աշակերտ: Կզըլ-Արվատում եկեղեցու շինարարությունը սկսվել էր 1885 թ.՝ տեղի բնակիչ Տ. Հախումյանի նվիրած հողատարածքի վրա:

1889 թ. Շամախու հայ առաքելական թեմը Անդրկասպյան մարզի և Թուրքեստանի երկրամասի գործակալ նշանակեց քահանա Տեր-Ոսկանյանին, որին հանձնարարվում էր եկեղեցիների և դրանց առընթեր դպրոցների շինարարությունը Կրասնովոդսկում, Ուզուն-Ադայում, Մերվում, Բուխարայում, Սամարղանդում, Տաշքենդում, ինչպես նաև Ասխաբադում ու Կզըլ-Արվատում արդեն գործող եկեղեցիների վերակառուցումը: Սակայն Կուրոպատկինը, որը Կոմարովին փոխարինեց մարզի պետի պաշտոնում, երկրամասում հայ եկեղեցու գործունեության մեջ Ռուսաստանի պետական շահերին բացահայտ սպառնալիք նկատեց: Ափսոսալով, որ Էջմիածնի և Շամախու կարգադրությունները չեն արժանացել մարզի նախկին վարչակարգի դիմադրությանը, Կուրոպատկինը համառորեն ընդգծում էր Կովկասի հետ տեղի հայության հոգևոր կապերը խզելու անհրաժեշտությունը: «Այդ վարակը,– գրում էր նա՝ հայ հոգևորականությանը հակակառավարական միտումների մեջ մեղադրելով,– արդեն ներթափանցել է Անդրկասպյան երկրամաս, որը դրսևորվել է Տեր-Ոսկանովի, որն ամբողջ Միջին Ասիայի հայկական եկեղեցիների գործակալ է նշանակված, ինքնակամ գործողություններում և հանցագործություններում: Հայերը համերաշխորեն համախմբված համայնքներ ունեն գլխավոր կետերում՝ Ասխաբադում, Մերվում, Կզըլ-Արվատում: Չի կարելի չկանխատեսել, որ ապագայում նրանք մեզ բավականին շատ հոգսեր կպատճառեն»: Այդ ազգայնամոլին առանձնապես ջղագարություն էր պատճառում հայ հոգևորականության՝ եկեղեցական-ծխական դպրոցներ բացելու իրավունքը: «Անցյալ տարվա աշնանը,– վրդովվում էր Կուրոպատկինը,– հայ համայնքը

ներկայացավ ինձ՝ դպրոցի բացմանը որպես հյուր ներկա գտնվելու հրավերով: Ոչ ոք չէր խնդրել իմ թույլտվությունը այդ բացման առթիվ, քանզի թույլտվությունը տվել էր հայ հոգևորականությունը»[1]:

1892 թ. հոկտեմբերի 16-ին Կուրոպատկինի հրամանով մերժվեց Միջին Ասիայի հայերին Շամախու թեմի ենթակայությանը թողնելու մասին էջմիածնի Սինոդի միջնորդությունը: Այժմ Թուրքեստանի հայկական եկեղեցիները պիտի ենթարկվեին Աստրախանի հայկական թեմին: Իշխանությունների կարծիքով, դա պիտի դժվարացներ կապը Կովկասի հետ, որտեղից տեղի հայերը «քաղում էին իրենց հոգևոր և քաղաքական հույսերը»: Նույն թվականի դեկտեմբերին զինվորական մինիստրությունը հաղորդում էր մարզի պետի դրասենյակ, որ հետ այսու հայկական դպրոցներ կարող են բացվել միայն Թուրքեստանի գեներալ-նահանգապետի թույլտվությամբ, իսկ այդ դպրոցներում առարկաների դասավանդումը, կրոնի ուսուցումից բացի, պիտի տարվի ռուսերենով: Տեր-Ոսկանովի դեմ ցարական իշխանությունները սկսեցին զանազան հայցեր ներկայացնել և չհանգստացան այնքան ժամանակ, քանի դեռ նրան չհեռացրին մարզի սահմաններից: Հայ հոգևորականության դեմ հալածանքները դրսևորվեցին նաև 90-ական թվականների սկզբից, համարյա տասնամյակ տևած դատավեճում՝ հայկական եկեղեցիների շինարարության համար հատկացված հողամասերի հարցի շուրջ: Չնայած դրան, 1896 թ. մոտերքին Թուրքեստանում արդեն գործում էին երեք հայկական եկեղեցի՝ Ասխաբադում, Կզըլ-Արվատում և Մերվում:

1903 թ. հունիսի 12-ի օրենքն առաջ բերեց ամբողջ հայ ժողովրդի վրդովմունքը: «Փորձությունների մինչև պռունկը լցված դավաթում,— «Ասխաբադ» թերթում գրում էր Անդրկասպիայում հայտնի բժիշկ և քաղաքական գործիչ Ա. Մնացականյանցը,— վերջին կաթիլը դարձավ եկեղեցական ունեցվածքի բռնագրավումը: Այդ միջոցառումն առաջացրեց հայ ժողովրդի բոլոր խավերի զայրույթը»: Հայ հոգևորականության նկատմամբ շարունակ կատարվող հալածանքները նաև Թուրքեստանում էին իրականացվում, բայց նույնիսկ այդ, խիստ բարդ պայմաններում հայ եկեղեցին շարունակում էր մնալ որպես տեղի հայերի ազգային համախմբման գլխավոր ուժը: 1905 թ. ապրիլին տեղի ունեցավ Կրասնովոդսկի հայկական եկեղեցու հանդիսավոր բացումը: Եկեղեցու շինարարության վրա ծախսվեց 30 հազար ռուբլի, ընդ որում

1 ЦГАТ, ф. И—1, оп. 2, д. 2718, л. 19—22.

այդ դումարի մեծ մասն այլ քաղաքներում բնակվող հայերից, մասնավորապես թավրիզահայերից ստացվեց:

1905 թ. օգոստոսի 1-ին ցարը վերացրեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը՝ հայ եկեղեցուն էին վերադարձվում ունեցվածքը և բռնագրավման շրջանում ստացված եկամուտները, թույլատրվում էր հայկական դպրոցների բացումը: 20-րդ դարի սկզբին հայկական եկեղեցիներ էին գործում Ասխաբադում, Մերվում, Կզըլ-Արվատում, Կրասնովոդսկում, Թեջենում, Սամարղանդում: Հաջորդ տարիներին հայ հոգևորականության և տեղի հայ մեկենասների ջանքերով հայկական եկեղեցիներ կառուցվեցին Զարջոուում, Բուխարայում, Տաշքենդում, Կոկանդում, Անդիջանում և Թուրքեստանի այլ բնակավայրերում: Որպես կանոն, հայկական եկեղեցիներին առընթեր կային եկեղեցական-ծխական դպրոցներ կամ ուսումնարաններ, որոնք պահվում էին տեղի հայ համայնքի և ամենից առաջ առևտրաարդյունաբերական դասակարգի միջոցներով: Հայկական եկեղեցական-ծխական դպրոցների և ուսումնարանների օգտին տեղի հայությունը հաճախ դրամաիրային հանգանակություններ էր կատարում, կազմակերպվում էին երգ-երաժշտության և թատերական ներկայացումներ, վիճակախաղ-ալեգրի և այլն: Գտնվելով եկեղեցական-ծխական հատուկ հոգաբարձությունների հսկողության ներքո, որոնց կազմի մեջ էին մտնում ոչ միայն քահանաներ, այլև մյուս խավերի առավել հեղինակավոր ներկայացուցիչներ, այդ ուսումնական հաստատություններն ընդգրկում էին հայ մանուկների բավականին մեծ թվաքանակ: Այսպես, 1910 թ. մոտերքը Ասխաբադի եկեղեցական-ծխական ուսումնարանում սովորում էին 220 հայ երեխաներ՝ տղաներ և աղջիկներ, Մերվի դպրոցում՝ 63 տղա և 54 աղջիկ, Կրասնովոդսկի դպրոցում՝ 56 տղա և 37 աղջիկ: Եկեղեցական-ծխական ուսումնական հաստատությունների հայ մանուկների մեծ մասը սովորաբար սերում էր չքավոր ընտանիքներից:

Միջին Ասիայի հայերի ազգային կյանքում նկատելի դեր էին խաղում 20-րդ դարի սկզբին Անդրկասպիայում հանդես եկած կանանց բարեգործական ընկերությունները՝ կանանց առաջին հասարակական մշակութային կազմակերպությունները Միջին Ասիայում: 1901 թ. փետրվարին Ասխաբադում Սուսան Մամիկոնյանի գլխավորած հայ կանանց խմբակի նախաձեռնությամբ սկսվեց «Հայ կանանց բարեգործական ընկերության» գործունեությունը: Մարզի պետ գեներալ Բոգոլյուբովը բարյացակամ էր վերաբերվում հայերին և գտնում էր, որ ընկե-

ությունը տեղի հայ և ռուս բնակչության «մերձեցման միջոց կդառնա»: Դրամական եկամուտների հիմնական աղբյուրը անդամավճարներն էին և հայ ունևոր անձանց նվիրատվությունները, ինչպես նաև ձեռագործերի բարեգործական շուկաները, համերգները, թատերական ներկայացումները, վիճակահանությունները և այլն: Շուտով ընկերությանն առընթեր կազմակերպվեց մանկապարտեզ. դա Անդրկասպիայում նախադպրոցական առաջին ուսումնադաստիարակչական հաստատությունն էր:

1906 թ. Նինա Ապրեսյանի նախաձեռնությամբ Մերվում կազմակերպվեց հայ կանանց բարեգործական ընկերություն: 1915 թ. մոտերքը ստացվեց Կրասնովոդսկում հայ կանանց ընկերություն ստեղծելու մասին իշխանությունների թույլատրությունը: Ասխաբադում հայ կանանց առավել ազդեցիկ ընկերությունն այդ ժամանակ ուներ 99 իսկական անդամ, մանկապարտեզ և նախադիմնազիա, որտեղ սովորում էին 337 երեխա, ընդ որում նրանցից՝ 158-ը՝ անվճար, իսկ 100-ը՝ ուսման համար սահմանված վարձի կիսով:

Հայկական բարեգործական ընկերություններն էական օգնություն էին ցույց տալիս չքավոր ընտանիքներին, փախստականներին և որբերին, իրենց միջոցներով սահում և դաստիարակում էին չունևոր հայ ընտանիքների մանուկներին, ուսումնարանների և գիմնազիաների թոշակավորներին, անվճար դեղորայք էին տալիս, օգնում էին աշխատանքի տեղավորվել, վերադառնալ հայրենիք: Ընկերությունների գործունեության մասին հաշվետվությունները ամեն տարի տպագրվում էին տեղի տպարաններում, հրատարակվում էին պաշտոնապես: Բարեգործական նպատակներից զատ, հայ կանանց ընկերությունների գործունեությունը, դրանց հիմնադրման սկզբից ևեթ, համակված էր հայրենասիրական շնչով, այն մեծապես նպաստում էր հայ երիտասարդության ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, հայ և ռուս ժողովուրդների պատմությանը և մշակույթին ծանոթանալու գործին:

Տեղի հայերի կյանքում նշանավոր երևույթ էր մոտավորապես 90-ական թվականներին երկրամասի խոշոր քաղաքներում հայկական սիրողական թատրոնի հանդես գալը: Թատրոնի ստեղծումը սերտորեն կապված էր տեղի հայ համայնքների հայրենասիրական և բարեգործական գործունեության հետ: Հայկական թատրոնի բեմում ներկայացվում էին՝ «Ղարաբաղի աստղագուշակ», «Վարդան Մամիկոնյան», «Ասլան Բալասի կամ Երևանի գրավումը ռուսների կողմից», «Խենթ» պիեսները,

«Պոեմ», «Իմ պարտականությունը խոմփացնելն է» և այլ վոդևիլներ, նշանավոր ռուս դրամատուրգների ստեղծագործությունները հայերեն թարգմանությամբ: Թուրքեստան և հատկապես Անդրկասպյան երկրամաս էին այցելում հայ թատերական արվեստի ականավոր գործիչներ Աբելյանը, Բարխուդարյանը, Ոսկանյանը, Վրույրը, Արմենյան ամուսինները, Սողոմոնյանը և ուրիշներ:

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի հարցը միշտ էլ գտնվել է Թուրքեստանի հայ համայնքների հոգևոր և քաղաքական հետաքրքրությունների կենտրոնում: Արևմտահայերի ողբերգական ճակատագրի նկատմամբ, որոնք հարկադրված էին սուլթան Աբդուլ Համիդի կառավարության արյունալի նախճիրների հետևանքով այլ երկրներում ապաստան փնտրել, տեղի հայերը չէին կարող անտարբեր մնալ: 1894–1896 թթ. տասնյակ հազարավոր հայեր, կոտորածների սարսափներից փրկվելով, գաղթել էին Ռուսաստան և ուրիշ երկրներ: Նրանցից ոմանք անցել էին նաև Անդրկասպյան երկրամաս:

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը ցնցեց Թուրքեստանի ողջ հայ ազգաբնակչությանը: 1914 թ. հոկտեմբերի 24-ին տեղի «Ասխաբադ» թերթում զետեղվել էր «Հայերը և Թուրքիայի դեմ պատերազմը» հոդվածը, որտեղ ընդգծվում էր, որ այդ պատերազմում հայ ժողովրդին հարկ կլինի խաղալ այն դերը, «որպիսին լեհ ժողովուրդը խաղում է ավստրո-գերմանական ռազմաճակատում», հաղորդվում էր Անդրանիկի ջոկատների մարտական գործողությունների, արևմտահայերի Ռուսաստանի կազմի մեջ մտնելու ջերմ ցանկության մասին: Տեղի հայ հոգևորականության, վաճառականության և մտավորականության եռանդուն մասնակցությամբ հայ երիտասարդությունից սկսեցին կազմակերպվել և Թուրքական ռազմաճակատ ուղարկվել կամավորական ջոկատներ: Թուրքիայի դեմ պատերազմ գնացած կամավորների ընտանիքների մասին հոգալու պարտականությունը ստանձնեցին հատկապես այդ նպատակով ստեղծված «Հայ կանանց կոմիտեները»: Թուրքեստանի բոլոր խոշոր քաղաքների հայ համայնքները կազմակերպեցին դրամական միջոցների և իրերի նվիրատվության լայն հանգանականություն հոդուտ փախստականների: Այդ միջոցների մեծ մասը ուղարկվում էր «Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո», որը ստեղծվել էր 1912 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Ռուսական կայսրության հայկական կենտրոնների համագումար-խորհրդաժողովի կողմից:

* * *

Էկոնոմիկայի մեջ ակնառու դիրք գրավելով, ազգային մշակութային լիարյուն կենտրոններ ստեղծելով՝ Միջին Ասիայի հայ ազգաբնակչությունն էական դեր էր խաղում նաև ամբողջապես վերցրած ազգամիջյան հարաբերությունների, հասարակական-մշակութային կյանքի զարգացման մեջ: Արդեն 19-րդ դ. վերջին հայ բնակչությունն աչքի էր ընկնում սոցիալական կառուցվածքի խիստ զարգացմամբ: Առևտրաձեռնարկատիրական խավից, արհեստավորներից և բանվորներից զատ, հայերի շրջանում հաճախ կարելի էր հանդիպել հումանիտար և տեխնիկական մասնագիտության ներկայացուցիչների, տարբեր դերատեսչությունների մասնագետների, թարգմանիչների, բժիշկների, մանկաբարձների, իրավաբանների, ուսուցիչների, ինժեներների, պաշտամունքի սպասավորների, փոստ-հեռագրատան և մաքսային ծառայության աշխատողների, կադրային զինվորականների և այլ մասնագետների:

Տիրապետելով ռուսերեն, թուրքերեն, և պարսկերեն լեզուներին, իմանալով արևելյան ժողովուրդների կենցաղն ու բարքերը՝ հայերը ռուսական բանակին առընթեր ծառայում էին որպես թարգմանիչներ դեռևս Թուրքմենիայում ռազմական գործողությունների նախապատրաստման և անցկացման ժամանակաշրջանում: Այդ դերը նրանք շարունակում էին խաղալ նաև հաջորդ տասնամյակներին: «Ռազմաժողովրդական վարչության ծառայող պաշտոնյաներին առընթեր թարգմանիչները,— նշում էր ցարին հասցեագրված իր հաշվետվության մեջ Կուրոպատկինը,— առավելապես նույնպես հայերն են»:

Հայերի՝ ազգային ամենաազդեցիկ փոքրամասնություններից մեկի, կրթություն ստանալու և ռուսերեն լեզվին և վելիկոռուսական մշակույթին տիրապետելու հաստատակամ ձգտումը խորը ներգործություն էր ունենում քաղաքային մահմեդական բնակչության վրա, էապես արագացնում ռուսերենի՝ որպես միջէթնիկական հաղորդակցության միջոցի հաստատումը: Եվ երկրամասում ցարական վարչակարգի առավել հեռատես ներկայացուցիչները դա լավ էին հասկանում: «Հայերը միշտ էլ կուլտուրական ազգ են եղել, և ես հանապազ նրանց առանձնահատուկ հարգանքով եմ վերաբերվել՝ գնահատելով լուսավորությունը և իրենց կուլտուրական ունակությունները զարգացնելու նրանց ջերմեռանդ ձգտումը»,— ասել է մարզի պետ, գեներալ Ի. Դ. Սուվորովին Ասխաբադի բնակչության հետ հրապարակային հանդիպման ժամանակ:

Քաղաքային կյանքի արագ զարգացումն ուղեկցվում էր հասարակական միությունների և զանազան կոմիտեների, փոխադարձ վարկավորման առևտրին, արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը նպաստող ընկերությունների, բարեգործական, լուսավորական, սպառողական և այլ կազմակերպությունների, հիվանդանոցների ու բուժական կետերի, ուսումնարանների և գիմնազիաների, դրադարանների ու ընթերցարանների բացմամբ: 1889 թ. Ասխաբադում առավելապես ռուս և հայ ազգաբնակչության ջանքերով հիմնադրվեց Անդրկասպիայում առաջին քաղաքային միությունը: Միությունն իր անդամների և նրանց ընտանիքների համար կազմակերպում էր պարահանդեսներ և դիմակահանդեսներ, տարբեր բնույթի ներկայացումներ, մասնագետներ էր հրավիրում դասախոսություններ կարդալու համար: Այստեղ կարելի էր դիտել գրական-երաժշտական, վոկալ և դրամատիկ հայերեն ներկայացումներ: 20-րդ դ. սկզբին տեղի ոստիկանապետն ընդհանրապես այդ միությունը անվանել է «Հայկական»՝ նշելով, որ դրա անդամների մեծամասնությունը հայերն են կազմում: Անդրկասպիայում նշանավոր հայ վաճառականներ և արդյունաբերողներ, զինվորական աստիճանավորներ և մասնագետներ Մ. Ն. Ղուլիյանցը, Ն. Մ. Տեր-Մկրտիչևը, իշխանուհի Օ. Վ. Բեհբութովան, Վ. Ի. Ստեփանովը, Ն. Դ. Զարգարովը, Ն. Բ. Անտոնովը, Ա. Մ. Պետրոսյանցը, Ռ. Գ. Կաճկաճևը, Գ. Ս. Զերքեզովը, Տ. Ա. Հովսեփյանցը, Ն. Պ. Արզումանովը, Յու. Բ. Սարգիսբեկովը, Ա. Հակոբովը և ուրիշները մտնում էին ռուսական զինվորական վարչակարգի կողմից հիմնադրված արիստոկրատական ինքնապարփակ «Անդրկասպյան բարեգործական ընկերության» կազմի մեջ:

Հայերը նկատելի մասնակցություն էին ունենում այն ընկերությունների ստեղծմանը և դրանց գործունեությանը, որոնք իրենց առջև դնում էին կրթությունն ու լուսավորությունը զարգացնելու խնդիրներ: 1893 թ. Ասխաբադում «Երաժշտական ընկերության» հիմնադիրներից մեկն էր Մ. Նասիբյանցը: Հայտնի վաճառական Խ. Ա. Մնացականովը մտնում էր 90-ական թվականների վերջին տեղի նախագիմնազիային առընթեր ստեղծված «Ջքավոր սովորողներին օգնող ընկերության» վարչության մեջ: 1898 թ. Կրասնովոդսկում հիմնադրվեց «Երաժշտադրամատիկական ընկերություն», որի հիմնադրողների թվին էին պատկանում գնդապետ Տեր-Օսիպյանցը, Գ. Խաչատուրովը, Ի. Խաչատուրովը և այլք: 1909 թ. Կրասնովոդսկի բնակիչները՝ ռուսները, հայերը և պարսիկները դիմեցին մարզային վարչությանը՝ «Միջնակարգ

կրթություն տարածելու ընկերություն» հիմնադրելու թույլատրություն ստանալու խնդրանքով:

Հայերից առանձին անձինք նկատելի ջանքեր էին գործադրում ոչ միայն հայերեն և ռուսերեն լեզուներով, այլև այլ ժողովուրդների լեզուներով գրականություն ունեցող գրադարաններ, ընթերցարաններ, ակումբներ բացելու համար:

Հայերը հատկապես ակտիվ մասնակցություն էին ունենում առևտրական և առևտրաարդյունաբերական տարբեր բնույթի ընկերությունների հիմնադրմանը: 1896 թ. պետական բանկի Ասխաբադի բաժանմունքի ստեղծմամբ դրվեց կապիտալիստական վարկավորման սկիզբը. նրա հիմնումը նշանակալի չափով տեղի վաճառականության համառ խնդրանքների արդասիքն էր, որի շրջանում հայ վաճառականները թերևս ամենաազդեցիկն էին: Հայ վաճառականությունն առաջատար դեր խաղաց նաև Մերվում և Ասխաբադում «փոխադարձ վարկի ընկերություններ» հիմնադրելու մեջ: 1916 թ. մոտերքը այդ վարկաֆինանսական հաստատությունների անդամների մոտավորապես մեկ երրորդը հայեր էին: Թուրքեստանում հայտնի վաճառականներ և արդյունաբերողներ Ն. Մ. Տեր-Մկրտիչևը, Յու. Բ. Սարդիսբեկովը, Կ. Սաղաթելովը և ուրիշներ այդ ընկերությունների վարչությունների տնօրեններն էին:

1913 թ. Ասխաբադում հիմնադրվեց «Առևտրական կրթություն տարածող ընկերություն», որի ստեղծմանը մասնակցում էին տեղի զինվորական և քաղաքացիական վարչակարգի նշանավոր ներկայացուցիչներ, առավելապես ռուսներ և հայեր: 1915 թ. մոտերքը ընկերությունը ձեռք բերեց Ասխաբադում առևտրական ուսումնարան բացելու իրավունք: Նույն այդ տարում Կզըլ Արվատում հիմնադրվեց «Կրթության ընկերությունը», որի կազմի մեջ մտան հայազգի Ա. Ն. Զաքարովը, Ա. Ի. Ավետիսովը, Մ. Ի. Մեջլումովը, Ս. Կ. Մարտիրոսյանցը, Ս. Ի. Օսիպովը և այլք: 1917 թ. մարտին Կզըլ-Արվատի հայերը նվիրատվություններ արեցին տեղի երկսեռ նախագիմնազիայի շենք կառուցելու օգտին:

Հայ ձեռնարկատերերը, պլանտատորները և մասնագետները գործուն մասնակցություն էին ունենում գյուղատնտեսական ընկերությունների, օրինակ, Մերվի գավառում հիմնադրված «Գյուղատնտեսական առևտրի և արդյունաբերության ընկերություններ», «Թեջենի գյուղատնտեսական ընկերության» և այլ ընկերությունների ստեղծմանը: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին հայազգի բազում

վաճառականներ, արդյունաբերողներ և մասնագետներ Թուրքեստանի վարչակազմի կողմից ներգրավվել էին «ռազմաարդյունաբերական կոմիտեների» աշխատանքներում:

Թուրքեստանում տնտեսագիտության զարգացման մեջ էական ավանդ ներդրած հայերից հարկ է նշել նշանավոր գիտնական, Ֆինանսների մինիստրության կոլեգիայի անդամ, բազմաթիվ աշխատությունների, մասնավորապես, «Թուրքեստանի երկրամասի տնտեսական տեսություն» եռահատոր հիմնարար մենագրության (1913 թ.) հեղինակ Մ. Ի. Գուլիշամբարովին: Թուրքեստանի գյուղատնտեսության ուսումնասիրությամբ և հատկապես երկրամասի ոռոգման հետազոտություններով էր զբաղվում Ս. Ա. Մելիք-Սարգսյանը, որի գիտական եզրակացություններն ու գործնական հանձնարարությունները շարադրված են «Բամբակագործությունը Ֆերգանայի մարզում և այն կարգավորելու միջոցառումները» աշխատության մեջ (1904 թ.): Թուրքեստանում գյուղատնտեսական գիտության զարգացման մեջ նկատելի ավանդ էր Ա. Ի. Շահնազարովի «Գյուղատնտեսությունը Թուրքեստանի երկրամասում» (1908 թ.) աշխատությունը:

Հայ բնակչությունը նկատելի դեր էր կատարում Թուրքեստանում բժշկական հաստատություններ ստեղծելու և բժշկական գիտելիքներ պրոպագանդելու ասպարեզում: Տակավին 19-րդ դ. 60-ական թվականների սկզբին ռազմաբժշկական տեսչության կողմից Պետերբուրգից Թուրքեստան ուղարկված առաջին բժիշկներից մեկը Ա. Իշխանովն էր: Երկար տարիներ նա աշխատել է Սամարղանդում՝ որպես գավառային բժիշկ, իր անձնուրաց գործունեությամբ շահելով տեղի ուզբեկ և տաջիկ բնակչության խորին հարգանքն ու վստահությունը: Կիրառելով ղեղամիջոցներով բուժում, կատարելով խիստ բարդ վիրահատություններ՝ նա դրանով իսկ մեծապես նպաստեց բնիկ բնակչության շրջանում բուժօգնության տարածմանը: Խոլերայի և ժանտախտի համաճարակի դեմ պայքարելու համար 1899 թ. Միջին Ասիա գործուղվեց հանրահայտ վարակաբան, բժշկագիտության պրոֆեսոր Ա. Օ. Առուստամյանը: Ասխաբադում լայն ճանաչում էր վայելում բժիշկ Ա. Ա. Մնացականյանցը: Բժշկական ֆակուլտետը Գերմանիայում ավարտած Ն. Դ. Տրոզյանցը՝ Անդրկասպիայում հանրաճանաչ բժիշկը, վարակաբանը և մաշկավեներական հիվանդությունների մասնագետը, տակավին մինչև հեղափոխությունը Ասխարադի սանիտարական գլխավոր բժշկի պաշտոնն էր վարում, իսկ սովետական կարգեր հաստատելուց հետո գոր-

ծուն մասնակցություն էր ունենում խոլերայի, տիֆի, թանչի համաճարակների դեմ պայքար կազմակերպելու, Թուրքեստանի առողջապահական հիմնարկությունները վերականգնելու գործին:

Տնտեսական և աշխատանքային ակտիվ գործունեությունը, արտադրողական ուժերի զարգացման և Թուրքեստանի համար նոր, քաղաքակիրթ հասարակական հարաբերությունների ձևավորման մեջ ակնառու դերը դարձան հայ վերարնակիչների հոգևոր և մշակութային արագ զարգացման նյութական հիմքը: Ցավոք, հեղաշրջումը, քաղաքացիական պատերազմը և ամբողջատիրական ռեժիմի հետագա հաստատումը բացառեցին ազգային փոքրամասնությունների տնտեսական և մշակութային ազատ նախաձեռնության որևէ հնարավորություն՝ սկիզբ դնելով Միջին Ասիայի հայ համայնքների ազգային կյանքի վերացման և աստիճանական մարման պրոցեսին: Դաժան ռեպրեսիաները, քաղաքացիների խոշոր, միջին և նույնիսկ փոքր անձնական սեփականության բռնագրավումները՝ դիկտատուրայի նկատմամբ ցուցաբերած անլոյալության, ազգային ինքնագիտակցության նվազագույն դրսևորման համար բոլշևիկյան հեղաշրջման և քաղաքացիական պատերազմի բոցերից փրկված տեղի հայ բուրժուազիայի ներկայացուցիչներին ստիպեցին հեռանալ Թուրքեստանից՝ Ռուսաստան, Այսրկովկաս, Իրան և այլուր: Նրանց պատկանած սեփականությունը կամ բռնազավթվեց, կամ էլ կողոպուտի ենթարկվեց: Արդյունքը եղավ այն, որ վերացավ Միջին Ասիայի հայ ազգաբնակչության՝ տնտեսական և մշակութային առումով առավել ազդեցիկ սոցիալական շերտը:

* * *

Հայ ժողովրդի ողբերգական վիճակը Օսմանյան կայսրությունում, մշտական ընդհարումները Թուրք-թաթարների հետ Այսրկովկասում, հայկական եկեղեցիների և դպրոցների նկատմամբ հալածանքները գործնականում հանդեցրին հայ ազգաբնակչության բոլոր խավերի քաղաքականացմանը: Թուրքեստանի երկրամասի հայերը բացառություն չէին կազմում: Արդեն 1895 թ., «Հայ ազգային շարժման հետ» կապերի մեջ կասկածելով, ցարական պահնորդական բաժինը լրտեսություն էր սահմանել պարբերաբար մարզ այցելող Կ. Խատիսյանի նկատմամբ: Այդ նույն տարում Մերվում, Մկրտիչևի և Բոգատուրովի խանությում հայտնաբերվեցին դրաքննության կողմից արգելված «ստրկացված Հայաստանի» պատկերները և «Մշակ» թերթի մի օրինակ՝ հայ թագավոր-

ների դիմանկարներով և Արևմտյան Հայաստանի բնատեսարաններով հանդերձ: Ինչպես պարզեց պահնորդական բաժինը, Բաքվից Մերվ ժամանած Բոգատուրովն էլ ավելի վաղ էր պատասխանատվության ենթարկվել «հայ հեղափոխական գաղտնի ընկերության» գործով: 1898 թ. հայրենասիրաբար տրամադրված հայ արհեստագործներն ու առևտրականները Կզըլ-Արվատում հատուկ խանութ էին բացել, որից ստացված եկամուտը նախատեսվում էր Թուրքիայում հայերի վինված ազգային-ազատագրական պայքարին օգնելու համար:

20-րդ դարի սկզբին Անդրկասպիայում տեղի են ունենում բանվորների և դեխկանների մի շարք ելույթներ: Դեխկանական ելույթներից առավել խոշորը Սերախսի պրիստավությունում տեղի ունեցած ընդվզումն էր, որը ծագեց տեղի իշխանության և բայերի կողմից դեխկանության հողաջրային իրավունքները սահմանափակելու պատճառով: Այդ ընդվզման մեջ ակնառու դեր է խաղացել հայազգի Բոգդան Կոստանտովը, որին պահնորդական բաժնի փաստաթղթերում «ապստամբության ղեկավար» են անվանում:

Անդրկասպիայում հեղափոխական առաջին կազմակերպությունները հանդես եկան 1905–1907 թթ. հեղափոխության նախօրյակին: Հեղափոխականների՝ Ասխաբադի խումբը կազմավորվեց այն խմբակների հիման վրա, որոնք միավորվեցին 1904 թ. աշնանը Շուշիից արտաքսված՝ տեղի գիմնազիայի ուսուցիչ, լեհազգի Լյուդովիգ Ստաբրովսկու ղեկավարությամբ: Սերտ կապի մեջ մտնելով տեղի հայ և հրեա ուսանող երիտասարդության հետ՝ Ստաբրովսկին 1904 թ. վերջերին կազմակերպեց հեղափոխական բովանդակության պրոկլամացիաների և թռուցիկների հրատարակումը: Հետագայում, Ստաբրովսկու, Խաչիյանցի և այլոց գործով դատի ժամանակ, վկաներից մեկը ցուցմունք տվեց, որ «Լ. Ստաբրովսկին, իր պաշտոնակից անձանց չծանոթանալով, ծանոթություն էր հաստատում բացառապես միայն հայերի հետ»: Սկզբնապես խումբն էսէռական կողմնորոշում ուներ. Ասխաբադում տարածված թռուցիկները և պրոկլամացիաները կրում էին «Սոցիալիստ-հեղափոխականների Ասխաբադի կոմիտե» ստորագրությունը: Բայց արդեն 1904 թ. նոյեմբերին, բաքվեցի բոլշևիկ Արշակ Խաչիյանցի գալուց հետո խմբում սոցիալ-դեմոկրատական մտայնությունը գերիշխող է դառնում: Ստաբրովսկու-Խաչիյանցի խմբի կողմից 1905 թ. հունվարին տարածված «ՌՍԴԲԿ ծրագիրը» կրում էր սոցիալ-դեմոկրատների կուսակցության ստորագրությունը.

Հեղափոխության սկզբից ևեթ լայնորեն տարածվում է հեղափոխական գրականությունն՝ ռուսերեն և հայերեն լեզուներով: Այսպես, արդեն 1904 թ. սեպտեմբերին «Հայ հասարակությանը» և «Ասխաբադի բնակիչներին» պրոկլամացիաները տպագրվել էին ռուսերեն և հայերեն: Ընդսմին, ինչպես պարզվել էր հետաքննությունը, այդ պրոկլամացիաների բնօրինակները գրված են եղել մաքուր հայերեն գրական լեզվով և արդեն հետո թարգմանվել ռուսերեն: 1905 թ. մայիսին Զարջոուում պահնորդական բաժինը հայտնաբերել էր զինվորներին ուղղված 200-ից ավելի պրոկլամացիաներ և կոչեր, որոնք տպագրվել էին ռուսերեն և հայերեն: Ասխաբադում Մեկիև եղբայրների և Հայրապետյանցի ձերբակալման ժամանակ բռնագրավվել էին 1132 օրինակ հակակառավարական բովանդակության պրոկլամացիաներ, թռուցիկներ և բրոշյուրներ՝ հայերեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով: Կուշկայում Կ. Մ. Ավանեսովի մոտ հայտնաբերվել էին «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության օրգան «Դրոշակի» համարները:

1905 թ. հուլիսի 4-ին Ասխաբադի բանտում մահացած Լ. Ստարբովսկու հուղարկավորությունը վերածվեց Միջին Ասիայում առաջին քաղաքական ցույցի: Ստարբովսկու այրու համաձայնությամբ, թաղումը կատարվեց հայ եկեղեցու ծեսերով: Մասնակցում էին բազում հայ երիտասարդներ և մոտ 500 մեծահասակ հայեր՝ իրենց ընտանիքներով հանդերձ: Թաղման թափորի ընթացքի ժամանակ հնչում էին հեղափոխական երգեր՝ ռուսերեն ու հայերեն լեզուներով: Հայկական բոլոր առևտրական և մյուս հաստատություններն ի նշան սգո փակվել էին: Ցույցին մասնակցում էին նաև «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչները: Նրանք հանդես էին գալիս առանձին խմբով, և գրեթե բոլորը զինված էին: Ցարական իշխանությունները չհամարձակվեցին ցրել ցույցը, որը Թուրքեստանի գեներալ-նահանգապետ Տևյուշևն անվանեց «ռուսական իշխանության բացահայտ և անպատիժ անարգում»:

Բավական ստվար թվով հայեր ընդգրկվել էին էսէռների կուսակցության տեղական կազմակերպությունների շարքերում: Էսէռների կուսակցության Ասխաբադի կոմիտեի ղեկավար Աբրահամ Իշխանովը 1908 թ. վերջին, երբ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները թուլացել էին առավել ակտիվ հեղափոխականների ձերբակալությունների հետևանքով, Ասխաբադի կայազորի զորքերի շրջանում ստեղծում է մարտական և համախմբված կազմակերպություն՝ ԱՌՀԿ (Ասխաբադի

ռազմահեղափոխական կազմակերպություն): 1908–1909 թթ. ահաբեկչության և էքսպրոպրիացիայի հանդուգն գործողությունների մեծ մասը կատարվում էր այդ կազմակերպության անդամների անմիջական մասնակցությամբ: 1909 թ. ԱՌՀԿ ջախջախման ժամանակ կալանավորեցին մոտ 200 մարդ՝ հայերից, ռուսներից, հրեաներից:

Թուրքեստանում, և հատկապես Անդրկասպիայում, ակտիվորեն էին գործում հայ ազգային կուսակցությունները: Հաշվի առնելով Թուրքեստանում հայկական ազդեցիկ համայնքների առկայությունը՝ Այսրկովկասից դատարանի որոշմամբ արտաքսման ենթակա հայ հեղափոխականները հաճախ դիտավորյալ Թուրքեստանն էին ընտրում որպես իրենց ապագա աքսորավայր: Պահնորդական բաժնի հետապնդումներից Անդրկասպիայում և Թուրքեստանում էին թաքնվում «Դաշնակցություն» և «Հնչակ» հայկական կուսակցությունների շատ և շատ անդամներ: Պահնորդական բաժանմունքի փաստաթղթերում Թուրքեստանում բնակվող առանձին հայերի՝ «Դաշնակցությանը» պատկանելու իրողությունը նշված է արդեն 20-րդ դարի սկզբին: Այսպես, տակավին 1901 թ. Ցերգանայի գենարալ-նահանգապետի կարգադրությամբ այդ կուսակցության անդամ լինելու պատճառով երկրամասից արտաքսվեց Պավել Ստեփանյանցը: Ելիզավետպոլի նահանգապետի հաղորդման համաձայն, «Դաշնակցություն» կուսակցության անդամներ Պ. Բաղդասարովը և Կ. Մարդիևը, որոնք դատապարտվել էին 5 տարի ժամկետով Այսկովկասից արտաքսման, գյուղացիներին իշխանություններին չենթարկվելու սադրանքի և իրենց կուսակցության օգտին հանդգնություններ կատարելու համար, իրենց աքսորավայր ընտրեցին Կրասնովոդսկ քաղաքը:

Դաշնակցականների գործունեության առավել խոշոր կենտրոն էր Ասխաբադը: Ասխաբադի հետախուզական կետի գործակալական հաղորդումների տվյալների համաձայն, 1905 թ. այստեղ գոյություն է ունեցել «Դաշնակցություն» կուսակցության ուժեղ կազմակերպություն: Կուսակցության տեղական կոմիտեն գլխավորում էին Անդրկասպիայում նշանավոր վաճառականներ Ա. Գ. Տերյանցը, Յա. Գայամովը և Բ. Աթայանցը: Կուսակցական գործերով, ինչպես նաև պահնորդական բաժնից թաքնվելու համար Կովկասից Ասխաբադ էին մեկնում «Դաշնակցության» ականավոր շատ գործիչներ: Այստեղ նրանց օգնում էին թաքնվել հետապնդումներից, անցնել Պարսկաստան՝ զենք և փամփուշտներ ձեռք բերելու համար: «Ասխաբադի կազմակերպությանը,—

նշվում է մի հաղորդագրության մեջ,— այդ ժամանակ պատկանում էին տեղի գրեթե բոլոր հայերը, իսկ երիտասարդությունը՝ գլխովին: Կազկարեպության անդամները հիանալի զինված և բաժանված էին խմբերի՝ Ասխաբադում հայ-թաթարական ակնկալվող կոտորածների պատճառով: Բազում հայեր արտահագուստի վրա կրում էին կրծքանշաններ՝ հայերեն «Դրոշակ» գրությամբ: Առանձին խմբեր քանիցս այդ կրծքանշաններով հանդերձ լուսանկարվել են տեղի լուսանկարչատներում, և նկարվածների պատկերները շատ տներում կային»:

1905 թ. Ասխաբադ է այցելում «Դաշնակցության» ականավոր գործիչներից մեկը՝ Համազասպ Սրվանձտրյանը՝ 20 հոգուց բաղկացած ֆիդայիների խմբով հանդերձ: Համազասպի պահանջով կազմվում է հարուստ հայերի ցուցակը, որոնք «մահվան սպառնալիքով» պիտի մուծեին ցուցակում նշված գումարը: Անհրաժեշտ գումարը գանձելով՝ Համազասպ Սրվանձտրյանը «հայերին ժողովեց հայկական եկեղեցու բակը և հակիրճ խոսքով ներողություն խնդրեց ռուսությամբ վերցված դրամի համար՝ հայտարարելով, որ հարկադրված էր այդ անել, քանզի այն կատարվում էր կուսակցության հրամանով»: Այնուհետև նա իր մարտիկների հետ նույն նպատակով այցելեց Մերվ, Սամարղանդ և Տաշքենդ: Շրջագայելով Թուրքեստանի երկրամասում՝ նա վերադարձավ Բաքու, սակայն նրա խմբի մի մասը մնաց Անդրկասպիայում[1]:

Ազգային հայրենասիրական գործունեությունը կոորդինացնելու նպատակով հաճախ Անդրկասպյան երկրամաս և Թուրքեստան էին այցելում «Հայ մշակութային միության» լիազոր Կ. Խատիսովը, Ալեքսանդրապոլի առաջնորդական տեղապահ վարդապետ Մաթևոսը և «Դաշնակցության» հետ սերտորեն կապված ազգային հայրենասեր այլ գործիչներ: Հայ հոգևորականության և վաճառականության, Այսրկովկասի հեղափոխական կազմակերպությունների հետ սերտորեն կապված, լավ կոնսպիրացված «Դաշնակցություն» կուսակցության տեղի մասնաճյուղերն այստեղ ռեակցիայի տարիներին զգալիորեն ավելի քիչ կորուստներ կրեցին, քան սոցիալ-դեմոկրատները և էսէռները: Ընդսմին նվազ նշանակություն չունեցավ նաև այն պարադան, որ դաշնակցականները գործում էին բացառապես ազգային միջավայրում[2]:

---

1 Центральный государственный архив Узбекистана (ЦГАУ), ф. 461, оп. 1, д. 1158, л. 222.

2 ЦГАТ, ф. И—1, оп. 2, д. 16026, л. 11—12.

Անդրկասպիայում գործուն աշխատանք էին կատարում «Հնչակ» կուսակցության անդամները: Այդ կուսակցության տեղական բաժանմունքի անդամներ Ե. Գ. Եղիազարովի, Տ. Ստեփանյանցի և այլոց վկայությամբ, արդեն 1905 թ. Ստաբրովսկու և Խաչիյանցի հետ միասին հեղափոխական աշխատանքին մասնակցում էին հնչակյաններ Կարապետ Սաֆարյանցը և Ահարոն Ահարոնյանը: ՌՍԴԲԿ Ասխաբադի կազմակերպությունը նրանք հիշատակում են որպես հեղափոխականների մի խումբ, որը միավորել էր սոցիալ-դեմոկրատներին և հնչակյաններին 1905–1907 թթ. հեղափոխության շրջանում: Անդրկասպիայում «Հնչակ» կուսակցության ակտիվ անդամ Ռ. Ա. Գաբրիելյանցը, լինելով Պարսկաստանի փոստ-հեռագրային բաժանմունքի պետ, Պարսկաստանից կապ էր հաստատել արտասահմանի հայ հեղափոխականների հետ, Պարսկաստանի վրայով ստանում էր հայ հեղափոխական լրագրեր և պրոպագանդ էր տանում «հայ վտարանդիների» շրջանում: 1905 թ. նա եռանդուն սատարեց գործադուլային շարժմանը՝ արգելելով Պարսկաստանից իշխանություններին հասցեագրված, այդ թվում նաև դիվանագիտական տեղեկատվության հանձնումը:

1906–1909 թթ. հնչակյանների ասխաբադյան կազմակերպության ղեկավարությունը Բաքվից իրականացնում էր այդ կուսակցության կենտկոմի անդամ, հայտնի հեղափոխական Փարամազը, որը 1903 թ. կազմակերպել էր մահափորձ իշխան Գ. Գոլիցինի դեմ, և որին հետագայում (1915) թուրքական իշխանությունները Կոստանդնուպոլսում մահապատժի ենթարկեցին: 1908 թ. ամռան մոտերքը, երբ ՌՍԴԲԿ-ի թուրքմենական համարյա բոլոր կազմակերպությունները ջախջախվել էին, Ասխաբադի կազմակերպությունը շարունակում էր հեղափոխական գործունեությունը: Հնչակյանների աշխատանքն աշխուժացավ կազմակերպության որոշ անդամների բանտից ազատվելուց և փախուստներից հետո: 1908 թ. Ասխարադում գործում էին հնչակյաններ Ենոք Վարդանյանը, Ղուկաս Խաչատուրյանը, Գաբրիել Մելքումյանը և այլք: 1909 թ. Բաքվից Ասխաբադ ուղարկվեց «Հնչակ» կուսակցության հատուկ լիազոր Կարապետ Սաֆարյանցը, որն Անդրկասպիայում հեղափոխական ակտիվ պրոպագանդ էր վարում. նա կազմակերպեց «Երիտասարդ խումբ» մասնաճյուղը, տեղի հնչակյաններին զենք և զինամթերք էր մատակարարում: Բաքվի կազմակերպության հետ կապը պահպանվում էր Փարազի եղբոր Սարգսի միջոցով: Խիստ կոնսպիրացիայի պահպանմամբ այդօրինակ աշխատանքը տարվում էր մինչև 1910 թ.

վերջը, երբ Կ. Սաֆարյանցին պահնորդական բաժինը ձերբակալեց, իսկ այնուհետև աքսորեց Սիբիր, որտեղ 1916 թ. նա մահացավ: Նրա կալանավորումից հետո հնչակյանների կուսակցության տեղի մասնաճյուղի շատ անդամներ անվտանգության նկատառումներով հարկադրված եղան լքել մարզը, սակայն արդեն 1910 թ. վերջին Բաքվից Ասխաբադ է ժամանում հնչակյանների ՍԴԲԿ Բաքվի կազմակերպության անդամ Եղիշե Եղիազարովը, որը Կ. Սաֆարյանցի ընտանիքի միջոցով կապ է հաստատում տեղի հնչակյանների խմբի, ինչպես նաև «արմատական հնչակյան» Սերգեյ Սահրադյանի միջոցով՝ բոլշևիկների հետ:

Տեղի հնչակյանների հետ ջանքերը միավորելու փորձեր էին նկատվում նաև բոլշևիկների կողմից: 1911 թ. Վ. Վախնինը և Գ. Հայկունին ստեղծեցին անլեգալ խումբ, որի կազմի մեջ մտան տեղի էսէռները և հնչակյանները: Ժողովներում քննարկվում էին դաշնակցականների հետ համատեղ աշխատանքի, կուսակցական կարիքների համար գրամ հայթայթելու հարցեր: «Նոր դաշնակցության» ներկայացուցիչ Բալասանյանցի խոսքերի համաձայն, «ռուս հեղափոխականները խնդրում են հայերին միավորվել հանուն կուսակցական նպատակների»: Այդ ժամանակ նորից Ասխաբադ ժամանեց «Շուշիի հին պրոպագանդիստներից մեկը»՝ Ա. Մ. Ահարոնյանը, որը տակավին 1905 թ. հնչակյաններից անցել էր բոլշևիկների կողմը: 1909 թ. նրան Բաքվում ձերբակալել էր պահնորդական բաժինը: Արտաքսվել էր Բուխարա, որտեղից փախել էր Պարսկաստան: Նրա անմիջական մասնակցությամբ բոլշևիկների տեղական խումբը՝ հանձինս Ժիտնիկովի, Իվանովի, Ստեփանյանցի, Պրուշչակի և այլոց, միավորվում է հնչակյանների հետ: 1914 թ. Ահարոնյանը կապ է հաստատում Բաքվի բոլշևիկների հետ և ապահովում հեղափոխական անհրաժեշտ գրականության առաքումը մարզ: 1914 թ. վերջին, հաշվի առնելով տեղի հնչակյանների կտրվածությունն իրենց կենտրոնից, ինչպես նաև նկատի առնելով այն, որ «երկու ֆրակցիաների ծրագիրը միանման է», բոլշևիկների և հնչակյանների ղեկավարների միացյալ նիստում որոշում ընդունվեց՝ «Հնչակյանների ասխաբադյան ՍԴԲԿ կազմակերպությունը համարել բոլշևիկների ՌՍԴԲԿ հայկական սեկցիա»: Միավորված կազմակերպության ղեկավարությունը հանձնարարվեց Ժիտնիկովին և Ահարոնյանին:

Հայ հեղափոխականները նկատելի մասնակցություն են ունեցել նաև Իրանում ռուսական առաջին հեղափոխության ազդեցությամբ ծավալված հակաշահական շարժմանը: 1908 թ. Ասխաբադում պարսիկներից,

հայերից և թուրքմեններից կազմակերպվեց մի ջոկատ, որը շուտով սահմանն անցավ և Խորասանում ապստամբություն բարձրացրեց շահի իշխանության դեմ: Ասխաբադցի Էմիր Արամյանը դարձավ ապստամբության ղեկավարի՝ լիբերալ կալվածատեր Աղա-Մահմեդ Հուսեյինովի օգնականը: «Դաշնակցություն» կուսակցության Ասխաբադի կոմիտեի անդամներն անմիջական կապեր ունեին Իրանի հայ հեղափոխականների հետ, վերջիններիս ղենք էին մատակարարում: Այսպես, պահնորդական բաժնի տեղեկությունների համաձայն, զգալի քանակությամբ զենք էր փոխադրվել Իրան Ասխաբադի դաշնակցականների ղեկավարներից մեկի՝ Հակոբ Դայումովի միջոցով, որը «հանդիսանում էր դանձապահ և զենքի ու փամփուշտների պահպանող»: 1909 թ. սեպտեմբերին Միջինասիական երկաթուղու ժանդարմների պետ, գնդապետ Մաքսիմովը հայազգի Դ. Բաբաևին և Ի. Բալաևին կալանավորելու վերաբերյալ որոշման մեջ, որոնք մարզից զենք դուրս տանելու փորձ կատարելիս ձերբակալվել էին, նշում էր, որ վերջիններս պատկանում են «այն շատ մաքսանենգների թվին, որոնք Պարսկաստանում խռովարարներին ուժեղացնելու և հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության հանցավոր նպատակների համար զբաղվում են զենքի ու փամփուշտների առաքմամբ և իրացմամբ»[1]:

Հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գործունեության ակտիվացում է նկատվում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին: Հասկանալով հայ թուրքական հակամարտության նշանակությունը վերահաս պատերազմում՝ ինքնակալությունն ավելի հանդուրժող դարձավ հայ ժողովրդի ազգային հայրենասիրական շարժման նկատմամբ, և այդ չէր կարող չանդրադառնել «Դաշնակցության» վիճակի և նրա գործունեության հնարավորությունների վրա:

1910–1914 թթ. նախկինի պես Թուրքեստանում «Դաշնակցության» գործունեության գլխավոր կենտրոնը դարձյալ Ասխաբադն էր, սակայն նկատելիորեն աշխուժացել էր կուսակցության գործունեությունը նաև երկրամասի այլ քաղաքներում՝ Տաշքենդում, Սամարղանդում, Կոկանդում, Անդիջանում: Ասխաբադի կոմիտեի գործողությունները կոորդինացվում էին Բաքվի և Թիֆլիսի դաշնակցական կենտրոնների կողմից: 1911 թ. հուլիսին Ասխաբադ ժամանեց «Դաշնակցության» կենտրոնական (Բաքվի) կոմիտեի անդամ, այդ կուսակցության կովկասյան կազ-

1 ЦГАУ, ф. 1, оп. 31, д. 617, л. 12–13.

մակերպության շրջիկ գործիչ «Սեդրակը» (Լևոն Նարինյանցը), որն «Ասխաբադի խմբապետների ժողովում» հայտնեց, որ «Կովկասում, չնչին բացառությամբ, հնչակյանները միացել են դաշնակցականներին», և խորհուրդ էր տալիս մեծ ուշադրություն նվիրել կուսակցական նոր խմբեր կազմակերպելուն: 1911 թ. հոկտեմբերին «Սեդրակը» կուսակցական գործերով նորից այցելեց Ասխաբադ և Տաշքենդ: 1911 թ. դեկտեմբերին Թուրքեստան եկավ «Դաշնակցության ականավոր գործիչ Բեկ-Թարխանովը՝ միջոցների հանգանակություն կազմակերպելու նպատակով այն անձանց օգտին, որոնք Կովկասում «Դաշնակցություն» կուսակցության գործով կալանավորվել են և որոնց դատավարությունը պիտի տեղի ունենար Պետերբուրգում: Դեկտեմբերի 15-ին կուսակցության Ասխաբադի կոմիտեի անդամների ժողովում որոշվեց դրամի հանգանակություն անցկացնել: Դումարն այնուհետև Արտեմ Բալասանյանցը հանձնեց Բեկ-Թարխանովին: Նշված նպատակով Բեկ-Թարխանովը եղավ նաև Տաշքենդում, Սամարղանդում, Կոկանդում և Անդիջանում: 1912 թ. սեպտեմբերին Ասխաբադի հետախուզական կետի պետը հաղորդում էր Թուրքեստանի շրջանային պահնորդական բաժանմունք, որ Ասխաբադում տեղի է ունեցել կուսակցության «կազմակերպության պարագլուխների» երեք ժողով, որտեղ «Թուրքահայերի օգտին և նրանց համար զենք գնելու համար դրամական մուծումներ են արվել»: Մի այլ հաղորդագրության մեջ խոսվում էր դրամի ստացման մասին, որը դաշնակցականները հանգանակել էին Ֆերգանայում, Անդիջանում, նշվում էր, որ «հավաքված ամբողջ փողը Կաղզվանի վրայով էրզրում է ուղարկվում՝ Թուրքահայերին օգնություն ցույց տալու և զենք գնելու համար, զենք, որը մեծ մասամբ ներկայումս հայթայթվում է Կարսի մարզում, որ Արտեմ Բալասանյանցն արդեն չորրորդ ամիսն է, ինչ գտնվում է Ֆերգանայի մարզում, որտեղ զբաղվում է «կուսակցության համար անդամներ հավաքագրելով Անդիջան, Կոկանդ և Սկոբելև քաղաքներում»:

Թուրքիայի դեմ սկսած պատերազմը կտրուկ ակտիվացրեց հայերի ազգային հայրենասիրական շարժումը նաև Թուրքեստանի երկրամասում: Ծավալվող պատերազմական իրադարձությունների նկատմամբ տեղի հայության արձագանքն եղան հայ երիտասարդության մարտական ջոկատների կազմակերպումը, ռազմաճակատ մեկնած կամավորների ընտանիքների և Թուրքիայից հայ փախստականների օգտին միջոցների հանգանակումը: Ազգային հայրենասիրական միջոցառումներին

գործուն մասնակցություն էին ունենում հոգևորականությունը, մտավորականության ներկայացուցիչները և վաճառականությունը, «Դաշնակցություն» կուսակցության տեղական կազմակերպությունների անդամները: Հայրենասիրական տրամադրությունների կտրուկ վերելքը, որ պատերազմի հենց սկզբից գործնականում ընդգրկել էր հայ հասարակության բոլոր խավերը, էականորեն ուժեղացրեց այդ կուսակցության դիրքերը և միաժամանակ սրեց նրա փոխհարաբերությունները տեղի հնչակյանների հետ, որոնք արդեն այդ ժամանակ գործում էին բոլշևիկների հետ համատեղ:

Դաշնակցականների և հնչակյանների միջև տարաձայնությունները պատերազմի հարցի շուրջ կրում էին սուր և սկզբունքային բնույթ: Պատերազմ հայտարարելուց հետո Ասխաբադի հայկական եկեղեցու բակում դաշնակցականների նախաձեռնությամբ տեղի ունեցավ համահայկական միտինգ: «Դաշնակցականները,– վերհիշում էին «Հնչակ» կուսակցության անդամները,– հրահանգներ ստացան Բաքվից և Թիֆլիսից և իրենց շարքերի մոբիլիզացիա հայտարարեցին փոքրից մինչև մեծ, կազմակերպելով կամավորական ջոկատներ և վաշտեր, մտադրվելով դրանց Կովկասյան ճակատ ուղարկել»: Դաշնակցության անդրկասպյան կազմակերպության առավել ակտիվ անդամներից այդ ժամանակաշրջանում աչքի էին ընկնում մարզային կուսակցական կազմակերպության ղեկավար, ասխաբադցի նշանավոր վաճառական Բախշի Աթայանցը, քահանաներ Խաչատուր Փանիյանցը և Շմավոն Աղբալյանցը, ցարական բանակի սպա Բ. Սեյրանյանցը, դաշնակցական մարտական ջոկատի հրամանատար Իսկանդարյանը, Յա. Գայամովը, Մ. Գրիգորյանցը և մյուսները:

Մինչդեռ բոլշևիկները և հնչակյանները միավորիչ նիստում հատուկ որոշում էին ընդունել համահայկական միտինգում հակապատերազմական ագիտացիայով հանդես գալ: Ահարոնովի, Ժիտնիկովի, Հարությունյանցի, Եղիազարովի ելույթներից հետո, վերհիշում է այդ իրադարձությունների մասնակից Խաչատուր Բալասանյանցը, դաշնակցականները Բախշի Աթայանցի, քահանա Փանիյանցի և բժիշկ Մալխասյանի գլխավորությամբ «հարձակվեցին մեր ընկերների, գլխավորապես Ահարոնովի վրա, և արյունլվիկ ծեծեցին նրանց հայտարարելով, որ նրանք նեռ են, որ նրանք ծախել են իրենց ազգը և չեն ցանկանում հայերի ազատագրվելը»: Նմանօրինակ ընդհարումներ դաշնակցականների և հնչակյանների միջև տեղի էին ունենում մշտապես, քանի որ բոլշևիկ-

ները և հնչակյանները շարունակում էին «ագիտացիայի և պրոպագանդայի բոլոր միջոցներով պայքարել կամավորական շարժման դեմ»[1]:

1914–1915 թթ. տեղի բոլշևիկների և հնչակյանների հակապատերազմական քարոզչությունը հայկական միջավայրում մեծ մասամբ խիստ բացասական վերաբերմունքի էր արժանանում:

Պատերազմի տարիներին Անդրկասպիայում և Թուրքեստանում հանդես եկավ հայ միլիոնատերերի, վաճառականների և ձեռնարկատերերի մի ամբողջ խավ, որը վիթխարի հարստություն կուտակեց՝ զորքերին մատակարարումներ, բամբակի վաճառք, պարենի մեծածախ առևտուր անելով և այլ ձեռներեցությամբ: Այդ նույն ժամանակ հայ բնակչության զգալի մասը տառացիորեն հազիվ էր ծայրը ծայրին հացնում: 1915 թ. վերջին հնչակյանների կուսակցությունն Անդրկասպիայում խիստ ամրապնդվեց, գլխավորապես ի հաշիվ բանվորների և արհեստավորների: Միայն հնչակյանների՝ Ասխաբադի կազմակերպությունը 100 անդամից ավելին ուներ, պահում էր ինքնապաշտպանության նպատակներով ստեղծված հատուկ ջոկատ: Ֆերգանայում և Կոկանդում հնչակյանների աշխատանքը ղեկավարում էր «Կարսի մարզի Կաղզվանի գավառի հնչակյանների ՍԴԲԿ գավառային կոմիտեի նախկին անդամ» Սերգեյ Սահրադյանը, Զարջոուում՝ Արշակ Մալոյանը, Սամարղանդում՝ հնչակյանների ՍԴԲԿ Շուշիի կազմակերպության նախկին նախագահ Համբարձում Բեջանյանը, Մերվում՝ Սարո Մանուկյանը: «Արմատական հնչակյան» Սերգեյ Սահրադյանի կազմած փաստաթղթում «Հնչակ» կուսակցության հիմնական նպատակները սահմանվում էին հետևյալ կերպ. «1) Բոլոր գաղութային և կիսագաղութային երկրների ինտերնացիոնալ միավորում, 2) պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար բանվորների և գյուղացիների ապստամբության նախապատրաստում, 3) պայքար հայ դաշնակցականների դեմ, 4) պայքար կրոնի դեմ մինչև նրա լրիվ ոչնչացումը»[2]:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից ևեթ «Դաշնակցություն» կուսակցության և հայ հոգևորականության դեմ պայքարը դարձավ տեղի բոլշևիկների հետ միավորված Թուրքեստանի հնչակյանների գլխավոր խնդիրներից մեկը: Ռուսական ինքնակալության տապալման ժամանակներում «Հնչակ» կուսակցության անդամնե-

1 ЦГАТ. ф. Р—520, оп. 1, д. 1, л. 42—44.
2 ЦГАТ. ф. Р—520, оп. 1, д. 1, л. 11—12, 45—46.

րի և «Դաշնակցության» միջև Թուրքիստանում փոխհարաբերություններն աչքի էին ընկնում բացահայտ թշնամանքով և առճակատմամբ: Այնուամենայնիվ, տակտիկական նկատառումները և ինքնակալության դեմ ընդհանուր պայքարը հարկադրում էին քաղաքական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներին համագործակցել նաև 1917 թ. փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում: Հայ հեղափոխականները՝ «Հնչակ» և «Դաշնակցություն» կուսակցությունների անդամները, ՌՍԴԲԿ-ն և էսէռները, չնայած ներքին տարաձայնություններին, ակտիվորեն մասնացում էին դեպուտատների խորհուրդներ և հեղկոմներ ստեղծելուն, իրենց կուսակցությունների կողմից ընտրում էին քաղաքային դումաների դեպուտատներ (պատգամավորներ), մտնում էին պարենային և այլ կոմիտեների կազմի, իսկ 1917 թ. հոկտեմբերից հետո՝ խորհրդային իշխանության մարմինների մեջ: Այդ նույն ժամանակ Թուրքիստանում հայ բուրժուազիայի և մտավորականության կառավարամետ տրամադրված մասը, դաշինքի մեջ մտնելով օկայաբրիստների և կադետների հետ, միապետությունը տապալելուց հետո նորընտիր քաղաքային դումաներում և ժամանակավոր կառավարության իշխանության մարմիններում բավականին ազդեցիկ ուժ էր ներկայացնում, բացահայտ հանդես էր գալիս ձախ արմատական հոսանքների, այդ թվում նաև հայ հեղափոխական կազմակերպությունների դեմ:

Հեղափոխության և քաղաքացիական պատերազմի տարիներին Թուրքեստանի հայ ազգաբնակչության տարբեր խավեր ներքաշվեցին դասակարգային դաժան պայքարի մեջ՝ հանդես գալով ինչպես խորհրդային իշխանության կողմ, այնպես էլ դրա դեմ: Արդեն 1917 թ. վերջին այստեղ «Թուրքեստանի և Անդրկասպիայի հայկական կենտրոնական խորհրդի» գլխավորությամբ ձևավորվեցին հայկական մարտական ջոկատներ, որոնք գործուն մասնակցություն էին ունենում թուրքական զորքերի դեմ Կովկասյան ճակատում, իսկ այն վերացնելուց հետո՝ Այսրկովկասում թուրքերի և մուսավաթականների դեմ մղված մարտերում: Հայկական այդ զորական կազմավորումները, որ ստեղծվել էին Թուրքեստանյան հանրապետության արտակարգ կոմիսարներ Կոբուլևի և Կոյեսովի համաձայնությամբ, գտնվում էին առավելապես «Դաշնակցություն» կուսակցության ազդեցության ներքո: Զգալի և լավ զորահավաքի ենթարկված ռազմական ուժ լինելով՝ դրանք կարևոր դեր էին խաղում նաև բուն Թուրքեստանում քաղաքական իրադրության զար-

դացման մեջ: Բոլշևիկների՝ դաշնակցականների հետ ունեցած դաշինքի ժամանակաշրջանում (1917 հոկտեմբեր – 1918 հուլիս) այդ ջոկատները բավականին ավանդ ներդրեցին խորհրդային իշխանության հաստատման և այն պաշտպանելու գործում: Սակայն հայկական առանձին ջոկատները կազմալուծելու և նրանց ձևավորվող Կարմիր բանակի զորամասերի կազմի մեջ մտցնելու մասին մարզային իշխանության որոշումից հետո հայկական մարտական ջոկատների մի մասը բացեիբաց անցավ հակաբոլշևիկյան ուժերի կողմը և թերևս վճռական դեր կատարեց 1918 թ. ամռանը Անդրկասպիայում բոլշևիկների իշխանությունը տապալելու խնդրում:

Միաժամանակ, նախկին ցարական բանակի մեծ թվով հայ զինվորներ և սպաներ, «Հնչակ» կուսակցության, էսէռների և բոլշևիկների տեղական կազմակերպությունների ակտիվ անդամներ, ինչպես նաև «ձախ դաշնակցականներ» մտան Կարմիր գվարդիայի և «Կարմիր պարտիզանների» առաջին ջոկատների, իսկ ավելի ուշ՝ Կարմիր բանակի կանոնավոր զորամասերի կազմի մեջ և անձնուրաց մարտնչում էին Թուրքեստանում խորհրդային իշխանության վերջնական հաղթանակի համար: Անդրկասպյան ռազմաճակատի վերացումից հետո էլ Կարմիր բանակի մարտական զորամասերի հայ զինվորները, հրամանատարներն ու կոմիսարները մասնակցել են Խիվայում և Բուխարայում հակախորհրդային ռեժիմների տապալմանը, իսկ այնուհետև, ընդհուպ մինչև 20-ական թվականների վերջը, Թուրքեստանի ամբողջ տարածքում ազգայնական և պանթուրքիստական խմբավորումների դեմ մղված դաժան մարտերին: Թուրքեստանում քաղաքացիական պատերազմի նշանավոր զինվորական գործիչներից էին Գ. Դ. Գայը (Հայկ Բժշկյանցը), Յա. Ա. Մելքումովը, Ա. Ահարոնովը, Ս. Վելունցը, Տ. Հայկազյանցը, Գ. Սարուխանյանը և ուրիշներ: Նրանցից շատերը քանիցս արժանացել են զինվորական ամենաբարձր պարգևների. օրինակ, մարտական Կարմիր դրոշի 3 շքանշանով, Բուխարայի Հանրապետության Ոսկե աստղ շքանշանով և Ոսկե զենքով էր պարգևատրվել թուրքմենական առանձին հեծելազորային բրիգադի առաստելական հրամանատար և կոմիսար Յակով (Հակոբ) Արշակի Մելքումովը, որը 1918–1930 թթ. ոչնչացրել է հակախորհրդային տասնյակ խմբեր, այդ թվում նաև մոլի պանթուրքիստ և հայ ժողովրդի թշնամի, 1915 թ. ցեղասպանության նախաձեռնողներից մեկին՝ Էնվեր փաշային: Հետագայում կուսակցական «զտումների» և ստալինյան ռեպրեսիաների ընթացքում բազում հայ հեղափոխական-

ներ և Թուրքեստանում քաղաքացիական պատերազմի ակտիվ մասնակիցներ հանիրավի ենթարկվեցին դաժան հետապնդումների, ճամբարներում կալանավորման. նրանցից միայն եզակիները վերադարձան:

Այսպիսով, Միջին Ասիայի հայերի նախահոկտեմբերյան ժամանակաշրջանը հայ համայնքների տնտեսական և մշակութային կյանքի լիարյուն բարգավաճման, կայուն, կենսունակ և ազդեցիկ հայկական գաղթօջախներ ձևավորելու ժամանակաշրջան էր:

Թուրքեստանի հայ գաղութների ճակատագիրը կտրուկ կերպով փոխեց հոկտեմբերյան բոլշևիկյան հեղաշրջումը: Քաղաքական անարխիան և տնտեսական քաոսը, քաղաքացիական պատերազմը և ինտերվենցիան, սովն ու համաճարակները, որ առաջ էր բերել այդ հեղաշրջումը, հարկադրեցին հայ վաճառականության, ձեռնարկատերերի, մասնագետների և արհեստավորների, բնակչության փոքր ի շատե ունևոր մյուս խավերի մի մասին լքել երկրամասի սահմանները: Բոլշևիկյան բռնակարգի կայունացման տարիներին սեփականության զանգվածային բռնագրավումները, սոցիալական ծագման, ազգային հայրենասիրական գործունեության, հավատացյալ լինելու պատճառով հետապնդումները հարկադրեցին նույնիսկ հեղաշրջման և քաղաքացիական պատերազմի բոցերից փրկված հայ բուրժուազիայի և մտավորականության ներկայացուցիչներին փախչել Ռուսաստան, Այսրկովկաս, Իրան և այլ երկրներ: Այդ նույն ժամանակ, 1918–1920 թթ. Թուրքեստանի հայ ազգաբնակչությունը համալրվեց Ադրբեջանից և Հայաստանից փախած հայերի նոր ալիքներով: Ի վերջո տեղի ունեցան հայ ազգաբնակչության սոցիալական կառուցվածքի որակական փոփոխություններ. երկրամասի հայ համայնքների տնտեսական և մշակութային առումով առավել ազդեցիկ խավը գործնականապես ոչնչացված էր:

Սակայն նույնիսկ այդ ծանր տարիներին, չնայած Թուրքեստանում տիրող էթնոքաղաքական լարված իրադրությանը, տեղի հայ համայնքները կարողացան ստեղծել փախստականներին օգնություն ցույց տվող կազմակերպություններ, ընդունել և տեղավորել երկրամասի սահմաններում հարյուրավոր հայ ընտանիքներ, իսկ այնուհետև նրանցից շատերին օգնել հայրենիք վերադառնալուն: Այսրկովկասում բոլշևիկների իշխանության հաստատումից հետո Հայաստանի կառավարությունը ջանում էր աշխուժացնել կապը Միջին Ասիայի հայ համայնքների հետ: 1921 թ. ամռանն այն հավատարմագրեց իր հյուպատոսին Թուրքես-

տանյան հանրապետությունում և Անդրկասպիայում, որն անցկացնում էր հայ փախստականների հաշվառում և նրանց ազգային անձնագրեր էր տալիս: Միջին Ասիայի մի շարք քաղաքներում ազգային հայրենասիրական ակտիվ գործունեություն են ծավալում 20-ական թվականների սկզբին ստեղծված «Հայաստանում սովյալների օգնության կոմիտեները», իսկ մի փոքր ավելի ուշ՝ տեղի հայության նախաձեռնությամբ և Հայաստանի ԽՍՀ հատուկ լիազորների աջակցությամբ «Հայաստանի օգնության կոմիտեի» տեղական մասնաճյուղերը: Ցավոք, հետագա տարիներին տեղի հայ համայնքների պաշտոնական կապը հայրենիքի հետ խզվեց:

Թուրքեստանում տնտեսական նախաձեռնության որոշ աշխուժացում է նկատվում ՆԷՊ-ի տարիներին: Սակայն արդեն 20-ական թվականների վերջին սկսվեց իր մասշտաբներով և դաժանությամբ աննախադեպ պետական ահաբեկչության մի ժամանակաշրջան: Վայրագ հալածանքների էին ենթարկվում կրոնական հաստատությունները, այդ թվում նաև հայ եկեղեցին: Հայ ազգային մշակույթի բաղում գործիչներ, մասնավորապես, հայ քահանաները, ազգայնամոլության մեջ անհիմն մեղադրանքի զոհեր դարձան: Ռեպրեսիաներից երկյուղ կրելով՝ նրանցից ոմանք ստիպված էին ոչ միայն կրոնական պաշտամունք կատարելը դադարեցնել, այլև նույնիսկ կրոնական աստիճանից հրաժարվել: 30-ական թվականների սկզբին Միջին Ասիայում բոլոր հայկական եկեղեցիները արդեն փակված էին, նրանց գույքը բռնագրավված էր: Ծարտարապետական առումով եզակի հայկական եկեղեցիների շինքերը վերափոխել էին և դարձրել ակումբներ, պահեստներ, բաղնիքներ և այլն: Հայ եկեղեցիների ճակատագրին, փոքր ինչ ավելի ուշ, արժանացան նաև հայկական դպրոցները: Տակավին 20-ական թվականների սկզբին դրանք հանվել էին հայ եկեղեցու և հայ համայնքների տնօրինությունից և հանձնվել լուսժողկոմատին, որը հայկական դպրոցներին նյութական և ուսումնամեթոդական ոչ մի օգնություն ցույց չէր տալիս: Արդեն 40-ական թվականների սկզբին Միջին Ասիայում հայկական ոչ մի դպրոց չկար:

Ազգային կազմակերպությունների վերացման, հայկական դպրոցների և եկեղեցիների փակման, համայնքների հայրենասեր ներկայացուցիչների դեմ մշտատև ռեպրեսիաների հետևանքով Միջին Ասիայի հայ պաղեստինների ազգային զարգացումն ընդհատվել էր: Իհարկե, տեղի հայությունը, Թուրքեստանի այլ ժողովուրդների հետ միասին շարունակ-

վում էր գործուն մասնակցել երկրամասի տնտեսության և մշակույթի զարգացմանը նաև հաջորդ տասնամյակներում: Սակայն չնայած հայերի Լեռնային Ղարաբաղից և Ադրբեջանի հայաբնակ վայրերից դեպի Մինչին Ասիա շարունակվող գաղթին և հայ ազգաբնակչության թվաքանակի բավականին զգալի աճին, նրա դերն ու ազդեցությունը երկրամասի էկոնոմիկայում և հասարակական կյանքում աստիճանաբար նվազում են, անշեղորեն ահագնանում է լեզվական և մշակութային ուծացումը, երևան է գալիս հարազատ ժողովրդի ազգային արմատներից, մայրենի լեզվից, ազգային պատմությունից և մշակույթից կտրված, «ռուսախոս հայերի» մարգինալ մի սերունդ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Բյուզանդիա 4
Կոստանդնուպոլիս (15–20-րդ դարեր) 65
Զմյուռնիա 178
Իրան 223
Եգիպտոս 289
Սիրիա-Միջագետք, Լիբանան 318
Եթովպիա 343
Կիպրոս 366
Աֆղանստան 375
Հնդկաստան 383
Չինաստան 423
Բիրմա 439
Մալայզիայի Պինանգ կղզի 450
Սինգապուր 456
Հոնկոնգ 464
Միջին Ասիա 469

ՀԱՅ ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(միջնադարից մինչև 1920 թ.)

ԵՌՀԱՏՈՐՅԱԿ
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ
(со средних веков до 1920 г.)

ТРЕХТОМНИК
ТОМ ВТОРОЙ

АРМЯНСКИЕ КОЛОНИИ В АЗИИ И АФРИКЕ

THE HISTORY OF THE ARMENIAN DIASPORA
(from the Middle Ages to 1920)

EDITION IN THREE VOLUMES
VOLUME TWO

ARMENIAN COLONIES IN ASIA AND AFRICA

Հրատարակչական խմբագիր՝ ՄԵԼԱՆԻԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ ՇՈՒՇԱՆ ԲԱՍԵՆՑՅԱՆԻ

Հրատ. պատվեր № 114
Ստորագրված է տպագրության 11.02.2003
Չափսը՝ 60x90 $^{1}/_{16}$, թուղթ № 1 օֆսեթ. 32,5 մամուլ:
Գինը՝ պայմանագրային:
ՀՀ ԳԱԱ տպարան. Երևան, Մարշալ Բաղրամյան 24:

A $\frac{\text{II}}{89935}$